ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

HAIGAZIAN ARMENOLOGICAL REVIEW

ՊԷՅՐՈՒԹ, 2001

Յատուկ շնորհակալութիւն Գալուստ Կիւլպէնկեան
Հիմնարկութեան, որուն նիւթական օժանդակութեան շատ բան
կը պարտի այս հատորին հրատարակութիւնը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆԻ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՒԱԼՈՒՄ

ՀԱՏՈՐ ԻԱ.

ՊԷՅՐՈՒԹ, 2001

PUBLISHED BY THE ARMENIAN DEPARTMENT OF HAIGAZIAN UNIVERSITY

HAIGAZIAN
ARMENOLOGICAL REVIEW
VOLUME 21

BEIRUT, 2001

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀԱՄԱՐԻՆՔ ՈՐ...

Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամբիոնի հրատարակած *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ի ԻԱ. հատորը կը փորձէ շարունակել իր նպաստը բերել հայ ժողովուրդի պատմութեան ու մշակոյթի խոր ուսումնասիրման գործին, ինչպէս նաեւ հայութիւնը հետաքրքրող ժամանակակից հնչեղութեամբ հարցերու գիտական արծարծման:

*Հանդէս*ը ի սկզբանէ իրեն նպատակ սահմանած է ոչ միայն սատարել հայագիտութեան զարգացման, այլ նաեւ սերտացնել աշխարհի բոլոր հայագէտներու եւ հայագիտական կեդրոններու միջեւ գոյութիւն ունեցող կապերը: Այս ելակէտէն մեկնելով, *Հանդէս*ը ամբիոնը եղած է եւ՛ Հայաստանի մէջ եւ՛ այլուր բնակող հայագէտներուն:

Մենք կը հաւատանք, որ հայագիտութեան նուիրուած մտաւորականները գիտութեան նոյն բնագաւառին ծառայող ազատ մտածողութեան տէր ոյժեր են: Հետեւաբար, կը համարինք, որ հայագիտութեան այլազան մարզերուն մէջ արտայայտուող տարբեր տեսակէտներ ի վերջոյ կը ծառայեն ճշմարտութեան բիւրեղացման: Հայագիտական ճշմարտութիւնը անձի ու երկրի նկատումներէ վեր է: Մեզի համար, աշխատասիրութեան մը գիտական կշիռը չի պայմանաւորուիր հեղինակին ազգութեամբ կամ բնակած վայրով: Որեւէ կարծիքի գիտականութիւնը կ'արժեւորենք միայն աղբիւրագիտական եւ մեթոտաբանական չափանիշներով:

Մասնագէտներու յաջորդական սերունդներու շարունակական աշխատանքով, այսօր, հայութեան առնչուող բազմաթիւ հասարակագիտական երեւոյթներ արդէն իսկ հայագիտութեան մէջ կ'ընդունուին իբրեւ անվիճարկելի ճշմարտութիւններ: Հայ նորագոյն պատմութեան մէջ այդ տիպի ճշմարտութիւն է 1915 թուականի հայոց ցեղասպանութիւնը: Այսուհանդերձ, կը հաւատանք, որ հայագիտութիւնը պէտք է շարունակէ կրկին եւ կրկին անդրադառնալ այս անվիճարկելի ճշմարտութիւննե-

րուն՝ յաւելեալ լուսաբանում հաղորդելու անոնց որոշ մաերա-մասներուն:

Կը համարինք, թէ յաւ հայագէտ մը ըլլալու համար անհրաժեշտ է ունենալ հայոց պատմութեան ու մշակոյթի, ինչպէս նաեւ հայերէնի, ի պահանջել հարկին՝ գրաբարի, խոր իմացութիւն՝ միաժամանակ հայագիտութեան զարգացումը չանջատելով համաշխարհային գիտական որոնումներէն ու կենսափորձէն:

Հայոց պատմութիւնն ու մշակոյթը համաշխարհային պատմութեան ու մշակոյթի բաղկացուցիչ մէկ մասնիկն են: Ըստ այնմ, տարբեր բնագաւառներու հայագէտներ պէտք է մօտէն հետեւին միջազգային գիտական փորձին, տրամադրութիւններուն, հարցադրումներուն ու փորձեն վերջիններուն լաւագոյնը օգտագործել հայ ժողովուրդի պատմութիւնն ու մշակոյթը աւելի ճիշդ ընկալելու իրենց մշտատեւ առաքելութեան մէջ:

Մեր այս աւելի քան երեսնամեայ սկզբունքները պահպանած ենք հերթական այս հատորի խմբագրական աշխատանքի ընթացքին եւ կը նպատակադրենք անոնցմով առաջնորդուիլ նաեւ յետագային:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ
Հայր Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
Արտա Էքմէքճի – Արշալոյս Թոփալեան –Արմէն Իւրճէշլեան
Արա Սանճեան – Անդրանիկ Տագէսեան

ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐՈՒ ՄԱՐՄԻՆ
Սիլվիա Աճեմեան – Ժիրայր Դանիէլեան
Երուանդ Երկանեան – Հրանոյշ Խառատեան
Մուրատ Հասրաթեան – Հրաչ Չիլինկիրեան
Մկրտիչ Յ. Պուլտուքեան – Սեդա Տատոյեան – Սիւզըն Փեքի Պերճ Ֆազլեան

Հայաստանի մէջ «ՀՀՀ»ի ներկայացուցիչ՝ Արծուի Բախչինեան

EDITORIAL

WE BELIEVE THAT...

The twenty-first volume of the *Haigazian Armenological Review*, which is published by the Department of Armenian Studies at Haigazian University, continues its endeavours to contribute to the thorough study of the history and culture of the Armenian people, as well as to the scholarly analysis of various issues of contemporary resonance pertaining to the Armenians.

It has been the aim of this *Review* from its inauguration in 1970 to assist in the development of Armenian Studies and in the strengthening of existing ties among all Armenian Studies scholars and research centres worldwide. This fundamental starting point has allowed the *Review* to provide a podium to Armenian Studies experts living both in Armenia and outside.

We believe that all scholars involved in Armenian Studies are free-thinking people in the service of the same domain of scholarly pursuit. We consider, therefore, that differing viewpoints expressed in the various sub-disciplines of Armenian Studies ultimately serve the process of the crystallization of scholarly truth. Attaining truths based on solid scholarly criteria in the domain of Armenian Studies is above individual and national considerations. For us, the scholarly weight of any study is not conditioned by the nationality of the author of his/her place of residence. We evaluate the scholarly authenticity of any viewpoint solely on the reliability of the primary sources used and other methodological criteria.

In the field of social sciences pertaining directly to the Armenians, the continuous endeavours of successive generations of scholars have resulted in many conclusions being accepted today as uncontested truths. One such truth in modern Armenian history is the Armenian genocide in 1915. We believe, however, that Armenian Studies must revisit these uncontested truths again and again in order to shed further light on their details.

We believe that having a deep knowledge of Armenian history, culture, the Armenian language, and, if need be, *grabar* (Classical Armenian), is a must to become a good Armenian Studies expert.

At the same time, the development of Armenian Studies should not be distanced from scholarly quests and achievements in the world at large.

Armenian history and culture are but one component of world history and culture. Hence, Armenian Studies experts specializing in the various sub-disciplines of the humanities and social sciences must follow closely the latest innovative approaches, trends and inquiries in their respective domains internationally and then try and use the best among these developments in their ongoing mission to deepen understanding of the history and culture of the Armenian people.

We have tried to maintain these principles, which we have followed for over thirty years, during the process of editing this particular volume of the *Haigazian Armenological Review*, and we also intend to abide by them in the future.

EDITOR IN-CHIEF
The Very Rev. Father Antranik Granian

EDITORIAL BOARD
Antranik Dakessian – Arda Ekemkji – Ara Sanjian
Arshalouyse Topalian – Armen Urneshlian

CONSULTATIVE BODY
Sylvia Agemian – Megerditch H. Bouldoukian – Seta B. Dadoyan
Berj Fazlian – Hranush Kharatian – Susan Pattie – Jirayr Tanielian
Hratch Tchilingirian – Yervand Yerkanian

The Representative of the *Haigazian Armenological Review*
in Armenia: Artsvi Bakhchinyan

ՎԱՐԴԱՎԱՌԻ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՑ ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՎԵՐԺԻՆԷ ՍՎԱՋԼԵԱՆ

Յայտնի է, որ հայոց հեթանոսական հին տօները, Դ. դարի սկզբում Հայաստանում քրիստոնէութեան պետական կրօն հռչակումից յետոյ, Ս. Գրիգոր Լուսաւորչի կողմից վերածուեցին քրիստոնեայ սրբոց տօների, եւ քանդուած մեհեանների տեղում կառուցուեցին սրբերի վկայարաններ, վանքեր ու եկեղեցիներ[1]: Այդ է պատճառը, որ հայոց մօտ հեթանոսական եւ քրիստոնէական տօներն ու ծէսերը գիրկընդխառն են հանդէս գալիս: Նոյն օրինաչափութեամբ, հեթանոսական արմատներ ունեցող Վարդավառի տօնը դարձել է Քրիստոսի այլակերպութեան կամ պայծառակերպութեան տօն:

Ակադեմիկոս Գրիգոր Ղափանցեանը դեռեւս իր ժամանակին իրաւացիօրէն նշել է, որ հոգեւոր մշակոյթի չլուծուած հարցերի պարզաբանումները պէտք է որոնել Հայկական Բարձրավանդակի նախահայկական շրջանի հնագոյն ժողովուրդների՝ խուրիտների, միտանիների ու հայասների զարգացման մէջ: Նա ստուգաբանելով «Վարդավառ» բառը, գտնում էր, որ այն փոքրասիական խեթական ծագում ունի՝ կազմուած vadr>vard՝ «ջուր» բառից (հին dr դառնում է rd) եւ arr՝ «լուանալ, ցնցղել» բայից[2]:

Եւ իրօք, հեթանոսական առումով Վարդավառը հիմնականում ջրային տարերքի պաշտամունքի տօն էր: Այդ տօնակատարութիւնից, որպէս ժողովրդական աւանդութիւն, մնացել են միմեանց վրայ ջուր ցանելու, աղաւնի թռցնելու, ուխտագնացութեան գնալու, մատաղցուներ գոհելու, իսկ որոշ շրջաններում նաեւ վիճակի գուշակութիւն կատարելու սովորութիւնները:

Ըստ այդ ծիսահմայական գործառոյթների, քննարկենք թէ հայ ժողովրդի արեւմտահայ հատուածի ազգագրական ո՛ր շրջաններում, հեթանոսական ո՛ր սովորութիւններն ու բանահիւսական ինչպիսի՛ ստեղծագործութիւններն են կենցաղավարուել:

Վաստակաշատ գիտնական Արշակ Ալպոյաճեանն իր Պատմութիւն Հայ Կեսարիոյ աշխատութեան մէջ նշում է, թէ Կեսարիայի հայերը Համբարձման օրը «վիճակ կը քաշեն եւ տօնն ալ կը կոչեն Վարդավառ... Այս փոփոխութեան պատճառն այն էր, որ ճիշդ Համբարձման օրը կապադովկիոյ Ցոյները կը տօնէին ժողովրդային եւ հեթանոսական աւանդութիւններով տօն մը որ կը կոչուէր Վարդավարիա որ ապահովաբար դրացնութիւն կամ ծագման նոյնութիւն ունէր հայերէն Վարդավառ բառին հետ... Այս տօնը միջազգային բնոյթ ունէր եւ կը տօնուէր Հայերէ, յունախօս եւ թրքախօս Ցոյներէն եւ զարմանալի է որ անոնք ալ Վարդուվարիա կը կոչէին»[3] (ընդգծումները հեղինակային են - Վ.Մ.): Այս հանգամանքը եւս հաստատում է փոքրասիական հնագոյն ժողովուրդների անցեալի հոգեւոր մշակոյթի համընդհանուր բնոյթը:

Ուշագրաւ է, որ Կեսարիայում թալասցիք եւ էֆքերէցիք եւս Համբարձման տօնը Վարդավառ են անուանել: Մարաշում եւ Այնթապում Համբարձման տօնն անուանել են Մենթիվար, որը եւս Վարդավառ բառի աղաւաղուած ձեւն է[4], իսկ Ադանայում վիճակախաղը երկու անգամ են կատարել. ե՛ւ Համբարձմանը, ե՛ւ Վարդավառին[5]: Եւ քանի որ, ըստ Ակադեմիկոս Հրաչեայ Աճառեանի, «Կեսարիա քաղաքը, ինչպէս եւ անկէ արեւմուտք (այսինքն Փոքր Ասիայի, իսկ մենք կ'աւելացնէինք նաեւ Կիլիկիայի որոշ շրջանների - Վ.Մ.) ամբողջ հայութիւնը թրքախօս էր»[6], հետեւաբար վիճակի երգերը մեծ մասամբ յօրինուել են թուրքերէն: Այսպէս օրինակ՝

Ա՜յ, մէնթըվար, մէնթըվար,
Մէնթըվարըն վախդը վար,
Մէնթըվարըն սէվէնի
Դրախտա բէշ թախդը վար:
Հանէ՛, ախչի՜ ես, հանէ՛,
Ասօր պարա դարա է:

Վիճակ, վիճակ, ջան վիճակ,
Վիճակն ունի ժամանակ,
Վիճակի մասնակցողը
Դրախտում ունի հինգ աթոռ:
Հանի՛ր, աղջի՜կս, հանի՛ր,
Այսօր բարի տարի է[7]:

Մադդաճոս մաշալասը,
Դիբինէ դաշ օլասը,
Եա Յիսուս, եա՜ Քրիստոս,
Եարա եողդաշ օլասը:
Հանէ՛, ախչի՜ ես, հանէ՛,
Ասօր պարա դարա է:

Ազատքեղը աճել է,
Յատակում քար եղել է,
Տէր իմ, Յիսուս Քրիստոս,
Դարձիր եարիս դու ընկեր:
Հանի՛ր, աղջի՜կս, հանի՛ր.
Այսօր բարի տարի է[8]:

Ալչաճրգ քիրազ տալը,
Տիպինտէ եէշիլ խալը,
Եա՛ Յիսուս, եա՜ Քրիստոս,
Սէն կէօսքէր տօղրու եօլու:

Կարմիր բալի ծառը,
Գետնի դալար գորգը,
Ո՛վ Յիսուս, ո՜վ Քրիստոս,
Ցոյց տուր ուղիղ ճամբան[9]:

Տամ իսքիւնտէ տամըմըզ, Կտուրին մեր տարածքն է,
Իւսքիւնտէ հարմանըմըզ, Վրան մեր կալատեղն է,
Շիւքիւր օլսուն քանկըդյա Փառք տանք Երկնաւորին,
Էյի չըգտը նամըմըզ: Մեր համբաւը հասնեց բարի[10]:

Մէրճիմէք քիլէ, քիլէ, Ոսպն է կոյտ-կոյտ,
Էօլէրիմ սիլէ, սիլէ, Կշռում եմ բլուր-բլուր,
Եար գափուդա կէլիբսէ, Թէ եարս մեր դուռը գայ,
Էնէրիմ կիւլէ, կիւլէ: Կ'իջնեմ ուրախ-ուրախ[11]:

Պիր էօքիւզիմ պէշ օլտու, Մի եզս դարձաւ հինգ,
Պու ելլ հալըմ խօշ օլտու, Այս տարի բարուօքուեցի,
Պէն եօլումա կիտէր իքէն, Երբ ճանապարհին էի,
Քրիստոս պանա էշ օլտու: Քրիստոսն ընկեր դարձաւ ինձ[12]:

Նման երգերը յօրինուել են հայերի կողմից դեռեւս վաղնջական շրջանում, իսկ քրիստոնէութեան ընդունումից յետոյ, ենթարկուել են որոշ խմբագրման: Այդ է վկայում այս երգերում Քրիստոսի կերպարի առկայութիւնը:

Վիճակի այս երգերի մէջ գեղարուեստօրէն պատկերուած են քարքարոտ հողը, հողը վարող լծկան եզը, գետնի դալար խոտը, կարմիր բալի ծառը, ազատքեղի փարթամացած թուփը, հաւաքուած ոսպի կոյտը, որոնք բոլորն էլ կապւում են երկրագործական տարեշրջանի գիւղատնտեսական աշխատանքների եւ դրանցից ստացուած արդիւնքների հետ: Քանի որ հայերէն կրկնակն անընդհատ մեզ յիշեցնում է, որ «Այսօր բարի տարի է», այսինքն խնդրոյ առարկան բարեբեր, արգասաւոր տարին է, հետեւաբար Վարդավառն աղերսւում է հնագոյն հեթանոսական Նաւասարդի՝ նոր տարուայ բերքի տօնի հետ, որը խորհրդանշում է հնի աւարտ եւ նորի վերստեղծում: Իսկ Քրիստոսը, որպէս նոր քրիստոնէական լուսաւոր դարաշրջանի վերածնող, հանդէս է գալիս իբրեւ երկրագործական աշխատանքները կատարողներին «օգնող», «ճանապարհ ցոյց տուող», «ձեռքից բռնող», «բարի համբաւի» արժանացնող գերբնական գործօնի: Այս դէպքում «Քրիստոսը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեռնող եւ յարութիւն առնող աստծու ձեւերից մէկը»[13], որն իր մէջ խտացնում է նաեւ հին հայկական դիցարանի մեռնող եւ յարութիւն առնող աստուածութեան՝ Արա Գեղեցիկի պաշտամունքային որոշ տարրեր[14]:

Ռուս պատմաբան Վասիլի Ստրուվէն, անդրադառնալով Հին Արեւելքի հնագոյն ժողովուրդների մշակոյթին, նշում է. «Զարգացած իրիգացիոն (ոռոգման - Վ.Ս.) հասարակութեան մէջ աստեղային կրօնի հետ միասին ստեղծւում եւ չափազանց մեծ դեր է խաղում մեռնող եւ յարութիւն առնող աստծու կրօնը...: Որսորդական նախնական

կեանքով ապրող հասարակութեան մէջ խիստ մութ ու անորոշ է ծնըն-դեան եւ մահուան վերաբերեալ խնդիրը: Աւելի պարզ է դառնում այդ հարցը նստակեցութեան շրջանում, երկրագործութեան պայմաններում, երբ կեանքի, ծննդեան առեղծուածն աւելի մօտ եւ հասկանալի է դառնում: Այդ ժամանակ մարդը կարողանում է կեանքի եւ մահուան երկու մեծ հակադրութիւնների միասնութեան գաղափարին յանգել»[15]:

Վերլուծելով մեռնող եւ յարութիւն առնող աստուածութեան գաղափարը, Ստրուվէն շարունակում է. «Գետնի մէջ ձգուած հատիկը մեռնում եւ ապա նոր կեանքի ծիլ է տալիս, հասկեր հանում, հասկերը քաղում են, տրորում, եւ հատիկը նորից գետնի մէջ են ձգում, կրկին նոր կեանքի ծիլ է տալիս: Կեանքի եւ մահուան միասնութեան այդ ըմբռնումը ստեղծւում է յատկապէս երկրագործական պայմաններում ապրող հասարակութեան մէջ, եւ քանի որ առաջին խոշոր երկրագործական հասարակութիւնը իրիգացիոն հասարակութիւնն էր, այդ պատճառով էլ մեռնող եւ կենդանացող աստծու վերաբերեալ կրօնը ամէնից առաջ ծագում է Բաբելոնի եւ Եգիպտոսի հին հասարակութիւնների մէջ: Մեռնող եւ կրկին կենդանացող հատիկը մարմնացնող աստուածը Բաբելոնիայի Թամմուզ աստուածն էր»[16]:

Թամմուզ աստուածը պաշտուել է ոչ միայն Բաբելոնում, այլեւ՝ Պաղեստինում: Հրեայ կանայք Երուսաղէմի դռների մօտ ողբում էին Թամմուզի մահը: Թամմուզի մահը ողբում էին նաեւ չումէրները[17]: Ըստ աւանդութեան, սիրոյ եւ պտղաբերութեան աստուածուհի Իշտարը եւս, ողբալով, գնում է փնտռելու իր երիտասարդ սիրեկանին, որը ձմրան վեց ամիսներին գնացել էր «անվերադարձ աշխարհը» եւ երկրի վրայ կեանքը կանգ էր առել. սկսել էր սովը: Ի վերջոյ «փակ դռները բացւում են», եւ Իշտարը Թամմուզի հետ դուրս է գալիս ստորերկրեայ թագաւորութիւնից: Նորից սկսւում է գարունը, սկսւում է սիրոյ մեծ տօնը:

Թամմուզի եւ Իշտարի սիրոյ այս մոտիւը կրկնւում է նաեւ հին հայկական «Արա Գեղեցիկ եւ Շամիրամ» առասպելում: «Արայի կուլտը, որպէս գարնան աճող բուսականութեան աստծու եւ յետոյ նաեւ՝ որպէս ցանքի, երկրագործութեան եւ թերեւս ջրի աստծու, եղել է թէ՛ հին Հայաստանում, թէ՛ Փոքր Ասիայում եւ թէ՛ դրանց սահմաններից էլ դուրս», գրում է Ղափանցեանը (ընգծումը հեղինակինն է - Վ.Ս.)[18]: Այդ գաղափարախօսութիւնը իր տարածուածութեամբ յետագայում իր տեղը զիջում է միայն նմանաբովանդակ քրիստոնէութեանը, որը ծնունդ է առնում դարձեալ Արեւելքում՝ Միջագետքի Թամմուզի հզօր ազդեցութեամբ[19]:

Առաջնորդուելով այդ տեսութեամբ՝ Թամմուզ եւ Արա գոյգ դիցանունների հետքերն ենք փորձել գտնել Փոքր Հայքում, Սերաստիայի

նահանգի Շապին Գարահիսար գաւառում, ըմպելի եւ ուռգման առատ ջրերով հարուստ եւ յուրթի այգիներով յայտնի, բայց դեռեւս չուսումնասիրուած «Թամզարա» տեղանուան մէջ[20] («ուշ ձայնաւորի սղմամբ), որի բաղադրիչ մասերն են՝ Թամմուզ եւ Արա, մէկը՝ Բաբելոնի, միւսը՝ հայկական աճող բուսականութեան եւ ուռգման աստուածը:

Այդ են հաստատում նաեւ գէյթունցի Կարապետ Թոզլեանից (ծն. 1903) մեր գրի առած «Լէ, լէ, լէ, լէ, Թամզարա» պարերգի հատուածները, որոնք, ըստ մեր բանասացի, կատարուել են նաեւ Վարդավառի տօնակատարութեան խրախճանքի ժամանակ:

Լէ լէ, լէ լէ, Թամզարա[21],
Էօսէօյ միյ դուն հայսնըք գօ,
Սիվ աշգէյնը ինձ գուդօն,
Իս չօգառնում մէգ փայօ:

Լէ լէ, լէ լէ, Թամզարա,
Էօսէօյ միյ դուն հայսնըք գօ,
Անցէ՛յ, կօնօ՛, սիվ աշգին,
Քիզմէ ջիյմօգը ջայիցօնք:

Լէ լէ, լէ լէ, Թամզարա,
Էօսէօյ միյ դուն հայսնըք գօ,
Ջիյմօգ աշգինը ինձէ գուդօն,
Իս գօգառնում հագօյ փայօ:

Լէ լէ, լէ լէ, Թամզարա,
Այսօր մեր տուն հարսնիք կայ,
Սեւ աղջիկը ինձ կու տան,
Ես չեմ առնի մէկ փարա:

Լէ լէ, լէ լէ, Թամզարա,
Այսօր մեր տուն հարսնիք կայ,
Անցի՛, գնա՛, սեւ աղջիկ,
Քեզնից ճերմակը ճարեցինք:

Լէ լէ, լէ լէ, Թամզարա,
Այսօր մեր տուն հարսնիք կայ,
Ճերմակ աղջիկն ինձ կու տան,
Ես կ՛առնեմ հազար փարա[22]:

Այս պարերգն, ամենայն հաւանականութեամբ, ծիսական ձօներգ է եղել՝ նուիրուած Թամմուզ-Արա աստուածութեան պաշտամունքին եւ հեռաւոր կերպով ուրուանկարում է Արա Գեղեցիկի եւ սեւ աղջկայ՝ Շամիրամի, անհաշտ յարաբերութիւնները՝ ի նպաստ հայազգի ճերմակ աղջկայ՝ Նուարդի:

Այդ նոյն՝ աճող բուսականութեան, նաեւ ուռգման՝ Թամմուզ եւ Արա, գոյգ դիցանունների աղաւաղուած յիշատակութիւնն ենք նկատում Կեսարիայի մօտ Թոմարզա (Տոմարծա) գիւղաքաղաքում, որտեղ գաղթել ու բնակութիւն են հաստատել նոյն այդ Թամզարայից մի քանի հայ ընտանիքներ[23]:

Շարունակելով Վարդավառի տօնախմբութեան նկարագրութիւնը, Ալպոյաճեանը, որպէս բացառութիւն, նշում է, որ Կեսարիայի Թոմարզա[24], ինչպէս եւ Զոմախլու[25] գիւղաքաղաքներում Վարդավառին է որ վիճակ են հանել, ինչը մեծ գիտնականը, «չփոթ» եւ «զարմանալի երեւոյթ» է համարում[26]: Սակայն, մեր հետեւողական պրպտումները մեզ յանգեցրել են այն եզրակացութեան, որ այն տեղավայրերի բնա-

կիչները, որոնք գաղթել են Արեւելեան Հայաստանից (ինչպէս Թոմարգան, Զոմախլուն եւլն.), աւանդաբար պահպանել են վիճակահանութեան սովորութիւնը Վարդավառին։

Արդ, տեսնենք թէ այդ կարգի բնակավայրերում ի՞նչպէս է կատարուել Վարդավառի վիճակի գուշակութիւնը։ Յովհաննէս Աւագ Սարկաւագ Տոմարծացին մէջբերում է տոմարծացի աղջիկների պատմածը. «Վարդավառի տօնին, իրարու դրացի աղջիկներս խօսքերնիս մէկ ըրած օպա կ'ըլլայինք եւ ցանուած արտերը կը թափլէինք բախտերնիս փորձելու համար։ Ամէն մէկ օպա 8-10 աղջիկ կ'ըլլայինք եւ ամէն մէկս իր ուտելիքը ծրարած իր դոլմուխի տակ, գոգնոցներուս գրպանի մէջ կը դնէինք դրճիկ, կոճակ, օղեր, մատնի, կապոյտ եւ ճերմակ հրլլեր...։ Հետերնիս կը տանէինք իր մօրը առջինեկ փոքր աղջիկ մը, կալխան մը եւ փարչ մը ջուր։ Ճամբայ կ'ելլէինք, կեղէն քիչ մը կը հեռանայինք, երգելով, թռչտելով կը հասնէինք ցանուած արտի մը եզերքը։ Կը հաւաքուէինք, ջուրը կալխանին մէջ կը թափէինք, ամէն մէկ աղջիկ իր տարած նշանը ջուրին մէջ կը դնէր ու միտքը կը պահէր դրած նշանը եւ միտքը դրած սրտին մուրազը, պզտիկ աղջիկը կը նստեցնէինք կալխանին առջեւ եւ գլխուն կը ձգէինք կապոյտ փուլլու մը, որ կը գոցէր անոր երեսը։ Մենք ալ անոր չուրջը ոտքի վրայ չարուած «Հայր մեր» մը կ'ըսէինք եւ ամէնքս մէկ կ'երգէինք Վարդավառի երգը՝

Հէ՜յ Վարդեվառ, Վարդեվառ
Վարդեվառը՝ օր ընը,
Վարդեվառը տեսնողը
Արքավըքնա՝ տեղ ընը[27]։

Ճերմակ դրճիկ՝ կէպիւռ եըլլեր,
Իմ եիկիտիս պախտը էլլէր,
Սուրբ Կարապետ, Աստուածածնին
Լսէ դուրպան՝ մեր աղօթքին»[28]։

Ինչպէս տեսնում ենք, Վարդավառի վիճակի գուշակութեան արարողութիւնը կատարուել է «ցանուած արտի եզերքին», ընդ որում «Բարի (բարեբեր) տարուայ» բերք ու բարիքի ակնկալիքով դիմել են Ս. Կարապետին եւ Մարիամ Աստուածածնին, որ լսեն իրենց «դուրբան» (զոհ) եղողների «աղօթքին»։

Հարց է առաջանում՝ ի՞նչու յատկապէս նրանց են դիմել։

«Հեթանոս Վարդավառը Լուսաւորչի տնօրինութեամբ Դ. դարուն փոխանակուեցաւ Յովհ[աննու] Կարապետի»[29]։ Ալպոյաճեանը գրում է. «Անդր-Արգէոսեան շրջանին մէջ (իմա՝ Էվերէկ-Ցենեսէ, Իլիպէ, Զոմախլու, Ինճէ-Սու, Գարաճավիրան, Մըսահաճըլը եւ Էյլէգլի բնակա-

վայրերը - Վ.Ս.) ուր Համբարձումը Վարդեվառ կոչել սովորութիւն չէր եղած, այս տօնը կ'անուանէին իր անունով, հակառակ անոր որ իրենք ալ գունդագունդ Ս. Կարապետ ուխտի կ'երթային»[30] (ընդգծումը հեղինակինն է - Վ.Ս.):

Արդ, տեսնենք թէ ի՛նչպէս էր անցկացւում Ս. Կարապետի ուխտագնացութիւնը եւ այդ ընթացքում բանահիւսական ինչպիսի՛ ստեղծագործութիւններ էին կատարւում: «Վարդեվառի տօնը, մեր օրերուն մեծահանդէս կը տօնէին Փոքր Հայքի վանքերէն կեսարիոյ Ս. Կարապետ վանքի մէջ, ինչպէս կը տօնէին Մեծ Հայքի վանքերէն Մշոյ Ս. Կարապետ վանքին մէջ: Տօնի շարթուն՝ վանք ուխտի կուգային հեռաւոր Ամասիայէն, Մարզուանէն, Իգմիրէն, Սեբաստիայէն եւ Տաւրոսի լեռներէն՝ Մարաշէն, Զէյթունէն, Հաճընէն եւ շրջաններէն: Բազմահազար ուխտաւորներ կը լեցնէին վանքին ներսը, դուրսը...: Տօնի կիրակին, Սուրբի գերեզմանին վրայ կը կատարուէր հանդիսաւոր Ս. Պատարագ, որուն ներկայ կը գտնուէին բազմահազար հաւատացեալներ...: Անոնք հետեւելով իրենց աւանդական սովորութիւններուն, տաճարէն ներս ու դուրս, կը թռցնէին ճերմակ ու լուսափետուր աղաւնիներ՝ որ կը խորհրդանշէր Հեթանոս Հայութեան կրօնական պաշտամունքի տօնին յիշատակը»[31] (ընդգծումը հեղինակինն է - Վ.Ս.):

«Հայաստան աշխարհի ամբողջ տարածքում, այնտեղ, ուր սուրբ Կարապետի անունով վանք կամ եկեղեցի, նոյնիսկ մի մատուռ կար, շրջակայ ժողովուրդները, նոյնիսկ այլադաւան քուրդերն ու թուրքերը, խունկերամ ուխտի էին գնում, որովհետեւ հաւատացած էին, թէ սուրբ Կարապետը մուրազ է տալիս ամէնքին», աւելացնում է երաժիշտ-ազգագրագէտ Մհերան Թումաճանը[32]:

Այնպէս որ, քրիստոնէական Ս. Կարապետի ուխտագնացութեան տօնը, որը հեթանոսական Վարդավառի հին տօնի շարունակութիւնն է, իր մէջ կրում է հեթանոսական հաւատալիքների խորունկ դրոշմը: Այդ հանգամանքն աւելի բացայայտ է դառնում, երբ մենք իմաստաբանական վերլուծութեան ենք ենթարկում Ս. Կարապետի ուխտագնացութեան վերաբերեալ ժողովրդական երգերը, որոնք գրի են առնուել արեւմտահայ տարբեր գաւառների՝ Կիւրինի, Խարբերդի ու Երզնկայի բանասացներից:

Նախ՝ ո՞վ էր Ս. Կարապետը: «Կարապետ» մակդիրը «սեպհականեալ անուն [է] Յովհաննու Մկրտչի»[33] «իբրեւ Քրիստոսի առաջընթացի եւ մկրտողի»[34] Յորդանան գետի մէջ (ընդգծումները մերն են - Վ.Ս.).

Սուրբ Կարապետ կանկըցուցին,
Լուսեղէն շուջայ հագցուցին,
Առին ըջան գետ Յորդենեն,
Մկկըրտեցին Յիսուս օրհին:[35]

Հարց է առաջանում ինչո՞ւ արեւմտահայերը յատկապէս Ս. Կարապետ ուխտի էին գնում եւ այդ օրն անուանում էին Ս. Կարապետ:

Ժողովուրդը, հաւատալով եւ ապաւինելով Ս. Կարապետի ամենահաս, ամենաչնորհ եւ ամենապարգեւ գերագոյն զօրութեանը, բանաստեղծական ձեւ ու կերպ է տուել իր յոյզերին.

Սուրբ Կարապետ էրթալ կ՛ուզեմ,
Իրեք օր հոն կենալ կ՛ուզեմ,
Մուրազըս առնել՝ դառնալ կ՛ուզեմ,
Մուրազատու՞ր Սուրբ Կարապետ[36]:

Ըստ ժողովրդական հաւատալիքի, Ս. Կարապետ ուխտի գնացողը, եթէ «արդար մարդ է», ուրեմն այդ ամենազօր սուրբը նրա «ղերդին դարմանն» կը տայ (ընդգծումը մերն է - Վ.Ս.).

Սուրբ Կարապետ *կենդի դաշտ* է,
Հոն գացողը *արդար մարդ* է,
Դերդեն ղերման, Սուրբ Կարապետ[37]:

Այստեղ ուշագրաւ է, որ Ս. Կարապետը «կենդի դաշտումն է» եւ հեթանոսական աստուածների նման «մատաղ կ՛ուզէ վարդեվառին», որպէսզի նրանց ակնկալած «մուրատը» տայ (ընդգծումը իմն է - Վ.Ս.).

Սուրբ Կարապետ կայներ քարին,
Մէջքը տուեր մեռոնե քարին,
Սէյրը կ՛ընէ *ուխտաւորին*,
Մատաղ կ՛ուզէ Վարդեվառին,
Մուրատատուր Սուրբ Կարապետ[38]:

Նախ քննարկենք մատաղի՝ զոհամատոյցի պարագան, որն աղերսւում է Ս. Կարապետի նահատակութեան հանգամանքների հետ (ընդգծումը մերն է - Վ.Ս.).

Սուրբ Կարապետ *գըլխատեցին*,
Ղեսերու քաղքէն հանեցին,
Մըշու սարերն օդըրցուցին,
Մըշու սուլթան Սուրբ Կարապետ:
Ուխտըդ կու գար Վարդեւըրին,
Լոսըդ պայծառ, Սուրբ Կարապետ[39]:

Ժողովրդական աւանդութիւնների մէջ Ս. Կարապետի վարքագրական սիւժէն այլ կերպ է զարգանում[40]: Այն իր հեռաւոր աղերսներն ունի «Արա Գեղեցիկ եւ Շամիրամ»/«Թամմուզ եւ Իշտար» հնագոյն առասպելի հետ: Այնտեղ պատմւում է. «Ս. Կարապետ կռապաշտ թագաւորի խեչ (մի այլ տարբերակում՝ Տրդատ թագաւորի մօտ - Վ.Ս.) մենծ զօրավար է էղի ու շատ խորոտ տղամարդ: Ընդրա քուչամը կռունծ է էղի ու հասած է էղի հըրի փեչըեր, ունքերն էղեր ին իմալ անղնակ, աչքեր՝ մըսէ, արեւ՝ ըսէ, վառման արեւ ըսէ, վիր իչկեր, ընտրան տեղն ու տեղը կը հալէր»[41]: Ինչպէս տեսնում ենք Կարապետի կերպարի արտաքին նկարագրութիւնն ու զօրավար լինելու հանգամանքը յիշեցնում են Արա Գեղեցիկին:

«Էղ կռապաշտ թագաւորին շատ խորոտիկ կնիկ մէ կ'եղնի: Թագուհին աչք դրած կ'եղնի վըր Կարապետ զօրավարին, հըմա թագաւորն էղ բանից խաբար չէղնի: Քընի-քընի հեղ թագուհին ուր խեչ կը կանչէ զօրավարին, օր ուր հետ նստի ու կայնի, հըմա զօրավարն ընտրա կամքը չկատարէ»[42]: Մերժուած սիրոյ այս մոտիւը եւս շատ նման է Շամիրամի վաւաշոտ առաջարկին:

Վերջում զօրավար Կարապետը կնոջական գրպարտութեան զոհ է դառնում, իսկ մի այլ տարբերակում՝ զօրավար Կարապետը Արա Գեղեցիկի նման սպանւում է կռուի դաշտում: «Ընտրա ջանդակ կը թալին սպանուածներու ջանդակներու տակ, օր մինի, նոր՝ ընտրա ջանդակ փախցուն: Հըմա աստու հրամանով ընտրա ջանդակ կելնա հըմեն ջանդակներու վրէն»[43]:

Զօրավար Կարապետի հաւատարիմ գինուորները գալիս են ու նրա դին կապում են ջորու վրայ, որ տանեն թաղեն, բայց գիշերուայ մթութեան մէջ երեւացող տեսիլքը նրանց ազդարարում է. «Լսէ՛ք, ինչ որ կ'ըսիմ՝ աստու հրամանն է. ջորին ուր նստեց ու տեխից չէլաւ, հոնի վանք կը շինիք ու մըջ վանքին լէ կը հորիք զօրավարի ջանդակը, էնի աստու հրամանով սուրբ է»[44]:

Եւ քանի որ քանդուած մեհեանի տեղում կառուցուող վանքի պատերն անընդհատ փուլ էին գալիս եւ «մատաղ» էին պահանջում, ուստի Ս. Կարապետի մարմինը եօթ մասի են բաժանում (քանի որ նա եօթ անուն ուներ) եւ ամէն մի մասունքն աղօթելով ու պատարագելով թաղում են հողի մէջ, վրան նրա անունով կառուցում Ղեսերու (Կեսարիա), Տրապիզոնի, Աղթամարի, Մուշի եւ այլ վայրերի վանքերը[45]:

Ինչպէս տեսնում ենք Ս. Կարապետն իր նահատակութեամբ սրբրում, մաքրում է ե՛ւ բնութիւնը, ե՛ւ մարդկանց: Նա Քրիստոսի նախատիպն է:

Ռուս գրականագէտ Օլգա Ֆրէյդենբերգը, անդրադառնալով զոհամատոյցի արարողութեանը, իրաւացիօրէն նշել է. «Թաղել հողում

ցորեն, թէ՝ մարդ, միեւնոյնն է. հողին կատարւում է զոհաբերութիւն: Տարբերութիւնը ոչ թէ փաստի, այլ՝ զոհաբերութեան տիպի մէջ է»[46]:

Այստեղից հետեւութիւն՝ որ Ս. Կարապետի տօնը (իմա՝ Վարդավառը) նոյնպէս աղերսւում է բերքահաւաքի տօնի, երկրագործական նոր տարուայ հետ, որը եւ խորհրդանշում է հնի աւարտ եւ նորի սկիզբ, ինչպէս Արա Գեղեցիկի պաշտամունքը:

Զոհը սովորաբար մատուցւում էր նոր տարուայ նախօրէին՝ աշխարհի նորացման ակնկալիքով: Պատահական չէ, որ Սասունում Նաւասարդին նոր բերքից ստացուած ցորենից հաց էին թխում, որը կոչւում էր աշկաւա եւ իբրեւ զոհաբերութիւն բաժանում դրացիներին[47]: Մինչեւ օրս, արեւմտահայ շատ ընտանիքներում նոր տարում կորկոտով (սպիտակ ցորեն) անուշապուր են եփում եւ բաժանում տնից տուն՝ որպէս մատաղ[48]: Տարեշրջանի հետ կապուած զոհամատոյցն է յիշատակուած նաեւ Աստուածաշնչում. «Եւ առնուցուք նաշիհ, եւ առնիցէք զայն երկոտասան պան (իմա՝ տարուայ 12 ամիսները - Վ.Ս.). յերկուց տասանորդաց լինիցի պան մի: Եւ դնիցէք զնոսա երկուս նուէրս, վեց պան զմի նուէրն՝ ի վերայ սեղանոյն սրբոյ առաջի Տեառն... եւ եղիցին ի հաց յիշատակի զառաջաւոր Տեառն... զի սրբութիւն սրբութեանց է այն նմա ի զոհաւորացն Տեառն, օրէն յաւիտենական»[49]:

Երկրագործական տարեշրջանի հետ կապուած այս ընդհանուր մտածողութիւնը ներառնում է տիեզերքի տարրերի կարգաւորման, վերստեղծման խորհուրդը, որը պարզորոշ նկատելի է նաեւ Ս. Կարապետի մասին յօրինուած ժողովրդական երգի մէջ (ընգծումները մերն են - Վ.Ս.).

Դուն ես *արեւ*, դուն ես *լուսին*,
Քաղուտը կու տաս *Մայրամ կուսին*,
Քաղուտրութիւնդ կատարեցիր,
Հօրըդ կապած լեզուն բացիր,
Շատ բեմուրատ մուրատեցիր,
Մուրատ տրւող Սուրբ Կարապետ[50]:

Հետեւաբար զոհաբերութեան հիմքում եղել է ցանքը (թաղելը), իսկ զոհաբերութիւնից ակնկալուող արդիւնքում՝ բերքի հունձքը (քաղելը), «քաղուտրութիւն կատարելը», որը եղել է երկրագործի վերջնական նպատակը:

Իսկ «քաղուտը կը տաս Մայրամ կուսին» խօսքերի իմաստային վերլուծութիւնը մեզ աւելի հեռուն է տանում: Ինչպէս գիտենք, քրիստոնէութեան հաստատումից յետոյ, հին հայոց Անահիտ դիցուհու պաշտամունքը վերածուել է Մարիամ Աստուածածնի պաշտամունքի: Ի

դէպ, «Վարդավառի հանդէսները մեծ շքեղութեամբ կատարուել են յատկապէս այն վայրերում, որոնք անցեալում եղել են Անահիտին նուիրուած մեհեանները՝ Ս. Կարապետ, Հոգւոց, Առաքելոց վանքերում, ինչպէս նաեւ Մարիամ Աստուածածնին նուիրուած միւս եկեղեցիներում: Սա Անահիտի (Մարիամ Աստուածածնի)՝ վարդավառի հետ ունեցած աղերսի հեռաւոր ակնարկ էր»[51]:

Հեթանոսական ծիսակատարութեամբ Անահիտը, որպէս պտղաբերութեան աստուածուհի, հանդէս է եկել հացահատիկները հովանաւորողի դերում: Հայաստանի տարածքում յայտնաբերուած հայ բեւեռագիր արձանագրութիւններում Անահիտին տրւում է Գերանդաւոր մականունը (Իշտարին՝ պարտիզպան), Անահիտի տօներին նրան նուիրում էին հացահատիկի փնջեր: Վերոյիշեալ հանգամանքներն ակներեւ են դարձնում Անահիտի աղերսը հացահատիկների հետ[52]:

Իսկ քրիստոնէութեան շրջանում, ինչպէս Ս. Կարապետի մասին տուեալ երգի մէջ, «քաղուորը» իր քաղած բերքը նուիրաբերում է Մարիամ կոյսին: Հետեւաբար կրկին է հաստատւում այն միտքը, որ Վարդավառի ուխտագնացութեան հիմքում ընկած զոհամատոյց մատաղն ինքնին ակնկալում էր արգասաւոր արդիւնքը՝ քաղը, բերքահաւաքը[53]: Այն յոյժ կենսական էր երկրագործութեամբ իր գոյութիւնը պահպանող մարդու համար, քանի որ արտերից քաղուած բերքը երկրագործի հանապազօրեայ հացն էր, որը խնդրոյ առարկայ է նոյնիսկ Տէրունական Աղօթքի մէջ. «Հայր մեր ... զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր»[54]:

Իսկ հացահատիկի բերքն առանց ջրի չէր կարող ո՛չ կանաչել եւ ո՛չ հասունանալ: Հետեւաբար, ջուրը բերքի անհրաժեշտ նախապայմանն էր: Ահա այստեղ է որ բացայայտւում է Ս. Կարապետի «մուրազատուր» էութիւնը՝ որպէս ջրաբաշխ-ոռոգողի: Քանի որ նա է Ծորդանան գետում մկրտել Յիսուսին, եւ նրա հրաշագործ զօրութիւնը աստուածատուր ջրի մէջ է: Այդ է վկայում նաեւ ժողովրդական աւանդութեան մի այլ դրուագը, երբ Ս. Կարապետի նշխարները թաղում են կառուցուող վանքի հիմքում, Աստծոյ հրամանով այդտեղից սկսում է բխել Լուսաղբիւրը[55]: Ժողովրդական երգի մէջ եւս այդ մասին յիշատակութիւն կայ (ընգծումները մերն են- Վ.Ս.).

Դուրդ կեր *աղբիւրի* ջուր,
Վոտքդ կուգար շատ *կաղ* ու *կուր*,
Ամմենուն էլ *մուրատը տուր*,
Մըշու սուլթան սուրբ Կարապետ,
Մուրազ տուող Սուրբ Կարապետ,
Ուխտդ կուգար Վարդեւըրին,
Լսըդ պայծառ, Սուրբ Կարապետ[56]:

Հրաշագործ զօրութեամբ օժտուած Լուսաղբիւրը ոչ միայն հիւանդներին՝ կոյր ու կաղերին էր բուժում, այլեւ, ի հակակշիռ ցանկասէր կրքերի, խորհրդանշում էր փոխադարձ ազնիւ սէրը, որը աստուածահաճոյ ընտանիքի ստեղծման ու բազմացման հիմքն է: Որդեծնութեան, արգասաւորութեան այս գաղափարը գեղարուեստական պատշաճ պատկերով է արտայայտուած Վարդավառին կատարուող Պարտիզակի հետեւեալ պարերգում.

Լուսաղբիւրին ծառերը,
Հոն թռփ կ՛ըլլան եարերը/մանչերը,
Նշանածնիս որ տեսնին՝
Ծուռ կը դրնին ֆեսերը[57]:

Կարապետ Մելիք-Փաշայեանի համաձայն, «Վարդավառի տօներին Հայաստանի գրեթէ բոլոր գաւառներում սովորութիւն կար, ըստ որի տարբեր վայրերից տօնախմբութեան եկած այն տղաները եւ աղջիկները, որոնք առաջին անգամ էին իրար հանդիպում, նշանւում էին, որովհետեւ կարծում էին, թէ այդ օրուայ նշանուածները երջանիկ եւ բախտաւոր կը լինեն, կամ նրանցից ծնուած երեխաները՝ «իմաստուն» եւ «չնորհալի»: Այս սովորութիւնը մեզ տանում է դէպի հեռաւոր անցեալը, երբ անահտական մեհեանների շուրջը տեղի էին ունենում նման երեւոյթներ»[58]:

Միանգամայն այդ տարրը պարզորոշ նկատելի է նաեւ Վարդավառին կատարուող Եոզղատի պարերգի մէջ (ընգծումները մերն են — Վ.Ս.).

Հէ՛յ վարդավառ, հո՛յ վարդավառ,
Մուրատս տուր կամ՝ *հոգիս առ*,
Մուրատս տուր կամ՝ *հոգիս առ:*
Աղջի՛կ, սեւ աչքերուդ մատաղ,
Ըլլամ *արտերուդ մէջ* հօտաղ:

Հէ՛յ վարդավառ, հո՛յ վարդավառ,
Մուրատս տուր կամ՝ *հոգիս առ*,
Մուրատս տուր կամ՝ *հոգիս առ:*
Աղջի՛կ, քո սեւ մազերուդ դուրբան,
Ըլլամ *պարտէզիդ* պահապան[59]:

Արտաքուստ սիրոյ խոստովանութիւն յիշեցնող այս երգի մէջ եւս «մուրատը» (արգասաւորող ջուրը) թէպէտ չի նշւում, բայց փոխաբերական պատկերով կապւում է «արտի», «պարտէզի» բերք ու բարիքի հետ, որը երկրագործութիւնից ակնկալուող վերջնական նպատակն է,

կեցութեան, գոյատեւումի պայմանը՝ «Մուրատս տուր կամ հոգիս առ»:

Սակայն այստեղ ուշագրաւ է նաեւ մի այլ հանգամանք, որ այդ խնդրանքը թէպէտ ուղղուած է Վարդավառին, բայց այն անճնաւորուած է աղջկայ՝ կանացի կերպարում: Սա իր հեռաւոր աղերսն ունի Անահիտ դիցուհու («Անահիտ տիկնոջ») արգասաւորող կարողութեան հաւատալիքի հետ:

Միսկան այդ նոյն կանացի կերպարը, բայց արդէն «Պուպլատիկին» անունով, հանդէս է գալիս Ջմշկածագում Վարդավառի տօնին կատարուող երգի մէջ (ընդգծումները մերն են - Վ.Ս.).

Պուպլատիկինն եկեր է,
Շորէ շապիկ հագեր է,
Ֆեթկին ետեւ կայներ է,
Կարմիր *կովուն իղ* կ՚ուզէ,
Ճերմակ *ծովուն ջուր* կ՚ուզէ,
Սեւ *հաւուն հաւկիթ* կ՚ուզէ,
Ֆեթկի միջին պղտուր կ՚ուզէ[60]:

Այստեղ Պուպլատիկինը յիշեցնում է ջրի եւ պտղաբերութեան աստուածուհի Նարրին, որը կարեւոր տեղ է գրաւել միջագետքեան եւ փոքրասիական կրօններում: Նրա պաշտամունքի առկայութիւնը հայերի մօտ նաեւ ապացուցուած է Ղափանցեանի կողմից[61]: Նարրը մեզ մօտ վերապրուկային ձեւով արտայայտուել է Նուրինի պաշտամունքով, որի մասին բազմաթիւ երգեր կան վերոյիշեալ երգի նմանութեամբ: Օրինակ (ընդգծումները հեղինակինն են - Վ.Ս.)՝

Նուրին, Նուրին եկել ա,
Աջրա հուրին եկել ա,
Շիլա շապիկ հագել ա,
Կարմիր գօտիկ կապել ա.
Չոր բերէք բաքը դնենք,
Եղ բերէք պորտը քսենք,
Ջուր բերէք գլխին ածենք,
Երկնքի դուռը բացենք[62]:

Ահա թէ ինչո՛ւ Վարդավառին ամէնուրեք միմեանց վրայ ջուր են սրսկել այնպէս, ինչպէս Ս. Կարապետ Ծովհաննէս Մկրտիչն է Քիստոս որդուն ջրաթաթախ արել՝ Ծորդանան գետի մէջ մկրտելով: Այսպէս օրինակ՝ Մալաթիայում «ամէն ձեռքի մէջ ջրաման մը բռնուած... գիրար կը հալածեն, միւս կողմէն երիտասարդներ ամէն ճիգ կը թափեն ջրաթաթախ առնել մէկն զմիւսը, աղբիւրին կամ առուակին մէջ

կոխելով։ ... Հանդէսը քաղաքին մէջ եղածով չի վերջանար, դաշտը եւ պարտէզները երթալով, ջրալից գբօսավայրերու առուակներու եւ վտակներուն մէջ ալ կը լոգնան եւ ՎԱՐԴԱՎԱՌ կ'ընեն»[83] (գլխագրումը հեղինակինն է - Վ.Ս.)։

Խարբերդում Վարդավառին գնում էին «Եղեգիի Ս. Նշան, Հիւսենիկի Եօթնակը, մինչեւ Իչմէ-ջուր եւ Զարդարիճայ վանքը»[84]։

Բալուում Վարդավառի օրը «եկեղեցիէն վերջ ուխտի կ'երթային Սրնա աղբիւր, Քամիկ։ Իսկ յաջորդ օրն ալ ուխտագնացութիւն կը կատարուէր դէպի Ս. Լոյս լերան բարձունքը։ Կը մորթուէին մատաղ-ցուները՝ ոչխար կամ գառնուկ մը, ուլիկ մը կամ խորոզ մը։ Ուռենիներու չուքին տակ սփռոցներ կը տարածուէին, ուտելիք-խմելիքներով ծանրաբեռ։ Մինչեւ իրիկուն կը շարունակուէր քէյֆը, նուագ, երգ ու պար վերջ չէին ունենար։ Եւ այդ ամէնուն հետ, ջուրը չէին մոռնար երիտասարդները։ Անոնք դարձեալ ու դարձեալ ջուր կը թափէին միմեանց վրայ, չխնայելով դիմացինին գլուխ-մլուխին եւ ոչ ալ հագուստին։ Հին աւանդական սովորութիւն մը, որ դարերու խորքէն կու գար, յիշեցնելով մեր նախահայրերուն հեթանոսական բարքերը»[85]։

Զարսանճագում «Վարդավառի կիրակի առաւօտ, ով որ անկողնէն շուտ ելլէ, քնացողներու վրայ ջուր կը ցանէ։ ... Վարդավառին, վանքերը ուխտաւորներով կը լեցուին...։ Մասնաւորապէս Գոտարիճ գիւղի՝ Ս. Գէորգ եւ Ս. Աստուածածին, իսկ Մեծկերտի ալ Քառասուն Մանկունք վանքերը, Հայ եւ Քուրդ ուխտաւորներով կ'ողողուին, իրենց մատաղցուներով»[86] (ընգծումները հեղինակինն են - Վ.Ս.)։

«[Այնթապի մէջ] «Վարդլվառ» կը կոչուի նաեւ «Սու Զատիկի» (Ջրի Զատիկ - Վ.Ս.)։ Ջիրար սրսկելու սովորութեան համաձայն ոմանք կը լոգցուէին անխնայօրէն։ Թուրքեր այս տօնը «Սու պայրամը» կը կոչէին եւ իրենց թաղերուն մէջ կամ թաղէն անցնող Հայերու վրայ ջուր կը տեղացնէին եւ ոմանք ալ ջուրի աւազանը կը ձգէին»[87]։

Մուսա լեռում Վարդավառը (Վարդիվուռը) տօնել են «Խըտրպէկի ակին մօտ, պատմական սօսիին հովանիին տակ...։ Վարդավառի տօնախմբութեանց մէջ կը մտնէ նաեւ իրարու վրայ ջուր նետելու սովորութիւնը։ Խըտրպէկի մէջ, ընդհանուր ուրախութեան ու բացագանչութիւններու մէջ, գիրար կը նետէին գետակին մէջ։ Այս սովորութիւնը հին հեթանոսական տօնախմբութիւններէն մնացած է»[88]։

Իսկ Մարաշի մէջ «Ժողովուրդը կ'ըսէր թէ Վարդավառի կիրակիին Շաբաթ իրիկուընէ ջուրերը կը չաոնան։ Առաջ Շաբաթ իրիկուընէ ակեր, աղբիւրներ կ'երթային, ինչպէս Գըրգ-կէօզ (Քառասնակն), որ գեղեցիկ գբօսավայր մըն էր։ Գիշերը հոն կը մնային մինչեւ առտու՝ ականատես ըլլալու համար ջուրին ճիշդ շաոցած առեն։ Սակայն, վերջերս սովորութիւն էր առտուն կանուխ երթալ Քառասնակն, ուր

չատ կիներ կը լուացուէին Ս. Կատարինէ անուն աղբիւրը, որ կը բխի Գըրգ-կէօղի արեւելեան թագաւորաքոլ բլուրին արեւմտեան ստորոտէն։ Արեւը չի ծագած կ'աճապարէին ելլել թագաւորաքոլ բլուրը, որ Թադէոս Առաքեալի ուխտատեղին է...։ Մարաշի մէջ ալ իրարու վրայ ջուր սրսկելու սովորութիւն կար՝ այս տօնին առթիւ» (ընդգծումը հեղինակինն է - Վ.Ս.)[69]։

Վարդավառին դէպի Թաքսաւորաքոլի (Թադէոս Առաքեալի) ուխտավայրը կատարուող ուխտագնացութեան մասին է մեզ պատմել Մարաշցի Արամ Մոմջեանը (ծն. 1910). «Կէս գիշերից մինչեւ առտու կը բարձրանայինք լեռը՝ ամէն մէկը քար մը չալկած։ Մեր հանած քարերը կը դիզէինք ծառի մը տակ, որը գոհասեղանի պէս կ'ըլլար։ Հոն կ'աղօթէինք, գոհեր կը մատուցէինք։ Մարաշի բարբառով այս երգն ալ այդ օրուան մասին է.

Թաքսաւորաբօլան էօրն է էսէօր,
Էրթօնք բիլլինք հէօն չիւր գէսէօր,
Քիզ ա գրկօնք, սուրփ Գադարնէ,
Ղուրբօն ըննօմ՝ ծէառքէս պոնէ։

Թադէոս առաքեալի օրն է այսօր,
Գնանք զբօսնենք մինչեւ կէսօր,
Քեզ եւս կը գանք, Սուրբ Կատարինէ,
Չեռքիցս բռնիր՝ մատաղ լինեմ»[70]։

Բացի այդ, Մարաշում «կը պատմուէր թէ խնամակալ Աստուածածուհին Անահիտ, Նաւասարդի տօնին, վաղ արշալոյսին, վահեվահեան տաճարներէն կ'իջնէր Արածանիի ջուրերուն մէջ լոգնալու համար, եւ երբ արեւուն նախընծայ չողերուն հետ ջուրէն ելլէր, որպէսզի մերկութիւնը ծածկէ մահկանացու մարդոց աչքերէն, գգաստութեանց ու ամենայն առաքինութեանց Մայրը, կ'այլակերպուէր, լուսաւոր ամպով մը կը ծածկուէր ու վեհաշուք կը վերադառնար իր մեհեանը։ Եւ ահա ճերմակ ու լուսափետուր աղաւնիներ կը թռչէին դէպ երկինքը՝ հանուր աշխարհի աւետելու համար Աստուածածուհւոյն ելքը ջուրէն, կը հնչէին նուագարանները, Գողթան փանդիռն, ծնծղաներն ու գալարափողերը քուրմերուն։ Կը սկսէին քաջութեան մրցումները ազնուատոհմ երիտասարդութեան մէջ, ձիարշաւը, որսորդութիւնը, մականախաղը, գօտեմարտն ու սուսերամարտը եւ այլ տեսակ տեսակ խաղեր, որոնց ընթացքին քաջերու մէջ քաջերը կ'ընտրուէին եւ յաղթութեան պսակը կը ստանային, իսկ Հայոց կոյսերը վարդի փունջեր ընծայ կը տանէին Աստուածածուհւոյն բագինին, անոր չնորհներուն արժանի ըլլալու համար։ Նոյն պահուն գետը կը ծածկուէր հազարաւոր կտրիճներով, քանզի ըստ աւանդութեան, ով որ Աստուածածուհիէն ետքը ջուրը նետուէր, սրտին մէջ ինչ մուրազ որ ունէր կը կատարուէր» (ընդգծումը՝ հեղինակէն - Վ.Ս.)[71]։

Արեւմտահայ տարբեր շրջաններից բերուած փաստերը վկայում են, որ ամէնուրեք Վարդավառի ուխտագնացութիւնները կատարուել են

գետերի, աղբիւրների եւ ակերի մօտ: Հետեւաբար Վարդավառի տօնի հիմքում ջրի հետ կապուած արարողութիւնն է, որը վկայում է, որ այդ տօնը նուիրուած է եղել ջրի աստուածութեանը:

Ինչպէս արդէն տեսանք, Ս. Կարապետի նահատակութեան առիթով հողի մէջ ցորեն կամ մարդ թաղելը համարուել է զոհաբերութիւն հողին՝ դրանից ակնկալուող հետեւանքներով, նոյնպէս եւ ջրի մէջ նետուելը, ջրի մէջ սուզուելը, միմեանց վրայ ջուր սրսկելը տարեշրջանի երկրագործութեան հետ աղերսուող ծիսահմայական գոհամատոյցի արարողութեան մի այլ դրսեւորումը պիտի համարել, քանի որ ջուրը որպէս բնութեան տարրերից մէկը ոչ միայն մաքրող, այլեւ ոռոգող, բերքատուութեանն ու պտղաբերութեանը նպաստող, արգասաւորող հանգամանք ունի: Իսկ Վարդավառի տօնը նախեւառաջ ջրատօն է, որը կատարուում է Յուլիս ամսին: Յուլիս ամիսն ինչպէս թուրքերէն Temmuz է կոչւում, նոյնպէս եւ Մուսալերան բարբառում հնչում է՝ թամմուզ ձեւով[72]: Յիշենք նաեւ Թամմուզ-Ադոնիսի պաշտամունքը Հին Արեւելքում, կապուած՝ ոռոգման երկրագործութեան հետ:

Բացի այդ, պարզւում է որ Արեւելքում գետերի հեղեղումներն սկսւում են Յուլիսի կէսին եւ չարունակւում մօտաւորապէս չորս ամիս[73]:

Ինչպէս արդէն ազգագրական նիւթից տեղեկացանք՝ «Մարաշի մէջ ժողովուրդը կ'ըսէր, թէ Վարդավառի Կիրակին Շաբաթ իրիկուընէ ջուրերը կը չատնան: Առաջ Շաբաթ իրիկուընէ ակեր, աղբիւրներ կ'երթային, ինչպէս Գըրդ Կէօզ (Քառասնակն), որ գեղեցիկ գրօսավայր մըն էր: Գիշերը հոն կը մնային մինչեւ առտու ականատես ըլլալու համար ջուրին ճիշդ չատցած ատենը ... ոմանք կը գոհէին մէյ մէկ աքաղաղ»[74] (ընգծումները մերն են - Վ.Ս.):

Պարզւում է նաեւ, որ «սումերական քաղաքներում այլ ձեւի թաղումներ էին տեղի ունենում. այդ գոհաբերութիւնները տեղի էին ունենում ջրերի բարձրացման շրջանում կատարուող կրօնական գործողութիւնների կապակցութեամբ: Ըստ երեւոյթին, այդ գոհաբերութիւնների նպատակն էր ջրերի յորդացումն իրենց համար բարեյաջող դարձնել, այսինքն դրանք կապուած էին երկրագործութեան եւ ոչ թէ հոգեհանգստեան կուլտի հետ»[75] (ընգծումները մերն են - Վ.Ս.):

Հետեւաբար հասկանալի է դառնում, թէ ինչո՛ւ յատկապէս Յուլիս (Թամմուզ) ամսի Վարդավառի տօնին արեւմտահայերը ուխտագնացութիւն են կատարել դէպի ջրերի ակերը եւ գոհեր մատուցել, քանի որ Ս. Կարապետը «մատաղ կ'ուզէ Վարդավառին», որպէսզի փոխարէնը նրանց տայ իրենց ակնկալած արդիւնքը՝ մուրաբը, այսինքն՝ ոռոգման ջուրը: Պատահական չէ, որ Հին Արեւելքի ողջ երկայնքով հոսող

Եփրատ գետին նաեւ Մուրատ են անուանել, քանի որ ոռոգման ջուրը երկրագործութեան նախապայմանն էր:

Այդ առումով ուշագրաւ է ոռոգման ջրի հետ կապուած աղօթքը, որը հետեւեալ կերպ է բանաձեւուել Բէյլանի բարբառով (ընդգծումները մերն են - Վ.Ս.).

Չուր դաղդէրը քըղ *գանանչնօն,* *Չոր տեղերը* քող *կանաչեն,*
Չածգուզ տօղդէրը քըղ *պացվօն,* *Փակ դռները* քող *բացուեն,*
Նեղըքօն մէչ ըննօղդացը Նեղութեան մէջ եղողներին
Ասդվօծ հէվտուն քըղ խըլլասս, Աստուած բոլորին քող փրկի,
Մարիամ Ասդվօծաճնը ծառքը *Մարիամ Աստուածածնի* ձեռքը
Դայմա միր իրվան ըննօ, Թող միշտ մեր վրայ լինի,
Սուրփ Գարաբիդն ալէ Սուրբ Կարապետը եւս
Դայմա եարդըմջա քըղ ըննօ Թող միշտ օգնական լինի[76]:

Ուշագրաւ է, որ աղօթքն ուղղուած է Մարիամ Աստուածածնին ու Ս. Կարապետին (ի դէպ այս զոյգ սրբերի համադրութիւնը, ինչպէս տեսանք, միայն այստեղ չէ, որ առկայ է), որպէսզի նրանց օգնութեամբ «չոր» տարածքները ոռոգուեն ու «կանաչեն», իսկ ստորերկրեայ «փակ դռները»՝ բացուեն: Յիշենք հացահատիկի աստուած Թամմուզի եւ Իշտարի առասպելում ստորերկրեայ աշխարհի փակ դռների բացուելը: Իսկ քրիստոնէական շրջանում փակ դռները բացողն ու մուրատ տուողը Մարիամ Աստուածածինն է ու Ս. Կարապետը (ընդգծումը մերն է - Վ.Ս.).

Հօրըդ կապած լեզուն *բացիր,*
Շատ բեմուրատ մուրատեցիր,
Մուրատ տըւող Սուրբ Կարապետ[77]:

Արդ՝ անդրադառնանք Մուսա Լեռում եւ Քեսապում Վարդավառին կատարուող ժողովրդական երգերին:

Ջօրա Իսկենդերեանը, խօսելով Վարդավառին Մուսա Լեռում կենցաղավարուող ժողովրդական տօնակատարութեան մասին, նշում է. «Թմբուկին գոռ ձայնը իրեն կը հրաւիրէ օղիէն զուարթացած խանդավառ երիտասարդները, որոնք կը պարեն թաչկինակներով՝ թմբուկի յատուկ իրենց պարերը՝ զոյգ-զոյգ կամ խմբովին»[78]:

Իսկ Մարտիրոս Գուշակճեանը, քննութեան առնելով մուսալեռցիների երգն ու պարը, աւելացնում է. «Ինչպէս բացատրել այս աղքատութիւնը: Արդեօք խորհելո՞ւ է թէ ժամանակին մուսա լեռցին ունեցած է իր հայադրոշմ ճոխ ֆոլքլորը, սակայն պարագաներու ցաւալի

դասաւորումով, մոռցուա՞ծ է ու սրբուա՞ծ ժողովուրդին յիշողութենէն»[79]:

Սակայն մեր բազմամեայ հետեւողական պրպտումների ընթացքում հայրենիքում հանգրուանած հայրենադարձ մուսալեռցիներից մեզ յաջողուել է գրի առնել (նաեւ՝ մեղեդին նոտագրել) «Հալա, հալա, հալա, Նիննա է» կրկնակով պարերգի շուրջ 85 միաւոր չարեր[80]:

Նոյն կրկնակով չարեր գրի ենք առել նաեւ մուսալեռցիների հարեւան քեսապցի հայրենադարձներից[81], *որոնք եւս անցեալում Վարդավառին իրենց նուիրական Պարլում (կամ Պալլում) ուխտավայրն են բարձրացել, Թեքնեջոք աղբիւրի մօտ կատարելու համար եռօրեայ ուխտագնացութեան տօնակատարութիւնները*[82]:

Այդ նոյն ուխտավայրն է յիշատակուած մեր գրի առած խնդրոյ առարկայ պարերգի հետեւեալ տողերում (ընգծումը մերն է - Վ.Մ.).

Քրսպու վիրիվը Բալլում,	Քեսապից վերեւ Բալլումն է,
Վառիցօ եալըմ-եուլըմ:	Ջո սիրուն վառուեցի ես:
Հալա, հալա, հալա, *Նիննայ* է:	Հալա, հալա, հալա, *Նիննայ* է[83]:

Թէպէտ վերոյիշեալ հպանցիկ ակնարկներում չեն յիշատակուած թէ՛ մուսալեռցիներն ու քեսապցիները Վարդավառի տօնակատարութեան ժամանակ ի՛նչ երգեր ու պարերգեր են կատարել, սակայն մեր խորին համոզմամբ դրանք այդ շրջանում տարածուած «Հալա, հալա, հալա, Նիննայ է» կրկնակով երգուող չարերն են, որոնք կատարուել են Վարդավառին, իսկ յետագայում նաեւ այլ խրախճանքների ժամանակ՝ յանպատրաստից յօրինուած բառերը յարմարեցնելով պարերգի կրկնակի ոտքին ու յանգին:

Պարերգային այդ չարերի մէջ կրկնակն է, որ կենտրոնական կշիռ ունի: Այն կայուն է ու վաղնջական[84]: *Կապուած լինելով նախնական ծէսի ու տօնի հետ, կրկնակն անընդհատ կրկնուելով, կատարել է խօսքի համալական ներգործուն դեր՝ հիմքում ունենալով գերբնական ոյժերից ակնկալուող զօրութեան հաւատալիք եւ պաշտամունքային տարրեր*[85]:

Պատահական չէ, որ Արեւելքի ծովափնեայ Մուսա Լեռում եւ Քեսապում են պահպանուել չումէրական Նիննա աստուածուհու պաշտամունքի արձագանգները: Քանի որ, արդարեւ, Հին Արեւելքում, որպէս պտղաբերութեան եւ արգասաւորութեան աստուածներ, պաշտուել են ոչ միայն Թամմուզն ու Ադոն, նաեւ Դերկետօն, Իշտարն ու Շամիրամը (իրենց անբաժանելի նուիրական աղաւնիներով)[86], *այլեւ՝ չումէրական Նիննա աստուածուհին (ձկան՝ ջրի եւ արգասաւորութեան խորհրդանշով)*[87]: *Այդ հին աստուածուհիները սկզբնապէս օժ-*

տուած են եղել գերբնական նոյն զօրութեամբ, ինչը յետագայում Անահիտ դիցուհին Հայաստանում։

Եւ ի վերջոյ «Հալա, հալա, հալա, Նիննայ է» կրկնակով պարերգերը փառաբանական ձօներգեր են եղել նուիրուած բերքատուութեան, պտղաբերութեան եւ արգասաւորութեան աստուածներին, որոնց եւ նախապէս նուիրուած է եղել Վարդավառի հեթանոսական ծիսակատարութիւնը, իսկ յետագայում քրիստոնէութեան շրջանում, այդ պաշտամունքի որոշ տարրեր վերապրուկի ձեւով պահպանուել են Մ. Կարապետի (=Յիսուս Քրիստոսի) նաեւ Մարիամ Աստուածածնի «մուրազատուր» զօրութեան մէջ։

Ամփոփելով, նշենք որ փոքրասիական եւ միջագետքեան ցեղախմբերի աստուածները (Թամմուզ, Իշտար, Նար, Նիննա եւլն.) թէպէտ անմիջականօրէն չեն մտնում հայ հեթանոսական դիցարանի մէջ, սակայն նրանք կարեւոր տեղ են գրաւել հայ էթնոսի ձեւաւորման գործում եւ իրենց նշանակալի հետքն են թողել հայ ժողովրդի արեւմտահայ հատուածի դիցաբանական մտածողութեան վրայ, որն ակնյայտ է դառնում Վարդավառի վերաբերեալ ժողովրդական նիւթերն ուսումնասիրելիս։

ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Հ. Ղեւոնդ Ալիշան, Հին Հաւատք կամ Հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1910, էջ 303։

[2] Գրիգոր Ղափանցեան, Արա Գեղեցիկի Պաշտամունքը, Երեւան, ՀՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն, 1944, էջ 125։

[3] Արշակ Ալպոյաճեան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ. Տեղագրական, Պատմական եւ Ազգագրական Ուսումնասիրութիւն, Բ. Հատոր, Գահիրէ, Հրատարակութիւն Կեսարիոյ եւ Շրջակայից Հայրենակցական Միութեան Գահիրէի Վարչութեան, 1937, էջ 1769-70։

[4] Հ. Եփրեմ Վ. Պօղոսեան, Համբարձման Տօնը եւ Հայ ժողովրդի Վիճակախաղը, Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1956, էջ 182։

[5] Նոյն, էջ 184։

[6] Հրաչեայ Աճառեան, Հայ Բարբառագիտութեան Պատմութիւն, Էմինեան Ազգագրական Ժողովածու, հ. Ը., Մոսկուա-Նախիջեւան, 1911, էջ 215։

[7] Վերժինէ Սվազլեան, Կիլիկիա. Արեւմտահայոց Բանաւոր Աւանդութիւնը, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատարակչութիւն, 1994, էջ 147։

[8] Նոյն։

[9] Գրիգոր Գալուստեան, Մարաշ կամ Գերմանիկ եւ Հերոս Զէյթուն, Նիւ-Եորք, Հրատարակութիւն Մարաշի Հայրենակցական Միութեան կեդր[ոնական] Վարչութեան, 1934, էջ 340։

[10] Նոյն։

[11] Նոյն։

[12] Գէորգ Սարաֆեան, Պատմութիւն Անթէպի Հայոց, հ. Բ., Լոս Անճելըս, Հրատարակութիւն Ամերիկաբնակ Անթէպցիներու Միութեան, 1953, էջ 393։

[13]Վասիլի Ստրուվէ, Հին Աչխարհի Պատմութիւն (Հին Արեւելք), հ. 1, Երեւան, 1938, էջ 160։
[14]Ղափանցեան, էջ 46։
[15]Ստրուվէ, էջ 158։
[16]Նոյն, էջ 158-160։
[17]Նոյն, էջ 158-159։
[18]Ղափանցեան, էջ 60։
[19]Նոյն, էջ 161։
[20]Թադեւոս Յակոբեան, Ստեփան Մելիք-Բախչեան եւ Յովհաննէս Բարսեղեան, Հարթատանի Եւ Յարակից Շրջաններուն Տեղանուններուն Բառարան, հ. 2, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1988, էջ 405։
[21]Մեր կիլիկիա աշխատութեան մէջ այն տրուած է «Թամբարան» ձեւով, որը ազաւաղուած ձեւն է Թամզարային։
[22]Սվազլեան, Կիլիկիա, էջ 126-127։
[23]Տեղանուններուն բառարան, էջ 467-468։
[24]Կեսարիայից ընդամէնը ութ ժամ հեռու գտնուող Թոմարզայի բնակիչները դեռեւս ժբ. դարից առաջ հանկէ եկած են, ուրկէ եկած են Ակնցիք, այսինքն Վասպուրականէն, հաւանօրէն Սենեքերիմ Արծրունիի հետ». տե՛ս՝ Ալպոյաճեան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հ. Ա, էջ 856։
[25]Զոմախլուի բնակիչները ԺԸ. դարում պաղթել են կիլիկիայից եւ Մուշից։ «Զօմախլու նոր քաղաք մըն է, եւ հազիւ 250 տարիներու հնութիւն մը ունի». տե՛ս՝ Ալպոյաճեան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հ. Ա, 836։
[26]Ալպոյաճեան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հ. Բ, էջ 1772։
[27]Յովհաննէս Աւագ Սարկ. Տոմարծացի (Թորոսեան), Պատմութիւն Հայ Տոմարծայի, Բ. հատոր, Պէյրութ, Հրատարակութիւն Տոմարծայի Պատմութեան Հրատարակչական Կեդր[ոնական] Յանձնախումբի, 1969, էջ 1360-1361։ Այս եւ յաջորդ քառատողին իբրեւ կրկներգ երգում էին «Հարս հան վիճակ / Աւօր բարի տարի է»։
[28]Նոյն։ Բոլոր ընդգծումները մերն են։
[29]«Ամբագրական. Վարդավառ», Միռն, նոր շրջան, Ժ. տարի, թիւ 7, Յուլիս 1936, էջ 195։
[30]Ալպոյաճեան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հ. Բ, էջ 1772։
[31]Տոմարծացի, էջ 1362-1363։
[32]Մխիթար Թումանեան, Հայրենի Երգ Ու Բան, հ. 2, Երեւան, Հայկական ՍՍՀ Գ.Ա Հրատարակչութիւն, 1983, էջ 215։
[33]Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, Հատոր առաջին, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1979, էջ 1064։
[34]Ստեփան Մալխասեանց, Հայերէն Բացատրական Բառարան, հ. 2, Պէյրութ, «Սեւան» Հրատարակչատուն, 1955, էջ 401։
[35]Թումանեան, հ. 2, էջ 337։
[36]Նոյն, էջ 44։
[37]Նոյն։
[38]Նոյն, էջ 192։
[39]Նոյն, էջ 337։
[40]ՀՀ Գ.ԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի բանահիւսութեան արխիւ, Սուրէն Սահակեանի ֆոնդ, FF XII։ 5297-5311։
[41]Նոյն, FFXII։ 5299։
[42]Նոյն, FFXII։ 5300։
[43]Նոյն, FFXII ։ 5302։

[44]Նոյն, FFXII : 5303:
[45]Նոյն, FFXII : 5305:
[46]Olga Freidenberg, *Mif i literatura drevnosti* [*Առասպելն Ու Հին Ժամանակների Գրականութիւնը*], Մոսկուա, 1978, էջ 94:
[47]Վարդան Պետոյեան, *Սասնայ Ազգագրութիւնը*, Երեւան, 1965, էջ 90:
[48]*Մեր ժողովրդապետական դրագումներից* (անտիպ):
[49]*Ասուածաշունչ Մատեան Հին Եւ Նոր Կտակարանաց*, Վիեննա, 1929, Ղեւտական, գլ. ԻԴ., 5-9:
[50]Թումանեան, հ. 2, էջ 336:
[51]Կարապետ Մելիք-Փաշայեան, *Անահիտ Դիցուհու Պաշտամունքը*, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, 1963, էջ 134-135:
[52]Նոյն, էջ 65:
[53]*Այդ մասին է վկայում նաեւ Հին Կտակարանում տարուայ եօթերորդ ամսուայ տասներկուերորդ օրուան Տիրոջ պատգամը. «Յորժամ բովանդակիցէք զարդիւնս երկրին, տօնեսջիք Տեառն զեւթն օր... Եւ առնուցուք ձեզ յաւուրն առաջնում պտուղս գեղեցիկ ծառոց, եւ կոդերս յարմաւենեաց, եւ ոստս ի տերեւախիտ ծառոց եւ յուռեցս եւ ոստ հագնեաց՝ ի ձորոց, ուրախ լինել առաջի Տեառն զեւթն օրս»- տե՛ս՝ Ասուածաշունչ, Ղեւտական, գլ. ԻԳ., 39-41:*
[54]Նոյն, *Մատթէոս*, գլ. Զ., 9-11:
[55]*ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի բանահիւսութեան արխիւ*, FFXII: 5305:
[56]Թումանեան, հ. 2, էջ 337:
[57]Նոյն, հ. 1, Երեւան, 1972, էջ 137. Սվազլեան, *Կիլիկիա*, էջ 133:
[58]Մելիք-Փաշայեան, էջ 131-132:
[59]Ն. Փիլոպասեան, *Ծուշարժան Նոզդասցիներու*, Գալֆորնիա, 1955, էջ 106-108:
[60] Թումանեան, հ. 2, էջ 411:
[61]Grigor Kapantsian, *Khetskie bogi u armian* [*Խեթական Աստուածներն Հայերի Մօտ*], Երեւան, 1940:
[62]Երուանդ Լալայեան, «Բորչալուի Գաւառ», *Ազգագրական Հանդէս*, ութերորդ տարի, գիրք 10, էջ 200-201:
[63]Արշակ Ալպոյաճեան, *Պատմութիւն Մալաթիոյ Հայոց. Տեղագրական, Պատմական Եւ Ազգագրական*, Պէյրութ, Հրատարակութիւն Մալաթիոյ Կրթասիրաց Ընկերութեան, 1961, էջ 1144:
[64]Մանուկ Աբեղեան, *Խարբերդ Եւ Իր Զաւակները*, Ֆրեզնօ, 1955, էջ 678:
[65]*Պատմութիւն Պաղնատան*, Պոսթըն, 1906, էջ 284-285:
[66]Գէորգ Երեւանեան, *Պատմութիւն Ջարսանճագի Հայոց*, Ֆրեզնօ եւ Պէյրութ, Հրատարակութիւն Համա-Ջարսանճագի Հայրենակցական Միութեան Կեդրոնական Վարչութեան, 1956, էջ 503:
[67] Գէորգ Սարաֆեան, *Պատմութիւն Անթէպի Հայոց*, հ. Բ., Լոս Անճելըս, 1953, էջ 396:
[68]*Ծուշամատեան Մուսա Լերան, խմբ. Մարտիրոս Գուշակճեան եւ Պօղոս Մատուռեան*, Պէյրութ, Հրատարակութիւն Ճէպէլ Մուսայի Հայրենակցական Միութեան, 1970, էջ 181:
[69]Գալուստեան, էջ 343:
[70]*Սվազլեան, Կիլիկիա*, էջ 201:
[71]Գալուստեան, էջ 342:
[72]*Մուսա Լերան ծովափնեայ Քեբուսիէ գեղգուշ Թամըզին (Ծուլիա), ամենայն հաւանականութեամբ Վարդավառին, ծովափ են իջել, լողացել, յետոյ Ջաւըզի ակն են գնացել, պաղ ջրեր խմել, երեսները լուացել ու, դափնու չուքի տակ նստած, կերել,*

խմել, ուրախ ժամանակ անցկացրել· աւելի մանրամասն տե՛ս՝ Սվազլեան, Կիլիկիա, էջ 201։ Աղաբեկեն եւս այն արտասանում է Թամմուզ։

[73] *Սարուվէ, էջ 158։*

[74] *Գալուստեան, էջ 343։*

[75] *Սարուվէ, էջ 103։*

[76] *Սվազլեան, Կիլիկիա, էջ 248։*

[77] *Թումանեան, հ. 2, էջ 336։*

[78] *Բուշամատեան Մուսա Լեռան, էջ 181։*

[79] *Նոյն, էջ 221։*

[80] *Վերժինէ Սվազլեան, Մուսա Լեռ, Հայ Ազգագրութիւն եւ Բանահիւսութիւն, 16, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, 1984, էջ 118-124։*

[81] *Սվազլեան, Կիլիկիա, էջ 127-128։*

[82] *Յակոբ Զուլաքեան, Քեսապ, հ. Ա, Պէյրութ, 1995, էջ 45։*

[83] *Սվազլեան, Կիլիկիա, էջ 127։*

[84] *Թումանեան, հ. 1, էջ 243։*

[85] *Յարոյր Խաչատրեան, «Կրկնակների Ու Կրկնութիւնների Գործառոյթները Մխերգերում», Պատմա-Բանասիրական Հանդէս, թիւ 2 (133), 1991, էջ 135։*

[86] *Վարդավառին սպիտակափետուր ագաւնիներ են թռցրել դէպի երկինք։ Յունարէն* Peristera *նշանակում է «աղաւնի»· սեմական փոխառութիւն է, կազմված* Perasistar = *Քոչուն Իշտարի բառերից, իսկ* Semiramis *ասորերէն նշանակում է ագաւնի»* sum = *վարուժան,* summatu = *էգ ագաւնի· աւելի մանրամասն տե՛ս՝ Ղափանցեան, էջ 38։*

[87] *Նոյն, էջ 116։*

THE PAGAN ORIGINS OF THE FEAST OF *VARTAVAR* IN WESTERN ARMENIAN FOLKLORE
(Summary)

VERJINÉ SVAZLIAN

The author discusses the pagan origins of the Feast of *Vartavar* (the Transfiguration of Christ) as the occasion to worship water elements. She analyzes in detail the traditions of pouring water, flying pigeons, going on pilgrimages, offering sacrifices and making predictions in some regions of Western Armenia. She argues that this folk festival was linked to the worship of gods that underwent death and rebirth (Ara the Handsome, Adonis, Tammuz, Jesus Christ) and also of St. Karapet (John the Baptist). The latter symbolized, as the person who baptized Jesus Christ in the River Jordan, both agriculture (sown fields) and especially water for irrigation – the precondition guaranteeing the fertility of nature.

ՀԱՑՈՑ ԱՐՏԱԻԱԶԴ Բ. ԹԱԳԱՒՈՐԸ ՀՌՈՄԷԱ-ՊԱՐԹԵՒԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԳՈՑՑՆԵՐՈՒՄ

ՎՐԷԺ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Հայոց խորախոհուն ու հեղինակաշնորհ Արտաւազդ Բ. (55-34) թագաւորը՝ իր հօրից՝ Տիգրան Բ. Մեծից (95-55) ժառանգեց ոչ միայն նրա հողմածեծ գահը, այլեւ 66ին ուժեղի պարտադրած հայ-հռոմէական գինադադարը: Այդուհանդերձ, Արտաւազդի օրօք Մեծ Հայքը դեռեւս մնում էր որպէս կարեւոր ռազմաքաղաքական գործօն Արեւելքի երկրների միջ-պետական յարաբերութիւններում: Արտաւազդը կարողացաւ իրատեսօրէն գնահատել ստեղծուած իրադրութիւնը եւ հռոմէա-պարթեւական զինաբախումների ընթացքում վարել իր երկրի շահերից բխող դիւանագիտութիւն:

Հայաստանի հարեւան պարթեւական Իրանը բոլորովին չէր տուժել մ.թ.ա. Ա. դարասկզբի հռոմէա-պոնտական եւ հայ-հռոմէական պատերազմներից, որոնց հետեւանքով՝ Արեւելքում ստեղծուած նոր կացութեան պայմաններում, նա դարձաւ հռոմէական տէրութեան մրցակիցը: Երկու աշխարհակալութիւնների միջեւ դիւանագիտական յարաբերութիւններն սկզբնաւորուել էին 92ին, երբ պարթեւների թագաւոր Միհրդատ Բ.ի (մօտ 123-88/87) բանագնացները ժամանեցին Կապադովկիա եւ Կիլիկիայի հռոմէական կառավարիչ Կորնելիոս Սուլլային առաջարկեցին դաշինք՝ Պոնտոսի թագաւոր Միհրդատ Ջ.ի (111-63) դէմ[2]: Սակայն այն չկայացաւ, քանզի Հռոմը չէր հանդուրժում Արեւելքում զօրեղ մրցակցի գոյութիւնը: 66ին Արտաշատում կնքուած հայ-հռոմէական պայմանագրից յետոյ Հռոմի եւ Պարթեւաստանի միջեւ յարաբերութիւնները սրուեցին: 64ին հռոմէական զօրապետ Գնէոս Պոմպէոսը՝ վրաստանն ու Աղուանքը նուաճելուց յետոյ, զօրք ուղարկեց պարթեւների դէմ, գրաւեց Միջագետքի զգալի մասը: Սակայն, նոյն թուականին, պարթեւներն այնտեղից վտարեցին հռոմայեցիներին՝ դուրս գալով նրանց գրաւած Ասորիքի մատոյցները: Պարթեւական թագաւոր Օրոդէս Բ.ի (55-37) օրօք հռոմէա-պարթեւական յարաբերութիւնները մնում էին լարուած՝ Միջագետքի պատճառով: Հռոմէական կողմը սպասում էր յարմարադէպ պահի՝ Պարթեւաստանի դէմ պատերազմ սկսելու համար:

60ին Հռոմում կազմուած առաջին եռապետութեան ազդեցիկ անդամներից էր Մարկոս Կրասոսը՝ 74/73-71ի ստրուկների խոշոր ապստամբութեան առաջնորդին՝ Սպարտակին յաղթողը, որն այժմ

ստացաւ Ասորիքը: Նա ջանում էր գերազանցել եռապետութեան միւս անդամներ Պոմպէոսին եւ Ցուլիոս Կեսարին՝ պարթեւաստանի դէմ յաջող պատերազմի միջոցով ակնկալելով դիւրին յաղթանակ: Միւս եռապետերը հաւանութիւն տուեցին Կրասոսի այդ մտայղացմանը[4], թէեւ Հռոմի ծերակոյտը (սենատ) նման յանձնարարութիւն չէր տուել նրան: Ի զուգակշիռ մ.թ.ա. Դ. դարի մեծ նուաճող Ալեքսանդր Մակեդոնացու, Կրասոսը կամենում էր գրաւել Արեւելքի բոլոր երկրները, հասնել Հնդկաստան եւ աւելի հեռուն տարածուող երկրներ, որոնց անբաւ հարստութիւնները չլացնում էին նրան: Հռոմում ժողովրդական տրիբուններն վետո դրեցին պարթեւների դէմ նախապատրաստուող պատերազմի վրայ, այն պատճառաբանութեամբ, որ պարթեւները որեւէ անարդարացի քայլ չէին ձեռնարկել Հռոմայեցիների նկատմամբ[5]: Սակայն Կրասոսը քամահրեց թէ՛ Հռոմի ծերակոյտին, թէ՛ ժողովրդական տրիբուններին եւ 54ի գարնանը իր մօտ 50 հազարանոց զօրքը[6] շարժեց դէպի Փոքր Ասիա եւ Գաղատիայի ու Կիլիկիայի վրայով խուժեց Ասորիք: 54ի ամրանը, Ջեւգմայի մօտ, նա գետանցեց Եփրատը եւ մտաւ Միջագետք, որտեղ դիւրութեամբ գրաւեց յունական քաղաքները՝ Ապամէան, Հառանը եւլն.՝ այնտեղից դուրս վանելով պարթեւներին: Բայց նա չշարունակեց յաջող սկսած յարձակումը եւ նշուած քաղաքներում թողնելով հռոմէական կայազօրներ (7000 հետեւակ եւ 1000 հեծեալներ) վերադարձաւ Ասորիք, ըստ երեւոյթին լրացուցիչ ոյժեր եւ մթերապաշար հայթայթելու նպատակադրումով: Ասորիքում նա հանդիպեց որդուն, որը օգնական զօրուժ էր բերել՝ բաղկացած 1000 ընտիր հեծեալներից, որոնց ուղարկել էր Ցուլիոս Կեսարը Գալիայից[7]: Ասորիքում եւ Պաղեստինում Կրասոսը կատարեց ապօրինի բռնագանձումներ՝ կողոպտելով Հիերապոլիսի եւ Երուսաղէմի տաճարները[8]:

Օրոդէս թագաւորը բանագնացներ ուղարկեց Կրասոսի մօտ՝ փորձելով հասնել խաղաղութեան եզրերի, բայց արժանացաւ նրա կոպիտ քամահրանքին ու մերժմանը[9]: Հռոմայեցիների ներխուժումը Միջագետք սպառնալիք էր ստեղծում նաեւ Հայաստանի համար՝ ոչ միայն Հռոմայեցիների, այլեւ պարթեւների կողմից: Այդ պայմաններում, չէզոք դիրքորոշումը Հայաստանը կ՛ենթարկէր Հռոմայեցիների յարձակմանը: Երկրի անվտանգութիւնը ապահովելու նպատակով, 54ի ամրանը, Արտաւազդը թիկնազօրով եւ ուղեկցորդներով մեկնեց Կրասոսի մօտ՝ Ասորիք, եւ խոստացաւ նրան տրամադրել 10 հազարանոց այրուձի, 30 հազար հետեւազօրայիններ, որոնց պէտք է ապահովէր նաեւ մթերապաշարով:

Ցոյն պատմագիր Պլուտարքոսը հաւաստում է, որ Արտաւազդը համոզում էր Կրասոսին՝ Պարթեւաստան արշաւել Հայաստանի

տարածքով, նկատի առնելով նրա լեռնային տեղանքը, ինչը բացառելու էր պարթեւական հեծելազօրի ազատ զօրաշարժերի հնարաւորութիւնը՝ ապահովելով հռոմայեցիներին նրա հարուածներից։ Սակայն, Կրասոսն այնքան վստահ էր իր յաղթանակի նկատմամբ, որ մերժեց հայոց թագաւորի առաջարկը[10]։

Արտաւազդի մշակած այս ծրագիրը դիտւում է իբրեւ ոչ-դիւանագիտական մտայղացում, քանի որ դրանով նա «փաստօրէն հիմնովին լծւում էր հռոմէական ռազմական կառքին»[11]։ Մէկ այլ կարծիքի համաձայն, Արտաւազդն այս հանդիպման ժամանակ Կրասոսի հետ համաձայնուել է հայկական զօրուժով միանալ նրա զօրքին՝ դէպի հարաւային Միջագետք՝ Սելեւկիայի վրայ նրա ռազմերթում, եւ որ հայոց թագաւորն իրը թէ նպատակ ունէր սխալ տեղեկատուութեամբ ապակողմնորոշել Կրասոսին՝ նրան առաջարկելով կանխայայտօրէն անընդունելի ծրագիրը, որի նպատակն էր վհատեցնել վերջինիս վճռական յաղթանակը[12]։ Ենթադրւում է նաեւ, որ Կրասոսի պարթեւական արշաւանքի հենց սկզբից՝ 53ի գարնանից, հայոց եւ պարթեւ թագաւորները նկատի են առել 64ի Տիգրան Բ. Մեծի եւ պարթեւների թագաւոր Հրահատ Գ-ի (70/69-58/57) միջեւ կնքուած դաշինքը՝ ուղղուած Հռոմի դէմ[13]։

Արդ, որո՞ն էր Արտաւազդի ծրագիրը հռոմէա-պարթեւական այս պատերազմի ժամանակ։ Պէտք է կարծել, որ Կրասոսին Հայաստանով արշաւելու առաջարկ անելով, հայոց թագաւորը կամենում էր իր երկիրը ձերբազերծել պարթեւների սպառնալիքից եւ նրանց համոզել, որ Կրասոսի հետ իր դաշինքը հարկադրական քայլ է՝ կեանքի կոչուած հռոմէական զօրքի Հայաստան ներխուժման հետեւանքով, որի պայմաններում Արտաւազդն այլընտրանք չունէր։ Բայց, ինչպէս տեսանք, Կրասոսը մերժեց հայոց թագաւորի առաջարկը, ուստի վերջինս՝ ցուցաբերելով դիւանագիտական չրջահայեացութիւն, դաշինքի մէջ մտաւ պարթեւների թագաւոր Օրոդէսի հետ, որն արդէն պատերազմ էր ձեռնարկել Հայաստանի դէմ, որպէսզի վերջինս «որեւէ օգնութիւն չուղարկի հռոմայեցիներին»[14]։ Օրոդէսն այդպիսով համոզուած էր, որ Արտաւազդը դաշնակցում է հռոմայեցիներին։ Հայաստանին սպառնացող ահեղ վտանգի պահին, Արտաւազդը ճիշտ կողմնորոշուեց՝ հաշտութեան եզրեր գտնելով հարեւանի հետ։ Խառանի մօտ տեղի ունեցած ճակատամարտում պարթեւները՝ իրենց յոյժ մարտունակ հեծելազօրքով եւ Սուրէն զօրապետի յաջող ռազմավարութեամբ[15], ջախջախեցին Կրասոսի զօրքին։ Պլուտարքոսի վկայութեամբ, Խառանի մօտ ծաւալուած մարտերի ժամանակ, Օրոդէսն «արդէն հաշտուել էր Արտաւազդ Արմէնի հետ»[16]։ Պատմագրի «հաշտուել էր» արտայայտութիւնը դարձեալ վկայում է, որ մինչեւ այդ,

պարթեւները պատերազմ էին սկսել Հայաստանի դէմ, նոյնիսկ ներխուժել էին այնտեղ[17]: Ուստի, խօսք չի կարող լինել Կրասոսի արշաւանքի հենց սկզբից հայ-պարթեւական դաշնակցութեան մասին: Ի հարկէ, Արտաւազդը չմասնակցեց Կրասոսի բանակի դէմ պարթեւների արշաւանքներին, քանի որ դրա հարկը չկար: Հռոմայեցիներն արդէն պարտուել եւ հեռանում էին Միջագետքից: Ենթադրւում է, Արտաւազդն «իր հայեցողութեամբ էր պայմանաւորել իրար դիմակայող հակառակորդների՝ Հռոմի եւ Պարթեւաստանի մարտական ոյժերի յարաբերակցութիւնը՝ հռոմայեցիների տակտիկական խոցելիութիւնը եւ Սուրէնի զօրքի գերազանցութիւնը եւ, դրանով իսկ, վերջին հաշուով, պատերազմի ելքը» եւ որ Հայաստանն այդպիսով իրրեւ «երրորդ ոյժ» ի զօրու եղաւ «երկու կռուողներից որոշել յաղթողին»[18]: Սակայն, ինչպէս տեսանք, Արտաւազդը՝ մինչեւ Կրասոսի պարտութիւնը, զբաղուած էր իր երկիրը պարթեւների յարձակումից պաշտպանելու հոգսերով: Պատերազմի ելքը նա չէր կարող որոշել, քանի որ մարտնչող կողմերն իրենից զօրեղ էին: Թէեւ Արտաւազդը պատերազմի մէջ էր պարթեւների դէմ, բայց յաղթանակ տարան հենց նրանք: Էլ ինչպէ՞ս նա կարող էր որոշել պատերազմի ելքը: Պարթեւների հետ նրա դաշինքը կայացաւ այն պահին, երբ ընդհարման ելքն արդէն իսկ վճռուած էր: Պարթեւների հետ Արտաւազդի դաշինքի նպատակն էր ապահովել Հայաստանի անվտանգութիւնը նրանցից եւ ոչ թէ վերջիններիս միջոցով ջախջախել հռոմայեցիներին, ինչը խիստ կը խախտէր ոյժերի յարաբերակցութիւնն Արեւելքում, ի հարկէ, ոչ յօգուտ Հայաստանի: Ստեղծուած պայմաններում, չնայած ձեռք բերուած հայ-պարթեւական հաշտութեանն ու դաշինքին, Արտաւազդը պահպանեց չէզոքութիւն եւ բնաւ չմասնակցեց հռոմայեցիների դէմ պարթեւների յետագայ արշաւանքներին: Բացի այդ, Պլուտարքոսի վերը նշուած վկայութիւնից երեւում է, որ հայ-պարթեւական դաշինքում նախաձեռնողը Օրոդէսն էր:

Կրասոսն ու նրա զօրականները բնաւ պատկերացում չունէին պարթեւների իրական զօրութեան մասին եւ ակնկալում էին դիւրին յաղթանակ[19]: Անշուշտ, Օրոդէսն աւելի իրատես գտնուեց եւ կարողացաւ իր կողմը հակել հայոց թագաւորին՝ ապահովելով Միջագետքում մարտնչող իր զօրքերի թիկունքը: Մինչդեռ Կրասոսը՝ Օսրօէնէի արաբազգի Աբգար Բ. թագաւորի խորհրդով, ընտրեց Միջագետքի ջրազուրկ ու տանջալից ռազմուղին[20]: Խառանը Աբգարի թագաւորութեան սահմաններում էր[21] եւ ունէր յոյն բնակչութիւն: Կրասոսը յոյս ունէր, որ ոչ միայն յունական քաղաքները, այլեւ բովանդակ Միջագետքը կարող են իր ձեռնարկումների համար յուսալի յենարան դառնալ Աբգարի եւ այնտեղ՝ յունական քաղաքներում իր թողած հռոմէա-

կան կայազօրների եւ բնակչութեան զօրակցութեան չնորհիւ։ Նա կարծում էր, որ առաւել կարճ ճանապարհով ի զօրու կը լինի հարուածել պարթեւական պետութեան սրտին եւ դուրս գալ Տիգրոն մայրաքաղաք։ Սակայն, Խառանում արդէն պարզ դարձաւ, որ հռոմէական զօրքը յայտնուել է անդունդի եզրին։ Բնականաբար, ո՛չ Արգարը եւ ո՛չ էլ Հռոմի միւս դաշնակիցները չէին կամենայ Կրասոսի գինուորների հետ գահավիժել անդունդ։ Ճակատամարտի հենց սկզբում, երբ պարթեւները ոչնչացրին Կրասոսի որդու՝ Պուբլիոսի ջոկատը՝ սպանելով նաեւ նրան, հռոմէական զօրքում բոյն դրած բարոյալքումն աւելի ուժեղացաւ։ Հոգով ընկճուած էր նաեւ Կրասոսը[22]։ Հռոմէական գինուորներն ողջամտօրէն նրան էին համարում «մեղաւոր բոլոր չարիքների համար»,- գրում է Պլուտարքոսը[23]։ Պուբլիոս Կրասոսի ջոկատի ոչնչացումը թէեւ ժամանակաւորապէս թուլացրեց հռոմէական հիմնական զօրուժի վրայ պարթեւների գործադրած ճնշումը[24], սակայն, Խառանի մօտ, վերջիններս փաստօրէն շրջափակեցին հռոմայեցիներին եւ Կրասոսն ուշացումով հասկացաւ թէ ճակատագրական ինչ սխալ է թոյլ տուել՝ արշաւուղի ընտրելով Միջագետքում։ Նա փորձեց Խառանից, զօրքի մի մասով ճողոպրել եւ դուրս գալ Հայաստան։ Նրանք, հաւաստում է Բ.-Գ. դարերի ծագումով յոյն, հռոմէական պատմագիր Դիոն Կասսիոսը, «ապաստանեցին լեռները, որպէսզի դրանց վրայով փախչեն Հայաստան»[25]։ Կրասոսի զօրաւիններից ոմանք նրան համոզում էին «հրաժարուել հայերից սպասուող օգնութեան հեռաւոր եւ ապարդիւն յոյսերից» եւ փախչել ուրիշ վայրեր[26]։ Կրասոսը կը նահանջէր դէպի Հայաստան, եթէ հանգամանքները թոյլ տային։ Սուրէն զօրապետը՝ հաւանօրէն կռահելով նրա դիտաւորութիւնը, հաչտութեան առաջարկ արեց հռոմայեցիներին։ Կրասոսը թէեւ հրաժարուեց, բայց զօրքը պահանջեց հաչտութիւն կնքել[27]։ Սակայն, Խառանի մօտ հռոմայեցիների կրած պարտութիւնից յետոյ որեւէ հաչտութիւն չկնքուեց եւ ախոյեան կողմերի միջեւ շարունակուեց պատերազմական դրութիւնը[28]։ Հռոմէական Արեւելքը փաստօրէն զրկուեց զօրուժից, եւ պարթեւների առջեւ ճանապարհ բացուեց Ասորիք ներխուժելու համար[29]։ Նրանք կամենում էին գրաւել այն երկիրները, որոնք յենարան էին ծառայել Կրասոսի արշաւանքի համար։

Նախ, պարթեւները՝ արքայազն Բակուրի գլխաւորութեամբ, խուժեցին Ասորիք, որի բնակչութիւնը ժժգոհ լինելով հռոմէական գերիշխանութիւնից, գրկաբաց ընդունեց պարթեւներին, «որոնք թէ՛ հարեւաններ էին ու թէ՛ սովորոյթներով մօտիկ»[30]։

Այս պատերազմների ժամանակ նոյնպէս, Արտաւազդը չէզոքութիւն պահպանեց, ինչն, անշուշտ, նրա անկախ դիրքի վկայութիւնն է։ Ի հարկէ, նրա դիրքորոշումը նպաստում էր պարթեւների վարած

պատերազմներին՝ ապահովելով նրանց թիկունքը: Հռոմայեցիները նոյնիսկ երկիւղում էին, որ նա կարող է դաշնակցել պարթեւների հետ՝ ընդդէմ իրենց: 51-50ին Կիլիկիայում Հռոմայեցի կառավարող, հռետոր, գրող ու քաղաքական գործիչ Կիկերոնը Ծերակոյտին յղած իր նամակներից մէկում գրում է, որ Հռոմէական զօրքը մտել է Կապադովկիա, որպէսզի հայոց թագաւոր Արտաւազդը տեղեկանայ, որ «Հռոմէական բանակը հեռու չէ իր երկրի սահմաններից»[31]: Պարթեւների Ասորիք ներխուժումից յետոյ ծագեց Կիլիկիայի վրայ նրանց յարձակման վտանգը, ուստի Կիկերոնը դիմեց կանխող քայլերի՝ հայերի ու պարթեւների հնարաւոր դաշինքը վիժեցնելու համար[32]:

Ենթադրւում է, թէ Հռոմէա-պարթեւական այս պատերազմներին մասնակցում էր նաեւ հայոց զօրքը[33]: Պարթեւական զօրքերի հրամանատարը Հմուտ եւ փորձուած զօրապետ Օսակէսն էր, որին յիշում է Դիոն Կասսիոսը, չնչելով նրա ազգութիւնը[34]: Պատմաբան Գրիգոր Խալաթեանի կարծիքով Օսակէսը հայազգի էր՝ վասակ անունով[35]:

Արտաւազդը զգուշաւոր քաղաքականութիւն էր վարում նաեւ կեսարականների եւ պոմպէոսականների միջեւ արծարծուած պայքարի ընթացքում: Մ.թ. Ք. դարի ծագումով յոյն, հռոմէական պատմիչ Ապպիանոսի մի վկայութեան համաձայն, Արտաւազդը օգնական զօրք է ուղարկել Պոմպէոսին[36], թերեւս յարգելով վերջինիս հետ 66ին Արտաշատում իր հօր կնքած պայմանագիրը: Պոմպէոսին Արտաւազդի զօրակցելու փաստը հարկադրական քայլ էր, որի նպատակն էր Հայաստանը զերծ պահել հռոմէական նոր ներխուժումից: Արտաւազդը չրջահայեաց դիւանագիտութեամբ չի սրել յարաբերութիւնները նաեւ կեսարականների հետ, ուստի վերջիններս թշնամական քայլերի չդիմեցին Հայաստանի հանդէպ. սա այն դէպքում, երբ Յուլիոս Կեսարը՝ ժամանելով Արեւելք, պատժեց այն թագաւորներին, ովքեր սատարել էին Պոմպէոսին: Հաւանաբար, նա Հայաստանը դիտում էր որպէս իր հնարաւոր դաշնակիցը Պարթեւաստանի դէմ նախատեսուող արշաւանքում, որն, ըստ Պլուտարքոսի, նա ծրագրել էր սկսել Հռոմում քաղաքացիական պատերազմի աւարտից յետոյ[37]: Կեսարը նպատակադրել էր ստեղծել համաշխարհային տէրութիւն[38], որի մէջ Հայաստանը հաւանաբար չէր ընդգրկուելու[39]: Ընդամին նշուած էր նաեւ Պարթեւաստան արշաւելու որոշակի օրը: Սակայն, դրանից չորս օր առաջ՝ 44ի Մարտի 15ին, Կեսարը եղերամահ եղաւ Հանրապետականների նիւթած դաւի հետեւանքով:

Կեսարի սպանութիւնից յետոյ Հռոմի Ծերակոյտը արեւելեան նահանգների կառավարումը վերապահեց Հանրապետականների պարագլուխներ Գայիոս Կասսիոսին եւ Մարկոս Բրուտոսին, որոնք ջանացին տարածաշրջանում ամրակայել Հռոմի գերիշխանութիւնը[40]: Ապպիա-

նոսը վկայում է, որ պարթեւական հեծելազօրի մի զօրաբաժին օժանդակում է նրանց[41]: Անշուշտ, քաղաքացիական պատերազմի բորբոքումը ձեռնտու էր պարթեւներին, քանի որ հիւծում էր ահարկու ախոյեանի ոյժերը: Գայիոս Կասսիոսը հաշուեյարդար տեսաւ կեսարականներին սատարող արեւելեան թագաւորների նկատմամբ: Պատժից չխուսափեց նաեւ Կապադովկիայի Արխելաոսը թագաւորը[42]: Երկիւղելով իրենց երկիրների դէմ հնարաւոր պատժարշաւից, Եգիպտոսի Կլէոպատրա է. թագուհին, Հրէաստանի Հերովդէս թագաւորը եւ արեւելեան ուրիշ գահակալներ գինական օգնութիւն ցոյց տուեցին հանրապետականներին[43]:

Այս իրադարձութիւնների ընթացքում Արտաւազդը կարողացաւ չեզոքութիւն պահպանել՝ չյարուցելով ախոյեան կողմերից որեւէ մէկի թշնամանքը Հայաստանի հանդէպ: Այսպիսով, Հայաստանը՝ չնորհիւ հայոց թագաւորի չրջահայեաց դիւանագիտութեան, պահպանեց իր անկախ դիրքն ու ամբողջականութիւնը: Ո՛չ հանրապետականները եւ ո՛չ էլ կեսարականների պարագլուխ Մարկոս Անտոնիոսը դոյզն իսկ փորձ չարեցին միջամտելու Հայաստանի ներքին գործերին:

Բոլորովին այլ էր Օրոդէսի դիրքաւորումը Անտոնիոսի գործողութիւնների նկատմամբ, քանի որ դրանք սպառնում էին Պարթեւաստանի չահերին Ասորիքում եւ յարակից երկրաշրջաններում, որոնց նկատմամբ յաւակնութիւններ ունէին նաեւ պարթեւները: Օգտուելով Ցուլիոս Կեսարի սպանութիւնից յետոյ Անտոնիոսի եւ Օկտաւիանոսի միջեւ արծարծուող պայքարից, Օրոդէսը 41ի վերջին մեծ զօրք առաքեց Ասորիք՝ վերստին Բակուրի գլխաւորութեամբ: Բայց Անտոնիոսի զօրապետ Վենդետիոսը ջախջախեց «թշնամուն, նրան վիճակարի կրուստներ պատճառելով: Առաջին սպանուողներից մէկը եղել է ինքը՝ Պակորոսը (այսինքն՝ Բակուրը — Վ.Վ.): Այս յաղթանակով ... Հռոմայեցիները լիովին լուծեցին Կրասոսի կործանման վրէժը եւ վերստին հետու քշեցին պարթեւներին»,- գրում է Պլուտարքոսը[44]:

Հռոմէա-պարթեւական այս գինաբախումների ժամանակ Արտաւազդն օժանդակութիւն ցոյց չտուեց պարթեւներին, չնայած որ նրանց դարձեալ գլխաւորում էր իր քրոջ ամուսին Բակուրը: Արտաւազդը կողմ չէր պարթեւների հզօրացմանը, քանի որ նրանց առաջխաղացման ճանապարհին ընկած էր նաեւ Հայաստանը, որը կարող էր նուաճուել պարթեւների կողմից: Բացի այդ, հայոց թագաւորը գիտէր, որ զօրակցելով պարթեւներին յարուցելու է հռոմայեցիների թշնամանքը: Նա հաւանաբար վստահ չէր Ասորիքում եւ յարակից շրջաններում պարթեւների յաղթանակի նկատմամբ[45]: Այս անգամ եւս հայոց թագաւորի դիւանագիտական հաշուարկներն արդարացան: Դրանց չնորհիւ ո՛չ Վենդետիոսը եւ ո՛չ էլ 38ին նրան փոխարինած Մարկոս

Անտոնիոսը Հայաստանի հանդէպ որեւէ թշնամական քայլ չձեռնարկեցին, մինչդեռ նրանք խստագոյնս հաշուեյարդար տեսան պարթեւներին դաշնակցած փոքրասիական տիրակալների նկատմամբ[46]:

Յուլիոս Կեսարի սպանութիւնից յետոյ, ինչպէս նշեցինք, նրա կողմնակիցների միջեւ ծագած գժտութիւնները վերածուեցին անհաշտ մրցապայքարի, որը մղւում էր Անտոնիոսի եւ Օկտաւիանոսի միջեւ: Սրանցից իւրաքանչիւրն իրեն էր համարում Կեսարի միակ իրաւայաջորդը[47], ինչի համար երկուսն էլ շահարկում էին նաեւ վերջինիս հետ իրենց ազգակցութեան փաստը: Սակայն, 43ին նրանք հաշտուեցին եւ Մարկոս Լեպիդոսի հետ կազմեցին երկրորդ եռապետութիւնը, դաժանաբար հաշուեյարդար տեսնելով իրենց հակառակորդների նկատմամբ[48]: Այս ընթացքում սպանուեց նաեւ Անտոնիոսի երդուեալ թշնամի Կիկերոնը: Եռապետութեամբ փաստօրէն վերացաւ Հռոմէական հանրապետութիւնը եւ Հռոմի պատմութեան մէջ բացուեց նոր դարագլուխ: Արեւելքն այս անգամ բաժին ընկաւ գեղձաբարոյ Անտոնիոսին: Այստեղ, նրա անսանձ ու մոլեկիրք նկրտումներն ազատ եւ անկաշկանդ դրսեւորուեցին: Անտոնիոսը որոճում էր հեռահար ծրագրեր, երազելով գրաւել Ալեքսանդր Մակեդոնացու նուաճած երկրները, ի հարկէ, առաջին հերթին՝ յաղթանակ տանել պարթեւների նկատմամբ, ինչը կ'ապահովէր նրա առաջնութիւնը իր մրցակից Օկտաւիանոսի հանդէպ նաեւ Արեւմուտքում[49]: Մինդեռ վերջինս դէմ չէր Անտոնիոսի պարթեւական արշաւանքին, որը նրա կարծիքով չեղելու էր Անտոնիոսի ուշադրութիւնը Արեւմուտքի գործերից[50]:

Անտոնիոսին որոշակի յոյս էին ներշնչում ոչ միայն Վենդետիոսի յաղթանակը պարթեւների դէմ, այլեւ վերջիններիս վերնախաւում տեղի ունեցող գժտութիւնները, որոնք ծայր էին առել Բակուրի կրած պարտութիւնից յետոյ, երբ Օրոդէսը հեղինակազրկուելով հրաժարուել էր գահից յօգուտ իր 30 որդիներից աւագի՝ Հրահատ Դ-ի (38/37-2), որն իշխանութեան անցնելուց յետոյ սպանել տուեց իր բոլոր եղբայրներին ու հօրը[51]: Հրահատ Դ. փորձեց հաշտութիւն կնքել Անտոնիոսի հետ, որն առերես ընդունեց նրա այդ առաջարկը, ի հարկէ, նրան մոլորեցնելու միտումով: Իսկ երբ պարթեւները վերադարձրին Կրասոսի պարտութեան պատճառով գերեվարուած հռոմայեցի զինուորներին եւ հռոմէական դրօշները, Անտոնիոսը պատրաստուեց արշաւել Պարթեւաստան[52]: Արշաւանքի համար նիւթական միջոցներ ապահովելու նպատակով, 37ին նա պաշտօնապէս ամուսնացաւ իր հմանուհու՝ Կլէոպատրա Թագուհու հետ, որն իր հերթին յոյս ունէր այդ կերպ պահպանել Եգիպտոսի անկախութիւնը եւ այնտեղ՝ Անտոնիոսի սատարմամբ, ամրապնդել իր իշխանութիւնը: Կլէոպատրան նիւթական եւ զինական լայն աջակցութիւն ցոյց տուեց նրան:

Անտոնիոսին ստիպուած դաշնակցեցին նաեւ Հայաստանի, Իբերիայի եւ Աղուանքի թագաւորները[53]: Սակայն Արտաւազդն այդ դաշինքից յետոյ եւս պահպանեց իր երկրի անկախութիւնը, նոյնիսկ հօրից ժառանգած «արքայից արքայ» պատուատիտղոսը[54]:

Անտոնիոսը յոյս ունէր, որ դաշնակիցների աջակցութեամբ կարող է ջախջախել եւ մասնատել Պարթեւաստանը՝ Արեւելքում գերիշխանութեան համար Հռոմի ու պարթեւական պետութեան միջեւ մղուող պայքարի հարցը լուծելով յօգուտ հռոմայեցիների[55]: Հաւանաբար, Անտոնիոսը կամենում էր օգտուել Ցուլիոս Կեսարի կողմից մտայղացուած պարթեւական արշաւանքի պլանից, որը նախատեսում էր արշաւել Հայաստանով եւ հիւսիսից հարուածել Պարթեւաստանին[56]: Նա կամենում էր միեւնոյն Օկտաւիանոսի եւ նրա ախոյեան Սեքստոս Պոմպէոսի՝ Գնէոս Պոմպէոսի որդու, միջեւ Արեւմուտքում բորբոքուած պայքարի հանգուցալուծումը, յաղթանակ տանել պարթեւների դէմ: Այդպիսի յաղթանակ յոյժ կը բարձրացնէր իր հեղինակութիւնը Հռոմում եւ ի դերեւ կը հանէր Օկտաւիանոսի ազդեցութիւնը: Վերջինս հաշուի էր առնում այդ հանգամանքը, ուստի ջանում հականերգործել Անտոնիոսի ձեռնարկումներին: Ըստ երեւոյթին, նա կարողացաւ Արտաւազդի հետ համաձայնութիւն կնքել ընդդէմ Անտոնիոսի, հաշուի առնելով Հայաստանի վճռորոշ դերը պարթեւական արշաւանքի ընթացքում[57]: Այս համաձայնութիւնը եւս որոշակի դեր խաղաց Անտոնիոսի հանդէպ Արտաւազդի դիրքորոշման պահին: Այստեղ եւս դրսեւորուեց Արտաւազդի ռազմական եւ դիւանագիտական կարողունակութիւնը: Նա կռահեց, որ Անտոնիոսը կրկնակի պարտութեան եզրին է թէ՛ պարթեւական ռազմաբեմում, թէ՛ Օկտաւիանոսի դէմ մղուելիք պայքարում: Նկատենք, որ նոյն 36ին, երբ Անտոնիոսը զօրքերը շարժեց Պարթեւաստանի դէմ, Օկտաւիանոսը վճռական յաղթանակ տարաւ Արեւմուտքում իր հակառակորդների դէմ, դառնալով Իտալիայի լիիշխան տիրակալը եւ յոյժ մեծացնելով իր ռազմական եւ նիւթական հնարաւորութիւնները: Այս հանգամանքն Անտոնիոսին ստիպեց արագացնել պարթեւական արշաւանքը, աճապարանքի կնիք թողնելով իր յետագայ ձեռնարկումների վրայ: Նա թերագնահատեց ժամանակի գործօնը, որից չարաչար տուժեց[58]:

36ի գարնանը Անտոնիոսը Եգիպտոսից ժամանեց Ասորիք, որտեղ կենտրոնացրեց մեծաստուար զօրք՝ պարթեւների դէմ արշաւելու համար: Այնուհետեւ նա Մելիտենէով, Փոքր Հայքով եւ Սատաղով ուղղուեց Մեծ Հայք եւ՝ շարժուելով Եփրատի հովտով, հասաւ Երզնկա, ապա Կարին, որտեղ պէտք է հաւաքուէին նրա զօրքերը, այդ թւում՝ դաշնակից արքաների տրամադրած զօրաբաժինները, որոնք «մեծ թիւ էին կազմում, եւ նրանց մէջ առաջին տեղը պատկանում էր

Հայոց Արտաւազդին»,- գրում է Պլուտարքոսը[59]: Կարինից Անտոնիոսի զօրքը՝ Սուկաւէտ (այժմ՝ Քէօսէդաղ) լերան հարաւակողմով շարժուելով, հասաւ Դարոյնք, որտեղից դիմեց դէպի Ջուղա, իսկ այնտեղից մտաւ Վասպուրականի Բաքրան գաւառը եւ Մարանդ քաղաքով հասաւ Ուրմիա լիճ, որի արեւելեան ափեզերքով՝ շարժուելով դէպի հարաւ, հասաւ Մարագա քաղաքը, այնտեղից՝ Ատրպատականի Գանձակ շահաստանը եւ Փրաասպա քաղաքը, որն ունէր ամրանիստ բերդ[60]: Այստեղից նա ծրագրել էր շարժուել դէպի Եկբատանա (յետագային՝ Համադան) եւ կործանել պարթեւական պետութիւնը[61]: Գերմանացի պատմաբան Թէոդոր Մոմզէնը ենթադրում է թէ Անտոնիոսի պարթեւական արշաւանքի ռազմուղին կանխաւ նրան յուշեց Արտաւազդը, քանի որ հայոց թագաւորները միշտ կամենում էին գրաւել Ատրպատականը եւ այժմ նա եւս կարող էր նման յոյս ունենալ[62]: Դիոն Կասսիոսը գրում է, որ Անտոնիոսի պարթեւական արշաւանքի ժամանակ Ատրպատականի թագաւորը թշնամի էր Մեծ Հայքի Արտաւազդ թագաւորին[63]: Պատմաբան Ռուբէն Մանասերեանի կարծիքով, Արտաւազդի դերը վճռորոշ էր Անտոնիոսի պարթեւական արշաւանքի ուղղութեան ծրագրաւորման ու իրականացման գործում, եւ որ Փրաասպայի անպաշտպան վիճակի մասին հռոմայեցիները կեղծ տեղեկութիւններ էին ստանում ոչ թէ իրենց հետախոյզներից, այլ Հայաստանից[64]: Այս կարծիքի հետ հնարաւոր չէ համաձայնուել, քանի որ նախ, ինչպէս հաւաստուած է հռոմայեցի պատմագիրների մօտ, Փրաասպան անպաշտպան չէր եւ կատաղի դիմադրութիւն ցոյց տուեց՝ իր պարիսպների տակ կործանիչ հարուածներ հասցնելով Անտոնիոսի զօրքին[65]: Եթէ իրօք Անտոնիոսի ներխուժումը Ատրպատական նպաստելու էր Արտաւազդի տարածքային յաւակնութիւններին, ապա բնական կը լինէր, որ վերջինս ո՛չ թէ ստապատիր տեղեկութիւններով ապակողմնորոշէր հռոմայեցիներին եւ պարտութիւն պատճառէր նրանց, այլ, ընդհակառակը, նպաստէր նրանց յաղթանակին: Բացի այդ, Արտաւազդը հարկ է, որ մասնակցէր Ատրպատականի դէմ հռոմայեցիների ձեռնարկած արշաւանքին: Մինչդեռ նա, ինչպէս վկայում է Դիոն Կասսիոսը, «ներկայ չեղաւ կռուին, բայց եւ ինչպէս ասում են ոմանք, նա կարող էր օգնել հռոմայեցիներին, սակայն ոչ այդ արեց, ոչ էլ եկաւ Անտոնիոսի մօտ, այլ մեկնեց տուն»[66]:

Հարկ է նշել, որ հենց սկզբից Անտոնիոսի պարթեւական արշաւանքը դատապարտուած էր ձախողման: Անտոնիոսը այնքան վստահ էր յաջողութեան նկատմամբ, որ իր ետեւում թողեց Ստատիանոսի 10 հազարանոց զօրաբաժինը՝ պաշարողական մեքենաներով, որոնք յոյժ անհրաժեշտ էին քաղաքի պաշարման համար, ու շարժուեց Փրաասպայի վրայ՝ պաշարելով այն: Օգտուելով դրանից, Հրահատ Դ. ոչնչաց-

րեց Ստատիանոսի զօրախումբը՝ պաշարողական մեքենաներով հանդերձ, գերի վերցնելով նաեւ Պոնտոսի Պոլեմոն թագաւորին, ապա զօրքը նետեց Փրաասպա՝ նրա պաշտպաններին զօրակցելու համար։ Ստատիանոսի զօրաբաժնի ջախջախումից յետոյ, հաւաստում է Պլուտարքոսը, Անտոնիոսն ու իւրայիններն ընկան խորին յուսալքման մէջ, իսկ «Հայոց թագաւոր Արտաւազդը, Հռոմայեցիների գործը համարելով տանուլ տրուած, հաւաքեց բոլոր իւրայիններին եւ հեռացաւ, թէեւ պատերազմի գլխաւոր մեղաւորը հենց ինքն էր»[67]։ Ստրաբոնը նոյնպէս Անտոնիոսի պարտութեան պատճառ է համարում Արտաւազդին[68]։ Ստրաբոնի համար, ինչպէս ինքն է նշում, աղբիւր է ծառայել «Անտոնիոսի բարեկամ» Դելլիոսի հաղորդածը, «որը նկարագրեց նրա արշաւանքը Պարթեւաց դէմ, ուր ներկայ էր նաեւ ինքը եւ մասնակցեց իբր զօրապետ»[69]։ Հասկանալի է, որ Դելլիոսը չէր կարող կողմնակալ չլինել։ Նա պէտք է թիւրիմացութիւնը եւ իր բարեկամ Անտոնիոսին եւ նրա զօրապետերին (անշուշտ, նաեւ իրեն) մեղսագերծէր եւ, ինչպէս Հռոմայեցի զօրապետերի սովորութիւնն էր, պարտութեան մեղքը բարդէր ուրիշների վրայ, մանաւանդ որ Անտոնիոսի ախոյեան Օկտաւիանոսը նրան մեղադրում էր ազգային դաւաճանութեան մէջ։

Միայն Արտաւազդը չէր, որ հասկացաւ Անտոնիոսի ռազմա-քաղաքական ձախողանքի անխուսափելիութիւնը։ Անյաջողութիւնները յուսաբեկեցին նաեւ Հռոմայեցի զինուորներին։ Ուստի, Անտոնիոսը փորձեց հաշտութեան եզրեր գտնել Հրահատ Դ.-ի հետ։ Վերջինս տուեց իր համաձայնութիւնը, պայմանով, որ Հռոմայեցիները անյապաղ հեռանան իր երկրից[70]։ Սակայն, Հռոմէական զօրքի նահանջի երրորդ օրը, պարթեւները յարձակուեցին նրանց վրայ՝ ջանալով շրջապատել եւ ոչնչացնել նրանց[71]։ Պարթեւներն իրենց յարձակումները շարունակեցին նաեւ յաջորդ օրերին։ Անընդմէջ ընդհարումների պատճառով Անտոնիոսի զօրքը մատնուեց ծանր կացութեան։ Նրա սովալլուկ զինուորները, ինչպէս վկայում է Պլուտարքոսը, ստիպուած սնւում էին խոտերով՝ յաճախ թունաւորուելով մահացու բոյսերից։ Սովից եւ հիւանդութիւններից «Հռոմայեցիները մահանում էին անթիւ ու անհամար, իսկ պարթեւները մշտապէս հետեւում էին նրանց»[72]։ Մարդ ցեղից մի ուղեկցորդի օգնութեամբ Հռոմայեցիները նահանջում էին դէպի Հայաստան, անշուշտ, համոզուած լինելով, որ Հայոց թագաւորը չի խզել դաշնակցային յարաբերութիւններն իրենց հետ։ 20օրեայ նահանջի ընթացքում Անտոնիոսի զօրքը 18 անգամ ստիպուած էր մարտի բռնուել պարթեւների հետ։ Վերջիններս հետապնդումը դադարեցրին միայն այն ժամանակ, երբ Հռոմէական զինուորները ոտք դրեցին Հայաստանի սահմանները[73]։ Հաւանաբար, պարթեւները համո-

գուած էին որ հայերը թշնամի չեն հռոմայեցիներին եւ հարկ եղած դէպքում կարող են աջակցել նրանց[74]:

Սովահալած ու տանջարեկ հռոմայեցիները հայոց երկրում գգացին, որ փրկուած են դաժան պատահարներից: Հայոց հողում «ներանք,- գրում է Պլուտարքոսը,- համբուրում էին քարերն ու աւազը եւ, իրար գրկելով, ուրախութիւնից լաց լինում ... ընթանալով հարուստ ու ծաղկուն երկրի մէջ»[75]: Այս փաստերը մէկ անգամ եւս վկայում են, որ Արտաւազդն անգամ Հռոմի հետ Հայաստանի դաշինքի պայմաններում իրեն ազատ էր զգում եւ վարւում էր սեփական հայեցողութեամբ՝ նախընտրելով չէզոքութիւնը: Եթէ նա պարթեւների հետ դաշինքի մէջ լինէր, հարկ է, որ յարձակուէր իր երկիր մտած հռոմէական զօրքի վրայ[76], բայց, ինչպէս տեսանք, նա այլ կերպ վարուեց:

Անտոնիոսը Հայաստանում զօրատես արեց, որի ժամանակ պարզուեց, որ իր զօրքը կորցրել է 20 հազար հետեւակ եւ չորս հազար հեծեալ զինուորներ: Դրանց կէսից աւելին զոհ էին գնացել տարափոխիկ հիւանդութիւնների: Բայց այդ փաստը բնաւ չսթափեցրեց Անտոնիոսին: Հակառակ Հայաստանի «դաժան ճմրանն ու անընդհատ տեղացող ձեանը,- գրում է Պլուտարքոսը,- նա չտապեց առաջ գնալ եւ ճանապարհին կորցրեց եւս 8 հազար զինուոր»[77]: Աւելին, նա բաժանուեց իր զօրքից եւ փոքր թիկնազօրով հասաւ Միջերկրականի ծովափ, Բերիտոս (այժմ՝ Բէյրութ) եւ Սիդոն քաղաքների միջեւ ընկած մի գիւղում սպասելով կլէոպատրային, որի օգնութեամբ նա յոյս ունէր համալրել իր գանձարանը: Անտոնիոսը նման ակնկալիքներ չէր կարող ունենալ հայոց թագաւորից:

Անտոնիոսը կամենում էր ստուարացնել իր ուժերը եւ վերստին արշաւել պարթեւների դէմ: Այս անգամ նրան յոյս էր ներշնչում այն, որ Ատրպատականի Արտաւազդ թագաւորը դաշնակցում էր իրեն, քանի որ ռազմաւարի բաժանման պատճառով գժտուել էր Հրահատ Դ-ի հետ: 35ին Արտաւազդ Մեղացին դաշինք կնքելու առաջարկով Անտոնիոսի մօտ առաքեց Պոնտոսի Պոլեմոն թագաւորին՝ հռոմայեցիների երբեմնի դաշնակցին, որը 36ին կռիւների ժամանակ գերի էր ընկել պարթեւներին: Պոլեմոնի միջոցով, Ատրպատականի արքան, ինչպէս հաղորդում է Պլուտարքոսը, իր մօտ հրաւիրեց Անտոնիոսին, խոստանալով սատարել հռոմայեցիներին իր «համբողջ զօրքով»: Այդ առաջարկը ոգեպնդեց Անտոնիոսին, քանզի,- շարունակում է պատմագիրը,- «եթէ նախորդ անգամ պարթեւներին յաղթելու համար իրեն պակասում էր, ըստ երեւոյթին, միայն մի բան՝ նետ ու աղեղով զինուած մեծաթիւ հեծելազօր, ապա այժմ այն կը լինէր իր տրամադրութեան տակ»[78]: Այս անգամ եւս Անտոնիոսը կամենում էր արշաւել Հայաստանով: «Ենա,- ինչպէս վկայուած է դարձեալ Պլուտարքոսի

մօտ,- արդէն պատրաստուում էր եւս մէկ անգամ անցնել Հայաստանով, որպէսզի, Արաքս գետի մօտ միանալով մարերի հետ, ռազմական գործողութիւններ սկսի յաջորդ գարնանը[79]: Անտոնիոսն անձամբ ժամանեց Ատրպատական եւ նրա թագաւորի հետ կնքեց բարեկամական դաշնագիր[80]: Նա յոյս ունէր, որ նման դաշինք կարող է պարտադրել նաեւ հայոց թագաւորին: Այդ նպատակով նա արշաւեց Հայաստան՝ «մեծապէս յոյս դնելով» Արտաւազդ Մեդացու վրայ, որը «կամենում էր (Արտաւազդ) Արմէնին պատժել հռոմայեցիներին (իր երկրի դէմ) բերած լինելու համար»,- գրում է Դիոն Կասսիոսը[81]: Հասկանալի է, որ նման իրավիճակում Անտոնիոսի յարաբերութիւնները Արտաւազդի հետ չէին կարող բարեկամական լինել: Այդուհանդերձ, Անտոնիոսին չէր կարող չմտահոգել Արտաւազդի եւ Հրահատ Դ-ի դաշինքի հնարաւորութիւնը, ուստի նա փորձեց կանխել այն, հայոց թագաւորին հրաւիրելով իր մօտ՝ Ալեքսանդրիա՝ «իբրեւ բարեկամի, որպէսզի նրան առանց դժուարութեան ձեռք գցելով, աչքից ոչնչացնի. բայց քանի որ սա կռահելով այդ ամէնը, հրաւէրին չպատասխանեց, նա մտածեց մի այլ ձեւով խաբել նրան»[82]:

Արտաւազդին որոգայթի մէջ ձգելու նպատակով Անտոնիոսը նրա մօտ ուղարկեց Քուինտոս Դելլիոսին՝ խնդրելով հայոց արքայի դստերը կնութեան տալ Կլէոպատրայից ծնուած իր որդի Ալեքսանդրին, բայց ապարդիւն: Այնժամ Անտոնիոսը ժամանեց Փոքր Հայքի Նիկոպոլիս քաղաքը եւ վերստին Արտաւազդին հրաւիրեց իր մօտ, բայց այս անգամ եւս վերջինս «կասկածելով դաւադրութեան մասին, նրա մօտ չժամանեց»: Ուստի Անտոնիոսը չարժուեց դէպի Արտաչատ եւ Արտաւազդին «իբրեւ բարեկամի նամակ գրելով եւ ամէն միջոց գործադրելով, նրան հարկադրեց գալ իր ռազմական ճամբարը»[83]: Արտաւազդն այլընտրանք չունէր նաեւ այս անգամ, քանի որ հռոմէական զօրքը վերստին մտել էր Հայաստան՝ պարթեւների դէմ արշաւելու համար: Դիմադրել Անտոնիոսին կը նշանակէր հանդէս գալ իբրեւ պարթեւների դաշնակից եւ պատերազմական դրութիւն ստեղծել Հայաստանի ու Հռոմայեցիների միջեւ՝ ծանր իրավիճակ ստեղծելով իր երկրում: Այս անգամ եւս նա գերադասեց չգոք դիրքորոշումը, ինչը ձեռնտու չէր Անտոնիոսին, որն, ըստ երեւոյթին, արդէն կասկածում էր հայոց արքայից, Օկտաւիանոսի հետ նրա ունեցած կապերի համար[84]: Դիոն Կասսիոսը գրում է, որ Օկտաւիանոսը կարեկցում էր Արտաւազդին եւ «գաղտնաբար կապեր էր հաստատել նրա հետ Անտոնիոսի դէմ»[85]: Վերջինիս եւ Ատրպատականի թագաւորի միջեւ եղած դաշինքն ուղղուած էր ոչ միայն Պարթեւաստանի, այլեւ Օկտաւիանոսի դէմ[86], որը հարկ է, որ դրան հակադրէր Հայաստանի հետ իր դաշինքը: Անտոնիոսի յաղթանակը պարթեւների դէմ ձեռնտու չէր

Օկտաւիանոսին, քանի որ մեծացնելու էր իր ախոյեանի ազդեցութիւնը ոչ միայն Արեւելքում, այլեւ Իտալիայում:

Անտոնիոսը հաշուեյարդար տեսաւ Սեքստոս Պոմպէոսի՝ իր ահարկու հակառակորդի հետ, որը, ինչպէս վկայում է Ապպիանոսը, «պատուիրակներ ուղարկեց Թրակիայի, Պոնտոսի եւ Հայաստանի թագաւորների, ինչպէս նաեւ պարթեւների մօտ, յոյս ունենալով, որ Անտոնիոսի դէմ գալիք պատերազմի ժամանակ նրանք հաճութեամբ կ'ընդունեն հռոմէական զօրավարին, յատկապէս որ նա որդին էր Մեծն Պոմպէոսի»: Ընդամին Սեքստոս Պոմպէոսը յոյս ունէր, որ Անտոնիոսից պարտութիւն կրելու դէպքում, կարող է ապաստանել նաեւ Հայաստանում[87]:

Միայն Պոմպէոսը չէր, որ պայքարում էր Անտոնիոսի դէմ: Վերջինիս նկատմամբ հակադիր դիրքորոշում ունէին նաեւ Կապադովկիայի Արիարաթէս Ը. թագաւորը, Իտուրեացների արքայ Լիւսանիասը, որոնց Անտոնիոսը մեղադրեց պարթեւներին զօրակցելու համար եւ գահընկեց արեց. Լիւսանիասն սպանուեց նրա հրամանով[88]: Արեւմուտքում ստեղծուած անբարենպաստ պայմաններն Անտոնիոսին ստիպեցին հրաժարուել պարթեւների դէմ արշաւելուց: Դրա փոխարէն նա բռնի կերպով Արտաւազդից կորզեց մեծագումար հարստութիւն եւ թագաւորական գանձերը: Միաժամանակ, Անտոնիոսը կալանեց Արտաւազդին, Հայաստանը համարեց իր կողմից նուաճուած եւ նրա եղերաբախտ թագաւորին՝ դնելով արծաթէ շղթաների մէջ, տարաւ Ալեքսանդրիա:

Փաստօրէն Անտոնիոսի այս անգամուայ արշաւանքն ուղղուած էր ոչ այնքան պարթեւների, որքան Հայաստանի դէմ: Դիոն Կասսիոսը գրում է, որ 35ին Անտոնիոսն «արշաւանք ձեռնարկեց Արտաւազդ Արմէնի դէմ»[89]: Ստեղծուած պայմաններում, նա վստահ չէր, թէ կարող է պարթեւների դէմ յաղթանակի հասնել: Բայց նրան յաղթանակ էր պէտք Ալեքսանդրիայում կայանալիք յաղթահանդէսի համար: Հայաստանը նուաճուած յայտարարելու փաստը յաղթողի փառապսակ էր հիւսելու նրա փառատենչ գլխին՝ բարձրացնելով նրա վարկը Եգիպտոսում, անձամբ՝ նրա թագուհու մօտ, որին Անտոնիոսը կամենում էր ներկայանալ իբրեւ յաղթապանծ հերոս: Բացի այդ, նրան անհրաժեշտ էր նաեւ Եգիպտոսի ֆինանսական աջակցութիւնն ընդդէմ Օկտաւիանոսի[90]: Ի տրիտուր այդ օգնութեան, Անտոնիոսը կատարում էր Կլէոպատրայի բոլոր ցանկութիւնները: Ըստ մ.թ. Ա. դարի հրեայ պատմիչ Յովսեպոս Փլաւիոսի, Անտոնիոսը վաղուց տուայտում էր Կլէոպատրայի սիրուց եւ լիովին ստրկացուած էր կրքից: Մինչդեռ Կլէոպատրան իր արիւնռուչտութիւնն ուղղել էր ուրիշ երկրների վրայ եւ ջանում էր Անտոնիոսի օգնութեամբ տիրանալ Ասորիքին,

Հրէաստանին եւ Արաբիային: Նա նոյնիսկ ուղեկցել էր Անտոնիոսին 35ի Հայաստանի դէմ նրա ձեռնարկած արշաւանքի ժամանակ՝ հասնելով Եփրատի ափերը: Պատմագիրը նաեւ հաւաստում է, որ Անտոնիոսը անշեղօրէն կատարում էր Կլէոպատրայի բոլոր պահանջները՝ Հայաստանից «որպէս նուէր բերելով Տիգրանի որդի Արտաբազէսին ... բոլոր դրամների եւ (պատերազմական) ամբողջ աւարի հետ միասին»[91]:

Ե. դարի հայոց պատմահայր Մովսէս Խորենացին, որ հաւանաբար օգտուել է Ցովսեպոս Փլաւիոսից, այս մասին գրում է. «Մռնչեալ առիւծաբար գազանութեամբ Անտոնիոս, առաւել եւս թունեալ ի կղէոպատրայ, քանզի քէն պահէր վասն լլկանաց իւրոյ հանոյն, որ ի Տիգրանայ. եւ ոչ միայն Հայոց, այլ բազմաց այլոց թագաւորաց լինէր մահաբեր, զի նոցայոցն տիրեսցէ իշխանութեանց: Սակս որոյ բազում թագաւորս սպանեալ Անտոնիոս՝ ի կղէոպատրայ հաւատայ գնոցա իշխանութիւնս...: Եւ դարձեալ յԵգիպտոս, պարգեւէ զկղէոպատրայ զԱրտաւազդ որդի Տիգրանայ, հանդերձ բազում ընչիւք յանկածէ պատերազմին»[92]:

Սակայն, նշում է գերմանացի պատմաբան Հերման Բենգտսոնը, Անտոնիոսն «անտեսեց քաղաքացիական այն արիւթիւնը, որ հանդէս բերեց հայոց թագաւորը, կտրուկօրէն հրաժարուելով ստորանալ նրա առջեւ, ուստի կլէոպատրան դա չներեց նրան»[93]: Ի հարկէ, վերջինս՝ Արտաւազդի հանդէպ թշնամանք տածելով, առաջնորդւում էր աւելի ազդու քաղաքական չահախնդրութեամբ՝ առաջին հերթին ելնելով այն փաստից, որ Եգիպտոս վերադարձած Անտոնիոսը կլէոպատրային հռչակեց Եգիպտոսի, Կիպրոսի, Աֆրիկայի եւ Կելէ-Սիրիայի[94] թագուհի, իսկ նրանցից ծնուած իր մանկահասակ որդիներին՝ արքայից արքաներ, նրանցից աւագին՝ Ալեքսանդրին կարգելով Մեծ Հայքի, Ատրպատականի եւ Պարթեւաստանի թագաւոր, իսկ կրտսերին՝ Պտղոմէոսին՝ Փիւնիկէի, Ասորիքի եւ Կիլիկիայի տիրակալ[95]: Ընդամին նա Ալեքսանդրին զարդարեց հայկական եւ մեդական չքազգեստով, խոյրով ու կօշիկներով, նրան թիկնապահներ նշանակելով հայ զօրականների[96]:

Այդպիսով պարթեւների դէմ մղած պատերազմում չարաչար պարտութիւն կրած Անտոնիոսը ջանում էր այն տպաւորութիւնն ստեղծել, թէ տէր է դարձել ոչ միայն Հայաստանին, այլեւ Ատրպատականին ու Պարթեւաստանին: Պլուտարքոսը գրում է, որ նոյնիսկ Օկտաւիանոսը համոզուած էր, որ արդէն Անտոնիոսի «տրամադրութեան տակ են Մարաստանը (այսինքն՝ Ատրպատականը — Վ.Վ.) եւ Պարթեւաստանը, որոնք նրանք (այսինքն՝ Անտոնիոսի զինուորները — Վ.Վ.) միացրել են Հռոմէական տէրութեանը»[97]: Սակայն, 32ի ամրանը Անտոնիոսի եւ Օկտաւիանոսի միջեւ սկսուած պատերազմը յօդս էր ցնդեցնելու

Անտոնիոսի ու Կլէոպատրայի քաղաքական մտայղացումները, քանզի Անտոնիոսն ստիպուած իր զօրքերը դուրս հանեց Հայաստանից ու Ատրպատականից, որով իսկ «Հայաստանը Մեդիայի հետ միասին կորսուեց»[98]: 31ին Պարթեւաստանում ծայր առան գահակալական կռիւներ՝ ծանր կացութեան մէջ դնելով Հրահատ Դ.ին[99]: Հաւանաբար, Կլէոպատրան փորձեց օգտուել յարմարադէպ պահից եւ վերականգնել Ատրպատականի թագաւորի ու Անտոնիոսի միջեւ եղած դաշինքը: Այն իրական գետնի վրայ դնելու յոյսով, Կլէոպատրան գլխատել տուեց կալանակեաց Արտաւազդին՝ նրա գլուխն ուղարկելով Արտաւազդ Մեդացուն «իբրեւ թէ այդ եղանակով նրանից օգնութիւն ստանալու յոյսով»,- գրում է Դիոն Կասսիոսը[100]: Ունա՛յն յոյս. Հռոմի ծերակոյտն արդէն պատերազմ էր յայտարարել հենց իրեն՝ Եգիպտոսի այդ փառատենչ տիրուհուն՝ ելնելով այն փաստից, որ նա իշխում էր նաեւ Անտոնիոսին[101]: Երկուսն էլ ունեցան անփառունակ վախճան: Հայաստանը մնաց անկախ՝ անշուշտ չնորհիւ Արտաւազդի դիւանագիտական չրջահայեացութեան, մինչդեռ անցեալում հզօր Եգիպտոսը վերջնականապէս նուաճուեց՝ վերածուելով Հռոմէական նահանգի:

Այսպիսով, Հռոմի եւ պարթեւական Իրանի միջեւ ընթացող ռազմա-քաղաքական մրցակցութեան ու գինադադարների պայմաններում, հայոց Արտաւազդ Բ. թագաւորը կարողացաւ վարել իր երկրի շահերից բխող ինքնուրոյն քաղաքականութիւն: Դիւանագիտական ստոյգ հաշուարկներով նա իր դերեւ հանեց ժամանակի հզօրագոյն տիրակալների մտայղացումները, հնարաւորինս ապահովելով Մեծ Հայքի անվտանգութիւնը եւ ինքնուրոյնութիւնը: Արտաւազդի դիւանագիտական գործառոյթներում թելադրողը ոչ թէ հարեւան հզօր տէրութիւնների քաղաքական հաշիւներն էին, այլ իր երկրի անվտանգութիւնը եւ ամբողջականութիւնը պահպանելու մտահոգութիւնը:

ՏԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Այս եւ յետագայ բոլոր տարեթուերը նշուած են մինչփրկչական թուականով:

[2] Ն. Ա. Մաչկին, Հին Հռոմի պատմութիւն, թարգմանեց Եւդ. Ա. Միրզախանեան. խմբագրեց՝ Ստ. Ա. Ներսէսեան, Երեւան, Պետական Համալսարանի Հրատարակչութիւն, 1951, էջ 460:

[3] Պլուտարքոս, Կենսագրութիւններ, կազմեց, հին յունարէնից թարգմանեց, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները գրեց՝ Սիմոն Գրքաշարեան, Երեւան, «Մարգիս Պաչենց», 2001, էջ 268:

[4] Նոյն, էջ 116-117:

[5] Նոյն, էջ 117: Տե՛ս նաեւ Ծովսեպոս Փլաւիոս. Դիոն Կասսիոս, թարգմանութիւն բնագրից, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Ս. Մ. Կրկեաշարեանի, Օտար Աղբիւրները Հայաստանի Եւ Հայերի Մասին, 9, Հին Յունական Աղբիւրներ, Ա, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1976, էջ 155: Ըստ խոտաջրի պատմաբան

Գ. Ֆերերոյի, Հռոմում հեղափոխ հասարակութիւնը սկսեց ոգեւորութեամբ վերաբերուել Կրասոսի այդ ծրագրին եւ յոկ պահպանողականների մի մասը կանխատեսեց, որ պատերազմը անյաջող վախճան է ունենալու, հքանի որ երկիրը հեռու էր եւ անյայտ, իսկ ոսոխը՝ ահռելիփ, տե՛ս՝ G. Ferero [G. Ferrero], *Velichie i padenie Rima* [Հռոմի Մեծութիւնը եւ Անկումը], հ. II, Մոսկուա 1916, էջ 67։ «Ձակատագիրը,- չարունակում է նոյն հեղինակը,- Կրասոսին ընտրեց որպէս առաջին զոհ, իզին մեծագործութիւնների այն մոյուցքի, որն ալեկոծում էր Իտալիան», տե՛ս՝ նոյն, էջ 91։

[6]Մ.թ. ը. դարի յոյն հռոմէական պատմիչ Ապպիանոսը Կրասոսի զօրքերի թուաքանակը հասցնում է 100 հազարի, տե՛ս՝ Appian, *Grazhdanskie voini* [Քաղաքացիական կռիւներ], Լենինգրադ, 1935, 2, 18։ Ըստ յոյն պատմագիր Պլուտարքոսի, Կրասոսն ունէր մօտ 50 հազարանոց բանակ՝ եօթ լեգէոն, 4000անոց այրուձի, նոյնքան թեթեւազէն զօրաթաժին եւ Միջագետքում տեղակայուած կայազօրներ՝ թուով 7 հազարանոց հետեւազօր եւ 1000 հեծեալներ, տե՛ս՝ Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 118։ Ուսումնասիրողներն աւելի են նուազեցնում Կրասոսի զօրքի թուաքանակը, նչելով 35 հազար (տե՛ս՝ G. Rawlinson, *The Sixth Great Oriental Monarchy*, New York, 1873, p. 155) կամ 42 հազար (տե՛ս՝ N. C. Debevoise, *A Political History of Parthia*, Chicago, 1938, p. 3)։ Պատմաբան Յակոբ Մանանդեանը Կրասոսի զօրքի թիւը հասցնում է 42-44 հազարի, տե՛ս՝ Յակոբ Մանանդեան, Երկեր, հ. Ա-, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1977, էջ 250։

[7]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 118-119։

[8]Նոյն, էջ 119։ Տե՛ս նաեւ՝ Iosif Flavii [Յովսեպոս Փլաւիոս], *Iudeiskaia voina* [Հրէական Պատերազմը], Մինսկ, 1991, էջ 36։

[9]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 119-120։ Հին յոյն աշխարհագրագէտ եւ պատմաբան Ստրաբոնը գրում է, որ պարթեւներն սկզբում փնտռում էին հռոմայեցիների բարեկամութիւնը, սակայն երբ Կրասոսը պատերազմ սկսեց, նրանք էլ սկսեցին պատերազմին պատրաստել պատերազմով, տե՛ս՝ Ստրաբոն, քաղեց եւ թարգմանեց Հ. Աճառեան, Օտար Աղբիւրներ Հայերի Մասին, Ցունական Աղբիւրներ, No. 1, Երեւան, Պետական Համալսարանի Հրատարակչութիւն, 1940, էջ 93։

[10]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 121։

[11]Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիա. Պատմութեան Ինստիտուտ, Հայ ժողովրդի Պատմութիւն, հ. I, Երեւան, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն, 1971, էջ 606։

[12]Ռուբէն Մանանաբեան, Հայաստանը Արտաւազդից Մինչեւ Տրդատ Մեծ. Արտաքին Քաղաքականութիւն, Պետական Գաղափարաբանութեան Պրոբլեմներ եւ Քրիստոնէութեան Ընդունում, Երեւան, «Արեգ», 1997, էջ 11-13։

[13]Նոյն, էջ 15։

[14]Դիան Կասիոս, էջ 158։

[15]F. Stark, *Rome on the Euphrates: The Story of a Frontier*, London, 1966, pp. 119-121.

[16]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 143։

[17]Նոյն, էջ 125։ Պլուտարքոսն ուղղակի նչում է, որ Արտաւազդը եմեծ պատերազմի է բռնուել Հերոդէսի (ասլինքն՝ Օրոդէսի – Վ.Վ.) Հայաստան ներխուժման պատճառով։ Ջի ապացուցուած այն կարծիքը, որ իբր պարթեւները յաղթանակ են տարել Կրասոսի եւ Արտաւազդի դէմ, եւ Հայ-պարթեւական դաշինքով վերջինս կախման մէջ է ընկել Օրոդէս արքայից», տե՛ս՝ A. Bokshchanin, *Parfia i Rim* [Պարթեւստանը եւ Հռոմը], հ. II, Մոսկուա 1966, էջ 60-61։ Նկատենք, որ նչուած դաշինքով Օրոդէսը Հայաստանին է վերադարձրել Հիւսիսային Միջագետքի վիճելի տա-

բանքները (տե՛ս՝ նոյն, էջ 61)՝ լռելեայն համաձայնելով «արքայից արքայ» տիտղոսն Արտաւազդի կրելու փաստի հետ։ Նշենք նաեւ, որ վերջինս ապատուած է տուել կրասոսի ջախջախուած զօրքի մի մասին (տե՛ս՝ Դիոն Կասսիոս, էջ 165), ինչը նոյնպէս ապացոյց է հայոց թագաւորի քաղաքական ինքնուրոյն ուղեգծի։

[18]*Մանասերեան, էջ 16-18։*

[19]*Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 122 վկայում է, որ Քառանի ճակատամարտի նախօրեակին հռոմէական զօրապիններն այնքան վատահ էին մօտալուտ յաղթանակի նկատմամբ, որ համակուսցին քամահրանքով պարթեւների հանդէպ եւ կարծում էին թէ նրանք չեն համարձակուի մարտի մէջ մտնել իրենց հետ։*

[20]*Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 123-125։*

[21]Stark, p. 116.

[22]*Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 123-126։ Հռոմայեցի պատմագիրները եւ նրանց հետեւողութեամբ որոշ ուսումնասիրողներ Կրասոսի պարտութեան մեղքը բարդում են Աբգարի վրայ՝ ընդգծելով նրա «գաւառանական վերաբերմունքը» Կրասոսի նկատմամբ, տե՛ս՝ Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 123-125. Դիոն Կասսիոս, էջ 160-162.* M. Diakonov, *Ocherk istorii drevnego Irana* [*Ուրուագիծ Հին Իրանի Պատմութեան*], *Մոսկուա* 1961, *էջ* 212. Stark, p. 117 *եւն.։ Սակայն, աւանդական այս կարծիքը, ինչպէս ճիշտ նշում է Մանանդեանը, «չէ հաստատուում աղբիւրների վկայութիւնների ուշադիր քննութեամբ», տե՛ս՝ Մանանդեան, էջ 248։*

[23]*Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 135։*

[24]*The Cambridge History of Iran*, vol.3 (1), Cambridge,1983, p. 54.

[25]*Դիոն Կասսիոս, էջ 164։*

[26]Plutarchus, *Crassus*, 39.

[27]Ferrero, *էջ* 101.

[28]H. Bengtson, 'Zum Partherfeldzug des Antorius' [*Անտոնիոսի Պարթեւական Արշաւանքի Մասին*], *տե՛ս՝ Philos.-Hist. Kleine Sitzungsberichte* [*Փիլիսոփայական-Պատմական Կարճ Տեղեկագրեր*], H. 1, München, Bayerisch der Wissenschaften, 1974, *էջ* 4.

[29]*Cambridge History of Iran*, p. 56.

[30]*Դիոն Կասսիոս, էջ 165։*

[31]Cicero, *Epistola ad familiares*, 15, 2.

[32]S. Utchenko, *Tsitseron i ego vremia* [*Կիկերոնը եւ Նրա Ժամանակը*], *Մոսկուա*, 1972, *էջ* 241.

[33]*Մանանդեան, էջ 251-252։ Բայց պիտանականի այս կարծիքը վիճարկելի է- տե՛ս՝ Մանասերեան, էջ 20։*

[34]*Դիոն Կասսիոս, էջ 165։ Յովսեպոսն այս արշաւանքի ժամանակ պարթեւների զօրապետ է յիշում Բարզափրանէսին։ տե՛ս՝ Յովսեպոս Փլաւիոս, էջ 37, 68։*

[35]G. Khalatiants, *Ocherk istorii Armenii* [*Հայաստանի Պատմութեան Ակնարկ*], *Մոսկուա*, 1910, *էջ* 230։ *Մանանդեանը հաւանական է համարում այս կարծիքը- տե՛ս՝ Մանանդեան, էջ 252։ Բայց վատակը բուն պարսկական անուն է, որը յաճախակի յիշատակուած է* Vasaces *ձեւով- տե՛ս՝ Հ. Աճառեան, Հայոց Անձնանունների Բառարան, հատոր Ե, Երեւան, 1962, էջ 43։*

[36]Appian, 2, 71. *Ըստ Պլուտարքոսի, Պոմպէոսը կամենում էր օգնական ուղղել նաեւ պարթեւներին, բայց նրա կուսակիցները դէմ եղան այդ առաջարկին եւ ի վերջոյ որոշեցին մեկնել Եգիպտոս, տե՛ս՝ Պլուտարքոս, Երկեր, Երեւան, «Հայաստան», էջ 301։*

[37]*Պլուտարքոս, Երկեր, էջ 170։*

[38] A. Egorov, *Rim na granits epokh* [Հռոմը Դարաշրջանների Սահմանագծում], Լենինգրադ, 1985, էջ 73։

[39] Ըստ Պլուտարքոսի, Ցուլիոս Կեսարը Պարթևաստանը գրաւելուց յետոյ մտադրուել էր մտնել Վրկանք եւ շարժուելով կասպից ծովի ափեզերքով, շրջանցել Պոնտոսը եւ խուժել Սկիւթիա, ապա դիմել Գերմանիայի ու նրան դրացի երկիրների վրայ եւ Գալիայով վերադառնալ Իտալիա, հռոմէական տիրապետութեան ոլորտները բոլոր կողմերից եզերելով ովկիանոսով, տե՛ս՝ Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 250։

[40] Appian, 3, 78; 4, 60, 62-63։

[41] Նոյն, 4, 60։ Ըստ երեւոյթին, պարթեւները կողմ չէին հանրապետականների արագ յաղթանակին, ինչը վերջ կը դնէր Հռոմում քաղաքացիական պատերազմին։ Երբ Գայիոս Կասսիոսը պատուիրակներ ուղարկեց Օրոդէսի մօտ՝ խնդրելով վերահին օժանդակ զօրամիաւորում ուղարկել Ասորիք՝ հանրապետականների զօրակցելու համար, պարթեւների արքան չընդառաջեց նրանց (տե՛ս՝ նոյն, 4, 63), անշուշտ, չկամենալով, որ նրանք հաստատուեն Ասորիքում։

[42] Appian, 4, 63։

[43] Նոյն, 4, 80։

[44] Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 290. տե՛ս նաեւ՝ Դիան Կասսիոս էջ 172-173։

[45] Արտաւազդի կանխատես վերաբերմունքն, ինչպէս տեսանք, իրական չհանգիստքը ունէր. պարթեւները պարտութիւն կրեցին։

[46] Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 290-291։

[47] V. Parfenov, *Rim ot Tsezaria do Avgusta* [Հռոմը Կեսարից Մինչեւ Օգոստոս], Սարատով, 1987, էջ 15։

[48] I. Shifman, *Tsezar Avgust* [Կեսար Օգոստոսը], Լենինգրադ, 1990, էջ 60-62։

[49] T. Momzen [T. Mommsen], *Istoriia Rima* [Հռոմի Պատմութիւն], հ. 5, Մոսկուա, 1949, էջ 328։

[50] Parfenov, էջ 112։

[51] Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 294. Դիան Կասսիոս, էջ 177։

[52] Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 294-295։

[53] Դիան Կասսիոս, էջ 178։ Այդ գաղիքը եղել է հարիւրապետական, ինչը հաւաստում է Պլուտարքոսի վկայութիւնը, տե՛ս՝ Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 291։

[54] Ուշագրաւ է, որ նոյն 37 թուականին Արտաւազդի թողարկած արծաթեայ դրամի վրայ նա կրում է հարթքիմ արքայի տիտղոս, հաստուածային մնծաբուխով։ Այս դրամի վրայ նշուած է Արտաւազդի գահակալման 18րդ տարին, այսինքն՝ 37 թիւը, որը նաեւ դրամի հատման ժամանակն է ազդանշում, տե՛ս՝ Թաչատուր Մուշեղեան, «Արտաւազդ II-ի Զորեքդրամեանները», Պատմա-Բանասիրական Հանդէս, թիւ 2 (25), 1964, էջ 320-322։

[55] Ենթադրւում է, որ Արտապատականի Արտաւազդ թագաւորը այս ժամանակ դիմել է Անտոնիոսին, որպէսզի վերջինս զօրակցի իրեն ընդդէմ Հրահատ Դ-ի, որի հետ նա բախումների մէջ էր. տե՛ս՝ Bokshchanin, էջ 108։ Սակայն, 36ին նման առաջարկով Արտաւազդ Մեդացին չէր դիմի Անտոնիոսին, քանի որ վերջինս առաջին հերթին սպառնում էր Արտապատականին։ Ուստի աւելի հաւանական էր Արտապատականի եւ պարթեւ արքաների դաշինքն ընդդէմ ահեղ հակառակորդի. տե՛ս՝ Ferero, էջ 306; Debevoise, pp. 106-107։

[56] Bengtson, էջ 6-9, Bokshchanin, էջ 109-110։ Այս կարծիքը վիճարկւում է. տե՛ս՝ Մանասերեան, էջ 24-25։ Պլուտարքոսի հաւաստամարդ, Անտոնիոսը խրատչիկ էր կեսարի գրաւոր ժառանգութիւնը, այդ թւում՝ նրա մտաշրջացումները. տե՛ս՝ Plutarchus,

Antonius, 15։ Ուստի, անհաւանական չէ, որ նա օգտուած լինէր կեսարի յղացած պարթեւական արշաւանքի պլանից։

[57]Դիոն Կասսիոս, էջ 187։ Ալդուհանդերձ Արտաւազդը ստիպուած էր զօրք տրամադրել Անտոնիոսին, քանզի այլ ելք չունէր։ Բայց նա գրեթէ երեք անգամ պակաս զօրուժ դրեց Անտոնիոսի տրամադրութեան տակ, քան ժամանակին ուղարկել էր Կրասոսին։

[58]Bengtson, էջ 32։

[59]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 294։ Պատմագրի հաւաստմամբ, Անտոնիոսն ունէր 60 հազարանոց հետեւակազօր, տասը հազարի հասնող իպպանական եւ կելտական աշրուժի եւ դաշնակիցների տրամադրած 30 հազարանոց զօրքը, որից 13 հազարը (6 հազար հեծեալ եւ 7 հազար հետեւակ) հայկականն էր։ տե՛ս՝ նոյն։ Գերմանացի պատմաբան Թէոդոր Մոմզէնը դրում է, որ Արեւելքում Հռոմը երբեք չէր ունեցել այդքան մեծաթիւ եւ ուժեղ զօրք, որը ըստ նրա, ունէր 70 հազարի հասնող հետեւակազօր, 40 հազար օժանդակ ոյժեր, չհաշուած 10 հազարանոց իպպանական եւ գալլական հեծելազօրը, 6 հազարանոց հայկական աշրուժին։ տե՛ս՝ Momzen, էջ 328։ Պատմաբան Հրանդ Ք. Արմէնը Անտոնիոսի զօրքերի թիւը հասցնում է 100 հազարի։ տե՛ս՝ Հրանդ Ք. Արմէն, «Արտաւազդ Բ եւ Անտոնիոս», Պատմա-բանասիրական Հանդէս, թիւ 3 (22), 1963, էջ 199։ Մէկ այլ կարծիքի համաձայն, Անտոնիոսն ունէր 16 լեգէոն հետեւակազօր, 10 հազարանոց աշրուժի եւ 30 հազարի հասնող օժանդակ ոյժեր, մինչդեռ պարթեւների զօրքի թիւը չէր անցնում 50 հազարից, տե՛ս՝ Egorov, էջ 83։

[60]Չմմտ. Bengtson, էջ 23-24։ Ըստ Մանանդեանի, Անտոնիոսի զօրքի արշաւուղին ձգւում էր դէպի արմենան Քէօփրիքքէօյը (հին Վաղարշաւան), ապա Այրարատի Դաշտ եւ այնտեղից Հայկական Պարի հարաւային կողմով հասնում էր Հէր, որտեղից շարունակւում էր դէպի արմենան Տասուիջ եւ Ուրմիա լճի արեւելեան ափերով հասնում Փրաատպա։ տե՛ս՝ Մանանդեան, էջ 260։ Վերջինիս տեղադրութիւնը դեռեւս մնում է անորոշ։ Այն սովորաբար տեղորոշուել է արմենան Թախտի Սուլէյման աւանի տեղում, բայց ռուս արեւելագէտ Վլադիմիր Մինորսկու կարծիքով այն պէտք է գտնուէր արմենան Մարագայի տեղում։ այս մասին տե՛ս՝ The Cambridge History of Iran, էջ 63-64; Մանասերեան, էջ 29, ծանօթ. 1։

[61]Bengtson, էջ 31։

[62]Momzen, էջ 331-332։

[63]Դիոն Կասսիոս, էջ 178։

[64]Մանասերեան, էջ 31։

[65]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 295-297. Դիոն Կասսիոս, էջ 179։

[66]Դիոն Կասսիոս, էջ 179։

[67]Պլուտարքոս, Կենսագրութիւններ, էջ 296։

[68]Սորաբոն, էջ 49։

[69]Նոյն, էջ 46, 48։ Տե՛ս նաեւ՝ Momzen, էջ 334. Մանանդեան, էջ 265. The Cambridge History of Iran, էջ 59։ Ինչպէս տեսանք, ըստ Պլուտարքոսի, Արտաւազդը կէս ճանապարհից նահ քաշեց իր ոյժերը, քանզի համոզուած էր Անտոնիոսի պարտութեան մէջ։ Արտաւազդի այդ քայլը նպատակ չունէր վնասել հռոմայեցիներին։ Այն հարկադրական ձեռնարկում էր՝ թելադրուած ստեղծուած իրավիճակով։ Պարթեւատրպատականեան զօրքն արդէն չրջափակել էր Անտոնիոսի զօրքին, եւ Արտաւազդը նրան միանալու համար պէտք է ճեղքէր պաշարման օղակը, իր զօրականներին մատնելով արհաւիրքների։ Ուստի միակ ճիշդ ելքը Հայաստան վերադառնալն էր։ Այս մասին տե՛ս՝ S. Ter-Israelian, 'K voprosu o prichinakh vozvrasheniia

armianskoi konnitsi vo vremia Parfianskogo pokhoda M. Antonii' [*Մ. Անտոնիոսի Պարթեւական Արշաւանքի ժամանակ Հայկական Հնձելազօրի Վերադարձի Ճամբաները Մասին*], *Գիտական Աշխատութիւններ Ռաչատուր Արոյեանի Անուան Հայկական Պետական Մանկավարժական Ինստիտուտի (Հասարակական Գիտութիւնների Բաժին)*, հ. 2, Երեւան, 1967, էջ 235-242։

[70] *Պլուտարքոս, Կենսագրութիւններ*, էջ 299-300. *Դիոն Կասիոս*, էջ 180։

[71] *Պլուտարքոս, Կենսագրութիւններ*, էջ 300։

[72] *Նոյն*, էջ 305։

[73] *Նոյն*, էջ 309։

[74] *Պլուտարքոսի վկայութեամբ, հենց որ Հռոմայեցի դիւանագէտները մօտեցան Հայաստանի սահմաններին, պարթեւները դադարեցրին նետաձգութիւնը. տե՛ս՝ Պլուտարքոս, Կենսագրութիւններ*, էջ 309։

[75] *Պլուտարքոս, Կենսագրութիւններ*, էջ 309։

[76] *Չմմտ.՝ Յ. Ասատուրեան, Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի եւ Հռոմէական 190էն Ն.Ք. մինչեւ 429 Յ. Ք.*, Վիեննա 1912, էջ 111. *Արմէն, «Արտաւազդ Բ եւ Անտոնիոս»*, էջ 202։

[77] *Պլուտարքոս, Կենսագրութիւններ*, էջ 311։

[78] *Նոյն*, էջ 311-312։

[79] *Նոյն*, էջ 312։

[80] *Նոյն*, էջ 313։

[81] *Դիոն Կասիոս*, էջ 185։

[82] *Նոյն*։

[83] *Նոյն*, էջ 186։

[84] *Cambridge History of Iran*, էջ 65։

[85] *Դիոն Կասիոս*, էջ 187։

[86] *Cambridge History of Iran*, էջ 65։ *Դիոն Կասիոսը գրում է, որ Անտոնիան ու Արտաւազդ Մեդացին հպատմանաւորուեցին իրար օգնել, մէկը՝ պարթեւների դէմ, իսկ միւսը՝ (Օկտաւիանոս) կեսարի դէմ, եւ այդ առնչութեամբ էլ իրար փոխադարձաբար որոշ քաւով դիւանագիներ տուեցին. եւ [Մեդացին] ստացաւ նորանուաճ Հայաստանից որոշ մասեր», տե՛ս՝ Դիոն Կասիոս*, էջ 188։ *Գերմանացի պատմաբան Հերման Բենգտսոնի կարծիքով, Անտոնիոսը համոզուած չէր, թէ հայերն ու պարթեւները կարող են դաշնակցել Օկտաւիանոսի հետ, տե՛ս՝* Bengtson, էջ 48։

[87] Appian, 5, 133։

[88] *Դիոն Կասիոս*, էջ 184։

[89] *Նոյն*։

[90] M. Grant, *The Twelve Caesars*, New York, 1975, p. 56։

[91] *Ցուվենալիս Փլաւիոս*, էջ 42։

[92] *Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան ու Ս. Յարութիւնեան*, Տփղիս, 1913, էջ 138։

[93] G. Bengtson, *Praviteli epokhi ellenizma* [Հելլենիստական Դարաշրջանի Կառավարիչները], *Մոսկուա*, 1973, էջ 351։

[94] *Հնադարում կնէյ-Սիրիա անուան տակ նկատի էին առնում հարաւային Ասորիքը՝ Պաղեստինի հետ միասին։ Վերջինս վաղուց ի վեր Եգիպտոսի տիրապետ Պաղոմէոսեանների եւ Ասորիքի տիրակալ Սելեւկեանների միջեւ արիւնոտ բախումների պատճառ էր դառնում*։

[95] *Պլուտարքոս, Կենսագրութիւններ*, էջ 315։

[96] *Նոյն*։

[97] Նոյն, էջ 316։

[98] Դիան կասսիոս, էջ 188։ Մամզէնի կարծիքով 30ին Արտաւազդի որդի Արտաչէս Բ. (30-20) դարձաւ Հայաստանի եւ Ատրպատականի թագաւոր, երբ պարթեւները յախջախեցին Ատրպատականի զօրուժը Բայց նրա յաջորդ Տիգրան Գ-ի (20-ժամ 8) գահակալութեան սկզբում Ատրպատականը անջատուեց Հայաստանից՝ Հռոմի Օգոստոս կայսրի (ապինքն՝ Օկտաւիանոսի) կամքով, տե՛ս՝ Momzen, էջ 336, 363։ Տե՛ս նաեւ՝ Մանանդեան, էջ 286-287։

[99] Debevoise, pp. 133-135.

[100] Դիան կասսիոս, էջ 189։

[101] Պլուտարքոս, կենսագրութիւններ, էջ 317-318։

KING ARTAVAZD II OF ARMENIA IN THE DIPLOMATIC INTRICACIES OF ROMAN-PARTHIAN WARS (Summary)

VREJ VARDANIAN

The author argues that during the early period of Roman and Parthian military-political rivalry and armed conflict in Western Asia in the second half of the first century BC, the king of Armenia, Artavazd II (55-34 BC), managed to pursue an independent policy based on the interests of his country and subjects. He succeeded to a large extent in keeping his country away from the expansionist desires of these two great powers of the era. The article is based on the works of classical authors like Plutarch, Appian, Cassius Dio, Flavius Jospehus and Cicero. It also makes extensive use of the available secondary literature on this subject in Armenian, Russian, English and German.

ՊԵՒՏԻՆԳԵՐԵԱՆ ՔԱՐՏԷԶ. ԱՌԱՋԱԻՈՐ ԱՍԻԱՑԻ ՀԱՏՈՒԱԾԱՄԱՍԵՐԸ

ՀՄԱՅԵԱԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Պեւտինգերեան քարտէզը (Tabula Peutingeriana) *կազմուել է մ.թ. դ. դարում հռոմէացի քարտէզագիր կաստորիուսի* (Castorius) *կողմից: Այն համարւում է Հռոմէական (Բիւզանդական) կայսրութեան քարտէզ, քանի որ նրանում ընդգծուած են Ասիայի, Եւրոպայի եւ Հիւսիսային Աֆրիկայի այն երկրները, որոնք մտնում էին կայսրութեան մէջ:*

Մասնաւորապէս 670ին կաստորիուսի քարտէզի ընդօրինակութիւններից օգտուել է Անանուն Ռաւեննացին, որը ստեղծել է իր Կոսմոգրաֆիան (Ravennatis Anonymi Cosmographia)*: Անանուն Ռաւեննացին, սակայն, օգտուել է նաեւ մի շարք այլ յոյն եւ հռոմէացի հեղինակների քարտէզներից: Պեւտինգերեան քարտէզի ուսումնասիրողներից մէկի՝ գերմանացի արեւելագէտ Եոզէֆ Մարկուարտի կարծիքով, Անանուն Ռաւեննացու աշխարհագրական բանաքաղութիւնը ստեղծուել է 734ից ոչ շուտ: ԺԵ.-ԺԶ. դարերում Եւրոպայում յայտնաբերուած կաստորիուսի քարտէզի ընդօրինակութիւնները (որոնք վերաբերւում են ԺԱ.-ԺԲ. դարերին), փոխանցուել են աուգսբուրգեան գիտնական Կոնրադ Պեւտինգերին* (Konrad Peutinger, 1465-1547)*, որն էլ հենց հանդիսացել է այս քարտէզի առաջին տպագրիչը: Այստեղից էլ առաջացել է քարտէզի հանրայայտ անունը՝ Պեւտինգերեան Քարտէզ*[1]*:*

Պեւտինգերեան Քարտէզը յետագայում վերահրատարակել եւ մեկնաբանել է գերմանացի գիտնական Կոնրադ Միլլերը[2]*: Նրա կարծիք-քով Պեւտինգերեան Քարտէզը հին աշխարհի աշխարհագրութեան համար առաւել կարեւոր է, քանց թէ մ.թ. Բ. դարի յոյն գիտնական Կլաւդիոս Պտղոմէոսի Աշխարհագրական Ուղեցոյցը: Միլլերը գտնում է, որ կաստորիուսի թուերը զերծ են յամենայն դէպս այն սխալներից, որոնք բնորոշ էին Հնադարում կատարուող աստղաբաշխական հաշուարկումներին: Այստեղ նշենք, որ կաստորիուսի թուերը տրուած են հռոմէական մղոններով, մասամբ էլ՝ պարսկական փար-սախներով:*

Պեւտինգերեան Քարտէզի մի քանի պայմանական նշանների վերծանումը հիմք է տալիս ենթադրելու, որ այն կոչուած էր ծառայելու ոչ միայն նեղ՝ առեւտրա-տնտեսական ու ռազմական, այլ նաեւ կրօնա-մշակութային նպատակներին: Այդ են վկայում մասնաւորա-

պէս երկու սրագագաթ աշտարակների գծագրական պատկերումները, որոնք առկայ են քարտէզի մի շարք կայանների մօտ: Չի կարելի ասել, թէ այդ հանգամանքը ուսումնասիրողների կողմից անուշադրութեան է մատնուել: Սակայն, մեր կարծիքով, նրանց ուսումնասիրութիւնները իւ յայտ չեն բերել այդ նշանների իրական իմաստը: Այսպէս՝ Միլլէրը եւ Մարկուարտը ժամանակին այն կարծիքն են յայտնել, որ այդպիսի նշաններով կայանները եղել են «նշանակալից քաղաքներ կամ ռազմական կայաններ»[3]:

Փաստերի վերլուծութիւնը, ինչպէս նաեւ ծանօթացումը Հռոմէական կայսրութեան (Բիւզանդիայի) արեւելեան նահանգների վարչաեկեղեցական բաժանումներին, մեզ բերում է այն եզրայանգման, որ երկու աշտարակաձեւ նշանները իրականում հանդիսանում են կրօնա-կան հաստատութիւնների պայմանանշաններ: Հետեւաբար, այդպիսի պայմանանշաններով քաղաքները եւ կայանները, անկախ իրենց մեծութիւնից եւ ռազմական նշանակութիւնից, հանդիսանում են նաեւ եկեղեցական կենտրոններ:

Պեւտինգերեան Քարտէզի ուսումնասիրութեամբ զբաղուել են շատ եւրոպացի, ռուս եւ հայ պատմաբաններ: Սակայն, որոշակի հանգամանքների հետեւանքով, նրանում մնում են այսպէս կոչուած «սպիտակ հետքեր»: Այսպէս, օրինակ, պարզուած չեն շատ ու շատ կայանների անուններ, կարիք է զգացւում պարզելու առանձին ճանապարհների երթուղիները եւլն.:

Մեր ուսումնասիրութեան շրջանակը հանդիսանում է Առաջաւոր Ասիայի տարածաշրջանը, որը արտացոլուած է Պեւտինգերեան Քարտէզի այն հատուածամասում, որտեղ տարածւում է հին Հայաստանը, ինչպէս նաեւ նրան յարակից երկրները՝ Պարթեւաստանը, Մարաստանը, Միջագետքը, Ասորիքը, Կապադովկիան, Պոնտոսը, Վրաստանը եւլն.: Այն իր մէջ է պարփակում այն տարածութիւնը, որը արեւելքում ընկած է Ecbatanisից (Էկբատան, ժամանակակից Համադան) մինչեւ Antiochiaն (Անտիոք, Ասորիքի մայրաքաղաքը) արեւմուտքում, Sebas-topolisը (Դիոսկուրիա, այժմ՝ Սուխումի)՝ հիւսիսում եւ Cesiphunը (Տիգրոն՝ Պարսկաստանի այն ժամանակաշրջանի մայրաքաղաքը)՝ հարաւում: Այստեղով էին անցնում Առաջաւոր Ասիայի գլխաւոր երթուղիները, այդ թւում նաեւ՝ Մեծ Մետաքսի ճանապարհի հիմնա-կան ցամաքամասային ճանապարհները:

Պեւտինգերեան Քարտէզի ուսումնասիրութիւնը յատկապէս կարեւորւում է այն ժողովուրդների համար (այդ թւում՝ հայերի), որոնք քարտէզի կազմման ժամանակ դեռեւս չունէին սեփական գիր եւ գրականութիւն: Այդ իսկ պատճառով քարտէզի այն հատուածա-

մասը, որտեղ տարածւում է Հայաստանը, կարեւոր տեղեկութիւններ է պարունակում հայ ժողովրդի պատմութեան միջնադարեան ժամանակաշրջանի համար: Կարեւոր է նաեւ նշել, որ չնայած իր անգնահատելի տեղեկութիւններին, քարտէզը պարունակում է որոշակի վրիպակներ, որոնք լրացուցիչ դժուարութիւններ են ստեղծում այն վերծանելու աշխատանքում: Այսպէս՝ Armenia maiorի (Մեծ Հայք) փոխարէն Artaxataի (Արտաշատ) մօտ հանդէս է գալիս Media maior[4], ինչպէս նաեւ տեղական լեզուից քարտէզի լեզուներ (այսինքն՝ յունարէն եւ լատիներէն) թարգմանութեան ժամանակ բաւականին վնասուած են, օրինակ, առանձին կայանների անուններ:

Պեւտինգերեան Քարտէզը կազմուել է մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ Առաջաւոր Ասիայի երկրներում համաշխարհային տարանցիկ ճանապարհները ենթարկւում էին նշանակալից փոփոխութիւնների: Դ. դարում Բիւզանդական կայսրութեան սկզբնաւորման հետ, այդ ճանապարհները սկսեցին կողմնորոշուել դէպի Կոստանդնուպոլիս, որը եւրոպական եւ ասիական աշխարհների խաչմերուկում վերածուել էր խոշոր առեւտրային եւ մշակութային կենտրոնի: Մարաստանով, Միջագետքով եւ Ասորիքով անցնող Մեծ Մետաքսի ճանապարհի երբեմնի գլխաւոր՝ Էկբատան-Անտիոք երթուղու հետ միաժամանակ առաջ եկաւ նոր մայրուղի, որը, սկիզբ առնելով Էկբատանից եւ անցնելով Արտաշատով, հասնում էր մինչեւ Կոստանդնուպոլիս[5]: Տուեալ ժամանակաշրջանի համաշխարհային երթուղիների այս փոփոխութիւնները էլ հենց արտայայտուել են Պեւտինգերեան Քարտէզում:

ԷԿԲԱՏԱՆ-ԱՆՏԻՈՔ ԵՐԹՈՒՂԻՆ

Մեծ Մետաքսի ճանապարհի այս հատուածի նկարագրութիւնը առաջինը տուել է Պտղոմէոսը: Սկիզբ առնելով Հերապոլսից (Ասորիք)՝ այն անցնում էր Միջագետքով եւ Ադիաբէնի միջով դուրս էր գալիս Էկբատան: Էկբատանից ճանապարհները տանում էին դէպի Կասպեան Դռներ (լեռնանցք Ռագիայից (Ռէյ) արեւելք՝ Թեհրանի մօտ), այնու-հետեւ՝ Պարթեւաստանով, Արիա (Հերատ, Աֆղանստան) եւ Մար-գիանեան Անտիոք (Մերվ, Միջին Ասիա):

Պեւտինգերեան Քարտէզում արտացոլուած այդ երթուղին գրեթէ ամբողջութեամբ կրկնում էր Մեծ Մետաքսի ճանապարհի Մարաստանից մինչեւ Ասորիք ընկած ճանապարհը: Այդուհանդերձ, տուեալ ժամանակաշրջանում Առաջաւոր Ասիայում եղած քաղաքական-տնտեսական իրադրութիւնների տարբեր փոփոխութիւնների պատճա-ռով, սկզբնական երթուղու առանձին հատուածներում որոշակի ուղղումներ էին կատարուել: Նոր ճանապարհն այս անգամ

Կոստանդնուպոլիս էր տանում Ռէյ քաղաքից (Թեհրանի մօտ)՝ Արտաշատով եւ յետագայում՝ Դուինով[6]:

Ըստ Պեւտինգերեան Քարտէզի, Էկբատանից սկսուող ճանապարհը իր առաջին հատուածում տանում էր Peloriarca կայան, որը նոյնացւում է Բեհիսթունի հետ (լատ. peloris = հսկայ աւազան եւ arca, arcanis = մի բան, որ պահպանւում է փակուած, թաքցուած տեղում): Այս կայանի, այն է՝ Բեհիսթունեան ժայռի մօտ գտնուող բնակավայրի անուան կողքին առկայ է երկու աշտարակաձեւ նշան:

Բեհիսթունից յետոյ ճանապարհի նախկին երթուղին փոխւում էր: Փոխանակ գնալու Ադիաբէն (կամ նրա կենտրոն Արբելա), այն ընթանում էր Hatris (Հադրա): Պեւտինգերեան Քարտէզից երեւում է, որ Միջագետքի ճանապարհներին Հադրան հանդիսանում էր կարեւոր հանգուցային կենտրոն: Նրան յաջորդող Singaran (Սինգարա, Շինգար) նոյնպէս հանգուցային կայան էր: Սինգարայից ճանապարհը տանում էր դէպի Nisibi (Մծբին):

383ին՝ քարտէզի կազմման ժամանակ, Մծբինը Պարսկաստանի տիրապետութեան տակ էր եւ հանդիսանում էր Միգդոնիա (Հայոց Արեւաստան) նահանգի վարչական կենտրոնը: Մծբինը հանդիսանում էր նաեւ Պարսկական Միջագետքի միտրոպոլական կենտրոնը, որը հաստատւում է Պեւտինգերեան Քարտէզում իր անուան մօտ երկու աշտարակաձեւ նշանի առկայութեամբ:

Մծբինից յետոյ Պեւտինգերեան Քարտէզում նշուած է Rassaina (Ռաս-էլ-Այն): Նրան յաջորդում է Charris (Խառան): Խառանը եղել է Եդեսիայի օժանդակ կայանը: Խառանից ճանապարհը՝ տանելով դէպի արեւմուտք, անցնում էր Եփրատ գետը եւ հասնում Seugmaին (Զեւգմա)[7]: Այնուհետեւ այն ընթանում էր մինչեւ Անտիոք:

Եդեսիան կարեւոր դիրք էր գրաւում Անտիոք-Էկբատան ճանապարհի վրայ: Հին յոյն աշխարհագրագէտ Ստրաբոնը (մ.թ.ա. Ա.-մ.թ. Ա. դարեր)՝ նկարագրելով այս երթուղու կարեւոր հատուածներից մէկը՝ ճանապարհը Ասորիքից դէպի Սելեւկիա եւ Բաբելոն, հաղորդում է, որ այն անցնում էր Եփրատ գետը «Անթեմուսիայի՝ Միջագետքում գտնուող մի վայրի մօտից: Գետից յետոյ 4 սխենա (12 հռոմ. մղոն կամ 18 կմ.) հեռաւորութեան վրայ ընկած է Բամբիկան, որը նոյնպէս կոչւում է Եդեսիա եւ Հիերապոլիս...: Առեւտրականները խուսափում են անցնել գետի ընթացքով ընկած չրջաններով (զգուշանալով արաբական ցեղերի կողմից կատարուող աւազակային յարձակումներից - Հ.Մ.) եւ ճանապարհորդութեան գնում են անապատով՝ գետը թողնելով երեք օրուայ ճանապարհի հեռաւորութեան վրայ»[8]: Ստրաբոնի ժամանակ, ինչպէս նաեւ միջին դարերում, մէկ օրուայ

ընթացքում ճանապարհահատուած անցնելու չափաբաժինը եղել է 25 հռոմ. մղոն (40 կմ.)՝ ուղտերով, ձիերով, ջորիներով քարաւանների համար:

Բեհիսթունից հարաւային ուղղութեամբ դէպի Տիգրոն (Պեւտինգերեան Քարտէզի վրայ այն մատնանշուած է որպէս Volocesia եւ Cesiphun) ընթանում էր մի այլ ճանապարհ, որը անցնում էր Charraով (Խալա) եւ Artemitaով (Արտեմիտէ): Տիգրոնի, ինչպէս նաեւ Հադրայի, Սինգարայի, Մծբինի, Ռաս-էլ-Այնի եւ Եդեսիայի մօտ Պեւտինգերեան Քարտէզում գտնուող երկու աչտարակաձեւ նշանները վկայում են, որ այս քաղաքներում գոյութիւն են ունեցել ասորական կրօնական կարեւոր կենտրոններ:

Չնայած նրան, որ էկբատան-Անտիոք ճանապարհը չէր անցնում պատմական Հայաստանի տարածքով, այն գտնուում էր Հայաստանի հարաւային երկրամասերից ոչ այնքան հեռու՝ աւանդաբար այսպէս կոչուած Հայկական Միջագետքում: Ընդ որում բաւական մեծ թուով հայեր էին ապրում այստեղ: Օսրօէնէում՝ յատկապէս Եդեսիայում, նրանք ասորիներից յետոյ երկրորդ էթնոսն էին հանդիսանում: Հայկական բնակավայրեր գոյութիւն ունէին Խաւանի մօտակայքում: Մծբինում եւ Արբելայում նոյնպէս հայկական բնակչութիւն կար[9]: Ստրաբոնը, պատմելով Ադիաբէնի մասին, նշում է, որ մարերը, հայերը եւ բարբէլացիները եղել են «աշխարհի այս մասի ամենամեծ ցեղերը»[10]:

Աղբիւրները վկայում են, որ Բ.-Դ. դարերում՝ Բիւզանդիայի եւ Պարսկաստանի միջեւ եղած պայմանաւորուածութեան համաձայն, ապրանքափոխանակութիւնը մի կողմից բիւզանդացի, իսկ միւս կողմից պարսիկ առեւտրականների միջեւ կատարւում էր յատուկ ընտրուած վայրերում: Դրանք էին Մծբինը (Տիգրիս գետի վրայ), Կալլինիկումը (Եփրատ գետի վրայ) եւ Արտաշատը (Արաքս գետի վրայ): Այն ժամանակ, Մծբինը Պարսկաստանի տիրապետութեան տակ էր, Կալլինիկումը՝ Բիւզանդիայի, իսկ Արտաշատը՝ Արշակունեաց Հայաստանի[11]:

Պեւտինգերեան Քարտէզից երեւում է, որ Սելեւկիա (Տիգրոն)-Կալլինիկում-Անտիոք ուղղութեամբ (Եփրատեան ուղղութիւն) եղած առեւտրական յարաբերութիւնները արդէն այդ ժամանակահատուածում այնքան էլ կենսունակ չէին: Հիմնական ճանապարհները դէպի Կոստանդնուպոլիս անցնում էին Մծբինով եւ Սամոսատով: Նման ուղի ունէր նաեւ Արտաշատով անցնող երթուղին[12]:



Պետինգերեան Քարտէզ. XI 4 – XII 1 Հատուածամասեր

ԷԿԲԱՏԱՆ-ԱՐՏԱՇԱՏ ԵՐԹՈՒՂԻՆ

Մեծ Մետաքսի Ճանապարհի առաջաւորասիական հատուածի մէկ այլ ճիւղը, որն ընկած էր Էկբատանից մինչեւ Արտաշատ, սկսւում էր Naucanio կայանով, որի անունը, սակայն, ոչ մի նոյնացման չի ենթարկւում: Նոյնացման չի ենթարկւում նաեւ Naucanioից 4 փարսախ (24 կմ.) հեռաւորութեան վրայ ընկած, յաջորդ Adtomenta կայանի անունը: Վերջինիս յաջորդում է Phasum կայանը (Անանուն Ռաւեննացու մօտ՝ Rapsum), որը նոյնանում է Փրաասպայի հետ[13]: Փրաասպան հանդիսանում էր Մարական Ատրպատականի իրանական գրադաչտականների յայտնի կենտրոնը[14]:

Փրաասպան հայկական տառադարձութեամբ նշանակում է Հրանտ Բագին (մեհեան կրակի): Ինչպէս ցոյց ենք տալու ներքեւում, է. դարի հայ պատմիչ Սեբէոսը Փրաասպան անուանում է «Հրանտն Մեծ»: Ը.-Թ. դարերի բիւզանդացի հեղինակ Թէոփանէս Խոստովանողը իր ժամանակագրութեան մէջ մատնանշում է, որ բիւզանդական Հերակլ կայսրը (610-641), դուրս գալով իր կողմից նուաճուած Գանձակ Շահաստանից, յարձակւում է Փրաասպայի վրայ եւ քաղաքի հետ միասին հրդեհի մատնում կրակի մեհեանը[15]: Ըստ Պեւտինգերեան Քարտէզի՝ Փրաասպան գտնւում էր Eneca կայանից 4 փարսախ (24 կմ.) հեռաւորութեան վրայ: Այս կայանն էլ հենց պէտք է ընդունել որպէս Գանձակ Շահաստան, որ Մարական Ատրպատականի կենտրոնն էր: Ամենայն հաւանականութեամբ Eneca անուան մէջ սխալմունք է տեղի ունեցել: Մեր համոզմամբ, այստեղ գործ ունենք յունարէն «դրամային պահուստներ» կամ լատիներէն «հասարակական պահեստարան» բառի հետ, որը գուգորդւում է «գանձ» եւ «գանձակ» (գանձարան, գանձատուն) հասկացութիւնների հետ: Սեբէոսը, պատմելով Հերակլի 627-628ի արշաւանքը Մարական Ատրպատական, նշում է, որ կայսրը «դիմեալ ի Գանձակ Ատրպատականի՝ կործանէ եւ զբագինս Հրանտին մեծի, որում Վչնասպն կոչէին»[16]:

Enecaից յետոյ եկող Aradum (Ռաւեննացու մօտ. այսուհետեւ՝ Ra Arabum) կայանը նոյնացման չի ենթարկւում:

Պեւտինգերեան Քարտէզում Aradumին յաջորդող Paresaka կայանը հանդիսանում էր որոշ իմաստով տարանջատող կայանը: Պատմաբան Բակուր Մանանդեանը այն նոյնացնում է Պարսքի հետ, որից սկսուած տարածւում էր Պարսկաստանը[17]: Պարսքից սկսած դէպի Արտաշատ գնացող երթուղու տարբեր կայանների միջեւ եղած հեռաւորութիւնների նշումները Պեւտինգերեան Քարտէզում տրուած են արդէն հռոմէական մղոններով:

Պարսքին յաջորդում է Tris Peda (Ra Tarspedo) կայանը։ Այն տեղորոշւում է ալժմեան Սոֆիանի տեղում, որը գտնւում է դէպի Մարանդ, Խոյ եւ Թաւրիզ գնացող երեք ճանապարհների խաչմերուկում (Tris peda)։ Նրանից յետոյ գալիս է Filadelfiան (Philadelphia), որը պատմաբան Սուրէն Երեմեանը նոյնացնում է Մարանդի հետ[18]։ Ցայտնի է, որ հայոց Տրդատ Ա. Արշակունի թագաւորի (գահակալել է մ.թ. 52-75ին) կողմից՝ Մարանդի հարեւանութեամբ, հիմք էր դրուել մի դաստակերտի, որը իր եղբօր՝ Մարաստանի արքայ Բակուրի անունով կոչւում էր Բակուրակերտ։ Պէտք է ենթադրել, որ այս իմաստն է հենց դրուել Պեւտինգերեան Քարտէզի կազմողի կողմից Philadelphia կայանի անուան մէջ (Ֆիլադելֆիա = սէր դէպի եղբայրը)։

Պեւտինգերեան Քարտէզի Մարանդից անմիջապէս յետոյ եկող Gobdi կայանը ոչ այլ ինչ է եթէ ոչ Արաքսի ափին գտնուող Ջուղան։ Նրան յաջորդում է Նախիջեւանը (Nasabi)։ Այն յայտնի է Պտղոմէոսի Ասիայի Երրորդ Քարտէզից որպէս Naxuana։

Nasabiի Նախիջեւան եւ Gobdiի Ջուղա նոյնացումը հաստատւում է նաեւ Պեւտինգերեան Քարտէզում նրանց միջեւ եղած հեռաւորութիւնից։ Լինելով քարտէզի մատնանշած ամենակարճ տարածութիւններից մէկը (17 հռոմ. մղոն = 25 կմ.)՝ այն համապատասխանում է հենց Ջուղայից մինչեւ Նախիջեւան ընկած ճանապարհահատուածին։

Նախիջեւանից յետոյ՝ դէպի Արտաշատ, այնուհետեւ մատնանշուած են Anteba, Sorae (Sorue) եւ Catispi կայանները։ Anteban ամենայն հաւանականութեամբ Ագնաբերդ ամրոցն է, որն ընկած էր Նախիջեւանից 36 կմ. հիւսիս-արեւմուտք։ Sorue կայանը ե՛ւ անուամբ, ե՛ւ դիրքով համապատասխանում է Շարուրին։ Վերջինիս՝ Շարուրի դաշտի վերաբերեալ դեռեւս չիշատակում է Ե. դարի հայ պատմիչ Մովսէս Խորենացին[19]։ Ինչ վերաբերում է Catispi կայանին, ապա այն իր դիրքով համապատասխանում է Այրարատի Ուրծաձոր գաւառին, որ ընկած է Շարուրից 27 հռոմ. մղոն (40 կմ.) հեռաւորութեան վրայ։ Այս կայանի անունը ենթադրաբար կարելի է տեղորոշել եւ նոյնացնել Ուրծաձորի իշխանական տան նստավայր Սակրաբերդ ամրոցի հետ, որն ընկած է Վեդի քաղաքից 9 կմ. արեւելք[20]։

Կոստանդնուպոլիս տանող ճանապարհների ուրուագծերը, կապուած համաշխարհային առեւտրի նոր մայրուղիների ի յայտ գալու հետ, ժամանակի ընթացքում փոփոխւում էին։ Այդպէս եղաւ Մարաստանից Հայաստան ընկած ճանապարհահատուածում։ Ռէյից (Թեհրանի մօտ) սկսած այն անցաւ այնպիսի վայրերով, որտեղ ժամանակի ընթացքում ի յայտ եկան այնպիսի կայաններ, ինչպիսիք էին Ղազուինը, Զենջանը, Միանէն, Թաւրիզը։ Այս երթուղին

Գանձակ-Շահաստանը չրջանցում էր Հիւսիսից։ Իսկ Էկբատանը, ինչպէս արդէն նշուել է, կողմնորոշուել էր դէպի Փոքր Ասիա՝ Մծբինի եւ Սամոսատի վրայով։

Այդ ճանապարհների հանգրուանը՝ Արտաշատը, ինչպէս երեւում է Պեւտինգերեան Քարտէզից, մնում էր որպէս ճանապարհների խաչմերուկ, որոնք տանում էին դէպի Հայաստանի հարաւային երկրամասերը (այսինքն՝ Տիգրանակերտ), Պոնտոս եւ Փոքր Ասիա (Սատաղով), Արեւելեան Մերձսեւծովեան չրջան (այսինքն՝ Սեբաստոպոլիս), Վրաստան (Հայաստանի հիւսիսային չրջաններով) եւլն.։ Այսպիսով կարելի է ընդհանրացնել, որ Էկտաբան-Արտաշատ-Կոստանդնուպոլիս ճանապարհը ժամանակի ընթացքում տեղը զիջեց Ռէյ-Արտաշատ-Կոստանդնուպոլիս ճանապարհին։

ԱՐՏԱՇԱՏ-ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ ԵՐԹՈՒՂԻՆ

Մինչեւ վերջին ժամանակներս պատմագիտութեան մէջ ընդունելութիւն էր գտել Մանանդեանի այն տեսակէտը թէ Արտաշատից Տիգրանակերտ տանող երթուղին անցնում էր Bagaunaով (Բագաւան) եւ այնուհետեւ՝ Հարք, Ապահունիք, Տարօն գաւառներով։ Սակայն հաշուի առնելով Պեւտինգերեան Քարտէզի կազմման որոշակի առանձնայատկութիւնների էութիւնը, քարտէզի ուսումնասիրութիւնը մեզ բերեց այն եզրայանգման, որ Մանանդեանի տեսակէտը հիմնուած է ոչ ճիշտ ենթադրութիւնների վրայ։

Փաստերը վկայում են, որ Մանանդեանի սխալ եզրայանգումների համար գլխաւոր պատճառ հանդիսացել է Պեւտինգերեան Քարտէզում Էկբատան-Արտաշատ երթուղու վրայ մի ամբողջ չարք կայանների՝ Catispi, Soruբ, Antebaբ, Nasabiբ կրկնութիւնը։ Մանանդեանը, չկարողանալով ճշմարիտ եւ հիմնաւորուած բացատրութիւն տալ այդ կրկնութեանը, ենթադրել է որ այդ կայանները, սխալմամբ գրի են առնուել երկու անգամ[21]։

Իրականում, քարտէզի հեղինակը այդ կայանները դուրս է բերել եւ երկրորդ անգամ գրի առել հարեւանութեամբ գտնուող ազատ հատուածում, որպէսզի շարունակի նկարագրել Արտաշատ-Տիգրանակերտ ճանապարհի յետագայ ընթացքը։ Դա է հաստատում քարտէզի կազմման հենց մեթոդիկան, ըստ որի օգտագործելի են քարտէզի վրայ եղած ազատ տարածութիւնները։ Զուտ տեխնիկական պատճառ-ներով է, որ չարքի վերջը, որտեղ նշուած է Catispi կայանը, յայտնուել է Bagauna անուամբ կայանի հարեւանութեամբ, որն էլ հենց օրգանա-կան կապի տեսանելիութիւն է ստեղծել։ Հասկանալի է, որ քարտէզի հեղինակի մտայղացմամբ կայանների չարքի կրկնութիւնը հենց պէտք է ընդգծէր, որ Տիգրանակերտ տանող

երթուղին սկսւում էր Արտա-չատից: Այդ երթուղին Էկբատան-Արտաշատ երթուղու համեմատ տանում էր, այսպէս ասած, հակառակ ուղղութեամբ եւ միայն Nasabi-Նախիջեւան կայանից այն թեքւում էր դէպի արեւմուտք՝ անցնելով Արաքսի աջ ափը:

Արաքսի աջ ափին գտնուող Saumbo (Մանանդեանի մօտ՝ Isumbo) կայանը, որը կրում է երկու աշտարակաձեւ նշան, ոչ այլ ինչ է, եթէ ոչ աւանդաբար Բարթուղիմէոս առաքեալի հանգրուաններից մէկը համարուող Շամբ (Հին Շամբիթաձոր) բնակավայրը: Շամբում հիմնադրուած եկեղեցական հաստատութեան վերաբերեալ տեղեկութիւնները յայտնի են Ե. դարի հայոց նշանաւոր կաթողիկոս Սահակ Ա. Պարթեւի (գահակալել է 387-439ին) օրերից[22]:

Աղբիւրները վկայում են, որ Շամբի շրջանում էր գտնւում Արաքս գետով ամենայարմար գետանցը: Այսպէս, Սեբէոսը, նկարագրելով 624 թուականի բիւզանդական բանակի արշաւանքի երթուղին՝ սկսած «դաշտն Նախճաւանից» դէպի Արաքսի աջ ափը ընկած հատուածում, նշում է, որ Հերակլ կայսրը «հասեալ անցանէ ընդ հուն գետոյն Երասխայ՝ յաւանն Վրնջունիս եւ բանակի յանդաստանս նորա»[23]: Վրնջունիս (Վրնջունիք) գիւղը ընկած է եղել Շամբից ոչ այնքան հեռու՝ նրանից դէպի հիւսիս-արեւմուտք (4-4,5 կմ.):

Մանանդեանը Catispi, Sorue, Anteba եւ Nasabi կայանները փոխարինել է Անանուն Ռաւեննացու կողմից վկայած Didyma, Indua եւ Arachia կայաններով[24]: Սակայն, ինչպէս երեւում է, այդ կայանները, որոնք ընդ որում չեն պարունակում միմեանց միջեւ եղած հեռաւորութիւնների ցուցումներ, իրականում Էկբատան-Արտաշատ ճանապարհի վրայ եղել են միջանկեալ կայաններ:

Didymaն (յուն. «երկուորեակներ» - հեթանոսական աստուածներ Արտեմիսն եւ Ապոլլոնը) հանդիսանում է յատուկ անուն մի քաղաքաւանի, որը ընկած էր հին Միլէթ քաղաքից հարաւ (այժմ՝ Թուրքիայում): Այն յայտնի էր իր Ապոլլոն աստուծոյ պատգամախօսական տաճարով[25]:

Ռաւեննացին այս անունը օգտագործում է փոխաբերական իմաստով՝ նկատի ունենալով Ապոլլոնի (այսինքն՝ հայոց Տիր աստծու) պաշտամունքի այն վայրը, որը գտնւում էր Արտաշատի հարեւանութեամբ: Այդ մասին մենք իմանում ենք Խորենացուց: Վերջինս, աւանդելով Արտաշատ քաղաքի հիմնադրման մասին, նշում է. «Երթեալ Արտաշիսի ի տեղին, ուր խառնին Երասխ եւ Մեծամօր, եւ հաճեալ ընդ բլուրն՝ չինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ: ... Կանգնէ ի նմա մեհեան, եւ փոխէ ի նմա ի Բագարանէ զպատկերն Արտեմիդեայ

եւ զամենայն կուռս հայրենիս. բայց զԱպողոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնէ հուպ ի ճանապարհն»[26]:

Այս տեղեկութիւններից կարելի է եզրակացնել որ հայկական Didymaն հայոց Արտաշէս Ա. (գահակալել է մ.թ.ա. 189-160ին) թագաւորը հիմնադրեց Արտաշատից ոչ այնքան հեռու: Ինչ վերաբերում է ճանապարհին, ապա այն ամենայն հաւանականութեամբ հանդիսանում էր Արտաշատի մօտով անցնող Մէովտիս-Կոլխիդական մայրուղու մի մասը, որը սկիզբ առնելով Տանաիսից (Ազով) եւ անցնելով Վրաստանով ու Հայաստանով՝ տանում էր դէպի Մարաստան եւ Հնդկաստան: Մօտաւորապէս մ.թ.ա. Բ.-Ա. դարերից սկսած, նրանով էր անցնում Մեծ Մետաքսի ճանապարհի հիւսիս-արեւմտեան ճիւղը՝ Էկբատան-Արտաշատ երթուղին:

Ցայտնի է, որ Արտաշատի մօտ գտնուող Ապոլլոնի սրբարանը գոյատեւեց մինչեւ մ.թ. Գ. դարը, երբ աւերուեց պարսից Արտաշիր Ա. Սասանեան արքայի (գահակալել է 226-239 կամ 241ին) կողմից: Սակայն հայ վաղ միջնադարեան պատմիչ Ագաթանգեղոսի տեղեկութիւններից երեւում է, որ այս սրբարանը վերականգնուել է: Ըստ այս աղբիւրի՝ Տիր աստծուն նուիրուած գլխաւոր տաճարը՝ Երազամոյն անուամբ, գտնուում էր Արտաշատի շրջակայքում դեռեւս Դ. դարում: Այն աւերուեց միայն 301ին՝ Գրիգոր Լուսաւորիչի կողմից[27]: Ռաւեն-Նացու կողմից Didymaի յիշատակութիւնը, ինչպէս երեւում է, հանդիսանում է պատմական աւանդոյթի արդիւնք:

Indua կայանի անունը մեզ բերում է այն մտքին, որ սկզբնական շրջանում այդ անուան գրելաձեւը պէտք է լինէր Duain, այն է՝ Դուին: Կարելի է ենթադրել, որ այն փոփոխուել է շրջուն շարադասութեան հետեւանքով: Ըստ Խորենացու՝ Դուինը հիմնադրուել է Դ. դարի 30ականներին Խոսրով Բ. Կոտակ (Փոքր) թագաւորի (գահակալել է մօտ 330-338ին) կողմից[28]: Ամենայն հաւանականութեամբ, Դ. դարի 60ականներին, երբ վերջնական խմբագրման էր ենթարկուել Պեւտինգերեան Քարտէզը, Դուինը արդէն իրենից ներկայացնում էր համեմատաբար մեծ քաղաք եւ հանդիսանում էր հայոց արքաների նստավայրը:

Arachia բառը, ինչպէս կարելի է ենթադրել, Արաքս գետի (յուն. Araches, Arachis, լատ. Araxes) այլընթերցուածքներից մէկն է:

Պեւտինգերեան Քարտէզում Շամբից յետոյ նշուած է Flegoana կայանը: Այն չի ենթարկւում ոչ մի նոյնացման: Ճիշդ է՝ հեռաւորութեան նշումից (Saumboից մինչեւ Flegoana՝ 15 հռոմ. մղոն կամ 22 կմ.) եւ լատինական Flex (շրջադարձ, շրջանցում) նախածանցից ելնելով կարելի է ենթադրել, որ ճանապարհը անցել է Հեր (այժմ Խոյ)

քաղաքի մօտով, որը գտնւում է ճանապարհների այն խաչմերուկում, որոնք տանում էին դէպի Վան, Մակու եւ Զարեհաւան։ Հերի վերաբերեալ յիշատակութիւն ունի նաեւ Խորենացին[29]։

Արտաշատ-Տիգրանակերտ երթուղու յաջորդ կայանը հանդիսանում է Զարեհաւանը, որը Պեւտինգերեան Քարտէզի վրայ նշուած է Dagreuana անուամբ։ Զարեհաւանը (այժմեան Սալմաստի մօտ) եղել է Զարեհաւանեանք նախարարական տան կենտրոնը[30]։

Մեր ուսումնասիրութիւնները մեզ բերեցին այն համոզման, որ Զարեհաւանից յետոյ եկող Molchia կայանը գտնուել է Վասպուրականի Մեծ Աղբակ գաւառում։ Այս գաւառում՝ Զարեհաւանից 39 կմ. հեռաւորութեան վրայ, Զօրադիր (Սորատէր) գիւղի մօտ գտնւում է Զօրադիրի (Սորադիրի) Ս. Էջմիածին ճարտարապետական համալիրը, որն էլ հենց հանդիսանում է Molchia կայանը։ Դ. դարում՝ Պեւտինգերեան Քարտէզի կազմման շրջանում, այս վայրում շրջակայ հարթ մակերեսի համեմատ բարձրանում էր մի մեծ ժայռաբեկոր՝ կաւճի բլուր։ (Molchiaն ծագում է լատ. molesից, որը նշանակում է «մեծաբեկոր», «ժայռ», ինչպէս նաեւ՝ «հսկայ»)։ Տուեալ ժամանակաշրջանում, այդ ժայռաբեկորի վրայ դեռեւս եկեղեցական շինութիւն չկար։ Դա երեւում է դրանից որ Molchia անուան մօտ Պեւտինգերեան Քարտէզում նշուած չէ երկու աշտարակաձեւ նշան։ Զօրադիրի Ս. Էջմիածին եկեղեցին այս ժայռի վրայ հիմնադրուել է միայն Ե. դարում։ Ըստ աւանդութեան՝ այն կառուցել է մօտակայքում գտնուող Ս. Բարթուղիմէոս վանքի ճարտարապետի սանը։ Ծուշարճանի վերաբերեալ տեղեկութիւններ հաւաքուել են դեռեւս Մանուէլ Միրախորեանի եւ ԺԹ. դարի այլ հայ ուսումնասիրողների կողմից։ Նրա ուսումնասիրութեանն էր նուիրուած Հռոմի համալսարանի գիտական արշաւախմբի մասնակիցների կողմից 1967ին անցկացուած հետազօտութիւնը, որի արդիւնքը եղաւ յատուկ գրքի հրատարակութիւնը[31]։

Պեւտինգերեան Քարտէզում Molchiaից յետոյ գալիս է Vastauna կայանը։ Ժամանակին այս կայանը Միլլէրը եւ Մարկուարտը նոյնացրել են Ոստանի հետ։ Ոստանից ճանապարհը ընթանում էր Վանայ Լճի հարաւային ափով եւ հասնում մինչեւ Datansana (Մանանդեանի մօտ՝ Patansana, որը P եւ D տառերի գրաֆիկական վրիպակի հետեւանք է), այն է՝ Դատուան։

Ճանապարհի այն հատուածը, որը ընկած էր Ոստանից մինչեւ Դատուան, կողմնակի ճեւով վկայուած է Զ. դարի բիւզանդացի ժամանակագիր Մենանդրոս Պրոտեկտորի կողմից, որի տեղեկութիւնը վերաբերում է պարսից Խոսրով Ա. արքայի (գահակալել է 531-579ին) դէպի Հայաստան կատարած արշաւանքի

երթուղուն: Համաձայն այդ տեղեկութեան, Խոսրովը դիտմամբ բիւզանդական կայսեր դեսպանին պահում է Դարայում, իսկ ինքը ճանապարհ է ընկնում եւ, անցնելով այսպէս կոչուած Առեստոն եւ Մարեպտիկոն գաւառներով, հասնում է Պարսկահայք: Պատմաբան Նիկողայոս Ադոնցը այս կապակցութեամբ նշում է. «Խոսրովը, պէտք է ենթադրել, Դարայից գնացել է Ռշտունիք, շրջանցել է լիճը եւ մտել Մարդպետական, այնտեղից թեքուել է ձախ՝ Բագրեւանդ, եւ իջել Տարօն: Այս դէպքում Առեստոնն եւ Մարեպտիկոնը կարելի է համարել Վասպուրականի յայտնի գաւառները՝ Ռշտունիքը եւ Մարդպետականը»[32]: Մենանդրոսի յիշատակած Ռշտունիքը գտնուել է հենց Ոստանի եւ Դատուանի միջեւ:

Դատուանից մինչեւ Տիգրանակերտ ընկած ճանապարհահատուածում Պեւտինգերեան Քարտէզում նշուած են Gylzanas, Cymiha եւ Zanserio կայանները: Gylzanasը ե՛ւ անուամբ, ե՛ւ դիրքով համապատասխանում է Գզեղխին՝ Աղձնիք (Հին Հեղինակների մօտ՝ Արգաննէն) նահանգի համանուն գաւառի կենտրոնին[33]: Cymihaն ենթադրաբար կարելի է նոյնացնել Քղիմարի հետ: Տիգրանակերտին նախորդող կայանը կրում է Zanserion (Ra Zancerion) անուանումը: Այն ոչ այլ ինչ է, եթէ ոչ Սանասնոյ Ջուր գետը[34]: Վերջինիս անունը վերծանւում է որպէս Zanse rio, Zance rion, այն է՝ «Սանասնոյ գետ»: Կարելի է ենթադրել, որ Սանասնոյ Ջուր գետի մօտ, որը թափւում է Տիգրիսի վտակներից Նիմֆիի մէջ, եղել է գետանց, որից 30 հռոմ. մղոն (45 կմ.) հեռաւորութեան վրայ ընկած էր Տիգրանակերտը:

Պեւտինգերեան Քարտէզի կազմման ժամանակ Տիգրանակերտը հանդիսանում էր Աղձնիքի բդեշխութեան կենտրոնը[35]: Նրա մօտ եղած երկու աշտարակաձեւ նշանի առկայութիւնը ցոյց է տալիս, որ այն նաեւ միտրոպոլական կենտրոն էր:

Պեւտինգերեան Քարտէզից երեւում է, որ Շամբ-Ջարեհաւան եւ Դատուան-Սանասնոյ Ջուր ճանապարհահատուածները ենթարկուել են չափման: Ի տարբերութիւն դրանց՝ Ջարեհաւան-Ոստան-Դատուան հատուածը չունէր ճիշտ չափագուցիչներ: Այսպէս՝ Ջորադիրից մինչեւ Ոստան ընկած տարածութիւնը (32 հռոմ. մղոն = 48 կմ.) չի համապատասխանում իրերի իրական դրութեանը: Այն կազմում է ոչ պակաս քան 90 կմ.: Բացի այդ՝ չի պահպանուել այն ժամանակուայ քարաւանի օրուայ ընթացքում տարածութեան անցման ընդունուած նորման՝ մօտ 40 կմ. (25 հռոմ. մղոն):

Արտաշատ-Տիգրանակերտ երթուղու պարզումը թոյլ է տալիս նոր լոյսի տակ նայել Վասպուրական նահանգի պատմութեանը՝ նկատի առնելով միջագգային առեւտրում նրա ներգրաւուած լինելը:

ԱՐՏԱՇԱՏ-ՍԱՏԱՂ ԵՐԹՈՒՂԻՆ

Իր առաջին հատուածում այս ճանապարհը Արտաշատից տանում էր դէպի Բագաւան (Bagauna), որի մօտ քարտէզում առկայ է երկու աշտարակաձեւ նշան: Մանանդեանի կատարած քննութեամբ պարզուել է, որ ճանապարհն անցնում էր Paracataով (Փառախոտ), Coloceiaով (Ra Zotozeta, Ծոլակերտ) եւ Harizaով (Արուճ)[30]: Արուճին յաջորդում էր Colchion կայանը, իսկ նրանից յետոյ գալիս էր Chadasը: Վերջինիս մօտ եղած երկու աշտարակաձեւ նշանը խօսում է Մարկուարտի այն տեսակէտի օգտին թէ Chadas կայանը կապուած է Դ. դարի Խադ եպիսկոպոսի անուան հետ, որին, ըստ Փաւստոս Բուզանդի եւ Խորենացու տեղեկութիւնների, Ներսէս Ա. Մեծ կաթողիկոսը (գահակալել է 353-373ին) նշանակել էր իր տեղապահը: Ըստ Խորենացու՝ Ներսէս Մեծը Դ. դարի կէսերին «շինէ եւ յանապատ եւ յանմարդ տեղիս եղբայրանոցս եւ մենաստանս եւ յատկանձնակաց խրճիթս»[31]: Բոլոր հիմքերը կան պնդելու, որ այդ շինութիւններից մէկը կառուցուել է Խադ եպիսկոպոսի կողմից, որից էլ ստացել է իր անունը:

Chadasից յետոյ գալիս է Aramanas կայանը, որը Մանանդեանը նոյնացնում է Արամանա բնակավայրի հետ եւ տեղորոշում Բագրեւանդ գաւառում[32]: Նրան յաջորդում է Andaga (Ra Andagas) կայանը, որ նոյնանում է Անտակ բնակավայրի հետ: Այն Արամանիից գտնուում է 12 հռոմ. մղոն (18 կմ.) հեռաւորութեան վրայ[33]:

Andagaից մինչեւ Satala (Սատաղ) հաշւուում է 11 կայան: Նրանց մեծ մասը, այս թւում՝ Baranteaն, Adconfluentisը, Colcidaraն (Ra Colcidara), Sinaraն, Lucas Basaroն, նոյնացուել եւ տեղորոշուել են Մանանդեանի, Միլլէրի եւ Պեւտինգերեան Քարտէզի այլ ուսումնասիրողների կողմից[34]:

Ինչպէս երեւում է Պեւտինգերեան Քարտէզից, Սատաղից ճանապարհները տանում էին Փոքր Ասիա, Կապադովկիա ու Սեւ ծովի ափա-մերձ շրջաններ:

Սատաղը շատ վաղ ժամանակաշրջանից հանդիսանում էր հռոմէական զօրքերի ստրատեգիական կարեւոր սահմանապահ կէտերից մէկը[41]: Պեւտինգերեան Քարտէզում նրա անուան մօտ երկու աշտարակաձեւ նշանի առկայութիւնը վկայում է, որ այն եղել է նաեւ Փոքր Ասիայի կարեւոր մետրոպոլական կենտրոններից մէկը: Ծայտնի է, որ նրա Եւթիմոս եպիսկոպոսը մասնակցել է 325ի Նիկիայի եկեղեցական ժողովին: Հայաստանի 387ի բաժանումից յետոյ Սատաղը մաս կազմեց Կապադովկիային[42]:

կապուած համաշխարհային առեւտրի Արտաշատ-Կոստանդնուպոլիս երթուղու նոր փոփոխութիւններից՝ Սատաղի նշանակութիւնը որպէս կարեւոր կայանի, հետզհետէ նուազեց:

ԱՐՏԱՇԱՏ-ՍԵԲԱՍՏՈՊՈԼԻՍ ԵՐԹՈՒՂԻՆ

Այս երթուղու վրայ նշուած առաջին կայանը Strangiraն է (Ra Stranguria): Կայանի անունը դիպուկ վերծանել է կովկասագէտ Նիկողայոս Մառը՝ այն կարդալով որպէս «օձաքաղաք» (լատ. Strangulo = խեղդել, բկխեղդ անել): Մառի ենթադրութեամբ՝ Աշտարակ քաղաքը միջնադարեան շրջանում եղել է վիշապի պաշտամունքի կենտրոն[43]:

Ռաւեննացին Strangiraից յետոյ նշում է Janio կայանը, որը Պեւտինգերեան Քարտէզում գոյութիւն չունի: Մանանդեանը այն նոյնացնում է Tschanci կայանի հետ եւ տեղորոշում Աշտարակից հիւսիս՝ Ապարանի շրջանում գտնուող մի բնակավայրի տեղում[44]:

Janioին յաջորդող Condeso կայանը քարտէզի ուսումնասիրողներից Ռիչարդ Կիպերտը նոյնացրել է ներկայիս Քոնդակսազի հետ[45]: Condesoից յետոյ նշուած Gavala, Misium եւ Savatinum կայանները ոչ մի նոյնացման չեն ենթարկւում: Այս կայաններից յետոյ եկող Gaulita կայանը ե՛ւ անուամբ, ե՛ւ դիրքով համապատասխանում է Գանլիջա բնակավայրին:

Tendara կայանը բացակայում է Պեւտինգերեան Քարտէզում, սակայն նշուած է Ռաւեննացու մօտ: Նրանից յետոյ եկող երեք կայան-ները նոյնացուել եւ տեղորոշուել են պատմաբան Վ. Տոմաշէկի կողմից[46]: Pagasը համապատասխանում է Պոգային, որը ընկած է Տապորաւանի (Փարվանա) լճի հարաւային ափին, Apulumը (Ra Apolum)՝ Աբուլա բնակավայրին, իսկ Caspia (Ra Caspi) Հասպիին, որը գտնւում է Ախալքալաքից հարաւ[47]:

Ad Mercurum կայանի անուանումը վերծանուել է Մանանդեանի կողմից: Հիմնուելով այս կայանի աշխարհագրական դիրքի վրայ՝ նա այն սրբագրեց որպէս Ad Metcurium, որը նշանակում է «Կուրի մօտ»[48]: Սա իր հերթին ենթադրել է տալիս Կուր գետի վրայ գետանցի առկայութիւն:

Ռաւեննացու մօտ նշուած են նաեւ Ermu եւ Ad fontem felicem (բարեբախտ աղբիւրի մօտ) կայանները: Մանանդեանը Ermuն վերծանում է որպէս Emru եւ համադրում Իմերեթիա անուանը[49]: Երկրորդ կայանը տեղորոշւում է Ռիոն գետի մօտ:

Պեւտինգերեան Քարտէզում Սեբաստոպոլից յետոյ նշուած են մի շարք կայաններ: Նրանց թւում է նաեւ Apsaro կայանը, որը նոյնա-

նում է Աբխազիայում գտնուող Ապսար (ներկայիս՝ Հոնիո, գիւղ Քորուլէթի մօտ) քաղաքին: Նրա անուան կողքին առկայ է երկու աչտարակաձեւ նշան:

ԱՐՏԱՇԱՏ-ՄՑԽԷԹ ԵՐԹՈՒՂԻՆ

Այս երթուղին մինչեւ վերջին ժամանակներս ուսումնասիրուած էր ոչ բաւարար չափով: Պեւտինգերեան Քարտէզում, համապատասխան ուրուագծից ելնելով, այն յայտնի էր որպէս շրջանաձեւ ճանապարհ:

Արտաշատ-Մցխէթ երթուղու ուսումնասիրութեան հիմքը դրել է Մարկուարտը[50], որին յաջողուել է տեղորոշել երկու աչտարակաձեւ նշան ունեցող անանուն կայանը ու վերծանել նրա անուանումը (Ռաւեննացու մօտ՝ Armastica): Պարզուել է, որ այն Արմազին է (Մցխէթ):

Մցխէթի պարզումը հնարաւորութիւն ընձեռեց որոշել ճանապարհի երթուղին: Սկիզբ առնելով Արտաշատից՝ այն անցնում էր Հրազդան գետի կիրճով, իսկ այնուհետեւ այն տարածքներով, որոնք ընկած էին Սեւանայ Լճի եւ Կուր գետի միջեւ: Այսինքն՝ Արտաշատից Մցխէթ տանող ճանապարհը անցնում էր Հայաստանի «հիւսիսային դարպասներով»:

Պեւտինգերեան Քարտէզում Արտաշատից յետոյ նշուած է Geluina կայանը: Ռաւեննացու մօտ նշուած են երկու կայաններ՝ Gravete եւ Tegamia:

Gravete-ն ե՛ւ անուամբ, ե՛ւ դիրքով համապատասխանում է Ջրվէժ (Ջրավէճ) գիւղին, որն ընկած է Երեւանի արեւելեան ծայրամասում: Ջրվէժը աղբիւրներում յիշատակւում է Ե. դարից: Նրա շրջակայքում հնագէտների կողմից յայտնաբերուել է հին գերեզմանոց (Դ.-Ե. դարեր)՝ եկեղեցու յուշակոթողի եւ դամբարանի հետ միասին[51]:

Gravete-ից յետոյ եկող Tegamia-ն նոյնանում է Geluina-ի հետ: Մարկուարտը, նչելով այս կայանների անունների նմանութիւնը, առաջարկեց այն կարդալ միասին՝ Gelam-(i)a ձեւով, որից ելնելով էլ այս անունը նոյնացուեց աւանդական Գեղամ նահապետի անուանը, որի անունն են կրում Գեղամայ Լեռները եւ Սեւանայ Լիճը: Աւանդութիւնը Գեղամին ընդունում է որպէս Արա Գեղեցիկ եւ աւանդում, որ Շամիրամը նրա դին փնտռում էր այս կողմերում: Համաձայն այդ աւանդութեան՝ այն վայրը, որտեղ իբր գտնուելիս է եղել Արա Գեղեցիկի դին, Արամոնք (այժմեան արտասանութեամբ՝ Արամուս) բնակավայրն է, որը գտնուում է Ջրվէժից մի քանի կիլոմետր հիւսիս[52]: Այս բնակավայրն էլ հենց պէտք է նոյնացնել Gelam-(i)a-ի հետ:

Geluinaից յետոյ գալիս է Sanora կայանը, որի անուան մօտ առկայ է երկու աչտարակաձեւ նշան: Այս կայանը Մարկուարտը առաջարկեց տեղորոշել Դիլիջանի շրջանում, որը սակայն Արամուսից գտնւում է բաւական հեռաւորութեան վրայ[53]:

Մեր հաշւումներով Sanoraն համապատասխանում է Բջնի գիւղին, որը Արամուսից (Gelam-(i)a) ընկած է 24 հռոմ. մղոն (36 կմ.) հեռաւորութեան վրայ: Sanora անունը ծագում է լատ. sano, sanareից, որը նշանակում է «բուժել», «ապաքինել»: Ամենայն հաւանականութեամբ Բջնի բնակավայրի անունը նոյնպէս ծագում է հայոց «բուժել» բառի արմատից:

Բջնին առաջին անգամ յիշատակւում է Ե. դարի հայ պատմիչ Ղազար Փարպեցու Հայոց Պատմութիւնում: Պատմելով Աւարայրի Ճակատամարտի (451) մասնակիցներից մէկի՝ Աթիկ վարդապետի մասին, պատմիչը նշում է, որ նա էր «յերեւելի գեղջէն, որ կոչի Բճնի»[54]: Հին Բջնիի աւերակները գտնւում են Հրազդան գետի ձախ ափին: Պեւտինգերեան Քարտէզից միաժամանակ երեւում է, որ Դ. դարում Բջնիում եղել է եկեղեցական կառոյց, որն անկասկած առաջին քրիստոնէական հաստատութիւններից մէկն էր Հայաստանում: Այնտեղ էին գտնւում նաեւ առողջարանային վայրեր, որտեղ կարող էին օգտագործուել տեղի բուժիչ հանքային աղբիւրները: Դեռեւս կարիք է զգացւում պարզել, թէ ինչ նկատի ունէր Փարպեցին, երբ Բջնին անուանում էր «յերեւելի»:

Ռաւեննացու մօտ Sanoraից յետոյ նշուած են Tilida եւ Liponissa կայանները: Tilidaն ամենայն հաւանականութեամբ համապատասխանում է Թեղուտ գիւղին, որը գտնւում է Երեւան-Թբիլիսի մայրուղու վրայ՝ Աղստեւ գետի ձախ ափին: Այն այժմ վարչական առումով ենթարկւում է Դիլիջան քաղաքին: Liponissa անուան մէջ ընկած է pons, pontis արմատը, որը նշանակում է «կամուրջ, տախտակում» եւլն.: Հնարաւոր է, որ Liponissaն եղել է Աղստեւ գետի կամ նրա վտակներից մէկի գետանցի անունը:

Պեւտինգերեան Քարտէզում այս կայաններից յետոյ նշուած է Lalla կայանը: Մարկուարտը այն նոյնացրել է Աղստեւ գետի հովտում գտնուող Գուգարքի Լալ բերդին: Այս կայանը Պտղոմէոսի Ասիայի Երրորդ Քարտէզում նշուած է որպէս Lala[55]:

Քարտէզի վրայ այնուհետեւ նշուած են երկու աչտարակաձեւ նշանով Teleda (Ra Telada) կայանը (որը չի ենթարկւում նոյնացման) եւ անանուն կայան Մցխէթը: Մցխէթից յետոյ նշուած են մի քանի կայանները, որոնք ո՛չ անուն ունեն եւ ո՛չ էլ նշումներ՝ իրենց միջեւ եղած հեռաւորութիւնների վերաբերեալ: Ինչ վերաբերում է Ռաւեն-

նացուն, ապա նրա մօտ նչուած են Sazala, Camia, Gareas, Belalus, Aquilleum, Castillum, Tarsambaram, Axara portum, Cipropolim կայաններըը: Նրանք նոյնպէս չունեն հետաւորութիւնների վերաբերեալ նչումներ:

Sazalaն ամենայն հաւանականութեամբ Զելէթն է: Այն Աշխարհացոյցում նչուած է Զելէթ անուամբ, որպէս Վիրքի (Վրաստան) շրջաններից մէկը[56]: Camiaն չի ենթարկւում նոյնացման: Gareasը ենթադրաբար կարելի է նոյնացնել Գարջենքի (Ծուրտաւ) հետ, որը հին Գուգարք նահանգի քաղաքներից էր: Belalusը նոյնպէս չի ենթարկւում նոյնացման:

Aquilleum կայանի անունը (լատ. aquila = արծիւ) յիշեցնում է Արծուեբոյն բնակավայրը, որը եղել է Գուգարքի Տաշիր գաւառում: Այն աղբիւրներում յիշատակւում է ԺԱ. դ. սկզբից՝ կապուած այն հանգամանքի հետ, որ տրուել է Հաղպատի վանքին[57]:

Castillum (ամրոց) կայանը բերուած է առանց իրական անուան: Մեր կարծիքով այս կայանը պէտք է համապատասխանի Մոր (Մոպա) ամրոցին, որի աւերակները գտնւում են ներկայիս վրաց-հայկական սահմանի վրայ՝ Սադախլօ գիւղի մօտ: Մորը յիշատակւում է Խորենացու կողմից պատմական Հայաստանի հիւսիսային գաւառների թւում[58]:

Tarsambaramը նոյնացման չի ենթարկւում:

Axara portum կայանը թ՛ւ անուամբ, թ՛ւ դիրքով համապատասխանում է Ակոռի գիւղին, որը գտնւում է Ալավերդի քաղաքից 2 կմ. հարաւ-արեւմուտք: Մագելով հայկական «ախոռ» եւ լատ. portum (ապաստարան, տուն) բառերից՝ այն ցոյց է տալիս, որ այս գիւղում գոյութիւն է ունեցել իջեւանատուն-հիւրանոց:

Ինչ վերաբերում է Cipropolimին, ապա այն ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ «սահմանային նշան» (լատ. cippus = սահմանային սիւն եւ polum = մանրակրկիտ մշակուած, փայլեցուած): Հասկանալի է, որ այստեղ խօսքը գնում է այն սահմանային սիւներից մէկի մասին, որոնք Հայոց Արտաշէս Ա. արքայի հրամանով հաստատուել են Հայաստանի գիւղերի եւ ագարակների միջեւ:

Ինչպէս կարելի է եզրակացնել քարտէզի՝ վերը մեր կողմից կատարուած հետազօտութիւնից, ճանապարհը, որը մինչեւ Մցխէթ հասնում էր Աղստեւի հովտով, Մցխէթից վերադառնում էր Լոռիով: Այնուհետեւ, չարժուելով հարաւային ուղղութեամբ՝ ճանապարհը դուրս էր գալիս Lazo (Ra Jazo) կայան, որի անուան մօտ առկայ է երկու աչտարակաձեւ նչան: Lazoն Օձունն է (հայ. օձ եւ լատ. jaculus, jacio, որոնք նոյնպէս նշանակում են «օձ»): Օձունը հանդիսացել է

Գուգարք նահանգի Տաշիր գաւառի կենտրոնը[59]: Կարելի է ենթադրել, որ Օձունում կառուցուած է եղել Հայաստանի առաջին քրիստոնէական եկեղեցական հաստատութիւններից մէկը:

Lazoից յետոյ նշուած է Satara (Ra Cacara) կայանը: Satara կայանը Երեմեանի եւ այլ ուսումնասիրողների կողմից նոյնացուել է Քասախի (Ապարանի հին անուանումը) հետ[60]: Այն Պտղոմէոսի Ասիայի Երրորդ Քարտէզում նշուած է Casala անուամբ: Sataraից յետոյ նշուած է Bustica կայանը: Լատիներէնում busti, bustumը, ունի նաեւ «գերեզման, գերեզմանաբլուր» իմաստը: Busticaն ոչ այլ ինչ է, եթէ ոչ Դ. դարից գոյութիւն ունեցող, այժմեան Աշտարակից 7 կմ. հեռաւորութեան վրայ Զորափ (պատմական Աղց, Աղցք) գիւղում գտնուող, Արշակունեաց տոհմի դամբարան-Հանգստարանը: Busticaն Sataraից նշուած է 18 հռոմ. մղոն (27 կմ.) հեռաւորութեան վրայ:

Busticaից հաւանաբար Աշտարակով եւ Եղուարդով ճանապարհը տանում էր դէպի Sanora, իսկ նրանց միջեւ եղած հեռաւորութիւնը հաւասար էր 24 հռոմ. մղոնի (36 կմ.):

Ինչպէս Պեւտինգերեան Քարտէզում, այնպէս էլ Ռաւեննացու մօտ Sanoraից յետոյ նշուած են Geluina եւ Artaxata կայանները:

Արտաշատ-Մցխէթ երթուղու, ինչպէս եւ մի քանի այլ ճանապարհների վրայ գոյութիւն ունեն ընդհատումներ: Այսպէս՝ կայանների թուարկումը ընդհատւում է երթուղու այն հատուածում, որը անցնում էր Կուր գետի հովտով: Կայանների թուարկումը ընդհատւում է նաեւ Օձունից Ապարան, ինչպէս նաեւ Զորափից մինչեւ Բջնի ընկած հատուածներում:

Արտաշատ-Մցխէթ երթուղու յայտնաբերումը էականօրէն լրացնում է Առաջաւոր Ասիայի ճանապարհների սխեման եւ կարող է լրացուցիչ լոյս սփռել Հին եւ Միջնադարեան Հայաստանի եւ Վրաստանի միջեւ եղած առեւտրա-տնտեսական, քաղաքական եւ մշակութային յարաբերութիւնների պատմութեանը:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ-ՄԵԼԻՏԵՆԷ ԵՐԹՈՒՂԻՆ

Տիգրանակերտից Մելիտենէ ընթացող երթուղու սկզբնական կայանները՝ Colchanaն եւ Hararraն նոյնացման չեն ենթարկւում: Նրանից յետոյ եկող Ad Tygrem (թարգմանաբար՝ «Տիգրիսի մօտ») կայանը հանդիսանում է Ամիդը: Ad Tygremը մատնանշում է Տիգրիս գետի վրայ գոյութիւն ունեցած գետանցի մասին:

Տիգրանակերտից մինչեւ Ad Tygrem ընկած կայանների միջեւ եղած հեռաւորութիւններից (15+14+13=42 հռոմ. մղոն) դժուար չէ

որոշել, որ Տիգրանակերտից մինչեւ Ամիդ եղել է 60 կմ. հեռաւորութիւն:

Ad Tygrem-Ամիդից 27 հռոմ. մղոն հեռաւորութեան վրայ ընկած է Անանուն կայանը: Ամենայն հաւանականութեամբ այն Անգղն է՝ Անգեղ Տուն գաւառը: Խորենացին աւանդում է, որ Անգեղ տունը սկիզբ է առնում «ի գաւակէ Պասքամայ, ի Հայկայ թոռնէ»[81]: Այն յայտնի է նաեւ խեթական աղբիւրներից: Ուսումնասիրողները ենթադրում են, որ Անգղը գտնուելիս է եղել հին աքեմենեան ճանապարհի վրայ՝ Ամիդից Մելիտենէ (Մալաթիա) ընկած ճանապարհահատուածում: Պեւտինգերեան Քարտէզից երեւում է, որ Անգղը ընկած է եղել Արեւմտեան Տիգրիսի ալ ափին, Ամիդից 27 հռոմ. մղոն (40 կմ.) հեռաւորութեան վրայ: Անգղը հանդիսանում էր Տորք Անգեղ աստուածութեան երկրպագութեան գլխաւոր կենտրոնը[82]: Աստուածաշնչի հայերէն թարգմանութեան մէջ Միջագետքի (չումէրական) ստորգետնեայ աշխարհի աստուած Ներգալի անուան փոխարէն թարգմանուած է Անգեղ[83]:

Անանուն կայանի անուան մօտ առկայ է երկու աչտարակաձեւ նշան, որը մատնանշում է Անգղում կրօնական կենտրոնի գոյութեան մասին: Ագաթանգեղոսի վկայութեամբ Գրիգոր Լուսաւորչի կողմից Անգեղ Տուն եւս ուղարկուած է եղել եպիսկոպոս, որի անունը, սակայն մեզ չի հասել[84]:

Անգղում են թաղուած եղել Մոփքի, ինչպէս նաեւ Հայոց Արշակու-նի արքաները: Նրանց դամբարանները գոյութիւն ունեն նաեւ այժմ:

Ագոնցը պարզել է Ամիդից Մելիտենէ ընկած երթուղու մի քանի կայանները: Նա Arsanis կայանը նոյնացրել է Արսանիյա գետի հետ, Ad aresը տեղորոշել է Եփրատի ձախ ափին, իսկ Mazara կայանը նոյնացրել եւ տեղորոշել է Մազարա գիւղի տեղում, որն ընկած է Եփրատից 40 կմ. հեռաւորութեան վրայ[85]:

Տիգրանակերտ քաղաքի տեղը որոշուել է գերմանացի գիտնական-ների Վ. Բելկի եւ Հ. Լեմանի ջանքերով: Պեւտինգերեան Քարտէզի տուեալները հաստատում են նրանց տեսակէտը: Տիգրանակերտը (Մարտիրուպոլիս) ընկած է եղել Նէրկերտ (Ֆարկինոս) գետից 45 կմ. հարաւ եւ Ամիդից 60 կմ. հեռաւորութեան վրայ դէպի հիւսիս: Այսպէս-սով՝ քաղաքը ընկած է եղել Տիգրիս գետի եւ նրա ձախ վտակ Նէրկեր-ի միջեւ:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ-ՄԾԲԻՆ ԵՐԹՈՒՂԻՆ

Տիգրանակերտից Մծբին ընկած երթուղին կախուած չէր Տիգրանակերտ-Արտաշատ եւ Տիգրանակերտ-Մելիտենէ երթուղիներից:

Տիգրանակերտից յետոյ ընկած սկզբնական Thalbasaris, Sitae եւ Adopte կայանները նոյնացման չեն ենթարկւում: Նրանցից յետոյ ճանապարհը տանում էր դէպի Sardebar կայան, որը յիշեցնում է հին Հայաստանի հարաւային գաւառներից մէկի՝ Մաւդէքի անունը (ասոր. Զաւդէյ, հին հեղինակների Zabdiccenaն): Կարելի է ենթադրել, որ Մաւդէքը գտնուելիս է եղել Հայոց Միջագետքի ծայր արեւելքում, իսկ Sardebarը՝ Տիգրիս գետից ոչ հեռու՝ նրա ձախ ափի մօտ: Ինչպէս երեւում է Պեւտինգերեան Քարտէզից, Sardebarից արեւմուտք՝ դէպի Ad Tygrem կայան, ընկած էր մի ճանապարհ, որով Մաւդէքը կապւում էր Մոփքի հետ:

Sardebarից յետոյ ընկած Arcaupio, Santarbi, Ague Brigide եւ Aradmo կայանները նոյնացման չեն ենթարկւում: Այս կայաններից յետոյ գալիս է Singaraն (Սինգար), իսկ այնուհետեւ՝ Մծբինը:

Պեւտինգերեան Քարտէզը հանդիսանում է անփոխարինելի աղբիւր Հռոմէական (Բիւզանդական) կայսրութեան մէջ մտնող, ինչպէս նաեւ նրան յարակից երկրների համար: Քարտէզի ընձեռած տուեալները որոշակիօրէն մեծացնում են մեր գիտելիքները եւ պատկերացումների շրջանակը այս երկրների վերաբերեալ: Նրանք մասնաւորապէս օգնում են լուսաբանել հին Հայաստանի պատմութեանը վերաբերող շատ ու շատ հարցեր, ճշգրտել նրանով անցնող միջագգային տարանցիկ ճանապարհների երթուղիները, որոշել նրա մասնակցութեան աստիճանը Ասիայի եւ Եւրոպայի, Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ եղած առեւտրա-տնտեսական եւ մշակութային փոխանակումների գործընթացում:

ՏԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Կաստորիուսի քարտէզի (Պեւտինգերեան Քարտէզ) միակ օրինակը պահւում է Վիեննայի Պետական Գրադարանում՝ «Հոֆբիբլիոտեկ»ում:

[2] K. Miller, *Itineraria Romana. Römische Reisewege an der Hand der Tabula Peutingeriana* [Հռոմէական Մղոնաչափ. Հռոմէական երթուղիները Ըստ Պեւտինգերեան Քարտէզի], Stuttgart, 1916.

[3] Miller, էջ XLIV; J. Markwart, "Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen" [Հարաւային Հայաստան եւ Տիգրիսի Աղբերակունքը Յոյն եւ Արաբացի Աշխարհագիրներու Համաձայն], *Հանդէս Ամսօրեայ*, Իէ. տարի, թիւ 9 (Սեպտեմբեր 1913), սիւնակ 530:

[4] Media maior (Մեծ Մարաստան) հասկացութիւնն պոյութիւն չունի, քանի որ Մարաստանը եղել է պարսկական պետութեան՝ Մեծ Պարսկաստանի բազկացուցիչ մասը: Պատմագիտական գրականութեան մէջ ընդունուած է Փոքր Մարաստան հասկացութիւնը, որը տրւում է Ատրպատականին:

[5]G. Hudson, *Europe and China*, London, 1930 (reprinted 1961), էջ 108:

[6]Նոյն, էջ 119։

[7]Չեզման գանուում էր Եփրատի գետանցի մօտ, գետի ալ ափին։

[8]Strabon, *Geografiia* [Աշխարհագրութիւն], Լենինգրադ, 1964, XVI, 1, 27։

[9]*Առրական ազդիւրներ, Ա, Քարտմանութիւն բնագրիւ, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Հ. Գ. Միլթոնեանի, Օտար ազդիւրները Հայաստանի եւ հայերի մասին, 8, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1976, էջ 44-45. Լ. Տէր-Պետրոսեան, «Հայերը Միջնադարեան Մծբինում եւ Մեծ Հայքի Հարաւային Նահանգներում», Պատմա-բանասիրական Հանդէս, թիւ 3, 1979, էջ 72. Նիկողայոս Ադոնց, Հայաստանը Յուստինիանոսի Դարաշրջանում. Քաղաքական կացութիւնը Լատ Նախադրական կարգերի, Երեւան, «Հայաստան», 1987, էջ 403, 483. «Մծբին», Հայկական Սովետական Հանրագիտարան (այսուհետեւ՝ ՀՍՀ), հ. 7, էջ 638։*

[10]Strabon, XVI, 1,19։

[11]*Codex Justinianus*, IV, 63,4։

[12]Hudson, էջ 119։

[13]*Տե՛ս՝ Սուրէն Երեմեանի կազմած «Արտաշէսեաններուն Թագաւորութիւնը մ.թ. I դ.» քարտէզը, ՀՍՀ, հ. 2, էջ 40-41ի ներդիր։*

[14]*Էնաեթոլա Ռէզա, Ազիրբայջան եւ Առան (Կովկասեան Ագուանք), Երեւան, «Փանիկ», 1994, էջ 109-110։*

[15]*Քէոփանէս Խոտոմանաղ, Քարտմանութիւն բնագրիւ, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Հրաչ Բարթիկեանի, Օտար ազդիւրները Հայաստանի եւ հայերի մասին, 13, Բիւզանդական ազդիւրներ, Դ, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1983, էջ 146-147։*

[16]*Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրութեամբ Գ. Վ. Աբգարեանի, Երեւան, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն, 1979, էջ 124։*

[17]Iakov Manandian, *O torgovle i gorodakh Armenii v sviazi s mirovoi torgovlei drevnikh vremen* [Հայաստանի Առեւտրի եւ Քաղաքների Մասին Կապուած Հին Ժամանակաշրջանի Համաշխարհային Առեւտրի Հետ], Երեւան, 1954,էջ 165. *Տե՛ս նաեւ անգլ. թրգմ.՝* H. A. Manandian, *The Trade and Cities of Armenia in Relation to Ancient World Trade*, Translated from the Second Revised Edition by Nina G. Garsoian, Lisbon, 1965.

[18]*Սուրէն Երեմեան, Հայաստանը Լատ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII Դարի Հայկական Քարտէզի Վերակազմութեան Ժամանակակից Քարտէզագրական Հիմքի Վրայ), Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, 1963, էջ 43։*

[19]*Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի. նմանահանութիւն. լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երեւան, Հայկական ԽՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1990, էջ 84։*

[20]*Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երեւան, 1998, էջ 458։*

[21]Manandian, էջ 144։

[22]*Հ. Դևոնդ Վ. Ալիշան, Սիսական. Տեղագրութիւն Սիսնոյ Աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 516։*

[23]*Պատմութիւն Սեբէոսի, էջ 125։*

[24]Manandian, էջ 144, 146, 148։
[25]*Tourist's Guide, Turkey*, Ankara, 1963, էջ 42։
[26]*Խորենացի*, էջ 176-177։
[27]*Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ս. Կանայեանցի, Երեւան, Երեւանի Համալսարանի հրատարակչութիւն, 1983, էջ* 436։
[28]*Խորենացի*, էջ 265։
[29]*Նոյն*, էջ 162։
[30]*Նոյն*, էջ 86, 106։
[31]Tommaso Breccia Fratadocchi, *La Chiesa di S. Ejmiacin a Soradir/The Church of St. Ejmiacin at Soradir* [*Զորադիրի Ս. Էջմիածին եկեղեցին*], Studi di Architettura Medioevale Armena/Studies on Medieval Armenian Architecture [*Հայկական Միջնադարեան Ճարտարապետութեան Ուսումնասիրութիւններ*], I, Roma, 1971.
[32]*Ադոնց*, էջ 17-18։
[33]*Տեղանունների բառարան*, հ. I, էջ 855։
[34]*Նոյն*, հ. IV, էջ 494։
[35]*Փաւստոս Բուզանդ, Հայոց Պատմութիւն, թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւն-ները Ստ. Մալխասեանցի, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, էջ* 261. *Ադոնց*, էջ 403,483. «*Տիգրանակերտ*», *տե՛ս՝ ՀՍՀ*, հ. 11, էջ 699-700։
[36]Manandian, էջ 130։
[37]*Խորենացի*, էջ 280։
[38]Manandian, էջ 138։
[39]*Տեղանունների բառարան*, հ. I, էջ 257։
[40]Manandian, էջ 139-143։
[41]*Ադոնց*, էջ 114-115 *եւ նշ.*։
[42]*Ադոնց*, էջ 89, 105. *տե՛ս նաեւ՝* «*Սատադ*», *ՀՍՀ*, հ. 10, էջ 207։
[43]N. Marr, 'Legendi ob osnovanii Kuara v Armenii i Kieva na Rusi' [*Հայաստանում Կուարի եւ Կիեւեան Ռուսիայի Հիմնադրման Մասին Առասպելներ*], *Izvestiia GAIMK* [«*Նիւթական Մշակոյթի Պատմութեան Պետական Ակադեմիա*»-*յի* «*Տեղեկագիր*»], հ. III, *Լենինգրադ*, 1924, էջ 278։
[44]Manandian, էջ 154։
[45]Richard Kiepert, *Atlas von Kleinasien in 21 blättern* [*Փոքր Ասիայի Աւլասը 21 Թերթով*], Berlin, 1902-1906.
[46]W. Tomaschek, RE. T. III, 'Caspiae.'
[47]Manandian, էջ 156։
[48]*Նոյն*, էջ 156, 158։
[49]*Նոյն*, էջ 158։
[50]Dr. Josef Markwart, *Skizzen zur historischen Topographie und Geschichte von Kaukasien. Das Itinerar von Artaxata nach Armastica auf der römischen Weltkarte* [*Դրուագներ Կովկասի Տեղագրութեան եւ Պատմութեան. Մղոնաչափ Արտաշատից Մինչեւ Արմաստիկա*], Wien, 1928. *Նոյն աշխատութիւնն նախապէս իբրեւ յօդուած տպուած էր Հանդէս Ամսօրեայ*, *ԽԱ. տարի, թիւ* 11-12 (*Նոյեմբեր-Դեկտեմբեր* 1927), *սխնակ* 825-866։
[51]«*Զրվէժ*», *ՀՍՀ*, հ. 9, էջ 546։

[52] «Արամուս», ՀՍՀ, հ. 1, էջ 688։
[53] Manandian, էջ 168։
[54] Ղազարյաց Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. Բուղջ Ամ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ստ. Մալխասեանցի, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1982, էջ 290։
[55] «Ասխալի Երրորդ Քարտէզը Ըստ Պտղոմէոսի (II Դար, Ամէնան Քարտէզագրական Հիմքի Վրայ)», ՀՍՀ, հ. 9, էջ 416-417ի ներդիր։
[56] Անանիա Շիրակացի, Մատենագրութիւն, Քարզմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Ա. Գ. Աբրահամեանի եւ Գ. Բ. Պետրոսեանի, Երեւան, «Սովետական Գրող», 1979, էջ 290։
[57] Տեզանուններէն բառարան, հ. I, էջ 454։
[58] Խորենացի, էջ 113։
[59] «Օձուն», ՀՍՀ, հ. 12, էջ 540։
[60] «Քասախ», ՀՍՀ, հ. 12, էջ 130։
[61] Խորենացի, էջ 114։
[62] «Անգեղ-Տուն», ՀՍՀ, հ. 1, էջ 379։
[63] «Տորք Անգեղ», ՀՍՀ, հ. 12, էջ 64։
[64] Ադոնց, էջ 364-365։
[65] Նոյն, էջ 44։

TABULA PEUTINGERIANA: THE SEGMENTS OF WESTERN ASIA (Summary)

HMAYAK MARTIROSIAN

The article discusses the location of various posts and other place names on the Ecbatana-Antioch, Artashat-Tigranakert, Artashat-Sebastopolis, Artashat-Mtskheta, Tigranakert-Melitene and Tigranakert-Nisibis routes depicted on *Tabula Peutingeriana*, the famous Roman-era road map from the fourth century AD. He makes a number of suggestions regarding the possible positioning of certain towns and other geographical landmarks mentioned on this map by comparing the details it provides with information from other primary sources in Armenian and other languages. The author also attempts to correct some of what he considers to have been erroneous identifications of certain place names on the map in the works of previous researchers on this subject.

ԲՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՑԻՆ ԻՍԿԱԳԻՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԱՌՆՉՈՒԹԵԱՄԲ

ՊԱՐՈՑՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ

Պատմահայր Մովսէս Խորենացու Պատմութիւն Հայոց (սրբագրեալ վերատառութեամբ՝ Պատմութիւն Հայոց Մեծաց) երկը բովանդակող ամբողջական հնագոյն ձեռագիրը, որ ներկայումս պահւում է Երեւանի Մաշտոցեան Մատենադարանում իբրեւ ձեռ. Հմր. 2865, ընդօրինակուած է ԺԴ. դարում[1] եւ պատկանում է Խ (խառնուրդ) ձեռագրախմբին, այսինքն՝ հին մասը Ա խմբին է պատկանում, նորը՝ Տ խմբին[2]: Այդ նշանակում է, թէ հեղինակի ժամանակներից մինչեւ մեզ հասած վերոյիշեալ ձեռագիրը՝ Պատմութիւն Հայոց Մեծացը բազմակի ընդօրինակումներից է անցել, տասնեակ գրիչներ ու սրբագրող-խմբագիրներ ունեցել եւ նոյնքան անգամ ենթակայ եղել գիտակցուած կամ ակամայ միջամտութիւնների ու փոփոխութիւնների: Թէկուզ միայն գրիչների վրիպելու կարելիութիւնը բաւական է, որ բնագրագէտները այսօր եւս չարունակեն երկն ընդմիջարկութիւններից ազատելու, սխալագրութիւնները բացայայտելու եւ հեղինակային իսկագիրը վերականգնելու մտահոգութիւն ունենալ:

Հիմքեր կան պնդելու, թէ Խորենացու երկը միւս պատմագրքերից աւելի ենթակայ պիտի լինէր ընդօրինակում-«թարմացումների», որովհետեւ տեւականօրէն ազգային պատմութեան ձեռնարկ է եղել՝ հետեւաբար իր վրայ կրել նորանոր սերունդների ըմբռնումների ու ճանաչած նորմերի կնիքը: Օրինակ, Բագրատ Հայ կամ Աթենացի անունով վաղ միջնադարում ապրած մի անձնաւորութիւն՝ առ Սուրէն անունով իր հայաստանցի բարեկամը յղած թղթում, նրան կոչ է անում արդիներին պատմել ազգային պատմութեան այն դրուագները, որ նկարագրուած ենք գտնում Խորենացու մօտ[3]: Այդ նշանակում է թէ Պատմահօր երկը յիրաւի ձեռնարկային կիրառութիւն էր ստացել, ճանաչելի դառնալով Հայաստանից դուրս ապրող հայութեան միջավայրում եւս:

Խորենացիագիտութեանը այսօր ծանօթ է Պատմութիւն Հայոց Մեծացի շուրջ 50 ձեռագիր ընդօրինակութիւն ու պատառիկ-պահպանակ, երկի շուրջ 15 հրատարակութիւն եւ վերահրատարակութիւն: կատարուել եւ կատարւում են ոչ քիչ թուով թարգմանութիւններ[4]: Այնուամենայնիւ այդ երկը այսօր էլ կարօտ է մանր ու մեծ բնագրագիտական բազում ճշգրտումների, սրբագրութիւնների ու վերականգ-

նումների։ Արդէն ասացինք, որ հնագոյն ամբողջական ձեռագիրը ԺԴ. դարից վաղ չէ։

Ինչ վերաբերում է եղած հրատարակութիւններին, ապա դրանց մէջ առաւել գիտականն ու նախընտրելին Ստեփանոս Մալխասեանցի խմբագրութեամբ, Մանուկ Աբեղեանի եւ Սէթ Յարութիւնեանի աշխատութեամբ 1913ին Տփղիսում լոյս տեսածն է։ Կազմողներն ու խմբագիրը ոչ-պատահականօրէն չեն կամեցել իրենց հրատարակութիւնը «քննական» կամ նոյնիսկ «գիտական» որակել, որովհետեւ պարզորոշ տեսել եւ ազնուօրէն արձանագրել են, թէ իրենց հաւաքած ձեռագրական «բոլոր ընթերցուածները մի անգամից աչքի առաջ կարելի է ունենալ՝ աւելի ճիշտ կերպով կարելի է բնագիրը վերակազմել։ Եւ այժմ իսկ տեսնում ենք, որ շատ ընթերցուածներ պէտք էր բնագրի մէջ դնել, որ մենք ծանօթութիւնների մէջ ենք առել, կամ ընդհակառակն»[5]։

«Աւելի ճիշտ ... վերակազմելու» ենթակայ բնագիրը ամենեւին անհարկի է «քննական բնագիր» որակել, ինչպէս այդ կատարուած է Խորենացու 1991ին Երեւանում նմանահանութեամբ վերատպուած, բայց խմբագիր Մալխասեանցի անունը մոռացած տիտղոսաթերթում[6]։ Ի լրումն նախորդի, այս նոր հրատարակութեանը իբրեւ յաւելուած կցուած են Աշոտ Սարգսեանի հաւաքած 10 ամբողջական եւ 10 միաւոր պատառիկի ընձեռած ընթերցումները՝ համեմատելով Աբեղեանի եւ Յարութիւնեանի տողատակերի հետ[7]։ Սա, հարկաւ, նախնական աշխատանքի կարեւոր լրացում է, որ կոչուած է օժանդակելու բնագիրը վերակազմելուն։ 1913ի հրատարակութեան երախտաւորները նոյնիսկ յայտարարում էին, թէ «մեր աշխատանքի մէջ կարեւորը, կարծում ենք, ոչ այնքան բնագիրն է, որքան ընթերցուածները»[8]։ Նման պարագաներում յետին թուով այն «քննական» որակելը կատարելիք աշխատանքը չպատկերացնել եւ հայագիտութեան նոր սերնդին կամաւոր մոլորութեան մատնել է նշանակում։

Հայագէտը, մասնաւորապէս՝ խորենացիագէտ հայագէտը պարտաւոր է աշխատանքային մեկնակէտ ունենալ Աբեղեանի եւ Յարութիւնեանի «Յառաջաբանի» եզրակացութիւնը, թէ «բնագրի վերակազմելը չի կարող մի մարդու գործ լինել։ Դրա վրայ դեռ շատերը պիտի աշխատեն։ Եւ կարծում ենք, այսուհետեւ ուրիշները հեշտութեամբ կարող են վերակազմել բնագիրը՝ ի նկատի ունենալով ոչ միայն մեր տուած ընթերցուածները, այլ եւ ուրիշ աղբիւրներ, եւ ամէն մի հատուածի համար առանձնապէս ուսումնասիրութիւն անելով»[9]։ Ձեռագրական խմբերի առաջացման պատճառներին եւ ժամանակին անդրադառնալիս, Աբեղեանը ամփոփում է. «կան ձեռեր, որ մի խմբի մէջ աւելի հարազատ են պահուած, ուրիշ ձեռեր էլ ուրիշ խմբի մէջ։ Դա

արդէն բնագիրը վերականգնելուն է վերաբերում, որ իմ նպատակից դուրս է»[10] (ընդգծումը մերն է - Պ.Մ.):

Ստորեւ, հարիւրամեայ այդ պատուիրանը կիրառելուց առաջ, արձանագրենք, որ բնագրագէտ-խորենացիագէտները դեռ պիտի շարունակեն Պատմութիւն Հայոց Մեծաց ամբողջական կամ հատուածական ձեռագրերի ու պատառիկների պրպտումը եւ վերծանում-հրապարակումը: Գուցէ անսպասելի կամ նոյնիսկ անհասկանալի է մասնագիտական շրջանակում արձանագրել, թէ Մատենադարանի նմանահանութիւն-վերարհրատարակութեան յաւելուածային ընթերցումների մէջ չի ընդգրկուած նոյն հաստատութեան 1671ին գրուած Հմր. 10.000 ձեռագիրը[11], որն օժտուած է ոչ քիչ տարընթերցումներով: Հաւանաբար վրիպած կամ հասու չեղած կը լինեն այլուր գտնուող ուրիշ ձեռագրեր եւս: Սպասելիքներ կան տարբեր հաւաքածուներում պահպանուող հատակոտորներից՝ առանձին կամ պահպանակի տեսքով, որոնց գիտական նկարագրութիւնն ու ճանաչումը երկար ժամանակ պահանջող գործ է, ինչպէս որ ապագայ տեխնիկական միջոցների կատարելագործմանն է թողնուած այսօր արդէն յայտնի կրկնագրերից շատերի ուսումնասիրութիւնը:

Մենք տարիներ առաջ առիթ ենք ունեցել ասելու, թէ «որպէս հեղինակ տարուբերուելով երեքից աւելի դարերի արանքում, Խորենացին իբրեւ աղբիւր շատ յաճախ չվոխուեց նրան իսկ աղբիւր ծառայած նիւթերի հետ, որով եւ մթագնուեց Պատմահօր երկի առկայութեամբ պայմանաւորուած բնագրական իրողութիւնների վերհանումը եռխորենացիական մատենագրութեան մէջ»[12]: Բայց վաղուց եւ արդարացի օրէն նկատուած է, թէ Խորենացու «ընթերցուածոց հնութեան համար ի խորհուրդ կրնային կոչուիլ հին պատմագրութիւնք, որոնք կամ Խորենացւոյ աղբիւր եղած են եւ կամ գոն իրենց աղբիւր ունեցած են, զոր օրինակ Ագաթանգեղոս, Փաւստոս, Ցովհ[աննէս] Կաթ[ողիկոս], Անանուն ժամանակագիր, Թովմ[ա] Արծրունի, Մխիթար Անեցի եւ այլն»[13]:

Շարունակելով հայագէտներ Նորայր Բիւզանդացու[14] եւ Հ. Ներսէս Վ. Ակինեանի նախանշուած մեթոդով Խորենացու Պատմութեան բնագրական հետքերի պրպտումը, մենք, ի թիւս այլ երկերի, անուն առ անուն յիշատակել ենք վարքագրական-վկայաբանական վեց յուշարձան[15], որոնք ունեն բառացի քաղուածներ Խորենացուց եւ չեն ընդգրկուած 1913ի հրատարակութեան համեմատութեան առնուած նիւթերի ցանկում: Այժմ պիտի փորձենք այդ յուշարձաններից երկուսից բերուող մի քանի բնութագրական քաղուածներով խորենացիագիտութեան համար ակնառու դարձնել նրանց բովանդակած ընթերցումների կարեւորութիւնը:

Ա. «ՇՈՒՇԱՆԻԿԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ»

Դ. դարու հայոց կաթողիկոս Ասպուրակէսին յաջորդած Սահակ Պարթեւի եպիսկոպոսապետութիւնը ներկայացնելիս, Խորենացին Պատմութիւն Հայոց Մեծացի Գ. գրքի խթ. գլխում թուարկում է նրա նախնիներին եւ ապա աւելացնում. «Սա ամենայն առաքինութեամբ հարցն նմանեալ, աղօթիւքն մասամբ առաւելեաց։ Քանզի ստացաւ աշակերտս վաթսուն ըստ նմանութեան մայրաքաղաքացն սպուդէից, որք կրօնաւորք, խարազնազգեստք, երկաթապատք, բոկագնացք, որք յար ընդ նմա չրջէին. որովք մշտնջենաւոր պաշտամամբ կատարէր զկանոն, որպէս զայնս որք յանապատսն էին»[16]։ Մեր ընդգծած «ըստ նմանութեան մայրաքաղաքացն սպուդէից» միջանկեալ նախադասութիւնն ու «երկաթապատք» բառը բովանդակային այլընթերցում չունեն. եղածը քերականական կամ շարահիւսական է, բայց գերազանցապէս սխալագրութիւն[17]։

Սակայն բանասիրութեանը վաղուց է յայտնի, որ Մուրը Շուշանիկի վկայաբանութեան մէկ ձեռագրով յայտնի համառօտ խմբագրութեան առաջին հատուածը քաղուած է Խորենացու երկի Գ. գրքի խթ. եւ ծագլուխներից[18], եւ մեզ այստեղ գրաղեցնող Խորենացու խօսքերը վկայաբանութեան տեքստում քաղուած են բառացի, սակայն՝ մէկ էական տարբերութեամբ. վկայաբանութեան մէջ չկան ընդգծուած «ըստ նմանութեան մայրաքաղաքացն սպուդէից» եւ «երկաթապատք» միաւորները։

Նախ փորձենք ճշտել, թէ մասնագէտները ինչպէս են հասկացել կամ մեկնաբանել բնագրի այդ մասը։ «Ըստ մայրաքաղաքացն սպուդէից» արտայայտութիւնը թարգմանիչներից շատերն ընկալել են միակերպ՝ «մայրաքաղաքների Սպուդէների նմանութեամբ»[19], «sledovali primeru stolichnikh Spudeev»[20], «skhodnikh so stolichnimi spudeiami»[21], «the Spudaioi of the capital»[22] եւլն.։ Նրանք իրաւացիօրէն «Սպուդէից» եզրը (ուղղ. Սպուդէք) սերել են յունարէն σπουδαῖοι - *փութաջաններ, նախանձայոյզներ* բառից եւ նոյնացրել «ակումիտների» (արթմնիների, արթուննների կամ անքուննների) միաբանութեան հետ։

Թարգմանութեան ինքնատիպութեամբ է օժտուած Խորենացու երկի վենետիկեան հայերէն-ֆրանսերէն հրատարակութիւնը՝ «sous la règle de l'ordre des grands couvents Spoudées»[23] (այսինքն՝ «Սպուդէներ մեծ միաբանութիւնների կանոնի համաձայն»)։ Բնագրի նման ընկալում ունի նաեւ ֆրանսերէն վերջին նորացուած հրատարակութիւնը. «à la façon des Spoudaïoi des grands monastères»[24] (այսինքն՝ «ըստ նմանութեան մեծ վանքերի սպուդէների»)։

Բիրաւի, հակառակ թարգմանիչների մեծ մասի միաձայնութեան, «ըստ մայրաքաղաքացն սպուդէից» կապակցութեան «մայրաքաղաքը» յունարէն «μητρόπολις»ի «մայրավանք» իմաստի պատճէնումն է, որ վկայուած է այլ աղբիւրներով եւս։ Ահաւասիկ մէկ օրինակ *Կանոնք Սրբոյն Սահակայ Հայրապետի* բնագրից. «Գ. Եւ պաշտաւն սաղմոսերգութեանն անխափան լիցի ի տուընջեան եւ ի գիշերի, ըստ աւրինակի մայրաքաղաքացի հաւրն Հովուապետի. զի ամենայն ումեք չէ աւրէն եւ իշխանութիւն յապաղել զայն կարգ պաշտաման, կամ նորաձեւութիւնս ինչ առնել, այլ միշտ ի նմին յարատեալ»[25] (ընդգծումը մերն է - Պ.Մ.)։ Այստեղ էլ խօսքը ճիշտ եւ ճիշտ Խորենացու յիշատակած սպուդէների (ակմիթների՝ աննիւնջների) միաբանութեան՝ վանք-մայրաքաղաքի հովուապետ հօր մասին է։ Թարգմանիչներից Ռոբերտ Թոմսոնը չի մոռանում յիշեցնելու, թէ սպուդէները նոյն «ակմետներն» են, որոնց կարգին է դասւում, ըստ Ե. դարու հայ մատենագիր Կորիւնի, վերջինիս ուսուցիչ եւ հայերէն այբուբենի ստեղծող Մաշտոցը («ուստի եւ հրաման ելանէր՝ վայելուչ մեծարանօք զՍուրբն՝ Ակումիտ անուն կոչելոյ»)[26]։ Սակայն, հանգուցեալ բանասէրը Հայկ Պէրպէրեանի գնահատութեամբ, Մաշտոցին «ակումիտ» տիտղոս չնորհելը «կատարեալ անհեթութիւն է»[27], ուստի հայագէտները տարբեր սրբագրութիւններ են առաջարկել՝ «յարքունիս կոչելոյ» (Թորոսեան), «յարքունիս ուղարկելոյ» (Ակինեան)[28]։

Անկախ Կորիւնի բնագրի սրբագրելի լինելուց կամ ոչ, կարծում ենք՝ Խորենացու Պատմութիւն Հայոց Մեծացի «ըստ նմանութեան մայրաքաղաքացն սպուդէից» համեմատութիւնը հեղինակային բնագրում չի եղել, այլ ընդմիջարկուել է Է.-Ը. դարերից յետոյ։ Վերեւում արդէն ասացինք, թէ Պատմութեան այդ հատուածը նոյնութեամբ աւանդուած է Սուրբ Շուշանիկի Վկայաբանութեան համառօտ խմբագրութեան մէջ, սակայն առանց միջանկեալ նախադասութեան։ Բարեբախտաբար, վկայաբանութեան այդ խմբագրութեան հին վրացերէն թարգմանութեան գոյութեան շնորհիւ մենք հնարաւորութիւն ունենք ժամանակագրելու յիշեալ ընդմիջարկումը։ Վրացերէն թարգմանութիւնը կատարուած պիտի լինի 728ի Մանազկերտի ժողովից յետոյ, ուրեմն Խորենացուց քաղում կատարող հայերէն բնագիրը կազմուել ու շրջանառւել է մինչ այդ, կովկասագէտ Նիկողայոս Մառի թուագրմամբ՝ «Է. դարի վերջից կամ Ը. դարի սկզբից ոչ ուշ»[29]։

Այսպիսով, մեր ձեռքի տակ կայ ստուգելի բնագրական փաստ, որով վստահաբար կարող ենք ասել, թէ Սուրբ Շուշանիկի Վկայաբանութիւնը համառօտողի ապրած տարիներից առաջ՝ Ջ. կամ Է. դարերում Խորենացու Պատմութիւն Հայոց Մեծացը գոյութիւն ունէր, եւ վարքագիրը նրանից քաղուածներ էր անում։

Ի դէպ, Խորենացու հեղինակային բնագրում, ինչպէս երեւում է, չի եղել նաեւ մեզ հետաքրքրող նախադասութեան շարունակութեան մէջ աւանդուած «երկաթապատը» բնութագրումը, որը նոյնպէս անյարիր է եւ չկայ Մուրը Շուչանիկի վկայաբանութեան բնագրում ու վրացերէն թարգմանութեան մէջ։

Բ. «ՎԿԱՑՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՀԱՑՐԱՊԵՏԱՑՆ ՀԱՑՈՑ ԱՐԻՍՏԱԿԻՍԻ, ՎՐԹԱՆԻՍԻ, ՅՈՒՍԿԱՆ, ԳՐԻԳՈՐԻՍԻ, ԴԱՆԻԷԼԻ»

Խորենացու Պատմութիւն Հայոց Մեծաթիւ քաղուած մի քանի ծաւալուն հատուածներ ենք գտնում Վկայութիւն Սուրբ Հայրապետացն Հայոց Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկան, Գրիգորիսի, Դանիէլի վաղմիջնադարեան վկայաբանական երկում[30], մասնաւորապէս՝ Պատմահօր Բ. գրքի դա., Գ. գրքի բ., գ., ժա., ժգ. եւ ժդ. գլուխներից։

Գրիգոր Լուսաւորչի որդու, Արիստակէս Հայրապետի սպանութիւնն ու նրան փոխարինած Վրթանէսին վերակացու նշանակելը եւ Տրդատ Արքայի փութաջանութիւնը ներկայացնելուց յետոյ, Խորենացին շարունակում է. «Վասն որոյ եկեալ գործակալք կողմանցն արեւելից [...] հիւսիսոյ, վերակացուք հեռաւոր քաղաքին, որ կոչի Փայտակարան՝ ասեն ցարքայ. «Եթէ կամիցիս ուղղութեամբ վարել կողմանցն այնոցիկ ըստ այսմ հաւատոյ՝ առաքեա՛ նոցա եպիսկոպոս ի գաւակէ սրբոյն Գրիգորի, զի յոյժ փափագելով խնդրեն. եւ գիտեմք հաւաստի, թէ ի հուչակեալ անուանէն Գրիգորի՝ ակնածեացեն եւ ի նորին գաւակէ, առնել գամենայն ըստ հրամանի»։ Այսմ հաւանեալ երանելին Տրդատ՝ տայ նոցա եպիսկոպոս զմանուկն Գրիգորիս, զերէց որդին Վրթանիսի։ Թէպէտ եւ յանկուցիչն աւուրցն հայելով՝ պարականն զիրն վարկանէր, այլ տեսեալ զհոգոյն մեծանձնութիւն»[31] (ընդգծումները մերն են — Պ.Մ.)։

Վկայաբանութեան հայերէն բնագիրն ու մանաւանդ նրա ժ. դարի Աթոսեան գրչագրով աւանդուած Ը.-Թ. դարերի հին վրացերէն թարգմանութիւնը[32] հնարաւորութիւն են տալիս այս հատուածում մի քանի սրբագրութիւն առաջարկել.

ա) «Կողմանցն արեւելից հիւսիսոյ» արտայայտութիւնը ընկալւում է իբրեւ Փայտակարանի գտնուած տեղի սահմանում, մինչդեռ նրան վերաբերում է «վերակացուք հեռաւոր քաղաքին» բնորոշումը։ Ուստի նախորդ արտայայտութիւնը պիտի սրբագրել «կողմանցն արեւելից եւ հիւսիսոյ», ինչպէս եղել է վրացերէնի համար հիմք ծառայած հայերէն բնագրում։

բ) «Առաքեա՛ նոցա եպիսկոպոս ի գաւակէ սրբոյն Գրիգորի» նախադասութեան «ի գաւակէ»ն բացորոշ աղաւաղում է, որովհետեւ բացառական հոլովի ցուցիչը վկայում է, թէ Գրիգորի գաւակներից մէկին

ուղարկելու մասին է խօսքը, ուստի պիտի ունենայինք «ի զաւակաց», ինչպէս եւ կայ վրացերէնում:

գ) Եթէ հետեւելու լիներնք Վկայաբանութեան վրացերէն տարբերակի բնագիր հայերէնին, Խորենացու տեքստում առկայ «առնել զամենայն ըստ հրամանի» բացատրութիւնը պիտի դիտուի իբրեւ ընդմիջարկութիւն:

դ) Առաւել կարեւոր է Խորենացու բնագրի ընդօրինակութիւնների ժամանակ տեղի ունեցած հետեւեալ փոփոխութիւնը. մեզ հասած «պարականոն գիրն վարկանէր» արտայայտութիւնը հետեւանք է «պատանուոյն» բառի «պարականոն» ընթերցման, որին իբրեւ բացատրութիւն պիտի աւելացուէր «գիրն վարկանէր» (փաստը անկանոն էր համարում): Սրբագրութիւնը հաստատւում է ՏԽ՝ ձեռագրական ու տպագրական խմբերի ընթերցումներով եւ Վկայաբանութեան վաղմիջնադարեան վրացերէն թարգմանութեամբ՝ «թէպէտ պատանին տարիքով (օրերով) լի չէր»: Խորենացու հեղինակային բնագրում պիտի լիներ «Երանելի Տրդատ տայ նոցա եպիսկոպոս զմանուկն Գրիգորիս, գերէց որդին Վրթանիսի՝ թէպէտ եւ յանլիութիւն աւուրցն հայելով պատանուոյն, այլ տեսեալ զհոգւոյն մեծանձնութիւն»: Հետեւաբար՝ սրբագրելի են առկայ բոլոր թարգմանութիւնները:

Խորենացու Գ. գրքի բ. գլուխը խմբագրելիս, Մալխասեանցը կասկածել է բնագրի նախնականութեանը եւ տողատակին առաջարկել ենթադրելի ընթերցումը. «12 ինքեամբ / Խ չիք ինքեան: Նախնական ձեւն երեւի եղել է. «կամ առ նովին ինքեամբ Քրիստոսիս...» Մտ.Մ.»[33]: Քննարկուող Վկայաբանութեան հայերէն բնագիրը նոյնութեամբ ընդօրինակում է Խորենացու ընդմիջարկուած-խաթարուած տեքստը, մինչդեռ հին վրացերէն թարգմանութեան հիմք ծառայած հայերէն օրինակում «այնուիկ ի Հնումն կամ առ նովիմբ ինքեամբ Քրիստոսիս Աստուծով մերով զարկուցեալ Հրեայքն» հատուածն ամբողջութեամբ բացակայել է, ուստի չարադրանքն աւելի յստակ է եւ անխաթար: Դժուարանում ենք ասելու՝ թարգմանչի ձեռքի տակ Վկայաբանութեան ա՞յլ տարբերակ է եղել, թէ՞ նա ինքն է կռահել խաթարումը եւ կրճատել ընդմիջարկումը: Բոլոր պարագաներում՝ այժմ Խորենացու Պատմութիւն Հայոց Մեծացի այդ հատուածը սրբագրելու համար բնագրական հիմք ունենք:

Սրբագրելիք տեղիներ է յուշում Վկայաբանութեան յաջորդ պարբերութիւնը եւս: Հանդիպադրենք այդ հատուածները.

Խ ո ր ե ն ա ց ի	Վ կ ա յ ա բ ա ն ու թ ի ւ ն
Իսկ յետ լնլոյ Հնգետասան ամաց եպիսկոպոսութեան Մեծին Վրը-	Իսկ յետ լնլոյ Հնգետասան ամի եպիսկոպոսութեան Մեծին Վրը-

թանայ՝ փոխի յաչխարհէս յերրորդ ամի Տիրանայ։ Եւ ի հրամանէ նորին տարեալ հանգուցանեն ի գեօղն Թորդան, իբրու մարգարէական ակամբ հայեցեալ՝ որ գկնի բազում ժամանակաց եւ Հօրն ի նոյն տեղւոջ հանգուցան նչխարք։ Եւ յաջորդէ զաթոռն Ցուսիկ որդի նորին ի չորրորդ ամին Տիրանայ, յոյժ հետեւող եղեալ հարցն առաքինութեան[34]։

թանիսի փոխի յաչխարհէս յերրորդ ամի Տիրանայ։ Եւ ի հրամանէ նորին տարեալ հանգուցին ի գեաւղն Թորդան։ Եւ յաջորդէ զաթոռն Ցուսիկ որդի նորին ի չորրորդ ամին Տիրանայ, յոյժ հետեւող եղեալ հարցն առաքինութեան[35]։

Կարծում ենք, ընդգծուած դրուագը կրճատուելու ենթակայ չպիտի լինէր՝ եթէ այն կար Խորենացու հեղինակային բնագրում։ Ինչպէս երեւում է, Ե. դարու պատմիչ Ագաթանգեղոսի երկի նման, Խորենացու գործը եւս յետագայում ոճական-գեղարուեստական որոշ վերամշակում է ապրել։ Վկայաբանութեան վրացերէն թարգմանութեան լրացուցիչ տարբերութիւնը «Հնգետասանի» փոխարէն «չեօթտասան» (հետեւանք՝ Ե-է չփոթի) եւ «եպիսկոպոսութեան» դիմաց «քահանայապետութիւն» ունենալն է[36]։

Ընդմիջարկութեամբ պիտի բացատրել Խորենացու Գ., ժգ. գլխի սկզբի «ամբարիշտն Ցուլիանոս» արտայայտութեան մեկնաբանութիւնը՝ «ուրացաւ նա զԱստուած եւ պաշտեաց զկուռս», որ չկայ Վկայաբանութեան քաղած դրուագում։ Անհասկանալի է նաեւ «յարոյց հալածանս եւ խռովութիւն ի վերայ եկեղեցւոյ» արտայայտութեան «եւ խռովութիւն» լրացումը։

Վկայաբանութեան չարունակութիւնը նոյնութեամբ կրկնում է Խորենացու «Վկայութիւն Սրբոյ Ցուսկան եւ Դանիէլի» գլուխը (Գ., ժդ.)[37]։ Ունեցած տարընթերցումներից համեմատաբար կարեւորը նահատակուող Դանիէլ Ծերունի քահանային Սուրբ Գրիգորի «եւ հիւպերետ» (ὑπηρέτης, այսինքն՝ «ծառայ», «սպասաւոր», «փոքրաւոր») լինելու յիշատակութեան բացակայութիւնն է, որ չկայ նաեւ Խորենացու բնագրի 1699ին ընդօրինակուած օ ձեռագրում[38]։ Եթէ նախնականը Վկայաբանութեան տարբերակն է, ապա յիշեալ փոխառեալ բառի հնագոյն խորենացիական վկայութիւնը պիտի նկատել անգոյ։

Այսպիսով, մինչեւ Է.–Ը. դարերը Ագաթանգեղոսի[39] եւ Խորենացու հեղինակած պատմութիւններից քաղածոյ դրուագների յարաւսումով կազմուած Վկայաբանութիւն Սուրբ Հայրապետացն Հայոց Արիստակիսի, Վրթանիսի, Ցուսկան, Գրիգորիսի, Դանիէլի կարճառօտ երկը եւ նրա վրացերէն թարգմանութիւնը բնագրական հիմքեր են տալիս

քննարկելու այդ պատմիչների երկերի առանձին դրուագների նախնականութեան խնդիրը եւ իրական ընթերցումներ առաջարկում նրանց սրբագրութեան համար:

Մենք այստեղ արծարծեցինք միայն երկու վկայաբանութեան ընձեռած ընթերցումները, մինչդեռ կան եւ ուրիշները, որոնց խորենացիագիտութիւնը դեռեւս չի դիմել Պատմահօր աշխատութիւնը յետագայ ընդմիջարկութիւններից ու վերամշակում-փոփոխութիւններից քայլ առ քայլ ազատելու համար:

Այս մարզում խորենացիագիտութեան դանդաղումը ամենեւին արդարացում չունի, որովհետեւ Խորենացու երկից ժ. դարու պատմիչ Յովհաննէս Կաթողիկոս Դրասխանակերտցու Պատմութեան մէջ պահպանուած վկայակոչական հատուածների համեմատութիւնը Պատմահօր ձեռագրական երկու խմբերի (Ա եւ Տ) ընթերցումներին, հիմք են տուել Աբեղեանին եզրակացնելու, թէ՝ «Յովհաննէս Կաթողիկոսի ձեռին եղած օրինակը իր մէջ ունի թէ՛ Ա եւ թէ՛ Տ խմբերի ընթերցուածներ» եւ թէ նոյն օրինակը «ոչ Ա խմբին է պատկանում եւ ոչ Տ խմբին. այլ դա հաւասարադաս է Ա եւ Տ խմբերի ընդհանուր մայր օրինակին»[40]: Գրեթէ նոյն արդիւնքն է արձանագրել եւ Ակինեանը՝ Խորենացու ընթերցումները համեմատելով է. դարու հայ մատենագիր Անանիա Շիրակացուն վերագրուած Ժամանակագրութեան[41] հեղինակ Անանունի մօտ եղած քաղուածներին, ապա եւ թ.-ժ. դարերով թուագրուող կրկնագիր բնագրի մէկ էջը վերծանել-հրապարակելիս[42]: Մեր քննարկած վարքագրական բնագրերը ժամանակագրօրէն նախորդում են ե՛ւ Դրասխանակերտցուն, ե՛ւ կրկնագիր պատառիկին. նրանք կարող են ժամանակակից համարուել Անանուն ժամանակագրին, ուստի նրանց ընձեռած բնագրական սրբագրութիւնները վերաբերում են Ակինեանի կողմից այսպէս անուանուած «ընդհանուր մայր օրինակին» եւ նիւթ են տալիս նրա մատնանշած «քննադատական բոլոր պահանջմանց համաձայն» բնագիրը վերակազմելու համար:

ՏԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Այս ձեռագրի ամփոփ նկարագրութիւնը տե՛ս՝ Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913 [այսուհետեւ՝ Խորենացի (1913)], էջ ԺԷ, Տե՛ս նաեւ՝ Ցուցակ Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, հատ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Չէլեբեանեան, Փ. Անթաբեան. Նեռածութիւնը՝ Օ. Եգանեանի. խմբագրութեամբ՝ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երեւան, Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն, 1965, սիւնակ 891-892:

[2] Խորենացու ձեռագրերի ծագումնաբանութիւնը տե՛ս՝ Խորենացի (1913), էջ ԼԹ:

[3] «Ճառաջդիմութիւն Ազգայինն», *Բազմավէպ*, Բ. տարի, թիւ 13, Յուլիսի 1, 1844, էջ 202-203. Հմմտ. Պարոյր Մուրադեան, «Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութեան» Բնագրական Հետքերը Զ.-է. Դարերի Երկերում», *Էջմիածին*, Զ-է, 1992, էջ 89-90։

[4] Պետրոս Յովհաննիսեան, *Մովսէս Խորենացու Մատենագիտութիւնը. Երկասիրութիւններ*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1991, էջ 5-48։

[5] *Խորենացի* (1913), էջ ԽԲ։

[6] *Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց. քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի. Նամանահանութիւն. լրացումները Ա. Բ. Սարգսեանի*, Երեւան, Հայկական ԽՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1991 [այսուհետեւ՝ *Խորենացի* (1991)]։

[7] *Խորենացի* (1991), էջ 399-485։

[8] *Խորենացի* (1913), էջ ԽԲ-Մ։

[9] Նոյն, էջ Մ։

[10] Նոյն, էջ ԽԱ։

[11] Այդ իրողութիւնը հրապարակաւ արձանագրել է Ճեռագրագէտ Արտաշէս Մաթեւոսեանը։

[12] Մուրադեան, «Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութեան» Բնագրական Հետքերը», էջ 85։

[13] Հ. Ներսէս Վ. Ակինեան, «Մովսէս Խորենացւոյ «Հայոց Պատմութեան» Բնագրի Վերակազմութեան Խնդիրը», *Հանդէս Ամսօրեայ*, ԻԸ. տարի, թիւ 10, 11, Հոկտեմբեր, Նոյեմբեր 1914, սիւնակ 684։

[14] Նորայր Ն. Բիւզանդացի, «Ընդդէմ Կարիէրեանց», *Հանդէս Ամսօրեայ*, ՂԸ. տարի, թիւ 1-12, Յունուար-Դեկտեմբեր 1984, սիւնակ 19-28։

[15] Մուրադեան, «Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութեան» Բնագրական Հետքերը», էջ 93-97։

[16] *Խորենացի* (1913), էջ 320։

[17] *Խորենացի* (1991), էջ 320, 475։

[18] *Մոփսիկը Հայկականը*, Հատ. Բ., Վենետիկ, 1853, էջ 60, ծան. 12. N. Marr, *Iz poezdki na Afon* [Աթոս կատարած Ուղեւորութենից], *Zhurnal Ministerstva Narodnogo Prosveshcheniia* [Ժողովրդական Լուսաւորութեան Նախարարութեան Հանդէս], Ս. Պետերբուրգ, Մարտ 1899, էջ 19-20. I. Abuladze, *Kart'uli da Somkuri Literaturuli Urti'ert'oba IX-X ss-ši* [Վրաց եւ Հայոց Գրական Յարաբերութիւնը Թ.-Ժ. Դարերում], Թբիլիսի, 1944, էջ 0153-0156. Պարոյր Մուրադեան, *Մուրճ Շուշանիկի վկայաբանութիւնը. Բնագրեր եւ Հետազօտութիւն*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատարակչութիւն, 1996, էջ 108-113։

[19] *Մովսէս Խորենացու Հայկական Պատմութիւն, աշխարհաբար թարգմանեց եւ լուսաբանեց Խորէն Մ. վ. Ստեփանէ*, Ս. Պետերբուրգ, 1889, էջ 303-304, ծան. էջ 253-254. *Մովսէս Խորենացի, Հայոց Պատմութիւն, Թարգմանութիւն, ներածութիւն եւ ծանօթագրութիւններ ակադ. Ստ. Մալխասեանցի*, Երեւան, Հայպետհրատ, 1961, էջ 319, 402։

[20] *Istoriia Armenii Moiseia Khorenskogo*, [*Մովսէս Խորենացու Հայոց Պատմութիւն*], *Մ. Յ. Էմինի նոր թարգմանութեամբ, Մոսկուա*, 1893, էջ 186, 276;

[21] Movses Khorenatsi, *Istoriia Armenii* [*Հայոց Պատմութիւն*], *Թարգմանութիւնը գրաբարից, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Գագիկ Սարգսեանի*, Երեւան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1990, էջ 188, 261 (ծան. 677)։

[22]Movses Khorenats'i, *History of the Armenians*, Translation and Commentary on the Literary Sources by Robert W. Thomson (Cambridge, MA and London: Harvard University Press, 1978), p. 313.

[23]Moïse de Khorène, *Histoire d'Arménie*, texte arménien et traduction française par P. E. Le Vaillant de Florival, tome second (Venise, 1841), p. 423.

[24]Moïse de Khorène, *Histoire de l'Arménie*, nouvelle traduction de l'arménien classique par Annie et Jean-Pierre Mahé (d'après Victor Langlois) avec une introduction et des notes (Paris: Editions Gallimard, 1993), pp. 294, 405.

[25]*Կանոնագիրք Հայոց, հատոր Ա., աշխատասիրությամբ Վազգէն Յակոբեանի, Երեւան, Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն, 1964, էջ* 369. K. A. Melik-Ogandzhanian, 'Eshche raz o natsionalnosti Mkhitara Gosha, avtora "Sudebnika"' [*Դարձեալ «Դատաստանագրքի» Հեղինակ Մխիթար Գօշի Ազգութեան Մասին*], *տե՛ս՝ K osveshcheniiu problem istorii i kulturi Kavkazskoi Albanii i vostochnikh provintsii Armenii* [*Կովկասեան Աղուանքի եւ Հայաստանի Արեւելեան Նահանգների Պատմութեան եւ Մշակոյթի Հիմնահարցերի Լուսաբանման Շուրջ*], *կազմեց Պարոյր Մուրադեան, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1991, էջ* 191. «*Մայրաքաղաք*» *եզրի այդ իմաստը կայ նաեւ ԺԴ. դարու մատենագիր Ստեփանոս Օրբէլեանի հեղինակած պատմութեան մէջ, ըստ որի Շադատը է «մայր եկեղեցեաց եւ մայրաքաղաք ամենայն աշխարհին Սիւնեաց»* (*ընդգծումը մերն է - Պ.Մ.*). *տե՛ս՝ Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն Նահանգին Սիւնեաց, Ղուկասեան Մատենադարան, Դ., Թիֆլիս, 1910, էջ* 48.

[26]*Կորիւն, Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական այլ ընթերցուածներով, թարգմանութեամբ, առաջաբանով եւ ծանօթագրութիւններով իւ ձեռն Պրոֆ. Դ-ր. Մանուկ Աբեղեանի, Երեւան, Հայպետհրատ, 1941, էջ* 64-65.

[27]*Հայկ Պէրպէրեան, «Հայկականք» «Ակումխո Անուն Կոչիլոյ», Հանդէս Ամսօրեայ, ՁԲ. տարի, թիւ* 4-6, *Ապրիլ-Յունիս* 1968, *սիւնակ* 172-173.

[28]*Նոյն, սիւնակ* 173-176. *Հ. Յ. Թորոսեան, «Քանի Մը Խնդրական Կէտեր Կորիւնի Գրքին Մէջ», Բազմավէպ, հ. ՁԲ, թիւ* 11, *Նոյեմբեր* 1931, *էջ* 473. *Հ. Ներսէս վ. Ակինեան, Կորիւն, Վարք Ս. Մաշտոցի, Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1952, էջ* 38 (=ԺԴ, 1_{14-15}), 97.

[29]Marr, *էջ* 19-20. *Հմմտ.* Abuladze, *էջ* 0155-0156. *Մուրադեան, Մուրբ Շուշանիկի Վկայաբանութիւնը, էջ* 114-115.

[30]*Տե՛ս՝* 1456*ին գրուած Մաշտոցեան Մատենադարանի թիւ* 933 *ձեռագիրը*

[31]*Խորենացի* (1913), *էջ* 259.

[32]*Հայերէն բնագրի եւ հին վրացերէն թարգմանութեան գիտական հրատարակութիւնը տե՛ս՝* Abuladze, *էջ* 62-68. *Մառը հակուած էր այդ վրացերէն թարգմանութիւնները ժամանակագրել Է-Ը. դարերով. «Համենառաջը, որ նման յուշարձանների վրացերէն թարգմանութիւնը կարող էր կատարուած լինել, ետքերորդ դարի վերջն է կամ ութերորդի սկիզբը». տե՛ս՝* Marr, *էջ* 17. *Գիտնականի եզրակացութեամբ՝ հատանաբար Մովսէս Խորենացին է իր Պատմութեան մէջ օգտագործել սոյն Վկայաբանութիւնը «Հակառակ երեւոյթը, ապրինքն Վկայաբանութեան կախումը Խորենացուց, քիչ հաւանական է, բայց եթէ այդ ապացուցուի, ապա կը դառնայ մի չոր էական փաստարկ յատկապէս յօգուտ այն բանի, որ Մ. Խորենացին VII դարի կէսից ոչ ուշ պատմիչ է», տե՛ս՝ նոյն, էջ* 18.

[33]*Խորենացի* (1913), *էջ* 258.

[34]*Նոյն, էջ* 269.

[35]Abuladze, *էջ* 67.

[36]*Նոյն.*

[37] *Խորենացի* (1913), էջ 272։
[38] *Նոյն*։
[39] *Պարույր Մուրադեան, Ագաթանգեղոսի Հին վրացերէն խմբագրութիւններէն, Երեւան, Հայկական ՍՍՀ Գ.Ա. հրատարակչութիւն*, 1982, էջ 112-123։
[40] *Խորենացի* (1913), էջ խ-խԱ։
[41] *Անանուն ժամանակագրութիւն, խմբագիր յօրինեալ չէ դարու ի հնագոյն ժամանակագրաց եւ հրատարակեալ ներածութեամբ եւ բազդատութեամբք [ի ձեռն Հ. Բ. Սարգիսեանի]*, Վենետիկ, 1904։ *Համառ.՝ Պրոֆ. դ-ր Ա. Գ. Աբրահամեան, Անանիա Շիրակացու Մատենագրութիւնը, Երեւան, ՀՍՍՌ Մատենադարանի հրատարակչութիւն*, 1944, էջ 357-399։
[42] *Ակինեան, տե՛ս նաև* 690-692։

OBSERVATIONS REGARDING THE RECONSTRUCTION OF THE ORIGINAL TEXT OF THE *HISTORY* OF MOVSES KHORENATSI

(Summary)

PARUYR MURADIAN

The article discusses the relationship between the text of the *History of the Armenians* by Movses Khorenatsi and two medieval Georgian translations, *The Martyrdom of St. Shushanik* (after 726 AD) and *The Martyrdom of the Holy Patriarchs of the Armenians, Aristakes, Vrtanes, Husik, Grigoris and Daniel* (8-9th cc. AD). These Georgian texts were translated from Armenian. The compilers of their Armenian originals widely used excerpts from Khorenatsi. The article compares these excerpts with the corresponding passages in the text of Khorenatsi. It tries to reconstruct the original wording of these passages, by identifying errors, which were probably introduced by various scribes when copying manuscripts of Khorenatsi's work after the said Georgian translations were done. The article deduces that Khorenatsi's text was definitely in circulation before the 6th or the 7th centuries AD.

ՏԱՑՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԻ ԱԿՆԱՐԿ
(Դ. - Ժ. ԴԱՐԵՐ)

ՌԱՖԱԷԼ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

Պատմական Տայք նահանգը տարածւում էր Ճորոխ գետի միջին հոսանքի աւազանում: Հնագոյն ժամանակներում մ.թ.ա. ԺԴ.-ԺԳ. դարերում այն կազմում էր Հայասա կամ Խայասա ցեղային միութեան տարածքի արեւելեան ծայրամասը: Հայասան հանդիսացել է հայ ժողովրդի կազմաւորման գլխաւոր շրջաններից մէկը[1]: Այստեղից է ծագում նրա իշխանական տոհմը՝ Մամիկոնեանների ֆէոդալական տունը[2]:

Տայքի պատմութիւնը շատ կողմերով համընթաց է հայկական միւս նահանգների պատմութեանը, բայց ունի իր առանձնայատուկ կողմը: Տայքում Ժ. դարում առաջացաւ Բագրատունիների նոր իշխանութիւն, որի կառավարիչները յարել էին քաղկեդոնականութեանը: Այդ հանգամանքը իր խորը կնիքը դրեց նահանգի դաւանաբանական վիճակի վրայ: Ջուտ հայադաւան նահանգի բնակչութեան մի մասը դարձաւ քաղկեդոնիկ՝ վրաց եկեղեցուն միանալու միջոցով: Թուլացաւ նահանգի հայախօս բնակչութեան կապը Հայաստանեայց Եկեղեցու հետ: Դա իր հերթին նպաստեց վրացադաւան հայերի մահմեդականացմանը, որը կատարուեց բռնութեամբ ԺԷ. դարի առաջին կէսին[3]:

Տայքի պատմութեան խոշոր շրջափուլերը (Մամիկոնեան տիրոյթ, Բագրատունեաց իշխանութիւն, բնակչութեան բռնի մահմեդականացում) պահանջում են առանձին-առանձին ուշադիր քննութիւն: Սոյն յօդուածը սկիզբ է դնում մեր կողմից նահանգի քաղաքական անցքերի պատմութեան քննութեանը:

ՏԱՑՔԸ՝ ՄԱՄԻԿՈՆԵԱՆՆԵՐԻ ՏԻՐՈՑԹ

Ըստ Է. դարի հայկական Աշխարհացոյցի, Տայքը Մեծ Հայքի տասնչորսերորդ նահանգն էր, տեղադրուած Բարձր Հայքի, Գուգարքի, Խաղտիքի ու Այրարատի Բասեն եւ վանանդ գաւառների միջեւ[4]:

Արշակունեաց Հարստութեան օրօք նախարարական կարգերի յաղթանակով (Ա.-Գ. դարեր) ամբողջ Հայաստանը բաժանուել էր մի քանի տասնեակ իշխանական (տանուտէրական) տների միջեւ: Նրանց

մէջ կային առաւել խոշոր եւ ազդեցիկ տոհմեր, որոնք երկրի ներքին եւ արտաքին հասարակական-քաղաքական կեանքում վճռական դեր էին կատարում, ժառանգական-սեփականատիրական իրաւունքով տիրում իրենց հողաբաժիններին: Դրանցից էին, առաջին հերթին, Արշակունիները, Մամիկոնեանները, Բագրատունիները, Արծրունիները, Կամսարականները, Սիւնեցիները եւ այլք:

Ինչ վերաբերում է Տայքին, ապա այն պատկանել է Արշակունեաց չորրորդ թերեւս երկրորդ ազդեցիկ իշխանական տոհմին՝ սպարապետութեան պաշտօնը վարող Մամիկոնեաններին[5]: Ե. դարու պատմագիր Փաւստոս Բիւզանդը վկայում է, որ Մամիկոնեանների տոհմական կալուածքները՝ հողային տիրոյթները, բերդերը եւ այլն գտնւում էին Տայոց «աշխարհում», ինչպէս այն ժամանակ կոչւում էին Հայաստանի պատմա-աշխարհագրական մարզերը՝ նահանգները: Այսպէս, պատմիչի տեղեկութեամբ, Տիրան թագաւորի ժամանակ (338-350), երբ Հայաստանում կենտրոնական իշխանութեան եւ կենտրոնախոյս ֆէոդալական ոյժերի միջեւ պայքարը հասել էր իր գագաթնակէտին, բազմաթիւ նախարարական տներ ենթարկուեցին հալածանքի: Առանձնապէս տուժեցին Ռշտունիները ու Արծրունիները, որոնք Փաւստոսի անտարակոյս չափազանցուած խօսքերով, համարեա իւ սպառ բնաջնջուեցին: Կենդանի մնացին միայն երկու մանուկներ՝ Մեհենդակ Ռշտունու որդի Տաճատը եւ Վաչէ Արծրունու որդի Շաւասպը: Այդ երկուսին փրկեցին Մամիկոնեան Վասակ եւ Արտաւազդ իշխանները, որոնք դժգոհելով Տիրանի դաժան եւ անհեռատես քաղաքականութիւնից, հեռացել էին իրենց հայրենիք՝ Տայք եւ չէին խառնւում երկրի գործերին. «եւ չոգան յաշխարհն իւրեանց յամուրս Տայոց, եւ անդ նստան ամս բազումս ընտանեօք իւրեանց, եւ թողին զայլ զտուն իւրեանց»[6]:

Տիրանի սխալ քաղաքականութիւնը ուղղեց նրա Արշակ Բ. որդին (350-ամօտ 368): Նա հաշտուեց հալածուած նախարարների հետ եւ վերադարձրեց նրանցից խլուած կալուածքները: Մամիկոնեանների հետ հաշտուելու նպատակով, Արշակն անձամբ ուղեւորուեց Տայք եւ վերականգնեց նրանց դիրքը. «ապա երթեալ գտանէր զնոսա յամուրս աշխարհին Տայոց յիւրեանց աշխարհին, եւ դարձուցանէր զնոսա յընդանութիւնն»[7]: Արշակը Մամիկոնեանների աւագ եղբօրը՝ Վարդանին ճանաչեց տոհմի նահապետ, միջնեկին՝ Վասակին հաստատեց սպարապետի պաշտօնում, իսկ կրտսերին նշանակեց գօրապետ[8]:

Երբ Արշակի գահակալութեան վերջին տարիներին հակապարսկական ազատագրական պայքարում Վարդանը դաւաճանեց եւ անցաւ պարսիկների կողմը, Վասակ Սպարապետն ու Արշակը դաւաճանին պատժելու համար անցան Տայք. «ապա երթեալ գտանէին զնա յիւրում գաւառին ի Տայս, յիւր ամուր բերդին՝ որում անուն Էրախանի կոչի»[9]: Այստեղ Վասակը սպանեց դաւաճան եղբօրը: Այսպիսով Փաւստոսը ակնյայտօրէն մատնանշում է, որ Տայքը Մամիկոնեանների ոստանն էր, «սեփական աշխարհը»:

Փաւստոսի վերջին վկայութիւնից ճշտւում է նաեւ, որ Էրախանին Մամիկոնեան տոհմի նահապետի աթոռանիստն էր[10]: Այն գտնւում էր ներկայ Իշխան գիւղի տեղում, Ճորոխ եւ Օլթի գետերի խառնատեղում[11], պատմական ճակք գաւառում: Պէտք է եզրակացնել ուրեմն, որ նշուած գաւառը կազմում էր Մամիկոնեան տանուտէրերի սեփականութիւնը, նրանց բաժնեմասը, իսկ Էրախանին տոհմական կեդրոնն էր:

Պատմաբան Սուրէն Երեմեանի կարծիքով Մամիկոնեանների նստոցը նոյն՝ ճակք գաւառի Իշխան գիւղն էր, Իշխան գետի ակունքների մօտ[12], որի շրջակայքը կոչւում էր Իշխանանիստ Ձոր[13]:

Տոհմական գլխաւոր նստոցի հարցը ճշտելու համար, սակայն, անհրաժեշտ են լրացուցիչ փաստեր: Հնարաւոր է տարբերակ, որ Էրախանի-Իրխան-Իշխան նոյն ամրոցն է, որովհետեւ երեքն էլ գտնւում էին ճակք գաւառում: Հայագէտ Հ. Ղեւոնդ Վ. Ալիշանի կարծիքով, Տայքի իշխանանիստ կենտրոնը Տավուսկերտ (Թավուսկերտ) բերդն էր (ճիշտ ձեւը՝ Տայոց Քար. այժմ թուրքերէնով կոչւում է «Տավուսքեար» կամ «Թավուսկեար»[14]): Այնուհանդերձ, դա չի հակասում մեր եզրակացութեանը, որովհետեւ Տայոց Քարը նոյնպէս գտնւում էր ճակքում:

Դ. դարի սկզբին՝ Տրդատ Գ. Թագաւորի (298-մօտ 330) եւ Գրիգոր Ա. Լուսաւորչի կաթողիկոսութեան (302-325) ժամանակ, հայ իշխանաւորներից չատերը Երուսաղէմում կառուցել էին տոհմական վանքեր: Նրանց թիւը յետագայում հասնում էր 70ի: Վանքերի եւ տոհմերի անունները նշուած են «Վասն վանօրէից Հայոց, որ յԵրուսաղէմ» վերնագրով մի ցուցակում[15], կազմուած Անաստաս Վարդապետի կողմից Երուսաղէմ այցելելու ժամանակ՝ Զ. դարի վերջ-Է. դարի սկզբին: Մամիկոնեաններն այդ թւում կառուցել էին Ս. Կարապետի եւ չորս այլ վանքեր, որոնց անունները ցուցակում չեն նշուած: Բացի այդ,

ցուցակում նչուած է նաեւ «Կողի Վանքը»: Կողը Տայքի գաւառներից էր, եւ քանի որ Դ. դարում Տայքում իշխում էին Մամիկոնեանները, ուստիեւ այդ վանքի կառուցողը կարող էր միայն Մամիկոնեան լինել: Առանձին վանքի կառուցումը վկայում է, որ Կող գաւառը նոյն ֆէոդալական տան կրտսեր իշխաններից մէկի սեփականութիւնն էր:

Տայքի Բուղխա գաւառը, որտեղ հողային տիրոյթներ են ունեցել հայկական մանր իշխանական տներից Դիմաքսեանները, յիշատակւում է միջնադարեան երկու կարեւոր վաւերագրերում՝ Գահնամակում եւ Ջօրանամակում: Գահնամակը հայ նախարարական տների ցուցակ է, ուր ազգանունները դասաւորուած են համաձայն իրենց «պատուի», այսինքն՝ արքունիքում գրաւած նրանց դիրքի եւ ազդեցութեան: Ջօրանամակը նոյնպէս նախարարական տների ցուցակ է, ուր ազգանունների դիմաց նչուած է նրանց ռազմական կարողութիւնը: Երկու ցուցակումն էլ նչուած են Դիմաքսեանների տարբեր ճիւղերի ներկայացուցիչները՝ Բուղխայի, Շիրակի եւ «Այլ»[16]: Բայց Շիրակը եւ Բուղխան Դիմաքսեանների տոհմական տիրոյթները չէին կարող լինել: Շիրակը վաղ միջնադարում կամսարականների հայրենիքն էր, եւ այդ գաւառում ուրիշները կարող էին հողաբաժին ունենալ միայն որպէս նրանց վասալներ: Նոյնը պէտք է ասել Բուղխա գաւառի մասին: Խոշոր ֆէոդալական հասարակարգին յատուկ երեւոյթ եւ փոխյարաբերութիւնների օրինաչափ նորմա էր, երբ աւելի թոյլ իշխանները խմբաւորւում էին խոշոր եւ ուժեղ իշխանների չուրջ, մտնելով նրանց հովանաւորութեան տակ եւ ծառայելով նրանց բանակում, որպէս վարձատրութիւն իրենց սենիորից (աւագից) ստանում էին պայմանական սեփականատիրութեան իրաւունքով հողաբաժիններ[17]: Միայն այդ ձեւով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ Դիմաքսեանների առանձին ճիւղերը ունեցել են հողեր ուրիշ տներին պատկանող գաւառներում եւ կոչուել են այդ գաւառների անուններով: Իսկ թէ որտե՞ղ էին գտնւում Դիմաքսեանների տոհմական հողերը եւ ունեցե՞լ են նրանք այդպիսիք, մինչեւ այժմ գիտութեան մէջ չի պարզուած[18]:

Ի հարկէ, Մամիկոնեանները Դ. դարում չէ, որ տիրացել էին Տայոց Աշխարհին: Հայաստանում իշխանական տները առաջ էին եկել մինչեւ Արշակունեաց Թագաւորութեան կազմաւորումը: Մ.թ. Ա. դարում, երբ Տրդատ Ա. Արշակունի (66-88) թագաւորը ձեռք էր բերել հայոց գահը, հայ իշխանական տները արդէն առկայ էին եւ ունէին իրենց ժառանգական տոհմական հողեր: Տրդատը միայն հաստատեց այն

վիճակը, որը գոյութիւն ունէր երկրում[19]: Մամիկոնեանների նախնիները Տայքում պէտք է իշխէին դեռ ստրկատիրական ժամանակաշրջանից: Այս հարցը սերտօրէն առնչւում է տոհմի ծագման խնդրի հետ, բայց ներկայ յօդուածի շրջանակներից դուրս է[20]:

Արշակունեաց շրջանից Տայքին վերաբերուող առաջին տեղեկութիւնը պատկանում է Ե. դարու պատմիչ Մովսէս Խորենացուն: Նա հաղորդում է, որ Տրդատ (նրա մօտ՝ Վաղարշակ) Արքան՝ թագաւորութեան վայելչութեան համար, յարմարեցնում է Տայոց Երկիրը, այնտեղ կառուցում ամառանոցներ, որսի տեղեր պատրաստում, Կողի կլիման մեղմացնում այգիներով ու բուրաստաններով[21]:

Այնուհետեւ, Բ.-Գ. դարերում Տայքը աղբիւրներում չի յիշատակւում: Նրա կացութիւնը կարելի է պատկերել Հայաստանի քաղաքական իրավիճակի ընդհանուր Ֆոնի վրայ: Նշուած դարերում շարունակւում էր նախկինում սկսուած Հռոմի ու պարթեւական պետութեան (226ից՝ Սասանեան Պարսկաստանի) պայքարը Առաջաւոր Ասիայում ու Հայաստանում գերիշխելու համար:

Այս երկարատեւ պայքարը վերջացաւ Պարսկաստանի պարտութեամբ, որը 298ին՝ Մծբինի պայմանագրով, Հռոմին զիջեց Միջագետքն ու անդրտիգրիսեան հայկական շրջանները: Հայաստանը, որը 296-97ին գրաւել էր պարսից Ներսեհ թագաւորը (293-302), ճանաչուեց Հռոմի «դաշնակից ու բարեկամ»: Արշակունեաց Հայաստանը այդ պայմանագրով ունեցել է գրեթէ նոյն սահմանները, ինչ որ Տիգրան Բ. Մեծի (մ.թ.ա. 95-55) ու Պոմպէոսի մ.թ.ա. 66ին կնքած հաշտութեան ժամանակ: Կղարջքից մինչեւ Սպեր, նրա հիւսիս-արեւմտեան սահմանը անցնում էր Պարխարեան Լեռնաշղթայով[22], որից հարաւ տարածւում էր Տայքի Արսիափոր (Արսեացփոր) գաւառը, իսկ հիւսիս՝ Խաղտիք երկիրը[23]:

Պարսկա-Հռոմէական պայքարը վերսկսուեց 330ականներին: 387ին կողմերը համաձայնութեան եկան եւ Հայաստանը բաժանուեց երկու տէրութիւնների միջեւ: Երկրի մեծ մասը՝ 4/5ը անցաւ Պարսկաստանին: Հայաստանի երկու՝ արեւմտեան (կամ Հռոմէական) եւ արեւելեան (կամ պարսկական) մասերի բաժանման սահմանագիծը անցնում էր Նիպիբինից մինչեւ Ակամբիս գետը: Այն մանրամասն նկարագրել է պատմաբան Նիկողայոս Ադոնցը եւ ցոյց է տուել, որ Տայքն ու Կղարջքը մնացել էին Հայաստանի արեւելեան մասում[24]:

Տիրելով Արեւելեան Հայաստանին, պարսիկները նրա ծայրագաւառները միացրեցին հարեւան երկրներին եւ կազմեցին նոր վարչական մարզեր՝ քուստակներ: Պարսկահայաստանի կազմում վարչականօրէն մնացին միայն հետեւեալ վեց նահանգները՝ Այրարատը, Տուրուբերանը, Վասպուրականը, Սիւնիքը, Տայքը եւ Մոկքը[25]: 428ին Արշակունիների թագաւորութեան վերացումից յետոյ նշուած նահանգներն էլ կազմեցին Մարզպանական Հայաստանը:

Ե. դարը հայ ժողովրդի համար դժուարին փորձութիւնների շրջան էր: Նա ստիպուած եղաւ մարտնչելու պարսկական բռնակալութեան դէմ իր ազգային ինքնուրոյնութիւնը պահպանելու համար: Տարիներ տեւող ծանր պայքարի ընթացքում չարժման ղեկավարների՝ Մամիկոնեանների եւ միւսների համար Տայքը ապաստանավայր հանդիսացաւ, ուր նրանք համալրում էին հայկական բանակը, իսկ անհրաժեշտութեան դէպքում՝ անցնում Բիւզանդական կայսրութեան հարեւան շրջանները: Ե. դարի պատմիչ Ղազար Փարպեցին գրում է, որ Աւարրայրի ճակատամարտից (451) յետոյ հայկական զօրքի մնացորդները նահանջել էին երկրի ծայրամասերը՝ Տայք, Արցախ եւ Տմորիք: Հիմնական մասը անցել էր Տայք՝ Վարդան Մամիկոնեանի եղբայր Համազասպին միանալու համար: Համազասպ Մամիկոնեանը մեկնել էր Բիւզանդիա՝ օգնութիւն խնդրելու: Ցաջողութիւն չունենալով կ. Պոլսում, նա չտապում էր միանալ եղբօրը, բայց ուշացել էր եւ ստիպուած էր ամրանալ Պարխարեան Լեռներում: Այստեղ Մամիկոնեան իշխանի գլխաւորութեամբ պայքար ծաւալուեց Տայք ներխուժած պարսկական գնդի դէմ: Համազասպին յաջողուեց ջարդել այդ գունդը, բայց ինքն էլ զոհուեց մարտերից մէկի ժամանակ: Ե. դարու մէկ այլ պատմիչ՝ Եղիշէն ընդհանուր խօսքերով ասում է, որ Համազասպը քաջութեամբ կռուեց ու նահատակութեամբ վախճանուեց, իսկ Փարպեցին հաղորդում է, որ պարսիկները անսպասելիօրէն յարձակուել էին Տայքի Ողջնհաղ գիւղում գիշերող հայկական զօրամասի վրայ: Ցարձակումը տեղի էր ունեցել վաղ առաւօտեան, ուստի հայերից շատերը անպատրաստ էին կռուելու, բայց նրանց յաջողուել էր դուրս գալ գիւղից եւ նորից անցնել Պարխար: Այդ մարտում էլ զոհուել էր Համազասպ Մամիկոնեանը[26]:

Երեք տասնամեակ անց, հակապարսկական երկրորդ ապստամբութիւնը գլխաւորեց Վարդանի եղբօրորդի Վահան Մամիկոնեանը: Մանուկ հասակում իր երկու եղբայրների հետ միասին նա պատանդ

էր Պարսկաստանում: Միայն չորրորդ եղբայրը՝ Վարդը մնացել էր Հայաստանում եւ գտնւում էր իր դայեակի մօտ՝ Տայքում[27]: Վահանը վերադարձաւ Հայաստան եւ 481ին գլխաւորեց ապստամբութիւնը: Ապստամբներին յաջողուեց գրաւել Դուինն ու Արտաշատը եւ կազմել կառավարութիւն: Մարզպան նշանակուեց Սահակ Բագրատունին, իսկ սպարապետ՝ Վահանը: Կառավարութիւն կազմելուց յետոյ, ապստամբները, հաշուի առնելով, որ իրենց ոյժերը փոքրաթիւ են եւ վատ կազմակերպուած, մտադրուած էին ամրանալ Տայքում, որպէսզի մօտ լինեն բիւզանդացիներին, սակայն հանգամանքները ստիպեցին նրանց փոխել իրենց մտադրութիւնը: Վահանը նախայարձակման անցաւ: 481ին՝ Ակոռի գիւղի մօտ, Մասիսի ստորոտում եւ 482ին՝ Ներսեհապատ գիւղի մօտ, Արտազ գաւառում, հայերը փայլուն յաղթանակներ տարան թշնամու նկատմամբ: Բայց յետագայում նրանք ծանր պարտութիւն կրեցին Ճուրմանայնի դաշտում, Կուր գետի մօտ (Վրաստան) եւ ստիպուած եղան հեռանալ Տայք[28]: Այս անգամ Վահանը հնարաւորութիւն չունեցաւ երկար մնալ Տայքում եւ վերակազմել իր բանակը, որովհետեւ նրան հետապնդող պարսիկ զօրավար Հազարաւուխտը մտաւ Տայք եւ ամրացաւ Գիւղիկ եւ Վարդաշէն գիւղերում (Ոքաղէ գաւառ): Ուստի Վահանը ստիպուած եղաւ հեռանալ Տայքից եւ անցնել բիւզանդացիների մօտ՝ սկզբում Խաղտիք, իսկ այնտեղից՝ Բարձր Հայք, Տայքին սահմանամերձ Շաղագոմ գաւառը[29]:

Վահանանց Շարժումը չարունակուեց եւս երկու տարի եւ ի վերջոյ յաջողութեամբ պսակուեց: 484ին Հեր գաւառի Նուարսակ գիւղում կնքուեց պայմանագիր, որի համաձայն հայերը ստացան ներքին ինքնավարութիւն եւ դաւանանքի ազատութիւն[30]:

Տայքը մնաց Պարսկահայաստանի կազմում շուրջ երկու հարիւր տարի: Միայն Զ. դարի վերջում Բիւզանդիային յաջողուեց պարսիկներից խլել հայկական հողերի մեծ մասը, այդ թւում նաեւ՝ Հիւսիսարեւմտեան չրջանները: Պարսից Խոսրով Ա. Անուշիրուան (531-579) թագաւորի օրօք Պարսկահայաստանում չարունակուել էին կրօնական հալածանքներն ու հարկային չարաչահումները եւ 571ին բռնկուել էր նոր հակապարսկական ապստամբութիւն: Բիւզանդիան օգտագործեց յարմար առիթը: Նա որոշ օգնութիւն ցոյց տուեց հայերին, եւ նոր պատերազմ սկսուեց երկու տէրութիւնների միջեւ, որը կարճատեւ ընդմիջումներով տեւեց 20 տարի: Պարսկաստանը պարտուեց եւ 591ի պայմանագրով Հայաստանի մեծ մասը անցաւ կայսրութեանը[31]: Սա

պատմագրութեանը ծանօթ է որպէս Հայաստանի երկրորդ բաժանումը: Բիւզանդիային անցած շրջանների թւում էր նաեւ Տայքը, որը ստացաւ «Խորագոյն Հայք» (Armenia Profunda) անունը[32]:

Է. դարու կէսերից, արաբական առաջին արշաւանքներից յետոյ, Հայաստանը դարձաւ մրցասպարէզ արաբների ու Բիւզանդիայի միջեւ: Սկզբնական շրջանում արաբները նպատակ չունէին հաստատուել երկրում: Ուստի, բաւարարւում էին հարկ գանձելով: Ընդհակառակը, հայերին իրենց կողմը գրաւելու նպատակով եւ նրանց ռազմական պոտենցիալը բիւզանդացիների դէմ օգտագործելու համար, 652ին Ասորիքի արաբ կառավարիչ Մուաւիան հայոց սպարապետ Թէոդորոս Ռշտունու հետ կնքեց պայմանագիր, որը Հայաստանի համար ներքին ինքնավարութիւն էր նախատեսում:

Հայաստանի ներսում իր հերթին առաջացան երկու խմբակցութիւններ՝ Ռշտունու գլխաւորած արաբների հետ դաշնակցելու կողմնակիցները եւ Ներսէս Գ. Իշխանացի Կաթողիկոսի (641-661) գլխաւորած բիւզանդասէր ուղղութիւնը, որը ձգտում էր Բիւզանդիայի օգնութեամբ ապահովել երկրի պաշտպանութիւնը: 652ի պայմանագիրը Ռշտունու եւ նրա կողմնակիցների մեծ յաջողութիւնն էր, ուստի Կոստանդին (Կոստաս Բ. կամ Կոստանդ, 642-668) կայսրը անհրաժեշտ համարեց յատուկ արշաւանք կազմակերպել Հայաստան: Կայսեր կարին ժամանելուց անմիջապէս յետոյ, նրան ներկայացան Ռշտունի սպարապետից հեռացած նախարարները՝ Սպերացիք, Բագրատունիք, Մանանաղի, Դարանաղի եւ Եկեղեաց գաւառի իշխանները, Տայեցիք, Բասենցիք եւ ուրիշներ, ինչպէս նաեւ Ներսէս Կաթողիկոսը: Կոստանդնի այդ արշաւանքի ժամանակ էր, որ Ներսէսը միացաւ յունական եկեղեցուն: Պաշտօնական արարողութիւնը կատարուեց Դուինի Ս. Գրիգոր Եկեղեցում, կայսեր ներկայութեամբ: Սակայն Ներսէսի քայլը երկրում մեծ դժգոհութիւն առաջ բերեց եւ Կոստանդնի մեկնելուց յետոյ կաթողիկոսը ստիպուած եղաւ հեռանալ Դուինից եւ իր համար աւելի ապահով վայր փնտրել: Նա գնաց Տայք, ուր մնաց վեց տարի՝ մինչեւ 659: Այդ ընթացքում՝ 654ին մահացաւ Թէոդորոս իշխանը[33]:

Հեռանալով Հայաստանից, Կոստանդինը յատուկ զօրամաս թողեց Ռշտունու եւ արաբների դէմ կռուելու համար: Է. դարու պատմիչ Սեբէոսը գրում է, որ հետեւեալ գարնանը այդ զօրամասը փախաւ Տայք: Սակայն Ռշտունին դուրս մղեց նրանց Տայքից: Նա հետապնդեց բիւզանդացիներին մինչեւ Սեւ Ծով եւ գրաւեց Տրապիզոն նաւահան-

գիստը։ Այդ յաղթանակից յետոյ Մուաւիան նրան նշանակեց Հայաստանի, Ադուանքի, Վրաստանի եւ Սիւնիքի կառավարիչ, մինչեւ Կապկոհ (Հիւսիսային Կովկաս)[34]։

Սակայն հայ-արաբական դաշինքը ժամանակաւոր էր եւ երկար կեանք չունեցաւ։ Շուտով արաբները նոր արշաւանքներ կազմակերպեցին Հայաստան եւ է. դարի վերջում Հայաստանը ամբողջութեամբ անցաւ նրանց տիրապետութեան տակ։

Ը. դարի սկզբից արդէն արաբները կտրուկ փոխեցին հարկային քաղաքականութիւնը նուաճուած երկրներում, որն էլ աւելի խստացաւ Ը. դարի երկրորդ կէսից, երբ Արաբական Խալիֆայութեան ղեկն անցաւ Աբասեանների նոր հարստութեան ձեռքը։ Արաբների հարկային ծանր լուծը, Հայաստանի ներքին ինքնավարութեան եւ արտօնութիւնների վերացման, հայ ազդեցիկ ֆէոդալական տների հետապնդման ու նրանց ոչնչացման քաղաքականութիւնը (առանձնապէս 705ի Նախիջեւանի աղէտը, երբ քաղաքում նստող արաբ զօրավարը խաբէութեամբ իր մօտ հրաւիրեց հայ նախարարներին, բռնի զինաթափ արեց նրանց եւ հրկիզեց տեղի եկեղեցում), երկրում արաբական ցեղերի բնակեցումը առաջ բերեցին հակաարաբական ազատագրական շարժում, որն ընդգրկեց ամբողջ Ը. դարը։

Այդ ընթացքում Տայքին վիճակուեց նոյն դերը խաղալ, ինչ նախորդ շրջանում։ Կայսրութեան եւ խալիֆայութեան սահմանագլխին գտնուող այս նահանգը շատ յարմար էր հայ ապստամբների համար։ Այստեղ նրանք հնարաւորութիւն ունէին վերականգնել իրենց ոյժերը, ընտրել յարմար ժամանակ թշնամուն հարուածելու համար։ Բացի դրանից, Տայքում նրանք ունէին ամրացուած բերդեր եւ ամրոցներ, ուր անհրաժեշտութեան դէպքում փակւում էին թշնամուց։

Արդէն դարասկզբին՝ 703ին, Տայքում ապաստանել էր սպարապետ Սմբատ Բագրատունին։ Առաջին արաբ ոստիկան Աբդուլայի հայ նախարարներին ոչնչացնելու ուղղութեամբ ձեռնարկած քայլերից յետոյ, սպարապետը՝ մի խումբ նախարարների հետ, որոշեց անցնել բիւզանդացիների մօտ, բայց ճանապարհին վարդանակերտ գիւղի մօտ ստիպուած եղաւ ճակատամարտ տալ իրեն հետապնդող արաբական ջոկատին։ Ճակատամարտում հայոց սպարապետը փայլուն յաղթանակ տարաւ։ Այս վճռական պահին, երբ արաբական նոր հետապնդումը անխուսափելի էր, նա անցաւ Տայք, ուր ամրացաւ նահանգի ամուր բերդերից մէկում՝ Թուխարքում։ «Եւ նոր ընկալեալ զպատիւն

ի կայսերէն՝ առնոյր զգօրս իւր եւ երթայր յաշխարհն Տայոց, մտանէր յամրոցն որում Թուխարան կոչեն, եւ զգուշանայր յորդւոցն Իսմայելի», գրում է Ը. դարի Ղեւոնդ պատմագիրը[35]: Կարելի է ենթադրել, որ Թուխարքը ապստամբների ռազմական այն յենակէտերից էր, ուր նրանք թաքնւում էին թշնամու հետապնդումների ժամանակ: Սմբատ Բագրատունին եւս երկու տարի գլխաւորեց պայքարը արաբների դէմ, սակայն տեղի տալով թշնամու գերազանց ոյժերին, հեռացաւ Աբխազիա եւ Հայաստան վերադարձաւ միայն վեց տարի անց:

Ը. դարի կէսերին՝ 744-54ին արաբների մօտ բռնկուեց գահակալական կռիւների երկարատեւ մի շարք: Օգտուելով այս խառնաշփոթ վիճակից, հայերը փորձեցին տապալել արաբական լուծը: Շարժումը գլխաւորեց ազդեցիկ իշխաններից մէկը՝ Գրիգոր Մամիկոնեանը: Բայց ֆէոդալների շարքերում միասնութիւն չկար. Հայաստանի պատրիկ Աշոտ Բագրատունին դէմ էր զինուած ելոյթին, գտնելով, որ հայկական զօրքը փոքրաթիւ է եւ ապստամբութիւնը յաջողութիւն չի ունենայ: Գրիգոր Մամիկոնեանին մի պահ յաջողուեց համոզել պատրիկին եւ «դնէին դաշինս ուխտի առ միմիեանս ... աննենգ պահել զսէր միաբանութեաննն»,- գրում է Ղեւոնդը: Դրանից յետոյ ապստամբներն իրենց ընտանիքներով անցան Տայք[36]:

Տայքում տեղի ունեցած իրադարձութիւնների մասին պատմիչները որեւէ տեղեկութիւն չեն հաղորդում, որի պատճառով հնարաւոր չէ լուսաբանել շարժման այդ փուլը: Կարելի է միայն աւելացնել, որ Աշոտ Պատրիկը չուտով հեռացաւ եւ այդ պատճառով կուրացուեց Գրիգոր Մամիկոնեանի կողմից, իսկ ապստամբութիւնը անյաջող վախճան ունեցաւ[37]:

Այս պարտութիւնից ընդամէնը 20 տարի անց, Հայաստանում ազատագրական շարժումը նոր վերելք ապրեց: Այս ժամանակամիջոցին բռնկուած 774-75ի ապստամբութիւնը՝ Ը. դարում Հայաստանում տեղի ունեցած զինուած ելոյթներից ամենախոշորն էր: Ինչպէս եւ նախորդ շրջանում, շարժումը գլխաւորում էին Մամիկոնեանները: Մեր նպատակից դուրս է այստեղ նկարագրել ապստամբութեան ընթացքը եւ վերլուծել նրա անյաջողութեան պատճառները: Մեր թեմային առնչւում են միայն հայերի պարտութեան հետեւանքների հետ կապուած հարցերը: 775ին Արճէշի եւ Արճնիի ճակատամարտերում հայերի կրած երկու ծանր պարտութիւնները դժուարին կացութեան մէջ դրեցին ապստամբներին եւ առանձնապէս Մամիկո-

նեաններին: Նրանք էին Բիւզանդիայի հիմնական նեցուկը, եւ, բնականաբար, արաբների հալածանքները առաջին հերթին ուղղուեցին Մամիկոնեանների եւ նրանց գործակիցների դէմ: Նախարարներից շատերը ստիպուած եղան ապաստան փնտռել Հայաստանից դուրս: Մամիկոնեան տան վերնախաւը գնաց Բիւզանդիա, իսկ տեղում մնացին միայն նրանց կրտսեր ներկայացուցիչները, որոնք աւելի շատ յայտնի են Թոռնիկեաններ եւ այլ անուններով[38]: Մամիկոնեանների տոհմական ոստանները՝ Տայքն ու Տարօնը դարձան Բագրատունիների տարբեր ճիւղերի բաժիններ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՏԱՑՔՈՒՄ

Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն ճանաչելուն զուգընթաց եկեղեցին կազմակերպուեց որպէս ֆէոդալական հոգեւոր ինստիտուտ: Ձեւակերպուեց նրա ներքին վարչակարգը՝ հոգեւոր հիերարխիան: Եկեղեցական վարչական ստորաբաժանումներն էին թեմերը (կամ վիճակները), որոնց իրաւասութեանը ենթակայ էին խոշոր մարզեր, երբեմն ամբողջ նահանգներ: Վիճակը կարող էր ընդգրկել որեւէ նախարարական տան հայրենի տիրոյթները:

Ժ. դարի հայ պատմագիր Ուխտանէս Եպիսկոպոսի տեղեկութեամբ, Հայաստանում, Գրիգոր Լուսաւորչի օրօք, կազմակերպուել էր 30 աթոռ (վիճակ)՝ եպիսկոպոսների գլխաւորութեամբ: Մամիկոնեանների ոստան Տայքը նոյնպէս այդ օրուանից ունեցել է իր հոգեւոր աթոռը[39], որի առաջնորդների մի քանիսի անունները մեզ յայտնի են: Փաւստոսը Դ. դարի եպիսկոպոսներից յիշատակում է Կիրակոսին. «Եւ էր եպիսկոպոսն Տայոց Կիրակոս, որ Շահապ անուն կոչէր, այր ճշմարիտ աստուածապաշտ ըստ կամացն Աստուծոյ, եւ ուղիղ ճշմարտութեամբ առաջնորդէր ժողովրդեանն իւրում»[40]:

Ե. դարում յայտնի է Տաճատ եպիսկոպոսը: Սա մասնակցել է 449ի Արտաշատի ժողովին, որը հրաւիրուել էր պարսից Յազկերտ Բ. Թագաւորին (439-457) պատասխան կազմելու համար[41]: Ե. դարի Հայաստանի նշանաւոր եկեղեցական գործիչներից ոմանք նոյնպէս ծագումով եղել են Տայքից: Նրանցից էր Աբրահամ Երէցը, մականունամբ՝ Խոստովանող, 450-51ի չարժման մասնակից, որը գերուել եւ չարչարուել էր պարսիկների կողմից հաւատի համար: Նա ծնուել էր Տայքի Ջենակս գիւղում եւ կեանքի վերջում ձեռնադրուել էր Բզնու-

նիքի եպիսկոպոս[42]: Կաթողիկոս Գիւտը (461-478) Տայքի Արահեզ գիւղից էր[43]:

Զ. դարի Տայքի եկեղեցականներից յայտնի են Ատատ եւ Ստեփանոս եպիսկոպոսները: Առաջինը մասնակցել է 506ի Դուինի ժողովին, որը զբաղուել էր Պարսկաստանում նեստորականների գործունէութեան եւ այլ հարցերով[44], իսկ երկրորդը այն եկեղեցականներից էր, որոնք Ցովհաննէս Բ. Գաբեղեան Կաթողիկոսի (557-574) յանձնարարութեամբ գրեցին Աղուանքի եպիսկոպոսներին ու զգուշացրեցին նեստորական քարոզիչներից[45]:

Այսպիսով, Տայքի եպիսկոպոսական աթոռը եղել է Հայ Եկեղեցու օղակներից մէկը եւ Դ.-Զ. դարերի երկրի քաղաքական-հոգեւոր կեանքում գործել է նրա շրջանակներում եւ ընդհանուր ճակատով:

Սակայն, արդէն Է. դարի սկզբից դրութիւնը սկսւում է աստիճանաբար փոխուել: Պարսկա-բիւզանդական եւ արաբա-բիւզանդական դարաւոր մրցակցութեան ընթացքում Տայքում էին հաւաքուել բազմաթիւ կղերականներ եւ իշխանաւորներ, որոնք հալածւում էին բիւզանդացիների հակառակորդների կողմից: Տայքում ապաստանելը պատահական չէր. նա մօտ էր կայսերական մարզերին՝ Հիւսիսից՝ Խաղտիքին, իսկ արեւմուտքից՝ Բարձր Հայքին (Կարին, Սպեր): Այստեղ էին կենտրոնանում նրանք, ովքեր Բիւզանդիայի ռազմաքաղաքական յաջողութեան մէջ էին տեսնում Հայաստանի պաշտպանութեան գրաւականը, ինչպէս նաեւ նրանք, ովքեր հալածւում էին Բիւզանդիայի հակառակորդների կողմից: Այդ տեսակէտից Տայքի դերը աւելի մեծացաւ արաբա-բիւզանդական երկարատեւ ու արիւնահեղ մրցակցութեան ժամանակ:

Հայաստանի երկրորդ բաժանմանը (591) զուգահեռ, Բիւզանդիայի Մօրիկ կայսրը (582-602) յունական բաժնի համար 590ին հիմնեց հակաթոռ կաթողիկոսութիւն՝ Աւան նստավայրով, Դուինի մօտակայքում: Կաթողիկոսն էր Ցովհան Բագարանցին, որը ընդունել էր քաղկեդոնականութիւնը: Նոր, հակաթոռ կաթողիկոսութեան հիմնադրման նպատակն էր թուլացնել Դուինի կաթողիկոսութեան ազդեցութիւնը եւ Հայաստանում տարածել յունադաւանութիւնը:

Սակայն, Մօրիկի սպանութիւնից յետոյ յոյն-պարսկական պատերազմները աւելի կատաղի բնոյթ ստացան: 609ին պարսիկները գրաւեցին Կարինը եւ շատ այլ հայկական շրջաններ, իսկ Ցովհան կաթողիկոսը աքսորուեց Համադան, ուր եւ մահացաւ[46]:

Կարեւոր մի սկզբնաղբիւրից՝ Narratio de rebus Armeniae («Պատմութիւն Հայոց Հարցի Մասին») հայ քաղկեդոնիկ գրաւոր յուշարձանից իմանում ենք, որ 609ին՝ Կարինի գրաւումից եւ Յովհաննի աքսորից անմիջապէս յետոյ, Աբրահամ կաթողիկոսը յունական մասի եպիսկոպոսներին վտարեց իր իրաւասութեանը ենթակայ շրջաններից: «Այն ժամանակ էր (Կարինի գրաւումից յետոյ — Ռ.Մ.), - գրում է Narratioի հեղինակը, - որ հերետիկոս Աբրահամ կաթողիկոսը ստիպեց Յովհաննէսի բաժնի եպիսկոպոսներին նզովել Քաղկեդոնի ժողովը, հակառակ դէպքում հեռանալ Հայաստանի շրջաններից: Վերջիններս չհամաձայնուեցին եւ նրանցից ոմանք անցան Տայք, ոմանք Հոռոմոց երկիրը եւ վախճանուեցին օտարութեան մէջ»[47]:

Այն ինչ ձախողուեց կենտրոնական Հայաստանում, Բիւզանդիային յաջողուեց իրագործել նրա ծայրամասերում, մասնաւորապէս Տայք-Կղարջքի շրջաններում:

Յունական եկեղեցու ազդեցութիւնը զգալիօրէն ուժեղացաւ Ներսէս Գ-ի կաթողիկոսութեան օրօք: Ներսէսը կրթութիւնը ստացել էր Բիւզանդիայում եւ, առաջնորդութեան տարիներին, թաքցնում էր իր նախահակումները: Բայց, կաթողիկոսութիւնը ստանձնելուց յետոյ, նա, ինչպէս ասուեց վերը, պաշտօնապէս միացաւ յունական եկեղեցուն: Ինչ խօսք, Ներսէսի եւ միւսների յունասիրութիւնը ունէր քաղաքական աստառ: Կարեւորը տուեալ դէպքում այն է, որ Տայքի եպիսկոպոսների մէջ այդ ժամանակ կային մարդիկ, որոնք դառնում էին կայսրութեան յենարանը՝ նրա կրօնա-քաղաքական նկրտումներում:

Այնուհանդերձ Հայ Եկեղեցու կապերը Տայքի Եպիսկոպոսութեան հետ դեռ բաւական ամուր էին: Է.-Թ. դարերում, այս թեմը մասնակից է եղել Հայաստանի հոգեւոր կեանքին եւ նոյնիսկ պայքարել յունական եկեղեցու դէմ: Նրա պատուիրակ Սարգիս եպիսկոպոսը մասնակցել էր 728ի Մանազկերտում Յովհաննէս Գ. Օձնեցի կաթողիկոսի (717-728) հրաւիրած ժողովին, որը մերժել էր քաղկեդոնական ուսմունքը[48]:

Է. դարի վերջում Մամիկոնեաններին տան քայքայումից յետոյ Տայքում աւելի լայն չափերով դուռ բացուեց օտար ազդեցութեան թափանցման համար: Սրուեց պայքարը երկու հոսանքների՝ քաղկեդոնականների եւ հակաքաղկեդոնականների միջեւ: ԺԳ. դարի Վարդան Արեւելցի պատմագրի մի տեղեկութիւնից կարելի է եզրակացնել, որ Թ. դարի երկրորդ կէսին Տայքում յունական եկեղեցու դիրքերը աւելի ուժեղ էին: Քաղկեդոնիկների հակառակորդ եպիսկոպոս Սահակը

ստիպուած է եղել հեռանալ երկրամասից: Նրա փախուստը տեղի է ունեցել մի ժամանակ, երբ Բիւզանդիան որոշակի քայլերի էր դիմել իրեն ենթարկելու Հայոց Եկեղեցին: Կ. Պոլսի Փոտ Պատրիարքը (858-867 եւ 877-886) յատուկ նամակով դիմել էր կաթողիկոս Զաքարիա Ա. Զագեցի Կաթողիկոսին (855-875) եւ Աշոտ Բագրատունի իշխանաց իշխանին, առաջարկելով երկու եկեղեցիների միութիւն[49]: Շիրակաւանում հրաւիրուած եկեղեցական ժողովը մերժեց Փոտի առաջարկը, իսկ Աշոտի պատուէրով յունաց պատրիարքին ուղղուած պատասխանը գրեց Տայքի Սահակ Եպիսկոպոսը. «այսոքիկ ի թղթոյն Փոտայ սակաւ ինչ գրեցաւ. որոյ գրեաց պատասխանի Սահակ Մռուտն կոչեցեալ, որ եպիսկոպոս էր Տայոց ի Աշունքն, եւ հալածեալ անտի վասն հաւատոց, եկն ի Հայս առ Աշոտ»[50]:

Սահակի եպիսկոպոսական աստիճանը ինքնին վկայում է, որ նա ղեկավարել է համայնք: Նրա փախուստը կարելի է բացատրել երկու պարագաներով. կա՛մ Տայքի եպիսկոպոսութիւնը այդ ժամանակ պառակտուել էր երկու մասի եւ քաղկեդոնիկները աւելի ուժեղ էին, կա՛մ Սահակին հալածողները բիւզանդացիներն էին: Պատահական չէ, որ փախուստը համընկել էր Հայ Եկեղեցու դէմ Փոտի ձեռնարկած քայլերին: Այնուհանդերձ, քաղկեդոնիկ եկեղեցու յաղթանակը այստեղ վերջնական ու լրիւ չէր, ինչպէս սխալ ենթադրել են առանձին հայագէտներ[51]:

Վաւերագրերը ցոյց են տալիս, որ, հակառակ քաղաքական անբարենպաստ պայմանների, Տայքում ամբողջ ուշ միջնադարում գոյութիւն են ունեցել հայկական եկեղեցական համայնքներ, ուր հայերէնով գրուել են կրօնական արարողութիւնների համար անհրաժեշտ գրքեր՝ սաղմոսարաններ, աւետարաններ, շարականոցներ եւ այլ ձեռագրեր: Այսպէս, ԺԳ. դարի յիշատակարաններից մէկում ասուած է, որ անուանի պատմագիր Կիրակոս Գանձակեցին Տայոց Կողի վանքում 1252ին հին Ճայսմաւուրքի վրա աւելացրել է 112 «բան» (նիւթ, կենսագրութիւն): Նրան օժանդակել են Վահրամ եւ Ստեփանոս քահանաները[52]:

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԸ ՏԱՑԿՈՒՄ

774-75ի անյաջողութիւնից յետոյ, ինչպէս նշեցինք, Մամիկոնեանները այլեւս չկարողացան շարունակել ազատագրական պայքարի ղեկավարի դերը: Երկիրը հոգեվարքի մէջ էր:

Սակայն Թ. դարի սկզբից իրադրությունը սկսում է փոխվել: Բիւզանդիայի հետ վերսկսուած պատերազմները, խալիֆայութեան ներսում ծագած ներքին խռովութիւնները ու հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարը ստիպեցին արաբներին փոխել իրենց քաղաքականութիւնը նուաճուած երկրներում, մասնաւորապէս՝ Հայաստանի նկատմամբ:

Օգտուելով նպաստաւոր իրադրութիւնից Բագրատունիները, որոնք այսուհետեւ գլխաւորեցին ազատագրական չարժումները, Թ. դարի սկզբից ձգտեցին երկիրը դուրս բերել արաբական գերիշխանութիւնից: 806ին Հայաստանի Իշխան ճանաչուեց Սմբատ Սպարապետի որդի Աշոտ Մսակերը: Նա կարողացաւ Շիրակն ու Աշոցքը մաքրել արաբներից եւ մտաւ Տայք[53]: Աշոտը Տայքի ձակք գաւառում կառուցեց կալմախ ամրոցը: Այնտեղ տեղափոխուեց Գնունիների տոհմը, որը՝ ճնշուելով արաբներից, օգնութեան համար դիմել էր Մսակերին[54]: Դրանով իսկ սկսուեց Բագրատունիների աստիճանական մուտքը Մամիկոնեանների ոստան: Իսկ 820-40ականներին Տայք սկսեցին թափանցել Բագրատունիների միւս ճիւղերի ներկայացուցիչները: Նրանց Տայք մուտքը պայմանաւորուած էր արաբա-բիւզանդական կռիւներին նրանց մասնակցութեամբ:

Արաբա-բիւզանդական կռիւները այդ տարիներին մղւում էին Հիւսիսային Ասորիքում եւ Փոքր Ասիայի արեւելքում, ընդգրկելով Հայաստանի արեւմտեան շրջանները, մասնաւորապէս՝ Բարձր Հայքը, Բասենը եւ այլ շրջաններ: Բիւզանդական կայսրութիւնը ձգտում էր ունենալ դաշնակիցներ արաբների թիկունքում, մասնաւորապէս՝ Կարինի ամիրութեան դէմ: Վրաստան տեղափոխուած Հայ Բագրատունիների նոր տների ներկայացուցիչները այս տարածքաշրջանում համագործակցեցին բիւզանդացիների հետ որպէս դաշնակիցների: Նրանց մասնակցութիւնը ռազմական գործողութիւններին կատարւում էր որոշակի պայմաններով, որոնք նչուած էին կայսրերի կողմից Բագրատունիներին տրուած հրովարտակներով (բիւզանդական տերմինով՝ «խրիսովուլներով»):

Այս կարգի առաջին հրովարտակը տուել էր Լեւոն Զ. կայսրը (886-912): Ապա՝ Ռոմանոս Ա. Լեկապենոս կայսրը (920-944ին՝ մանկահասակ Կոստանդին Է. Միրանածինի կայսեր գահակից եւ երկրի փաստացի գահակալ) նման հրովարտակ չնորհել էր վրաց կիւրապաղատ Աշոտ Բագրատունուն (923-954): Վերջինս Վրաստանում Բագրատունի

առաջին թագաւոր, հայոց Սմբատ Ա. (890-914) արքայի կողմից թագադրուած Ատրներսեհ Բ-ի (899-923) որդին էր: Արաբա-բիւզանդական կռիւներին յետագայում մասնակցել են նաեւ Ատրներսեհի միւս որդին, նշուած Աչոտ Կիւրապաղատի եղբայրը՝ Բագրատ Մագիստրոսը (մահ. 945) եւ վերջինիս որդի Ատրներսեհ Կիւրապաղատը (960ականներին): Նրանց մասնակցութեան եւ հատուցման հետ կապուած կայսրութեան հետ ունեցած վիճաբանութիւնների մասին արժէքաւոր եւ եզակի տեղեկութիւններ է հաղորդում Բիւզանդիոնի Կոստանդին Է. Միրանածին կայսրը (913-920 եւ 944-959)՝ իր հեղինակած *Կայսրութեան կառավարման Մասին* (De administrando imperio) աշխատութեան մէջ: Այս աշխատութեան 45րդ գլուխը վերնագրուած է «Իբերների մասին»: Կայսրը Բագրատունիների այս ճիւղի անդամներին համարում է «իբեր»՝ նրանց վրացադաւան լինելու պատճառով[55]:

Միրանածինը մանրամասնօրէն տեղեկացնում է կայսրութիւն-Բագրատուններ ռազմական համագործակցութեան եւ հատուցման պայմանները: Ցայտնի է դառնում, որ Բագրատունիները որոշակի պայմաններով կարող էին տիրանալ գրաւած ամրոցներին եւ կրել բիւզանդական տիտղոսներ (կիւրապաղատ, մագիստրոս): Սակայն, ժամանակի ընթացքում, արաբներից խլուած Բասեն գաւառի եւ Կարինը պաշտպանող Ավնիկ եւ Մաստատոն ամրոցներին տիրանալու պատճառով, համագործակցող կողմերի միջեւ առաջ էին եկել վէճեր: Միրանածնի հաղորդմամբ, Լեւոն եւ Ռոմանոս կայսրերը, ինչպէս նաեւ ինքը՝ Միրանածինը, բազմիցս վիճաբանել են Աչոտ Կիւրապաղատի եւ նրա եղբայրների հետ: Աչոտը ունէր երեք եղբայր, բայց նրանցից յանուանէ Միրանածնի երկում յիշատակւում է միայն Բագրատ Մագիստրոսը: Նրանք յաւակնում էին ամբողջ Բասենին եւ Ավնիկ ամրոցին: Աչոտ Կիւրապաղատը պատճառաբանում էր, որ այդ մասին ունի Ռոմանոսի եւ իր՝ Միրանածնի հրովարտակները: Սակայն, շարունակում է Միրանածինը, քննութեան առնելով այդ հրովարտակները, ինք եկաւ այն եզրակացութեան, որ նրանց վրայ Կիւրապաղատը չենուել չի կարող: Ռոմանոսի հրովարտակում ասուած էր, որ նոյն Կիւրապաղատը խոստանում է եւ երդմամբ հաստատում, որ հաւատարիմ կը մնայ կայսեր, կը պայքարի Բիւզանդիայի թշնամիների դէմ եւ կը պաշտպանի վերջինիս բարեկամներին, Արեւելքը դաշնակից կը դարձնի կայսրութեանը եւ մեծագործութիւններ կը կատարի կայսեր օգտին: Իսկ Ռոմանոսը խոստացել էր, որ եթէ Կիւրապաղատը հաւա-

տարիմ ծառայի եւ երախտագէտ մնայ, ապա ե՛ւ ինքը ե՛ւ նրա ժառանգները անսասան կը տիրեն իշխանութեան։ Նրա տիրապետութեան սահմանները կը մնան անփոփոխ։ Նախկին կայսրերի կնքած համաձայնութիւնը կը պաշտպանուի. այն չի դրժուի։ Կայսրը չի խանգարի նրան աւերել Թէոդոսուպոլիսը եւ թշնամիների մնացած ամրոցները՝ երբ նրանք կը պաշարուեն միայն կիւրապաղատի կողմից եւ այն ժամանակ, երբ այդ գործն անեն կայսեր զօրքերը։ Ահա այս է հրովարտակների բովանդակութիւնը, գրում է Միրանածինը, որից կիւրապաղատը ամենեւին չի կարող յանգել այլ եզրակացութեան։ Միրանածինը աւելացնում է, որ Ռոմանոսի հրովարտակը վկայում է, որ կայսրը պաշտպանում է կիւրապաղատի վաղեմի սահմանների ամբողջութիւնը։ Եթէ կիւրապաղատը կարողութիւն ունենայ, ապա մենակ կամ կայսեր զօրքի հետ թող պաշարի եւ կործանի Թէոդոսուպոլիսը եւ միւս ամրոցները։ Բայց հրովարտակում ամենեւին չի ասուած, պնդում է Միրանածինը, որ նա կարող է նրանց լիակատար տէրն ու տիրակալը դառնալ։ Նա շարունակում է, որ իր հրովարտակում ասուած է, որ կիւրապաղատը կամ նրա եղբօրորդի Ատրներսեհը (Բագրատ Մագիստրոսի որդին) սեփական ոյժով որքան չրջաններ կը կարողանան խլել հագարացիներից, ապա թող դրանց տէրն ու տիրակալը դառնան։ Բայց որովհետեւ նա Թէոդոսուպոլիսը, կամ Ամիդին ու Մաստատոնը սեփական ոյժով չի գրաւել, ապա նա իրաւունք չունի նրանց տիրելու։ Միրանածնի հրովարտակում ասուած է նաեւ, որ Բագրատ Մագիստրոսը կայսեր «ծառան է», իսկ Աշոտ Կիւրապաղատը կայսեր «հաւատարիմ եւ հլու ծառան է» եւ «բարեկամը»[96]։

Այս տողերը գրուել են բիւզանդացիների կողմից 949ին կարին քաղաքի գրաւումից յետոյ։ Շարադրանքի բովանդակութիւնից երեւում է, որ կայսրութեան կռիւներին մասնակցող Բագրատուններն ը արաբներից գաւթած ամրոցներին կարող էին տիրել ոչ որպէս լիիրաւ տիրակալներ. նրանք կայսրերի «ծառաններն» էին, «բարեկամը», այսինքն՝ նրա հովանաւորութիւնը եւ գերադասութիւնը ընդունող հպատակներ։ Նրանք երդումով պարտաւորուել էին, որ կը կռուեն կայսրութեան թշնամիների դէմ եւ իրրեւ հատուցում դրա դիմաց տիրում էին նուաճուած ամրոցներին, բայց ոչ որպէս լիիրաւ տէրեր։

Աշոտ Կիւրապաղատի եղբայր Մագիստրոս Բագրատը եւ վերջինիս որդի Ատրներսեհ Մագիստրոսը (յետագայում՝ նաեւ Կիւրապաղատ), ժ. դարի կէսերին, սկսած 940ականներից, կռուելով արաբների դէմ,

մտել էին նաեւ Տայք նահանգը եւ այնտեղ հիմնել իշխանութիւն, որը պատմագիտութեան մէջ անուանում են «կիւրապաղատութիւն»:

Տայքում արաբների դէմ մղուած կռիւների մանրամասները յայտնի չեն: Պարզ է, սակայն, որ դրանց մասնակցել են նաեւ Մամիկոնեան տան անդամները, որոնք մնացել էին Հայրենի նահանգում: Նրանցից Միրանածինը յիշատակում է Աշոտ կիւրապաղատի ազատ Զուրվանէլիին, որի անուան ճիշտ ձեւն է «Զորդվանէլ»՝ Մամիկոնեանների այն ճիւղի ներկայացուցիչ, որը կոչվեց «Զորդվանէլեան»՝ Հմայեակ Մամիկոնեանի յիշատակին կառուցած Զորդվանքի անունից[57]: Մամիկոնեաններից ներկայացուցիչներից էին նաեւ Տայքի վերջին կիւրապաղատ Դաւթի զօրավար Թոռնիկը եւ իշխանաց իշխան Զոջիկը[58]:

Տայքի Բագրատունեաց իշխանութիւնը կարճատեւ կեանք է ունեցել: Այստեղ իշխել են ընդամէնը չորս կառավարիչներ: Բացի վերը նշուած Բագրատ Մագիստրոսից եւ նրա որդի Ատրներսեհ կիւրապաղատից (մահ. 961), իշխել են նաեւ վերջիններս երկու որդիները՝ Բագրատ Իշխանաց Իշխանը (961-966) եւ Դաւիթ կիւրապաղատը (966-1000)[59]:

Տայքի Բագրատունեաց իշխանութիւնը չէր ընդգրկում նահանգի ամբողջ տարածքը: Նրա փոքր մասը (արեւելեան շրջանները) Բագրատուններին յաջողուեց կցել վրաց թագաւորութեանը արդէն 910ականներին. այդ երեւում է Ժ. դարի պատմիչ Ցովհաննէս Ե. Կաթողիկոս Դրասխանակերտցու (897-մօտ 929) մի հաղորդումից, որ հայոց Սմբատ Ա. թագաւորը՝ խուսափելով արաբ Ցուսուփ ամիրայի հետապնդումից, անցել էր վրաց Ատրներսեհ Բ. թագաւորին ենթակայ Տայքի սահմանները[60]: Տայքի երկու հատուածների սահմանը Ժ. դարի երկրորդ կէսին անցնում էր Բանակ-Օլթի գետերով[61]:

Տայքում Բագրատունիները իշխում էին այն իրաւունքով, որը նշուած էր կայսրեր Ռոմանոսի եւ Միրանածնի հրովարտակներում եւ գրի առնուած վերջիններս աշխատութեան մէջ, այն է՝ որպէս կայսրութեան «ծառաներ» եւ «բարեկամներ»: Բնական է, որ Բագրատունիները ձգտում էին Տայքում իրենց տիրութիւնը դարձնել ժառանգական: Այդ է պատճառը, որ Դաւիթ կիւրապաղատը 937ին միացաւ բիւզանդական փոքրասիական ազնուականութեան ներկայացուցիչ, Հայազգի Վարդ Փոկասի ապստամբութեանը, որը ապստամբել էր կայսր Վասիլ Բ.ի (976-1025) դէմ: Նա յոյս ունէր, որ Փոկասի յաղթանակի եւ կայսերական գահը գրաւելու դէպքում նրանից կը ստանայ ժառանգական

իշխանութեան ճանաչում: Բայց Փոկասը պարտուեց եւ Վասիլը մտադիր էր խիստ պատժել բոլոր իր հակառակորդներին, այդ թւում եւ Դաւիթին: Դաւիթը, ստիպուած, ներում խնդրեց, խոստացաւ հպատակութիւն եւ կայսեր պահանջով իր հողերը կտակեց կայսրութեանը[62]:

1000ին Դաւիթը մահացաւ եւ Տայքի իշխանութիւնը միացուեց կայսրութեանը: Նախկին իշխանութիւնը վերափոխուեց բիւզանդական բանակաթեմի: Նրան կցուեցին նաեւ Հարեւան Կղարջքի շրջանները, իսկ թեմը կոչուեց «Իբերիա»[63]: Այս անունը արդիւնք էր այն իրողութեանը, որ Տայքի Բագրատունիները, մտնելով այս նահանգը Վրաստանից, տեղում պաշտօնական լեզուն դարձրել էին վրացերէնը, չնայած եկեղեցական արարողութիւնները դեռեւս կատարւում էին վրացերէն եւ հայերէն:

Բիւզանդական իշխանութիւնը Տայքում տեւեց մինչեւ ԺԱ. դարի կէսերը: 1071ին կայսրութիւնը Մանազկերտի ճակատամարտում ծանր պարտութիւն կրեց սելջուկներից եւ կորցրեց իր փոքրասիական թեմերի մեծ մասը:

Մամիկոնեաններին հինաւուրց տիրոյթ Տայքը անցաւ սելջուկների տիրապետութեան տակ: Դրա հետեւանքը եղաւ Տայքի հայ բնակչութեան մի մասի աստիճանական մահմեդականացումը: Այդ պրոցէսը առանձին ուսումնասիրութեան խնդիր է հանդիսանում:

ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1]Gr. Kapantsian, 'Khaiasa, kolubel armian' [Հայասա՝ Հայերի Օրրան], տե՛ս՝ նոյն, *Istoriko-lingvisticheskie raboti* [Պատմա-Լեզուաբանական Աշխատութիւններ], Երեւան, 1956, էջ 11-265, մասնաւորապէս՝ էջ 11-122:

[2]Նոյն, էջ 15-16, 63. *Հայ ժողովրդի Պատմութիւն*, հ. I, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1971, էջ 193: Տե՛ս նաեւ՝ այս յօդուածի ծան. 4 եւ 5:

[3]Տայքի վրացադաւան հայերն իրենց կենցաղով ու հաւատով հեռացել էին շրջապատի հայերից, սակայն լիարժէք վրացադաւան չէին, քանի որ շրջապատը մնում էր հայկական, եւ հայադաւան հայերն իրենց արմատներով ամուր կապուած էին ազգային նորմերին: Դաւանափոխ եղած հայերի «վրացադաւանութիւնը» լոկ Բիւզանդական Ուղղափառ Եկեղեցու ուղղութիւններից մէկն էր: Այսուհանդերձ, նրանք ինչ որ չափով հեռացել էին ազգային աւանդոյթներից եւ, հետեւաբար, աւելի դիւրին ընկան օտար ազդեցութեան տակ, առաւել եւս որովհետեւ դրանց թրքացումը պարտադրուեց բռնութեամբ:

[4]Տայքն ունէր 8 գաւառ՝ Կոզ, Բերդացփոր, Պարսիզացփոր, Ճակք, Բուղխա, Ոքաղէ, Ազորդացփոր եւ Արսեացփոր. տե՛ս՝ Ս. Տ. Երեմեան, *Հայաստանը Ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII Դարի Հայկական Քարտէզի Վերակազմութեան Ժամանակակից*

Քարտէզագրական Հիմքի Վրայ), Երեւան, Հայկական ՍՍՌ Գ.Ա. Հրատարակչութիւն, 1963, էջ 110-111, նաեւ՝ նոյն աշխատութեան կցուած քարտէզը։

[5] Նիկողայոս Ադոնց, Հայաստանը Յուստինիանոսի Դարաշրջանում. Քաղաքական կացութիւնը Լատ Նախարարական Կարգերի, ռուսերէնից թարգմանեցին Արշամ Մոնդկարեան եւ Էդուարդ Մոնդկարեան, Երեւան, «Հայաստան», 1987, էջ 261, 343, 447-48։

[6] Քաւառոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1914, էջ 63։ Մամիկոնեանների «միւս տունը» Տարօնն էր, որին ներկայ յօդուածում չենք անդրադառնում։

[7] Նոյն, էջ 92։

[8] Նոյն։

[9] Նոյն, էջ 169։

[10] Էրախանի բերդի մասին տե՛ս՝ Հ. Մկրտիչ Վ. Յովհաննէսեան, Հայաստանի Բերդերը, Վենետիկ, 1970, էջ 613-615։

[11] Հ. Հիւբշման, Հին Հայոց Տեղւոյ Անուանները. Հայոց Աշխարհին Պատմական Տեղագրութեան Մասին Ուսումնասիրութիւններով, Թարգմանեց Հ. Բ. Պիլէզիկճեան, Ազգային Մատենադարան, ՃԳ., Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1907, էջ 244. Երեմեան, էջ 53։

[12] Երեմեան, էջ 54։

[13] Յակոբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 17։ Տե՛ս նաեւ՝ Մանր Ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ., կազմեց Վ. Ա. Յակոբեան, հատոր II, Երեւան, Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն, 1956, էջ 553։

[14] Հ. Ղեւոնդ Վ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1856, էջ 39։ Երեմեանը նոյնպէս Տայոց Քարը համարում է Տայքի հնագոյն կենտրոն. տե՛ս՝ Երեմեան, էջ 84։

[15] Հ. Ղեւոնդ Վ. Ալիշան, Հայապատում. Պատմիչք եւ Պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901, էջ 227-228։ Տե՛ս նաեւ՝ Avetis Sanjian, 'Anastas Vardapet's List of Armenian Monasteries in Seventh-Century Jerusalem: A Critical Examination', *Le Muséon*, tome LXXXII, 3-4 (1969), pp. 265-292։

[16] Հ. Ղեւոնդ Վ. Ալիշան, Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 430-431. Յովհաննէս Եպս. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի եւ Հինգ Գաւառացն Այրարատ, Հա. Բ., Էջմիածին, 1842, էջ 59։

[17] Օրինակ, Սեբէոսի մօտ յիշատակուած է Սմբատ Բագրատունու (Մոսրով Շումի) տան «Հաւատարիմ եւ կամակատար» Մխիթու Դիմաքսեանը. տե՛ս՝ Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրութեամբ Գ. Վ. Աբգարեանի, Երեւան, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն, 1978, էջ 99։

[18] Ցաւոնի չէ, մանաւանդ պապէս, որտեղ էին գտնւում «այլ» Դիմաքսեանների տիրոյթները։

[19] Ադոնց, էջ 484։

[20] Մամիկոնեանների ծագման մասին տե՛ս՝ Ռաֆայէլ Մաթեւոսեան, «Մովսէս Խորենացու Վկայութիւնները Մամիկոնեան-Խաղրակեան Տոհմի Մասին», Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հ. ԺԹ., 1999, էջ 91-104։

[21] *Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 108-109։*

[22] *Յակոբ Մանանդեան, Երկեր, Ա., Երեւան, Հայկական ՍՍՀ Գ.Ա. Հրատարակչութիւն, 1971, էջ 598։*

[23] *Համմա. Երեմեան, էջ 110 եւ համապատասխան քարտէզը։*

[24] *Ադոնց, էջ 37։*

[25] *Նոյն, էջ 252,260-261։*

[26] *Եզիշէի վասն վարդանայ եւ Հայոց Պատերազմին, ի լոյս ածեալ բազդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երեւան, Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն, 1957, էջ 126-127. Ղազար Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1907, էջ 157-159։ Համեմատ Մամիկոնեանը Հայ եկեղեցու կողմից դասուեց սրբերի շարքը։ Նրա նահատակութեան տեղում կառուցուեց եկեղեցի եւ հիմնուեց միաբանութիւն, որը աւելի ուշ կոչուեց «Ջորդվանք» (նոյա եկեղեցի)։ Ամէմ Թուրքերէնով կոչւում է «Դորթ-Քիլիսէ». տե՛ս՝ Հայ ժողովրդի Պատմութիւն, հ. II, 1984, էջ 188, ծան. 53։*

[27] *Փարպեցի, էջ 242։*

[28] *Նոյն, էջ 267,299։*

[29] *Նոյն, էջ 320։*

[30] *Նոյն, էջ 352։*

[31] *Սեբէոս, էջ 84։*

[32] *Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Ղուկասեան Մատենադարան, Ե., Թիֆլիս, 1912, էջ 68։*

[33] *Սեբէոս, էջ 168. Դրասխանակերտցի, էջ 87. Առաքելոտ Տարօնեցւոյ Առաքելան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 89։ Ներսէսի գործունէութեան մասին տե՛ս նաեւ՝ այս թղթածրի «Եկեղեցական Դրութիւնը Տայքում» բաժնում։*

[34] *Սեբէոս, էջ 169։*

[35] *Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի Վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 26. Առաքել, էջ 124։*

[36] *Ղեւոնդ, էջ 122-123։*

[37] *Նոյն, էջ 123-124։*

[38] *Հ. Ներսէս Վ. Ակինեան, «Թոռնիկեանց Ձեռագրութիւնը», Մատենագրական Հետազօտութիւններ, հատոր Դ., Ազգային Մատենադարան, Ձեռ., Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1938, էջ 49-88։*

[39] *Ուխտանէսի աշխատութեան համապատասխան գլուխը կոչւում է «Յաղագս եպիսկոպոսաց՝ Որք Ընկալան Աթոռ Ի Տեղիս Տեղիս Ի Սրբոյն Գրիգորէ Ի յԻւրաքանչիւր Գահս»։ Այստեղ նշուած են բոլոր 30 աթոռները, որոնց թւում «երրորդն՝ Տայոց եպիսկոպոսն». տե՛ս՝ Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 100։*

[40] *Փաւստոս, էջ 273։*

[41] *Փարպեցի, էջ 91. Եզիշէ, էջ 37։*

[42] *Ղազար Փարպեցի, էջ 203, 232։*

[43] *Նոյն, էջ 241։*

[44] *Գիրք Թղթոց*, Թիֆլիս, 1901, էջ 41։

[45] *Գիրք Թղթոց*, էջ 81- *Մովսէսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Ազուանից Աչխարհի, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին*, Մոսկվա, 1860, էջ 95։

[46] *Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում. Հայ Ուղղափառ Եկեղեցւոյ Անցքերը Սկիզբէն Մինչեւ Մեր Օրերը Ցարակից Ազգային Պարագաներով Պատմուած, մաս առաջին*, կ. Պոլիս, Հրատարակութիւն Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1912, *միւնակ* 577-579, 649-650։

[47] Հրաչ Բարթիկեան, «Narratio de rebus Armeniae» *Ցունարէն Թարգմանութեամբ Մեզ Հասած Մի Հայ Քաղկեդոնական Սկզբնաղբիւր*», *Բանբեր Մատենադարանի*, հ. 6, 1962, էջ 467։ *Մէջբերման մէջ խօսքը Աբրահամ Ա. Աղբաթանեցի* (607-մօտ 615) *կաթողիկոսի մասին է*։

[48] *Գիրք Թղթոց*, էջ 223։

[49] *Մանրամասն տե՛ս՝* Հ. Պօղոս Անանեան, «Փոտ Պատրիարքի Թղթակցութիւնը Հայոց Հետ», *Բազմավէպ*, ՃԽԶ. տարի, Թիւ 1-4, 1988, էջ 7-39 եւ ՃԽԷ. տարի, Թիւ 1-4, 1989, էջ 37-63։

[50] *Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի*, Վենետիկ, 1862, էջ 82։ *Տե՛ս նաեւ՝ Ասողիկ*, էջ 158. *Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանեան*, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, 1961, էջ 80. *Գիրք Թղթոց*, էջ 283-294։

[51] Լէո, *Երկերի Ժողովածու, երկրորդ հատոր*, Երեւան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1967, էջ 460. Աշոտ Ցովհաննիսեան, *Դրուագներ Հայ Ազատագրական Մտքի Պատմութեան, Գիրք առաջին*, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, 1957, էջ 485։

[52] Ալիշան, *Հայապատում*, էջ 472, ծանօթ. 3։ *Տայքի բնակչութեան դաւանանքին մենք կ՝անդրադառնանք առանձին ծոդուածով*։

[53] Վարդան, էջ 76։ *Այս հաղորդումից կարելի է եզրակացնել, որ արաբներին յաջողուել էր գրաւել Տայքի որոշ մասը։ Ամենայն հաւանականութեամբ դա պէտք է տեղի ունեցար Ը. դարի վերջին քառորդի ընթացքում, Մամիկոնեաններին տան քայքայումից յետոյ։ Մեզ պատմիչների մօտ այդ մասին տեղեկութիւններ չկան*։

[54] *Նոյն*, էջ 76-77։

[55] *Կոստանդին Միրանածին. Թարգմանութիւն բնագրից, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Հրաչ Բարթիկեանի, Օտար Աղբիւրները Հայաստանի Եւ Հայերի Մասին, 6, Բիւզանդական աղբիւրներ, Բ.*, Երեւան, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն, 1970, էջ 15-18։

[56] *Նոյն*։

[57] *Տե՛ս.* ծանօթ. 26։

[58] *Ակինեան*, էջ 49-76։ *Տե՛ս նաեւ՝* N. Adontz, *Études byzantino-arméniennes*, Lisbonne, 1965, pp. 299-310։

[59] *Տայքի Բագրատունեաց ճիւղի քաղորդականութիւնը պարզուում է Միրանածնի տոյն ծոդուածում բերուած տեղեկութիւններից եւ վրաց ԺԱ. դարի պատմիչ Դաւթի որդի Սմբատի տուեալներից. տե՛ս՝* «Քարթլիի Մատեան», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, Թիւ 9 (561), Սեպտեմբեր 1989, էջ 60-80 եւ Թիւ 11 (563), Նոյեմբեր 1989, էջ 80-96։

[80] Դրասխանակերտցի, էջ 185։

[81] Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Ատլաս, Երեւան-Մոսկուա, 1961, էջ 105. «Բագրատունեաց Թագաւորութիւնը IX Դ. վերջին եւ X Դ. Առաջին կէսին», Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր 2, Երեւան, 1976, էջ 200-201ի ներդիր։

[82] Ասողիկ, էջ 192-93, 257. Imperator Vasilii Bolgaroboitsa. Izvlecheniia iz letopisi Iakhi Antiokhiiskogo [Կայսր Վասիլ Բուլղարասպան. Քաղուածքներ Եահիա Անտիոքացու Տարեգրութիւնից], հրատարակութիւն եւ թարգմանութիւն Բարոն Վ. Ռոզէնի, Սանկտ Պետերբուրգ, 1883, էջ 27։ Տե՛ս նաեւ՝ Հայ ժողովրդի Պատմութիւն, հ. III, 1976, էջ 109, 110, 128. Հ. Մեսրոպ Ճանաշեան, Դաւիթ Կիւրապաղատ (Պատմական Ուսումնասիրութիւն), Հայագիտական Մատենաշար «Բազմավէպ», 2, Վենետիկ, 1972։

[83] Հայ ժողովրդի Պատմութիւն, հ. III, էջ 429 եւ նրանում նշուած գրականութիւնը։ Տե՛ս նաեւ՝ V. Arutiunova-Fidanian, Armiane-khalkedoniti na vostochnikh granitsakh Vizantiiskoi imperii [Հայ-Քաղկեդոնականները Բիւզանդական կայսրութեան Արեւելեան Սահմանների վրայ], Երեւան, 1980։

A REVIEW OF POLITICAL EVENTS IN TAIK (5th-10th cc.)
(Summary)

RAFAYEL MATEVOSIAN

The article outlines the political events from the 5th to 10th centuries AD that affected Taik, one of the 15 provinces of ancient Armenia. The province was originally a fiefdom of the Mamikonians, a distinguished Armenian feudal clan. Because of its strategic location, Taik played a pivotal role during the liberation wars that the Armenians waged against the Persian Sasanids and later against the Arab Caliphate in the 5-8th centuries. In the 10th century another Armenian feudal family, the Bagratunis, established a principality in Taik. The article expounds the details of the emergence of this principality, its political status and the nature of its relations with the Byzantine Empire. This part of Matevosian's study is based on a thorough analysis of Byzantine Emperor Constantine VII Porphyrogenitus's *De administrando imperio*. The Byzantines captured Taik in the year 1000.

ՅԱԻԵԼԵԱԼ ՓԱՍՏԱՐԿՆԵՐ՝ ԿԻԼԻԿԻՈՑ ՀԱՅՈՑ ՈՍԿԵԴՐԱՄՆԵՐՈՒ ՎԱՒԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

ԵՂԻԱ ՆԵՐՍԷՍԵԱՆ

Կիլիկիոյ հայոց ոսկեդրամներու վաւերականութեան խնդիրը լուրջ հարցումներ ստեղծած է: Անցեալին, անոնց վաւերականութեան վերաբերեալ որոշ ապացոյցներ հաւաքուած են: Այս խնդրով զբաղած ու քննութիւններ կատարած են Բրիտանական Թանգարանը, ինչպէս նաեւ անհատ դրամագէտներ Փոլ Բալոգ, Զարեհ Պտուկեան, Կուսթաւ Շլումբերժէ, սոյն յօդուածին հեղինակը, եւլն.[1]:

Հայր Կղեմէս Սիպիլեանի, Զարեհ Պտուկեանի եւ սոյն յօդուածին հեղինակի եզրակացութիւնն այն է, թէ այս ոսկեդրամները կոխուած են իբրեւ յուշադրամներ, դրուագուած՝ յիշատակելու որոշ դէպք մը· կամ՝ թագաւորին կողմէ ընծայուելիք յուշանուէր մը եղած են քան՝ թողարկուած արծաթ դրամներու նման շրջանառութեան թէ վաճառականական ձեռնարկներու ծառայող: Հետեւաբար, բոլորն ալ կը պատչաճին Կիլիկեան Հայաստանի դրամագիտութեան կառոյցին:

Մարդ կը մղուի ենթադրելու, թէ ոսկեայ յուշադրամ մը պէտք է ըլլայ սեփականութիւնը չափազանց բարձր ու եզակի պաշտօնակատարի մը, կամ ալ պէտք է պահպանուի յատուկ շէնքի մը, ինչպէս՝ արքայական պալատի, կաթողիկոսարանի կամ ալ թանգարանի մը մէջ: Ուստի, երբ երկիր մը գրաւուի թշնամի բանակի կողմէ, նման շէնքերը պիտի ըլլան կողոպուտի առաջին թիրախները:

Լեւոն Ա. (1198-1219) թագաւորի ոսկեդրամներու՝ իբրեւ պատերազմական աւար Եգիպտոս տարուիլը փաստելէ առաջ, համառօտակի քննենք Կիլիկիոյ վրայ մամլուքներու[2] *կատարած բոլոր յարձակումներն ու պատերազմները:*

ՄԱՄԼՈՒՔՆԵՐՈՒ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ ԿԻԼԻԿԻՈՑ ՎՐԱՑ (1266-1375)

Հեթում Ա. (1226-1270)

Եգիպտոսի մամլուք Սուլթան Պիպարս Ա. (1260-1277) Կիլիկիոյ վրայ յարձակած է 1266ին: Հեթում Կիլիկիայէն մեկնած ըլլալով, իր երկու որդիները՝ Լեւոն եւ Թորոս, աճապարանքով բանակ մը կազմած են թշնամիին դէմ: Պատերազմի ընթացքին, Թորոս սպաննուած է, իսկ Լեւոն՝ գերի ինկած մամլուքներուն ձեռքը (24 Օգոստոս 1266): Մամլուքները այրած են Սիս մայրաքաղաքի տաճարը, կողոպտած եւ աւե-

րած են երկիրը։ Հեթում՝ հարկադրուած, չատ ծանր հաշտութիւն մը կնքած է սուլթանին հետ, եւ Լեւոն՝ ազատ արձակուած[3]։

Լեւոն Բ. (1270-1289)

1274ին, առանց որեւէ պատրուակի, Պիպարս մեծ բանակով մը յանկարծակի յարձակած է Կիլիկիոյ վրայ։ Մամլուքները գրաւած են Մամիսթրան (Միսիս) եւ ժողովուրդը սուրէ անցուցած։ Ըստ հայ պատմաբաններու, Սիս մայրաքաղաքը դիմադրած է հերոսաբար եւ ամբողջովին երբեք չէ յանձնուած։ Գլխաւոր պետական դրամահատարանը Սիսի մէջ էր։ Երբ Տարսոն գրաւուած է, հոն գտնուող թագաւորական պալատն ու Ս. Սոֆիա տաճարը կողոպտուած եւ ապա հրկիզուած են, պետական գանձատունը՝ կողոպտուած, տասնհինգ հազար մարդ՝ սուրէ անցուած եւ տասը հազար մարդ՝ Եգիպտոս գերեվարուած։ Այս նաւահանգիստը գրաւուած է առանց դիմադրութեան եւ ամբողջ հայ ու ֆրանկ բնակչութիւնը՝ ջարդուած։

Մոնղոլ իշխաններէն Մանկու-Թիմուր 50,000 հոգինոց բանակի մը գլուխը անցած, մտած է Սիւրիա, ճակատելու Եգիպտոսի սուլթանին դէմ, Հոմսի դաշտերուն մէջ, 1281ին։ Լեւոն, հաւատարիմ մնալով մոնղոլներու հետ իր դաշինքին, 25,000 զինուորներով միացած է մամլուքներու դէմ։ Հայ ու մոնղոլ դաշնակիցները պարտուած են եւ յաղթական թշնամի բանակը մտած է Կիլիկիա։ 6 Յունիս 1285ին, Լեւոն ստիպուած եղած է ընդունիլ եւ ստորագրել խաղաղութեան դաշինքի պայմանները՝, որոնք չափազանց ծանր եւ նուաստացուցիչ էին։

Հեթում Բ. (1289-1293, 1295-1296, 1299-1305), Թորոս (1293-1295), Սմբատ (1296-1298), Կոստանդին Ա. (1298-1299), Լեւոն Գ. (1301-1307)

Լեւոն Բ.ի հինգ որդիները՝ Հեթում, Թորոս, Սմբատ, Կոստանդին եւ Օշին նստած են Հայկական Կիլիկիոյ գահին վրայ։ Հեթում Բ. յաջորդած է Լեւոն Բ.ին։ Իր ընդմիջուած երեք գահակալութեանց շրջանները լի են ներքին ու արտաքին վէճերով ու պայքարներով։

1292ի գարնան, Եգիպտոսի ալ-Աշրաֆ Սալահ ալ-Տին Խալիլ (1290-1293) մամլուք սուլթանը արշաւած է Հռոմկլայ, որ Հայաստանեաց Առաքելական Եկեղեցւոյ կաթողիկոսանիստ քաղաքն էր։ Բերդն ու մէջի ժողովուրդը դիւցազնաբար դիմադրած են երեսուներեք օր։ Ապա, վանականներու մեծ մասը սպաննուած, իսկ Ստեփանոս Դ. Կաթողիկոսը գերեվարուած է Եգիպտոս։ Եկեղեցւոյ թանկագին անօթներն ու սրբութիւնները կողոպտուած են եւ նոյնպէս՝ Եգիպտոս տարուած։

1293 Մայիսին մամլուքները դարձեալ արշաւած են Կիլիկիա։ Հեթում Բ. հարկադրուած բանակցած ու խաղաղութեան դաշինք կնքած

է, գիջելով իր երկրի արեւելեան կողմէն բազմաթիւ բերդեր։ Մամլուքները վերադարձուցած են գերիներուն մէկ մասը, եկեղեցական թանկարժէք անօթներն ու մասունքները։

1298ին, ալ-Մանսուր Հուսամ ալ-Տին Լաճին (1296-1299) սուլթանի իշխանութեան շրջանին[5], եգիպտացիք, օգտուելով հայոց ներքին չփոթէն, Կիլիկիա ներխուժած են ու գրաւած տասնմէկ բերդեր, աւերած են երկիրը եւ կողոպտած զայն։ Թշնամի յաղթական բանակը մնացած է այնտեղ՝ մինչեւ հայոց դաշնակից մոնղոլ բանակի օգնութեան հասնիլը։

1299ին, Հեթում Բ. 5,000 զինուորներով օգնելով իլխան գօրավար Ղազան Խանին, եգիպտացի մամլուքներուն վրայ մեծ յաղթանակ մը տարած է Սիւրիոյ մէջ, Հոմսի մօտ։ Հեթում կրցած է վերատիրանալ Թէլ-Համտունին եւ այլ հողերու, զորս Կոստանդին Ա. կորսնցուցած էր։ Սակայն Ղազան Խան չուտով ձգած եւ իր երկիրը քաշուած է։ Մամլուքները վերագրաւած են Սիւրիան։ Երկրորդ եւ երրորդ ճակատամարտերը տեղի ունեցած են 1301ին եւ 1303ին. հայ ու մոնղոլ բանակները ճգմուած են Դամասկոսի մօտ։ Մամլուքները մի քանի անգամ խուժած են Կիլիկիոյ սահմանամերձ շրջանները։ 1304ին մոնղոլները իսլամութիւնը ընդունած են։ Երբեմնի ոխերիմ թշնամի արաբներն ու մոնղոլները հիմա դաշնակիցներու վերածուած են, որմէ հայ ժողովուրդը աւելի պիտի տուժէր։

Օշին (1308-1320)

Ալ-Նասիր ալ-Տին Մուհամմադ (1293-1294, 1299-1309, 1310-1341), մամլուք սուլթանը, 20,000 եգիպտացի զինուորներով եւ Գոնիայի թիւրքերուն հետ դաշնակցելով, Կիլիկիա յարձակած է ու յառաջացած մինչեւ Սիս։ Այասը առանց դիմադրութեան ինկած է անոնց ձեռքը։ 1320 Սեպտեմբերին, Օշին Պայլը եւ թագաւորին եղբայրը՝ Կոստանդին սպարապետը հայ զօրագունդերով շրջապատած են թշնամիները Այաս նաւահանգիստին մէջ, ջարդած զանոնք, իսկ մնացածները վտարած են Կիլիկիայէն դուրս[6]։

Լեւոն Դ. (1320-1342)

1322ին, ալ-Նասիր ալ-Տին Մուհամմադ կազմած է դաշնակցութիւն մը մամլուքներու, թաթարներու, եւ թուրք խաչնարածներու հետ, եւ յարձակելով Կիլիկիա, ստիպած է Լեւոն Դ. թագաւորը ստորագրել խաղաղութեան դաշինք մը՝ տասնհինգ տարուան համար։ Դաշինքին նուաստացուցիչ պայմաններն էին. վճարել տարեկան 1,200,000 թագուորին իբրեւ տուրք, ինչպէս նաեւ՝ Այասի նաւահանգիստի եկամուտին կէսը, աղահանքերուն եկամուտին կէսը, Եգիպտոսին յանձնել՝

ձիհուն գետի արեւելեան կողմի բոլոր հողերը։ Իբրեւ պատերազմական տուգանք տրուած Կիլիկիոյ արծաթեայ Հայ դրամները կրկնադրոշմուեցան եւ մամլուքներու կողմէ շրջանառութեան մէջ դրուեցան որպէս օրինաւոր իսլամական դրամներ[7]։

1331ին ալ-Նասիր ալ-Դին յարձակած է Կիլիկիա, աւերած՝ քաղաքներ ու գիւղեր, հետը տարած բազմաթիւ գերի ու պատերազմական աւար[8]։

Կոստանդին Գ. (1344-1363)

Կոստանդինի թագաւորութեան շրջանին Այաս նաւահանգիստը ինկած էր մամլուքներուն ձեռքը եւ կացութիւնը օրէ օր աւելի յուսահատական կը դառնար։ Շնորհիւ Հռոդոսի կարգապետ Դիէօդոնէ դը Գոզոնի ռազմական աջակցութեան, Կոստանդին յաջողած է վերագրաւել Այասը (1347), բայց յաջորդ տարի՝ վերջնականապէս կորսնցուցած զայն։

1355ին եգիպտացի մամլուքները կը ներխուժեն Կիլիկիա։ Անոնք կը գրաւեն Տարսոն եւ Ատանա քաղաքները եւ մեծ աւարով կը վերադառնան Սիւրիա։

1360ին, Եգիպտոսի սուլթան Մելիք ալ-Նասիր ալ-Դին Հասան (1347-1351, 1354-1361) արշաւած է Կիլիկիա, տիրացած է երկրի հարաւային մասին, ու հետը տարած է մեծաքանակ աւար եւ հարստութիւն։ Պտուկեան կը յիշէ, թէ երբ մամլուքները 1360ին Տարսոն քաղաքը գրաւեցին, տեղւոյն դրամահատարանը գործածեցին եւ իսլամական դրամ կոխեցին Տարսոն անուամբ[9]։

Լեւոն Ե. (1374-1375)

Միացեալ թրքական եւ եգիպտական բանակ մը յարձակած է Սիսի վրայ։ Այն ժամանակ ալ-Աշրաֆ Նասիր ալ-Դին Շապան Բ. Եգիպտոսի սուլթանն էր։ Սիս քաղաքի բերդը պաշարուած է 30,000է աւելի մամլուք զինուորներէ եւ Լեւոն վիրաւորուած է։ 14 Ապրիլ 1375ին, Լեւոն, տարիէ մը պակաս իշխելէ յետոյ, յանձնուած է թշնամիին երբ եգիպտական բանակի հրամանատարը իրեն, իր ընտանիքին եւ իր հետեւորդներուն ազատութիւն խոստացած էր։ Այսպիսով՝ Կիլիկիոյ միջնադարեան Հայ պետականութիւնը, որ գոյատեւած էր 295 տարի, աւելի երկար քան որեւէ խաչակրաց քրիստոնեայ այլ պետութիւն, կործանած ու վերջացած է ի սպառ։

ՊԱՏՄԱԿԱՆ ԴԷՊՔԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Մամլուք Պիպարսի նպատակը շատ յստակ էր՝ ջնջել խաչակիր իշխանութիւնները Միջերկրականի արեւելեան ծովեզերքէն եւ ձերբա-

զատիլ անոնցմէ: Իբրեւ քրիստոնեայ երկիր, Հայկական Կիլիկիան կը նկատուէր խաչակրութեան մէկ ճիւղաւորումը: 1268ին Անտիոք ինկած էր Պիպարսին ձեռքը: Անտիոքի եւ Թրիփոլիի իշխան Պոհեմոնտին ուղղուած նամակի մը մէջ, Պիպարս կը գրէ.

> *Մենք Անտիոքը սուրով առինք, Ռամատան ամսու չորրորդ օրը, Շաբաթ օրուայ չորրորդ ժամուն: ... Եթէ դուն միայն տեսած ըլլայիր քու ասպետներուդ կոխկրտուիլը մեր ձիերու սմբակներուն տակ, քու պալատներուդ կողոպուտը, քու գանձերուդ կշռուիլն ու բաժանումը, ձեր կիներուն գնուիլն եւ անոնց ծախուիլը, չորսը մէկ դինարի, եթէ դուն միայն ականատես ըլլայիր քու եկեղեցիներուդ քանդուելուն, քու խաչերուդ կոտրտուելուն, ձեր չքեղօրէն կազմուած Աւետարաններու արեւի տակ դրուած աճուրդին, ձեր ազնուականութեան գերեզմանները՝ կործանած, ձեր Սրբութիւն Սրբոցը՝ կոխկրտուած միւսիւլմաններով, եպիսկոպոսները, քահանաներն եւ սարկաւագները՝ զոհուած խորաններու վրայ, Հարուստ մարդիկ՝ վերածուած թշուառութեան եւ արքայական ազնուականներ՝ գերեվարուած, եթէ դուն տեսած ըլլայիր քու դահլիճներուդ հրկիզուիլը, քու մեհեաններուն բոցերուն մէջ նետուիլը (յետ այսու դատապարտուած յաւիտենական բոցերու), Պօղոսի եւ Կոզմայի եկեղեցիները՝ աւերուած ու քար ու քանդ եղած, այն ատեն դուն պիտի աղաղակէիր. «երանի՛ թէ Աստուած գիս փոշիի վերածած ըլլար»: Ոեւէ մէկը չէ փրկուած այս բանները քեզի պատմելու համար: Ուրեմն ես լուրերը քեզի կու տամ*[10]:

Ինչ որ Պիպարս սկսած է, իրմէ յետոյ, իր յաջորդները կրցած են վերջացնել՝ հարիւր տարուան ընթացքին ու այդ ալ՝ նուազագոյնս տասը յարձակումներով: Երբ Սիս ինկած է եգիպտացի մամլուքներուն ձեռքը, Գահիրէի մէջ, երեք օր տօնախմբութիւն եղած է: Սիս քաղաքի անառիկ միջնաբերդին իյնալը մամլուքներուն համար կը խորհրդանշէր Միջերկրական Ծովի արեւելեան ափին վրայ բոլոր քրիստոնեայ կամ խաչակիր թագաւորութիւններուն եւ իշխանութիւններուն վերջանալը:

Ցարձակումի մը ընթացքին, երբ յաղթական էին, Հայկական Կիլիկիոյ թշնամի մամլուք զինուորները սպաննեցին, կողոպտեցին, յափշտակեցին ու Եգիպտոս տարին՝ ինչ որ կրնային իրբեւ պատերազմական աւար ու գերի: Արաբ պատմաբան ալ-Մաքրիզիի համաձայն,

673 Շաբան ամսուն երրորդ օրը (1 Փետրուար 1275) Բիբարս Սուլթանը կը մեկնի դղեակէն եւ կը բռնէ Սիւրիոյ ճամբան. կը մտնէ Դամասկոս: Անկէ կը մեկնի՝ գօրքերու եւ արաբներու գլուխ անցած...: Գանճապետը եւ էմիրները, ցամաքէն յառաջանալով, կը գրաւեն Մասիքա քաղաքը եւ անոր բոլոր բնակիչները կը ջարդեն: Կը տանին ջորիներու վրայ բեռցուած նաւակներ, որոնք կը ծառայէին Ճիհուն եւ Նահր-Ասվար (Սեւ Գետ) գետերէն անցնելու համար, բայց պէտք չեն ունենար անոնց: Սուլթանը Նահր-Ասվաբ գետը անցնելէ վերջ՝ կը միանայ երկու էմիրներուն: Բանակը՝ հակառակ ճամբուն վրայ ներկայացուած բազմաթիւ արգելքներու, կը տիրէ լեռներուն, եւ այնտեղ կը ժողվէ գոմէշներու եւ ոչխարներու ահագին կողոպուտ մը: Սուլթանը Սիս կը մտնէ պատերազմական պատրաստութեամբ եւ այնտեղ հանդիսաւոր տօն կը կատարէ: Քաղաքը կը կողոպտէ: Թագաւորին պալատը կը քանդէ: Անոր արեւնակները եւ պարտէզները կ՝աւերէ: Դէպի Տաւրոսի կիրճերը կը ղրկէ ջոկատ մը, որ կը վերադառնայ թաթար գերիներով, որոնց մէջ կը գտնուէին մեծ թիւով կիներ եւ մանուկներ: Տարսոնէն բերել կու տայ 300 ձիեր եւ ջորիներ: Մովի կողմէն ղրկուած զօրքը կը տիրանայ բազմաթիւ նաւերու, որոնց նաւաստիները կը կոտորեն: Ուրիշ զօրախումբեր՝ լեռներու մէջ կատարուած արշաւանքներու ընթացքին՝ կը կոտորեն, գերի կ՝առնեն եւ մեծ քանակութեամբ աւար կը հաւաքեն: Ջոկատ մը կ՝ուղղուի Այաս: Քաղաքը լքուած գտնելով՝ զայն կը կողոպտեն ու բոցերու կը մատնեն. կը սպանուին շատ մարդիկ: Բնակիչներէն 2,000 Ֆրանկներ ու Հայեր՝ ապաստանած նաւերը, ծովամոյն կ՝ըլլան: Անհաշուելի հարստութիւններ կը հաւաքեն[11]:

Վերի մէջբերումը շատ պերճախօս է. վառ կերպով ցոյց կու տայ, թէ ինչ որ արժէք ունէր եւ կարելի էր փոխադրել՝ տարուած է Եգիպտոս: Իւրաքանչիւր ներխուժման ընթացքին, հայ պալատները, գանձատունները, զրամահատարանները, կաթողիկոսարանը, ինչպէս նաեւ մեծահարուստները կողոպտուած են ամբողջովին: Տրամաբանական է եզրակացնել, թէ կողոպուտի ընթացքին մամլուք զինուորները տարբերութիւն պիտի չդնէին հայ կամ օտար արծաթեայ եւ ոսկեայ դրամներուն միջեւ: Ոսկիէ եւ արծաթէ կտրուած դրամները բացառութիւն պիտի չըլլային: Պատմիչ Մեծն Վարդան Բարձրբերդցի կը յիշէ.

Քանզի սուլթանն Մսրայ Փնտխտար անուն խնդրէր զբերդան՝ զոր Տաթարին ուժումն առեալ էր Հայոց թագաւոր Հեթում: Եւ ՚ի չտալն, աւելի վասն երկեղի Տաթարին, բարկանայր յոյժ, եւ զօրս գումարէ բազում յոյժ, եւ առաքէ ՚ի ձեռն զօրագլխի ուրումն Սմլմօթ անուն յերկիրն Կիլիկեցւոց· որ եւ յանպատրաստից մտեալ յաշխարհն՝ առնու զՍիս մայր քաղաքաց՝ զարքայանիստն, այրէ զնա եկեղեցեօքն որ ՚ի նմա, եւ գտանէ զտունն գետնափոր գանձուցն, եւ առնու յոյժ բազում, զոր ՚ի միում ամանի լինել ասէին վեց հարիւր հազար կարմիր[12]:

Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան թանգարանին մէջ կան երկու ոսկեդրամներ: Մին Լեւոն Ա. թագաւորի կրկնառիւծ ոսկեայ դահեկան մըն է, միւսը՝ Հեթում-Լեւոնի: Ըստ Հայր Օգոստինոս Սեքուլեանի ազնուութեամբ մեզի տրամադրած տեղեկութեան, որ բերանացի իրեն հաղորդուած է վանքի աւագ միաբաններէն, երկու ոսկեդրամներն ալ 1850ականներուն Եգիպտոսէն բերուած են Վիեննայի Մխիթարեան թանգարանը[13]:

Հայկական ոսկեդրամներուն վերաբերեալ մեր յօդուածին տպուելէն ի վեր, յաւելեալ տեղեկութիւն մը յայտնաբերուած է Լեւոն Ա. թագաւորի ոսկեայ կէս դահեկանի մը մասին, որ գտնուեցաւ Լ. Ա. Ադամսի կողմէ[14]: 17 Նոյեմբեր 1995 թուագրուած նամակ մը, *ուղղուած Կլասիկալ Նիւմիսմաթիկ Գրուպ ընկերութեան եւ ստորագրուած Մունզէն ունտ Մէյտալլէն ընկերութեան (Պազէլ, Զուիցերիա) վարիչ Պեռնհարտ Շուլթի կողմէ, կը յայտնէ, թէ այս ոսկեդրամը գտնուեցաւ 1988ին յայտնաբերուած դրամագիւտի մը մէջ: Յայտնաբերումը կատարուած է Մերձաւոր Արեւելքի մէջ, հաւանաբար՝ Եգիպտոս, կամ ալ մամլուք հողերէն: Դրամագիւտերու վերաբերեալ ներկայ գաղտնապահութեան պատճառով, այս գանձին յայտնաբերման ճիշդ վայրը գաղտնի կը մնայ:*

Ըստ Շուլթի վերոյիշեալ նամակով տրամադրած մանրակրկիտ տեղեկութեան, իր դրամագիւտը պարունակած է ուրիշ հայ ոսկեայ կէս դահեկան մը եւս (2.22 գրամ), հատանուած՝ Ադամսի դրամին նոյն զոյգ կաղապարներով:

Պեռնհարտ Շուլթի այս դրամագիւտը պարունակած է 116 հատ ոսկեդրամ, որոնք դասաւորուած են հետեւեալ թագաւորներու անուններուն ներքեւ.

Ֆլորենս՝ Ֆլորիններ կտրուած ժամանակաշրջան՝ 1252-1303
Վենետիկ՝ 1 դուկատ վերագրուած Ճիովաննի Դանդոլոյի, 1280-1

5 դուկատոնոցներ՝ Պիետրօ Գրադընիգոյի, 1289-1311
Մեսինա՝ 1 դուկատ վերագրուած Ֆետերիկօ Արագոնի, 1296-1337
Ռումի սելջուկներ՝ դինարներ թուագրուած Հ. 673, 676 եւ 682 = Ց.Ք. 1283
Դրամագիւտի մնացածը՝ մամլուքներու դինարներ, ամենաուշը՝ հատանուած Գահիրէ, Հ.697 = Ց.Ք. 1297

Շուլթ վերոյիշեալ նամակը կը փակէ հետեւեալ պարբերութեամբ.

Այս տեղեկութիւնը պէտք է կցուի դրամին, որովհետեւ շատ կարեւոր է։ Ուրեմն ես կը համաձայնիմ, թէ դուն այս տեղեկութիւնը տաս դրամը գնողին, եթէ գնող մէկը ըլլայ, ինչպէս որ կը յուսամ։

Իր այլ մէկ նամակին մէջ, գրուած Պագէլէն 25 Յունիս 1999ին, Շուլթ կը գրէ իր դրամագիւտին մասին.

1988 Դեկտեմբերին, ես գնած են դրամագիւտ մը՝ [որ] ունեցած է 116 ոսկեդրամ, շատ հաւանաբար յայտնաբերուած Եգիպտոսի [մէջ] եւ պարունակած է 17 իտալական, 1 հայկական եւ 98 իսլամական դրամներ։ Ինծի ծախողը ըսաւ, թէ [դրամագիւտին մէջ] կար երկրորդ հայ ոսկեդրամ մը նոյն երեւոյթով եւ ծաներութեամբ, սակայն ինք պահել ուզեց իրեն յիշատակ, բայց ետքը ծախեց Ֆրանկ Սթըրնպըրկի։ Այն ատեն ես պատրաստեցի բոլոր դրամներուն լրիւ ցանկը։ Քանի որ դրամներուն մեծամասնութիւնը կրնան ճշգրտութեամբ թուարկուիլ, դրամագիւտի կարգադրումին վերջին սահմանն է Ց.Ք. 1298, ինչպէս որ կրնաս տեսնել ներփակուած ցանկէն։ Այս իրողութիւնը գիտնալ շատ կարեւոր է մէկէ աւելի պատճառներով։ Նախ, այս երկու հայ ոսկեդրամներու համար մենք վստահօրէն գիտենք սկզբնաղբիւրը եւ կասկած չի կրնար ըլլալ իրենց վաւերականութեան մասին։ Երկրորդ, այս երկու դրամները չափազանց լաւ վիճակի մէջ են, այնպէս ինչպէս որ էին իրենց հատանուած ատեն, եւ՝ կտրուած նոյն զոյգ կաղապարներէն։

Այս հայ ոսկեդրամները կրնան վերագրուիլ Լեւոն անունով թագաւորի մը, որ իշխած է 1298էն առաջ։ Վերջինս պէտք է ըլլայ կա՛մ Լեւոն Ա. կա՛մ ալ Լեւոն Բ.։ Եթէ հայ ոսկեդրամները հատանուած

ըլլային չրջանառութեան համար՝ արծաթ դրամներուն նման, մարդ՝ հիմնուած այս դրամագիւտին վրայ, պիտի որոշէր զանոնք յատկացնել Լեւոն Բ.-ին: Սակայն իրականութիւնը այդ չէ: Քանի որ հայ ոսկեդրամները դրուագրուած են իբրեւ յուշադրամներ, յիշատակելու որոշ դէպք մը եւ պատկերատիպն ալ նման է Լեւոն Ա.-ի դրամներու պատկերատիպին, մեր համեստ կարծիքն է, թէ այս գոյգ դրամները պէտք է վերագրուին Լեւոն Ա.-ին:

Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան գոյգ ոսկիներուն սկզբնաղբիւրն են Եգիպտոսը կամ մամլուք հողերը: Լեւոն Ա.-ի ոսկեայ կէս դահեկաններուն սկզբնաղբիւրը նոյնպէս Եգիպտոսն է կամ մամլուք հողերը: Մարդ միմիայն կրնայ եզրակացնել, թէ այս չափազանց հազուագիւտ դրամները տարուած են Եգիպտոս մամլուքներու կողմէ իբրեւ պատերազմական աւար: Դրամագիւտը հաւանաբար մամլուք հողամասին մէջ թաղուած՝ էր մամլուք ոսկեայ դինարներու հետ միատեղ, ամենաուշը թուագրուած Հ. 697/1297 կամ 1298 Ց.Ք.: Դրամագէտը միայն կրնայ ենթադրել, թէ գանձին պահուիլը կատարուած է մամլուք դինարին հատանումէն մէկ կամ երկու տարի ետք, որ կը համապատասխանէ Հայկական Կիլիկիոյ Կոստանդին Ա. թագաւորի գահակալութեան շրջանին: Դրամագէտին համար գանձին պահուելուն թուականը շատ կարեւոր է: Դրամագիւտի մը մէջի թուագրուած դրամները այս ուղղութեամբ շատ կարեւոր աղբիւր են: Դրամագէտին համար գանձին սկզբնաղբիւրը շատ իմաստալից է: Գանձին թուագրուած դրամներն ու սկզբնաղբիւրը միատեղ կը վերցնեն գաղտնիքներու շղարշը պատմութեան մութ էջերուն վրայէն: Անհաւանական չէ ենթադրել, թէ օրին մէկը «նոր» հայական դրամներ յայտնաբերուին Եգիպտոսէն կամ մամլուք հողերէն, ինչպէս որ յայտնաբերուեցաւ Կոստանդին Ա. թագաւորին չափազանց հազուագիւտ դրամը, աճուրդով ծախուած՝ Սլոքումի հաւաքածոյին մէջ[15]:

Երբ նկատի առնուի, թէ երկու ոսկեայ դրամներ մամլուքներու երկրէն ճամբորդեցին Վիեննա, թէ մամլուքներու հողերն են երկու ոսկեայ կէս դահեկաններու, ինչպէս նաեւ Կոստանդին Ա. թագաւորի հազուագիւտ արծաթեայ դրամի մը սկզբնաղբիւրը, դրամագէտ մը կրնայ միայն եզրակացնել, թէ այս հայ ոսկեդրամները Եգիպտոս տարուած են իբրեւ պատերազմական աւար եւ վաւերական ոսկեդրամներ են, կտրուած՝ իրենց տիրակալ թագաւորի իշխանութեան շրջանին:

[1] Ե. Թ. Ներսէսեան, «Հաշուեկշիռ Կիլիկիոյ Հայոց Ոսկեդրամներուն», տե՛ս՝ *Հայ Դրամագիտական Ուսումնասիրութիւններ*, (Լոս Անճելըս, 2000)՝ արտատպուած Համազգայն Հայագիտական Հանդէս, հ. ԺԸ՝, 1998, էջ 57-73էն։

[2] *Մամլուք բառը, արաբերէնէ թարգմանուած, կը նշանակէ ստացուածք։ Մամլուքները Եգիպտոսի մէջ առեւանգուած մանուկներու եւ պերճներու սերունդներէ բռնի մահմետականացած զինուորական դասակարգ մը կը կազմէին, որ երկիրը կը կառավարէր* (1250-1517)։ *Մամլուքներու ամփոփ պատմութեան համար տե՛ս՝* Paul Balog, 'A Brief Survey of Mamluk History', *The Coinage of the Mamluk Sultans of Egypt and Syria*, New York, 1964, pp. 5-44։ *Էջ 11ի մէջ Բալոգ ունի մամլուքներու պատմութեան վերաբերեալ համառօտ մատենագիտութիւն մը։*

[3] V. M. Kurkjian, *A History of Armenia*, New York, 1959, pp. 246-247. *Ժագ դը Մորգան, Հայ Ժողովուրդի Պատմութիւնը, Պոսթըն, Հրատարակութիւն «Հայրենիքի»*, 1947, էջ 267-268. Sirarpie Der Nersessian, 'The Kingdom of Cilician Armenia,' *տե՛ս՝* K. M. Setton (editor), *A History of the Crusades*, vol. II, Philadelphia, 1962, p. 654; Ani Atamian Bournoutian, 'Cilician Armenia,' *տե՛ս՝* Richard G. Hovannisian (ed.), *The Armenian People from Ancient to Modern Times*, vol. I: The Dynastic Periods: From Antiquity to the Fourteenth Century, New York: St. Martin's Press, 1997, p. 286. *Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիա, Պատմութեան Ինստիտուտ, Հայ Ժողովրդի Պատմութիւն, հատոր* III, *Երեւան, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն, 1976, էջ 708-714. Զաքէ Պ. Պուտկեան, Կիլիկեան Հայաստանի Դրամները (այսուհետեւ՝ ԿՀԴ), Վիեննա, 1963, էջ 12. Y. T. Nercessian, *Armenian Coins and Their Values* (*այսուհետեւ՝* ACV), Los Angeles, 1995, pp. 123-124։

[4] Al-Makrizi, *Histoire des sultans Mamlouks de l'Egypte*, vol. II, Paris, 1837-1845, *էջ* I, 201-212; Victor Langlois, *Le Trésor des Chartes d'Arménie, ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens*, Venise, 1863, *էջ* 217-231։

[5] *Հայ Ժողովրդի Պատմութիւն, հ.* III , *էջ* 763։

[6] Kurkjian, *էջ* 254-255. *Ժը Մորգան*, 278-279. Bournoutian, *էջ* 288. *Պուտկեան, ԿՀԴ, էջ* 16-17. Nercessian, ACV, *էջ* 155. Y. T. Nercessian, 'Angel on King Oshin Coronation Trams', *Armenian Numismatic Studies*, Los Angeles, 2000, pp. 399-407՝ *արտատպուած՝ Հայ Դրամագիտական Հանդէս, Ա. շրջան, հատոր ԻԳ., թիւ* 1, *Մարտ* 1997, *էջ* 13-18էն։

[7] Ե. Թ. Ներսէսեան, «Կիլիկեան Հայաստանի Արաբերէնով կրկնադրոշմուած Դրամները», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, հ. Ի.* (2000) , *էջ* 151-182։

[8] Kurkjian, *էջ* 255-257. *Ժը Մորգան*, 279-282. Bournoutian, *էջ* 288. *Պուտկեան, ԿՀԴ, էջ* 18. Nercessian, ACV, *էջ* 158.

[9] P. Z. Bedoukian, 'Medieval Armenian Coins', *տե՛ս՝ Selected Numismatic Studies*, Los Angeles, 1981, p. 243։

[10] Kurkjian, *էջ* 246-247, *ծանօթագրութիւն* †։

[11] Al-Makrizi, *հատոր* I, *Մաս* 2, *էջ* 123, *մէջբերուած՝ ժը Մորգան, էջ* 269-270։ *Սեւ Գետի արաբերէն անուան տարբեր ձեւերով՝ «Նահր-Ասվար» եւ «Նահր-Ասվաթ» տառադարձութիւնը օգտագործուած սկզբնաղբիւրէն է։*

[12] *Հաւաքաւմն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, Փարիս, 1908, էջ* 162։

[13] *Ներսէսեան, «Հաշուեկշիռ»։*

[14] Խորին շնորհակալութիւններ Պետհարտ Շուլթի, որ համբերութեամբ պատասխաններ մեր բոլոր հարցումներուն, եւ Լ. Ա. Ադամսին, որ մեզի արտօնութիւն տուաւ իր անուան գործածութեան համար ու մեզի արամադրեց վերոյիշեալ նամակին պատճէնը։

[15] Sotheby's, Auction, *The John J. Slocum Collection of Coins of the Crusades*, London, 6 and 7 March 1997, pp. 59-99, no. 530։ Ծուցակարգող պաշտօնեան, հիմնուելով հաւաքորդ Սլոքումի արխիւներուն վրայ, կիշած է թէ դրամը գտնուած է Գահիրէի մէջ 1963ին»։ Y. T. Nercessian, 'An Unpublished Tram of King Gosdantin I (1298-1299)', տե՛ս՝ *Armenian Numismatic Studies*, pp. 365-368, արտատպուած՝ *Հայ Դրամագիտական Հանդէս*, Ա. շրջան, հատոր Ի-., թիւ 3, Սեպտեմբեր 1998, էջ 35-37էն։

ADDITIONAL INFORMATION ON THE AUTHENTICITY OF CILICIAN ARMENIAN GOLD COINS (Summary)

Y. T. NERCESSIAN

The author supports the viewpoint expounded by numismatics Paul Balog, Paul Bedoukian, Gustave Schlumberger and experts at the British Museum that the gold coins from Cilician Armenia are authentic. He provides additional evidence in this regard. The article argues that these gold coins were struck as commemorative pieces to mark certain events or to be presented as royal gifts. They were stored customarily in the residences of dignitaries and in the palaces of rulers and high ranking clergy. These were the principal places that were later looted during the ten separate invasions by the Mamluk armies of Egypt into the land of Cilicia in the 13th and 14th centuries AD. Consequently, many gold coins from Cilician Armenia have been found in collections originating from Mamluk-era Egypt. One such hoard was buried on Mamluk territory, together with Mamluk gold dinars dating from not later than 1297 AD. It thus provides a likely burial date of not earlier than 1298, which corresponds to the reign of King Constantine I in Cilician Armenia.

ՀԱՅ-ԹԱԹԵՐԻ ՏԱՐԱԲԱՇԽՈՒԱԾՈՒԹԵԱՆ ՈՒ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

(Ժ.Ը. ԴԱՐԻ ՍԿԻԶԲ - Ժ.Թ. ԴԱՐԻ ՎԵՐՋ)

ԱՐՍԷՆ ՅԱԿՈԲԵԱՆ

Ժ.Ը. դարի սկզբին Հիւսիս-արեւելեան Այսրկովկասում, մասնաւորապէս Դերբենդի, Ղուբայի եւ Մուշկուրի շրջաններն ընդգրկող տարածքում յիշատակուող մի շարք բնակավայրերի վերաբերեալ ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ այդտեղ բնակւում էր առաւելապէս թաթախօս հայադաւան բնակչութիւն: Այս խումբը Ժ.Թ.-ի դարերում յիշատակւում էր «Հայ-թաթեր», «Թաթ հայեր», «Թաթախօս հայեր» կամ «Թաթ-լուսաւորչականներ» անունով:

Այս խմբի ծագումնաբանական հարցերը գիտութեան կողմից դեռեւս յստակ պարզաբանուած չեն, եւ այդ խնդրի վերաբերեալ արտայայտուած են տարբեր կարծիքներ: Որոշ մասնագէտներ, հիմք ընդունելով նրանց կողմից օգտագործուող թաթերէն լեզուն, կարծիք են յայտնել, որ այս խումբը ունի իրանական ծագում եւ յետագայում, ընդունելով հայադաւան քրիստոնէութիւնը, ձեռք է բերել հայկական ինքնութիւն[1]: Բացի այդ, օգտագործուող «Թաթ քրիստոնեաներ» կամ «Թաթ լուսաւորչականներ» տերմինը ինքնին ցուցում է խմբի էթնիկական առումով իրանական ծագման եւ ինքնութեան մասին[2]: Նշենք, որ որեւէ խմբի էթնիկական բնութագրման համար լեզուական գործօնը կարեւոր, բայց ոչ գլխաւոր պայման է եւ այն ոչ միշտ կարող է համընկնել էթնիկական ինքնութեանը, ծագմանը: Ըստ այլ տեսակէտների՝ այս խումբը ունի հայկական ծագում եւ յետագայում է դարձել թաթախօս. այս տեսակէտի համատեքստում չրջանառւում է «Թաթախօս հայեր» տերմինը[3]: Վերոնշեալ կարծիքները, սակայն, անհրաժեշտ աղբիւրագիտական կամ տեսական հիմնաւորում չունեն եւ չրջանառւում են որպէս վարկածներ[4]:

Առաջիմ մանրամասնօրէն չանդրադառնալով թաթախօս հայադաւան այս խմբի ծագումնաբանութեան եւ ինքնութեան խնդիրներին,

այս յօդուածով փորձ է արուում ի մի հաւաքել ԺԸ.-ԺԹ. դարերի տեղեկութիւնները նրանց տեղաբաշխուածութեան վերաբերեալ, մի խնդիր, որն առաւելապէս զուգորդուում է տեղահանութիւնների եւ տեղափոխութիւնների հետ:

1718ին յիշատակուում են Խաչմաս[5] եւ Նուգդի գիւղերը: Հետաքրքրական է մօտ 15 տուն հայ բնակչութիւն ունեցած Նուգդի գիւղի նկարագրութիւնը: Այն գերաններով եւ աւազով ամրացուած պարսպապով պաշտպանուած բնակավայր էր: Ունէր մի մուտք, որի դարպասները գիշերները փակում էին՝ աւազակներից պաշտպանուելու նպատակով[6]:

Մուշկուրի, Դերբենդի եւ Ղուբայի շրջանի մի շարք բնակավայրերի անունները (այդ թւում՝ Նուգդին) նշւում են նաեւ 1725ին: Այդ տարիները Արեւելեան Այսրկովկասում քաղաքական առումով խառը ժամանակաշրջան էին: Հակաիրանական ուղղուածութիւն ունեցող անջատողական շարժումները ուղեկցւում էին տարածքաշրջանում սիւննիզմի դիրքերի ամրապնդմամբ, շիա մահմեդականների, հայերի եւ հրեաների հալածանքներով[7]: Վերոյիշեալ գիւղերը յիշատակւում են այդ դէպքերի կապակցութեամբ:

Մարտիրոս Վարդապետի Դերբենդից վրացիների Վախթանգ Զ. (1716-24) թագաւորին գրած նամակում նկարագրւում է Մուշկուրի 12 «հայկական» անուանեալ, սակայն իրականում թաթախօս հայադաւան բնակչութիւն ունեցող, գիւղերի վիճակը եւ վերջինից օգնութիւն է խնդրւում[8]: Այդ գիւղերից էին՝ 1. Ղարաղուրթլու, 2. Մալախալիլ, 3. Նուկդի, 4. Փատարմեկ, 5. Վանամիր, 6. Մուսուրման Պարախում, 7. Ղարաջալու, 8. Արմանի Պարախում: Վարդապետը նշում է, որ «Մսկուրու եւ Շապրանու հայերը փախչում են» եւ, որ Փատարմեկի, Վանամիրի եւ Մուսուրման Պարախումի բնակիչները ապաստանել են Մալախալիլ եւ Նուկդի (Նուգդի) գիւղերում: Այստեղ են նաեւ Ղարաջալուի եւ Արմանի Պարախումի բնակիչները, որոնք «կէս ու կէս եկել են, էլի այս հայերի միջումն են»[9]: Նշւում է, որ «այն գեղերանք որ փախել են եկել ճ (100) տուն է, հալա շատ տուն կուկայ, թէ որ գեղս տէրութիւն անող լինի»: Փախստականների մի մասը յետագայում ռուսական հովանաւորութեան ներքոյ, վերադարձան իրենց բնակավայրերը: Հայ-Ռուսական Յարաբերութիւնները ԺԸ. Դարում ռուսերէն ժողովածուի ծանօթագրութիւնների մէջ նշւում է, որ Մուսուր-

ման Պարախումի բնակիչները հաւանաբար մահմեդական ադրբեջանցիներ են եղել, որի պատճառով էլ գիւղը կոչուել է Մուսուրման Պարախում՝ ի տարբերութիւն Արմանի Պարախումի, որտեղ բնակուել են քրիստոնեայ հայեր[10]: Փաստերը, սակայն, ցոյց են տալիս, որ ակտիւ մահմեդականացման գօտում ընկած Պարախում գիւղերում ընդհուպ մինչեւ ԺԸ. դարավերջը բնակուել է հայադաւան բնակչութիւն: Հայտարդէտ էթնիկական ու դաւանական նկարագիր ունեցող Արեւելեան Այսրկովկասի տարածքում հանդիպող էթնօդաւանական, բնակավայրերի բնակչութեան մասին տերմինները կարող են բազմիմաստ լինել եւ միշտ չէ որ արտայայտում են իրական բովանդակութիւնը: Այդ իսկ պատճառով այդ տերմիններն յաճախ յստակեցման կարիք ունեն: Վերոնշեալ երկու գիւղերը որոշ աղբիւրներում նշւում են նաեւ Մեծ եւ Փոքր Պարախում անուններով:

1797ին վերաբերուող հետաքրքիր տեղեկութիւններ է տալիս ԺԸ. դարավերջի եւրոպացի ճանապարհորդ Եան Պոտոցկին: Նա նշում է, որ Մուշկուրի հայերը խօսում էին թաթերէն: Թաթերէն էին խօսում նաեւ Շիրվանի երկրագործ հրեաները, որոնք սակայն իրենց միջեւ մի այլ լեզու էին գործածում: Ուշագրաւ է Պոտոցկու նշումը թէ իր տեղեկութիւնները նա վերցրել է մի հայից, որի թելադրութեամբ էլ ինքը միաժամանակ կազմել է թաթերէնի բառարան[11]:

Հայ-թաթերի բնակավայրերի յաջորդ յիշատակութիւնը 1796ի ռուսական դէպի Այսրկովկաս արշաւանքի կապակցութեամբ է, որ մեծ ազդեցութիւն եւ հետեւանքներ ունեցաւ նրանց ճակատագրի վրայ: Այդ ժամանակ, Յովսէփ Արքեպիսկոպոս Արղութեանը՝ Մուշկուրի եւ Դերբենդի 9 «հայկական» գիւղերի անունից, դիմում է ռուսական հրամանատարութեան եւ օգնութիւն ակնկալում՝ նշելով, որ այդ գիւղերը դեռեւս 1792ին հաւատարմութիւն են յայտնել Ռուսաստանին եւ որի հետեւանքով մահմեդական իշխանութիւնների կողմից ենթարկուում են ճնշումների ու հալածանքների: Արղութեանը խնդրում է այդ գիւղերի բնակիչներին տեղաւորել Ղուբա քաղաքում եւ նրանց անմիջապէս ենթարկել այստեղի ռուսական իշխանութեանը՝ ազատելով նախորի իշխանութիւնից: Դիմումում նկարագրուում է նաեւ Քիլվարի դրութիւնը եւ նշւում, որ տեղի բնակչութիւնը՝ շրջապատուած լինելով պարսիկներով[12], ենթարկուում է հալածանքների: Արղութեանը խնդրում է, որ նրանց վերջնական կործանումից փրկելու համար, քիլ-

վարցիներին եւ տարբեր վայրերում փոքր քանակութեամբ բնակուող հայերին թոյլ տալ գաղթել Դերբենդ կամ այլ հայկական գիւղեր[13]:

Արդուբեանը ռուսական հրամանատարութեանը ուղղուած մի այլ նամակում խնդրում է հնարաւորութեան սահմաններում լեզգիական իշխանութիւնների ճնշումներից պաշտպանել Մուշկուրի նահանգի Խաչմաս, Ղարաջալու, Մեծ եւ Փոքր Պարախում, Քիլվար, Ղարադուրթլու եւ Ազատօղլի, ինչպէս նաեւ Դերբենդի նահանգի Մուլախալիլ (Մոլլա-Խալիլ) եւ Նուգդի գիւղերը, որոնք նամակում յիշատակուում են իրենց տանուտէրերով եւ իւզբաշիներով[14]:

Ռուսաստանի կայսրուհի Եկատերինա Բ-ի (1762-1796) մահուան կապակցութեամբ, սակայն, վերոյիշեալ արշաւանքը դադարեցուեց եւ ռուսական զօրքերը վերադարձան: Ռուսական արշաւանքին ցոյց տուած աջակցութիւնը չ'լ աւելի բարդացրեց առանց այդ էլ բարդ քաղաքական, էթնիկական ու կրօնական միջավայրում գտնուող քրիստոնեայ այս խմբի յետագայ գոյութիւնը Ղուբայի, Մուշկուրի եւ Դերբենդի տարածքում: Արդուբեանի 1787ին կազմած ու ռուսական իշխանութիւններին ուղղած մի այլ փաստաթղթում նշուում է, որ ռուսական զօրքերի հեռանալուց յետոյ 9 հայկական գիւղերին կործանում է սպասուում. նա խնդրում է թոյլ տալ 500 ընտանիքների՝ 4000 հայ քրիստոնեաների, ռուսական զօրքերի հետ հեռանալ Ռուսաստան: Վերջիններս, ինչպէս նշուում է փաստաթղթում, միայն 3-4 նաւ էին խնդրում Ղզլար եւ Աստրախան հասնելու համար, որտեղ եւ իրենց կամքով պատրաստ էին տնօրինելու իրենց ճակատագիրը: Արդուբեանը աւելացնում է, որ բաւական է երկրագործներին, արհեստաւորներին, մետաքսագործներին ու խաղողագործներին ապահովել յարմար հողատարածքներով[15]:

Ինչպէս վերը բերուած փաստաթղթում է ասուած, հայերը փոքր քանակութեամբ ապրում էին նաեւ տուեալ տարածքի այլ բնակավայրերում: Սկզբնաղբիւրներում այդ մասին պահպանուել են որոշ տեղեկութիւններ: Օրինակ՝ ԺԸ. դարի սկզբում կալաչեար մահմեդական հանաբնակ գիւղում նշուում է մի քանի հայ ընտանիքների գոյութեան մասին[16]: Ըստ Պիոտր Բուտկովի՝ 1727ին Նիպարադի ուեզդում (գաւառում) կային Բեբէլի եւ Մեծ ու Փոքր Խաչմաս գիւղերը, որոնք ԺԸ. դարի վերջին ունէին 52 տուն հայ բնակչութիւն[17]: ԺԸ. դարի վերջում Հիւսիսային Կովկաս գաղթածների մէջ յիշատակուում են Ղուբայի շրջանի Ուլվար, Խաչնի, Սալիք, Ղասմքեանդ, Թալարի (ներքին եւ



Այս քարտէզը ներկայացնում է Հիսիս-Արեւելեան Այրքեջանի եւ Հարաւային Դաղստանի թաթական բնակավայրերն պատկերը: Քար
բնոյթուած են այս տարածաշրջանի մէջ մտնող, յօդուածում յիշատակուած բնակավայրերի մի մասը:

Քարտէզը վերցուած է Սերգէյ Դալթախչեանի «Մաղրաստացիների Թարեղեն Լեզուն» առնձնախօսութիւնից, որը պահում է Երեւանի Պե
Համալսարանի Գրադարանում:

Քարտէզը կազմուել է 1970ական թուականներին եւ համապատասխանում է այդ ժամանակաշրջանի տեղաբնութական ցանկին:

վերին), Դիխան կամ Օհանխան[18], ինչպէս նաեւ Դերբենդի շրջանի Պօղոսքեանդ[19] բնակավայրերի հայերը: Բանասէր Մակար Ծ. Վրդ. (յետագայում՝ Եպիսկոպոս) Բարխուտարեանցը նշում է, որ ԺԹ. դարի վերջին Ղուբայից հարաւ-արեւմուտք գտնուող Սպիք լեզգիաբնակ գիւղում դեռեւս պահպանուել էին աւերակ եկեղեցու հետքերը եւ հանգստարանը, իսկ գիւղի հայադաւան բնակիչները՝ անխախտ մնալով իրենց հաւատքին եւ մահմեդականների ճնշումներից ձանձրացած, գաղթել էին Ռուսաստան[20]: Այդ տարիներին գաղթել է նաեւ Թալաբի գիւղի (ներքին եւ վերին) 500 տուն բնակչութիւնը՝ 5 քահանաներով հանդերձ[21]:

Բարխուտարեանցը այդ տարածքի Բոստանչի եւ Վէյէմիւր գիւղերի մասին նշում է, որ նրանցում գերեզմանները թուագրուած են մինչեւ 1796 ու եզրակացնում, որ «երեւի թէ սոքա եւս գաղթած են Զուբովի ժամանակ»[22], այսինքն՝ 1796ին: Հնարաւոր է, որ Վէյէմիւր գիւղը 1725ին յիշատակուած Վանամիրն է:

Հայադաւան բնակչութիւն է եղել նաեւ Դերբենդի շրջանի Բիլիջի գիւղում: Այդ են վկայում ԺԹ. դարի վերջում գիւղում դեռեւս պահպանուած «Փօղոս բուլաղ» (Պօղոսի աղբիւր) անունը կրող հայկական գերեզմանատունը[23] եւ Ռոստոմ Բէկ Երգնկեանցի հաղորդած այն տեղեկութիւնը, ըստ որի Մոլլա-Խալիլ գիւղի մօտ գտնուող Սուրբ Գրիգորիսի մատուռը կառուցել են Մոլլա-Խալիլի եւ Բիլիջիի բնակիչները[24]:

Այդ տարածքաշրջանում, անշուշտ, կար եւ բուն հայկական բնակչութիւն: Այդպիսին էր, հաւանաբար, Դիխան (դի = թաթերէն «գիւղ», այստեղից էլ՝ «Խանի Գիւղ») կամ Օհանխան գիւղը, որն, ըստ Բարխուտարեանցի տեղեկութեան, հիմնել էր արցախցի Օհան Խանը՝ իր հետ բերած մօտ 100 տուն բնակչութեամբ[25]: Ըստ Մոսկուայի Համալսարանի պրոֆեսոր Բորիս Միլլերի տեղեկութեան՝ իրրեւ թէ այդ գիւղը հիմնուել է ԺԸ. դարի կէսերին: Բնակիչները՝ հաստատուելով այդտեղ, իւրացրել էին թաթերէնը[26]: Միլլերը նշում է, որ այդ վկայութիւնը վերցուած է բանասէր Մեսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանից, սակայն վերջինիս մօտ այդպիսի տեղեկութիւն չգտանք: Այսուհանդերձ, չի բացառւում, որ Օհանխանի բնակչութիւնը եւս թաթախօս լինէր:

1720ականների վերջերին եւ 1730ականների սկզբներին Ղարաբաղից ու Սիւնիքից հայ գաղթականութեան հոսք է սկսւում դէպի ռուսական գօրքերի կողմից գրաւուած մերձկասպեան տարածքներ: Այդ

բնակչութեան մեծ մասը հաստատւում է մերձկասպեան տիրոյթներում, Դերբենդի ու Մուշկուրի հայկական գիւղերում: Վերաբնակիչների զգալի մասը, սակայն, 1735ին Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ կնքուած համաձայնագրից յետոյ, ռուսական զօրքերի հետ հեռանում է[27]: Հնարաւոր է, որ այդ տարիներին, արցախցի Օհան Խանը՝ վերաբնակիչներով հանդերձ, հիմնել է Օհանխան գիւղը:

ԺԸ. դարի վերջին ռուսական զօրքերի հետ հեռացել էր նաեւ Քիլվար եւ Խաչմաս գիւղերի մի մասը: Քիլվարում մնացել էր 50 տուն[28]: Խաչմաս գիւղի վերաբերեալ Ամրատեանցը նշում է, որ այդ կողմերում հայոց բաւական բազմութիւն է բնակուել, որ յետոյ հեռացել է Մոզդոկ, Ղզլար, Պետրովսկի եւլն.[29]: Ըստ Միլլէրի, այդ տարիներին դէպի Ռուսաստան հեռացան Ղուբայի 10000 «հայեր»[30]: Ամրատեանցը՝ անդրադառնալով այդ տարիներին Հիւսիսային Կովկաս տեղափոխուած բնակչութեանը, նշում է որ «Դարբանտ քաղաքի եւ չրջակայ գիւղերի որպէս եւ Մոլլա Խալիլի, Պօղոս Քեանդի եւ այլ գիւղերի ժողովուրդը» գաղթել է «Ղզլար, Մոզդոկ, Պետրովսկի, Մաջար (Սբ. Խաչ)» եւ որ նրանց «լեզուն, սովորութիւնը եւ աւանդութիւնը նոյն է, ինչ-որ այսօր Դարբանտի, Խաչմասի, Քիլվարի, Մադրասայի հայոցն է»[31]:

1797ին ռուսաց Պաւել Ա. (1796-1801) կայսրը մի հրամանագրով վաւերացնում է, որ Դերբենդից եւ յարակից տարածքներից դուրս եկած հայերին, ըստ իրենց ցանկութեան, պէտք է բնակեցնել Ղզլարում կամ Աստրախանում՝ տրամադրելով հողատարածքներ[32]: Հնարաւոր է, որ հենց այդ ժամանակ՝ արտագաղթի հենց սկզբում, այդ տարածքներից դուրս եկած հայ-թաթերի մի փոքր մաս հաստատուեց Աստրախանում: Հայ-թաթերի մի համայնքի Աստրախանում հաստատուելու մասին նշում են Միլլէրն ու Սերգէյ Ղալթախչեանը[33]:

Այնուամենայնիւ արտագաղթեալ հայ-թաթերի հիմնական համայնքը բնակութիւն հաստատեց Հիւսիսային Կովկասում: Դեռեւս 1798ին Պաւելի Սենատին ուղղած մի հրամանագրում նշւում է «դերբենտցի հայերին» Ղզլարից վերադառնալ եւ հին Մաջար բնակավայրի մօտ հողատարածքներ յատկացնելու մասին[34]: 1799ի Ապրիլի 15ին՝ Սենատին ուղղուած Պաւելի մի այլ հրամանագրում, ինչպէս նաեւ Հոկտեմբերի 28ի հրովարտակում յիշատակւում են «Դերբենտի եւ Մուշկուրի հայերին» տրուելիք իրաւունքներն ու արտօնութիւնները՝ նոր տարածք-

ներում բնակաւորուելու եւ հին Մաջառ բնակավայրի տեղում Սուրբ Խաչ անունով քաղաք հիմնելու վերաբերեալ[35]:

Հետաքրքրական է, որ հենց այս դէպքերի կապակցութեամբ 1812ին կազմուած պատմական մի փաստաթղթում հանդիպում է «թաթ հայեր» տերմինը՝ «Ղզլարի թեզիկ հայեր» (Kizlarskie tezikskie armiane)[36]: Ժ-Թ. դարի ռուսական որոշ աղբիւրներում «թաթ» էթնոնիմը նշւում է «թեզիկ»(tezik) տերմինով[37]: Սա ուշագրաւ է այն առումով, որ «հայ-թաթեր» կամ «թաթ հայեր» տերմինը Ժ-Ի. դարերում, գլխաւորապէս հանդիպում էր գիտական գրականութեան մէջ, իսկ սա ուղղակի վկայութիւն է պաշտօնական փաստաթղթում:

Ժ-Ը. դարավերջին Արդուբեանի կազմած մի տեղեկագրում նշւում են «Դերբենտից եւ Մուսկուրից եկած» 610 ընտանիք կամ 5212 չունչ: Ըստ նոյն տեղեկագրի, Մաջառում կար 120 տուն՝ 680 չունչ բնակչութեամբ[38]: Չի բացառւում, որ սրանց մի մասը եւս գաղթած լինէր Դերբենդից ու Մուշկուրից:

Գաղթականների հաստատուած նոր վայրերում հիմնուեցին հաւաքական բնակավայրեր. հանդէս եկան իրենց նախկին գիւղերի անունը կրող գիւղեր: Ժ-Թ. դարի ռուսական մի փաստաթղթի համաձայն, Ժ-Ը. դարավերջին գաղթած բնակիչները Ղզլարի ուեզդում հաստատուել են երեք գիւղերում՝ Կարաժալինսկ (Ղարաջալի), Մալախալինսկ (Մոլլա-Խալիլ) եւ Դերբենտսկ[39]: Այս երեք բնակավայրերը յիշատակւում են դեռեւս 1813ից[40]: Ռուսական մի այլ փաստաթղթում նշւում է, որ «Դերբենտի եւ Մուշկուրի հայերը», թուով՝ 3376 հոգի, 1797ին հաստատուել են Ղզլարում, Ղզլարի, Մոզդոկի եւ Գէորգիեւսկի ուեզդներում: Ըստ 1818ի տուեալների՝ Մոզդոկի ուեզդում նշւում է Կասաեւ-Եամա բնակավայրը (105 տուն), Գէորգիեւսկի ուեզդում Սուրբ Խաչը (12 տուն), Ղզլարի յարակից տարածքներում՝ Մալախալինսկոյէն (Մոլլա-Խալիլ, 120 տուն), Կարգալինսկոյէն (153 տուն) եւ Դերբենտսկը (89 տուն)[41]:

Պատմաբան եւ բանասէր Հ. Մինաս Վարդապետ Բժշկեանցը իր շրջագայութեան ժամանակ Ղզլարից հիւսիս յիշատակում է Դերբենդից գաղթած «հայերի» հիմնած գիւղերի մասին եւ նրանցից անուանում է հետեւեալները՝ Բեքթէք, որտեղ բնակւում էին 70 տուն «Դարբանդեցի Հայք», Մոլլախալիլ՝ 100 տուն «գիւղականք Դարբանդու», Ղարաջալիլ՝ 50 տուն «գիւղականք Դարբա[ն]դու»[42]: Բեքթէքէն նշւում

է նաեւ աւելի վաղ շրջանի աղբիւրներում՝ իբրեւ «Բեքթէխ դարբանդեցուց գեղջ» (1817ին)[43], «գեղջ Դարբանդուց» (1822ին)[44] եւլն.:

Ինչպէս նշուեց, ԺԸ. դարում գաղթած բնակչութեան մի մասը հաստատուեց Կասաեւ-Եամա բնակավայրում, որ յայտնի էր նաեւ Ղուրա անուամբ: 1852ին Կասաեւ-Եաման վերանուանուեց Եղեսիա եւ այն ժամանակ ունէր 1566 բնակիչ[45]: Եղեսիայի բնակիչները թէեւ լուսաւորչականներ էին, բայց չատ մահմեդական սովորոյթներ ունէին, օրինակ՝ համարեա բոլոր տղամարդիկ սափրում էին գլուխները[46]: Սարգիս Եպիսկոպոս Ջալալեանցի այցելութեան ժամանակ՝ ԺԹ. դարի կէսերին, Եղեսիան ունէր 300 տուն բնակիչ: Նա յիշատակում է նոյն բնակավայրի երեք տարբեր անուանումները՝ «Կօսաեամ, Ղօրա, Նոր Եղեսիա» եւ նշում, որ «չիք ուսումնարան աստ եւ չգիտեն խօսիլ հայերէն, սովորական բարբառ նոցա է պարսկերէն, զոր ուսեալ են ի Դարբանդ» եւ որ «ունեն մի եկեղեցի»[47]: Բնակչութեան մասին Ջալալեանցը նշում է, որ «գաղթեալք ի Դարբանդ», իսկ Նոր-Դարի թղթակիցը մանրամասնում է, որ Եղեսիայի բնակիչները գաղթել են Ղուբայից, Քիլվարից, Խաչմասից: Նրանք այստեղ թէեւ զբաղուում էին երկրագործութեամբ, այգեգործութեամբ ու խաղողագործութեամբ, սակայն նրանց նախնիների զբաղմունքը չերամապահութիւնն էր եղել[48]:

Եղեսիան այժմ էլ հայ-թաթերի խոշոր բնակավայր է, որտեղ 1980ականներին չատ ընտանիքներում դեռեւս խօսում էին «պարսկերէն ենթաբարբառով»[49]:

ԺԸ. դարի վերջին «Դերբենտի ու Մուշկուրի հայերին» հին Մաջառ բնակավայրի տեղում Սուրբ Խաչ անունով քաղաք հիմնելու արտօնութիւն էր տրուել, որպէսզի առեւտրականներն ու արհեստաւորները հաստատուէին այդտեղ: Ռուսական իշխանութիւնների սպասելիքները չարդարացան, սակայն: Դեռեւս Պոտոցկին նշում է՝ 1798ի վերաբերեալ, որ այդ վայրը յատկացուած էր «Շիրվանից նոր եկած հայերին», որոնք դա չեն ցանկացել[50]: 1818ին այստեղ 12 տուն էր հաստատուել, որոնք ցանկանում էին տեղափոխուել Ղզլարում եւ Բեքթէխ գետի մօտ հաստատուած իրենց հայրենակիցների մօտ[51]:

Ղզլարին յարակից տարածքներում հայ-թաթերի Դերբենտակ, Կարաժալիսկոյէ (Ղարաջալի) եւ Մալախալինսկոյէ (Մոլլա-Խալիլ) գիւղերը յիշատակուում են նաեւ 1831ին[52]: 1833ին, այդ գիւղերի բնակիչները՝ «հակառակ իրենց կամքի եւ ցանկութեան», դարձուեցին «գծային (սահմանային) կոզակներ»: 1836ին հայերի վրայից այդ պար-

տադրանքը վերացուեց պայմանով, որ կառավարութեան կողմից իրը սահմանային գիծ նշուած այդ տարածքներից բնակիչները տեղափոխուեն Սուրբ Խաչ: Ըստ 1845ին ընդունուած մի այլ խիստ որոշման, այդ գիւղերի բնակչութիւնը 4 տարուայ ընթացքում պէտք է վաճառէր իր այգիները, իսկ չվաճառուածները 4 տարի յետոյ անվճար անցնելու էին կոզակական իշխանութիւններին[53]: Այնուամենայնիւ, անսալով սուրբխաչեցիների բողոքին՝ ռուսական իշխանութիւնները 1849ին մեղմացրին իրենց որոշումը եւ այդ հողատարածքները թողնուեցին բնակչութեան տնօրինութեանը՝ վերացնելով վաճառքի վերաբերեալ ժամկէտային սահմանափակումը[54]:

Չնայած նման վերիվայրումներին, Ղարաջալի գիւղը ԺԹ. դարի վերջին դեռեւս կար: Ան 1912ին նշւում է որպէս «թաթախօս հայ գիւղ»[55]: Ի. դարի վերջին հայ-թաթեր կային նաեւ Ղզլարին յարակից Սարաֆան (Շելկոզաւոդսկայա)[56] գիւղում: Ըստ Բարխուտարեանցի վկայութեան, Ղուրայում, Մաջառում եւ Սարաֆան գիւղում հաստատուած «գաղթականներն ցարդ պահպանած են իւրեանց հետ տարած լեզուն հայերէնի հետ միասին»[57]:

Ջալալեանցը Սուրբ Խաչ իր այցելութեան ժամանակ նշում է, որ այնտեղ կար 600 տուն՝ «գաղթեալք ի Դարբանդ» եւ «չգիտեն խօսիլ զհայերէն»[58]: Նա յիշատակում է, որ «կից այս քաղաքին փոքրիկ Մաճառն», ունէր 26 հայ գերդաստան եւ փոքր ու անշուք մի եկեղեցի: Հաւանաբար այս բնակավայրը նկատի ունի Միլլէրը, երբ գրում է, որ հայ-թաթեր հաստատուել էին Մաջառում եւ Պրիկումսկում (Սուրբ Խաչ): Սուրբ Խաչը ԺԹ. դարի աղբիւրներում կոչւում է նաեւ Մաջառ, իսկ ԺԹ. դարի առաջին կէսից մի այլ տեղեկութեան համաձայն, այստեղ հաստատուած գաղթական բնակիչները կոչւում էին «մաջառցիներ»[59]:

Նոր-Դարը 1884ին գրում էր, որ Սուրբ Խաչի բնակչութիւնը գաղթել է 1840ին՝ Ղզլարին մերձ Բեքեթէ գիւղից, եւ որ այնտեղ կան ընտանիքներ, որտեղ դեռեւս գործածական է թաթերի լեզուն[60]: Ըստ մէկ այլ տեղեկութեան՝ Սուրբ Խաչի բնակչութիւնը, որը գաղթել էր Դերբենդի կողմերից, մինչեւ 1841-1842 բնակւում էր Բեքեթէ աւանում եւ միայն այնուհետեւ տեղափոխուել էր Սուրբ Խաչ[61]:

Ինչպէս նշում է Միլլէրը, Սուրբ Խաչում կային քիլվարցիներ, ղարաջալցիներ ու մաջառցիներ (Դերբենդին յարակից Մաջառ գիւղից): Քիլվարցիները 1920ականներին դեռեւս պահպանել էին թաթերէնը եւ

կոչւում էին «մալախանցիներ» (malakhantsi), քանի որ իրենց հայրենիքում եղել են Ղուբայի խանի (մալխան) հպատակներ[62]:

Աւելի ուշ, նիւթերի պատառիկների հիման վրայ ազգագրագէտ Նատալիա Վոլկովան մասնաւորեցրեց, որ ԺԸ. դարի վերջին հիւսիս-արեւելեան Այսրկովկասից գաղթած բնակչութեան հիմնական զանգուածը հաստատուել էր Ղզլարում ու Մոզդոկում[63]: Միլլէրը նշում է, որ հայ-թաթեր հաստատուել էին նաեւ Տուապսէում ու Անապայում[64]: Հայ-թաթեր կային նաեւ Պետրովսկում[65] եւ Անդրէա բնակավայրում[66]:

Բազում տեղեկութիւններ կան նաեւ հայ-թաթերի մի հատուածի պատմական տարբեր ժամանակաշրջաններում մահմեդականացման մասին: Խիզիում թաթերի մօտ տարածուած աւանդութեան համաձայն, տեղի բնակչութիւնը մինչ իսլամի ընդունումը հայադաւան է եղել[67]:

Հիւսիս-արեւելեան Այսրկովկասում, որը նաեւ թաթերի բնակութեան հիմնական տարածքներից է, ըստ Բարխուտարեանցի, կային «80000 բնակիչք», որոնք նախկինում հայադաւան են եղել, իսկ այժմ Օմարի աղանդի հետեւորդներ, այսինքն՝ սիւննի-մահմեդականներ են, սակայն դեռեւս պահպանում են մի շարք քրիստոնէական սովորոյթներ: Օրինակ՝ նրանք աջ ձեռքով խաչակնքում են նոր հունցած խմորի, կրակից նոր վերցրած կերակուրի եւ նոր քնեցրած երեխայի վրայ եւլն.[68]:

Ջալալեանցը նշում է, որ Քիլվարի շուրջ բնակւում են «Պարսիկք կր[օն]ափոխեալք ի Հայոց», բայց «տոհմանուն նոցա մնան անփոփոխ՝ որպէսիք են Օհանօղլի, Սարգիսօղլի, Մարգարօղլի եւլն.»: Ըստ Ջալալեանցի՝ կրօնափոխութիւնը եղել է ԺԴ. դարու վերջաւորութեան կամ ԺԵ. դարու սկիզբը՝ Լենկ Թեմուրի օրօք[69]:

Նախկինում հայ-թաթերով բնակեցուած, սակայն ԺԸ. դարի վերջին արդէն մահմեդականացուած գիւղ էր Ղուբայի շրջանի Թալաբրին (վերին եւ ներքին): ԺԹ. դարի վերջին այստեղ պահպանւում էր կիսաւեր եկեղեցին եւ գերեզմանատունը: Միլլէրը նշում է, որ ԺԸ. դարի վերջին գիւղի հիմնական բնակչութիւնը հեռանում է Ռուսաստան, իսկ մնացած մօտ մէկ տասնեակ տունը ընդունում է մահմեդականութիւն[70]: Աւելի հանգամանալից է Բարխուտարեանցի մօտ եղած տեղեկութիւնը, ըստ որի գիւղի 500 տուն բնակչութիւնը՝ 5 քահանաներով հանդերձ, գաղթում են: Այնուհետեւ 8 գերդաստան եւս է բերւում,

որոնց եւ մահմեդականացնում են։ ԺԹ. դարի վերջին, գիւղում դեռեւս հանդիպում էին հայկական անուններ՝ Արթին ուշաղի, Բաղդասար ուշաղի, Օհան օղլի[71]։ Մահմեդականացուած էին նաեւ Ջէյուա ու Ջերգաւա գիւղերը։ Վերջինիս բնակիչները դեռեւս 1920ականներին իրենց համարում էին նախկին «Հայեր»։ Թէեւ Ջէյուայի բնակիչները չէին ընդունում, որ իրենց նախնիները «Հայեր» են, սակայն այդ մասին լաւ գիտէին Թալաբիի եւ Ջերգաւայի բնակիչները[72]։ Այդ տարածքաշրջանում կային նաեւ հայկական յուշարձանների ու լքուած բնակավայրերի բազմաթիւ հետքեր։

Հայ-թաթերի մի հատուած էլ մահմեդականացուեց Գէօգչայ գետից արեւելք ընկած տարածքում։ Միլլէրը տեղեկացնում է, որ այդ տարածքի թաթերը իրենց համարում էին նախկին հայեր[73]։ Բարխուտարեանցը, նշելով Շաքիի շրջանի մահմեդականացուած՝ «տաճկացեալ հայոց» մասին, գրում է, որ Գէօգչայի գաւառում, Թալաստան գիւղում եւ շրջակայքում, լեզգիների միջոցով ԺԸ. դարում մահմեդականացուել էր 5000 ծուխ[74]։ 1886ի մարդահամարի տուեալներով Թալաստան գիւղում բնակւում էին թաթ-սիւննիներ[75]։

Ըստ մեր բանասացներից մէկի հաղորդման՝ «Թալաստանում հայեր են ապրել, որոնք իրենց լեզուն են ունեցել, ուրիշ լեզուով են խօսացել»[76]։ Ըստ մէկ այլ բանասացի՝ ինքը տեսել է, թէ ինչպէս լահիճ (հաւանաբար տուեալ դէպքում՝ թաթ - Ա.Ց.) տանտիկինը դեռ հացի խմորը չկտրած, խաչ է արել եւ իր հարցին՝ «ինչո՞ւ», ասել է, որ իր հայրերից ու մայրերից է տեսել՝ «Իրենց նախնիները հայեր են եղել, յետոյ են կրօնափոխ եղել։ Իրենք հայից գոյացած են»[77]։

Նոյն տարածքում նախկին հայ-թաթեր էին ապրում նաեւ Հաֆթասիոր գիւղում, որի բնակիչները, նշում են, մահմեդականութիւն են ընդունել ԺԴ.-ԺԵ. դարերում՝ չիրվանշահերի իշխանութեան ժամանակ[78]։

Արեւելեան Այսրկովկասի թաթերով բնակեցուած տարածքներում կային հայկական քրիստոնէական յուշարձանների ու գերեզմանատների բազմաթիւ հետքեր, շատ յաճախ նաեւ՝ «Արմանի» բաղադրամասով տեղանուններ։ Օրինակ՝ Ապչերոնեան Սաբունչի թաթ մահմեդականների բնակավայրը հարեւան Բալախան գիւղի թաթերը կոչում էին Արմանի Դի (հայկական գիւղ)[79]։ Այն յայտնի էր նաեւ Արմանի

Բուլաղի (հակական աղբիւր)[80] անունով։ Ղուբայի շրջանում կար Արմանի Դիզէ բնակավայրը[81]։

ԺԹ. դարի վերջին Այսրկովկասում մնացել էին հայ-թաթերի երեք հիմնական գիւղեր՝ Մադրասա (Շամախու շրջան), Քիլվար եւ Խաչմաս (Ղուբայի շրջան)։ ԺԹ. դարի վերջին յիշատակուող Խաչմասը նշւում է որպէս Նոր Խաչմաս եւ նրանից քիչ հեռու գտնւում էին հին Խաչմասի աւերակները[82]։ ԺԸ. դարի վերջի եւ ԺԹ. դարի սկզբի որոշ սկզբնաղբիւրներում նշւում է Մեծ եւ Փոքր Խաչմաս գիւղերի մասին[83], թէեւ առաւել պատասխանատու փաստաթղթերում, մասնաւորապէս՝ ռուսական հրամանատարութեանը դիմած 9 գիւղերի շարքում յիշատակւում է միայն մէկ Խաչմաս։ Հնարաւոր է, որ ԺԹ. դարի վերջում յայտնի Խաչմասը յիշուող գիւղերից որեւէ մէկը լինէր։ ԺԹ. դարի կէսերի մի քարտէզում նշուած է Մեծ Խաչմաս[84]։ Այդ գիւղի մի մասում բնակւում էին հայ-թաթերը՝ 30 տուն, իսկ միւս մասում՝ թրքալեզու մահմեդական բնակչութիւն։

ԺԸ. դարի վերջին Խաչմասից նոյնպէս արտագաղթել են դէպի Ռուսաստան։ Սմբատեանցը նշում է, որ այդ կողմերում բաւական հայոց բազմութիւն է բնակուել, որ յետագայում հեռացել է Մոզդոկ, Ղզլար, Պետրովսկի եւլն.[85]։ Նոր-Դարի վերը նշուած մի տեղեկութեան մէջ ասւում է, որ Եղեսիայի բնակիչները գաղթել են նաեւ Խաչմասից[86]։

ԺԸ. դարի վերջին Ռուսաստան էր գաղթել նաեւ Քիլվարի բնակչութիւնը եւ գիւղում մնացել էր 50 տուն[87]։ Ինչպէս նշուեց, քիլվարցիներ կային Սուրբ Խաչում, Եղեսիայում, նաեւ Ղզլարում եւ շրջակայքում[88]։ ԺԹ. դարի վերջին, ըստ Բարխուտարեանցի, գիւղն ունէր 100 ծուխ, 420 բնակիչ[89]։

Մեղու Հայաստանի լրագիրը 1871ին յիշատակում է Մուշկուրի շրջանի Ղարաջալու գիւղում բնակուող 4 գերդաստանների մասին, որոնք, ինչպէս քիլվարցիներն ու խաչմասցիները, խօսում են «պարսից աղաւաղեալ» լեզուով[90]։

Այսրկովկասում մնացած հայ-թաթերի ամենաբազմամարդ գիւղը Մադրասան էր։ ԺԹ. դարի վերջին այն ունէր 483 ծուխ, 2780 բնակիչ[91]։

Մաղրասա Գիւղի Ընդհանուր Տեսքը (1950ական Թուականներ)
Լուսանկարը տրամադրել է մաղրասացի Սոնա Խաչիկեանը

ԺԹ. դարի վերջին, ըստ Բարխուտարեանցի տեղեկութեան՝ Թաթախոս բնակչութիւն կար եւ Շամախու չրջանի Հնդար գիւղում: Հեղինակը այս գիւղի մասին նշում է. «Լփնաց կողմից գաղթած է վերին Թաղի ժողովուրդը, որ բացի հայերէնից պահած է ցարդ եւ իւր նախնի բարբառը»[92]: Ըստ Միլլէրի՝ Հնդարում ԺԹ. դարի վերջ-Ի. դարի սկզբում կային ընտանիքներ, որոնք խոսում էին Թաթերէն՝ Մաղրասայի խոսուածքով[93]: Այս գիւղում Թաթախոս բնակչութեան մասին նշում է նաեւ Ղալթախչեանը[94]: Միլլէրը գտնում էր, որ այն հաւանաբար հայկականացած Թաթախոս գիւղ է[95]: Կարծում ենք, սակայն, որ Միլլէրի այդ կարծիքը չափազանցուած է. Հնարաւոր է, որ ԺԹ. դարի վերջին մի քանի Թաթախոս ընտանիքներ հաստատուած լինէին այդ գիւղում: Հայ-Թաթերի փոքր խումբ հնարաւոր է եւ լինէր Դերբենդ քաղաքում[96]: Այնուամենայնիւ Այրկովկասում հայ-Թաթերի հիմնական բնակավայրերն էին վերը նշուած Մաղրասա, Քիլվար եւ Խաչմաս գիւղերը:

Այսպիսով, ԺԸ. դարում Արեւելեան Այրկովկասում դեռեւս կային չուրջ մէկ տասնեակից աւելի գիւղեր, որոնցում բնակւում էր Թա-

թախօս հայադաւան բնակչութիւն։ Ակտիւ այլէթնիկ եւ այլադաւան միջավայրը, ինչպէս նաեւ քաղաքական իրադարձութիւնները, որոնք ուղեկցւում էին էթնիկական եւ դաւանական հակադրութիւնների սրմամբ, ինչպէս նաեւ քրիստոնեաների հանդէպ կիրառուող էթնօդաւանական ագրեսիւութեամբ, անհնարին դարձրին հայ-թաթերի յետագայ գոյութիւնը իրենց պատմական հայրենիքում։ Հայ-թաթերի զգալի մի հատուած, ԺԸ.դարի վերջին, ռուսական զօրքերի հետ գաղթեց եւ հիմնականում հաստատուեց Հիւսիսային Կովկասի արեւելեան եւ կենտրոնական շրջաններում՝ Ղզլարում եւ շրջակայքում, Մոզդոկում, Սուրբ Խաչում եւ Եղեսիայում։ Այս շրջաններում հանդէս եկան հաւաքական նոր բնակավայրեր, որոնց մէջ եւ կային իրենց նախկին գիւղերի անուններով գիւղեր՝ Ղարաջալի եւ Մոլլա-Խալիլ (վերջինս գոյատեւեց մինչեւ 1830-40-ականները)։ Արտագաղթող հայ-թաթերի մի մասն էլ ցրուեց ռուսաստանեան եւ կովկասեան գանագան քաղաքներում ու բնակավայրերում։ Հայ-թաթերի մի այլ հատուած էլ պատմական տարբեր ժամանակաշրջաններում, ներառեալ՝ ԺԸ. դարում, մահմեդականացուեց։ Վերջիններիս մի զգալի մասի մօտ դեռեւս ԺԹ. դարում պահպանւում էին իրենց քրիստոնէական անցեալի մասին յիշողութիւններ։ ԺԹ. դարի վերջին իրենց պատմական հայրենիքի միայն երեք գիւղերում մնացել էին այս խմբի բեկորները։

ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Սերգէյ Ղալթախչեան, «Հայ-Պարսիկները (Հայ-թաթերը) եւ Նրանց Լեզուն», Իրան-Նամէ, թիւ 1, 1995, էջ 8-9.* V. Voskanian, 'Indo-iranskie etnicheskie gruppi v Armenii' [*Հնդ-իրանական էթնիկական խմբերը Հայաստանում*], *տե՛ս՝ Tsentralnaia Aziia i Kavkaz* [*Կենտրոնական Ասիա եւ Կովկաս*], *թիւ 5, 1999, էջ 89։*

[2] *«Թաթեր» եւ «Թաթերէն», տե՛ս՝ Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 4, Երեւան, 1978, էջ 120.* M. Matatov, 'K voprosu o tatskom etnose' [*Թաթական էթնոսի Ծագման Հարցի Մասին*], *Sovetskaia Etnografiia* [*Խորհրդային Ազգագրութիւն*], *թիւ 5, 1981, էջ 109-112.* Zh. Golotvin and M. Matatov, 'Tati' [*Թաթեր*], *Voprosi istorii* [*Պատմութեան Հարցեր*], *թիւ 11, 1986, էջ 187.* M.Matatov, 'Tatskaia narodnost\ istoriia i problemi' [*Թաթական ժողովուրդը. Պատմութիւն եւ Հարցեր*], *Rossiiskaia ezhegodnik* [*Ռուսաստանեան Տարեգիրք*], *Թողարկում II, 1990, էջ 53-62։*

[3] *Հրաչեայ Աճառեան, Հայոց Լեզուի Պատմութիւն, հ. 1, Երեւան, 1940, էջ 322. Ս. Բարխուդարեան, «Դերբենդի Հայ-Աղուանական Թագաւորութիւնը», Պատմա-Բանասիրական Հանդէս, թիւ 3, 1969, էջ 125-143.* V. Grigorian, *Nasilstvennaia assimiliatsiia musulmanskikh natsionalnikh menshistv v Azerbaidzhane* [*Մուսուլմանական*

Ազգային Փոքրամասնութիւնների Բանի Զուլումը Ադրբեջանում], Երեւան, 1992, էջ 36։

[4]*Այս խմբի վերաբերեալ կատարուած է միայն լեզուաբանական ուսումնասիրութիւն։ Հայ-Թաթերէն բարբառը ուսումնասիրել է բանասէր Սերգէյ Ղալթախչեանը. տե՛ս՝ Ս. Ղալթախչեան, Մադրասացիների Թաթերէն Լեզուն, Թեկնածուական դիսերտացիա, Երեւան, 1972։*

[5]A. Lopukhin, 'Zhurnal puteshestviia cherez Dagestan, 1718' [*Դաղստանի Վրայով Ճանապարհորդութեան Պարբերագիր, 1718*], *Istoriia, geografiia i etnografiia Dagestana* [*Դաղստանի Պատմութիւն, Աշխարհագրութիւն եւ Ազգագրութիւն*], Մոսկուա, 1958, էջ 7, 53։

[6]*Նոյն*, էջ 8, 53-54։

[7]P. Butkov, *Materiali dlia novoi istorii Kavkaza c 1722 po 1803g.* [*Նիւթեր Կովկասի Նոր Պատմութեան Համար 1722ից Մինչեւ 1803 Թուականը*], Սանկտ Պետերբուրգ, 1869, հ. 1, էջ 8-11։

[8]*Armiano-russkie otnoshenia v XVIII v.* [*Հայ-Ռուսական Յարաբերութիւնները ԺԸ. Դարում*], Երեւան, 1967, հ. 2, մաս II, էջ 230-233։

[9]*Նոյն*, էջ 351։ *Մալլա-Խալիլ* (*Մալախալիլ*) *եւ Նուգդի գիւղերը գտնուում էին Դերբենդի նահանգում։*

[10]*Նոյն*, էջ 351-352։ *Այս ծանօթագրութիւնները կազմել են ժողովածուի խմբագիր Աչոտ Յովհաննիսեանը, վ. Մարտիրոսեանը եւ Ս. Տէր-Ավակիմովան։*

[11]J. Potocki, *Voyage dans les steppes d'Astrakhan et du Caucase*, t. 1, Paris, 1829, էջ 104-105։

[12]*«Պարսիկներ» բառն այստեղ, անշուշտ, գործածւում է «պարսկական իշխանութիւն» իմաստով, քանի որ չրջապատող գիւղերի բնակիչները իրականում էթնիկ պարսիկներ չէին։*

[13]*Armiano-russkie otnosheniia v XVIII v.*, հատոր 4 (1760-1800 թթ.), Երեւան, 1990, էջ 433-434։

[14]*Նոյն*, էջ 434-435։

[15]*Նոյն*, էջ 448։

[16]Lopukhin, էջ 7, 53։

[17]Butkov, էջ 94։

[18]*Մակար Ծ. Վրդ. Բարխուտարեանց, Աղուանից Երկիր եւ Դրացիք, Թիֆլիս, 1893*, էջ 126, 142-143։

[19]*Մխսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանց, Նկարագիր Սուրբ Աստիսանոսի Վանաց Սպիտակի եւ Միւս Վանօրէից եւ Ուխտատեղեաց Նոա եւ Քաղաքացն եւ Գիւղօրէից Որք ի Շամախեոյ Թեմի, Տփխա 1896*, էջ 513։

[20]*Բարխուտարեանց, Աղուանից Երկիր*, էջ 126։

[21]*Նոյն*, էջ 136-139։

[22]*Բարխուտարեանց, Աղուանից Երկիր*, էջ 135։ *Կոմս վ. Ա. Զուբովը 1796ի արշաւանքի ընթացքում ռուսական բանակի հրամանատարն էր։*

[23]*Հ. Մարտիեան, «Սուրբ Գրիգորիս Աղուանից Կաթողիկոսի Մատուռը», Նոր-Դար, թիւ 5, 1891։*

[24] *Մեղու Հայաստանի*, թիւ 1-2, 1859։
[25] *Բարխուդարեանց, Ազուանից երկիր*, էջ 143։
[26] B. Miller, *Tati: ikh rasseleniia i govori* [*Թաթեր. Նրանց Տարաբնակեցումն ու խօսուածքները*], Բաքու, 1929, էջ 15։
[27] *Լեւոն Պօղոսեան, «Հիւսիսային Կովկասում Հայկական Գաղթավայրերի Հիմնադրման Մասին» (XVIII դ.)», Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, թիւ 6 (510), *Յունիս* 1985, էջ 61։
[28] Miller, էջ 15։
[29] *Սմբատեանց*, էջ 543-545։
[30] Miller, էջ 14։
[31] *Սմբատեանց*, էջ 513-514։
[32] *Armiano-russkie otnosheniia*, հ. 4, էջ 449։
[33] Miller, էջ 14. *Ս. Դալիմախեան, «Համառօտակի Մատրասայի Հայ-Թաթերէնի Մասին», տե՛ս՝ Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիա, Տեղեկագիր (Հասարակական Գիտութիւններ)*, թիւ 4, Ապրիլ 1957, էջ 86։
[34] *Armiano-russkie otnosheniia*, հ. 4, էջ 478։
[35] *Նոյն*, էջ 501-502, 513-516։
[36] *Akti Kavkazskoi arkheograficheskoi kommisii* (*այսուհետեւ՝* AKAK) [*Կովկասեան Հնագրագիտական Յանձնախումբի Արձանագրութիւնները*], հ. 5, *Թիֆլիս*, 1873, էջ 853։
[37] Butkov, էջ 155։
[38] *Պաւէլ Զօրաեան, «Ռուսահայոց Գաղթօջախի Բնակչութեան Քանակական Կազմը (XVIII Դարի Վերջին Քառորդ)», Պատմա-Բանասիրական Հանդէս*, թիւ 3 (149), 1998, էջ 64։
[39] AKAK, հ. 10, *Թիֆլիս*, 1885, էջ 707-709։
[40] *Հայաստանի Հանրապետութեան Պատմութեան Պետական Կենտրոնական Արխիւ (այսուհետեւ՝ ՀՀ ՊՊԿԱ)*, ֆոնդ 52, ցուցակ 1, գործ 25, *թուղթ* 22-23։
[41] AKAK, հ. 6, *մաս* II, *Թիֆլիս*, 1875, էջ 592-593։ *Կարծում ենք թէ «Կարգալինսկոյէ» անուանումը վրիպակ է եւ պէտք լինի «Կարաժալինսկ», քանի որ այն կար դեռեւս 1813ին։*
[42] *Մինաս Վարդապետ Բժշկեանց, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան եւ Այլ Կողմանս Բնակեալս ի Հայկազանց Սերբոց ի Նախնեաց Անի Քաղաքին, Վենետիկ*, 1830, էջ 405։
[43] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 52, ց.1, գ. 88, թ. 1, 7, 10։
[44] *Նոյն*, գ. 25, թ. 29, 33։
[45] N. G. Volkova, 'O rasselenii armian na Severnom Kavkaze do nacahala XX v.' [*Մինչեւ ի. Դարի Սկիզբը Դէպի Հիւսիսային Կովկաս Հայերի Տարաբնակեցման Մասին*], *Պատմա-Բանասիրական Հանդէս*, թիւ 3 (34), 1966, էջ 261։
[46] *Նոյն*։
[47] *Սարգիս Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան*, հ. 2, *Թիֆլիս*, 1858, էջ 450։
[48] *Նոր-Դար*, թիւ 110, 1890։

[49] *Դիւան Հայ Վիմագրութեան*, պրակ VIII. *Ռուսաստանի Դաշնութիւն, աշխատասիրութեամբ Գր. Մ. Գրիգորեանի*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատարակչութիւն, 1999, էջ 161։
[50] Potocki, էջ 185-186։
[51] AKAK, հ. 6, *մաս* II, *Թիֆլիս*, 1875, էջ 593։
[52] *Նոյն*, հ. 7, *Թիֆլիս*, 1878, էջ 950։
[53] *Նոյն*, հ. 10, *Թիֆլիս*, 1885, էջ 707-709։
[54] *Նոյն*, էջ 711։
[55] *ՀՀ ՊՊԿԱ*, *Ֆ*.57, *ց*. 2, *գ*. 1905, *թ*. 7։
[56] *Նոր-Դար*, *թիւ* 201, 1894։
[57] *Բարխուտարեանց, Ազուանից Երկիր*, էջ 143։
[58] *Ջալալեանց*, էջ 451-452։
[59] *Sobranie aktov otnoiashchikhsia k obozreniiu istorii armianskogo naroda* [*Հայ ժողովրդի Պատմութեան Տեսութեան Վերաբերեալ Փաստաթղթերի Ժողովածու*], *մաս* II, *Մոսկուա*, 1838, էջ 76։
[60] *Նոր-Դար*, *թիւ* 172, 1884։
[61] *ՀՀ ՊՊԿԱ*, *Ֆ*. 227, *ց*. 1, *գ*. 135, *թ*. 53։
[62] Miller, էջ 15։
[63] Volkova, էջ 260։
[64] Miller, էջ 14։
[65] *Սմբատեանց*, էջ 513։
[66] *Ջալալեանց*, էջ 398։
[67] Miller, էջ 13։
[68] *Բարխուտարեանց, Ազուանից Երկիր*, էջ 125-126,146։ *Տե՛ս նաեւ՝ Մակար Եպիսկոպոս Բարխուտարեանց, Պատմութիւն Ազուանից, Ա. հատոր, Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի*, 1902, էջ 26։
[69] *Ջալալեանց*, էջ 424։
[70] Miller, էջ 14։
[71] *Բարխուտարեանց, Ազուանից Երկիր*, էջ 136-139։
[72] Miller, էջ 14։
[73] *Նոյն*, էջ 13։
[74] *Բարխուտարեանց, Ազուանից Երկիր*, էջ 289-291։
[75] *Svod statisticheskikh dannikh o naselenii Zakavkaskogo kraia, izvlechennikh iz posemeinikh spiskov 1886 g.* [*Անդրկովկասեան Երկրամասի Բնակչութեան Մասին Վիճակագրական Տուեալների Ժողովածու, Քաղուած 1886 Թուականի Ընտանեկան Ցուցակներից*]. *Թիֆլիս*, 1893։
[76] *Արեւելեան Ցակոբեան, դաշտային ազգագրական նիւթեր, տետր* I, 1999, էջ 109։
[77] *Նոյն, տետր* II, էջ 30։
[78] Miller, էջ 13-14։
[79] *Նոյն*, էջ 13։
[80] *Svod*։
[81] *Նոյն*։

[83] Մելքոնեանց, էջ 546։
[84] F. F. Simonovich, 'Opisaniia iuzhnogo Dagestana 1796 g.' [Հարաւային Դաղստանի նկարագրութիւնը 1796 թուականին], տե՛ս՝ *Istoriia, geografiia i etnografiia Dagestana*, էջ 146. Butkov, էջ 94. S. Bronevskii, *Noveishie geograficheskie i istoricheskie izves-tiia o Kavkaze* [Աշխարհագրական եւ պատմական նորագոյն տեղեկութիւններ Կովկասի մասին], հ. 2, Մոսկուա, 1823, էջ 383։
[85] *Kavkazskii kalendar na 1857 g.* [Կովկասեան տարեցոյց 1857 թուականի], Թիֆլիս, 1856։
[86] Մելքոնեանց, էջ 543։
[87] Նոր-Դար, թիւ 110, 1890։
[88] Miller, էջ 15։
[89] Նոյն։
[90] Բարխուտարեանց, Ազուանից երկիր, էջ 139։
[91] Մեղու Հայաստանի, թիւ 38, 1871։
[92] Բարխուտարեանց, Ազուանից, էջ 166-167։
[93] Նոյն, էջ 181։
[94] Miller, էջ 13։
[95] Ղալթախչեան, էջ 85-96։
[96] Miller, էջ 13։
[97] Մելքոնեանց, էջ 513։

FROM THE HISTORY OF THE DEMOGRAPHIC DISTRIBUTION AND DEPORTATIONS OF ARMENIAN-TATS (early 18th - late 19th cc.) (Summary)

ARSEN HAKOBIAN

The article discusses the history of those Tats who were also followers of the Armenian Church living in the regions of Derbend, Kuba and Mushkur in north-eastern Transcaucasia in the 18th century. After the Russian invasion of Transcaucasia in 1796, many of them migrated to the regions of Kizlar and Astrakhan in the North Caucasus in Russia, where they established new towns and villages. The article also focuses on various instances of collective conversion to Islam by members of this ethnic group. By the end of the 19th century, there were only three villages in Transcaucasia which were still inhabited by Tat-speaking members of the Armenian Church.

ԱԶԱՏ-ՈՐՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՔԸ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՊՈԼՍՈՑ ՀԱՅԿԱԿԱՆ «ՍԷՐ» ՕԹԵԱԿԸ ԺԹ. ԴԱՐՈՒՆ

ԱՐԹԻՒՐ ՊԷՁԼԷՐԵԱՆ

Մեր այս ուսումնասիրութիւնը կը վերաբերի ԺԸ. դարուն Անգլիոյ մէջ ծագում առած ազատ-որմնադրութեան գաղափարաբանութեան Օսմանեան Կայսրութեան մայրաքաղաք Պոլիս մուտքի փորձերուն, օսմանահպատակ փոքրամասնութիւններուն մօտ անոր գտած ընդունելութեան եւ պոլսահայ համայնքի անդամներուն կողմէ 1866ին հայկական *Մէր* օթեակի հիմնումին: *Մէր* օթեակը իր գործունէութիւնը մինչեւ 1890ականները ընդհատումներով չարունակելէ յետոյ, Հայկական Հարցի հետզհետէ զարգացող դէպքերուն պատճառաւ ի վերջոյ, 1898ին, յաւէտ փակուեցաւ:

Սոյն նիւթին չուրջ քանի մը ուսումնասիրութիւններ թէեւ նախապէս լոյս տեսած են[1], այսուհանդերձ մեր կատարած արխիւային ընդարձակ պրպտումները մեզ աւելի ճշգրիտ եւ հիմնական եզրակացութիւններու առաջնորդեցին:

* * *

Ազատ-որմնադրութեան գաղափարաբանութեան սկզբունքն է «Աստուծոյ գոյութեան, հոգիի անմահութեան եւ մարդկային համերաշխութեան հաւատալ եւ տիեզերքի յառաջդիմութիւնը ապահովելու համար մարդկային բարօրութեան ու հոգիի ազնուութեան ծառայող գիտութեան եւ արուեստի տարածումին հետամուտ ըլլալ»[2]: Ազատ-որմնադրութիւնը միջազգային կազմակերպութիւն մըն է, որուն անդամները առանց կրօնի կամ դաւանանքի խտրութեան եւ առանց քաղաքական համոզումներու տարբերութեան, իրարու հետ ամենագօրաւոր կապերով միացած կ՚ըլլան: Այս պատճառաւ իսկ, ազատ-որմնադիրներու օթեակներուն մէջ ժողովներու ընթացքին թոյլատրուած չէ քաղաքական հարցեր ծեծել կամ կրօնական խնդիրներու չուրջ վիճիլ[3]:

Ազատ-որմնադրութեան առաջին օթեակը հիմնուած է Լոնտոնի մէջ, 1717 Յունիսին՝ Անգլիոյ Ջորճ Ա. թագաւորի (1714-27) գահակալութեան օրով[4]: Սոյն գաղափարաբանութիւնը անգլիացի վաճառա-

կաններու միջոցաւ չուտով մեծ հետաքրքրութիւն ստեղծեց ու հետեւորդներ գտաւ Ֆրանսայի (1725ի շուրջ), Սպանիոյ (1727ին) եւ Գերմանիոյ (1737ին) մէջ։

Անգլիոյ *Մեծ Օթեակի* (Grand Lodge) պաշտօնաթերթը ազատ-որմնադրութեան յարող անձերը երեք խումբի կը բաժնէ։ Առաջին՝ անոնք, որոնք հետաքրքրութեան համար կը մտնեն, իրենց ճամբան չեն գտներ եւ ոչ ալ հասկցած կ՚ըլլան։ Ասոնք իրական ազատ-որմնադիր չեն եղած եւ իրենց համար արարողութիւնները ոչինչ կը նշանակեն։ Երկրորդ խումբին մաս կազմող ազատ-որմնադիրները ընկերութեան վրայ բեռ մըն են։ Անոնք ճանաչում եւ օգուտ կը սպասեն, բայց կը մերժեն ծառայել։ Մինչդեռ վերջին խումբին մաս կազմողները իրենց կարելին կ՚ընեն յառաջդիմութեան համար, եւ առանց անոնց ջանքին, ազատ-որմնադրութիւնը չատոնց անկումի ենթարկուած, անցեալի եռանկիւն բուրգերուն նման թաղուած պիտի ըլլար[5]։

Ազատ-որմնադրութիւնը՝ Եւրոպայի մէջ մեծ ընդունելութեան արժանանալէ ետք, հետզհետէ սկսաւ հետեւորդներ գտնել նաեւ Օսմանեան կայսրութեան մէջ։ Ըստ Լոնտոնի *Սէնթ Ճէյմզ՚զ Իվընինկ Փոսթ* (St. James's Evening Post) թերթին մէջ, Մայիս 1738ին լոյս տեսած Պոլսէն ուղարկուած նամակի մը, «Հալէպի եւ Զմիւռնիոյ մէջ - եւ նոյնիսկ Պոլսէն առաջ - ազատ-որմնադիրները յաջորդաբար օթեակներ կը հիմնեն ուր թուրք բարձրաստիճան պաշտօնատարներ կ՚ընծայուին»[6]։ Իսկ 1748ի վերջերը Պոլսոյ մէջ քանի մը վաճառական անգլիացիներու կողմէ ազատ-որմնադիրներու ժողովներ կը սկսին տեղի ունենալ, որոնց նոյնիսկ տեղացի ոչ-իսլամ հասարակութենէն ալ անդամներ կը մասնակցին։

Այսուհանդերձ, Օսմանեան կայսրութեան նման իսլամական օրէնսդրութեան՝ շարիայի աստուածապետական սկզբունքներով կառավարուող բազմազգեայ եւ բազմակրօն երկրի մը մէջ, ուր «անհաւատ» Եւրոպայէն ներածուած ամէն գաղափարաբանութիւն, պետութեան եւ մահմետական ժողովուրդի մեծամասնութեան կողմէ կասկածանքով կը դիմաւորուէր եւ ընդդիմութեան կը բախէր, դեռ շատ կանուխ էր յուսալ որ ազատ-որմնադիրները հոն եւս պիտի կարենային ազատ-համարձակ գործունէութիւն ցոյց տալ, գաղտնի ժողովներ գումարել, հաւաքոյթներ կազմակերպել, ուր ոչ-անդամ (profane) մը պիտի չկարենար ներկայ գտնուիլ[7]։ Արդարեւ, յանուն մահմետական կրօնքի տարածման՝ Արեւմուտքի «անհաւատ» տէրութիւններու դէմ յարատեւօրէն «Սուրբ Պատերազմ» մղող Օսմանեան Տէրութիւնը ինչպէ՞ս կրնար իր յօժար կամքով ազատ-որմնադիրներու

քարոզած տիեզերքի ժողովուրդներու եղբայրութեան եւ հաւասարութեան սկզբունքները եւ գաղափարաբանութիւնը լաւ աչքով դիտել եւ թոյլատրել անոնց գործունէութիւնը, երբ իսլամական կրօնքին հիմը իր մահմետական եւ ոչ-մահմետական հպատակներուն օրէնքի առջեւ անհաւասարութիւնն է: Հետեւաբար, երբ ազատ-որմնադրութիւնը հետզհետէ հետեւորդներ կը գտնէր Պոլսոյ մէջ, վերոյիշեալ առաջին օթեակը օսմանեան իշխանութիւններու խիստ հակազդեցութեան հանդիպեցաւ: Գործադիր իշխանութեան նստավայրը՝ Բարձր Դուռը անմիջապէս միջոցներ ձեռք առաւ այդ չարժումը սաղմին մէջ խեղդելու համար:

Այդ թուականներուն, Պոլսոյ մէջ Ֆրանսայի դեսպան Կոմս Ռոլան տէ զ'Ալլէօր (Comte Roland Des Alleurs), 24 Նոյեմբեր 1748 թուակիր նամակով մը ծովային նախարար Ժան Ֆրետերիք Մորըփայի (Comte Jean-Frédéric Maurepas) կը տեղեկացնէ, թէ «բազմաթիւ անգլիացի վաճառականներ ջանք կը թափեն ֆրանսացի առեւտրականներ եւս այդ ընկերութեան մասնակից դարձնել, եւ կը կարծեմ յաջողած ալ են»[8]: Ըստ սոյն տեղեկագրին, նախաձեռնողները՝ յարմար հաւաքավայր չունենալով, «ժողովները Անգլիոյ Պոլսոյ դեսպանատան թարգմանին բնակարանը կը կատարեն»[9]:

Վստահաբար Բ. Դուռը նուազ պիտի մտահոգուէր, եթէ ազատ-որմնադիրներու Պոլսոյ մէջ գործունէութիւնը սահմանափակ համայնք մը ներկայացնող օտարներու չրջանակի մը մէջ միայն արձագանգ գտած ըլլար: Բայց այդպէս չեղաւ, եւ եւրոպացիներու հետ առեւտրական, մշակութային եւ կրօնական սերտ կապեր ունեցող Պոլսոյ յոյն եւ հայ համայնքներու պատկանող անդամներ, «ոմանք անապարծութեան, ուրիշներ՝ հետաքրքրութեան համար ազատ-որմնադիրներու գործունէութեան հանդէպ համակրանք ցոյց տուին ու անոնց ժողովներուն մասնակցիլ սկսան»[10], ինչպէս կը մեկնաբանէ ժամանակակից ֆրանսացի հեղինակ մը:

Այս պարագան անշուշտ չուշացաւ նաեւ Պոլսոյ ոչ-իսլամ համայնքներու ազգապետերու ուշադրութիւնը գրաւելու: Անոնք՝ այս չարժումի ծաւալումին մէջ իրենց ազդեցութեան տկարացումը նախատեսելով, խիստ զօրաւոր հակազդեցութիւն մը ցոյց տուին: Քաջալերուած Հռոմի Կղեմէս ԺԲ. (1730-40) Պապի 1738ի կոնդակէն, որ ազատ-որմնադիրները կը բանադրէր[11], Պոլսոյ մէջ կաթոլիկէ Եկեղեցւոյ առաջնորդները, Օրթոտոքս Եկեղեցւոյ Կիւրեղ Ե. (1748-51) Պատրիարքը եւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ Յակոբ Նալեան Զմարացի (1741-49 եւ 1752-64) Պատրիարքը ժողով մը գումարեցին եւ որոշեցին հաւաքական պայքարի ձեռնարկել: Ազատ-որմնադիրներու գաղափարաբանութեան տարածումը քրիստոնեայ եկեղեցիներու

գոյութեան սպառնացող աղանդ մը նկատելով, անոնք Բ. Դրան մօտ իբր այդ բողոք մը ներկայացուցին: Մինչ Պոլսոյ լատին կրօնապետը ազատ-որմնադիրները իբր կախարդներ (sorcières) կը ներկայացնէր, յոյն եւ հայ կրօնապետերը գանոնք ցոյց կու տային իբր նոր «աղանդ»ի մը առաջնորդները, որոնք ոչ միայն յոյները եւ հայերը իրենց ազգային եկեղեցիէն հեռացնել ծրագրած էին, «այլ նոյնիսկ մահմետականները կրօնափոխ ընել կը ձգտին»[12]: Բ. Դուռը՝ ընդառաջ երթալով իրեն ներկայացուած բողոքներուն, Ֆրանսայի դեսպանին պատուիրեց, որ Պոլսոյ եւ Զմիւռնիոյ Ֆրանսացի վաճառականները այլեւս իրենց գործունէութիւնը դադրեցնեն: Դեսպան Տէ զ'Ալլէօր Զմիւռնիոյ հիւպատոս Շարլ-Քլոտ Տը Բէյսոնէլի (Charles-Claude de Peyssonnel) հրահանգեց որ Ֆրանսացի առեւտրականները հեռու մնան ազատ-որմնադիրներու կազմակերպութիւններէն[13]:

Այսուհետեւ, կը տեսնենք, թէ եւրոպացի ազատ-որմնադիրները գրեթէ մէկ դար, Օսմանեան կայսրութեան գլխաւոր առեւտրական կեդրոններուն մէջ, ինչպէս Պոլիս, Հալէպ կամ Զմիւռնիա, տենդագին գործունէութիւն մը ցոյց չեն տար: Բայց եւ այնպէս, Անգլիոյ Մեծ Օթեակին անդամ կարգ մը վաճառականներ եւ կամ դիւանագիտական գործակալներ, որոնք Արեւելքի մէջ կը պաշտօնավարէին, ազատ-որմնադիրներու գաղափարաբանութեան ջահը վառ պահեցին, սակայն առանց տեղացի ժողովուրդին մէջ տարածել փորձելու: Կարգ մը փաստաթուղթեր եւ վկայութիւններ կը հաստատեն, թէ Ժ-Թ. դարու առաջին քառորդին, Հալէպի, Աղեքսանդրիոյ եւ Զմիւռնիոյ մէջ ազատ-որմնադիրներու օթեակներ գոյութիւն ունեցած են: Զոր օրինակ, Զմիւռնիոյ մէջ, Ֆրանսայի Մեծ Արեւելք (Grand Orient) օթեակի հովանաւորութեան տակ գոյութիւն ունէր Միացեալ Ազգեր (Nations Réunies) անունը կրող օթեակ մը: Այդ օթեակի 1819 եւ 1824 տարիներուն վերաբերող թղթածրարները կը փաստեն, թէ Եգէականի այդ նաւահանգիստին մէջ գործող օթեակին բոլոր անդամները օտարահպատակ վաճառականներ, արհեստաւորներ կամ դիւանագիտական գործակալներ էին: Այս օթեակի շուրջ 150 անդամները Ֆրանսացի, անգլիացի, ամերիկացի, աւստրիացի, իտալացի կամ ռուս էին, եւ հատ մըն իսկ օսմանահպատակ «եղբայր» չկար[14]: Մինչդեռ ծանօթ է թէ Զմիւռնիոյ մէջ յոյն եւ հրեայ համայնքները մեծ թիւ կը ներկայացնէին եւ այդ շրջանի տնտեսական կեանքին մէջ կարեւոր դեր մը կը կատարէին: Զմիւռնիոյ մէջ Անգլիոյ հիւպատոս Չարլզ Պլանթի (Charles Blunt) մէկ տեղեկագրին համաձայն, Ժ-Թ. դարու կիսուն, քաղաքին մէջ 41000 թուրքեր, 12000 հրեաներ, 7500 յոյներ եւ շուրջ 6000 հայեր կը բնակէին[15]:

Տարբեր երկիրներու ազատ-որմնադիրներու դիւաններուն մէջ պահուած վաւերագրերը մեզի կը թոյլատրեն հաստատել, թէ ազատ-որմնադրական գաղափարաբանութիւնը ԺԹ. դարու երկրորդ կիսուն Օսմանեան Կայսրութեան մէջ նոր թափ մը ստացաւ 1853-56ի Ղրիմի պատերազմէն յետոյ քաղաքական դէպքերու զարգացումին հետեւանքով պարտադրուած ընկերային յեղաշրջումներուն պատճառաւ: Արդարեւ, Օսմանեան Կայսրութիւնը ԺԹ. դարու առաջին քառորդէն յետոյ, այլեւս ի վիճակի չէր երկրին մէջ հետզհետէ աճող ապստամբական շարժումները զսպելու: Իր գոյութիւնը պահելու համար ան նոյնիսկ յաճախ պարտադրուած էր եւրոպական տէրութիւններէն օգնութիւն խնդրելու: Ցատկապէս, երբ Հոկտեմբեր 1853ին, կրկին ռուս-թրքական պատերազմ մը ծագեցաւ, Անգլիա եւ Ֆրանսա՝ Օսմանեան Կայսրութեան յանկարծակի փլուզումէն խիստ մտահոգ, Միջին Արեւելքի մէջ հաւասարակշռութիւնը պահելու եւ Պոլիսը հաւանական ռուսական գրաւումէ մը զերծ պահելու համար, 1854ի գարնան պատերազմին մասնակցեցան եւ օսմանեան բանակներու կողքին զէն ի ձեռին կռուելով, զանոնք ստոյգ պարտութենէ մը փրկեցին: Երախտապարտ Բ. Դուռը այսուհետեւ Արեւմուտքի մեծ պետութիւններու հանդէպ խիստ բարեացակամ եւ հանդուրժող քաղաքականութիւն մը վարել սկսաւ՝ մանաւանդ որ, պատերազմի ընթացքին՝ 1855ին, ան իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, գինուորական ծախքերը հոգալու համար, իր դաշնակիցներէն մեծ փոխառութիւն մը կատարելու պարտադրուած եղած էր:

Ղրիմի պատերազմին գլխաւոր դրական նորութիւնը եղաւ այն, որ Բ. Դուռը՝ իր դաշնակիցներուն եւ մանաւանդ՝ Պոլսոյ մէջ Անգլիոյ դեսպան, երեւելի դիւանագէտ Սըր Սթրաթֆորտ Քաննինկի (Stratford Canning, 1786-1880) յորդորներուն անսալով, Փարիզի խաղաղութեան պայմանագրի (30 Մարտ 1856) ստորագրութենէն առաջ իսկ՝ 18 Փետրուար 1856ին, իր իսկ յօժար կամքով բարենորոգումներու Հաթթ-ը Հիւմայիւն հրովարտակը յայտարարեց եւ Օսմանեան Կայսրութիւնը եւրոպական մեծ տէրութիւններու հսկողութենէն զերծ պահեց:

Այս հրովարտակով Բ. Դուռը անգամ մը եւս կը հաստատէր թէ Նոյեմբեր 1839ի Հաթթ-ը Շէրիֆի տրամադրութիւնները կ'երաշխաւորէ եւ թէ այսուհետեւ տէրութեան բոլոր հպատակները նոյն իրաւասութիւնները եւ նոյն պարտականութիւնները պիտի ունենան: Այսուհետեւ ոչ ոք, Օսմանեան Կայսրութեան մէջ, կրօնքի տարբերութեան պատճառաւ որեւէ հալածանքի կամ խտրականութեան ենթակայ պիտի ըլլայ: Կայսրութեան հպատակ բոլոր ժողովուրդներուն ներկայացուցիչները այսուհետեւ պիտի կարենան իրենց փափաքած վարժարանները յաճախել, ներառեալ՝ գինուորական վարժարանը եւ իրա-

ւունք պիտի ունենան իրենց ուսման եւ կարողութեան համաձայն պաշտօններ ստանձնել: Միաժամանակ, ոչ-իսլամները եւս գինուորական ծառայութեան համար բանակ պիտի կանչուին[16]:

Սուլթան Ապտիւլ Մէճիտ (1839-61) *միաժամանակ սոյն հրովարտակով կը վերահաստատէր, թէ իր նախորդներուն կողմէ օսմանահպատակ քրիստոնեայ եւ այլ ոչ-մահմետական համայնքներու նախապէս տրուած բոլոր առանձնաշնորհումները միշտ ի զօրու են եւ պիտի շարունակուին: Սուլթանը կը հրամայէր իւրաքանչիւր ոչ-իսլամ համայնքի ազգապետի կանոնագիր մը պատրաստել, իր ժողովուրդին մշակութային, կրօնական եւ ընկերային հարցերը իրեն յարմար դատած կերպով կառավարելու եւ անոր յառաջդիմութիւնն ու բարգաւաճումը լաւագոյնս ապահովելու համար: Իւրաքանչիւր ոչ-իսլամ համայնք, իր անդամներէն բաղկացած յանձնախումբ մը պէտք է կազմէր, որ որոշ պայմանաժամի մը ընթացքին կանոնագիր մը պատրաստելով գայն պետութեան գործադիր մարմնին յղէր: Այս ծրագրին նպատակն էր բոլոր համայնքներուն առանձնայատուկ մշակութային, ընկերային եւ կրօնական-եկեղեցական պայմաններու բարեփոխումը ապահովել, որ պիտի նպաստէր համայնքներու յառաջդիմութեան:*

Ըստ այդ հրովարտակի մէկ այլ յանձնառութեան, այսուհետեւ Օսմանեան Կայսրութեան հպատակ ժողովուրդներուն նման, օտարները եւս՝ կայսրութեան օրէնքներու տրամադրութիւնները յարգելով, առանց որեւէ արգելքի, պիտի կարենային իրենց փափաքած վայրերուն մէջ կալուածներ գնել եւ այնտեղ հաստատուիլ: Երկրին տնտեսական պայմանները բարելաւելու եւ առեւտուրը զարգացնելու մտօք, դրամատուներ պիտի հիմնուէին[17]:

Այս կայսերական հրովարտակը, Օսմանեան Պետութեան նման շարիաթի սկզբունքներով կառավարուող բազմակրօն երկրի մը աւելի քան հինգ դարէ ի վեր մահմետական եւ ոչ-իսլամ ժողովուրդներու միջեւ գոյութիւն ունեցող ընկերային, կրօնական, տնտեսական բոլոր պատուարները մէկ օրէն միւսը կը փլցնէր: Անոր հրապարակումը, առաջին մէկ օրէն իսկ, կայսրութեան բազմաթիւ նահանգներուն մէջ մոլեռանդ մահմետականներուն մօտ խիստ գայրոյթ յառաջացուց[18]: *Այդ պատճառաւ ալ Հաթթ-ը Հիւմայիւնի առաջադրած նորութիւնները թէեւ չընդալից կերպով յայտարարուեցան, բայց խօսքէն գործադրութեան միջեւ տարբերութիւնը ահագին ըլլալով, սոյն խոստումներէն ոմանք մինչեւ օսմանեան սահմանադրութեան վերահաստատումը՝ 24 Յուլիս 1908ին, մեռեալ տառ մնացին:*

Նախքան մասնական օթեակներու Պոլսոյ եւ կայսրութեան կարգ մը այլ գլխաւոր քաղաքներու մէջ յաջորդաբար հիմնումին մասին

խօսիլը, յոյժ կարեւոր է հակիրճ կերպով անդրադառնալ ԺԹ. դարու առաջին կիսուն օսմանեան մայրաքաղաքի հայ համայնքին ընկերային եւ ազգային վիճակին եւս:

ԺԹ. դարու կիսուն, Պոլսոյ ընդհանուր բնակչութիւնը՝ ըստ ստոյգ աղբիւրներու, 778,000 հոգի կը հաշուէր: Այս բնակչութեան 421,000ը մահմետական էր (թուրք, ալպանացի, չէրքէզ կամ արաբ), 155,000ը՝ հայ, 145,000ը՝ յոյն, 36,000ը՝ հրեայ եւ 21,000ը՝ գինուոր եւ օտարահպատակ[19]:

Պոլսահայ համայնքը առհասարակ բարեկեցիկ վիճակ մը կը պարզէր: Առեւտրական, ազատ ասպարէզի տէր՝ բժիշկ, ճարտարապետ կամ սեղանաւոր, արհեստաւոր եւ կամ գործաւոր, հայ տարրը մայրաքաղաքի տնտեսական կեանքին մէջ գործօն դեր մը ունէր: 1840ականներէն սկսեալ, ժողովուրդին վրայ ամիրաներուն ունեցած դարաւոր ազդեցութիւնը զօրաւոր հարուած մը կը ստանայ, մանաւանդ երբ, իրենց իսկ նախաձեռնութեամբ 1838ին հիմնուած Սկիւտարի Ճեմարանը՝ ուսուցման ծրագրի մը գործադրութեան առթիւ ծագած տարաձայնութեան մը պատճառաւ, 1841ի աշնան կը փակուի[20]: «Ճեմարանի խնդիրն էր,- կը գրէ պատմաբան Ճակոբ Ճ. Սիրունի,- որ փոթորկեց դարուն առաջին կէսը, իրարու դէմ հանելով հայ ամիրաներն ու հայ էնաֆը, իսկ հայ էնաֆին կռնակը ժողովրդական լայն խաւերը կային, որոնք միջամտեցին շատ անգամ իրենց ցոյցերով»[21]:

Պոլսոյ մէջ այս յառաջդիմական շարժումի տարածումին իրենց մասնակցութիւնը կը բերէին մանաւանդ այն երիտասարդ եւ զարգացած տարրերը, որոնք՝ Եւրոպայի մէջ իրենց ուսման շրջանը աւարտելէ յետոյ, իրենց ծննդավայրը վերադարձած էին: Արդարեւ, 1840ականներէն յետոյ կը տեսնենք, թէ ոչ միայն հարուստ ամիրաներու զաւակներն էին, որ Եւրոպա կը մեկնէին՝ բարձրագոյն ուսման հետեւելու համար, այլ ազգասէր ազգայիններ եւ առեւտրականներ կը քաջալերէին աղքատ ընտանիքներու ուսումնատենչ տղաքը, որպէսզի անոնք եւս Արեւմուտքի ուսման կեդրոններու մէջ կարենան բարձրագոյն կրթութեան հետեւիլ: Այդ թուականներուն, նախընտրութիւնը կը տրուէր բժշկական, երկրագործական եւ առեւտրական մասնագիտական վարժարաններուն եւ ճիւղերուն: Այս խումբը մը երիտասարդներն էին, որոնք յետագային՝ Պոլիս վերադառնալով, քաղաքի իրենց յառաջդիմական ազգակիցներուն հետ, Օսմանեան կայսրութեան հպատակ հայ ժողովուրդի ազգային, ընկերային եւ մշակութային կեանքին նոր ուղղութիւն մը տուին:

Հաթթ-ը Հիւմայիւնով, երբ սուլթանը իւրաքանչիւր ոչ-իսլամ համայնքի ազգապետի հրամայեց իր ժողովուրդին համար կանոնագիր մը պատրաստել, Եւրոպա ուսում ստացած երիտասարդները եւ պոլ-

սահայութեան ազգասէր ու յառաջդիմասէր տարրերը՝ միանալով, նախաձեռնութիւնը ձեռք առին եւ Ազգային Սահմանադրութիւնը պատրաստեցին։ Հայոց կողմէ՝ «Ազգային Սահմանադրութիւն», իսկ Բ. Դրան կողմէ՝ Նիզամնամէ-ի Միլլէթ-ի Էրմէնիէն կոչուած օսմանահպատակ հայ ազգի կանոնագրութեան պատրաստութեան մէջ գլխաւորաբար դեր ունեցան Տոքթ. Նահապետ Ռուսինեան (1819-1876), Տոքթ. Սէրվիչէն (1815-1897), Նիկողոս Պալեան (1825-1858) եւ Գրիգոր Օտեան (1834-1887)[22]։ Այս կանոնագիրը՝ յետ երկարատեւ ուսումնասիրութեան, 24 Մայիս 1860ին է միայն, որ պետութեան ներկայացուեցաւ։

Այդ թուականներուն կը զուգադիպի նաեւ բազմաթիւ եւրոպացիներու մուտքը Պոլիս, օգտուելով Օսմանեան Տէրութեան բարեացակամ քաղաքականութենէն։ Արդարեւ, կը տեսնենք թէ բազմաթիւ եւրոպացիներ, մանաւանդ՝ անգլիացի եւ ֆրանսացի գործատէրեր, նաւաշինարաններու մէջ աշխատող ճարտարագէտներ եւ արհեստաւորներ, ինչպէս նաեւ փութով դրամ չահելու եւ դիրք ապահովելու հետամուտ արկածախնդիրներ Պոլիս կամ Զմիւռնիա կ'երթային ու կը հաստատուէին[23]։

Խրիմի պատերազմէն յետոյ Արեւելք մեկնող այս եւրոպացիները իրենց հետ տարին նաեւ իրենց բարքերն ու սովորութիւնները։ Պոլսոյ մէջ փչող ազատութեան այս զեփիւռի առաջին արգասիքը եղաւ ազատ-որմնադիրներու փիլիսոփայութեան եւ ընկերային գաղափարաբանութեան արագ տարածումը Միջին Արեւելքի մէջ, ուր մասոնական օթեակները սկսան յաջորդաբար սունկի նման բուսանիլ։ Օսմանեան Տէրութեան կողմէ, տարբեր թուականներու, եւրոպական տէրութիւններու տրուած զանազան առանձնաշնորհումներուն չնորհիւ, օտարահպատակներու կողմէ հիմնուած այս օթեակներէն իւրաքանչիւրը կը վայելէր հովանաւորութիւնը այն դեսպանատան, որու ներկայացուցած երկրին հպատակութիւնը ունէին անոր հիմնադիրները։ Սկզբնական շրջանին ազատ-որմնադիրներու օթեակներուն մէջ գումարուող ժողովները տեղի կ'ունենային այդ տէրութեան լեզուով։

Պոլսոյ մէջ, երկար տարիներէ ի վեր, վաճառականութիւնը՝ մանաւանդ արտաքին առեւտուրը, ոչ-իսլամ համայնքներու անդամներուն ձեռքը կը գտնուէր[24], որոնք, այդ առթիւ յաճախ Եւրոպա կը ճամբորդէին։ Շատեր՝ օտար լեզուներու գիտակ, օսմանեան մայրաքաղաքին մէջ առանձնաշնորհեալ դիրք մը կը գրաւէին։ Միւս կողմէ, կրօնական եւ մշակութային գործօնը, որ մահմետականները եւրոպացիներէ կը հեռացնէր, ընդհակառակն օսմանահպատակ ոչ-իսլամ ընկերութիւնները անոնց կը մերձեցնէր։ Հետեւաբար, տեղացի գործա-

ցած եւ նախաձեռնող ոչ-իսլամները ջերմօրէն դիմաւորեցին ազատ-որմնադիրներու սկզբունքները, որոնք «եղբայրութիւն, համերաշխութիւն եւ իրարօգնութիւն» կը քարոզեն։

Ամէն պարագայի, Պոլսոյ մէջ հիմնուած առաջին օթեակները ոչ-իսլամներու մօտ աւելի համակրանք գտան քան՝ մահմետականներու։ Արեւմուտքի վարք ու բարքին, ընկերային կեանքի պայմաններուն եւ սովորութիւններուն հանդէպ միշտ կասկածանքով մօտեցող մահմետական պահպանողական ընկերութիւնը միայն քանի մը տարի յետոյ դրապէս պիտի արձագանգէր ազատ-որմնադրական սկզբունքներուն։ Այսուհանդերձ, արեւմտեան երկիրներու ազատ-որմնադրական օթեակներու անդամներուն մէջ կարելի է հանդիպիլ օսմանեան կառավարութեան Եւրոպայի դեսպանատուներուն մէջ պաշտօնավարող մահմետական դիւանագէտներու անուններու։ Ըստ թրքական տուեալներու, ասոնց առաջիններէն է երեւելի դիւանագէտ, քանիցս մեծ եպարքոս նշանակուած Մուսթաֆա Ռէշիտ փաշան, որ Լոնտոն՝ իբր դեսպան պաշտօնավարած ժամանակ, արդէն մասոնական լոյսը ստացած էր[25]։ Յետագային, Օսմանեան Տէրութեան Փարիզի դեսպանատան պաշտօնեաներէն Ալի Պէյ (1856ին) եւ Ֆահրի Պէյ (1861ին) Ֆրանսայի Մեծ Արեւելքի ենթակայ Յարատեւող Բարեկամութիւն (La Persévérante Amitié) օթեակին ընծայուած են[26]։ Նոյն օթեակի դիւաններու արձանագրութիւններուն մէջ կը տեսնենք նաեւ օսմանեան դեսպանատան խորհրդական Յակոբ Էֆենտի Կրճիկեանի եւ պոլսահայ դրամատէր Երամեանի անունները[27]։

Օսմանեան Տէրութեան այդ շրջանին վարած համեմատաբար լայնախոհ ու հանդուրժող քաղաքականութենէն քաջալերուած, խումբ մը պոլսաբնակ անգլիացի ազատ-որմնադիրներ, Անգլիոյ Մեծ Օթեակի հովանաւորութեան տակ, 25 Նոյեմբեր 1856ին հիմնեցին թիւ 687 Արեւելեան (Oriental) անունը կրող առաջին օթեակը[28], որ կը բաղկանար 28 անգլիացի, երեք գերմանացի եւ մէկական ամերիկացի, իռլանտացի, մալթացի, սկովտիացի եւ քորֆուցի անդամներէ։ Անոր բացման պաշտօնական արարողութիւնը տեղի ունեցաւ 7 Օգոստոս 1857ին։

Նոյն օրն իսկ, ըստ Անգլիոյ Մեծ Օթեակի դիւաններու տուեալներուն, կը տեսնենք թէ երկու հայեր կը յարին սոյն օթեակին։ Ասոնցմէ մին՝ Սերովբէ Ագնաւուր (1814-1890) Պոլսոյ հայ կաթողիկէ համայնքի ծանօթ անձնաւորութիւններէն էր։ Նախապէս երիցս Լոնտոն գտնուած, 1854 Փետրուարին արդէն Անգլիոյ Մեծ Օթեակի ենթակայ թիւ 201 Յորդանան (Jordan) օթեակին ընծայուած էր[29]։ Իսկ միւսը՝ երիտասարդ վաճառական մը՝ Գօգմա Աղթիկեան, Մանչեսթրի թիւ 188 Ուղղամտութիւն (Integrity) օթեակին անդամ էր։

Արեւելեան Օթեակը Պոլսոյ մէջ հիմնուած օթեակներու ամենաերկարակեացը պիտի ըլլար: Անիկա Պոլիս բնակող բազմաթիւ երեւելի անգլիացի պաշտօնեաներու, առեւտրականներու ու գանազան ասպարէզի տէր մարդոց հաւաքավայր եղաւ, մանաւանդ՝ ԺԹ. դարուն: Ի բացառեալ 1914-1918ի համաշխարհային առաջին պատերազմի տարիներէն, երբ՝ ինչպէս ազատ-որմնադրական բացատրութեամբ կ'ըսեն, առժամապար «քունի մէջ մտաւ» ան, Արեւելեան Օթեակը, մինչեւ 1935, իր գործունէութիւնը կանոնաւորաբար չարունակեց: Այդ թուականին, երբ Թուրքիոյ հանրապետական կառավարութիւնը օրէնք մը քուէարկելով բոլոր ազատ-որմնադրական օթեակները փակել որոշեց, Արեւելեան Օթեակը եւս փակուեցաւ: Համաշխարհային երկրորդ պատերազմէն ետք՝ 1948ին, երբ Թուրքիոյ մէջ ազատ-որմնադիրներու գործունէութեան դարձեալ արտօնութիւն տրուեցաւ, Արեւելեան Օթեակը վերսկսաւ իր աշխատանքներուն, մինչեւ 1949, երբ վերջնականապէս դադրեցուց իր գործունէութիւնը:

Այս օթեակը, սկիզբէն մինչեւ իր փակումը, ունեցաւ 17 մահմետական եւ 15 հայ «եղբայր»ներ: Այս օթեակին անմիջապէս ընծայուող հայ «եղբայր»ներէն յիշենք Մանաս՝ 1859ին, Սրապիոն Հէքիմեան՝ 1860ին, Սերովբէ Թագաւորեան՝ 1860ին եւ Միքայէլ Ալիշան՝ 1860ին: Յետագային՝ 7 Ապրիլ 1911ին, պոլսահայ համայնքի ծանօթ դէմքերէն, Օսմանեան Դրամատան տնօրէն ու հանրապետական ժամանակաշրջանի Թուրքիոյ խորհրդարանի անդամ Պերճ Քէրէսթէճեան (Türker) եւս նոյն օթեակին պիտի ընծայուէր:

Պոլսոյ մէջ հիմնուած երկրորդ օթեակը Ֆրանսայի Մեծ Արեւելքի հովանաւորութեան տակ հիմնուած եւ Վոսփորի Աստղ (l'Etoile du Bosphore) *անունը կրող օթեակն էր, որ հիմնուեցաւ Պոլիս բնակող Ֆրանսացի վաճառականներու եւ գործատէրերու կողմէ 26 Ապրիլ 1858ին*[30]*: Յետագային այս օթեակին ընծայուեցան բազմաթիւ հրեայ առեւտրականներ: Սահմանափակ գործունէութիւն մը ունեցող այս օթեակը երկարակեաց չեղաւ: Ֆրանսայի Մեծ Արեւելքի Փարիզի դիւանները ցոյց կուտան, թէ միայն քանի մը հայ «եղբայր»ներ ընծայուած են այս օթեակին*[31]*:*

1858 *Յունիսին, անգլիացի դիւանագէտ Սըր Հենրի Պուլվըր* (Henry Bulwer, 1801-1872) *յաջորդեց Քաննինկի, իբրեւ Պոլսոյ մէջ Բրիտանիոյ դեսպան: Ան նախապէս՝ 1837-38 տարիներուն, մօտաւորապէս երկու տարի, պաշտօնավարած էր Պոլսոյ անգլիական դեսպանատան մէջ, իբրեւ քարտուղար: Իսկ Խրիմի պատերազմէն յետոյ, երբ Պալքաններու մէջ խաղաղութեան հաստատման համար եւրոպական երկիրներու*

մասնակցութեամբ Դանուբի յանձնաժողովը կազմուած էր, (որ 1856-58ի միջեւ գործեց), Պուլվըր մաս կը կազմէր անոր, իբր անգլիական պատուիրակութեան անդամ: Յատկապէս, իր այս պաշտօնավարութեան շրջանին է, որ ան մօտէն ծանօթացած էր Օսմանեան կայսրութեան այլազան ժողովուրդներու հոգեբանութեան, անոնց ընկերային կեանքին ու բարքերուն, ու խորապէս թափանցած՝ այլազան համայնքներու փոխ-յարաբերութիւններու ծալքերուն մէջ: Այս շրջանին է նաեւ, որ Պուլվըր բարեկամութիւն հաստատած էր նոյնպէս Պալքաններու մէջ պաշտօնավարող, Մարաշի յետագայ գինուորական կառավարիչ Ահմէտ Ազիզ Փաշային հետ:

Վերոյիշեալ պատճառներով, անգլիացի դիւանագէտը չէր անգիտանար թէ Հաթթ-ը Հիւմայիւնի բովանդակութեան տառացիօրէն գործադրութիւնը Օսմանեան կայսրութեան նման բազմակրօն երկրի մը մէջ, այնքան ալ դիւրին չէր կիրարկել: Պուլվըր՝ ինք եւս ազատ-որմնադիր եւ Անգլիոյ Մեծ Օթեակի Հէրթֆորտ (Herteford) օթեակին անդամ ըլլալով, ուզեց նախեւառաջ ազատ-որմնադրութեան գաղափարաբանութեան եւ սկզբունքներուն շուրջ հաւաքել, զիրար մօտեցնել քաղաքին մահմետական եւ ոչ-իսլամ համայնքներու մտաւորական դէմքերը, առեւտրականներն ու ծանօթ անձնաւորութիւնները: Նկատի առնելով նաեւ, թէ իւրաքանչիւր օթեակ կը վայելէր իր երկրի դեսպանատան բարոյական պաշտպանութիւնը, շատ բնական է, որ ազատ-որմնադիրներու օթեակներու հիմնումը, Միջին Արեւելքի մէջ Անգլիոյ քաղաքական թէ տնտեսական ազդեցութեան տարածումին ու ամրացումին իւ նպաստ մեծ դեր մը կրնար ունենալ: Ֆրանսացի իրաւագէտ եւ Ֆրանսայի Մեծ Արեւելքի Բարձրագոյն Խորհուրդի անդամ Լուի Ամիապլ (Louis Amiable, 1837-97), որ նոյն տարիներուն Պոլսոյ մէջ իր փայլուն գործունէութեամբ քանի մը օթեակներու հիմնումին եւ ազատ-որմնադրութեան գաղափարաբանութեան դրօշակակիր պիտի ըլլար, Պուլվըրի ծրագրին ներքին ծալքերուն ականատես ըլլալով, յետագային պիտի գրէր· «Պուլվըր համոզուած էր թէ ազատ-որմնադրութիւնը մեծ առաքելութիւն մը ունէր Մերձաւոր Արեւելքի մէջ»[32]:

Պուլվըր, նախ՝ 1859 Մայիսին, Պոլսոյ մէջ հիմնուած անգլիական Արեւելեան օթեակին յարեցաւ: Իր դեսպանութեան ժամանակ հիմնուած առաջին օթեակը Զմիւռնիոյ մէջ է: Սոյն օթեակի հիմնադիր անդամներուն մէջ կը տեսնենք Հայտ Քլարք՝ իրրեւ առաջին նախագահ, եւ «եղբայր» Ագնաւուր՝ իրր աւագ-վերահսկիչ: Թիւ 806 եւ Հոմերոս (Homer) անունը կրող այս օթեակի հիմնումին մասին հիմնադիրներուն կողմէ Անգլիոյ Մեծ Օթեակին ուղարկուած խնդրագիրը 19 Նոյեմբեր 1859 թուականը կը կրէր: Հիմնադիրներուն մէջ Ագնաւուր

միակ օսմանահպատակն էր։ Միւսները ընդհանրապէս անգլիացի էին։ Կային նաեւ Ֆրանսայի Մեծ Արեւելքի անդամ երկու Ֆրանսացիներ։ Հոմերոս օթեակի բացման արարողութիւնը տեղի ունեցաւ 7 Օգոստոս 1860ին, որուն անձամբ նախագահեց Պուլվըր[33]։

Պուլվըր նաեւ Պոլսոյ մէջ հիմնեց օթեակ մը, որ կրեց իր անունը։ Թիւ 891 Պուլվըր (Bulwer) օթեակը 9 Նոյեմբեր 1861ին հիմնուեցաւ նախ՝ Վոսփորի եւրոպական ցամաքամասի՝ Սեւ ծովու ափին գտնուող Պիւյիւքտէրէ գիւղին մէջ, ապա փոխադրուեցաւ քաղաք[34]։ Իր անդամներուն մէջ անմիջապէս կը հանդիպինք Ագնաւուրի անուան, որ միջոց մը՝ առյն օթեակին Գերյարգելի վարպետը ըլլալով, նախագահեց անոր։ Պուլվըր օթեակը ունեցաւ 11 հայ եւ 16 մահմետական «եղբայր»ներ[35]։

1860ականներուն Գերմանիոյ միութիւնը տակաւին չէր իրականացած եւ Բրուսիա Օսմանեան կայսրութեան քաղաքական կեանքին մէջ դեռ ազդեցիկ դեր մը չունէր։ Այսուհանդերձ, Պոլսոյ եւ Զմիւռնիոյ նման առեւտրական գլխաւոր կեդրոններու մէջ գերմանախօս համայնք մը կար, որ մեծաւ մասամբ կը բաղկանար ծագումով հրեաներէ։ Անոնք այդ քաղաքներու առեւտրական հրապարակին վրայ աչքոյժ դեր մը ունէին։ Պուլվըր, որ կ'ուզէր այդ գործունեայ տարրերը եւս Անգլիոյ ազդեցութեան ենթարկել, յաջորդաբար Պոլսոյ մէջ հիմնեց 30 Մարտ 1860ին թիւ 818 Գերմանական Դաշնակցութիւն (Deutscher Bund), իսկ 30 Մարտ 1861ին ալ՝ Զմիւռնիոյ մէջ թիւ 896 Յաղթանակ (La Victoire) օթեակները։ Յաղթանակ օթեակի հիմնադիր անդամները բոլորն ալ Հոմերոս օթեակի անդամ «եղբայր»ներ էին։ Այս երկու օթեակներու ժողովները գերմաներէնով տեղի կ'ունենային։

Անգլիոյ Մեծ Օթեակի հովանաւորութեան տակ, բայց յատկապէս Պոլսոյ եւ Զմիւռնիոյ մէջ գերմանախօսներու ուղղուած վերոյիշեալ երկու օթեակներու հիմնումը, ըստ ժամանակակից պատմաբանի մը, «կը թուի թէ Համպուրկի Մեծ Օթեակի ազգային հպարտութիւնը վիրաւորած էր, որ, 1862ին կը չտապէր օսմանեան մայրաքաղաքին մէջ իր առաջին օթեակը հիմնել»[36]։

Արդարեւ, Խրիմի պատերազմէն յետոյ, զանազան տէրութիւններու հովանաւորութիւնը վայելող ազատ-որմնադիրներու օթեակներու յաջորդաբար հիմնումով, իւրաքանչիւր տէրութիւն կը թուի համոզուած ըլլալ, թէ իր քաղաքական եւ տնտեսական ազդեցութեան ընդարձակումին առընթեր, այդպէսով, Արեւելքի այլազան ժողովուրդներու մօտ բարոյական նոր յաղթանակ մըն ալ արձանագրած կ'ըլլար։

Ագնաւուր լաւ ծանօթ էր Պոլսոյ մէջ գոյութիւն ունեցող կրօնական թէ ընկերային մտայնութեան։ Գիտէր, թէ մայրաքաղաքին մէջ կար դասակարգ մը՝ խիստ աւանդապահ եւ պահպանողական, որ բնաւ հաշտ չէր դիտեր հայ համայնքին մէջ ազատ-որմնադիրներու

գաղափարաբանութեան տարածումը[37]: Այս պատճառաւ է, որ թէեւ կը ցանկար գուտ հայկական օթեակ մը հիմնելու նախաձեռնութիւնը ձեռք առնել, սակայն բաւականացաւ 1862ի ամառը Պոլսոյ մէջ Հայկ կամ Օրիոն բարեսիրական միութիւնը հիմնելով[38]: Այս միութեան նպատակը ուրիշ բան չէր, եթէ ոչ համայնքին կարօտեալ անդամներուն առաւելագոյն չափով օգտակար ըլլալ: Բայց Ագնաւուր, ազատորմնադիրներու գաղափարաբանութեան տարածման համար իր տարած աշխատանքով ծանօթ դէմք մը ըլլալով, ըսի-ըսաւներու առաջքը առնելու եւ հաւանական հակազդեցութիւնները կանխելու համար, մամուլի միջոցաւ իր նախաձեռնութեան ծրագիրը անմիջապէս հասարակութեան ուշադրութեան յանձնեց: Հայկ միութեան պաշտօնական բացումի արարողութիւնը տեղի ունեցաւ 21 Օգոստոս 1862ին, Բերա Քրէփէնի անցքին մէջ, անգլիացի հիւրերու եւ հայ անդամներու ներկայութեամբ: Քանի մը օր յետոյ, Մասիս շաբաթաթերթը, որու արտօնատէր Կարապետ Իւթիւճեան կը բաժնէր Ագնաւուրի գաղափարները, ամբողջութեամբ հրատարակեց անոր հաղորդագրութիւնը:

Ագնաւուր կը գրէ. «Այս նորահաստատ ճիւղը Մանչէսթրըի «Միութեան Օտտ Ֆէլլոզ» եղբայրութեան ճիւղին միացած է, եւ ոչ թէ Ֆրանմասօններուն եւ Հէվանթ Հերալտն ալ Օտտ Ֆէլլոզ օթեակը գրած է եւ ոչ թէ Ֆրանմասօն:

«... Շատ առենէ ի վեր կը փափաքէինք, որ մեր ազգն ալ, Ֆրանմասօնեան ընկերութեան դէմ ունեցած անտեղի նախապաշարումները թօթափելով, եղբայրական հիմանց վրայ ընկերութիւն մը հաստատէր, որով կարողանար չքաւոր, թշուառ, հիւանդ եւ պանդուխտ մարդոց նպաստ եւ օգնութիւն ընել. վասնզի ճշմարտապէս համոզուած էինք, որ այն ընկերութեան նպատակին մէջ ոչ տէրութեան, ոչ կրօնի, ոչ խղճմտանաց եւ ոչ ալ աստուածապաշտութեան դէմ բան մը կար, ինչպէս որ ոմանք տգիտաբար այնպէս կ'երեւակայեն: Սակայն, նկատելով թէ Ֆրանմասօնեան եղբայրութեան դէմ ոմանք գաղտնի եւ ոմանք ալ յայտնապէս անգսպելի ընդդիմութիւն մը ունին, (թէեւ լիովին անհիմն է, մանաւանդ երբ նկատեն, որ թագաւորէն մինչեւ յետին գործաւորը անդամ կրնայ գրուիլ) աւելի պատշաճ համարեցանք Օտտ Ֆէլլոզ եղբայրութեան ճիւղ մը հաստատել եւ Օրիոն կամ Հայկ անուանել, ինչպէս որ Անգլիացիք ալ Անգլիոյ Վեհափառ Թագուհւոյն Վսեմափայլ Սրբ Հէնրի Լ. Պուլվըր դեսպանի հովանաւորութեան ներքեւ եւ մեր օգոստափառ կայսեր տէրութեան հաճութեամբ Աստղ Արեւելից կոչուած ճիւղը հաստատած են, որուն յարակից է եւ Հայկ ճիւղը»[39]:

Սոյն յայտարարութենէն յետոյ, Ագնաւուր կոչ ըրաւ ամէն անոնց, որոնք կը փափաքէին անդամակցիլ վերոյիշեալ ընկերութեան, թէ

«ամէն մարդ կրնայ առանց խտրութեան ազգի, կրօնի եւ վիճակի անդամակից ըլլալ սոյն ընկերութեան. բաւական է որ արատաւոր, ախտաւոր, մոլի եւ վատ բարուց տէր չըլլայ եւ ընկերութեան մէջ յարգ եւ պատիւ ունենայ»[40]:

Մասիսի մէջ լոյս տեսած Ագնաւուրի հաղորդագրութիւնը ցոյց կու տայ, թէ ան որքան խոհեմօրէն կը չարժէր Պոլսոյ պահպանողական շրջանակներու քննադատութիւններուն չենթարկուելու համար: Պոլսահայ համայնքի ազգասէր անդամներու կողմէ, երկու տարի առաջ՝ 1860ին, Հայկական Բարեգործական Ընկերութիւն անունով միութիւն մը հիմնուած էր, որուն նպատակը թէ՛ մայրաքաղաքին, թէ՛ գաւառներու կարօտեալ ընտանիքներուն օգնել էր: Թէ՛ այս ընկերութիւնը, թէ՛ նոյն տարին՝ 1862ին հիմնուած Բաժանորդական Ընկերութիւնը, որուն ծրագիրը գաւառներու պատանիներուն ուսում ջամբել էր, տեղական բնոյթ ունեցող նախաձեռնութիւններ էին[41]: Մինչդեռ Ագնաւուրի կողմէ հիմնուած Հայկ միութիւնը, կեդրոնը Անգլիոյ մէջ գտնուող օտար բարեսիրական կազմակերպութեան մը մասնաճիւղն էր, ինչ որ աւելի մեծ հմայք մը կու տար անոր, Պոլսոյ արեւմտասէր հայ հասարակութեան շրջանակներուն մէջ:

Այդ թուականներուն կը գուգադիպի նաեւ 1862 Օգոստոսի Զէյթունի «ապստամբութիւնը», երբ Մարաշի զինուորական կառավարիչ Ագիզ Փաշա՝ առանց իսկ խնդրին լուսաբանութեան համար հարցաքննութեան դիմելու, բազմահազար կանոնաւոր զինուորներով եւ չերքէզ պաշտպոգուքներով Զէյթունի վրայ յարձակում գործեց[42]: Զէյթունի իշխանները՝ նախապէս քանի մը հարիւր հոգի զոհ տալէ յետոյ, յաջողեցան ահեղ կռիւէ մը ետք պարտութեան մատնել Ագիզ Փաշայի բանակը: Ագիզ փաշա հազիւ կարողացաւ փախչիլ ճակատամարտի վայրէն:

Լիբանանի մէջ 1860ին մահմետականներու կողմէ քրիստոնեայ արաբներու դէմ գործադրուած սպանդին վերջ տալու համար Ֆրանսայի Նափոլէոն Գ. (1852-70) կայսեր զինուորական ազդու միջամտութենէն քաջալերուած, զէյթունցիները եւս Ֆրանսայի մօտ դիմում կատարեցին: Նափոլէոն Գ. թէեւ այս անգամ զինուորական միջամտութեան չդիմեց, բայց Պոլսոյ Ֆրանսական դեսպանատան միջոցաւ, Զէյթունի դէմ Ագիզ Փաշայի եւ անոր յաջորդ Աչիր Փաշայի ծրագրած բնաջնջումի գործողութեան արգելք եղաւ: Հետեւաբար Ֆրանսայի հանդէպ Օսմանեան Կայսրութեան հպատակ հայ ժողովուրդի համակրանքը անսահման էր այդ օրերուն:

Մինչ Ֆրանսա, Արեւելքի քրիստոնեաներու պաշտպանութեան համար օսմանեան կառավարութեան վրայ ճնշում կը բանեցնէր, Պոլսոյ մէջ Անգլիոյ դեսպան Պուլվըր, Զէյթունի մէջ տեղի ունեցած դէպքե-

րուն ժամանակ, աւելի համամիտ գտնուեցաւ Բ. Դրան քաղաքականութեան: Ան ոչ միայն գէյթունցիներու օգնութեան աղերսանքին դրական պատասխան չտուաւ, այլ Ազիզ Փաշային բարեկամ ըլլալով, բացայայտօրէն գայն պաշտպանեց, գիտնալով նաեւ, թէ Բ. Դուռը կը բաժնէր անոր հայաջինջ ծրագիրը:

Հաւանաբար վերոյիշեալ քաղաքական դէպքերու ընդհանուր գարգացումին հետեւանքով է, որ երբ Ֆրանսայի *Մեծ Արեւելքը* Պոլսոյ մէջ նոր օթեակ մը հիմնեց, քաղաքին հայ համայնքի կարգ մը երեւելի դէմքեր, անմիջապէս անոր ընծայուեցան: Արդարեւ, որպէս Արեւելքի քրիստոնեայ ժողովուրդներու պաշտպան եւ ազատամիտ պետութիւն, Ֆրանսայի ազդեցութիւնը այդ պատմական օրերու քաղաքական դէպքերու հոլովոյթին պատճառաւ, Պոլսոյ մէջ իր գագաթնակէտին հասած էր: Քիչ չէին անոնք, որոնք կը յուսային Արեւմտահայաստանի հարցը մօտալուտ ապագային Ֆրանսայի ազդու միջամտութեան շնորհիւ լուծուած տեսնել: Ֆրանսայի ամենաերեւելի ազատ-որմնադիրները մի՞թէ յունական դատին հանդէպ խոր համակրանք մը ցոյց չէին տուած[43]: Զէյթունի «ապաստամբութեան» խնդրի ամէնէն հրատապ այս շրջանին, 1862ի աշնան, Պոլսոյ մէջ կը հիմնուէր նոր օթեակ մը, Ֆրանսայի *Մեծ Արեւելքի* հովանաւորութեան տակ, որ թէեւ սկիզբը մեծ յոյսեր կը ներշնչէր, բայց գիսաւոր աստղի մը նման կարճատեւ կեանք մը ունենալով, տասնեակ մը տարիներ յետոյ պիտի անհետանար: Այս օթեակը *Արեւելքի Միութիւն* (Union d'Orient) օթեակն է:

Պոլսոյ մէջ ազատ-որմնադրութեան գաղափարաբանութեան տարածումին ամենակարեւոր եւ էական դերը վստահաբար Ֆրանսայի *Մեծ Արեւելքին* ենթակայ, 23 Հոկտեմբեր 1862ին հիմնուած այս օթեակին կը վիճակուի, որուն բացման պաշտօնական արարողութիւնը տեղի ունեցաւ 23 Մարտ 1863ին: Այս օթեակը կը հիմնուէր զանազան ասպարէզի տէր քանի մը անձերու նախաձեռնութեամբ, բայց գաղափարը յղացած էին Փարիզի *Մեծ Արեւելքի* եղբայրներ Տոքթ. Ալեքսանտր Շինաս եւ տպարանատէր Մօիզ տը Քասթրօ: Միւս հիմնադիր անդամներն են աւետարանական Սալոմոն Տէլ Փօրթօ, դրամատան պաշտօնեայ Էմմանուէլ Ֆ. Վենեցիանի, լուսանկարիչ Ժան-Պաթիսթ Տըրէն եւ դեղագործ Էտուար Օթթոնի[44]: Այս նախաձեռնութեան քանի մը շաբաթ յետոյ կը միանար նաեւ Ազնաւուր: Մինչ *Վոլփորի Աստղ* օթեակը սկզբնական շրջանին կը նախընտրէր իր անդամները առնուազն մայրաքաղաքի Ֆրանսացի համայնքէն ունենալ, *Արեւելքի Միութիւնը* առաջին մէկ օրէն իսկ, նպատակադրեց նոյն տանիքին տակ հաւաքել Պոլսոյ այլազան համայնքներու ծանօթ դէմքերը: Ազատ-որմնադրութեան սկզբունքը միթէ չէ՞ր յորդորեր առանց ցեղի, կրօնքի եւ դաւանանքի խտրութեան բոլոր ազգութիւններու միջեւ

համերաշխ գործակցութիւն մը ապահովել, յանուն մարդկութեան յառաջդիմութեան եւ բարօրութեան: Հետեւաբար այս օթեակին կոչը առաջին մէկ օրէն իսկ արտակարգ ընդունելութիւն գտաւ Պոլսոյ քոզմոփոլիթ շրջանակներուն մօտ: *Արեւելքի Միութիւն* օթեակի առաջին նախագահ ընտրուեցաւ «եղբայր» Շինաս:

Օթեակի բացման արարողութեան առթիւ Տոքթ. Շինասի արտասանած ճառը խիստ յատկանշական է անով, որ բացայայտ կերպով կը ցոլացնէ մինչեւ ժԹ. դարու կէսը, Պոլսոյ մէջ օսմանահպատակ այլազան ժողովուրդներու դարերու ընթացքին իրարու հետ ունեցած յարաբերութիւններուն իսկական պատկերը, երբ ան կը յայտարարէ. «Երկրի մը մէջ ուր զանազան ցեղերը որ կը բնակին, անոնք մինչեւ հիմա մի միայն գիրար ատեցին, հալածեցին: Երկրի մը մէջ ուր քաղաքացիական եւ կրօնական օրէնքները, զանազան միաբանութիւնները, միութիւնները դարերու ընթացքին փոխանակ զանոնք՝ ժողովուրդները, գիրար մօտեցնելու, ինչ որ պարտ էին ընել, զանոնք իրարմէ աւելի հեռացուցին:

«Ընկերութիւնը քայքայող այս վիճակին վերջ մը տալու միակ դարմանը օթեակի մը հիմնումն էր որուն միակ նպատակը պիտի ըլլայ այս ցեղերուն իրական միացումը որպէսզի անոնք գիրար սիրեն եւ յարգեն ազատ-որմնադրութեան դրօշակը բարձր պահելով»[45]:

Արեւելքի Միութիւն օթեակի բացումին ներկայ եղան նաեւ հինգ հայ «եղբայր»ներ, որոնք մինչ այդ օթեակին միացած եւ կամ անկէ իրենց ընծայումը ստացած էին: Անոնք են Յովհաննէս Թուրտաճեան, Սրապիոն Հէքիմեան, գմիւռնահայ վաճառական Գալուստ Էքիզեան, Յարթէթիկ Նէվրուզեան եւ Միքայէլ Ալիշան: Այս օթեակը մինչեւ տարուան վերջը արդէն ունէր 34 անդամներ[46]:

29 Դեկտեմբեր 1863ին կատարուած նոր ընտրութեամբ, Տոքթ. Շինասի յաջորդեց Ագնաւուր, որ արդէն բազմաթիւ օթեակներու մէջ երկար տարիներէ ի վեր խիստ յարգուած ազատ-որմնադիր մըն էր: Ագնաւուր նախագահութեան իր երդումը ըրաւ 14 Յունուար 1864ին: Ան խոստացաւ իր կարելին ընել լաւագոյնս ծառայելու համար ազատ-որմնադրութեան սկզբունքներուն տարածումին: Իր մէկ տարուան նախագահութեան շրջանին *Արեւելքի Միութիւն* օթեակը մեծ յառաջդիմութիւն արձանագրեց: Անդամներու թիւը 65ի բարձրացաւ, որոնց 17ը Պոլսոյ հայ համայնքին պատկանող զանազան ասպարէզի տէր «եղբայր»ներ էին[47]: Այս անդամներէն ոմանք իրենց ընծայումը ուղղակի *Արեւելքի Միութիւն* օթեակէն ստացան, մինչ ուրիշներ տարբեր օթեակներէ միացան անոր:

Պուլվըր, որ պոլսահայ համայնքի ընտրանիին, ինչպէս նաեւ ժողովուրդին մօտ զգացած էր Ֆրանսայի նկատմամբ հետզհետէ աւելցող

համակրանք մը՝ ի տես Զէյթունի տագնապին առնչութեամբ վերջինիս վարած հայանպաստ քաղաքականութեան, հայ ժողովուրդի վստահութիւնը շահելու համար առիթի մը կը սպասէր: Առաջին առիթը ներկայացաւ 1863ի ձմրան, երբ անգլիական Արեւելքի Աստղ (Star of the East) *եւ հայկական Հայկ միութիւնները որոշեցին իրենց հիմնադրման առաջին տարեդարձը միասնաբար տօնել: Ագնաւուր՝ իբր հիմնադիր Հայկ միութեան եւ փոխ-նախագահ Արեւելքի Աստղի, Պուլվըրի գրեց հետեւեալ նամակը.*

Նորին Գերազանցութիւն
Բարձրապատիւ Սըր Հ. Լ. Պուլվըր

Թող Ձերդ Գերազանցութիւնը բարեհաճի արտօնել ներքոստորագրեալիս, ամենայն յարգանքով տեղեկացնելու թէ այս քաղաքին մէջ նորերս ստեղծուած Արեւելքի Աստղ եւ Հայկ (Օրիոն) օթեակներու Օտտ Ֆէլլօզ եղբայրները, Բերայի Հայկական Թատրոնին մէջ՝ յօգուտ տեղական բարեսիրական կազմակերպութիւններու իրենց տարեկան պարահանդէսին համար բոլոր անհրաժեշտ կարգադրութիւնները ամբողջացնելէ ետք, միասնաբար նշանակած են պատուիրակութիւն մը, որ Ձեր ազնիւ թոյլտուութեամբ այցելէ Ձերդ Գերազանցութեան եւ Ձեզի ներկայացնէ կանոնագիրքն եւ իր յարգանաց հաւաստիքը՝ յանուն զոյգ օթեակներուն:

Կ՚ակնկալեմ, որ Ձերդ Գերազանցութիւնը՝ իրեն յատուկ ազնուութեամբ հովանաւորելով բարեսիրական հաստատութիւնները, պիտի հաճի արտօնել սոյն պատուիրակութեան այցելել իրեն՝ կատարելու յանուն միաբանութեան, իրենց հաճելի պարտականութիւնը եւ միաժամանակ ուրախ պիտի ըլլայ հաղորդելու ներքոստորագրեալիս թէ ո՛ր օրն ու ո՛ր ժամը Ձերդ Գերազանցութեան համար ամենայարմարը պիտի ըլլան նոյն (պատուիրակութիւնը - Ա.Պ.) ընդունելու համար:

Պատիւն ունիմ մնալու
Ձերդ Գերազանցութեան
եղբայրական
եւ ամենախոնարհ ծառան
Ս. Ագնաւուր
Ա.Վ. Արեւելքի Աստղ օթեակի
եւ Գ.Վ. Հայկ (Օրիոն) օթեակի[48]

Կ.Պոլիս, 5 Փետր. 1863

Բերա, 13 Սիրա Սելվի
Թաքիմի դիմաց

Պուլվըր, որ առաջին մէկ օրէն իսկ ազատ-որմնադիրներու օթեակները Պոլսոյ անգլիական դեսպանատան հակակշռին տակ առած էր եւ

կը նախագահէր անոնց տարեկան աւանդական պարահանդէսներուն, ի հարկին դեսպանատան սրահները երբեմն այդ հանդիսութիւններուն տրամադրելով, Ագնաւուրի կողմէ ներկայացուած խնդրանքը ջերմօրէն ընդունեցաւ եւ խոստացաւ անգլօ-հայկական պատուիրակութիւնը շաբաթ մը յետոյ պաշտօնապէս ընդունիլ։

Խրիմի պատերազմի վաղորդայնի այդ պատմական օրերուն, Ազգային Կանոնագրի կամ Սահմանադրութեան վաւերացումը կ'իրականանար շնորհիւ Պուլվըրի վարած ճկուն դիւանագիտութեան։ Ազգային կանոնագիրը՝ Բ. Դրան պահանջին վրայ, Պատրիարքարանի կողմէ վերանայուած ըլլալով, կրկին կառավարութեան յղուած էր։ Բայց ամիսներէ ի վեր Բ. Դուռը անպատասխան թողուցած էր զայն։ Պուլվըր, որ Ջէյթունի հարցին նկատմամբ Ֆրանսայի ցոյց տուած մարդասէր եւ աչխոյժ քաղաքականութեան մօտէն կը հետեւէր, ուզեց Բ. Դրան մօտ ճարպիկ միջամտութեամբ մը թէ՛ Պոլսոյ հայ աւագանին սիրաշահիլ, եւ թէ՛ գանոնք օսմանեան կառավարութեան հանդէպ երախտապարտ ձգելով, Ֆրանսայի ազդեցութիւնը տկարացնել։ Արդարեւ, Պուլվըրի խորհուրդին անսալով է, որ Բ. Դուռը Ազգային կանոնագիրը 17 (նոր տոմարով՝ 29) Մարտ 1863ին, յանկարծ, ի մեծ ուրախութիւն պոլսահայոց, Ալի Փաշայի կողմէ վաւերացուած՝ Պատրիարքարան վերադարձուց[49]։

Պուլվըրի այս միջամտութիւնը, որ բոլոր օսմանահպատակ հայերը Ազգային Սահմանադրութիւնով մը կ'օժտէր, անչուշտ արտակարգ խանդավառութիւն մը ստեղծեց մանաւանդ Պոլսոյ հայ համայնքի յառաջդիմական, արեւմտասէր շրջանակներուն մօտ։

Հետեւաբար, դժուար չէ կռահել, թէ Պոլսոյ մէջ երկու գլխաւոր ազգային հոսանքներ կը գործէին։ Անոնք՝ որոնք իրենց ուսումը Ֆրանսա առած, ֆրանսական յեղափոխութեան ականատես, անոր ազատամիտ սկզբունքներուն նախապատուութիւն կու տային, եւ անոնք՝ որոնք պահպանողական եւ աւանդապաշտ Անգլիոյ յառած էին իրենց ակնարկները, ու կը յուսային անոր օգնութեամբ օր մը Հայաստանի վերածնունդը տեսնել։

1860ականներու սկիզբը, Ֆրանսայի *Մեծ Արեւելքի* օթեակներուն մէջ Աստուծոյ գոյութեան եւ հոգիի անմահութեան շուրջ վիճաբանութիւններ ու գաղափարի փոխանակումներ տեղի կ'ունենային, բայց դեռ որոշ ուղեգիծ մը չէր որդեգրուած, հետեւաբար Անգլիոյ *Մեծ Օթեակին* հետ խզումը դեռ չէր առաջացած։ Այսուհանդերձ, այս երկու մեծ օթեակներուն միջեւ որոշ ցրտութիւն մը արդէն զգալի էր։ Ագնաւուր, որ Պոլսոյ անգլիական օթեակներու կանոնագրի սկզբունքներուն հաւատարիմ էր, Ֆրանսայի *Մեծ Արեւելքի* հովանաւորութեան տակ գտնուող եւ խիստ գործօն *Արեւելքի Միութիւն* օթեա-

կին ալ նախագահը ըլլալու իր հանգամանքով, դժուար չէ գուշակել թէ որքան մեծ վարկ կը վայելէր Պոլսոյ ազատ-որմնադիրներու շրջանակներուն մօտ: Նամանաւանդ, իր օրով է, որ Իտալիոյ Մեծ Արեւելքը Պոլսոյ մէջ հիմնեց Իտալիա (Italia) օթեակը, որուն հիմնադիրներու ցանկին վրայ կը տեսնենք նաեւ Ագնաւուրի անունը[50]:

27 Ապրիլ 1864ին է, որ Պուլվըրի նախաձեռնութեամբ - եւ հաւանաբար Ագնաւուրի թելադրանքով - եօթ անգլիացի «եղբայր»ներ Զմիւռնիոյ մէջ հայկական օթեակ մը հիմնելու համար Անգլիոյ Մեծ Օթեակին խնդրագիր ներկայացուցին: Անգլիոյ Մեծ Օթեակը դրական կերպով ընդառաջեց այս խնդրանքին, եւ Օսմանեան կայսրութեան մէջ ծնունդ առաւ հայկական առաջին օթեակը: Թիւ 1014 այս օթեակը Տիգրան (Dekran) անունը կը կրէր: Անոր պաշտօնական բացումը կատարուեցաւ 12 Օգոստոս 1864ին: Ան թէեւ պաշտօնապէս մինչեւ 6 Յունիս 1894 գոյատեւեց, բայց Օգոստոս 1876էն յետոյ թուրք ոստիկանութեան տեւական հալածանքին ենթակայ ըլլալով, արդէն անշարժութեան մատնուած էր: Տիգրան օթեակը թէեւ իրրեւ հայկական օթեակ կը ճանչցուի, բայց իր կարճատեւ գոյութեան ընթացքին ունեցաւ նաեւ 7 թուրք եւ 3 յոյն «եղբայր»ներ, ինչ որ կը փաստէ թէ միմիայն հայոց չէր վերապահուած: Իր 108 հայ անդամներուն մէջ կը տեսնենք Զմիւռնիոյ հայ գաղութին ծանօթ դէմքեր, ինչպէս Արեւելեան Մամուլ ամսաթերթի արտօնատէր-տնօրէն Մատթէոս Մամուրեան, թարգմանիչ Գրիգոր Չիլինկիրեան, Արշալոյս Արարատեան շաբաթաթերթի խմբագիր Ղուկաս Պալթազարեան, տպարանատէր Յարութիւն Տէտէեան, բառարանագէտ Մեսրոպ Նուպարեան, իրաւաբան Յարութիւն Ահարոնեան, Տոքթ. Պետրոս Թիւրապեան եւլն.[51]:

Վերոյիշեալ օթեակներէն զատ, Պուլվըրի նախաձեռնութեամբ, Պոլսոյ եւ Զմիւռնիոյ մէջ հիմնուեցան նաեւ քանի մը ուրիշ օթեակներ եւս: Պուլվըր չվարանեցաւ նաեւ քաղաքի յոյն համայնքին համար եւս օթեակ մը հիմնել, Առաքինութիւն (Areta) անունով, 1864ի վերջերը: Նոյն ատեն, Ագնաւուր, ընդառաջելով պոլսաբնակ քանի մը ծագումով իրլանտացի եղբայրներու փափաքին, անձամբ միջամտեց Իրլանտայի Մեծ Օթեակի Գերագոյն Խորհուրդի մօտ, որպէսզի Պոլսոյ մէջ օթեակ մը հիմնուի: Այդ առթիւ պատրաստուած խնդրագիրը ստորագրուած է Ագնաւուրի եւ պոլսաբնակ, Արեւելեան Օթեակի անդամ 15 անգլիացիներու եւ իրլանտացիներու կողմէ[52]: Իրլանտայի Մեծ Օթեակի հովանաւորութեան տակ հիմնուած այս օթեակը կը կրէր 168 թիւը, եւ կը կոչուէր Լինսթէր (Leinster), ի յարգանս Իրլանտայի Մեծ Օթեակի նախագահ դուքս տը Լինսթէրի (1791-1874), որ Իրլանտայի ամենամեծ հողատէրերէն մին էր: Այս օթեակը հիմնուեցաւ Վոսփորի եւրոպական ափին՝ Պիւյիւքտէրէ կոչուած գիւղը:

1864ի ամրան Ֆրանսայի ազդեցութիւնը Պոլսոյ մէջ զօրացնելու համար, մասնաւոր առաքելութեամբ մը օսմանեան մայրաքաղաք կը հասնէր Ֆրանսայի Մեծ Արեւելքի Գերագոյն Խորհուրդի անդամ Լուի Ամիապլ։ Հազիւ 27 տարեկան, այս երիտասարդ իրաւագէտը իր համարձակ եւ փառասէր նկարագրով չուտով գրաւեց Պոլսոյ ազատամտական շրջանակներուն ուշադրութիւնը, եւ նոյն տարուան Դեկտեմբերի վերջը տեղի ունեցող Արեւելքի Միութիւն օթեակի նախագահական ընտրութիւններուն թեկնածու ներկայացաւ։ Ազնաւուր, որ նախապէս մտադիր չէր իր թեկնածութիւնը վերստին ներկայացնելու, կրկին դրաւ իր թեկնածութիւնը։ Քուէներու շատ քիչ տարբերութեամբ Ամիապլ ընտրուեցաւ նախագահ։ Ազնաւուր, Ֆրանսայի Մեծ Արեւելքի Գերագոյն Խորհուրդին ուղարկած նամակով մը կը յայտնէր, թէ քուէարկութեան մասնակից անդամները մեծամասնութեամբ իրեն ի նպաստ քուէարկած էին, բայց ինք իր թեկնածութիւնը յետոյ ետ առած ըլլալով է, որ Ամիապլ նախագահ ընտրուած էր[53]։ Արեւելքի Միութիւն օթեակի «եղբայրները», հիմնադիր եղբայր Տոքթ. Շինասը եւ Ազնաւուրը ընտրեցին պատուակալ նախագահ, առ ի երախտագիտութիւն ազատ-որմնադրական գաղափարաբանութեան տարածման համար անոնց կատարած գործունէութիւններուն[54]։

Այսուհետեւ, Ամիապլ չորս տարի յաջորդաբար նախագահ ընտրուեցաւ։ Խիստ նախաձեռնող ու հնարամիտ, ան ջանաց այս օթեակին մէջ մէկտեղել նաեւ մայրաքաղաքին շարք մը մահմետական մտաւորական, պաշտօնեայ կամ զինուորական երեւելի անձնաւորութիւնները։ Ամիապլի նախագահութեան շրջանին է, որ այս օթեակին յարեցան նշանաւոր հրապարակախօս Նամըք Քէմալ, իշխան Մուսթաֆա Ֆազըլ՝ Եգիպտոսի փոխարքային եղբայրը, առեւտրական դատարանի չորս դատաւորներ, բարձրաստիճան քանի մը զինուորականներ, որոնց կարգին նաեւ՝ Ջէյթունի 1862ի սպանդը կազմակերպած Մարաշի նախկին զինուորական կառավարիչ եւ յետոյ Հանգստեան կոչուած զօրավար՝ Ահմէտ Ազիզ Փաշան (27 Մարտ 1866ին), եւլն.։

Արեւելքի Միութիւն օթեակը, Ամիապլի նախագահութեան շրջանին թէեւ մեծ գործունէութիւն մը արձանագրեց, բայց անոր եւ ուրիշ քանի մը «եղբայրներու կողմէ Աստուծոյ գոյութիւնը խնդրոյ առարկայ ընող յայտարարութիւնները պատճառ եղան, որ Պոլսոյ Ֆրանսայի Մեծ Արեւելքի հովանաւորութեան տակ գտնուող միւս օթեակներուն հետ իր կապերը հետզհետէ սկսին թուլնալ։ Ամիապլի յաջորդող Գերյարգելի Վարպետ Նիքոլա Պորտէանօ (Nicolas Bordéano) եւ մանաւանդ լեհ հանրային ճարտարագէտ, Կոմս Սթանիսլաս Տը Ռոշթէն (Comte Stanislas de Rochetin) չկրցան նոյն ճարտարութեամբ եւ

նրբամտութեամբ այս այլազան համայնքներու անդամներէն բաղկացած քոզմոփոլիթ օթեակին գործունէութիւնը շարունակել, որ ի վերջոյ 1874ի սկիզբը «քունի մէջ մտաւ» եւ յետոյ ալ դադրեցաւ գործելէ[55]:

Խրիմի պատերազմէն յետոյ Պոլսոյ եւ Զմիւռնիոյ մէջ հիմնուած վերոյիշեալ գրեթէ բոլոր օթեակներուն մէջ, ինչպէս վերեւ ըսինք, հայ «եղբայրներու» անուններուն կարելի է հանդիպիլ: Յատկապէս ոչ-իսլամ օսմանեան հպատակներու մօտ ազատ-որմնադրութեան գտած այս ջերմ ընդունելութիւնը ունէր իր պատճառները: Օսմանեան Տէրութիւնը, Հաթթ-ը Հիւմայիւնի հրովարտակով, իր բոլոր հպատակներուն չէ՞ր վստահեցներ, թէ այսուհետեւ աւելի քան հինգ դարերէ իր վեր գոյութիւն ունեցող ընկերային անհաւասարութեան օրէնքները կը ջնջուէին, եւ առանց կրօնքի ու ցեղի խտրութեան, իր բոլոր հպատակները պիտի վայելէին նոյն իրաւունքները: Պոլսոյ եւ Զմիւռնիոյ հայ համայնքներու մտաւորականներէն եւ հրապարակի ծանօթ դէմքերէն ոմանք, որ ազատ-որմնադրութեան գաղափարաբանութիւնը ջերմօրէն ողջունած էին, կը յուսային «Տիեզերքի մարդկութեան եղբայրութեան եւ համերաշխ գործակցութեան» հաւատացող եւրոպացի յառաջդիմական ու ազատամիտ տարրերուն հիմնած ազատ-որմնադիրներու միջազգային մեծ ընտանիքին մաս կազմելով, հայ ազգին բարոյական թէ մտաւոր զարգացումին սատարած ըլլալ: Ժ-Թ. դարուն պոլսահայ համայնքին մէջ ազատ-որմնադրութեան գաղափարաբանութեան գտած ջերմ ընդունելութեան յատկացուած իր յօդուածաշարքին մէջ Ռուբէն Բերբերեան դիտել կուտայ, թէ հայ ազատ-որմնադիրները ազգային նպատակ մը կը հետապնդէին: Նոյն վսեմ սկզբունքներուն շուրջ օթեակներ հիմնելով, անոնք կը յուսային ազգին մէջ տարիներէ ի վեր համայնքը բաժնող կրօնական վէճերուն պատճառաւ ժողովուրդին մէջ տիրող անհամաձայնութեան եւ թշնամանքին վերջ տալ, ազգին մտաւոր զարգացման օգնել եւ կղերին ու ամիրաներու կամայականութիւնից ազատել»[56]: Արդարեւ, կ'աւելցնէ Բերբերեան, «Եւրոպայի թէ՛ մօտաւուտ անցեալը եւ թէ՛ ժամանակակից քաղաքական դէպքերը ցոյց էին տալիս նրանց, որ մի շարք քաղաքական յեղաշրջումներ կատարւում էին մասօնութեան օգնութեամբ: ... Մի տեսակ համոզք էր, որ մի շարք գիտնականներ ու սիրուած գրագէտներ մասօններ էին՝ Վոլթէրը, Քոնտորսէն, մեծ յեղափոխականներ՝ Դանդօնը, Միռաբօն, Հունգարական ազատագրական յեղափոխութեան պարագլուխ Քօշութը, լեհացի ազգային գործիչ Զաոեժոռիժչսկին»[57]:

Զմիւռնիոյ Տիգրան օթեակը այդ պատմական օրերու արգասիքն է, բայց նոյն նախաձեռնութիւնը Պոլսոյ մէջ երկու տարի յետոյ կարելի եղաւ իրականացնել: Պոլսոյ հայ համայնքը հոս եւս Ագնաւուրի կը

պարտի այդ նախաձեռնութիւնը[58]: *Արեւելքի Միութիւն* օթեակի հիմնումին յաջորդող երկու տարիներու ընթացքին տեսանք, թէ որքան ջերմ ընդունելութեան արժանացած էր Ֆրանսայի *Մեծ Արեւելքի* ենթակայ այս օթեակը: Ի տես այս յաջողութեան, Պուլվըր Զմիւռնիոյ հայ համայնքի ծանօթ դէմքերը հաւաքելու միտք, անգլիացի ազատ-որմնադիրներու մասնակցութեամբ *Տիգրան* օթեակը հիմնած էր: Պոլսոյ հայ ազատ-որմնադիրները, որոնք անգլիական, Ֆրանսական եւ իտալական օթեակներու ընծայուած էին, սկսան հարց տալ, թէ կարելի չէ՞ր արդեօք, որ իրենք եւս մայրաքաղաքին մէջ՝ հայ համայնքին համար, օթեակի մը հիմնադրութեան նախաձեռնութիւնը առնէին: Եւրոպական մեծ օթեակի մը հովանաւորութիւնը վայելող նման օթեակ մը, նախ այդ տէրութեան դեսպանատան պաշտպանութեան առարկան ըլլալով, Բ. Դրան ուղղակի հակակշռին ենթակայ չէր ըլլար, յետոյ՝ այդ առանձնաշնորհեալ վիճակէն օգտուելով, հայկական օթեակի «եղբայրները» անարգել կրնային իրենց ժողովուրդին մտաւոր յառաջդիմութեան եւ տնտեսական զարգացումին ծառայող ծրագիրներ մշակել եւ զանոնք իրականացնել: Բայց հարց էր, թէ ո՞ր տէրութեան օթեակի հովանաւորութիւնը պիտի ըլլար լաւագոյն ընտրութիւնը:

Հայ «եղբայրները» կը թուի թէ խորապէս տպաւորուած էին *Արեւելքի Միութիւն* օթեակի նախագահ Ամիապլէն, որ առաջին մէկ օրէն իսկ, ոչ միայն քաջալերած էր մահմետականներու ընծայումը այդ օթեակին մէջ, այլ մանաւանդ, նկատի առնելով անոնցմէ չատերուն օտար լեզուի անծանօթ ըլլալու պարագան, որու պատճառաւ ալ անոնք հեռու կը մնային ազատ-որմնադիրներու գաղափարաբանութեան լոյսէն, մտադրած էր հիմնել օթեակ մը, ուր ժողովները թրքերէնով տեղի պիտի ունենային:

Ստորեւ թարգմանաբար կը ներկայացնենք Ֆրանսայի *Մեծ Արեւելքի* դիւաններուն մէջ պահուած առաջին ժողովի ատենագրութիւնը, որ լաւագոյնս կը պատկերացնէ Պոլսոյ հայկական *Սէր* օթեակի հիմնադիր առաջնորդներուն համոզումը.

Ատենագրութիւն Սէր օթեակի 10/22 Փետրուար 1868ի նախապատրաստական նիստի, Ասմալի-Մեսճիթ փողոց թիւ 32 մասոնական տաճարին մէջ, Բերա, Կոստանդնուպոլիս:

Ներկաներ. Ս. Ագնաւուր, Մ. Ալիշան, Ց. Նէվրուզեան, Մ. Միւհենտիսեան, Պ. Գամալիկ, Բարունակ Պէյ Ֆէրուխան, Յովսէփ Իսկենտէրեան, Ց. Սարաֆեան:

Երեք անդամներ համաձայնած են Իտալիոյ Մեծ Արեւելքին հետ՝ տեղի կապակցութեամբ։ Հարց դրուեցաւ թէ աշխատանքներն հայերէնո՞վ, թէ՞ Թրքերէնով տեղի պիտի ունենան։ Եղբայր Բարուենակ Պէյ բացատրեց, թէ որքան նախընտրելի եւ բնական պիտի ըլլար որդեգրել հայերէնը, նկատի առնելով, որ (արդէն - Ա.Պ.) առաջարկուած էր շուտով ստեղծել Թրքախօս օթեակ մը։ Եղբայր Գամալիկ (եւս - Ա.Պ.) պաշտպանած ըլլալով նոյն կարծիքը, անիկա դրուեցաւ քուէարկութեան եւ միաձայնութեամբ որդեգրուեցաւ՝ միակ դէմով մը, որ աշխատանքներն ու ատենագրութիւնները պիտի ըլլան հայերէնով, այն պայմանով, որ դիւրութեամբ հայերէն խօսիլ չկարողացող եղբայրները իրաւունք ունենան Թրքերէնով արտայայտուելու։

Ապա քննարկուեցաւ (այն հարցը - Ա.Պ.) թէ, օթեակը պէտք է ենթարկուէր Ֆրանսայի Մեծ Արեւելքի՞ն, թէ՝ Ֆրանսայի մէջ սկովտիական ծէսի Գերագոյն Խորհուրդին։ Ներկայ եղբայրները իրենց անհատական կարծիքները յայտնելէ ետք, (Հարցը - Ա.Պ.) դրուեցաւ քուէարկութեան, եւ միաձայնութեամբ որոշուեցաւ Ֆրանսայի Մեծ Արեւելքէն պահանջել սկովտիական ծէսի սահմանադրութիւնը[59]։

Այս կերպով, Մէր օթեակի հիմնադիրները հաւանաբար կը յուսային թէ՛ Ֆրանսական Մեծ Արեւելքի եւ թէ՛ անգլօ-սաքսոն ազատ-որմնադիրներու բարոյական հովանաւորութիւնը վայելած ըլլալ։ Որոշուեցաւ նաեւ Իտալիա օթեակի սրահը վարձել իբր հաւաքավայր, 3000 դրուշ տարեկան վարձքով, ներառեալ լուսաւորութեան եւ ջեռուցումի ծախքը[60]։

Ագնաւուր իր 28 Փետրուար 1866 թուակիր նամակով Ֆրանսայի Մեծ Արեւելքի Բարձրագոյն Խորհուրդին կը յիշեցնէր, թէ Անգլիոյ Մեծ Օթեակի հովանիին տակ գտնուող Պոլսոյ մէջ հիմնուած օթեակի մը, ինչպէս նաեւ Արեւելքի Միութիւն օթեակին նախագահութիւնը վարած էր, եւ կը տեղեկացնէր, թէ իր «հայրենակիցները անհամբեր են շուտով աշխատութեան սկսելու, հետեւաբար կը սպասեն սահմանադրութեան եւ արարողութիւններու ընթացքին անհրաժեշտ իրերուն»[61]։ Սոյն նամակէն կը տեղեկանանք նաեւ, թէ որեւէ յապաղում կանխելու համար, Ագնաւուր փարիզաբնակ «եղբայր» Տէլ Փորթոյի միջոցաւ Ֆրանսայի Մեծ Արեւելքի կեդրոնին փոխանցած էր զանազան ծախքերու համար անհրաժեշտ գումարը։ Ագնաւուրի սոյն նամակէն կ՛իմանանք նաեւ, որ Մէր օթեակի յառաջիկայ վեց ամիսներու ժողովները տեղի պիտի ունենային իւրաքանչիւր ամսու երկրորդ եւ չորրորդ Հինգշաբթի օրերը[62]։

Ազնաւուր իր նամակին կը կցէր նաեւ Մէր օթեակի հիմնադիրներու ցուցակը - երկու օրինակ - զոր լրիւ կը հրատարակենք իբրեւ «Ծաւելուած Ա»[83]: Ինչպէս այդ ցուցակին մէջ կը տեսնուի, հիմնադիր «եղբայր»ներուն 4ը Անգլիոյ Մեծ Օթեակին, 2ը՝ Իտալիոյ Մեծ Արեւելքին ենթակայ Պոլսոյ Իտալիա օթեակին եւ 12ը՝ Ֆրանսայի Մեծ Արեւելքին ենթակայ Պոլսոյ Արեւելքի Միութիւն օթեակին ընծայուած ազատ-որմնադիրներէն են:

Բերբերեանի յօդուածը, որ Պոլսոյ մէջ գործած հայ ազատ-որմնադիրներու պատմութիւնը ուսումնասիրողներուն կողմէ յաճախ իբր գլխաւոր աղբիւր կ'օգտագործուի, Մէր օթեակի հիմնադիրներուն մէջ կը յիշէ Սերովբէ Թագուրեանի եւ Մեղու պարբերաթերթի խմբագիր Յարութիւն Սվաճեանի անունները[84]: Մեր պրպտումներու ընթացքին վերոյիշեալ անձերուն Մէր օթեակի անդամ ըլլալը հաստատող ոչ մէկ փաստ կրցանք գտնել: Մեզի ծանօթ է, թէ Թագուրեան Անգլիոյ Մեծ Օթեակի հովանիին տակ գտնուող Արեւելեան օթեակի ընծայուած էր: Գալով Սվաճեանի, անոր անուան չհանդիպեցանք բնաւ մեր տեսած գրեթէ բոլոր Պոլսոյ օթեակներու ցուցակներուն մէջ: Մեր համոզումով, Սվաճեան, եթէ ազատ-որմնադիր էր, ինչ որ անհաւանական չէ, ընծայուած ըլլալու է Իտալիա օթեակին, քանի որ, այդ օթեակի ցուցակն է միայն, որ չկարողացանք ստուգել:

Մէր օթեակի հիմնումին առթիւ Ազնաւուրի ուղարկած դիմումնագիրը դեռ Ֆրանսական Մեծ Արեւելքը չէր ստացած, երբ քանի մը օր յետոյ՝ 2 Մարտ 1866 թուակիր երկրորդ գրութեամբ մը, ան կը տեղեկացնէր, թէ Պոլսոյ հայ համայնքի զանազան ասպարէզի պատկանող ծանօթ դէմքերէն ութ «եղբայր»ներ՝ Աւետիս Քօլօլեան, Ներսէս Պէյ Տատեան, Տոքթ. Ց. Շիշմանեան, Յարէթիկ Նէվրուզ, Վարդան Փափազեան, Մկրտիչ Փիշմիշ, Գրիգոր Խուրտաճեան եւ Գալուստ Էքիզեան փափաք յայտնած են Մէր օթեակի հիմնադիրներու շարքին միանալ: Բոլոր ասոնք, Ֆրանսայի Մեծ Արեւելքի հովանիին տակ գտնուող Արեւելքի Միութիւն օթեակի անդամներէն ըլլալով, Մէր օթեակի հիմնադիրներու նախաձեռնութեան անոնց մասնակցութիւնը բնականաբար հայկական օթեակի հիմնումին համար կատարուած դիմումին նպաստաւոր ազդեցութիւն մը կրնար ունենալ:

Երբ Մեծ Արեւելքի վարչութեան պատասխանը ուշացաւ, այս անգամ Մէր օթեակի նորընտիր վարչական կազմի անդամները հաւաքական խնդրագիր մը ուղարկեցին Փարիզ, ուր ի միջի այլոց կը գրէին. «Ձեր նոր Սահմանադրութեան կանոնագրէն ոեւէ օրինակ մը չունենալով կ'անգիտանանք պատշաճ ձեւակերպութիւնները որ պէտք է կատարուին նոր օթեակ մը հիմնելու համար: Այսուհանդերձ կը յուսանք որ մեր խնդրանքը դրական կերպով պիտի դիմաւորէք:

«կը խոստանանք Մեծ Արեւելքի կանոններուն հաւատարիմ եւ ճըշգրիտ թարգմանութիւնը կատարել եւ հանդիսաւորապէս կ'երդնունք հաւատարիմ մնալ Ֆրանսայի Մեծ Արեւելքի սկզբունքներուն»[86]:

Մինչ այդ՝ սոյն նամակին Ֆրանսայի Մեծ Արեւելքի կեդրոնը ժամանումէն երկու օր առաջ արդէն, 7 Մայիս 1866ին, Մէր օթեակի հիմնադիրներու դիմումնագիրը Բարձրագոյն Խորհուրդի ժողովի օրակարգին վրայ կը գտնուէր: Նկատի առնելով, որ Մէր օթեակի հիմնադիրները անհրաժեշտ բոլոր պայմանները կը լրացնէին, Բարձրագոյն Խորհուրդը տուաւ պատշաճ արտօնութիւնը, որպէսզի Մէր օթեակը հիմնուի, որուն արարողութիւնները սկովտիական ծէսով, իսկ ժողովները հայերէնով տեղի պիտի ունենան[87]:

Մէր օթեակը դեռ իր պաշտօնական բացումը չէր կատարած, երբ Արեւելքի Միութիւն օթեակի նախագահ Ամիապլ, ամսական ժողովի մը ընթացքին՝ 12 Յունիս 1866ին, խստիւ ուրացաւ Տիեզերքի Մեծ Ճարտարապետին՝ Աստուծոյ գոյութիւնը: Ան կ'ըսէր, թէ «Աստուած գոյութիւն չունի, երբեք ալ գոյութիւն չէ ունեցած եւ նոյնիսկ եթէ Աստուած գոյութիւն ունեցած ըլլար ան մարդկութեան թշնամի պիտի ըլլար, թշնամի պիտի ըլլար նաեւ յառաջդիմութեան» եւլն.[87]: Ի մեծ ընդվզում ներկաներուն եւ նամանաւանդ Արեւելքի Միութիւն օթեակի հայ «եղբայրներուն, ան չարունակեց ըսել, թէ ինք «Տիեզերքի ոչ մէկ Մեծ Ճարտարապետ կը ճանչնայ, այսինքն Աստուած, եւ կ'երդնու եւ կը խոստանայ մի միայն իր պատուին վրայ»[88]:

Ամիապլի այս բուռն ելոյթը, որ ազատ-որմնադրութեան կանոնագրին հիմը կ'ուրանար, խիստ ժխտական տպաւորութիւն գործեց հայ ժողովականներուն վրայ, որոնք որոշեցին բողոքագիր մը ուղարկել Ֆրանսայի Մեծ Արեւելքի կեդրոնին: Սոյն բողոքագիրը ստորագրուած է Յովսէփ Իսկենտէրի, Միւհենտիսեանի, Յարութիւն Նորատունկեանի, Գալուստ Էքիզեանի, Յարութիւն Սարաֆեանի, Ներսէս Տատեանի, Ն. Հակկիարի, Ստեփան Գարաքաշի եւ Եղիա Զայեանի կողմէ: Անոնք իրենց յղած նամակին մէջ յատկապէս կը շեշտէին, որ «օթեակ մը կանոնաւոր չի կրնար ճանչցուիլ առանց Աստուծոյ գոյութեան ճանաչումին»: Քանի մը շաբաթ յետոյ, Ագնաւուր եւս Ֆրանսայի Մեծ Արեւելքի Բարձրագոյն Խորհուրդին նոյնիմաստ նամակ մը ուղղելով, դիտել կու տար, թէ «Ազատ-որմնադրութեան Սահմանադրութեան 29րդ յօդուածը Աստուծոյ գոյութիւնը կը ճանչնայ եւ երբեք չի յօժարիր զայն ուրանալ»[89]: Մէր օթեակի հիմնադիր «եղբայրները, երբ տեսան, թէ Արեւելքի Միութիւն օթեակի դիւանը որեւէ զղջում չի յայտներ վերոյիշեալ յայտարարութիւններուն առնչութեամբ, Փարիզի կեդրոնէն խնդրեցին, որ պատիժ սահմանուի սոյն օթեակին դէմ, որ հակասահմանադրական արտայայտութիւններ ունեցած էր: Սակայն

չուտով համոզուեցան, որ Ֆրանսայի Մեծ Արեւելքը իր լուսութեամբ կը բաժնէր նոյն տեսակէտերը։ Ազնաւուր՝ ի տես այս կացութեան, սպառնաց նախագահութենէ հրաժարիլ։ Մինչ այդ՝ 22 Դեկտեմբեր 1866ին, երբ Մէր օթեակը՝ յետ արտօնութեան, բացման պաշտօնական արարողութիւնը կը կատարէր, հանդիսութեան ներկայ էին ոչ միայն այլ օթեակներու հայ կամ օտար անդամներ, այլ Պոլսոյ գրեթէ բոլոր օթեակներու Գերյարգելի Վարպետները անձամբ մասնակցելով պատուեցին Մէր օթեակի ծնունդը[70]։ Ազնաւուր երբ տեսաւ թէ ազատորմնադիրներու հիմնական սկզբունքներու ջնջումի անպատեհութեան մասին Ֆրանսայի Մեծ Արեւելքի մօտ իր ուղարկած բողոքները որեւէ արձագանգ չգտան, 30 Յունուար 1867ին ընդհանուր քարտուղարին երկար նամակ մը գրեց, ուր ի միջի այլոց կը յիշեցնէր. «Պէտք չէ ձեզմէ ծածկեմ որ եթէ Աստուծոյ Գոյութիւնը եւ Հոգւոյ Անմահութիւնը ուրացուի, ու եթէ երբեք այս երկու սկզբունքները մեր Սահմանադրութենէն (constitution) ջնջուին, դուք պիտի կորսնցնէք ամբողջ Մէր օթեակը եւ բազմաթիւ եղբայրներ Union d'Orient օթեակէն - օթեակ որ Ֆրանսայի Մեծ Արեւելքի հովանաւորութեան տակ կը գործէ - եւ ձեր դէմ պիտի գտնէք - ինչպէս դուք զայն չէք անգիտանար - հին ազատ-որմնադրութեան (սկզբունքներուն հաւատարիմ - Ա.Պ.) բոլոր օտար իշխանութիւնները (obédiences)»[71]։

Վերոյիշեալ ազդարարութիւնները Ֆրանսայի Մեծ Արեւելքի ընդգրկած նոր, ազատամիտ ուղղութեան վրայ որեւէ ազդեցութիւն չըրին եւ Մէր օթեակը, որ դեռ նոր հիմնուած էր, իր յարաբերութիւնները թէեւ չխզեց կեդրոնին հետ, բայց անոնք որոշ շրջան մը առաջին մի քանի տարիներու սերտ վիճակը չունեցան։

Մեծ Արեւելքի Մէր օթեակի վերաբերեալ դիւանները մեզի ցոյց կու տան, թէ 1867ի ընթացքին բազմաթիւ նոր ընծայումներ տեղի ունեցած են։ Անոնցմէ յիշենք մանաւանդ հայ աւետարանական համայնքի ազգապետ Ղազարոս Տաւուտեան՝ 7 Փետրուարին, բանաստեղծ Մկրտիչ Պէշիկթաշլեան՝ 21 Մարտին եւ պալատական հայթայթիչ Սիմոն Պէյ Մաքսուտ՝ 24 Յունիսին[72]։

Պոլսոյ Մէր օթեակի ունեցած թղթակցութիւնները Մեծ Արեւելքին հետ դժբախտաբար անբաւարար են լուսաբանելու համար անոր գործունէութիւնները, որովհետեւ այդ դիւանները օրակարգերու օրինակներ չունին։ Այսուհանդերձ, Մէր օթեակի կողմէ Փարիզ ուղարկուած տարեկան անուանացանկերը ցոյց կու տան Ֆրանսայի Մեծ Արեւելքի հովանաւորութեան տակ հիմնուած վերոյիշեալ օթեակին ընծայուած պոլսահայ ազատ-որմնադիրներու անունները, ինչպէս նաեւ անոնց ծննդավայրն ու թուականը, օթեակի ընծայումի թուականը եւ աստիճանը՝ աշկերտ, ընկեր, վարպետ եւլն.։

Ֆրանսական Մեծ Արեւելքի Մէր օթեակի դիւանները, որոնք լրիւ թղթատեցինք, կը թոյլատրեն մեզի հաստատել, թէ Մէր օթեակի վարչութիւնը տարեկան անուանացանկերը կանոնաւորապէս չէ ուղարկած: Ապա, ուրիշ պարագայ մը եւս գրաւեց մեր ուշադրութիւնը, որ թէեւ Մէր սկիզբը ունէր միայն հայ անդամներ, սակայն 1870ականներէն յետոյ կը հանդիպինք նաեւ մահմետական անուններու: Ըստ այս ցանկերուն, որոնք 11 հատ են, հետեւեալ դասաւորումը կրնանք ընել.

22 Յունուար 1866ին՝	18 հիմնադիր անդամներ
11 Մարտ 1868ին՝	64 անդամներ
13 Ապրիլ 1869ին՝	80 անդամներ
27 Օգոստոս 1875ին՝	55 անդամներ
10 Ապրիլ 1876ին՝	63 անդամներ
28 Մայիս 1877ին՝	65 անդամներ
30 Օգոստոս 1879ին՝	38 անդամներ
16 Մարտ 1881ին՝	33 անդամներ
5 Մայիս 1882ին՝	41 անդամներ
28 Օգոստոս 1886ին՝	49 անդամներ
3 Սեպտեմբեր 1887ին՝	59 անդամներ[73]:

Սոյն ցուցակները, ինչպէս նաեւ Պոլսոյ մէջ գործող բազմաթիւ օթեակներու ցուցակները, որոնք թղթատեցինք, մեզի կը թոյլատրեն եզրակացնելու, թէ Մէր օթեակը իր գրեթէ երեսուն տարուան գործունէութեան ընթացքին ունեցած է ընդամէնը 164 անդամներ, որոնց 158ը հայեր են, 5ը՝ թուրք, եւ մէկն ալ Հնդիկ: Այս անդամներէն ոմանք երկար տարիներ ազատ-որմնադրութեան գաղափարաբանութեան մէկմէկ դրօշակակիրները ըլլալով, անձնուիրաբար ու հաւատարմօրէն ծառայած են անոր սկզբունքներու տարածումին, մինչ ուրիշներ կարճ ժամանակ յետոյ հեռացած են կամ անդամավճարը չեն վճարած, ուստի իրենց արձանագրութիւնը ջնջուած է: Անշուշտ կարելի չէ անպայման հաստատել, թէ 1870ի եւ 1874ի միջեւ բնաւ նոր անդամներ չեն դիմած, որոնք 1875ի ցանկին վրայ պիտի չերեւէին՝ եթէ մինչ այդ հրաժարած ըլլային: Նոյնը կարելի է ըսել 1883է ն 1885 տարիներու համար:

Մէր օթեակը իր երեսուն տարուան գոյութեան ընթացքին ունեցած է հետեւեալ նախագահները.

Սերովբէ Ագնաւուր	1868ին՝ հիմնադիր նախագահ
Պօղոս Գամալիկ	29 Դեկտեմբեր 1867ին ընտրուած
Սերովբէ Ագնաւուր	1869ին՝ կրկին
Տիգրան Եուսուֆեան	4 Յունուար 1870ին ընտրուած

Ճարութիւն Նորատունկեան — 13 Փետրուար 1876ին ընտրուած
Ճարութիւն Մերեէմ-Գուլի — 16 Ապրիլ 1885ին ընտրուած։

Թէեւ Մէր օթեակի ատենագրութիւնները կամ օրակարգերը անկարելի եղաւ գտնել, բայց կարգ մը այլ դիւաններէ կամ թղթակցութիւններէ կարելի է եզրակացնել, որ Մէր օթեակի անդամները թրքահայ ժողովուրդի ապագային հանդէպ ընաւ անտարբեր չեն մնացած, մանաւանդ Հայկական Հարցի ծագումէն յետոյ։ Գիտենք թէ Ճարէթիկ Նէվրուզեան, 1878ի Սան Սթեֆանոյի ռուս-թրքական բանակցութիւններուն ընթացքին, իբրեւ թարգման ընկերացաւ Պոլսոյ Ներսէս Վարժապետեան (1874-84) Պատրիարքին, երբ ան հայկական պահանջները ռուսական բանակի գլխաւոր հրամանատար Մեծ Դուքս Նիքոլայ Նիքոլաեւիչի ներկայացնելու համար Սան Սթեֆանօ մեկնեցաւ։

Պոլսահայ համայնքը խորապէս տպաւորուած Ճէյմզ Պրայսի (1838-1922) Անգլիոյ Աչխարհագրական Արքայական Ընկերութեան մէջ սարքուած երեկոյթի մը ընթացքին արտասանած ճառէն, ուր Լոնտոնի Հայասէր Անգլիացիներու խմբակի առաջնորդը՝ դեռ Սան Սթեֆանոյի դաշնագրի նախօրեակին, Արեւմտահայաստանի ինքնավարութեան ի նպաստ կ՚արտայայտուէր, հաւաքական չնորհակալութեան նամակ մը կ՚ուղարկէր անոր։ 169 պոլսահայ ազգայիններու ստորագրութիւնները կրող այս գրութեան մէջ կը տեսնենք պատրիարքական փոխանորդ Ճովհաննէս Քհնյ. Մկրեանի եւ Գարեգին Վրդ. Սրուանձտեանցի կարգին նաեւ ծանօթ ազատ-որմնադիրներու՝ Ազնաւուրի, Եուսուֆեանի, Մերեէմ-Գուլիի եւ Գաբրիէլ Նորատունկեանի անունները։ Այս վերջինը, որ Փարիզի օսմանեան դեսպանատան մէջ իբրեւ իրաւագիտական խորհրդական պաշտօնավարած ժամանակ Ֆրանսայի Մեծ Արեւելքի հովանաւորութեան տակ գտնուող Բարեգթութիւն-Բարեկամութիւն (La Clémente-Amitié) օթեակին ընծայուած էր, Պոլիս վերադարձին անմիջապէս Մէր օթեակին յարած էր։ Պրայսի ուղղուած այս նամակին մէջ անոնք միաժամանակ կը շեշտէին, թէ «Հայ ժողովուրդին արժանի լուսաւոր ապագայի մը համար Հայաստանի ինքնավարութեան վարչաձեւ մը միակ արմատական լուծումն է»[74]։ Ազնաւուր՝ այս նամակէն քանի մը շաբաթ յետոյ՝ իր կողմէ անձնական նամակ մը եւս Պրայսի ուղարկելով, կը յայտնէր, թէ «Հայ ժողովուրդը իր բարօրութեան եւ յառաջդիմութեան համար անգլիական հովանաւորութիւնը կը նախընտրէ»[75]։

1878ի Պերլինի դաշնագրէն յետոյ, երբ Պոլսոյ աւագանին եւ նամանաւանդ մտաւորական երիտասարդ սերունդը իրենց ուշադրութիւնը Արեւմտահայաստանի գաւառներուն վրայ կեդրոնացուցին՝ իրենց ազգակիցներուն ֆիզիքապէս թէ բարոյապէս օժանդակելու համար,

Մէր օթեակը եւս մասնակցեցաւ այդ չարժումին։ 1880ին Հայաստանի գաւառներու սովը յուզեց ամբողջ պոլսահայ համայնքը։ Դէպի գաւառ նպաստ առաքելու նպատակով, Մէր օթեակի անդամներ Մովսէսոց Ճանճնախումբին անունով հանդէսներ կազմակերպեցին եւ նոյնիսկ դիմեցին համայն աշխարհի «եղբայրական կազմակերպութիւններուն»։ Ֆրանսայի Մեծ Արեւելքը դրապէս արձագանգեց Պոլսոյ Մէր օթեակի «եղբայր»ներու խնդրանքին, եւ Բարձրագոյն Խորհուրդը շտապեց 100 ֆրանքի օգնութիւն մը ընել[76], մինչ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նիւ Եորքի եւ Քալիֆորնիոյ Մեծ Օթեակները մերժեցին իրենց օժանդակութիւնը բերել Մովսէսոց Ճանճնախումբին՝ պատրուակելով, թէ «յանճնախումբին մասոնական հանգամանքը իրենց համար բաւարար չափով չէր հաստատուած»[77]։

Ինչպէս ծանօթ է, 1890ականներու առաջին տարիներէն սկսեալ Հայկական Հարցը հետզհետէ յեղափոխական բնոյթ մը ստացաւ։ Արտասահման հիմնուած գաղտնի կուսակցութիւններու անդամներ Արեւմտահայաստանի գաւառները սկսան թափանցել եւ ազգային չարժումը նոր ուղղութեան մը հետեւեցաւ։ 1890ին Գումգափուի հայոց պատրիարքարանին առջեւ կազմակերպուած հնչակեան ցոյցը[78], գաւառներու մէջ տեղի ունեցող խլրտումները, որոնք օսմանեան իշխանութիւններու կողմէ խստօրէն կը զսպուէին, բովանդակ հայ ժողովուրդը կասկածի տակ դրին, եւ հայկական հաւաքոյթները ոստիկանական իշխանութիւններու հսկողութեան ենթարկուեցան։

Սասունի սպանդին՝ 1894ի ամրան, չուրջ 6000 հայեր քրտական Համիտիէ հեծելագունդերու վայրագութիւններուն զոհ գացին։ Այս ջարդերուն լուրերը՝ հակառակ Բ. Դրան առած զգուշութիւններուն, Սեպտեմբերէն սկսեալ արեւմտեան մամուլի էջերուն գլխաւոր նիւթը դարձան։ Իբրեւ հետեւանք այս կացութեան, հայկական միութիւններու հաւաքոյթները արգիլուեցան։ Մէր օթեակի անդամները եւս կը խուսափէին ժողովներու ներկայ ըլլալէ։

Հայկական Հարցի գարգացումը, իր բոլոր աննախատեսելի հետեւանքներով չյապաղեցաւ նաեւ Ֆրանսայի Մեծ Արեւելքի ուչադրութիւնը գրաւելէ։ Մեծ Արեւելքի Բարձրագոյն Խորհուրդի անդամ Ամիապլ, 17 Սեպտեմբեր 1894ին, Պոլսոյ մէջ Մէր օթեակի վարչութեան քանի մը պատասխանատուներու հետ ժողով մը գումարեց, ուր որոշուեցաւ այլեւս վերջ տալ օթեակի գործունէութեան։ Ամիապլի տեղեկագիրը, որ 28 Հոկտեմբեր թուականը կը կրէ, հետեւեալ կերպով կը նկարագրէ Մէր օթեակի կացութիւնը. «Աւելի քան երեք տարիներէ ի վեր, Պոլսոյ հայ համայնքին մէջ խռովութիւններ կը պատահին, որոնք մինչեւ իսկ արիւնոտ ընդհարումներու տեղի կու տան։ Այդ ժամանակէն ի վեր, այս համայնքը չատ գէչ աչքով կը դիտուի օսմանեան

իշխանութիւններուն կողմէ։ Իրենց անդամներուն բացարձակապէս արգիլուած է հաւաքոյթներ կազմակերպել։

«Սէր օթեակը, բաղկացած ամբողջովին հայ անդամներէ, ուրեմն այդ ժամանակէն ի վեր, ստիպողաբար եւ բացարձակապէս դադրած է գործելէ։

«1865ին, սխալ մը եղաւ այսպիսի օթեակի մը հիմնումը, որ իր աշխատութիւնները հայերէն լեզուով պիտի կատարէր, լեզու մը, որ նոյնիսկ հայ ցեղին բոլոր անդամներուն կողմէ չի խօսուիր։

«Կը համարեմ թէ Սէր օթեակի վերապրումը փափաքելի չէ»[79]։

Սէր օթեակի Գերյարգելի Վարպետ Մերեէմ-Գուլի, Պոլսէն ուղարկուած 3 Յուլիս 1895 թուակիր նամակով մը Ֆրանսայի Մեծ Արեւելքի Բարձրագոյն Խորհուրդին կ'իմացնէր, թէ «բացառիկ պարագաներու բերմամբ Սէր օթեակը չկարենալով իր գործունէութիւնը շարունակել պարտաւորուած է «քունի մէջ մտնել»[80]։ Առժամաբար նկատուած այս պարագան՝ յաջորդող քաղաքական ծանրակշիռ դէպքերու պատճառաւ, վերջնական հանգամանք մը առաւ, ու հայկական օթեակը 1898ին վերջնականապէս փակուեցաւ։

Հայկական Հարցի ծանրակշիռ իրաղարձութիւններուն հետեւանքով է, որ պոլսահայ խումբ մը արեւմտամէտ եւ յառաջդիմական նկատուող ազգայիններու կողմէ, շուրջ երեք տասնեակ տարիներ առաջ մեծ յոյսերով եւ ակնկալութիւններով հիմնուած օսմանեան մայրաքաղաքի առաջին օթեակի ողիսականը այսպիսով վերջ կը գտնէր։ Օթեակի փակումէն յետոյ, անդամներէն ոմանք յարեցան ուրիշ օթեակներու եւ ազատ-որմնադիրներու սկզբունքներուն հաւատարիմ մնալով շարունակեցին նոյն ուղին, մինչ ուրիշներ բոլորովին հեռացան մասոնական շարժումէն։

* * *

Ինչպէս նախապէս արդէն անդրադարձանք, օտարահպատակ ազատ-որմնադիրներու կողմէ հիմնուած օթեակները՝ օտար տէրութիւններու երկար տարիներէ ի վեր ունեցած առաձնաշնորհումներուն շնորհիւ, իրենց դեսպանատուներու բարոյական պաշտպանութիւնը կը վայելէին, եւ այս իսկ պատճառաւ օսմանեան իշխանութիւններու հակողութիւնէն յարաբերաբար զերծ կը մնային։ Այս պարագան բացառիկ առիթ մը կ'ընծայէր Պոլսոյ եւ նամանաւանդ Սելանիկի մէջ Իտալիոյ Մեծ Արեւելքի հովանաւորութեան տակ հիմնուած օթեակներուն, որպէսզի անոնք օսմանեան սուլթանին ընդդիմադիր երիտթուրք շարժումի անդամներու գաղտնի ժողովներուն իբրեւ վստահելի

մէյմէկ թաքստոց ծառայեն, ինչպէս աւելի ուշ դիտել կու տար երեւելի երիտթուրք մը[81]: Մասնաւորաբար սելանիկցի հրեայ փաստաբան Էմմանուէլ Քարասոյի նախաձեռնութեամբ հիմնուած Բարձր Մակեդոնիա (Macedonia Risorta) օթեակը, որ երիտթուրքերու 24 Յուլիս 1908ի յեղափոխութեան կազմակերպումին մէջ խիստ կարեւոր դեր մը խաղաց, որպէս իր առաջին անդամներէն ունեցաւ 1915ի հայկական ցեղասպանութեան գլխաւոր պատասխանատու, «եղբայր» Թալէաթը:

Երբ 1908ի յեղափոխութեան յաջորդեց Միտհաթ Փաշայի 1876ի սահմանադրութեան վերահաստատումը, եւ օսմանահպատակ բոլոր ժողովուրդներուն միջեւ համերաշխութեան ու հաւասարութեան նոր շրջան մը սկսաւ, ազատ-որմնադրութիւնն ալ նոր թափ մը ստացաւ: 1 Օգոստոս 1909ին հիմնուեցաւ Թուրքիոյ Մեծ Արեւելքը (Մաշրըք-ը Ազամ), որուն առաջին նախագահ ընտրուեցաւ Գերյարգելի Վարպետ Թալէաթ: Աւելորդ չ'ըլլար հոս յիշել, որ Հոկտեմբեր 1909ին Բարձրագոյն Խորհուրդի 33 աստիճան կրող 14 անդամներէ բաղկացած նորակազմ վարչութեան մէջ կը գտնենք 7 թուրք եւ 6 հրեայ, ինչպէս նաեւ նոյն աստիճանն ունեցող հայ «եղբայր» մը՝ Միքայէլ Նորատունկեան[82]:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին Թալէաթ եւ իր մօտիկ գործակիցները՝ «եղբայր»ներ Միտհաթ Շիւքրիւ, Ճաւիտ, Իսմայիլ Ճամպոլաթ, Ռահմի, Քարասօ եւ ուրիշներ, իրենց նենգ ծրագիրները իրականացնելու համար ոտնակոխ ըրին ազատ-որմնադրութեան սկզբունքները, ու Փոքր Ասիոյ բովանդակ հայ ժողովուրդը տարագրութեան ենթարկելով անոնց ստացուածքը կողոպտեցին եւ Օսմանեան կայսրութեան մահմետական հպատակներուն միջեւ բաժնեցին: Հայ ազատ-որմնադիրներէն ոմանք իրենց կեանքին գնով վճարեցին երիտթուրք ոճրագործ խմբակի հանդէպ իրենց ունեցած վստահութեան գինը, մինչ ուրիշներ՝ անզօր հանդիսատեսները եղան իրենց ժողովուրդի բնաջնջումին եւ դարաւոր հայրենիքի կործանումին:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Մէր օթեակի մասին հայերէնով լոյս տեսած գլխաւոր աշխատութիւններն են.- Ա[մենաւակ] Ֆ[էնէրճեան], «Ազատ-Որմնադրութիւնը Մօտաւոր Արեւելքի Հայութեան Մէջ», Կեանք Եւ Արուեստ, Ե. տարի, 1935, էջ 73-81. Ռուբէն Բերբերեան, «Հայ Մասոնները եւ «Սէր» Օթեակը Պոլսոյ Մէջ», Հայրենիք, Մարտ-Յունիս 1937. Ա. Ֆէնէրճեան, «Ազատ Որմնադրութիւնը Հայոց Մէջ», Հայրենիք, Հոկտեմբեր 1954-Դեկտեմբեր 1955. Յ. Ճ. Սիրունի, Պոլիս Եւ Իր Դերը, երրորդ հատոր, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1987, էջ 197-217: Սիրունի օգտուած է նախորդ յղուածներէն:

[2] Ազատ-որմնադրութեան սահմանադրութիւնը տե՛ս Le Monde Maçonnique (Paris), XVIe année, Mai 1874, էջ 25-26: Ազատ-որմնադրութեան սահմանադրութիւնը

հայերէն՝ Սահմանադրութիւն Որմնադրական Ուխտին խորագրով, լոյս տեսաւ Փարիզ, 1875ին՝ Մասիսի խմբագրապետ Կարապետ Իւթիւճեանի կողմէ՝ յետ Ցրանասլի Մեծ Արեւելք օթեակի պատօնութեան։ Իտալիոյ Մեծ Արեւելքի ենթակայ Եդիպտոսի հայկական Արարատ օթեակի «եղբայրները զայն ցանկացած էին ունենալ 1868ին. տե՛ս՝ Bibliothèque Nationale (այսուհետեւ՝ B.N.), Փարիզ, FM^2 866։

[3]*The Freemason's Chronicle*, no. 858, 20 June 1891, էջ 395։

[4]*The Freemason's Chronicle*, no. 2454, 21 January 1922, էջ 47։

[5]Ibid., no. 2453, 14 January 1922, էջ 23։

[6]*Gould's Freemasonry History*, 3rd ed., vol. IV, London, 1951, էջ 311։

[7]*Ազատ-որմնադիրներու օթեակներու ժողովներուն կամ հաւաքոյթներուն ոչ-անդամ մը պատօնաւած չէ ներկայ ըլլալու, բայց ուրիշ օթեակէ անդամ մը կրնայ պատօնութեամբ ներկայ ըլլալ։*

[8]P. Antoine Rabbath, *Documents inédits concernant l'histoire du christianisme en Oreint (XVI-XIX s.)*, vol. I, Paris 1905, էջ 13. *տե՛ս նաեւ՝* Հ. Պէրպէրեան, «Առաջին Ազատ-Որմնադիրները Պոլսոյ եւ Զմիւռնիոյ Մէջ», *Կեանք եւ Արուեստ*, 6րդ տարի, թիւ 2, Փետրուար 1936, էջ 41-43։

[9]Jean Humbert, 'Une loge maçonnique à Constantinople en 1748 d'après des documents inédits', *Affaires étrangères*, Octobre 1932, էջ 570։

[10]*Նոյն*, էջ 572։

[11]*Նոյն*։

[12]Humbert, էջ 570. Պէրպէրեան, էջ 41։

[13]Humbert, էջ 572։

[14]B.N., FM^2 589։

[15]*Papers Relating to the Condition of Christians in Turkey*, London: H.M.S.O., 1860, էջ 36։

[16]*4 Մայիս 1855 Քուակիր օրէնքով ոչ-խալամներու զինուորական ատուրքը չնջուեցաւ եւ անոնց ալ զինուորագրութիւնը յաջողութեամբ, տե՛ս՝* Ufuk Gülsoy, *Osmanli gayrimüslimlerinin askerlik serüveni* [*Օսմանցի Ոչ-Մահմետականներուն Զինուորական Արկածախնդրութիւնը*], Istanbul, 2000, էջ 58։

[17]*Հաթթ-ը Հիւմայիւնի լրիւ բովանդակութեան համար տե՛ս՝* *Eastern Papers: Correspondence Respecting Christian Privileges in Turkey*, Part XVIII, London, 1856, էջ 63-66։

[18]*Թուրք պատմաբան Ապտիւրրահման Շէրէֆ Պէյի Հաթթ-ը Հիւմայիւնի յաջողութեան վարդապետին Պոլսոյ մահմետականներու վրայ գործած ազդեցութիւնը նկարագրող գրութիւնը խիստ հետաքրքրական է, երբ ան կը գրէ թէ ոսոխականապետ մը մահմետականի մը կ'ըսէ· «Տղաս, այլեւս կեանքին կեանք պիտի չտանես. հիմա թանզիմաթ կայ», տե՛ս՝* Abdürrahman Şeref Bey, *Tarih Müsahebeleri* [*Պատմութեան Շուրջ Զրոյցներ*], Istanbul, 1339 (1923), էջ 73։

[19]Arthur Beylérian, 'Les Origines de la question arménienne du Traité de San Stefano au Congrès de Berlin (1878)', *Revue d'histoire diplomatique*, nos. 1-2, 1973, էջ 148։

[20]*Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, մասն երրորդ, Երուսաղէմ, Տպարան Սրբոց Յակոբեանց, 1927, սիւնակ 3808-3809։*

[21]*Սիրունի*, էջ 68։

[22]*Օտեանի եւ իր ժամանակից ազգային դէմքերու Ազգային Սահմանադրութեան պատրաստութեան համար կատարած գործունէութեան համար տե՛ս՝* *Սիրունի*, էջ 152։ *Տե՛ս նաեւ՝* Arthur Beylérian, 'Krikor Odian (1834-1887): un haut fonctionnaire

[41]Beylérian, 'Krikor Odian', էջ 45-55։

[42]*Գրիգոր Հ. Գալուստեան, Մարաշ կամ Գերմանիկ եւ Հերոս Զէյթուն, Նիւ Եորք, Հրատարակութիւն Մարաշի Հայրենակցական Միութեան Կեդր. Վարչութեան, 1934, էջ 135-141. Հ. Մ. Պօղոսեան, Զէյթունի Պատմութիւնը 1409-1921 թթ., Երեւան, «Հայաստան», 1969, էջ 163-183։*

[43]*Արդարեւ, վերջերս լոյս տեսած ուսումնասիրութեան մը մէջ կը տեսնենք թէ Յունաստանի անկախութեան պայքարը որքան համակրանքով դիմաւորուած էր Ֆրանսայի ազատ-որմնադիրներու շրջանակներուն մէջ. տե՛ս* Les Francs-maçons français au secours de la Grèce insurgée (1821-1829), Athènes, 1976, էջ 5։

[44]Dumont, էջ 178։

[45]B.N., FM^2 866, *Արեւելքի Միութիւն օթեակի թղթածրար* (1862-1868)։

[46]*Նոյն*։

[47]*Արեւելքի Միութիւն օթեակի հայ անդամներէն յիշենք Ժ. դարու երեւելի դէմքերէն ոմանք, որոնք յառոյ անմիջապէս Մէր օթեակին միացան.- Տոքթ. Գրիգոր Մոզեան, Ներսէս Տատեան, Տոքթ. Սահակ Փաշա Ապտնեան, Յովսէփ Խակինեան, Տոքթ. Միքայէլ Խորասանճի, Տոքթ. Նահապետ Ռուսինեան, Սեպուհ Պէյ Մաքսուտ, Տիգրան Պէյ Ալիքսանեան, Տոքթ. Յովսէփ Շիւմանեան, Յովհաննէս Նուբեան եւլն.։*

[48]*Ազնուտրի անձնական նամակը լրիւ կը մէջբերենք որովհետեւ կը փաստէ թէ ան որքան Անգլիոյ մեծ դեսպանին մօտ վարկ ունէր։*

[49]*Ազգային Սահմանադրութիւնը ի զօրու պիտի մնայ մինչեւ 11 Օգոստոս 1916, երբ երիտթուրքերու կառավարութիւնը Փոքր Ասիոյ բովանդակ հայ ժողովուրդը տեղահան ընելէ յետոյ այլեւս անոր դործադրութիւնը աւելորդ նկատելով զանիկա ջնջեց, պատրիարքարանն ալ՝ առաջնորդարանի վերածելով։*

[50]B.N., FM^2 866, *Արեւելքի Միութիւն օթեակի թղթածրար* (1862-1868)։

[51]*Տե՛ս Անգլիոյ Մեծ Օթեակի դիւանները, Տիգրան օթեակի անդամներու ցուցակ. նաեւ՝ Ֆէնէրճեան, «Ազատ Որմնադրութիւնը Հայոց Մէջ», Հայրենիք, Փետրուար 1955, էջ 83։*

[52]*Տե՛ս Տապլինի (Իրլանտա) Մեծ Օթեակի դիւանները, թիւ 166 օթեակի թղթածրար։*

[53]B.N., FM^2 866։ *Ազնաւուր 30 Յունուար 1867 թուակիր նամակով մը կ'իմացնէ թէ մայրը մեռած է, եւ ապան՝ Անթուանն ալ, որ զանազան օթեակներու անդամ էր, եւս մահացած է։*

[54]*Նոյն*։

[55]Dumont, էջ 183։

[56]*Բերբերեան, Մարտ* 1937, էջ 82։

[57]*Նոյն*, էջ 83։

[58]B.N., FM^2 866, *Ազնաւուրի 26 Փետրուար 1866 թուակիր նամակը։*

[59]B.N., FM^2 866, *Մէր օթեակի թղթածրար։*

[60]*Նոյն*։

[61]B.N., FM^2 866, *Ազնաւուրի պոլիսէն 28 Փետրուար 1866 թուակիր նամակը Ֆրանսայի Մեծ Արեւելքին։*

[62]*Նոյն*։

[63]*Տե՛ս՝ Յաւելուած Ա։*

[64]*Բերբերեան, Մարտ* 1937, էջ 83. *տե՛ս նաեւ՝ Սիրունի, էջ* 200։

[65] *Այս նամակը ստորագրած են Յովսէփ Իսկենտէր իբրեւ Ա. հակիճ, Տօքթ. Բարունակ Ճէրուխան՝ Բ. հակիճ, Պօղոս Գամալիկ՝ Ա. մասնագէտ եւ Տիրան Պէյ Ալիքսանեան՝ գանձապետ։*

[66] B.N., FM^2 866, *Մեծ Արեւելքի 7 Մայիս 1866 թուակիր պատասխանը։*

[67] B.N., FM^2 866, *Արեւելքի Մասնիին օթեակի թղթածրար։*

[68] *Նոյն։*

[69] B.N., FM^2 866, *Ագնաւուրի 3 Յուլիս 1866 թուակիր նամակը։*

[70] *Մասին Արեւելքի Մասնիին օթեակը ներկայ չեղաւ. Մէր օթեակի բացումի պաշտօնական արարողութեան. տե՛ս՝* B.N., FM^2 866, *Մէր օթեակի կոդմէ Պոլիսէն Ֆրանսայի Մեծ Արեւելքին ղրկուած 4/16 Յունուար 1867 թուակիր նամակը, որ ստորագրած են Ագնաւուր, Իսկենտէր, Գամալիկ, Հառաիսս Տօքթ. Ռաֆայէլեան եւ քարտուղար Տիրան Եուսուֆեան։*

[71] B.N., FM^2 866, *Մէր օթեակի Թղթակցութեան Թղթածրար։*

[72] B.N., FM^2 866, *Մէր օթեակի 25 Մարտ 1868ի ցուցակը։*

[73] *1887ի ցուցակը կու տանք լրիւ. տե՛ս՝ Յաւելուած Բ.։*

[74] Bodleian Library (Oxford), MS. Bryce 191, Constantinople, 6 April 1878.

[75] Idem., Constantinople, 29 April 1878.

[76] B.N., Rés. FM^2 157.

[77] *Նոյն։*

[78] Arthur Beylérian, 'L'Impérialisme et le mouvement national arménien (1885-1890)', *Relations Internationales*, no. 3, 1975, էջ 43։

[79] B.N., Rés. FM^2 157, Louis Amiable au Conseil de l'Ordre, Aix, 26 Octobre 1894.

[80] B.N., Rés. FM^2 157, Mériem-Kouly au Grande Orient de France, Constantinople, 3 Juillet 1895.

[81] Angelo Iacovella, *Gönye ve Hilâl: Ittihad-Terakki ve Mansonluk* [*Անկիւնաչափ եւ Մահիկ. Իթթիհատ-Թերաքքին եւ Մասոնութիւնը*], Istanbul, 1998, էջ 43։

[82] *Թուրքերէն Մեծ Արեւելքի Հիմնումին մասին տե՛ս մանաւանդ՝* 'Grande Oriente Ottomano', *Rivista Massonica*, vol. XL, nos. 7-8 (1969), էջ 191։

Թիւ	Մականուն	Անուն	Ծննդավայր	Թուական	Արհեստ կամ գործ	Աստիճան	Նախապէս ո՛ւր անդամ էր
13	Հէքիմեան	Սրապիոն	Կ. Պոլիս	10-9-1831	հաշուակալ-քատերագիր	վարպետ	"Oriental"
14	Աղջիկեան	Գօզմա	Խոսրովա	24-10-1817	առեւտրական	բնկեր	"Integrity"
15	Իւթիւճեան	Կարապետ	Կ. Պոլիս	20-10-1823	լրագրող	աշկերտ	"Union d'Orient"
16	Ալիքսանեան	Տիրան Պէյ	Կ. Պոլիս	Յունուար 1814	Ելեւմտական Խորհուրդի անդամ	վարպետ	"Union d'Orient"
17	Շիրաճեան	Վէնսան	Կ. Պոլիս	27-5-1826	առեւտրական	վարպետ	"Union d'Orient"
18	Ազնաւուր	Անթուան	Կ. Պոլիս	Մարտ 1844	հաշուակալ	վարպետ	"Union d'Orient"

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ.

«Սէր» Օթեակի 1886-87 Տարուան Անդամացանկը

Թիւ	Մականուն	Անուն	Ծննդավայր	Թուական	Արհեստ կամ գործ	Աստիճան	Ո՞ր թուականին
1	Իւթիւճեան	Կարապետ	Կ. Պոլիս	20-10-1823	լրագրող	3°	1865 հիմն.
2	Նորատունկեան	Յարութիւն	Կ. Պոլիս	20-10-1845	առեւտրական	18°	1865 հիմն.
3	Պալկուրեան	Ռուբէն	Կ. Պոլիս	11-03-1836	իրաւագէտ	3°	23-08-1866
4	Հէքիմեան	Սրապիոն	Կ. Պոլիս	10-09-1831	գործակալ		18-10-1866
5	Պէշիրեան	Մելքոն	Կ. Պոլիս	14-05-1840	ժամագործ		18-10-1866
6	Եուսուֆեան	Տիգրան	Կ. Պոլիս	08-11-1836	դատաւոր	18°	18-10-1866
7	Հովեան	Ղազարոս	Կ. Պոլիս	21-06-1833	ոսկերիչ		07-02-1867

Թիւ	Մականուն	Անուն	Ծննդավայր	Թուական	Արհեստ կամ գործ	Աստիճան	Նախապէս ո՛ր անդամ էր
13	Հէքիմեան	Սրապիոն	Կ. Պոլիս	10-9-1831	հաշուակալ-թատերագիր	վարպետ	"Oriental"
14	Աղջիկեան	Գօզմա	Խոսրովա	24-10-1817	առեւտրական	ընկեր	"Integrity"
15	Իւթիւճեան	Կարապետ	Կ. Պոլիս	20-10-1823	լրագրող	աշկերտ	"Union d'Orient"
16	Ալիքսանեան	Տիրան Պէյ	Կ. Պոլիս	Յունուար 1814	Ելեւմտական Խորհուրդի անդամ	վարպետ	"Union d'Orient"
17	Շիրաճեան	Վէնսան	Կ. Պոլիս	27-5-1826	առեւտրական	վարպետ	"Union d'Orient"
18	Ազնաւուր	Անթուան	Կ. Պոլիս	Մարտ 1844	հաշուակալ	վարպետ	"Union d'Orient"

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ.

«Սէր» Օթեակի 1886-87 Տարուան Անդամացանկը

Թիւ	Մականուն	Անուն	Ծննդավայր	Թուական	Արհեստ կամ գործ	Աստիճան	Ո՞ր թուականին
1	Իւթիւճեան	Կարապետ	Կ. Պոլիս	20-10-1823	լրագրող	3°	1865 հիմն.
2	Նորատունկեան	Յարութիւն	Կ. Պոլիս	20-10-1845	առեւտրական	18°	1865 հիմն.
3	Պալկուրեան	Ռուբէն	Կ. Պոլիս	11-03-1836	իրաւագէտ	3°	23-08-1866
4	Հէքիմեան	Սրապիոն	Կ. Պոլիս	10-09-1831	գործակալ		18-10-1866
5	Պէշիրեան	Մելքոն	Կ. Պոլիս	14-05-1840	ժամագործ		18-10-1866
6	Եուսուֆեան	Տիգրան	Կ. Պոլիս	08-11-1836	դատաւոր	18°	18-10-1866
7	Հովեան	Ղազարոս	Կ. Պոլիս	21-06-1833	ոսկերիչ		07-02-1867

Թիւ	Մականուն	Անուն	Ծննդավայր	Թուական	Արհեստ կամ գործ	Աստիճան	Ո՞ր թուականին
8	Պոյաճեան	Յովհաննէս	Կ. Պոլիս	10-03-1831	չուխի	3°	07-02-1867
9	Շահինեան	Յովհաննէս	Կ. Պոլիս	11-03-1842	հաշուակալ		25-09-1867
10	Աթանասեան	Համբարձում	Կ. Պոլիս	18-07-1840	գործակալ	3°	04-03-1869
11	Կիւլպէնկեան	Կիւլպէնկ	Կեսարիա	01-03-1834	առեւտրական	3°	17-09-1869
12	Պէրպէրեան	Գրիգոր	Կեսարիա	14-04-1841	դրամատէր	3°	04-05-1871
13	Տէրունեան	Կարապետ	Էսիրնէ	23-08-1843	լումայափոխ	2°	18-05-1871
14	Անդրէասեան	Մարտիրոս	Բինկեան	1844	վաճառական	1°	18-05-1871
15	Մըսըրեան	Սարգիս	Զմիւռնիա	25-06-1837	վաճառական	3°	13-02-1872
16	Գաբախսաեան	Սեպուհ	Կ. Պոլիս	05-04-1846	վաճառական	1°	13-02-1872
17	Յովակիմեան	Յովակիմ	Կ. Պոլիս	06-02-1847	վաճառական	3°	29-02-1872
18	Յովակիմեան	Միհրան	Կ. Պոլիս	02-12-1844	վաճառական	3°	29-03-1872
19	Տէր Միքայէլեան	Մինաս	Արաբկիր	1844	վաճառական	3°	18-09-1873
20	Չօպանեան	Միհրան	Կ. Պոլիս	09-03-1842	ոսկերիչ	18°	13-11-1873
21	Մազպուլեան	Համբարձում	Կ. Պոլիս	02-04-1833	դրամատէր	3°	01-02-1874
22	Սեդրոսեան	Սիմոն	Կ. Պոլիս	05-03-1851	բժիշկ	1°	16-07-1874
23	Միքայէլեան	Կարապետ	Արաբկիր	01-01-1845	դրամատէր	3°	16-07-1874
24	Գազազեան	Յակոբ	Կեսարիա	24-07-1849	դրամատէր	2°	16-07-1874
25	Եազմաճեան	Կարապետ	Կ. Պոլիս	05-06-1845	վաճառական	3°	06-08-1874
26	Մելիքեան	Գարեգին	Կ. Պոլիս	12-12-1844	իրաւագէտ	3°	06-08-1874
27	Թիւրապեան	Սեպուհ	Կ. Պոլիս	10-09-1843	վաճառական	3°	19-11-1874
28	Պէրպէրեան	Պօղոս	Կ. Պոլիս	04-10-1847	պանդոկապետ	1°	19-11-1874
29	Սըրմաեան	Մովսէս	Աֆիոն Գարահիսար	20-09-1851	վաճառական	2°	30-10-1875

Թիւ	Մականուն	Անուն	Ծննդավայր	Թուական	Արհեստ կամ գործ	Աստիճան	Ո՞ր թուականին
30	Մերեէմ-Գուլի	Յարութիւն	Կ. Պոլիս	15-01-1840	Օսման. Ընդհ. Գործակալութեան տնօրէն	18°	19-11-1876
31	Յովասափեան	Կարապետ	Կ. Պոլիս	08-05-1839	վաճառական	1°	18-03-1877
32	Ասլանեան	Յարութիւն	Թոքատ	12-08-1851	ծով. ընկ. արկղակալ	3°	30-03-1879
33	Թաշճեան	Միսաք	Կեսարիա	25-03-1856	դրամատէր	3°	30-03-1879
34	Նիկոլեան	Մանուկ	Գարահիսար	05-08-1845	վաճառական	1°	19-02-1880
35	Նշկեան	Յակոբ	Էրզրում	22-09-1853	չունի	1°	19-02-1880
36	Պարոնեան	Նիկողոս	Պրուսա	24-07-1850	պաշտօնեայ	3°	19-02-1880
37	Էնքսէրճեան	Պօղոս	Կ. Պոլիս	04-04-1847	դրամատէր	3°	20-05-1880
38	Քէրէսթէճեան	Յովհաննէս	Կ. Պոլիս	14-03-1840	պաշտօնեայ	3°	20-05-1880
39	Քօրան	Միքայէլ	Կ. Պոլիս	16-09-1855	պաշտօնեայ	1°	20-05-1880
40	Պօյաճեան	Նշան	Կ. Պոլիս	04-02-1850	իրաւագէտ	3°	20-05-1880
41	Թորամանեան	Մանուկ	Գարահիսար	10-03-1849	հացագործ	3°	20-01-1881
42	Այէաթճեան	Գառնիկ	Կ. Պոլիս	18-05-1840	պանդոկապետ	3°	20-01-1881
43	Գազազեան	Յովհաննէս	Կեսարիա	12-04-1830	միջնորդ	1°	03-02-1881
44	Տէրունեան	Յակոբ	Էտիրնէ	08-09-1832	առեւտրական	3°	05-05-1881
45	Սիսլեան	Աւետիս	Ատանա	1853	բարգման	1°	23-08-1881
46	Տէր Ներսէսեան	Միհրան	Էրզրում	Յունիս 1855	չունի	3°	07-07-1882
47	Պէյլիկճեան	Մարգար	Կ. Պոլիս	16-06-1857	չունի	1°	07-07-1882
48	Ճէլալի	Յակոբ	Կ. Պոլիս	1855	Պարտուց Վարչ. պաշտօնեայ	3°	07-07-1882
49	Երկանեան	Գառնիկ	Կ. Պոլիս	29-09-1850	վաճառական	3°	07-07-1882
50	Կարապետեան	Ազարիկ	Կէյվէ (Իզմիթ)	17-04-1843	վաճառական	1°	08-02-1883
51	Ճիլաճեան	Տիգրան	Կ. Պոլիս	10-07-1851	ոսկերիչ	2°	13-02-1883

Թիւ	Մականուն	Անուն	Ծննդավայր	Թուական	Արհեստ կամ գործ	Աստիճան	Ո՞ր թուականին
52	Բապուճեան	Կարապետ	Կ. Պոլիս	1852	առեւտրական	3°	23-01-1884
53	Քրիսեան	Ճանիկ	Կ. Պոլիս	21-08-1853	բժիշկ	3°	13-03-1884
54	Նախնիքեան	Անտոն	Գարահիսար	17-01-1857	վաճառական	3°	17-06-1885
55	Յովասափեան	Արշակ	Էրզրում	22-07-1852	վաճառական	2°	25-09-1885
56	Պէհլամեան	Յովսէփ	Կ. Պոլիս	1844	պաշտօնեայ	1°	13-12-1885
57	Փափազեան	Լեւոն	Կ. Պոլիս	01-03-1860	դրամատան փոխ-տնօրէն	1°	26-05-1886
58	Միւասեան	Ալիքսան	Սիլիստրէ	1857	վաճառական	1°	22-07-1886
59	Թօքաթլեան	Մկրտիչ	Կ. Պոլիս	1863	ճաշարանապետ	1°	23-01-1887

THE INTRODUCTION OF FREEMASONRY IN THE OTTOMAN EMPIRE IN THE NINETEENTH CENTURY AND THE ARMENIAN *SER* LODGE IN CONSTANTINOPLE

(Summary)

ARTHUR BEYLERIAN

The article studies the first attempts to establish freemasonic lodges in the Ottoman Empire starting from the second quarter of the 18th century and more intensively after the end of the Crimean War in 1856. This period coincided with official promises of radical reform within the empire, including Christian-Muslim equality. Various lodges established during this period were supported by West European diplomatic missions. Prominent Muslim and non-Muslim individuals (including Armenians) in the capital and other important Ottoman cities joined these lodges. The article then concentrates on the activities of Serovpe Aznavour, a dedicated Armenian freemason, who first joined a number of non-Armenian lodges in Constantinople and then established the *Haik* branch of the international Odd Fellows union (1862) and the *Ser* freemasonic lodge (1866), both of which were primarily for Armenian members. The activities of the Ser lodge, until its formal closure in 1898, are analyzed in detail. The article also provides useful information regarding the Armenian *Dekran* Lodge established in Smyrna (1864). The freemasonic movement in the Ottoman Empire, including the activities of the *Ser* lodge, was greeted with suspicion and even outright hostility by some quarters in the empire's elite, including the leaders of many Christian churches. The article also sheds light on many details in this regard.

ՇԵՔՍՊԻՐԻ ՄՈՒՏՔԸ ՀԱՅ ԹԱՏՐՈՆ

ԲԱԽՏԻԱՐ ՑՈՎԱԿԻՄԵԱՆ

Ժ-Ժ. դարի երկրորդ կէսից նոր-նոր ձեւաւորուող ու պրոֆեսիոնալ հունի մէջ մտնող հայ թատերական միտքը՝ բարձր գնահատելով ռէալիստական արուեստի կարեւորութիւնը հայ ազգային թատրոնի զարգացման ճանապարհին, յաճախակի դիմել է ռուս եւ եւրոպական ժամանակակից ու դասական հեղինակներին, այդ թւում եւ թատերագիրների արքայ՝ անգլիացի, Վիլեամ Շեքսպիրի (1564-1616) ստեղծագործութիւնների թարգմանութեանն ու բեմադրութեանը:

Հազիւ թէ գտնուի հայերի նման մէկ այլ փոքրաթիւ ժողովուրդ, որը չեքսպիրեան թատրոնին տուած լինի աւելի քան վաթսուն թարգմանիչ, նրա ստեղծած անմահ կերպարներից Օթելլոյի չուրջ եօթանասուն եւ Համլէտի մօտ յիսուն դերակատար:

Մինչեւ պրոֆեսիոնալ թատրոնում հաստատուելը, Շեքսպիրը հայ թատրոնում ունեցել է իր նախապատմութիւնը, որը կապուած է Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան գործիչների հետ: Շեքսպիրի ծննդեան 300ամեակի առթիւ՝ 1864ի Յունուարի 29ին, միաբանութեան դպրոցական թատրոնում բեմադրուել է նրա Մակբէթ ողբերգութիւնը՝ Ֆրանսիացի թատերագիր Ժան Ֆրանսուա Դիւսիսի (Jean-François Ducis, 1783-1816) փոխադրութեան թարգմանութեամբ, ինը դերակատարով, եւ բնականաբար՝ առանց կին դերակատարի[1]:

Հայ պրոֆեսիոնալ թատրոնի պատմութեան մէջ Շեքսպիրի մուտքը բացառապէս կապուած է դերասան, բեմադրիչ, դրամատուրգ, թարգմանիչ, թատերախօս եւ թատրոնի պատմաբան Գէորգ Զմշկեանի (1837-1915) անուան ու գործունէութեան հետ: Շեքսպիրի ստեղծագործութիւնների նկատմամբ ունեցած բուռն հետաքրքրութիւնը Զմշկեանի կեանքում պայմանաւորուում է ռուս մեծ քննադատ Վիսարիոն Բելինսկու (1811-1848) երկերին ծանօթանալով: Աւետիք եւ Համբարձում Էնֆիաճեանների գրախանութի մշտական այցելուներ բժիշկ ու բանահաւաք Գէորգ Ախվերդեանի, Կռունկ Հայոց Աշխարհին ամսագրի խմբագիր, բեմադրիչ Մարկոս Աղաբէկեանի, Կռունկի աշխատակից՝ գրականագէտ եւ մանկավարժ Գարեգին (յետագայում Մելքիսեդեկ Արքեպիսկոպոս) Մուրադեանի, գրող եւ թատերական գործիչ Պերճ Պռոշեանի եւ ուրիշների թւում այդ գրախանութից օգտուել են նաեւ անմիջականօրէն թատրոնի հետ կապուած գրականագէտ Ստեփանոս Պալասանեանը, թատերագիր Միքայէլ Պատ-

կանեանը, թատերական քննադատներ Ալեքսանդր Երիցեանը, Գէորգ Տէր-Ալեքսանդրեանը, դերասաններ Միհրդատ Ամերիկեանը, Արտաշէս Սուքիասեանը, Սեդրակ Մանդինեանը եւ, ի հարկէ, Ջմշկեանը։ 1861-1866ին, նրանք, տարբեր առիթներով, երբեմն ուղղակի, երբեմն էլ ակնարկներով անդրադարձել են Բելինսկու այս կամ այն կարծիքի հաստատմանը հայ իրականութեան մէջ, որոնք վերաբերել են դերասանական արուեստին եւ քննադատութեանը, իսկ որտեղ՝ Բելինսկի, այնտեղ՝ Շեքսպիր[2]։

Այսպիսի պայմանների ծնունդ է եղել Շեքսպիրին դիմելու հայկական առաջին փորձը՝ *Թիմոն Աթենացի* ողբերգութեան առաջին թարգմանութիւնը, որը Ջմշկեանը ֆրանսերէնից կատարել է 1863ին, Թիֆլիսում։ Թարգմանութեան մասին Ամերիկեանի եւ Սուքիասեանի տուած բացասական կարծիքի պատճառով, սակայն, *Թիմոն Աթենացին* չի բեմադրուել եւ ձեռագիրն էլ ոչնչացուել է[3]։

Այսուհանդերձ, Շեքսպիրին հայ բեմ հանելու հարցը շարունակուել է օրուայ խօսակցութեան նիւթ մնալ հենց նոյն միջավայրում։ Երիցեանը 1863ին գրած մի թատերախօսականում՝ քննադատելով դերասանների խաղը ազգային թատրոնում, միաժամանակ ծաղրի է ենթարկել նրանց ցանկութիւնը մերձենալ «Շեկսպիրի խաղերին»[4]։ Իսկ 1863ին *Թիմոն Աթենացուց* բացի շեքսպիրեան որեւէ պիէսի թարգմանութեան փորձ չէր կատարուել կամ գոնէ մինչեւ այժմ տուեալ չկայ այդ մասին։ Ուրեմն, պէտք է ենթադրել, որ Երիցեանի ակնարկը վերաբերում է Ջմշկեանի վերոյիշեալ թարգմանութեանը։

Թիմոն Աթենացու թարգմանութեան յաջողութիւն չգտնելը չի վհատեցրել նոր թատերական կեանք մտած Ջմշկեանին։ 1864ի աշնանը՝ Սեպտեմբեր-Հոկտեմբեր ամիսներին, նա թարգմանել է *Վենետիկի Վաճառականը*։ Թարգմանութեան լրիւ տեքստի վերջին՝ 129րդ էջի վրայ Ջմշկեանը գրել է՝ «30 Հոկտ[եմբերի] 1864 թուի Տփխիս, թարգ. Գէորգ Ջմշկեան»[5]։

Ջմշկեանը *Վենետիկի Վաճառականը* թարգմանել է Լարոշի ֆրանսերէն թարգմանութիւնից, արձակ։ Թարգմանական լեզուն Թիֆլիսի խօսակցական եւ գրական լեզուների միահիւսութիւնն էր։ Ջմշկեանն անընդհատ մշակել է ու յղկել այս թարգմանութեան գրեթէ բոլոր էջերը, իսկ ամէնից աւելի՝ առաջին եւ չորրորդ գործողութիւնները, որոնցով պիէսը խաղացուել է չուրջ քսանհինգ տարի։ Նա բարբառային եւ օտարամուտ բառերը վերափոխել է գրական հայերէնով։ Այսպէս, օրինակ՝ բուլան դարձել է փողոց, հայաթը՝ բակ, յետոյ էլ՝ բակ, դուքիկը՝ տուփ եւն.։ *Վենետիկի Վաճառականի* 1866ի մի բեմադրութեան առիթով Հայկական Աշխարհ հանդէսի խմբագիր Յովհ. Վարդապետ Ստեփանէն Ջմշկեանի թարգմանութեան մասին գրել է. «Վենետիկի

Վաճառականի» թարգմանութեան լեզուն, բացի քանի մի անկանոնութիւններից վատ չէր»[6]:

Թարգմանական դրամատուրգիան 1864ից մուտք էր գործել Թիֆլիսահայ թատրոն՝ Օ. Մելվիլի, Ալեքսանդր Օստրովսկու եւ Ալեքսանդր Սուխովո-Կոբիլինի պիէսների թարգմանաբար ներկայացմամբ: Հերթը հասել էր Շեքսպիրին: Ջմշկեանի թարգմանած Վենետիկի Վաճառականով էլ Շեքսպիրը պէտք է մտնէր հայ թատրոն եւ մշտապէս ապահովէր իր տեղը վերջինիս խաղացանկում:

Մինչեւ 1864ի կէսերը ընդունուած ճշմարտութիւն է եղել այն, որ Վենետիկի Վաճառականը առաջին անգամ՝ համառօտուած տեքստով բեմադրուել է Ջմշկեանի կողմից, 1866ի Մայիսի 8ին, Թիֆլիսի քաղաքային (Թամամշեանի) թատրոնում[7]: *Նոյն 1864 թուականին՝ Շեքսպիրի ծննդեան 400ամեակի տօնակատարութեան շրջանում, վերանայուել է այդ տեսակէտը եւ Վենետիկի Վաճառականի առաջին բեմադրութեան փաստը մէկ տարով առաջ է տարուել: Առաջ է քաշուել նոր տեսակէտ թէ Վենետիկի Վաճառականը հայ թատրոնում առաջին անգամ բեմադրուել է 1865ի Մայիսի 7ին*[8]: *Այս ուղղումը կատարել է շեքսպիրագէտ Լուիզա Սամուէլեանը: Թիֆլիսում լոյս տեսնող Հայկական Աշխարհի կռունկ հանդէսի 1865ի մայիսեան (7րդ) համարում «Թիֆլիսցի Հայի» - այսինքն՝ Ստեփանէի - յուրից պարզւում է, որ այդ օրը ներկայացրել են Վիկտոր Հիւգոյի Լուկրեցիա Բորջիայի երկրորդ արարուածը, Վենետիկի Վաճառականի առաջին արարուածի երրորդ տեսիլը եւ Վիկտոր Դիւկանժի Թուղթ Խաղացողի կեանքի երկրորդ եւ երրորդ արարուածները*[9]: *Եւ քանի որ «Մեր Ներքին Գործերը» յուրի մէջ Ստեփանէն գրել է թէ՝ «էս բոլոր խաղարկութիւնների մէջ տեսանք Թիֆլիսումն առաջին անգամ պոլսեցի դերասան եւ դերասանուհի պ. Թոմաս Ֆասուլեաճեանին եւ տիկին Պայծառ Ֆասուլեաճեանին», Սամուէլեանն չտապել է եզրակացնել. «ուրեմն, արեւելահայ բեմում առաջին անգամ Շեքսպիր ներկայացնելու պատիւը Ջմշկեանը պէտք է զիջի Ֆասուլեաճեան ամուսիններին»*[10]:

Սովետական Արուեստ ամսագրում տպագրած իր այս յօդուածում Սամուէլեանն անվերապահօրէն Շայլոկի դերակատար է յայտարարում Թոմաս Ֆասուլեաճեանին, իսկ Անտոնիոյի եւ Բասանիոյի դերակատարներին չի նշում, քանի որ ըստ հեղինակի՝ «հաստատ է, որ «Վենետիկի Վաճառականը» ներկայացնողների մէջ չկային Թիֆլիսահայ թատրոնի առաջատար դէմքերը»[11]: *Յայտնի փաստ է, նշում է Սամուէլեանը, որ 1865ի ամռանը Ջմշկեանը, Ամերիկեանը եւ Մանդինեանը թատերական շրջագայութեան էին դուրս եկել: Որ Շեքսպիր ներկայացնելու օրերին նրանք քաղաքում չէին, հաստատում է նաեւ Հայկական Աշխարհի կռունկի թղթակիցը*[12]: *Եւ այսպէս, քանի որ*

Վենետիկի Վաճառականը բեմադրելու օրերին Զմշկեանը Թիֆլիսում չէր, եւ իր թարգմանութիւնն էլ աւարտած չհամարելով, չի ցանկացել «անկատար ձեւով ներկայանալ Ֆաստուլեաճեաններին», ուրեմն պէտք էր որոնել, գտնել տուեալ պիէսի մի այլ ենթադրական թարգմանութիւն, որով, իրրեւ թէ պէտք է խաղացած լինէր Ֆաստուլեաճեանը: Ստացուել է, որ Ֆաստուլեաճեանը *Վենետիկի Վաճառականում* խաղացել է կա՛մ իր թարգմանութեամբ, կա՛մ, որ աւելի հաւանական է, բայց, դարձեալ անապացոյց, խաղացել է ըստ Արամ-Կարապետ Տէտէեանի թարգմանութեան, որը լոյս էր տեսել 1862ին Զմիւռնիայում[13]:

Սամուէլեանն այս մտքերը կրկնել է նաեւ Երեւանի *Կոմունիստ* (թիւ 41, 1965) եւ *Փարիզի Ձառայ* (թիւ 10411, 1965) թերթերում տպագրած յօդուածներում: Ի վերջոյ, իր *Շեքսպիրը Եւ Հայ Գրական Ու Թատերական Մշակոյթը* գրքում, նա գրել է. «Քանի որ Մխիթարեանների բեմադրած «Մակբէթը» Շեքսպիրինը չէր, շեքսպիրեան անդրանիկ ներկայացումը հայ թատրոնում պէտք է համարել Թ. Ֆաստուլեաճեանի «*Վենետիկի Վաճառականը*»[14]:

Սովետական Արուեստ ամսագրի 1964ի նոյեմբերեան (11րդ) համարում Սամուէլեանի տպագրած յօդուածը հենց սկզբից մեզ չի համոզել: Չի համոզել *Վենետիկի Վաճառականի* առաջին բեմադրութեան եւ դերակատարութեան փաստը Թովմաս Ֆաստուլեաճեանի անուան հետ կապելը, բայց ժամանակ չունենալով նորից անդրադառնալ «Շեքսպիրը Հայ Բեմում» տարեգրութեանը, սխալը չի շտկուել: Աւելին, գնալով այն կրկնուել է ուրիշ թատերագէտների կողմից: Տեսնելով, որ Շայլոկ-Ֆաստուլեաճեանի գնահատութիւնն աւելի է «հիմնաւորուում» ու «համալրուում» նոր տուեալներով, ստիպուած ենք եղել *Վենետիկի Վաճառականի* առաջին բեմադրութեան 125ամեակի առթիւ, 29 Նոյեմբեր 1990ին, «Շեքսպիրի Մուտքը Արեւելահայ Թատրոն» թեմայով զեկուցում կարդալ Հայաստանի Գրականութեան Եւ Արուեստի Թանգարանում եւ Հայաստանի Թատերական Գործիչների Միութիւնում: Մեր նպատակն է եղել Զմշկեանին վերադարձնել յանիրաւի նրանից առնուած Շեքսպիրի առաջին թարգմանիչ, առաջին դերակատար եւ առաջին բեմադրիչ տիտղոսները:

Վերադառնանք, սակայն, *Վենետիկի Վաճառականի* անդրանիկ բեմադրութեան պատմութիւնը ծուռ հայելու մէջ ներկայացնելու աղաղակող հետեւանքներին: *Հայկական Աչխարհի Կռունկ* ամսագրում *Վենետիկի Վաճառականի* 1865 Մայիսի 7ի՝ առաջին բեմադրութեան մասին նրա խմբագիր Ստեփանէի տպագրած լուրի ոչ ճիշտ մեկնաբանութիւնը, ցաւօք, ոչ միայն չի ստուգուել յետագայում այդ հարցին անդրադարձած թատերագէտ-բանասէրների կողմից, այլեւ

վերջիններս՝ մի բան էլ իրենց կողմից աւելացնելով, աղաւաղել են հայ թատրոնի պատմութեան էջերը։

Այժմ անդրադառնանք ճշմարտութեանը։

Որ Վենետիկի Վաճառականքի ներկայացման օրը՝ 1865 Մայիսի 7ին Թիֆլիսահայ թատրոնի գլխաւոր ոյժերը՝ Ջմշկեանը, Ամերիկեանը եւ Մանդինեանը դեռեւս Թիֆլիսում են գտնուել, անհերքելի փաստ է, որ հաստատում է հենց ինքը՝ Հայկական Աշխարհի կռունկը։ Այդտեղ գրուած է. «Էս ամսի սկզբին մեր դերասանները պ. Ջմշկեանը, Ամերիկեանն ու Մանդինեանը լսում ենք գնացին քաղաքից դէպի Շուշի եւ էնտեղից գնալու են զանազան քաղաքներ հայերէն թէատրներ խաղալու»[15]։

«Էս ամսի սկզբինը պէտք է հասկանալ ոչ թէ Մայիսի սկիզբը, երբ վերոնշեալները համատեղ ոյժերով ներկայացումներ են տուել Ֆասուլեաճեանների հետ, այլ Յունիսի սկիզբը, երբ, իրօք Ջմշկեանն իր խմբով հիւրախաղերի է մեկնել անդրկովկասեան մի շարք քաղաքներ՝ Շուշի, Ալեքսանդրապոլ, Երեւան եւն.։ «Թիֆլիսցի Հայի» լուրի տակ դրուած 1865 Յունիսի 20 տարեթիւը այս կերպ պէտք է հասկանալ։ Բացի այդ, Ստեփանէն՝ գրաշար եւ աշխատակից չունենալով, ամէն ինչ ինքն է կատարել, որի պատճառով Մայիսի սկզբներին սկսած համարի տպագրութիւնն աւարտել է Օգոստոսի 14ին։ Մայիսեան համարը Օգոստոսին լոյս տեսնելու եւ այդ ընթացքում նոր լուրեր աւելացնելու այս հանգամանքն էլ չփոթութեան մէջ է գցել Սամուէլեանին։

Վերջապէս, ինչպէ՞ս կարելի է անտեսել Ջմշկեանի վկայութիւնները։ Իր յիշողութիւններում նա պատմում է, որ մեծ պասի օրերին լսելով, թէ Թիֆլիս են եկել Ֆասուլեաճեան ամուսինները, նա՝ Ամերիկեանի, Սուքիասեանի եւ Մանդինեանի հետ գնացել է «Կովկաս» հիւրանոց՝ նրանց տեսութեան։ Ջմշկեանը գրել է. «Ֆասուլեաճեանների Թիֆլիս գալու նպատակն իմանալուց յետոյ (նոքա մտադիր էին մէկ քանի ներկայացումն տալ), մենք առաջարկեցինք մեր պատրաստութիւնը օգնել նորանց, եւ բերանացի պայման կապեցինք ընկերութեամբ տալ գարունքուայ միջոցին երեք ներկայացում...

«Որոշեցինք առաջին անգամ, եթէ չեմ սխալւում, *Թուղթ խաղացողի կեանքը*...

«Ես եւ ինձ հետ ամէնքը հետաքրքրութեամբ սպասում էինք առաջին կրկնութեան, որ տեսնենք Ֆասուլեաճեանի խաղի եղանակը կամ մեթոդը, բայց դուրս եկաւ, որ սաստիկ փտած եւ հին շկոլայի աշակերտ է եղել։ Նա ամէն մէկ խօսքը արտասանում էր մի առանձին շեշտադրութեամբ եւ խօսում էր երգելով, իսկ երբ հասնում էր էֆեկտի տեղին, յանկարծ այնպէս էր գոռում եւ իակոյն կտրում խօսքը, որ մենք չէինք կարողանում լսել առանց ծիծաղի»[16]։

Ջմշկեանն իր յուշերում միաժամանակ նշել է, որ այդ ամառ, համաձայն իրենց բանաւոր պայմանաւորուածութեան, մինչեւ Բունիսի վերջերը՝ մինչեւ Գանձակ, Շուշի, Ալեքսանդրապոլ ու Երեւան գնալը, տուել են մօտաւորապէս տասը-տասներկու ներկայացում: Մասնակի կամ լրիւ խաղացուած պիէսներից են. Մայիսի 1ին՝ Թուղթ խաղացողի կեանքը, 7ին՝ Լուկրեցիա Բորջիա, Վենետիկի Վաճառականը, Թուղթ խաղացողի կեանքը, 30ին՝ Հիւգոյի Էռնանի, Բունիսի 7ին՝ իտալերէնից թարգմանուած Կոյր Ջաւակը կամ Խելագար կինը դրաման, եւն.:

Մի այլ հանգամանք:

Թիֆլիսի հայոց դերասանական խումբը 1866ին կազմել է իր նոր կանոնադրութիւնը, բաղկացած ինը կէտից: Դրանցից հինգը վերաբերուել է դերասան-դերասանուհիների պարտականութիւններին: Կանոնադրութեան հետ պահպանուել է նաեւ դերասանական կազմի ցուցակը, որն ունեցել է հետեւեալ հերթականութիւնը.

1. Պայծառ Ֆասուլեաճեան
2. Սոփիո Նազարեան (Մելիք-Նազարեան - Բ.Ց.)
3. Եղիսաբէթ Աբրահամեան (յետագայում՝ Սաթենիկ Ջմշկեան - Բ.Ց.)
4. Քեթօ Արամեան
5. Գէորգ Ջմշկեան
6. (Թովմաս) Ֆասուլեաճեան
7. (Միհրդատ) Ամերիկեան
8. (Արտաշէս) Սուքիասեան եւ ուրիշներ[17]:

Ինչպէս տեսնում ենք, դերասանուհիների մէջ առաջնութիւնը տրուել էր Պայծառ Ֆասուլեաճեանին, իսկ դերասանների մէջ՝ Ջմշկեանին:

Հետեւաբար, ինչպէս ժամանակի, այնպէս էլ ըստ մեր օրերի թատրոնում ընդունուած կարգ ու կանոնի, գլխաւոր դերը պէտք է կատարած լինէր առաջնակարգ դերասանը:

Այս բոլորից յետոյ, կարելի՞ է այսքան վկայութիւններն ու տուեալները անտեսել, չմշկեանական խմբի դերասաններին համարել Թիֆլիսից բացակայ եւ Վենետիկի Վաճառականի բեմադրութեան փաստը կապել բացառապէս Թովմաս Ֆասուլեաճեանի անուան հետ եւ թարգմանութեան մի նոր օրինակ որոնել:

Այնուամենայնիւ, ովքե՞ր են եղել 1865 Մայիսի 7ին Վենետիկի Վաճառականի առաջին գործողութեան երրորդ տեսիլի բեմա-

դրութեան մասնակիցները: Ինչպէս յայտնի է, այս տեսարանում ընդամէնը երեք կարեւոր գործող անձ են ընդգրկուած՝ Անտոնիօն, Բասանիօն եւ Շայլոկը: Շայլոկի դերակատարութիւնը, ինչպէս տեսանք, վերագրուել է Թովմաս Ֆաուլեաճեանին: Հետաքրքիր է, որ Պայծառ Ֆաուլեաճեանը մասնակցութիւն չունենալով այս պիէսի ներկայացմանը, նոյնպէս արժանացել է արեւելահայ բեմում առաջին անգամ Շեքսպիր ներկայացնողների պատուին:

Վենետիկի վաճառականի առաջին այս բեմադրութեան դերակատարների մասին տպագիր ոչ մի տուեալ չի պահպանուել: Բայց, ահա, այդ «բացը» լրացրել է թատերագէտ Բարկէն Յարութիւնեանը: Անդրադառնալով Վենետիկի վաճառականի 1865 Մայիսի 7ի ներկայացման փաստագրութեանը, նա այսպիսի դերաբաշխում է կատարել. Շայլոկ՝ Թովմաս Ֆաուլեաճեան, Անտոնիօ՝ Զմշկեան եւ Բասանիօ՝ Գէորգ Միրաղեան[18]: Իրրեւ հայ թատրոնի տարեգիր, Յարութիւնեանին լաւ յայտնի է եղել Զմշկեանի Թիֆլիսում գտնուելը. աւելին, նա Զմշկեանին է վերագրել երեք պիէսի բեմադրութեան ռեժիսորական աշխատանքը: Բայց այդ բոլորը դեռ չի նշանակում, թէ վերոյիշեալ անձինք են խաղացել տուեալ դերերը: Յարութիւնեանի բերած սկզբնաղբիւրը՝ արդէն քանիցս յիշատակուած *Հայկական Աշխարհի Կռունկ* ամսագրի 1865ի 7րդ (մայիսեան) համարում տպագրուածը, ոչ մի հիմք չի տալիս այդպիսի եզրակացութեան համար: Եթէ ենթադրութիւն է, պէտք է իրրեւ ենթադրութիւն եւ ոչ թէ իրրեւ բացարձակ ճշմարտութիւն ներկայացուի:

Մ՛րն է մեր տեսակէտն այս ներկայացման մասնակիցների մասին:

Զմշկեանը իրրեւ պիէսի թարգմանիչ եւ դերասանական խմբի ղեկավար, ասել է թէ ռեժիսոր, ու նաեւ կամային անձնաւորութիւն, Ֆաուլեաճեանի խաղաոճին ծանօթանալուց յետոյ հազիւ թէ համաձայնէր եւ նրան զիջէր Շայլոկի դերը: Հենց միայն Հռենանիի բեմադրութեան պատմութիւնը, որ բերում է Զմշկեանն իր յուշերում, բաւական է դրանում համոզուելու համար[19]:

Իսկ ինչո՞ւ ո՛չ Զմշկեանն իր յուշերում, ո՛չ էլ Ստեփանէն իր տուած լուրում չեն յիշատակել որեւէ մասնակցի անուն: Զմշկեանը նոյնիսկ չի յիշատակել Վենետիկի վաճառականի բեմադրութեան փաստը: Կրկնուող պիէսների հետ մի նոր բան ներկայացնելու ցանկութիւնը, տուեալ դէպքում Վենետիկի վաճառականի հատուածաբար բեմադրութիւնը ամենայն հաւանականութեամբ յաջողութիւն չի ունեցել, մի որոշակի պատկերացում չի տուել պիէսի մասին: Դրա համար էլ Զմշկեանը կարեւորութիւն չի տուել դրան, իսկ Ստեփանէն քննադատել է պիէսից հատուածներ ներկայացնելը, գտնելով, որ նրանից ոչ

մի տպաւորութիւն չի կարելի ստանալ: Այդ է հաւանաբար պատճառը, որ Մեղու Հայաստանի չարաթաթերին առհասարակ անտեսել է բեմադրութիւնը:

Բասանիոյի դերակատարութիւնը թէեւ վերագրուել է Միրաղեանին, բայց նա այդ ներկայացմանը չի մասնակցել: Ճիշտ է, նա իր բեմական գործունէութիւնն սկսել է 1865 Մայիսի 1ին տրուած *Թուղթ խաղացողի կեանքը* պիէսում երկու դեր կատարելով, բայց Մայիսի 7ի ներկայացումներում հանդէս է եկել միայն *Լուկրեցիա Բորջիայում*, այդտեղ եւս կատարելով երկու դեր[20]:

Այսպիսով, եթէ ընդունում ենք Թովմաս Ֆասուլեաճեանի մասնակցութիւնը *Վենետիկի վաճառականի* բեմադրութեանը, ապա նա պէտք է կատարած լինի Անտոնիոյի դերը, թէեւ դրա համար էլ հիմնաւոր կռուաններ չկան: Թերեւս Ֆասուլեաճեանն առհասարակ չի մասնակցել այդ պիէսի ներկայացմանը: *Վենետիկի վաճառականի* իր թարգմանութեան ձեռագրի վրայ Ջմշկեանը որոշ դերերի դիմաց նշել է նրանց կատարողների անունը կամ ազգանունը: Շայլոկի դերի դիմաց միայն Ջմշկեանի անունն է գրուած, իսկ Ֆասուլեաճեանի անունը՝ ընդհանուր մասնակիցների մէջ: Ֆասուլեաճեաններից յիշատակուած է կոնկրէտ Պայծառի անունը՝ իբրեւ Պորցիայի դերակատար[21]:

1865 Մայիսի 7ին *Վենետիկի վաճառականից* ներկայացուած հատուածի մէջ, Ջմշկեանի Շայլոկից բացի, Անտոնիոյի եւ Բասանիոյի հաւանական դերակատարներ պէտք է համարել Սուքիասեանին եւ Բարխուդարեանին, որոնց անունները Ջմշկեանը դրել է այդ դերերի դիմաց իբրեւ չորրորդ գործողութեան մասնակիցներ:

Վենետիկի վաճառականի առաջին բեմադրութեան փորձը լայն արձագանգ չի ստացել ո՛չ մամուլում եւ ո՛չ էլ յուշագրութիւններում: Գրեթէ աննկատ է անցել նաեւ նրա երկրորդ բեմադրութիւնը, որը տեղի է ունեցել 1866 Ապրիլի 17ին: Թէեւ այս անգամ ներկայացուել է երկու հատուած 10 դերակատարով, բայց *Մեղու Հայաստանի* չարաթաթերը անուշադրութեան է մատնել նաեւ այս ներկայացումը: Նախօրօք յայտարարելով Ջատկից յետոյ տրուելիք ներկայացումների ցանկը, ի թիւս այլ պիէսների, թերթում նշուել է *Վենետիկի վաճառականի* հինգերորդ գործողութեան բեմադրութիւնը[22]: Բայց ահա, երբ հասել է բեմադրութեան մասին գրելու ժամանակը, թերթը բաւարարուել է միայն արձանագրելով, որ Ապրիլի 17ին «եղաւ երրորդ հայերէն խաղարկութիւնը քաղաքային թատրոնումը: Խաղը ընդհանրապէս միջակ էր. միայն մի մեծ թերութիւն նկատուեցաւ... Դերասանները լաւ չգիտէին իրանց դերերը. ու խաղի ժամանակ ստիպուած

լինելով անդադար դէպի սուֆլէօրը, խանգարում են իրանց խաղը եւ թուլացնում են սրան»[23]:

Եթէ չլինէր Հայկական Աշխարհ հանդէսում տպագրուած լուրը, այս բեմադրութեան գոյութիւնն էլ կը մնար անյայտութեան մէջ: Հայկական Աշխարհում տպագրուած տուեալներից պարզւում է Ապրիլի 17ին խաղացուած պիէսների ցանկը.

1. Վենետիկի Վաճառականի չորրորդ գործողութիւնը, Շեկսպիրի դրամա, պ. Ջմշկեանի թարգմ.
2. Օսկան Պետրովիչն էրագումը, կոմեդիա մէկ արարուածով, հեղ. պ. Սունդուկեանց
3. Գիշերուան սարերը խեր է, վոդեվիլ պ. Սունդուկեանցի[24]:

«Թիֆլիսցի Հայ»-Ստեփանէն անդրադառնալով Ջմշկեանի ջանքերին՝ Շեքսպիր թարգմանելու եւ բեմադրելու գործում, գրել է. «Մենք հասկանում ենք պ. Ջմշկեանի գովելի միտքը Շեկսպիրի դրամա խաղալու: Շեկսպիրը թատրոնական աշխարհի աստուածն է: Ոչինչ չէ կարելի աւելի լուսաւոր, բարձր, գարգացնող եւ ազնուացնող պիէսը հաղալ, քան Շեկսպիրինը, բայց հարցրէք, չենք ասի ամբոխից, նաեւ նոցանցից, որոնք մոլորուած հաւատացած են թէ բան են հասկանում...

«Վաղ է պ. Ջմշկեան, շատ վաղ է Շեքսպիրը մեզ համար դեռ... Խաղից երեւում էր, որ պ. Ջմշկեանը աշխատել էր հրեայի րոլը (դերը - Բ.Ց.) նորա ձեւերով ճիշտ ներկայացնել: Ուրախ ենք, որ պ. Ջմշկեանը աշխատում է գործը խղճմտանքով առաջացնել»[25]:

Ստեփանէի յորդորական քննադատութիւնը վստահութիւն է ներշնչել Ջմշկեանին կատարելագործելու թէ՛ թարգմանութիւնը եւ թէ՛ բեմադրութիւնը: Դրա իւրատեսակ արձագանգն է Վենետիկի Վաճառականի կրկնութիւնը, որը տեղի է ունեցել քսան օր յետոյ՝ Մայիսի 8ին: Այս բեմադրութիւնն է, որ մինչեւ 1964 համարուել է շեքսպիրեան առաջին բեմադրութիւնը արեւելահայ թատրոնում: Վենետիկի Վաճառականի այս բեմադրութեան մասին ոչինչ նոր բան չի գրուել: Թէ՛ Հայկական Աշխարհը եւ թէ՛ Մեղու Հայաստանին բաւարարուել են միայն կատարման փաստն արձանագրելով:

1868 Մայիսի 8ին այս բեմադրութիւնը իւրովի լուսաբանութիւն է ստացել հայ թատրոնի տարեգրութեան մէջ: Նախ՝ կրկնուել է Մեղու Հայաստանիում տպուած սխալ յայտարարութիւնը թէ՝ ներկայացուել է հինգերորդ գործողութիւնը: Շուրջ քառորդ դար խաղացուած այս պիէսը մշտապէս ներկայացուել է առաջին եւ չորրորդ գործողութիւններից կազմուած տեքստով: Չորրորդ գործողութիւնն է յիշատակել նաեւ Հայկական Աշխարհը: Դէ, քանի որ կարծել են թէ խաղացուել է

հինգերորդ գործողութիւնը, Յարութիւնեանն էլ իր դերաբաշխումը կատարել է ըստ հինգերորդ գործողութեան մասնակիցների. Լորենցօ՝ Ամերիկեան, Անտոնիօ՝ Թովմաս Ֆասուլեաճեան, Գրացիանօ՝ Սուքիասեան, Պորցիա՝ Մելիք-Նազարեան, Ներիսա՝ Արամեան, Բասանիօ՝ Բարխուդարեան, Ջեսիկա՝ Պայծառ Ֆասուլեաճեան: Բայց հինգերորդ գործողութեանը չեն մասնակցում ո՛չ Շայլոկը եւ ո՛չ էլ Սալարինօն, որոնց դերերում «Հանդէս են եկել» Ջմշկեանն ու Միրաղեանը[26]: Բեմադրութեան եւ դերակատարումների համար իրրեւ սկզբնաղբիւր բերուած Մեղու Հայաստանի թերթի 1866ի 18, 19 եւ 20 համարներում այդպիսի տուեալներ չկան: Դրանցում տեղ են գտել միայն ներկայացման մասին մի լուր, խմբագրութեանն ուղղած հասարակական ու թատերական գործիչ Նապոլէոն Ամատունու նամակը, որտեղ նոյնիսկ առանց ներկայացման անունը յիշատակելու հաչութեութիւնն է տրուել հասոյթի մասին, ինչպէս նաեւ Քեթեւան (Կատարինէ) Տէր-Միքայէլեանի՝ ռուսերէնից թարգմանած յօդուածը Շեքսպիրի մասին:

Թատերագէտ Ռուբէն Զարեանը՝ հաւատ ընծայելով Վենետիկի Վաճառականի 1865-66ի բեմադրութիւնների եւ դերակատարումների մասին Սամուէլեանի եւ Յարութիւնեանի տուեալներին, դրանց տուել է աւելի հիմնաւոր մեկնաբանութիւններ: Լինելով փաստի սկզբնաղբիւրներով առաջնորդուող բանասէր, Զարեանն այս անգամ բաւարարուել է ժամանակակից գրականութեան մէջ տեղ գտած տուեալներով եւ անստոյգ եզրայանգումների եկել: Քանիցս անդրադառնալով Վենետիկի Վաճառականի վերոյիշեալ բեմադրութիւններին ու դերակատարումներին, երեւոյթի գնահատութեանը, իր հերթին Հայ Թատրոնի պատմութիւնից գրքում, Զարեանը՝ կրկնելով իր նախորդների սխալները, Ֆասուլեաճեանների գործունէութիւնը Թիֆլիսում առաւել բեղմնաւոր ներկայացնելու նպատակով, գրել է. «Ֆասուլեաճեանն իր հետ բերել էր Պոլսի հայ թատրոնի պիէսներից՝ յատկապէս մելոդրամաներ ... Վիկտոր Հիւգոյի երկու դրաման՝ «Լուկրեցիա Բորջիա» եւ «Էռնանի»: Վերջապէս՝ Շեքսպիրի «Վենետիկի Վաճառականը», որի բեմադրութեամբ է գրուել չեքսպիրեան երկերի բեմական պատմութեան առաջին էջը արեւելահայ իրականութեան մէջ: Մինչեւ Թովմաս եւ Պայծառ Ֆասուլեաճեանների Շայլոկը եւ Ջեսիկան, Թիֆլիսի հայ թատրոնում Շեքսպիր բեմ չէին բարձրացրել»[27]: Զարեանը նմանօրինակ անճշտութիւններ է գրել նաեւ Միրաղեանի դերակատարումների մասին: Ցաւալի է, որ այսպիսի եզրայանգումների է եկել Ջմշկեանի կեանքին եւ գործունեութեանը քաջածանօթ թատերագէտը:

Վենետիկի Վաճառականը 1865-66ին Ջմշկեանի կողմից բեմադրուելու եւ Շայլոկի դերակատարութեան պատմութիւնը լրացուցիչ լուսաբանութիւն է ստանում եւ համալրւում մեզ հասած այն ծրա-

18 66

ԹԻՖԼԻԶԻ ԹԱՏՐՈՆ

ԿԻՐԱԿԻ Ս. ՊՐԻԼԻ 17/ին

Առաջին անգամ

ՎԵՆԵՏԻԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ

դրամայի IV *գործողութիւնով*

ԹԱՐԳ. ՆՐԱՆՔԻՆՆԻՑ Գ. ՋՄՇՆԱՆԱՆՑ

ԳԻՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Վ. Ինամիքի Դաժ	Գ. Ա. Գրիգեան.
Բառասիքա, տղու տեսակ կիսատարեց	Գ. Օ. Վահեանց.
Ազատիքա, տղա մեծ հրի համ, Հարուստ վաճառական	Գ. Յ. Թէհեանց.
Գրաշխաներ	Գ. Ա. Գրիգեան.
Աղջկերքա, Բառասիքի և Ազատիքի բարեկամներէ	Գ. Ե. Թոփալեանց.
Ազատիքա	Գ. Վ. Տ. Քեհեանց.
Շինծու Հրեայ	Գ. Ս. Գրիգեան.
Պահպան Բառասիքի Կինը	Տ. Մ. Եղիազարեանց.
Աղերքա, Գրաշխաների Կինը	Տ. Ա. Թոռեանց.

Բաւարարեալ դատաւորնեւ և ժողովուրդ:

Գործը կատարվեսի Վենեսիկում:

Երկրորդ անգամ

ՕՍԿԱՆ ՓԵՏՐՈՎԻՉՆ ԷՐԱԶՈՒՄԸ

Ներատակերգութիւն մէկ արարուածով, հեղ. Պ. Գ. Սունդուկեանցի:

(Կ. Պոլսի Ե. Գ. Հ. Աւետարանական Հասարակ.)

ԳԻՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Օսկան Փետրովիչ Ինտենով	Գ. ՍԱՐԳՍԵԱՆ.
Նոր տարի տղայ Սիմիոն և տատիկ	

Գործողութիւնը կատարվեսի Օսկան Փետրովիչի Լիտատուքը

ԳԻՇԻՐՎԱՆ ՍՄԲՐԸ ԽԷՐԻ

վօտևիլ Պ. Գ. Սունդուկեանցի:

ԳԻՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

գրով, որը, բարեբախտաբար, պահպանուել է Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի ֆոնդերում[28]: Դա 1866 Ապրիլի 17ի ներկայացման եզակի, միակ ծրագիրն է, որի վրայ նշուած է իբրեւ առաջին ներկայացում: Սա եւս իրողութիւն է, որովհետեւ 1865ի Մայիսին ներկայացուել է ընդամէնը մի տեսարան: Որպէս այդ բեմադրութեան միակ ստոյգ պատմական փաստաթուղթ, այն վերատպում ենք նոյնութեամբ (տե՛ս՝ կողքի էջում):

Սա միակ վկայութիւնն է, որը հաւաստում է Թովմաս Ֆաուլեաճեանի մասնակցութիւնը Վենետիկի Վաճառականի բեմադրութեանը, այն էլ ոչ թէ 1865ի Մայիսի 7ին՝ Շայլոկի, այլ 1866 Ապրիլի 17ին՝ Անտոնիոյի դերում: Իսկ եթէ ընդունենք, որ քսան օր յետոյ տեղի ունեցած ներկայացումն էլ այս կազմով է ընթացել, որը շատ հաւանական է, ուրեմն Պորցիայի համար նախատեսուած Պայծառ Ֆաուլեաճեանն առհասարակ մասնակցութիւն չի ունեցել Վենետիկի Վաճառականի եւ ոչ մի բեմադրութեան մէջ: Ասացինք, որ Զմշկեանն իր թարգմանութեան ձեռագրի վրայ Պորցիայի դերակատարների անունները յիշատակելիս, առաջինը գրել է Պայծառի անունը: Ցետոյ դա ջնջել է եւ քիչ վերեւում աւելացրել Սոփիօ (Մելիք-Նագարեան - Բ.Ց.) անունը, դա էլ ջնջել՝ Սաթենիկ (Զմշկեան - Բ.Ց.) գրել: 1865-66ին Վենետիկի Վաճառականը միայն երեք անգամ է խաղացուել: 1865ի ներկայացմանը, ինչպէս ասուեց՝ կին դերակատար չլինելու պատճառով ոչ մի դերասանուհի չի մասնակցել: 1866 Ապրիլի 17ի օրը, ըստ պահպանուած ծրագրի, Պորցիա է խաղացել Սոփիօ (Սոֆիա) Մելիք-Նագարեանը: Շատ հնարաւոր է, որ Մայիսի 8ի ներկայացման մասնակիցները եղել են նախորդ ներկայացման դերակատարները: Սաթենիկ Զմշկեանն էլ Պորցիա է խաղացել 1873ին: Հաւանականն այն է, որ Զմշկեանը Պորցիայի դերակատար նշանակելով Պայծառին, վերջինս չի արդարացրել նրա պահանջմունքները եւ ստիպուած է եղել փոխել դերակատարին: Բոլոր դէպքերում, Պորցիայի դերում Մելիք-Նագարեանի հանդէս գալը հերքում է Պայծառ Ֆաուլեաճեանի մասնակցութիւնն այդ պիէսի բեմադրութեանը: Այդ է վկայում եւ ծրագրի մէջ նրա անուան բացակայութիւնը:

Դառնանք Չեսիկայի դերակատարութեան խնդրին:

Թէ՛ Ցարութիւնեանը եւ թէ՛ նրան հետեւած Չարեանը Պայծառ Ֆաուլեաճեանին համարել են Չեսիկայի դերակատար: 1866ից սկսած Զմշկեանը Վենետիկի Վաճառականը ներկայացրել է երկու գործողութեամբ: Դրանց մէջ մտել են առաջին արարուածի երրորդ տեսիլը եւ չորրորդ արարուածի առաջին եւ երկրորդ տեսիլները: Այս երկու գործողութեան մէջ կանանցից մասնակցում են միայն Պորցիան եւ Ներիսան, այնքանով որ նրանք անմիջականօրէն առնչւում են Անտո-

նիւ-Բասանիւ-Շայլոկ յարաբերութեան հիմնահարցին, որը եղել է Ջմշկեանին հետաքրքրող գիծը: Այս միջոցով նա բոլոր գործողութիւնները պտտեցրել է Շայլոկի շուրջը, որի դերակատար եղել է ինքը: Իսկ Լորենցօ-Ջեսիկա գոյգի սիրոյ պատմութիւնը տեղ չի գտել բեմադրութեան մէջ: Հետեւաբար, Պայծառ Ֆասուլեաճեանը Ջեսիկայի դերակատար էլ չի եղել եւ առհասարակ մասնակցութիւն չի ունեցել Վենետիկի Վաճառականի ոչ մի ներկայացմանը եւ ոչնչով չի կարող համարուել Շեքսպիրի դրամատուրգիան հայ թատրոնում արմատաւորողներից մէկը:

Այս սխալ տեսակէտին տուրք է տուել նաեւ թատերագէտ Վարսիկ Գրիգորեանը: Պայծառին համարելով Ջեսիկայի դերակատար, նա միեւնոյն ժամանակ, գրել է թէ Ֆասուլեաճեանների Պոլսից բերած պիէսներից Թիֆլիսում չեն եղել[29]: Մինչդեռ, թէ՛ *Հռենանին* (Ստեփան Պալասանեանի թարգմանութեամբ) եւ թէ՛ *Թուղթ Խաղացողի կեանքը* (դրամատուրգ Միքայէլ Պատկանեանի թարգմանութեամբ) եղել են թիֆլիսահայ թատրոնի խաղացանկի պիէսներ: *Թուղթ Խաղացողի կեանքը* արեւելահայերէն ներկայացնելու մասին Ստեփանէն գրել է թէ՝ Պայծառ Ֆասուլեաճեանն աշխատում էր «պոլսահայերէն լեզուի ձեւերը փոխել եւ թիֆլիսահայերէնին նմանցնել: Բոլորովին գուր աշխատանք... Կրակուած, տաքացած ժամանակը բեմի վրայ պէտք է իր միտքը դարձնէ էնդուր վրայ, թէ «ասոնք» չպիտի ասէ. «սրանք» պիտի ասէ»[30]:

Հայ թատրոնում Շեքսպիրի մուտքի առանձնաշնորհը Թովմաս Ֆասուլեաճեանի անուան հետ կապելու փաստը, ցաւօք, ընդօրինակուել է նաեւ մի այլ հմուտ թատերագէտի՝ Հենրիկ Յովհաննիսեանի կողմից: Նա եւս՝ հիմք ընդունելով Սամուէլեանի վերոնշեալ *Շեքսպիրը Եւ Հայ Գրական Ու Թատերական Մշակոյթը* գիրքը, տուրք է տուել արդէն երեք տասնամեակ գրքից-գիրք փոխանցուող սխալի կրկնութեանը՝ «1865-ի մայիսին Թիֆլիս է ժամանում պոլսահայ դերասան Թովմաս Ֆասուլեաճեանն իր կնոջ՝ Պայծառ Փափազեան-Ֆասուլեաճեանի հետ... Այս շրջանում բեմադրւում է նաեւ Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը» (1865 թ. մայիսի 7-ին), Ֆասուլեաճեանը խաղում է Շայլոկ, Ջմշկեանը՝ Անտոնիո: Դա Շեքսպիրին դիմելու առաջին փորձն էր հայ բեմում»[31]:

Ժ.Թ. դարի հայ թատրոնի պատմութեան զգալի պակասը լրացնելու եկած Յովհաննիսեանի այս գրքի հրապարակ գալը, թւում էր, կը սրբագրէր մի շարք գրքերում տեղ գտած այս եւ այլ կարգի բազմաթիւ ինքնայօրինուածներ: Աւա՛ղ, չի ստացուել:

Բարձր գնահատելով Շեքսպիրը հայ թատրոնում հարցը չօշափող վերոյիշեալ գրքերի արժանիքները հայ թատրոնի պատմութեան

լուսաբանութեան մէջ, մեր միակ ցանկութիւնն է վերականգնել պատմական ճշմարտութիւնը, քանի որ, այս սխալը քաղաքացիութիւն է ստացել նաեւ սփիւռքահայ թատերագիտութեան մէջ[32]:

Ճշմարտութիւնը պահանջում է խոստովանել, որ հայ բեմի մեծ երախտաւոր Գէորգ Ջմշկեանը թարգմանելով *Թիմոն Աթենացին*, թարգմանելով ու բեմադրելով *Վենետիկի վաճառականը* եւ *Օթելլօն*, խաղալով այդ պիէսների կենտրոնական հերոսների դերերը, եղել ու մնում է Շեքսպիրի դրամատուրգիան հայ թատրոնում արմատաւորող ԱՌԱՋԻՆ թատերական գործիչը:

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] *Մեսրոպ Վ. Ձանաշեան, Պատմութիւն Ազգի Հայ Գրականութեան, հատոր Ա., Վենետիկ, 1953, էջ 299։*

[2] *Տե՛ս՝ Բախտիար Ծովակիմեան, «Վ. Գ. Բելինսկին եւ Հայ Թատերական Քննադատութիւնը XIX Դարի 60-ական Թուականներին», Տեղեկագիր, Թիւ 2, 1954, էջ 57-63։ Բելինսկին 12 ստուար հատոր գրական ժառանգութիւն է թողել։ Գրականութեան մէջ նրա կուռքերը եղել ռուս բանաստեղծ Ալեքսանդր Պուշկինը եւ Շեքսպիրը։ Մանրամասնօրէն վերլուծելով Համլէտի թարգմանութիւնները եւ դերասան Պաւել Մոչալովի խաղը Համլէտի դերում, Բելինսկին իր «Համլէտ, դրամա Շեքսպիրի։ Մոչալովը Համլէտի դերում» յօդուած-ուսումնասիրութեան մէջ Շեքսպիրին համարել է դրամատիկական պօէտների արքայ, իսկ Համլէտը՝ ոչ իրենից առաջ եւ ոչ իրենից յետոյ մրցակից չունեցող առաջ։ «Բելինսկի, Մոչալով, «Համլէտ» Հարցը եւ Հայ Թատերական կեանքը 1840-1900-ական ԹԹ.» Թեմայի շուրջ մեր պատրաստած ուսումնասիրութիւնից տպագրուել է միայն հետեւեալ յօդուածը։ Բախտիար Ծովակիմեան, «Բելինսկին եւ Հայերը», Բանբեր Երեւանի Համալսարանի, Թիւ 1, 1969, էջ 90-102։*

[3] *Գէորգ Ջմշկեան, Իմ Թիւրատակարանը, Երեւան, 1953, էջ 40։*

[4] *Մեղու Հայաստանի, Թիւ 38, 1863, էջ 337։*

[5] *Հայաստանի Գրականութեան եւ Արուեստի Թանգարան (այսուհետեւ՝ ԳԱԹ), Գէորգ Ջմշկեանի Ֆոնդ, 1 բաժին, Թիւ 32։*

[6] *Հայկական Աշխարհ, Թիւ 1-2, 1866, էջ 69։*

[7] *Բախտիար Ծովակիմեան, «Շեքսպիրը Հայ Բեմում (Էջեր Տարեգրութիւնից)», Սովետական Արուեստ, 19րդ տարի, Թիւ 3 (Մարտ 1964), էջ 22։*

[8] *Լուիզա Սամուէլեան, «Շեքսպիրեան Անդրանիկ Ներկայացումը Պրոֆեսիոնալ Հայ Բեմում», Սովետական Արուեստ, 19րդ տարի, Թիւ 11 (Նոյեմբեր 1964), էջ 27։*

[9] *Հայկական Աշխարհի Կռունկ, Թիւ 7, Մայիս 1865, էջ 312։*

[10] *Սամուէլեան, «Շեքսպիրեան Անդրանիկ Ներկայացումը», էջ 27։*

[11] *Նոյն։*

[12] *Նոյն։*

[13] *Լուիզա Սամուէլեան, Շեքսպիրը եւ Հայ Գրական Ու Թատերական Մշակոյթը, Երեւան, 1974, էջ 104։*

[14] *Նոյն։ Մէջբերուած հատուածում խօսքը Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան եկեղեցական Թատրոնում 1864 Յունուարի 29ի Մակբեթ Ներկայացման մասին է։*

[15] *Հայկական Աշխարհի Կռունկ, Թիւ 7, Մայիս 1865, էջ 313։*

[16] *Ջմշկեան, էջ 39։*

[17] *Ծաղկաքար, Թիւ 3, 1907, էջ 38։*

[18] Բարկէն Յարութիւնեան, XIX-XX դարերի Հայ թատրոնի Տարեգրութիւն, Հատոր առաջին, Երեւան, 1980, էջ 67։

[19] Ջմշկեան, էջ 40։

[20] ԳԱՓ, Գեղէոն Մխրտչեանի Ֆոնդ, I բաժին, թիւ 16։ Մխրտչեանը թուղթ խտացողի կեանքում խաղացել է՝ Դատաւոր եւ Ձանազարհոդ, Լուկրեցիա Բորջիայում Օֆիցէր եւ Ձանազարհոդ։

[21] ԳԱՓ, Գէորգ Ջմշկեանի Ֆոնդ, I բաժին, թիւ 32, էջ 90։

[22] Մեղու Հայրենեաց, թիւ 88, 1866։

[23] Նոյն, թիւ 117, 1866։

[24] Հայկական Աշխարհ, թիւ 1-2, 1866, էջ 69։

[25] Նոյն։

[26] Յարութիւնեան, էջ 72։

[27] Ռուբէն Զարեան, Էջեր Հայ թատրոնի Պատմութիւնից, Երեւան, 1989, էջ 194, 192, 208։

[28] Մաշտոցեան Մատենադարան, Ալեքսանդր Երիցեանի Ֆոնդ, թիւ 160, թուղթ 6։

[29] Վարսիկ Գրիգորեան եւ Յասմիկ Տէր-Կարապետեան-Զաքը, Առաջին Հայ Դերասանուհիները, Երեւան, 1993, էջ 53։

[30] Հայկական Աշխարհի Կանունկ, թիւ 1-2, 1866, էջ 313։

[31] Հենրիկ Յովհաննիսեան, Հայ թատրոնի Պատմութիւն, XIX դդ-, Երեւան, «Նաիրի», 1996, էջ 110։ Նշենք նաեւ, որ Ֆաուստեանցեանը թխթխլա էր ժամանել աւելի վաղ, քանի որ նա Մալխաի 1ին ներկայացման մասնակից է եղել։

[32] Տե՛ս Թորոս Թորանեան, Պերճ Ջազչեան կամ Ազգէս կը Նուիրուի Թատրոնին, Հալէպ, 1989-1990, էջ 105։

THE FIRST PERFORMANCE OF A SHAKESPEARE PLAY IN THE ARMENIAN THEATRE
(Summary)

BAKHTIAR HOVAKIMIAN

The author argues that Gevorg Chemeshkian (1837-1915) was the pioneer who introduced the works of William Shakespeare to the repertoire of the Armenian theatre in the 19th century. In 1863 Chemeshkian translated *Timon of Athens* to Armenian from French. This was followed by his translation of *The Merchant of Venice* the following year. Finally, on 7 May 1865, he directed and participated in the fourth act of *The Merchant of Venice* performed in the City (Tamamshian) Theatre in Tiflis, the first ever public performance of a Shakespeare play in the Armenian language.

The author raises serious objections against differing conclusions reached previously by other scholars dealing with this specific subject and tries to refute their findings.

ՄԱՐՍԷԻԶԸ ԵՒ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ

1789ին բռնկուած Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան երրորդ տարում, մի անհանգիստ օր՝ 1792 Ապրիլի 25-ից 26ի գիշերը, Ստրազբուրգ քաղաքում, Ֆրանսիական Հիւսիսային Բանակի ճարտարագիտական զօրքերի կապիտան Կլոդ Ժոզէֆ Ռուժէ դը Լիլը (Claude Joseph Rouget de Lisle, 1760-1836) հեղինակել է «Հռենոսեան Բանակի Մարտական Երգը» (*Chant de guerre pour l'armée du Rhin*)։ Յաջորդ օրը՝ Ապրիլի 27ին, այդ երգը կատարել է գրեթէ ողջ Ստրազբուրգը։ Ապրիլի 29ին, Հռենոսեան Բանակի նուագախումբն այդ երգը հանդիսաւորապէս կատարել է Ստրազբուրգի քաղաքային հրապարակում։ Նոյն տարուան Յուլիսի 5ին, Մարսէյլի քաղաքապետարանը զօրակոչել է 600 հոգու, որոնք՝ անկազմակերպ, անկայան եւ անտրճիկ, 600 մղոն ճանապարհ են կտրել Մարսէյլից Փարիզ՝ երթի ընթացքում կատարելով Ռուժէ դը Լիլի երգը։ Մարսէյլցիների այդ վաշտը մուտք է գործել յեղափոխութեամբ եռացող Փարիզ, եւ Ֆրանսիայի մայրաքաղաքում չուրթից չուրթ տարածուել է «Մարսէյլցիների Քայլերգը» կամ կրճատ՝ Մարսէյէզը (*la Marseillaise*)։

Բոցաշունչ Մարսէյէզի խրոխտ հնչիւնները, հուժկու եւ արժանապատիւ տարերքը Ֆրանսիացի ժողովրդին ուղեկցել եւ քաջալերել են թէ՛ 1792 Օգոստոսի 10ին Փարիզում միապետութեան տապալման ժամանակ, թէ՛ 1830ի Յուլիսեան Յեղափոխութեան ալեկոծ օրերին, թէ՛ 1871ին՝ Փարիզեան Կոմունայի բարիկադների վրայ։ Ռեստաւրացիայի (1814-1830) եւ Երկրորդ Կայսրութեան (1852-1870) տարիներին Մարսէյէզն արգելուեց, իսկ Երրորդ Հանրապետութեան ժամանակ (1870ից) հռչակուեց ազգային օրհներգ[1]։ Այսօր էլ Ֆրանսիայի Հինգերորդ Հանրապետութեան պետական օրհներգը Մարսէյէզն է՝ 1975ի Յուլիսի 14ին ընդունուած նոր երաժշտական խմբագրմամբ։

Զինուորական ճարտարագէտ Ռուժէ դը Լիլին Ստրազբուրգում ճանաչել են որպէս սիրող ջութակահարի։ Նա գրել է օրհներգեր, ռոմանսներ, օպերայի լիբրետոներ, Ֆրանսերէն է թարգմանել Ժ.-Ժ. դարերի ռուս առակագիր Իվան Կռիլովի առակներից[2]։ Մէկ գիշերում գրելով յաւուր պատշաճի մի երգ, որ՝ հեղինակային խմբագրութեամբ, բաղկացած էր ընդամէնը վեց տողից, Ռուժէ դը Լիլն, անշուշտ, չէր կարող պատկերացնել, որ ստեղծել է աշխարհի ամէնից հանրածանօթ երաժշտական կտորներից մէկը։ «Այն ժողովրդի յեղափոխական կամքի, նրա պոռթկումի եւ հերոսականութեան ջերմ ու

կրքոտ արտայայտութիւնն է,- գրել է Ֆրանսիացի կոմունիստ ղեկավար Մորիս Թորէզը:- Այն ինքը՝ յեղափոխութիւնն է»[3]: Իսկ 1974-81ին Ֆրանսիական Հանրապետութեան նախագահ Վալերի Ժիսկար դ'Էստէնը Մարսէյէզը համարել է «ամենաանկրկնելի եւ ամէնից նշանակալից ազգային օրհներգն աշխարհում»[4]:

Այս հանրայայտ երգի ստեղծման պատմութեան եւ ունեցած ազդեցութիւնների ուսումնասիրմամբ զբաղուել են վաղուց[5]: Մարսէյէզը շատ արագ մուտք է գործել նաեւ ոչ-Ֆրանսիացի ժողովուրդների հասարակական եւ հոգեւոր կեանքի ոլորտ: Այն արդէն 1794ին թարգմանուել էր գերմաներէն, լատիներէն, սլովակերէն, հունգարերէն ու ռուսերէն:

Մարսէյէզը՝ Ժ.Թ. դարից սկսած, տարածուել եւ իր արձագանգն է գտել նաեւ հայ իրականութեան մէջ: Սոյն խնդիրը մասնակիօրէն արժանացել է ուսումնասիրողների ուշադրութեանը[6]: Մեր ներկայ աշխատութեամբ կը փորձենք հնարաւորին չափ համալրել հայ իրականութեան մէջ Մարսէյէզի տեղի եւ ազդեցութեան ուսումնասիրութիւնը, որն, յուսով ենք, ուշագրաւ կը լինի ինչպէս գրական-մշակութային, այնպէս էլ պատմական առումներով:

1789ի Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեանը հայ աշխարհն արձագանգել է հենց ծաւալուող իրադարձութիւնների ժամանակաընթացքում: Հայ մամուլի անդրանիկ ներկայացուցիչը՝ 1794-96ին Մադրասում լոյս տեսնող Ազդարար ամսագիրը եւրոպական լրագրերից կատարած թարգմանութիւններով հեռաւոր Հնդկաստանի ափերի հայութեանը տեղեկացրել է Ֆրանսիայում կատարուող նշանակալից իրադարձութիւնների մասին[7]: Ազդարարի էջերում տեղ են գտել Ֆրանսիական մեծ յեղափոխութեանն առնչուող անձանց եւ հասկացութիւնների յիշատակութիւններ: Տեղեկութիւն է տրուել նաեւ Մարսէյ քաղաքի մասին («Իսկ վասն մարսիլիա քաղաքին ծանիք միւսանգամ ... փարիզացիք առաքել են 'ի վերա նոցա գ40 հազար զօրս առ 'ի նուաճել զնոսա»[8]), սակայն մեր պրպտումները՝ գտնելու «Մարսէյէզ» բառը կամ յիշատակութիւն այդ երգի մասին, մնացին անարդիւնք:

Առանձին հայ անհատներ Մարսէյէզին կարող էին առնչուած լինել տակաւին Ժ.Թ. դարի սկզբին, Օսմանեան կայսրութիւնում, որտեղ այն տարածում էր գտել յեղափոխական տրամադրութիւններ ունեցող յոյն գիւղացիութեան շրջանում: «Ջմիւռնիահայ «Մարսէլիէզը» յօդուածի հեղինակ, բանասէր Միքայէլ Ցակոբեանը գրել է՝ առանց աղբիւրը նշելու, որ ոմն Ալի Փաշա Եանինացի, իր որդու հաղորդումների համաձայն, գեկուցագիր է գրել սուլթանին, յայտնելով, որ յոյն

գիւղացիները «սկսում են երգել Թեսալացի Ռիգասի յունարէն թարգմանած մի երգը, որ մարսելիեզ են անուանում»[9]:

Հայ ընթերցողն առաջին անգամ հնարաւորութիւն է ունեցել Մարսէյէզը մայրենի լեզուով կարդալ այնքան մեծ ժողովրդականութիւն վայելող այդ երգի ստեղծումից աւելի քան 60 տարի անց: Մարսէյէզը հայերէն է թարգմանուել աւելի վաղ քան մի շարք այլ ժողովուրդների լեզուներով, չնայած, որ այդ ժամանակ՝ Երկրորդ Կայսրութեան շրջանում, այն պաշտօնապէս արգելուած էր իր հայրենիքում՝ Ֆրանսիայում, իսկ այն «անլեգալ» երգելու դէպքում պատիժն անխուսափելի էր[10]:

Մարսէյէզի առաջին հայերէն թարգմանութիւնը լոյս է տեսել 1854ին, Զմիւռնիայում՝ Տետէեան եղբայրների տպարանում հրատարակուող Արփի Արարատեան ամսագրում: Գրաբար այս թարգմանութիւնը հրապարակուել է «Երգ Հայրենի Ազատութեան» խորագրով եւ «Մարսէլիէզ» ենթավերնագրով՝ առանց Ռուժէ դը Լիլի անուան յիշատակութեան, եւ, որ առաւել յատկանշական է, «Զուարճալիք» բաժնում: Դա կատարուել է, ամենայն հաւանականութեամբ, գրաքննութեանը չեղելու նպատակով, որին պիտի որ խրտնեցնէր միապետական Օսմանեան կայսրութիւնում նման ազատագրման կոչբանաստեղծութեան հրապարակումը:

Բանաստեղծութեան թարգմանիչ նշուած է «Յ. Ո. Փաշա. Մեսրոպ Վարժարանի», որը Յակոբ Ոսկանեանն է (1824-1907)՝ նշանաւոր գրող ու հրապարակախօս Ստեփան Ոսկանեանի (1825-1901) եղբայրը: Յակոբ Ոսկանեանը թարգմանութեան կատարման ժամանակ եղել է Զմիւռնիայի Մեսրոպեան Վարժարանի աշակերտ:

Ահաւասիկ Մարսէյէզի առաջին հայերէն թարգմանութիւնը.

ԵՐԳ ՀԱՅՐԵՆԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ
(Մարսէլիէզ)

Օ՛ն արիք, եհաս փառացն օր,
Մանկունք հայրենեաց անվեհեր,
Արիւնոռշտ դրօշ բռնաւոր,
Անսահ կանգուն կայ ընդդէմ մեր:
Կրկին:

Հնչէ՞ յականջս ձեր, աւոդոք՝
Զօրացն մռնչիւն ՚ի դաշտին.
Գոյք տան միշտ ՚ի ձեր գոգ,
Զընկերս խողխողել եւ զորդիս:

Հա՛պա ՚ի զէն քաղաքացիք,
զգունդ ձեր կազմեցէք քաջորդի.
Արշաւեսցուք, արշաւեսցուք,
պիղծ արիւն յակօսս ոռոգի:
Արշաւեսցուք, արշաւեսցուք,
պիղծ արիւն յակօսս ոռոգի:
Զի՞նչ գերեացս անձկան հոյլք վատթարք:
Զի՞նչ ժանտ մատնտուքն, եւ արքայք:
Է՞ր վասն ոտնակապք իսկ անարգ,
Ի վաղուց կազմին եւ շղթայք....:
Կրկին:

Գա՛ղղիացիք, մեզ, ոհ, քանի անարգանս,
Քանի՛ կարիք մեր յուզ՚ի ճահ:
Խորհին մատնել զմեզ անահ
Ի գերութեան վաղ կապանս:
Հա՛պա ՚ի զէնս, եւ այլն:
Զինչ. օտար այս զօր զինակիր
Լիցի՞ օրէնսդիր աղինս աստ:
Զի՛նչ. փաղանգս այս շահախնդիր,
Արկցե՞ն զգոռ մարդիկ մեր տապաստ:
Կրկին:

Մե՛ծդ Աստուած. շղթայակապ ՚ի ձեռաց,
Ընդ լծով ճակատք մեր ընկցին.
Բռնաւորք մոլի սին փառաց
Մեր բաղդին դիւրաւ տէր լիցին:
Հա՛պա, ի զէնս, եւ այլն:
Զսփացէք, այո՛, դուք մեզ մեխք,
Բռնաւորք, ծանակք համայնից,
Սիրտ ձեր, որ մահ շնչէ եւ մեղք՝
Չիւր գին ընկալցի արժէից:
Եւ այլն[11]:

Յակոբեանը մանրամասն անդրադարձել է գմիւռնիահայ առաջին Մարսէյէզին, նչելով, որ նրա ծնունդը պատահական չէր հենց Զմիւռ-

նիայում, որի հայութիւնը ԺԹ. դարի կէսերին տոգորուած էր բարձր հայրենասիրութեամբ եւ ընթանում էր ֆրանսիական քաղաքակրթութիւնը համակողմանիօրէն ուսումնասիրելու ուղիով: Ֆրանսիայի ապագայ օրհներգի ազդեցութիւնը, ըստ Յակոբեանի, նկատելի է յետագայ տասնամեակին գմիւռնիահայ մամուլում հրատարակուած հայ հեղինակների որոշ բանաստեղծութիւններում[12]:

Ոսկանեանի թարգմանութիւնում պահպանուած են ֆրանսերէն Մարսէյէզի չափն ու յանգը՝ թէեւ յաճախակի խախտումներով: Այնուամենայնիւ, թարգմանութեան գրաբար շարադրանքը եւ խրթնաբանութիւնները չափազանց ծանրացրել են բանաստեղծութիւնը, ինչը անյարիր է նման մի մարտաշունչ քայլերգի:

Մարսէյէզի հայ մամուլում յաջորդ յիշատակումը, որքան որ հնարաւոր է եղել պարզել, կատարել է Ստեփան Ոսկանեանը՝ 1864ին, այսինքն՝ երգի հայերէն առաջին թարգմանութիւնից տաս տարի անց: Ոսկանեանն Փարիզում հրատարակած *Արեւմուտք* պարբերականի էջերում մի առիթով գարգացրել է այն գաղափարը, որ «երգել ի վերջոյ համաձայնութիւն տարածել է բազմութեան մէջ» եւ բերել յեղափոխական ֆրանսիացիների օրինակը: «Ֆրանսայի զաւակները Մարսէլիէզը մէկ բերանով երգելու ժամանակ այն համամիտ նուիրումը զգացին, որն որ գիրենք բոպիկ, անօթի եւ գրեթէ անզէն կատաղի թշնամիներու դէմ տարաւ եւ հայրենիքը ազատեց: Մարսէլիէզ երգելով Ֆրանսայի զաւակները ... բռնաւորութեան այնպիսի հարուած մը տուին, որ մէյ մ՝ալ չկրցաւ իր հին գոյութիւնը գտնել եւ 89 անմահ թուականը անհետեց»[13]:

Զմիւռնիահայ միջավայրում է իրականացել նաեւ Մարսէյէզի յաջորդ գրաբար թարգմանութիւնը, որը կատարել է Պետրոս Թերզեանը: Այն ասպարէզ է իջել 1877ի գարնանը՝ Մատթէոս Մամուրեանի (1830-1901) *Արեւելեան Մամուլ* հանդէսում եւ ապա, մէկ ամիս անց՝ Ղուկաս Պալդազարեանի (1810-1878) *Արշալոյս Արարատեան* պարբերականում[14]: Մամուրեանի եւ Պալդազարեանի հրատարակած պարբերաթերթերը միմեանց հակառակ ուղղութեան են պատկանել: Առաջինը եղել է աշխարհաբարի, իսկ երկրորդը՝ գրաբարի կողմնակից: Մարսէյէզն էլ դարձել է այդ թեմայով վիճաբանութեան առարկայ: «Աւելի փափագելի է, որ «Մարսէլիէզն» աշխարհիկ լեզուով թարգմանուէր ընդհանրապէս ժողովրդեան իմանալի լինելու համար»,- գրել է *Արեւելեան Մամուլը*[15]: Պալդազարեանն առարկել է՝ նշելով, որ անկարելի է հայրենասիրական եւ պատերազմական այդ երգը հնչեցնել «յանկանոն եւ յաղաւաղ աշխարհիկ բարբառով, մինչդեռ գրաբար թարգմանութիւնն օժտուած է վսեմութեամբ ու քաղցրութեամբ[16]:

Պահպանողական Արշալոյս Արարատեանը քննադատել է Արեւելեան Մամուլին այլ հարցում եւս՝ հակառակուելով այն կարծիքին, որ Մարսէյզը նոյնանգ ստեղծագործութիւն է։ Արեւելեան Մամուլը պատասխանել է, որ ընդդիմադիր պարբերականի հրատարակած օրինակում մի ամբողջ պարբերութիւն պակաս է։ Սակայն սոյն բանավէճի առանցքային խնդիրը թարգմանութեան լեզուի հարցն է եղել։ Մինչեւ անգամ Մարսէյզի թարգմանութիւնը սոսկ պատրուակ է հանդիսացել գաղափարապէս միմեանց հակոտնեայ հրատարակութիւնների համար՝ իրար դէմ բանավիճելու առաւել սկզբունքային հարցերի չուրջ[17]։

Ստորեւ ներկայացնում ենք Մարսէյզի Թերգեանի թարգմանութեան չարադրանքը։

Արիք, որդի՛ք դուք հայրենեաց,
Հասեալ է արդ մեզ օր փառաց,
Դէժ բռնութեան յարիւն թաթաւ
Կանգնի ընդդէմ մեր դիմագրաւ
Լուա՞յք ՚ի դաշտս պատերազմաց
Զահեղ գոչիւն վայրագ գօրաց,
Գան խողխողել ՚ի գիրկըս ձեր
Զորդիս, կանայս ձեր ՚ի տուսեր,
Հա՛պ՚ օճ, ՚ի զէն քաղաքացիք
Կազմել ըզգունդ քաջամարտիկ,
Օճ, դիմեսցուք տալ ՚ի յագուրդ
Դաշտաց մերոց զարիւն անսուրբ։

Զի՞նչ կամի այդ հրոսակ գերեաց
Մատնիչ, դաւող բագաւորաց
Ո՞ւմ այդ աճուր ւ՚աճարգ շղթայ
Ո՞ւմ ի վաղուց պատրաստեալ կայ,
Զինչ նախատինք մեզ, Գա՛ղղիացիք,
Յո՞րպիսի յոյգս վառիլ պարտիմք,
Մատնել զմեզ վատք յանդգնին
Ի գերութի՛ւն անդ ՚ի նախկին.
Հա՛պ՚ օճ, ՚ի զէն, քաղաքացիք եկճ.։

Զի՞նչ, ժպտիցե՞ն այդ վաշտք օտար,
Լինիլ երկրիս հրամանատար,
Զի՞նչ այն վարձկան փաղանգք անսաստ
Զգոռ մեր մարտիկս անկցե՞ն տապաստ։
Այլ աղէ՛, տէր, ձեռք ստրկաց

Արկցե՞ն ըզմեօք ըզլուծ չարաց,
Եւ տիրապետք աճարգ աճդրէն
Լիցի՞ն բաղդից մեր տրնօրէն
Հա՛պ՝ օ՛ն, ՚ի զէն, քաղաքացիք եկն.:

Դողացէ՛ք բոու՛նք, եւ դուք դրո՛ւժանք,
Կուսակցութեանց մեծ աճարգանք,
Ձի ձեր խորհուրդք հայրենասպան,
Վարձս ընկալցին զիւրեանց արժան.
Համակ՝ զինի՝ ՚ննդէմ ձեր ՚ի մարտ
Թէ դիւցազունք մեր աճկցին արդ,
Վերկենցաղէ զայլոս երկիր
Մղել ճակատ վըրէժ խնդիր.
Հա՛պ՝ օ՛ն, ՚ի զէն, քաղաքացիք եկն.:

Նուիրական սէր հայրենեաց,
Օգնեա ՚ի վրէժ, մեր կուռ բազկաց,
Ազատութիւն մեզ կաթոգին
Ընդ բո պաշտպանս մարտի՛ր ուժգին,
Արդ՝ յաղթութիւն ընդ մեր դրօշու
Հասցէ բող ձայն բո բաջազդու,
Եւ բշնամիք բո ոգեսպառք
Տեսցեն զմեր փառս, բո գյաղթանակ:
Հա՛պ՝ օ՛ն, ՚ի զէն, քաղաքացիք եկն.[18]:

Մարսէյեզի Ռականեանի եւ Թերգեանի թարգմանութիւնների համեմատական քննութիւնը ցոյց է տալիս, որ առաջինը շատ աւելի անվարժ եւ բանաստեղծական գրչից զուրկ ձեռքի արդիւնք է քան երկրորդը։ Երկու թարգմանութիւններում էլ պահպանուել է բնագրի ութվանկանի չափը, սակայն Թերգեանի տարբերակը շատ աւելի դիւրաւահ է եւ, բացի այդ, նրա գրաբարը պակաս գրքային է։

Մամուրեանը, նոյն 1877ի Ապրիլ ամսին՝ Արշալոյս Հայրաստեանի հետ միաժամանակ, հրապարակ է հանել նախորդ ամսին իր յայտնած կարծիքի իրագործումը՝ Մարսէյեզի աշխարհաբար թարգմանութիւնը։ Այն իրականացրել է թարգմանիչ եւ բառարանագիր Մեսրոպ Նուպարեանը (1842-1929)[19]։ Ի տարբերութիւն նախորդ թարգմանիչների, Նուպարեանը թարգմանել է բնագիրն ամբողջութեամբ՝ վեց տնով հանդերձ։ Ահաւասիկ եւ Ֆրանսիայի ազգային օրհներգի նրա աշխարհաբար թարգմանութիւնը։

Օն, հայրենեաց արի՛ զաւակք
Փառաց օրը հասած է մեզ,
Գոռ բռնութեան ահա դրօշակ
Մեզ դէմ կանգնած է սիգապէս,
Դաշտերուն մէջ կը լսե՞ք ձայն
Զօրականաց բիրտ ու վայրագ,
Ձեր բազկաց մէջ մորթել կու գան
Ձեր ամուսինքն եւ ձեր զաւակք.
Օ՛ն, ՚ի զէն, ո՛վ եղբարք,
Կազմեցէք Ձեր գունդեր
Յառա՛ջ, յառա՛ջ. մի պիղծ արիւն
Թող լուա՛յ ձեր դաշտեր:

Այդ հրոս գերեաց, այդ մատնիչներ
Այդ վատ արքայք ի՞նչ միտք ունին,
Որու՞ համար հաստ շղթաներ
Վաղուց հետէ կը պատրաստուին:
Մե՛զ, ո՛վ ֆրանսեաներ...: Ի՛նչ նախատինք,
Ինչ յոյզ զայրոյթ զգալ պէտք ենք:
Նորա կ՛ուզեն որ մատնուինք,
Հին գերութեան եւ կ՛սպասե՞նք:
Օ՛ն, ՚ի զէն, ո՛վ եղբարք, եւլն.:

Ի՛նչ, հրոսակներ օ՛տարական
Մեր հայրենեաց պիտ՝ ըլլա՞ն տէր,
Ի՞նչ, այդ վաշտեր անարգ, վարձկան
Պիտ՝ տապալե՞ն մեր կտրիճներ:
Մե՛ծդդ Աստուած, ստրուկ ձեռքեր
Մեր ճակատներն ծռե՞ն պիտի,
Եւ սինլքոր բռնապետներ
Հանդիսանան տէ՛ր Ֆրանսայի:
Օ՛ն, ՚ի զէ՛ն, ո՛վ եղբարք, եւլն.:

Վախցէ՛ք ժանտեր, դուք, դրուժաններ,
Կուսակցութեանց, ո՛հ, նախատինք,
Վախցէք, մատնիչ ձեր խորհուրդներ
Հուսկ պատիժնին պիտ՝ ընդունին,
Չի ամեն մարդ ձեզ դէմ զինուր:
Եւ թէ իյնան մեր դիւցազներ՝
Երկիր իսկոյն կ՛արտադրէ նոր,
Ձեզ դէմ կռուի՛լ միշտ անվեհեր:

Օ՛ն, ՝ի զէն, ո՞վ եղբարք, եկե՛ք:

Ֆրա՛նսեացք, իբրեւ վեհաձգ կռուող
Զարկէք հարուած կամ խնայեցէք,
Գութ ունեցէք ձեզ դէմ զինուող
Տկար հոգի զոհերուն հէք:
Այլ արիւնռուշտ այն հրէշներ,
Այլ Պույյէի ընկերներ ժանտ
Բոլոր անգութ այն վագրներ
Որք իրենց մօր պատռեն արգանդ:
Օ՛ն, ՝ի զէն, ո՞վ եղբարք, եկե՛ք:

Սէր հայրենեաց նուիրական
Մեր վրիժառու բազկաց օգնէ,
Ազատութի՛ւն մեզ սիրական,
Պաշտպաննե՛րուդ կողմէն կռուէ.
Ուժգին ձայնովդ յաղթութիւն բող
Վազէ, մտնէ դրօշներուդ տակ,
Եւ ոգեսպառ գծուծ ոսոխ
Տեսնէ մեր փառք, քու յաղթանակ:
Օ՛ն, ՝ի զէն, ո՞վ եղբարք, եկե՛ք.[20]:

Թէ՛ Թերզեանի եւ թէ՛ Նուպարեանի թարգմանութիւնները յետագայում վերահրատարակուել են այլ պարբերականներում, հրատարակութիւններում, ինչպէս նաեւ երգարաններում[21]:

Ամիւնիահայ մամուլում մէկ տարում Մարսէյէզի երեք հրատարակութիւններն, անշուշտ, նպաստել են երգի տարածմանը հայ ժողովրդի մէջ: Դրա ապացոյցն է նոյն ժամանակաշրջանում Մարսէյէզի մեղեդիների ներթափանցումը հայ երաժշտարուեստի մէջ: Ինչպէս յայտնի է, ԺԹ. դարի կէսերին հայ ազգային-հայրենասիրական երգերի համար օգտագործուել են արեւմտաեւրոպական ժողովուրդներից վերցուած պատրաստի եղանակներ: Երաժշտագէտ Մաթեւոս Մուրադեանն, օրինակ, Մարսէյէզի ազդեցութիւնն է տեսել Տիգրան Չուխաճեանի (1837-1898) «Չէյթունցոց Քայլերգ» հայկական սիրուած հայրենասիրական երգի վրայ: Ըստ Մուրադեանի, կոմպոզիտորը մեղեդին ստեղծելիս աչքի առաջ ունեցել է իտալական ու Ֆրանսիական յեղափոխական երգերը: «Այս է պատճառը, որ Չուխաջեանի երգերի եւ յիշեալ յեղափոխական հիմների (յատկապէս Գարիբալդիի երգերի) եւ «Մարսելիոզա»ի միջեւ գոյութիւն ունի որոշ հոգեհարազատութիւն», գրել է նա[22]: *Մարսէյէզի ազդեցութիւնը*

նկատում է նաեւ մինչեւ օրս ժողովրդականութիւն վայելող «Եղբայր եմք մեք» (խօսք՝ Մկրտիչ Պեշիկթաշլեանի, երաժշտութիւն՝ Կարլօ Ֆոսքինիի) երգի երաժշտութեան վրայ: Այն առաջին անգամ լոյս է տեսել 1862ին, երգահան Գաբրիէլ Երանեանի խմբագրած Քնար Հայկական հանդէսում[23]: Ինչպէս նշել է Մուրադեանը, «երգի մեղեդին, թէեւ գրուած իտալացու կողմից, արտացոլում է Ֆրանսիական հիմնի՝ «Մարսելիոզի», հնչերանգները, գտնում է ազգային-հայրենասիրական երգերի հնչերանգային, մետրոռիթմական ու ոճային առանձնայատկութիւնների ոլորտում եւ այդ պատճառով էլ ընդունուել եւ տարածուել է»[24]:

Մարսէյէզի ազդեցութեամբ ստեղծուած եւ նրա երաժշտութեամբ երգուող որոշ երգեր տեղ են գտել ԺԹ. դարի հայկական մի քանի երգարաններում: Դեռեւս 1871ին Երգարան Ագապեան Վարժարանի ժողովածուում լոյս է տեսել «Նոր Տարի - 1870» երգը («Օն, փութացէք, հասեալ է ժամ» սկսուածքով), որի հեղինակը ներկայացուել է երեք աստղանիշով, իսկ երաժշտութիւնը նշուել՝ որպէս «եւրոպական»[25]: Բանաստեղծութիւնը յիշեցնում է Մարսէյէզը ոչ միայն տրամադրութեամբ եւ յուզականութեամբ, այլ նաեւ շատ արտայայտութիւններով: Սոյն երգը նոյն ծանուցմամբ տպագրուել է նաեւ յաջորդ տարում՝ 1872ին հրատարակուած մէկ այլ երգարանում[26]: Իսկ որ այն երգուել է Մարսէյէզի երաժշտութեամբ, վկայում են աւելի ուշ շրջանում լոյս տեսած հայերէն երգարաններ, որոնցում սոյն երգի մեղեդու համար նշուած է. «եղանակ յա մարսէյէզ»[27]:

Հայ ազգային-ազատագրական չարժման գործիչ Մկրտիչ Փորթուգալեանը (1848-1921) հեղինակել է «Մարսէլիէզի Հայերէնը» բանաստեղծութիւնը, որն սկսւում է «Ցառաջ, հայեր հայրենիքի, // Ազատութեան ժամն է հասեր» տողերով: Այս քերթուածի համար եւս յօրինուել է մեղեդի եւ ընդգրկուել երգարաններում[28]:

Մարսէյէզի մեզ յայտնի արեւմտահայերէն վերջին թարգմանութիւնը լոյս է տեսել 1927ին, բանասէր Թէոդիկի (1873-1928) Ամէնուն Տարեցոյցում: Այն կատարել է հրապարակախօս ու թարգմանիչ Գրիգոր Հ. Գալուստեանը (1879-1963)[29]: Մեր կարծիքով, սա նշանաւոր քայլերգի լաւագոյն հայերէն թարգմանութիւնն է: Պահպանուած է բնագրի թէ՛ չափը, թէ՛ պարզ լեզուն եւ ոճը: Ճիշդ է, առկայ են որոշ հնաբանութիւններ, սակայն, ընդհանուր առմամբ, թարգմանութիւնը ստացուել է: Բանաստեղծութեան չարադրանքի հետ մէկտեղ ներկայացուել են նաեւ ձայնանիշերը:

Ներկայացնում ենք Գալուստեանի թարգմանութիւնը.

Օ՜ն, որդիներ մեր հայրենեաց,
Ահա փառքի օրն է հասած.
Բռնութեան դրօշն արիւնաներկ
Մեզ դէմ բացուած ահա տեսէք.
Պատերազմի դաշտին վրայ
Վայրագ գօրքեր արդ կը գոռան,
Որ խողխողեն գիրկին մէջ մեր
Զաւակներն ու զինակիցներ:
Ի զէ՜ն, քաղաքացիք,
Գունդեր քաջամարտիկ,
Յառա՜ջ, յառա՜ջ,
Արեամբ անսուրբ
Տանք մեր հողին յագուրդ:

Ի՞նչ կ'ուզեն այս ըստրուկ խումբեր
Մատնիչներու արքայասէր,
Որո՞ւ համար պատրաստած կան
Անուր, շղթայ ըստրկութեան.
Ֆրանսացինե՛ր, մեզ ի՜նչ ամօթ,
Պէտք է վառինք կիրքով հուրքոտ
Մեզ մատնելու քող յանդգնի՜ն
Վատ գերութեան այն մեր նախկին:
Ի զէ՜ն, քաղաքացիք, եւն.

Ի՜նչ, ժըպրիի՞ն վատերն օտար
Կառավարել այս մեր աշխարհ.
Ի՜նչ, այդ վարձկան փաղանգն յետին
Քաջ մարտիկներս փըռե՜ն գետին:
Աղէ՜, ո՜վ Տէր, գերիներու
Լո՞ւծը կըրենք վատ, ահարկու
Ու վատազգի բռնակալներ
Ճակատագրին մեր ըլլան տէ՞ր:
Ի զէ՜ն, քաղաքացիք, եւն.

Դողացէ՛ք դուք, բռնակալներ
Կուսակցութեանց անպատուաբեր.
Ձեր խորհուրդներ հայրենասպան
Պիտի առնեն վարձքեր արժան.
Մենք ամէնքս ալ զինուորներ ենք
Կռուել ձեր դէմ՝ առած մեր զէնք.
Մեր դիւցազներ իյնան երբոր

Ֆրանսա ունի քաջերն իր ծոր.
Ի զէ՛ն, քաղաքացիք, եւն.

Ո՛վ Հայրենեաց սրբազան սէր,
Օգնէ՛ ի վրէժ մեր բազուկներ.
Ո՛վ պաշտելի Ազատութիւն,
Ջինակցէ՛ քու պաշտպաններուն.
Մեր դրօշակին տակ յաղթական
Թո՛ղ կորովի քու լսուի ձայն.
Տեսնեն ընկճուած թշնամիներ
Քու յաղթանակն ու փառքը մեր:
Ի զէ՛ն, քաջաքացիք, եւն.[30]

Մարսէյէզը արեւելահայ իրականութիւն մուտք է գործել համեմատաբար ուշ եւ այն էլ միջնորդաւորուած կերպով:

Հայ բանասիրութեան մէջ ընդունուած է այն կարծիքը, որ իբր Մարսէյէզը արեւելահայերէն թարգմանել է բանաստեղծ Յակոբ Յակոբեանը (Պրոլետար, 1866-1937)[31]: Իսկապէս, Յակոբեանի Յեղափոխական Երգեր ժողովածուում տեղ է գտել Մարսէյէզի մի թարգմանութիւն[32], որը տպագրուել է նաեւ նոյն Յեղափոխական Երգեր խորագիրը կրող մէկ այլ ժողովածուում[33]:

Ա. Քեչիչեանը յուշեր է թողել Յակոբեանի կողմից սոյն թարգմանութեան կատարման մասին: Ըստ նրա, 1900ի մայիսմէկեան տօնակատարութեան օրը, Թիֆլիսցիները երգել են Մարսէյէզը. հնչել են նաեւ ռուսական ու վրացական յեղափոխական երգեր, մինչդեռ հայերը չեն ունեցել երգելու յարմար բան: Յուզուած Քեչիչեանն ասել է, որ կը դիմի Յակոբեանին՝ հայերէն յեղափոխական երգ գրելու խնդրանքով, եւ այդպէս էլ արել է: Ամիսներ անց, Յակոբեանն այցելել է Քեչիչեանին. «Ես եկել եմ ... որպէսզի տեսնեմ, թէ ինչպէս կը գտնեն քո եղբայրները «Մարսէլիէզը» հայերէն»: Բանուորները սկսել են ցածրաձայն երգել Մարսէյէզի հայերէն թարգմանութիւնը, իսկ «ընկեր Յակոբը հետեւում էր յանգերին եւ իր դիտողութիւններն արձանագրում տետրում»[34]. Սոյն թարգմանութիւնը տպագրուել է առանձին թերթիկների վրայ ու տարածուել հայերի մէջ՝ դառնալով ժողովրդական երգ: Ահա այդ թարգմանութեան առաջին տողերը.

Հրաժարուենք, ընկերներ, հին օրէնքներից,
Նրանց փոշին քափ տանք մեր ոտքերից.
Մենք պաշտել չենք կարող ոսկէ կուռքերին,
Գարշում ենք բռնակալ յարերից:

Մենք կ'երթանք հալածուած ընկերների հետ,
Մենք կ'երթանք մերկ, սոված բանուորների հետ,
Դաւադիր բշնամուն մենք միշտ կ'անարգենք,
Ու կռուի նրան դուրս կը քաշենք:

Սա, բնականաբար, բնաւ էլ Ֆրանսիայի ազգային օրհներգի շարադրանքը չէ, այլ ռուս յեղափոխական Պիոտր Լաւրովի (1823-1900) 1875ին գրուած «Բանուորական Մարսէյէզ» բանաստեղծութիւնը[35]: Ցակոբեանը կապ չունի Ռուժէ դը Լիլի բանաստեղծութեան, այլ միայն նրա ռուսական տարբերակի թարգմանութեան հետ:

Յովսէփ Թադէոսեանի կազմած ու 1907ին Թիֆլիսում հրատարակուած Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը գրքոյկում յիշուել է «այդ անմոռանալի օրերին» ստեղծուած «յեղափոխական երգը՝ մարսելիոզան»: Այդ կապակցութեամբ բերուել է բնագրի առաջին չորս տողը եւ դրա արձակ թարգմանութիւնը. «Ցառաջ, հայրենիքի զաւակներ, հասել է փառքի օրը. մեր դէմ է բարձրացրել բռնապետութիւնը իր արիւնոտ դանակը»[36]:

Մարսէյէզի արեւելահայերէն ամբողջական թարգմանութիւն գտնելու ուղղութեամբ մեր գործադրած ջանքերը յաջողութեամբ չեն պսակուել: Արուեստաբան Վահան Ցարութիւնեանը Մարսէյէզին նուիրուած իր յօդուածում բերել է որոշ արեւելահայերէն չափածոյ հատուածներ, որոնք սակայն, փոխադրուած են Գալուստեանի վերոյիշեալ արեւմտահայերէն թարգմանութիւնից: Աւելորդ չենք համարում մէջբերել այդ հատուածները.

Առաջ, որդիք հայրենիքի,
Ահա հասաւ օրը փառքի,
Բռնութեան դրօշը արնաւուն
Թշնամին դէպ մեզ է պարզում:
Պատերազմի դաշտում արնոտ
Վարձկաններ են ոռնում քիոտ
Եւ մորթել են ուզում անսանձ
Մեր մայրերին, որդոց, կանանց:
Առաջ, քաղաքացիք,
Գնդեր քաջամարտիկ,
Առաջ, առաջ,
Թափուի թող մայր հողին
Արիւնը ոսոխի:
Ի՞նչ էք ուզում, ըստրուկ խմբեր
Մատնիչների արքայասէր...
Թող էլ ոչ ոք չհանդգնի

Մեզ գերութեան նորից մատնի:
Ով հայրենեաց սրբազան սէր,
Դու բորբոքիր վրէժը մեր,
Ո՛վ անձկալի ազատութիւն,
Մեր զինակից եղիր դու,
Մեր դրօշի տակ յաղթական
Թող հնչի ձայնըդ առնական.
Թող որ տեսնեն թշնամիներ
Քո յաղթանակն ու փառքը մեր...[37]

Բնագրից արեւելահայերէն Մարսէյէզի մի մասնակի թարգմանութիւն հնարաւոր եղաւ գտնել միայն՝ երգի սկզբնական 12 տողերը: Այն լոյս է տեսել ԺԸ.-ԺԹ. դարերի գերմանացի կոմպոզիտոր Լուդվիգ վան Բեթհովէնին նուիրուած մի պատանեկան վիպակի հայերէն թարգմանութեան մէջ: Ջեխ գրող Անտոնին Զգորժի Միայնակ Ընդդէմ ձակատագրի վիպակի հերոսը՝ Բեթհովէնը, լսում է Մարսէյէզ երգող գինուորներին եւ յայտնում իր հիացմունքն այդ բոցավառ երգի մասին: Այդ առթիւ մէջբերւում է Մարսէյէզի առաջին հատուածը՝ ֆրանսերէնի մասնագէտ Թագուհի Բլբուլեանի բնագրից կատարած թարգմանութեամբ.

Առաջ, հայրենակից եղբայրներ,
Անհուն փառքի ժամն է հասել:
Բռնութեան արիւնոտ դրօշակը
Թշնամին մեր դէմ է ուղղել:
Ով դու սուրբ սէր հայրենիքի,
Օրհնիր բազուկը մեր վրէժխնդիր,
Ազատութիւն, ազատութիւն, քեզ ենք տենչում,
Ապաւինիր քո պահապաններին:
Յաղթանակի առնական երգը
Դրօշի ներքոյ թեւածում է օդում
Իսկ մեր փառքի հաստատուն քայլերգը,
Հասնում է պարտուող քո թշնամուն[38]:

Այսպիսով, Մարսէյէզի արեւելահայերէնով ամբողջական թարգմանութիւնն պէտք է համարել տակաւին չիրագործուած:

Անկախ, սակայն, հայերէն թարգմանութիւններից, թէ՛ բուն Մարսէյէզը եւ թէ՛ նրա ռուսական կամ բանուորական տարբերակը ծանօթ են եղել հայ գրականութեանը եւ որոշ ազդեցութիւն ունեցել հայ գրողների վրայ: Մարսէյէզը պիտի որ ազդած լինի մասնաւորապէս

Ռափայէլ Պատկանեանի (Գամառ-Քաթիպա, 1830-1892) քերթուածեան վրայ: Երգի հեռու եւ մօտիկ արձագանգները նչմարելի են Պատկանեանի «Բաւ է, եղբայր, վիզը ճկել» եւ «Հայ Զինուոր» քայլերգերում, որոնք երգուել են ժողովրդի կողմից: Պատահական չէ, որ պատկանեանագէտ Մերի Սաղեանը բանաստեղծին նուիրած իր մենագրութեան վերջին գլուխը վերնագրել է «Վերջին «Մարսէլիոզները»[39]:

Ֆրանսիական ազգային երգի ազդեցութիւնը նչմարելի է նաեւ պոլսահայ մանկավարժ ու բանաստեղծ Վահրամ Արծրունու «Գաղափարի Երգը» բանաստեղծութեան մէջ: Ահա նրա առաջին չորս տողը եւ կրկներգը.

Ելէ՛ք, շարժի՛նք քայլենք յառաջ,
Ո՛վ զաւակներ գաղափարի,
Սին ճառերով բազմահառաչ
Չ՚անցնենք օրեր, ամիս, տարի:
Ո՛հ, զինուորներ գաղափարի,
Ըլլանք սրտով մենք միշտ արի,
Եւ մեր ուժը լարած հեռուն՝
Դարմանը ըլլանք վշտին հայուն[40]:

Նչենք նաեւ հայ իրականութեան մէջ Մարսէյէզի տարածման եւ կատարման որոշ այլ փաստեր, որոնց մեզ յաջողուեց հանդիպել մեր պրպտումների ընթացքում: Երգը բազմիցս հնչել է հայկական տարբեր գաղթօջախներում, զանազան հանդիսութիւնների ժամանակ: Ժամանակագրական առումով նման փաստի առաջին յիշատակումը վերաբերում է 1879ին: Ըստ գրող Արփիար Արփիարեանի (1851-1908), այդ թուականի յունիսեան մի գիշեր Պոլսի Բերա թաղամասում կազմակերպուած մի հայկական պարահանդէսի ժամանակ հրաւիրուած է եղել նաեւ Օսմանեան կայսրութիւնում Ֆրանսիայի դեսպանը: «Երբ Ֆրանսիայի դեսպանը պարասրահ մտաւ, - գրում է Արփիարեանը, - նուագարանը անմիջապէս Մարսէյեզ թնդացուց: Դեսպանը իր օթեակին մէջ ոտքի վրայ, ինչպէս նաեւ բոլոր օթեակներուն հանդիսականներն ալ, եւ սրահին բազմութիւնը մէկէն ի մէկ կանգ առած, ունկնդրեցին Ֆրանսիայի ազգային երգին»[41]:

Նոյն թուականին, Թիֆլիսի Մշակ օրաթերթում, վիպասան Րաֆֆին (1835-1888) հրատարակել է «Հայ երիտասարդութիւնը» յօդուածաշարը, որտեղ Ֆրանսիացի երիտասարդների օրինակը յիշելով գրել է. «երբ պատահում է մի ժողովրդական չարժում, երբ ծագում է մի քաղաքական յեղափոխութիւն, ուսանողները խլրտում են, գարթնում են որպէս քնած առիւծ եւ առաջինն են լինում, որ թնդեցնում են

փողոցները մարսելիեզներով, փչրում են բռնակալների արձանները եւ թռչում են բարիկադների վրայ»[42]:

Հայ յեղափոխական Ռուբէն Տէր Մինասեանն (1882-1951) իր յուշերում նկարագրել է 1908ին Բիթլիսում թուրք իթթիհատականների, հայ դաշնակցականների եւ քրդերի միացեալ համաժողովը, որի ժամանակ ազատագրական շարժման գործիչ Իշխանը (1883-1915)՝ տեսնելով համաժողովի ձախողութիւնը, վեր է կացել եւ Մարսէյէզ երգելով դուրս եկել դահլիճից[43]:

Գրող Սուրէն Պարթեւեանը (1876-1921) զմիւռնիահայ մամուլի էջերում ներկայացրել է 1910 Յուլիսի 14ին Զմիւռնիայի Քարափ արուարձանում[44] Ֆրանսիայի ազգային տօնի կատարումը, որի ժամանակ հնչել է Մարսէյէզը: Ասես կանխելով սոյն յօդուածի սկզբում նախագահ Ժիսկարի մէջբերած խօսքերին, Պարթեւեանը Մարսէյէզը համարել է «գեղեցկագոյնն ու վսեմագոյնը աշխարհի ազգային երգերուն»: Հեղինակին այդ գիշեր Մարսէյէզը թուացել է «այնքան ներուժ ու խորունկ՝ որքան չեմ յիշեր երբեք զգացած ըլլալ «Մառսէյեզ»էն, որ ես հազար անգամ լսած եմ զայն Բարիզի տօնական քառուղիներու վրայ եւ այլուր... Ռուժէ տը Լիլի դիւցազնաչունչ հրաշակերտը Ֆրանսիական մեծ ազգի ոգեմերգը չէ միայն, որ բռնաւորներու տիեզերական դաշնակցութեան մը ազատասպան խուժումին դէմ ազատապաշտպան կամաւորներու անվարտի այլ անդիմադրելի լեգէոններ հանեց Ֆրանսիայի ազատամայր հողի ընդերներէն: «Մառսէյեզը» Ազատութեան նուիրական օրհներգն է համայն մարդկութեան համար որ անով իր պասթիլներուն խորտակումը տարփողեց ու պիտի տարփողէ առյաւէտ...: «Մառսէյեզ» Ազատութեան աւիւնն ու արիւնը եռացնող, ելեքտրացնող ու խենթեցնող գերմարդկային ու հրեղէն աղաղակն է որ ստրուկներն ու ազատագրկուածները հաւասարապէս պիտի թունդ հանէ, խանդավառէ ու խանդաղատեցնէ՝ իրենց փրկութեան յիշատակներուն մէջ: ... Ու քանի մը օրէն, երբ Յուլիս 10ը Օսմանեան Ազատութեան (այսինքն՝ 1908ին սահմանադրութեան վերահաստատման — Ա.Բ.) երկրորդ տարեդարձը տօնուի, մեզ վրդովող ու սրտապնդող գերագոյն երգը պիտի ըլլայ նորէն «Մառսէյեզը»[45]:

Բանաստեղծ Ռուբէն Որբերեանն (1874-1931) իր Մեծ Պատերազմը վերտառութեամբ յուշագրութեան մի գլուխը վերնագրել է «Մարսէյէզը (1914, Օգոստոս 2 ժամը 2 կէսօրէն վերջ)»: Այնտեղ նա յիշում է, թէ ինչպէս Ջիբութիում (Արեւմտեան Աֆրիկա), երբ լուր է հասնում, որ «Ֆրանսա ընդհանուր զօրաշարժ հրամանագրած է», րոպէական լռութիւնից յետոյ մի 70ամեայ Ֆրանսիացի ոտքի է ելնում եւ արտասուագին ու որոտագին երգում է Մարսէյէզը: Ներկայ գտնուող տաս հայերը ձայնակցում են Ֆրանսիացիներին: Գրելով այդ մասին՝

Որբերեանը հարկ է համարել արտագրել «այդ դիւցազնական երգին գոյգ թարգմանութիւններ մեր հին ու նոր լեզուներով» եւ մասնաւորապէս նշել, որ «Սիլվիո Բելլիքոյի «Բանտք իմ»ին, Հիւկոյի Թշուառներու»ն հետ այդ երգը մեր յեղափոխութեան նուիրական երրորդութիւնը կազմած է կէս դարէ ի վեր»[46]:

Մարսէյէզը ուղեկցել եւ ոգեշնչել է հայ ժողովրդին նրա ամենաօրհասական պահերին անգամ: 1915ին Վանի ինքնապաշտպանական մարտերի ժամանակ, երբ թուրքերը ռմբակոծում էին քաղաքը, վարժարանի նուագախումբը հնչեցրել է հայկական հայրենասիրական երգեր եւ Մարսէյէզը՝ քաջալերելու համար մարտնչողներին[47]:

1919ի Յունուարին, երբ մի ֆրանսիացի զօրավար ժամանել է Ադանա, տեղի հայութեան կողմից նրան դիմաւորելու ընթացքում, զինուորական նուագախումբը կատարել է «Բամ, Փորոտան»ն ու Մարսէյէզը[48]: 1920 Օգոստոսի 15ին Բրիւսէլի հայերը մատուցել են Սուրբ Պատարագ՝ Բելգիայի թագաւորի եւ ֆրանսիական դեսպանատան աշխատողների ներկայութեամբ: Այս պաշտօնական անձանց եկեղեցի մտնելը նոյնպէս ողջունուել է Մարսէյէզով[49]:

Ֆրանսիական սոյն երգի հայ ժողովրդի մէջ տարածուած ու սիրուած լինելու մասին փաստ է վկայակոչել արձակագրուհի Զարուհի Պահրին: «Կեանքիս Վէպը» յուշագրութեան մէջ, նա նշել է. «Յոյն ստնտուով մը, յետոյ՝ ֆրանսիացի վարժուհիով մը շարունակուած մեր դաստիարակութիւնը, Ատրինէ քրոջս ու իմ, հայկական շատ բան չունէր: Մեր երգած առաջին երգը Marseillaise եղած էր եւ (1870ին գերմանացիների կողմից ֆրանսիական հողամաս - Ա.Բ.) Ալզաս-Լորէնի գրաւումը՝ հայրենասիրական առաջին սուգս, եթէ կարելի է ըսել»[50]:

Հայ իրականութեան մէջ Մարսէյէզի կատարման մի հետաքրքիր իրողութիւն էլ կապւում է 1956ին Երեւանում ֆրանսահայ հայրենադարձների կազմակերպած ցոյցի հետ, երբ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Քրիստիան Պինոյի Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք կատարած այցելութեան ժամանակ նրանք՝ ձեռքերնին ֆրանսիական դրօշներ բռնած եւ երգելով Մարսէյէզը, կազմակերպել են Խորհրդային Միութեան պատմութեան մէջ յետ-ստալինեան ժամանակահատուածում հաւանաբար առաջին բողոքի ցոյցը՝ խնդրելով իրենց ետ վերադարձնել Ֆրանսիա[51]:

Կարելի է նշել այլ, պակաս կարեւոր իրողութիւններ էլ, սակայն բաւարարուենք այսքանով:

Մարսէյէզը յիշւում է նաեւ մի չարք հայերէն բառարաններում եւ տեղեկատուներում[52]: Մինչեւ օրս նրա ֆրանսերէն բնագիրը տեղ է գտնում հայ-ֆրանսիական հրատարակութիւններում: Այսպէս,

Ֆրանսիայի օրհներգը տպագրուել է 1996ին Փարիզում լոյս տեսած տեղի հայոց առաջնորդարանի *Օրացոյցում* հայոց ազգային մաղթերգի («Ամէն հայի սրտից բխած...») եւ Հայաստանի պետական օրհներգի («Մեր հայրենիք...») հարեւանութեամբ[53]:

ՏԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] J. Tiersot, *Pesni i prazdnestva frantsuzkoi revoliutsii* [*Ֆրանսիական Յեղափոխութեան երգերն ու տօնախմբութիւնները*], *Մոսկուա*, 1933, էջ 81-82։

[2] *Ռուժէ դը Լիլի մասին տե՛ս՝* J. Tiersot, *Rouget de L'Isle: son oevre, sa vie*, Paris, 1892; A. Leconte, *Rouget de L'Isle, sa vie, son oevre. "La Marseillaise"*, Paris, 1893։

[3] Moris Torez [Maurice Thorez], *Izbrannie trudi* [*Ընտիր երկեր*], հատոր 1, *Մոսկուա*, 1959, էջ 188։

[4] Valeri Zhiskar d'Esten [Valerie Giscard d'Estaing], *Vlast i zhizn* [*Իշխանութիւն եւ կեանք*], *Մոսկուա*, 1990, էջ 25։

[5] J. Tiersot, *Histoire de la Marseillaise*, Paris, 1915։

[6] *Միքայէլ Յակոբեան, «Ջմիւռնիահայ «Մարսէլիէզը»», Մովսեսական Գրականութիւն, թիւ 3, 1974, էջ 124-128. Վահան Յարութիւնեան, «Մարսէլիէզ», Մովսեսական Արուեստ, թիւ 7, 1989, էջ 55-59։ Յարութիւնեանի յօդուածը Մարսէյէզին նուիրուած մեծագոյն եւ ամէնից համակողմանի դրութիւնն է հայ իրականութեան մէջ։ Հեղինակի նպատակը չի եղել ներկայացնել երգի հայ իրականութեան հետ ունեցած կապերը, ուստիեւ այդ խնդրին նա նուիրել է լոկ մի քանի պարբերութիւն. տե՛ս՝ նոյն, էջ 59։ Ի դէպ, Յարութիւնեանը նշել է, որ Մարսէյէզը հայերէն է թարգմանել նաեւ Մամբրէ Մատենճեանը՝ առանց նշելու դրա հրատարակման վայրը։ Մեր պրպտումների ժամանակ, սակայն, մենք չենք հանդիպել այդպիսի թարգմանութեան։*

[7] *Մ. Մ. Ասլանեան, «Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան Արձագանքները «Ազդարարում»», Լրաբեր Հասարակական Գիտութիւնների, թիւ 10, 1990, էջ 19-26։*

[8] *Ազդարար, թիւ 2, 1794, էջ 84։*

[9] *Յակոբեան, «Ջմիւռնիահայ «Մարսէլիէզը»», էջ 125։*

[10] *Սուրէն Շահիկեան, «Ստեփան Ոսկանեան», Գրական դէմքեր, գիրք 2, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1988, էջ 17։*

[11] *Արիփ Արարատեան, Թ. 12, 1854, էջ 153-154. տե՛ս նաեւ՝ Յակոբեան, «Ջմիւռնիահայ «Մարսէլիէզը». նոյն, Ջմիւռնիահայ Գաղթերգական Մամուլը (1839-1860), Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, 1984, էջ 208։*

[12] *Նոյն, էջ 125։*

[13] *Ս. Ո-, «Բիւրեայ Երգ», Արեւմուտք, թիւ 7, 1 Մայիս 1864, էջ 53-55։*

[14] *Սոյն թարգմանութիւնը ձեռագրում վերահրատարակել է հետեւեալ ժողովածուում՝ Ռուբէն Որբերեան, Ոմանք, Փարիզ, 1920, էջ 214-215։*

[15] *Ռուժէ դը Լիլ, «Վա Մարսեյիէզ», Արեւելեան Մամուլ, թիւ 3, Մարտ 1877, էջ 105-107։*

[16] *Ռուժէ տը Լիլ, «Վա Մարսելլէզ», Արշալոյս Արարատեան, թիւ 1065, 30 Ապրիլ 1877, էջ 1։*

[17] *Այս առթիւ տե՛ս՝ Յակոբեան, Ջմիւռնիահայ Գաղթերգական Մամուլը, էջ 127։*

[18] *Որբերեան, էջ 214-215։*

[19] *«Վա Մարսէյէզ», Արեւելեան Մամուլ, թիւ 4, Ապրիլ 1877, էջ 153-154։ Տե՛ս նաեւ՝ Որբերեան, էջ 216-217։*

[20] *Որբերեան, էջ 216-217։*

[21] *Տե՛ս, օրինակ՝ եղիա Տնտեսեան, Նոր Երգարան Հայոց· Բովանդակութիւն Ազգային Ընտիր Երգերու, Կոստանդնուպոլիս, 1880, էջ 115-116։ Սուլթան Աբդուլ Համիդ Բ.ի (1876-1909) բռնակալութեան տարիներին հրատարակելով այս երգարանը՝ Տնտեսեանը 1881ի սկզբներին բանտարկուել է եւ մի քանի ամիս անց վախճանուել օմանեան բանտում։ Երաժշտագէտ Մաքիւոս Մուրադեանը նշել է, որ Մարսէյզի հայերէն թարգմանութեան՝ այստեղ տպագրուած լինելու իրողութիւնն աւելի է ընդգծել այդ երգարանի բացառիկ արժէքը։ Այդ թարգմանութիւնը կատարել էր Թովմաս Թերզեանը եւ դա առաջինն էր հայ իրականութեան մէջ։ տե՛ս՝ Մաքիւոս Մուրադեան, Հայ Երաժշտութիւնը XIX Դարում եւ XX Դարասկզբում, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1970, էջ 116։ Մուրադեանն, ի հարկէ, թողլ է տուել երկու անճշտութիւն։ Մարսէյզի առաջին թարգմանութիւնը, ինչպէս նշեցինք, կատարուել էր տակաւին 1854ին, իսկ այս երկրորդ թարգմանութեան հեղինակը ոչ թէ Թովմաս, այլ Պետրոս Թերզեանն էր։*

[22] *Մուրադեան, էջ 93։*

[23] *Նոյն, էջ 183։*

[24] *Նոյն։*

[25] *Երգարան Ազատեան Վարժարանի, Կոստանդնուպոլիս, 1871, էջ 9։*

[26] *Ընտիր Ազատեան եւ Փանոսեան Սանուց, Կոստանդնուպոլիս, 1872, էջ 30։*

[27] *Տե՛ս՝ Վ. եւ Պ. Զարդարեաններ, Ընդարձակ Հայկական Երգարան, Կոստանդնուպոլիս, 1909, էջ 270-271։ Պետրոս Ռ. Թորոսեան, Հայ-Ամերիկեան Ազգային Նոր Երգարան, Հոպորըն, 1917, էջ 128-129։*

[28] *Տե՛ս՝ Թորոսեան, էջ 123-124։*

[29] *Թէոդիկ, Ամէնուն Տարեցոյցը, Փարիզ, 1927, էջ 456-457։*

[30] *Ներկայացուած չորս թարգմանութիւններում առկայ տարբերութիւնների պատճառը ոչ թէ սոսկ տարբեր թարգմանական մօտեցումներն են, այլ այն, որ չորս տարբեր թարգմանիչներ գործ են ունեցել Մարսէյզի տարբեր խմբագրումների հետ։*

[31] *Գուրգէն Յովնան, Երգ, Որ Ծնցից Ազգ Ազիարհը, Երեւան, 1970, էջ 17։*

[32] *Յակոբ Յակոբեան, Յեղափոխական Երգեր, Թիֆլիս, 1915, էջ 2-3։*

[33] *Յեղափոխական Երգեր, հրատարակութիւն գրաշարներ՝ Գէորգ Մարտիրոսեանի եւ կամասար Տէր-Սարգսեանի, Ալեքսանդրապոլ, 1917, էջ 2-3։ Այս հրատարակութեան մէջ երգի թարգմանիչը նշուած չէ։*

[34] *Խ. Քեշիշեան, «Իմ Յիշողութիւններից», Դարբնոց, Թիֆլիս, թիւ 6, 1923, էջ 29-30։*

[35] *Տե՛ս՝ E. Gippius, P. Shiriaeva, 'Rabochaia Marselieza' [Բանուորական Մարսէյզը], Biografii pesen [Երգերի կենսագրութիւնները], Մոսկուա, 1965, էջ 53-73։ «Բանուորական Մարսէյզի» երաժշտութիւնը մշակել է հայ կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարեանը (1871-1928)՝ «Վարչաւեանկա», «Կարմիր Դրօշակ» եւ այլ յեղափոխական երգերի հետ միասին։ տե՛ս՝ Մուրադեան, էջ 532։*

[36] *Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը, կազմեց Յովս. Թադէոսեան, Թիֆլիս, 1907, էջ 66։*

[37] *Յարութիւնեան, էջ 56-57։*

[38] *Անտոնին Զդորժ, Միաբնակ Ընդգէմ Ճակատագրի, Երեւան, «Արեւիկ», 1987, էջ 101։*

[39] *Մերի Սաղեան, Յարմաջէլ Պատկանեան· Կեանքը եւ Գործը, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1980, էջ 349։*

[40] *Վահրամ Աղթունի, «Գազափարի Երգը», Նոր Հայաստան, թիւ 11, 23 Փետրուարի 1919, էջ 182։*

[41] *Արփիար Արփիարեան, «Հայաստան եւ Կ. Պոլիս», Նոր Կեանք, 1 Սեպտեմբեր 1899, էջ 266։*

[42] Բաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, հատոր 11, Երեւան, «Նաիրի», 1991, էջ 255։

[43] Ռուբէն, Հայ Յեղափոխականի Մը Յիշատակարանը, Բ. հատոր, Երեւան, «Ադանա», 1990, էջ 175։

[44] Այս արուարձանը կառուցուել էր 1860ին եւ Ֆրանսերէնով ծանօթ էր իբրեւ 'les Quais' կամ 'le Quai'։

[45] Սուրէն Պարթեւեան, «Մառսէյէզը», Դաշինք, 16 Յուլիս 1910, էջ 4։

[46] Որբերեան, էջ 212։

[47] Bertha S. Papazian, 'The Tragedy of Armenia', *The Armenian Herald* (Boston), February-March-April 1919, p. 218.

[48] «Ֆրանսական Զօրավարը եւ Հայ Զինուորները Ատանայի Մէջ. Հայ Դրօշը Դաշնակից Դրօշներուն Հետ. «Մարսէյէզ» եւ «Բամբ Որուան», Ժամկառամարտ, 10 Յունուար 1919, էջ 2։

[49] Պ. Փիլիպոսեան, «Նամակ Պէյթիգէնի», Արմէնիա, 1 Սեպտեմբեր 1920, էջ 3։

[50] Զարուհի Պահրի, «Կեանքիս Վէպը», Բագին, Թիւ 1, Ցմեռ 1996, էջ 70։

[51] *Russkaia misl* [Ռուսական Միտք], Փարիզ, 22-28 Մայիս 1997, էջ 7։

[52] Օրինակ, Մարսէյէզի առաջին բառերը ("Allons, enfants de la patrie"- Օն, անդր, հայր բննեաց որդիք) տեղ է գտել Վ. Ա., Բառգիրք Օտար Լատիներէն եւ Օտարազգի Դարձուածներու Համառօտ Քերականութիւնով, Թիֆլիս, 1911, էջ 8։ Անգլերէնէ Հայերէն Արդի Բառարան, Պէյրութ, 1986, էջ 528 յիշեալ է "Marseillaise" բառը որպէս «Ֆրանսիական ազգային քայլերգ»։ Մարսէյէզին վերաբերուող առանձին բառարտուած տե՛ս նաեւ՝ Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր 7, Երեւան, 1981, էջ 340։

[53] Օրացոյց, Փարիզ, 1996, էջ 226-228։

LA MARSEILLAISE AND THE ARMENIANS
(Summary)

ARTSVI BAKHCHINYAN

La Marseillaise, the French national anthem, was composed in 1792. Its first Armenian translation to Classical Armenian (*grabar*) by Hagop Vosganian was published in Smyrna in 1854. A second translation into *grabar* was made by Bedros Terzian in 1877. The first translation into Western Armenian (*ashkharhabar*) by Mesrob Nubarian was done the same year. Both these translations were published in Smyrna as well. The author also points at a fourth complete translation of *La Marseillaise*, again into Western Armenian, by Krikor Kalousdian, published in Paris in 1927. The author says that there is to date no complete translation of the French national anthem into Eastern Armenian. The article also discusses the impact of the lyrics and music of *La Marseillaise* upon various Armenian works of the late 19th and 20th centuries. Moreover, it brings together references to various independent episodes when famous Armenian individuals or groups were present and later wrote about situations where *La Marseillaise* was played.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐԸ ՎԱՐԴԱՆ ՄԱԽՈԽԵԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

ԱՐԱ ՅԱԿՈԲԵԱՆ

Վարդան Մախոխեանի համար չատ բնութագրական է լինելու «յայտնի եւ անյայտ հանճար» արտայայտութիւնը։ Ի. դարի առաջին տասնամեակներին նա Եւրոպայի ամենաճանաչուած ծովանկարիչներից մէկն էր։ Նրան համեմատել են արեւմտաեւրոպական մեծ նկարիչներ Ուիլեամ Թըրների, Ջոն Կոնստեբլի, Էժէն Դըլակրուայի, Կլոդ Լորէնի, Գիւստաւ Կուրբէի ու Կլոդ Մոնէի հետ։ Նա արժանացել է Ֆրանսիայի ու Գերմանիայի կառավարութիւնների ու մշակութային հաստատութիւնների ամենաբարձր տիտղոններին ու պարգեւներին։ Ֆրանսիացի Լուի Բլէնը գրել է. «Եթէ նոյնիսկ չսիրենք ծովը, Մախոխեանի նկարները պիտի սիրել տային։ Մախոխեանը պատկերացնում է ծովը այնպիսի զօրեղ բանաստեղծութեամբ, որ ստիպում է կանգ առնել նրա կտաւների առջեւ»[1]։ «Գերմանացի եւ իտալացի վարպետներ Մախոխեանի մի քանի ծովային գործերը քննադատելու աւեններին ուղղակի համեմատած են հայազգի քաջահամբաւ ծովանկարիչ Այվազովսկու հետ»[2]։ «Եւրոպացի գեղագէտ քննադատները նրան դասել են եւրոպական հանճարների շարքում»[3]։ «Հզօր արուեստագէտ մըն է, որ իր ցուցադրած նկարներովը ինքն իր փառքին պարծանքը կ'ըլլայ, կարդում ենք նկարիչ եւ արուեստի քննադատ Ադոլֆօ Սկարսելիի մօտ[4] եւ այդպէս շարունակ։

Առայսօր, սակայն, Մախոխեանի մասին գոյութիւն չունի գէթ մի ամբողջական աշխատութիւն։ Նկարիչ Ռաֆայէլ Շիշմանեանի *Բնանկարն Ու Հայ Նկարիչները* գրքում, ի թիւս տասնեակ այլ նկարիչների, 18 էջ է յատկացուած մեծ ծովանկարչին[5]։ Արուեստաբան Եղիշէ Մարտիկեանը *Հայկական Կերպարուեստի Պատմութիւն* բազմահատորեակի Դ. գրքում նոյնպէս անդրադարձել է Մախոխեանին[6]։ Անշուշտ, եւ՛ Շիշմանեանը, եւ՛ Մարտիկեանը հնարաւորութեան եւ անհրաժեշտութեան սահմաններում իրենց աշխատութիւններում ընդգրկել են Մախոխեանի մասին մամուլում տպուած նիւթեր։ Սակայն, այդ երկերում Մախոխեանի արուեստը լիովին չի մեկնաբանւում, քանի որ դա նրանց հիմնական նպատակը չի եղել։

Վարդան Մախոխեանը ծնուել է 1869 Մայիսի 31ին Տրապիզոն ծովափնեայ քաղաքում[7]: 1875ին նա ընդունուել է տեղի ազգային դպրոցը, որը բացուել էր 1840ին: Ժամանակակիցները վկայում են, որ Տրապիզոնի ազգային դպրոցում սովորելիս, պատանի Վարդանը դրսեւորել է իր ապագայ մասնագիտութեան նախատարրերը[8]: Վարժարանի դասընթացի մէջ մտնում էր նաեւ նկարչութիւնը: Նա չարունակ նկարել է. «այդ հասակին մէջ Մախոխեանը խորապէս տպաւորուած էր իր հայրենիքին մերթ խաղաղ, մերթ ահարկու փոթորկալից ծովէն, փառահեղ արեւմուտքներէն ու միստիկ լուսնոյ ծնունդէն»[9]:

1882ին տասներեքամեայ Վարդանին եւ նրա աւագ եղբայր Քրիստափորին հայրը ուղարկում է Կարին՝ նորաբաց Սանասարեան Վարժարանում ուսանելու: Կարինում անցկացրած հինգ տարիները որոշակիօրէն ձեւաւորում են Մախոխեանին, որպէս քաղաքացի, հայ եւ արուեստագէտ: 1887ին տասնութամեայ Վարդանն աւարտելով վարժարանը վերադառնում է հայրենի Տրապիզոն, մի քանի տարի մնում այստեղ՝ պատրաստուելով իր կրթութիւնը չարունակելու Եւրոպայում: 1891ին Մախոխեանը մեկնում է Գերմանիա, ընդունուելու Բեռլինի Գեղարուեստի Ակադեմիան: Գերմանիա գնալը տրամաբանական էր, քանի որ արդէն իսկ Սանասարեան Վարժարանում նա դաստիարակուել էր գերմանական ուսուցման սիստեմով[10]: Բեռլինում էր գտնուում նաեւ տեղի համալսարանի բժշկական ֆակուլտետում սովորող իր աւագ եղբայրը՝ Պետրոսը:

Ներկայացնելով Կարինում եւ Տրապիզոնում կատարած լաւագոյն աշխատանքները եւ օրինական քննութիւն տալով, Մախոխեանն ընդունուում է Գեղարուեստի Ակադեմիա՝ բնանկարի բաժին: Այստեղ նա երեք տարի չարունակ աշակերտում է ուսուցչապետեր Եւգենի Բրախտին եւ նորվեգացի ծովանկարիչ Հանս Ֆրեդերիկ Գադէին[11]: Ըստ ամենայնի, Գադէն էլ իր որոշիչ ազդեցութիւնն է ունենում երիտասարդ նկարչի գեղագիտական նախասիրութիւնների վրայ: Մախոխեանն այնպիսի արագութեամբ է տիրապետում ծովանկարչութեան գաղտնիքներին, որ ամենակարող Գադէն ստիպուած է լինում ասել. «այլեւս սովորեցնելու բան չունեմ քեզ»: Ընդհանրապէս, Մախոխեանի աշխատասիրութիւնը, կազմակերպուածութիւնը, անսովոր ունակութիւնները գրաւել էին ակադեմիայի դասախօսա-ուսուցչապետական կազմի ուշադրութիւնը:

Դեռ ակադեմիայի աւարտական կուրսի ուսանող, Մախոխեանին թոյլատրուում է զբաղուել բնանկարի ազատ ընտրութեամբ, մասնաւորապէս պատկերելով արուարձանային ու ամեռային տեսարաններ: Այդ շրջանում, երեւի վերջին կուրսում կամ աւարտելուց անմիջապէս յետոյ, Գադէի խորհրդով Մախոխեանը ճամբորդում է Հիւսիս՝ Բալթի-

կայի ափերը, Դանիա, Շուէդիա, ծովային տարերքին մօտիկից հաղորդուելու համար: Նա հրապուրւում եւ պատկերում է Բէօռնհոլմ կղզու ժայռոտ եզերքները:

Ինքնամոռաց նուիրուել, սովորել եւ աշխատել գիշեր ու ցերեկ, առանց հանգստի ու քնի. ահա ինչն էր բնորոշ երիտասարդ Մախոխեանին: Պատմում են, որ մէկ անգամ ձմրանը Բեռլինի շրջակայքում բացօթեայ աշխատանք կատարելիս այնքան է տարուում, որ չի զգում սառնամանիքը եւ ցրտահարւում է անգգայութեան աստիճան: Պատահական անցորդներ տեսնելով երիտասարդի ուշագնաց վիճակը, նրան տանում են հիւանդանոց, որտեղ էլ փրկւում է նկարչի կեանքը:

1894ին Մախոխեանը փայլուն առաջադիմութեամբ աւարտում է Բեռլինի Գեղարուեստի Ակադեմիան: Բեռլինեան միջավայրում ձեռք բերած համբաւն ու ակադեմիայի դասախօսների եւ ուսանողութեան ջերմ վերաբերմունքը, առիթ են դառնում երիտասարդ նկարչի՝ Բեռլինում մնալու: Սկսւում է տաղանդաւոր նկարչի ստեղծագործական բուռն գործունէութիւնը: Առաջին աշխարհամարտից յետոյ նա մշտական բնակութիւն է հաստատում Նիցցայում (Ֆրանսիա), որտեղ էլ վախճանւում է 1937ին[12]:

Եթէ սկզբնական շրջանում Մախոխեանի մօտ նկատելի է աշխարհահռչակ ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսկու (1817-1900) արուեստի բարերար ազդեցութիւնը՝ պատկերի կառուցման մեթոդը, յօրինուածքների կազմակերպման եւ ծովի իւրայատկութիւնները կերպաւորելու եղանակները, տեղանքի եւ օրուայ պահերի տրամադրութեան արտայայտումը (իհարկէ, չհասցուած Այվազովսկու երեւակայութեան չափերին), ապա որոշ ժամանակ անց՝ այլ բան ենք տեսնում: Մախոխեանը աստիճանաբար կիրառում է բնութեան ուսումնասիրման սեփական փորձը, տարրերը համադրելու իր մեթոդներն ու ճաշակը: Այդ տարիների գործերն իրենց ներքին ընկալմամբ, նաեւ մակերեսների մշակումով տարբերւում են հանճարեղ Այվազովսկու գործերից: Մախոխեանի աշխատանքներն աչքի են ընկնում գունաշարի որոշակի զսպուածութեամբ, ներկերի հիւթեղ (պաստոզային) քսուածքով եւ ամուր, ինքնատիպ վրձնահարուածներով: Այդ ամուր մակերեսներն ու պատկերային ինքնատիպ մեկնաբանութիւնները առիթ են տուել արուեստագէտներին, ոչ միայն Մախոխեանի արուեստը բնութագրել որպէս ուրոյն երեւոյթ ծովանկարչութեան մէջ, այլեւ եւրոպական ԺԹ. դարի արուեստի առաջաւոր դրսեւորումների անհատականացուած արժագանգները տեսնել դրանցում:

Սկարսելլին գրել է. «Այս նշանաւոր արուեստագէտը, մեզ չի ներկայացներ սոսկ ծովը, այլ մեզ կը տեսլականացնէ գայն իր խորհուրդ

ժայռերով՝ որ մեզ կը յիշեցնեն նկարիչներէն ամենէ ճարտար, ամենէ արտասովոր, ամենէ ինքնահնար եւ ամենէ բանաստեղծը՝ ուսկից չատ ժամանակ չէ որ գրկուեցաւ, ո՛չ միայն արուեստը, իր աստուածին արուեստը՝ այլ ամբողջ աշխարհի հիացումը, այն է Պէօքլին։ Եւ չատ լաւ ըրաւ Պ. Մախոխեան, քանի մը նկարներու յօրինուածքին մէջ անոր յիշատակէն ներշնչուելով»[13]։

Մախոխեանի՝ Բէօկլինեան արուեստի հետ ունեցած առնչութեանն անդրադարձել են նաեւ հայ հեղինակները, մասնաւորապէս Արշակ Զօպանեանը[14] եւ Սերգէյ Կարա Մուրզան[15]։ Եւ դա պատահական չէր։ Բէօկլինեան տպաւորութիւնների միջոցով, մենք, ըստ էութեան, մօտենում ենք այն հանգոյցին, որը բանալի է դառնալու հասկանալու Մախոխեանի արուեստի նպատակը՝ «արարչութեան մէջէն բարձրանալ դէպի Արարիչը», գտնելու նրա խորհրդաւորութեան եւ նրա խոովայոյզ, մոգական երեւակայութեան նախահիմքերը։

Այս երեւոյթը ճիշտ պատկերացնելու համար նախ մի քանի խօսք՝ չուէյցարացի նկարիչ Առնոլդ Բէօկլինի (1828-1901) եւ նրա գեղագիտական դաւանանքի մասին։

Բէօկլինը Ժ-Թ. դարի երկրորդ կէսի եւրոպական գեղանկարչութեան ամենապայծառ անհատականութիւններից մէկն էր[16]։ Խուսափելով իրականութեան պարզունակ նմանակման մեթոդից, նա նախընտրում էր դժուարին պրպտումների ուղին՝ իր ուրոյն, թէկուզ եւ մտացածին, բայց տպաւորիչ աշխարհը ստեղծելու համար։ Բէօկլինի աշխատանքները լի են երեւակայական տարրերով, անսովոր լուծումներով, մուգ տոներով (tone), որոնք հաղորդում են խորհրդաւորութիւն, երբեմն այն հասցնելով փիլիսոփայական ընդհանրացումների։ Որոշ դրուագներում մեծատաղանդ նկարիչը երեւակայական խորհրդանշական տարրերը համակցում է իրական-հաւաստի մանրամասների պատկերաւորումների հետ[17]։ Կարծում ենք, ինչ-որ տեղ եւրոպական գերիրապաշտութեան աւանդոյթները մօտենում են Բէօկլինի ստեղծագործական ձեռքբերումներին։ Չնայած գերիրապաշտութեան հռչակագիրը հրատարակուեց 1924ին, սակայն այդ ուղղութեան նշանակալի չատ գործիչներ՝ Պիտէր Ռուան, Անդրէ Մասսոնը, Իվ Տանգին, Սալվադոր Դալին, Ռընէ Մագրիտը, ստեղծագործել են Ժ-Թ. դարի երկրորդ կէսին եւ Ի. դարի առաջին կէսին։ Բէօկլինի ծովապատկերների կապակցութեամբ ասւում է, որ նա հեռանալով Այվազովսկուց, բաց արեց նոր հորիզոն այդ ժանրի մէջ՝ վիպային խորհրդաւորութեան, մի տեսակ հեթանոսական ժամանակների չունչը ներարկելով իր պատկերներին։

Բէօկլինի մօտ ստեղծագործական գլխաւոր արժանիքներից մէկը, այն էլ չատ կարեւորը, համարւում է բներանգը, որը գերծ չէր որոշ

էքսցենտրիկութիւնից։ Վերջինս դրսեւորւում է ինչպէս գոյների ընտրութեան, այնպէս էլ նկարի կառուցուածքի մէջ։ Բէօկլինի մօտ բացարձակ երեւոյթ է ծովը մուգ երանգներով պատկերելը, եւ չնայած դրան, այն բոլորովին չի խաթարում ջրի բնոյթը, նրա գանգուածային տպաւորութիւնը, երբեմն էլ նոյնիսկ թափանցիկութեան չահեկանութիւնը։ Արդէն բէօկլինեան արուեստի այս մի քանի գծերը՝ խիստ տպաւորիչ աշխարհի ստեղծումը, անսովոր լուծումներն ու փիլիսոփայական ընդհանրացումները՝ խորհրդաւորութիւն, հեթանոսական չունչ, մուգ, յագեցուած տոներ, գուսպ գունաշար, ցոյց են տալիս համոզմունքի եւ նախասիրութիւնների ընդհանուր եզրերի առկայութիւնը երկու վարպետների միջեւ։

Բէօկլինի հետ կապը առաւել ակնյայտ դրսեւորւում է Մախոխեանի 1910ականներին կատարած «Այցելութիւն ձգնաւորին» խորհրդաւոր ու տխուր կտաւում։ Ի տարբերութիւն համաշխարհային պրակտիկայում ընդունուած նման թեմաների, երբ որպէս յօրինուածքի կազմակերպման ու հոգեբանական հիմնական հանգոյց չեչտւում է ճգնաւորի կամ միայնակեացի կերպարը, Մախոխեանը դա կատարում է առանց գլխաւոր հերոսի պատկերման։ Տեղանքի ու անհրաժեշտ էանիշերի միջոցով նա դիտողի ուշադրութիւնը սեւեռում է թեմայի գաղափարական կողմի վրայ՝ կեանքից ու աշխարհից հիասթափուած, մարդկանցից հեռացած, ծովափնեայ լերկ ժայռաբեկորների մէջ ճգնող ասկետի գոյութեանը։ Սառը քամին տարուբերում է ծառերի ճիւղերը։ Ամայութեան ու լռութեան անդորրը խախտում են մի քանի արջեր, որոնք քարակոյտերի վրայով մօտենում են ճգնաւորի ժայռին։ Ակամայից մտաբերում ես հայ բանաստեղծ Վահան Տէրեանի «Աչունը»։

Դալուկ դաշտեր, մերկ անտառ...
- Մահացողի տըխուր կեանք,
Անձրեւ, քամի, սեւ կամար...
Սրտակոտոր հեկեկանք[18]։

Ի դէպ, Մարտիկեանը եւս այդ նկարի կապակցութեամբ յիշատակում է Բէօկլինին. «պատկերն,- գրում է նա,- ակամայ զուգորդւում է գերմանացի նշանաւոր սիմվոլիստ նկարիչ Առնոլդ Բէօկլինի «Մեռելների կղզին» գործի հետ, որը գուցէ եւ Մախոխեանի համար մտայղացման առիթ է տուել, անշուշտ գերծ մնալով նրա սիմվոլիկ միտումից»[19]։

Այստեղ արդէն մենք համամիտ չենք Համուտ արուեստաբանի հետ։ կարծում ենք «Այցելութիւն ձգնաւորին»ը սովորական կենցաղային տեսարան է։ Եւ կամ մի՞թէ խորհրդապաշտական գաղափարները

պէտք է արտայայտուէն կաղապարային միակերպ միջոցներով։ Բոլորովին ո՛չ։ Համարձակուում ենք ասել, որ ինչ-որ չափով շրջապատից դժգոհ, հեռու-հեռաւոր անմարդաբնակ վայրում ապաստանող ճգնաւորի գաղափարը հոգեմօտ է եղել Մախոխեանի ապրումներին, նրա տրամադրութեանը։ Խորհրդապաշտական միտումները նա արտայայտել է իրապաշտութեան խտացուած տարրերով, իրական-հաւաստի մանրամասների պատկերմամբ։ Ըստ էութեան, մենք մօտենում ենք այն կէտին, որտեղից յստակօրէն տեսանելի է դառնալու Մախոխեանի վերաբերմունքը համաշխարհային արուեստի արժէքներին։

Մեր խորին համոզմամբ՝ Մախոխեանն իր մտքերը, յոյզերը, գեղագիտական դաւանանքը լիակատար ձեւով բացայայտելու համար օգտուել է խորհրդապաշտութեան կերպաւորումներից, միայն թէ՝ այդ ամէնը մշակելով ու համապատասխանեցնելով իր անհատական պատկերացումներին։ Հենց դա է առիթ տուել արուեստի քննադատներին Մախոխեանի առիթով յիշելու Բէօկլինին։

Ի. դարի առաջին երկու տասնամեակների քաղաքական իրադարձութիւնները, ներառեալ Առաջին Համաշխարհային Պատերազմի արհաւիրքներն ու հայկական կոտորածները, մոդեռնիզմի, ֆովիզմի, խորանարդապաշտութեան, ապագայապաշտութեան, արտայայտչապաշտութեան, դադայիզմի եւ գերիրապաշտութեան նման գրական-գեղարուեստական նոր հոսանքների յայտնուելը, որոնց յատուկ էր իրապաշտական կերպարի նախկին աւանդոյթներից կապի խզումն ու նոր արտայայտչամիջոցների որոնումները, եւ ընդհանրապէս հասարակական-գեղարուեստական կեանքի խառնակ-հակասական բնոյթը Մախոխեանի նման բարդ ու անհանգիստ անձնաւորութեանը պէտք է մղէին արտայայտման ոչ սովորական (ստանդարտ) միջոցների։ Եւ իրօք, արդէն Բէօկլինով հետաքրքրուելը, նրան համակրելն ազդանշան էր, որ Մախոխեանն ինչ-որ մի պահ, ինչ-որ մի տեղ հակուել է ժամանակի լայն ու ազդեցիկ հոսանքներից մէկին։ Խուսափելով ձեւապաշտական ձեւերից, գերադասելով արուեստի դասական աւանդոյթները, բայց եւ միաժամանակ լինելով փնտռտուքի մէջ, Մախոխեանը ձգտում էր ինքնարտայայտման դիպուկ ու չեչտուած ձեւերի եւ այդ ոլորտում իրեն աւելի հոգեմօտ էր համարում խորհրդապաշտութեան գաղափարային դրոյթները։

Ընդհանրապէս, ետ-վիպապաշտութեան շրջանում հանդէս եկած խորհրդապաշտութիւնն արտայայտման ձեւի առումով եղաւ ծայրաստեղ տարաբնոյթ։ Արուեստում այն չունեցաւ ոճական միասնութիւն։ Վաղ շրջանում մերձեցաւ աշխարհի պատկերացման պլատոնական եւ քրիստոնէական խորհրդապաշտական սկզբունքներին։ Աւելի ուշ ձեւաւորուեցին տարատեսակ մօտեցումներ, որտեղ էականը ձգտումն

էր աշխարհը ներկայացնել անցողիկ, ժամանակից դուրս՝ յաւիտենական կայունութեան ու խորհրդաւոր գեղեցկութեան մէջ: Վերջին հաշուով խորհրդապաշտները երեւոյթի հիմքում դնում էին դրա խորհրդաբանական իմաստը, այն՝ որպէս իդէալականի եւ զգայականի համադրութիւն, որտեղ երեւոյթները դրսեւորւում են առաւել խոր իմաստով: Խորհրդապաշտ արուեստագէտներին բնորոշ է եղել նաեւ վիպապաշտ հակումները զուգորդել միստիկական այլաբանութիւնների, ֆանտաստիկայի, բնական ձեւերի ու անիրական տեսիլքների հետ: Երբեմն էլ խորհրդանիշն արտայայտուել է ոչ այնքան դիպաշարով, որքան կերպաւորման պատկերային ձեւերով[20]:

Մախոխեանի սիմվոլիստական հակումների էութիւնը թերեւս այն էր, որ նա ընդունում էր խորհրդապաշտական, մարդկային վեհ գաղափարները՝ յաւերժութեան գաղտնի կապերով: Դրա համար էլ Մախոխեանի կտաւներում բացակայում են կենցաղային մանրուքները, աւելին, նոյնիսկ մահկանացու մարդ արարածը: Այդ մտայնութեամբ չպէտք է բացատրել խորհրդապաշտութեանը յատուկ միստիկայի, այլաբանութեան, սիրոյ, մահուան, տառապանքի, սպասումի ու ճակատագրի խոհական զգացումները Մախոխեան արուեստագէտի մօտ: Կարծում ենք, դրանով չպէտք է բացատրել նաեւ Մախոխեանի մի շարք կտաւներում արտաքուստ պարզ ու հասարակ թուացող տեսարանների խորքում թաքնուած խորհրդաւորութիւնը: Նոյնիսկ ոճական առումով Մախոխեանի աշխատանքների մեծ մասը կատարուած են մուգ տոներով, յագեցուած վրձնահարուածներով, այսպէս ասած «մարմնական կամ նատուրալիստական չօշափելիութեամբ», որը նոյնպէս ընդունուած էր խորհրդապաշտների մօտ:

Մախոխեանի արուեստում խորհրդապաշտութեանը բնորոշ յատկանիշերի առկայութեամբ հանդերձ, այդ հոսանքը նրա համար չդարձաւ անվերապահ ընդունելի փիլիսոփայական եւ գեղագիտական կատեգորիա: Մախոխեանի արուեստի որոշ արտայայտչաձեւեր հակամէտ էին խորհրդապաշտութեան, բայց որոշ վերապահութեամբ, որովհետեւ նա գիտէր, որ վերջինս 1920ականներից աստիճանաբար կրկնում էր իրեն, եւ որ եւրոպական նշանաւոր շատ արուեստագէտներ արդէն փորձում էին յաղթահարել այն:

Մախոխեանի համար դա միջոց էր՝ իրապաշտութեան ու խորհրդապաշտութեան իւրօրինակ համադրութեամբ նոր որակ ստեղծելու, դրա արդիւնքում հասկանալով իրապաշտական տիպականացման բարձրագոյն աստիճանը, երբ պատկերը իւրայատուկ շեշտադրումների շնորհիւ արտայայտում է յաւերժականութեան գաղափարը: Թերեւս դա է պատճառը, երբ Ֆիլիպ Բերգէզը Մախոխեանի արուեստը բնութագրելիս օգտագործում է «տեւական»[21] բառը:

Մախոխեանի խորհրդապաշտական հակումների մասին խօսելիս արդէն ասացինք, որ նրա կտաւներում բացակայում են կենցաղային մոտիւները, նոյնիսկ մահկանացու մարդ արարածը: Այստեղից սակայն չպէտք է հետեւեցնել, որ եթէ բնանկարում բացակայում է մարդը, ուրեմն այն ունի խորհրդապաշտական բնոյթ: Շատ բնանկարիչներ իրենց կտաւներում անտեսել են մարդուն: Հայ իրականութեան մէջ այդպիսին է Գէորգ Բաշինջաղեանը (1857-1925), որի ստեղծագործութիւնները այդ նկատառումներով տարբեր մարդկանց մօտ տարբեր մեկնաբանութեան են արժանացել[22]: Մեծ դերասան Պետրոս Ադամեանը դա համարել է Բաշինջաղեանի արուեստի պակասը. «եթէ նկարիչը պճնէր իր գործերը մարդկանց կամ կենդանոնց ներկայութեամբ, որոնք շատ աւելի կենդանութիւն կտային այդ նկարաց, եւ որոնց բացակայութիւնը կարող էր գգալի լինել ապագայում, մի տեսակ միակերպութեան երեւոյթ տալով իր գործերին»[23]: Գրող Ալեքսանդր Շիրվանզադէն այլ կերպ է մօտենում խնդրին. «Նրա նկարների մէջ բնութիւնը մեծ մասամբ ներկայանում է, այսպէս ասած, մերկ, առանց շնչաւոր առարկաների... նրա դաշտերում եւ մարգերում, նրա լեռների եւ ձորերի մէջ երբեք չէք տեսնի մարդ կամ կենդանի, նրա գիւղերը մեծ մասամբ ամայի են...: Գուցէ դա թերութիւն է, բայց ինձ թւում է, թէ առնուազն միամտութիւն է մի արտիստից պահանջել ստեղծագործել այն, ինչ որ ինքը չի կամենում»[24]:

Սրանք ընդամէնն արուեստասէրների կարծիքներ են: Իրականում Բաշինջաղեանը եւ Մախոխեանը բնութեան նկատմամբ դրսեւորում են միանգամայն տարբեր ըմբռնումներ: Բաշինջաղեանի առիթով ճշմարիտ է լինելու յիշատակել Կարլ Ռոթի եւ Անդրանիկ Պառաւեանի խօսքերը, որ նկարիչը ոչ միայն գգում է բնութիւնը, այլ նոյնութեամբ ցուցադրում իր պատկերների մէջ, այնպէս որ իր գործերը տեսնելիս, կարծես թէ բնութիւնն ենք տեսնում եւ գգում եւ որ նա պարզ եւ անմիջապաշար կերպով նկատում է եւ նոյն պայմաններով (նոյն կերպ) նայածը ջանում դրոշմել կտաւի վրայ[25]: Մենք այս բոլորին կ'աւելացնէինք նաեւ՝ գեղեցկացնելով:

Մախոխեանը միանգամայն այլ է: Թեմայի մեկնաբանման նրա նպատակն ուրիշ է: Նրա աշխատանքներում խորհրդաւոր ու խռովայոյզ տրամադրութիւնը ստեղծուած է հնարաւորին չափ պարզ միջոցներով՝ գոյների զուսպ քանակ՝ հիմնականում կաթնագեղնաւունը, կանաչը, թոյլ նարնջագոյնը՝ չահեկանօրէն զուգորդուած դարչնագոյնի եւ շագանակագոյնի երանգների հետ: Այդ մտայղացմամբ ու այդ միջոցներով է նկարիչը ցոյց տալիս բնութեան նորաստեղծ մաքրութիւնը, նրա էպիկական անդորրը:

Մախոխեան գունանկարչի բնութագրական կողմերից մէկը, ինչպէս ասացինք, նախասիրութիւնն է մուգ, յագեցուած տոների նկատմամբ: Արդէն իսկ ամպամած եղանակի, երեկոյի կամ գիշերային տեսարանների պարագայում լոյսի տիեզերական չափաւոր ոյժի «տեղափոխումը» կտաւի վրայ, դրանց բարդ յարաբերութեան պահպանումը, ինքնըստինքեան, բերում է մուգ տոների եւ ազդեցիկ տպաւորութեան: Որքան էլ զարմանալի է, դրան ինչ-որ չափով նպաստում է կենդանի շնչի պակասը:

Քչով ստեղծել շատ բան, նուազ ջանքերով եւ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում հասնել բացարձակ արտայայտչականութեան. ահա այն որակները, որով տաղանդաւոր վարպետը տարբերւում է շարքային նկարչից: Մախոխեանի մօտ կատարողական հնարաձեւերը հասցուած են այնպիսի վարպետութեան, որի շնորհիւ, ինչպէս նկատում են քննադատները, անշարժ արուեստի մէջ մտցւում է «յաւիտենական շարժում»: Անբռնազբօսիկ ու վստահ վրձնահարուածներով արուած նրա ցամաքային բնանկարներում նոյնիսկ սովորական առօրեայ մոտիւը ներկայացւում է ներքին լարուածութեամբ: «Ինք մեծ եւ զարմանալի վարպետութեամբ մը կը դասաւորէ միշտ իր նկարներու առարկաները եւ իր վրձինը անսովոր եւ անխուսափելի յաջողութիւնով մը կ՝ստեղծէ ամէն անգամ գոյներու որոշ տպաւորութիւնը», գրում է Պառաւեանը[26]:

Ակնարկել ենք, որ թէ՛ օտար եւ թէ՛ հայ քննադատները Մախոխեանի մասին խօսելիս գուգորդութեան կարգով յիշել են Այվազովսկուն, Մոնէին, Բէօկլինին, Կուրբէին, նոյնիսկ՝ վաղ շրջանի Հանճարներին, որը, կարծում ենք, մասամբ ոգեւորութեան արդիւնք է: Կուրբէի (1819-1877) անունը շատ հարեւանցի է նշւում, իբրեւ մէկ-երկու վարպետների: Մեր խորին համոզմամբ, սակայն, Մախոխեանի աշխատաձեւը, նրա ոճական առանձնայատկութիւնները թոյլ են տալիս անմիջական զուգորդութիւններ անցկացնել Կուրբէի հետ, մի բան, որը, թւում է, առայսօր չի նկատուած:

Ժ-ԹԴ. դարի կէսերից սկսած բնանկարը դառնում է Ֆրանսիացի նկարիչների սիրելի ժանրը: Կուրբէն, սակայն, Ֆրանսիական եւ ընդհանրապէս եւրոպական բնանկարում մտցրեց մի նոր բան: Դա մասշտաբայնութեան զգացումն էր, վիթխարիութիւնը, բնութեան երեւոյթի ոյժն ու էներգիան: Կուրբէն միայն ծովերով չի հրապուրուել: Կարեւորը, սակայն, դա չէ, այլ՝ կտաւի մակերեսի մշակման առանձնայատկութիւններն ու մեթոդը[27]: Ֆրանսիացի մեծ նկարիչը եւս իրական կեանքի պատկերման ջատագովն էր, միայն թէ, ինչպէս ինքն էր խոստովանում, նրա իրապաշտութիւնը պոզիտիւ բնոյթ էր կրում, դրականօրէն ընդգծում էր իրական կեանքը, հաստատում նրա

հաւատիւթիւնը: Նա սիրում էր ընդհուպ մօտենալ բնութեանը: Նրա աշխատանքները կարծես գունային խտացուած տեստերից ծեփուած լինէին՝ հիւթեղ եւ յագեցուած: Կուրբէն եւս նախապատուութիւն էր տալիս մուգ կամ ոչ պայծառ երանգներին՝ հողականաչը, դեղնաշագանակագոյնը, կապտամանուշակագոյնը... Թերեւս նա առաջինն էր, որ ներկայացրեց աշխարհի նիւթականութիւնը, չեչտելով վերջինիս առարկայական բնոյթը եւ այդ բոլորը դիտուած երեւոյթի փիլիսոփայական ընդհանրացման ոսպնեակով: Կուրբէի պոզիտիւութիւնը հակադրւում է գաղափարապաշտութեանը, վիպապաշտութեանը ու ակադեմիական կլասիցիզմին: Նա եւս, ինչպէս Մախոխեանը, կեանքը ներկայացնում էր իր ընթացքի մէջ, հաստատում աշխարհի նիւթական նշանակութիւնը:

Կուրբէն դեռեւս 1860ականներից աշխատում էր բնութեան գրկում եւ բնութեան տեսարանները ու առարկաները ներկայացնում յագեցուած գոյներով, առարկայական յստակութեամբ ու դիտողականութեամբ: Իհարկէ, Կուրբէի մօտ աւելի վաղ էր գերակայուել գծանկարի ու գունային յատկանիշերի ոյժն ու ամրութիւնը, ծաւալների զանգուածային խտութիւնն ու չօշափելիութիւնը: Մաւալային-զանգուածային հատուածներն արտայայտւում են անսովոր ակնառութեամբ, որտեղ կարեւորւում է նկարչի յուզական էներգիայի փոխանցումը կտաւին: Ակնյայտ է գոյնի անսովոր ճշմարտութիւն, ամրութիւն ու յագեցուածութիւն:

Մախոխեանի կտաւները եւս նոյն յատկանիշերով են չնչում: Բերգէզի՝ Մախոխեանի կապակցութեամբ ասուած «հոմերական բան մը», «գոյների ամրողջական երեւոյթը» Կուրբէին չեն յիշեցնում: Զուգորդութեան անսպասելի օրինակներ կան Կուրբէի ծովային պատկերներում: Օրինակ, նրա «Ալիք» նկարը[28] թէ՛ յօրինուածքով եւ թէ՛ գունաշարով յիշեցնում է ճիշտ եւ ճիշտ մախոխեանական աշխատանքներից մեզ ծանօթ նմոյշները, օրինակ «Ովկիանոսի Առջեւ», «Մակընթացութիւն», «Ալեկոծութիւն» եւլն.: Նոյն կաթնամոխրագոյն «փակ» երկրնքում արեւի կամ լոյսի որեւէ աղբիւր չի նկատւում: Ապա Կուրբէի «Խորեստայի Առափնեայ Ժայռերը»[29], թէ՛ կատարման ոճով, բներանգով ու կոմպոզիցիոն կառուցուածքով ասես ելակէտ դարձած լինի Մախոխեանի մի շարք քարափնեայ տեսարանների համար՝ պղնձագանակագոյն այրուած ժայռեր, խտացուած երանգներ, մռայլ երկինք, յստակ ուրուագծեր, առաջին պլանում դատարկ նաւակներ: Դրանցից յիշատակենք «Մովափ Նաւակներով», «Ալեկոծութիւն. Ժայռապատ Մովափին», «Ժայռը Մովի Ափին», «Երեկոյ Մովի Վրայ» եւլն.: Նոյնը կարելի է ասել Կուրբէի «Ջրվէժ Կանչէում»[30] նկարի կապակցութեամբ՝ նոյն ժայռերն ու ջուրը...

Ի դէպ, Կուրբէի եւ Մախոխեանի արուեստների ակնարկուած աղերսները որոշ չափով կարելի է տեղափոխել նրանց անձնական կեանքի ոլորտը: Երկուսի մօտ էլ նկատուել է փոքր-ինչ ծանր եւ ըմբոստ բնաւորութիւն, իրենց ասածի նկատմամբ եւ իրենց դաւանանքում հաստատակամութիւն: Այդ յատկանիշների հետ մէկտեղ, սակայն, առկայ է միայնութիւն եւ ինքնամփոփուածութիւն, անբաւարարուածութիւն ճակատագրից, որից եւ անձնական ապրումների, յոյզերի ու տրամադրութեան ընդհանրութիւնը: Ասենք, որ վերջիններս անվերապահօրէն կարեւոր դեր են խաղում ամէն մի ստեղծագործողի կեանքում, նրա գեղագիտական դաւանանքի, բնաւորութեան եւ յոյզերի ձեւաւորման գործում:

Աւելի շատ քան Կուրբէի մօտ, անվերադարձ անցեալի ու կարօտի զգացումը, միայն անարատ բնութեան հետ լինելու ցանկութիւնը գերակշռող է Մախոխեանի կտաւներում եւ, թւում է, թէ Մախոխեանն աւելի մենակեաց է: Վերցնենք թէկուզ նրա «Աքսի Դղեակը Գաթանիայի մօտ» բնապատկերը: Խռովայոյզ ծովափին բարձրացող ժայռի վրայ երբեմնի հզօր տիրակալի կառուցած ամրոցի փլատակները նկարչին յիշեցնում են իրենց նախկին փառքն ու վեհութիւնը կորցրած, այժմ անխնամ, որեւէ մէկի ուշադրութիւնը չգրաւող հանգչող կեանքը: Մուայլ երկինքը՝ կաթնամոխրաւուն ու թոյլ մանուշակագոյն նուրբ երանգների ամպերով, պղնձաշագանակագոյն ժայռերը՝ ծովի արծաթաւուն փայլատակումների հետ դղեակի մուգ ուրուագծերն, իրօք, ստեղծում են մենութեան տխուր ու խորհրդաւոր պահը:

Ցիշենք Մախոխեանի «Բնանկար» աշխատանքը, ուր ծովափի փարթամ խոտերի մէջ, աշնանային արեւի շողերի տակ, ասես տապից խանձուած խաչքարն է՝ մենաւոր մի հայ մարդու գերեզմանը: Համոզուած ենք, որ նկարիչը խորհում է չլուծուած այն հակամարտութեան մասին, որն առկայ է միշտ կենդանի բնութեան վեհ ու գեղեցիկ ոյժերի եւ մարդկային տխուր ճակատագրի միջեւ, որ, տուեալ դէպքում, նկարիչը մարմնաւորում է մոռացութեան մատնուած գերեզմանաքարով՝ յաւերժ հանգստի գաղափարով:

Թւում է Մախոխեանին խորապէս յուզել է այդ թեման: Նոյնիսկ ծովախորշային բացատի որոշ տեսարաններում, օրինակ՝ Արա Մարանգոզեանի (ԱՄՆ) հաւաքածուի «Ջիւնը Կռեպուսկուլում» կտաւում, որտեղ պատկերուած տեղանքը մի ժամանակ մարդկային գործունէութեան վայր է եղել, այժմ սառցաջրերի մէջ ձկնորսների քարացած նաւակներն են: Թւում է՝ կեանքը լքուած է այստեղ: Մարդը չի վերադառնալու: Համատարած խոնաւութիւն ու ամայութիւն է: Հեռում, բացատի վերջում, անտառի ճիւնածածկ չերտից վեր, արեւմուտքի շողերի վրայ կաթնամոխրագոյն ամպերն են կուտակւում:

Թւում է՝ այս տրամադրութիւնը համահունչ է Մախոխեանի՝ մեզ հասած մի բանաստեղծութեանը։ Ցաւօք մեզ յայտնի չէ թէ ե՛րբ եւ որտե՛ղ է հրատարակուել այն։ Հայաստանի Ազգային Պատկերասրահի արխիւային բաժնում են պահպանւում թերթից կտրուած մի կտորի վրայ տպագրուած այս տողերը։

Աստուած մը մեծ

Անհունին մէջ, անհունէն վեր
Էակ մը կայ, Աստուած մը մեծ,
Լոյս մ'է ինք ջինջ եւ անըստուեր,
Մարմիններէ եւ նիւթէ զերծ։

Արեւը եւ բոլոր աստղեր,
Եկող գացող գիսաւորներ,
Ովկիանոս ջուրք անյատակ,
Հսկայ լեռներ բարձրաւանդակ,
Գարունը եւ իր ծաղիկներ,
Մարդն եւ իր բոլոր անասուններ,
Նըշաններն են ըստեղծողին.
Ամենազէտ հրաշագործին ...

Մենութեան ու թախծի նոյն տրամադրութիւնն ինչ-որ չափով զգացւում է նաեւ «Ռուսական Գիւղը Ձմրանը», «Ռուսական Ձմեռ», «Գիւղական Տնակները», «Տափաստան. Բնանկար», «Ձմեռ Անտառում», «Մովախորշ», «Ձմեռային Երեկոյ Բեռլինի Շրջակայքից», «Բոհեմեան Գիւղ», «Շուէդական Ափեր» եւ այլ կտաւներում։ Ուշադրութիւն ենք դարձրել մի փաստի վրայ եւս. դրանք հիմնականում ձմեռային տեսարաններ են, տարուայ տխուր ու ցուրտ եղանակը, կեանքի եռուզեռից հեռու, քաղաքներից հեռու։ Եւ եթէ հանդիպում են գիւղական տնակներ, ապա բացակայում է շարժուող մարդը։ Նկարչի այդ տրամադրութիւնը՝ կեանքից փախչելու ձգտման վառ արտայայտութիւնը նախապէս յիշատակուած «Այցելութիւն Ձգնաւորին» հիանալի կտաւն է, որտեղ արծարծուած է անէութեան թեման, ճգնաւոր դարձած մարդու՝ մարդկանցից հեռու մնալու, Աստծու հետ խորհրդածելու թեման։

Խորապէս համոզուած ենք, որ Մախոխեանի համար նման թեմաների ընտրութիւնը պատահական չէր։ Երեւի թէ դա մի չրջան էր նրա կեանքում, որը ցաւօք երկար տեւեց։ Ի. դարի սկիզբը բեկումնային էր եւրոպական մշակոյթի համար։ Հասարակական-տնտեսական կեանքի

տարընթացութիւնները, առաջադիմական պոռթկումներն ու տեղատուութիւնները, բարդ եւ հակասական իրադարձութիւններն անմիջական ներգործութիւն էին թողնում այդ պայմաններում ապրող անհատի տրամադրութեան վրայ: Գրականութեան եւ արուեստի շատ ստեղծագործողներ իրենց ապրած ժամանակը համարում էին ճգնաժամի ու սպասումի շրջան: Արուեստագէտներից ոմանք իրականութիւնից ու մարդկանցից հեռանալու, միայնութեան մէջ հոգիները բաց անելու ձգտում էին ցուցաբերում: Իրենց դրամատիկ ապրումներով ու դեգերումներով բնութագրական օրինակներ կան հայ գրականութեան մէջ՝ Վահան Տէրեան (1885-1920), Աւետիք Իսահակեան (1875-1957) եւն.: «Մենակութիւնը մարդուս ամենաանտանելի վիշտն է», գրում է Տէրեանը[31]:

Ըստ էութեան, ամէնից աւելի Տէրեանին էր վիճակուած յաճախ զգալու այդ «ամենաանտանելի վիշտը»: Գրականագէտ Էդուարդ Ջրբաշեանը գրում է. «Այդ քնարական կերպարի տրամադրութիւններում մենք ամէնից առաջ տեսնում ենք, իհարկէ, հենց իր՝ հեղինակի դրամատիկ ապրումների եւ ողբերգական դեգերումների, վառ երազների ու ծանր յուսախաբութիւնների արտացոլումը: Բաւական է համեմատել Տէրեանի բանաստեղծութիւնները նրա նամակների հետ, որպէսզի համոզուենք, թէ ինչպիսի՛ ուղղակի կապ կայ քնարերգութեան եւ առօրեայ կենսական ապրումների միջեւ»[32]:

Թւում է՝ այս խօսքերը նոյնութեամբ կարելի է վերագրել Մախոխեանին, մտաբերելով իր մտերիմ ընկերոջը՝ Գուրգէն Տէր-Սարգսեանին յղած նրա յուզախռով նամակները, որոնք պահւում են Հայաստանի Ազգային Պատկերասրահի արխիւային բաժնում, Մախոխեանի ֆոնդում (թիւ 16664): Ճիրաւի, Մախոխեանի նամակներում եւ կտաւներում, ինչպէս Տէրեանի մօտ, մարմնաւորւում է զգայուն եւ ըմբռոստ անհատի հոգեկան անհանգիստ աշխարհը:

Տէրեանն այդ պահին փախչում էր իր շրջապատից, նրա ստեղծագործութիւններում տիրապետող էին դառնում անրջային, անիրական, առարկայական կոնկրետ յատկանիշերից զուրկ պատկերներ.

Հողմն է հեկեկում աննշոյլ վիհերում,
Օ՛, անհուն գիշեր, քեզ ո՞վ է փոել.
Ինչո՞ւ է շուրջըս աշխարհը լռում,
Ո՞վ է իմ հոգու լոյսերը մարել...[33]:

Տէրեանի գործերում յաճախ էին դրսեւորւում թախիծի պահերը, մի բան, որն արուեստագէտները նկատել են Մախոխեանի մօտ: Գրականագէտները Տէրեանի թախիծը չեն դիտում որպէս անյոյս յոռետե-

սութիւն, աշխարհի նկատմամբ միայն մռայլ հայեացքի արտայայտութիւն: Այդ պահերին մարդն ասես միաձուլւում էր տիեզերական ներդաշնակութեան հետ:

Իսկ Մախոխեանի արուեստը յաճախ են նմանեցրել եւ համեմատել բանաստեղծութեան հետ: Դա հպանցիկ կատարել են գրեթէ բոլոր քննադատները: Մենք փորձել ենք փոքր-ինչ կոնկրետացնել նիւթը՝ որպէս համեմատութեան օրինակ յիշատակելով Տէրեանին: Եւ իրօք, որքա՜ն ընդհանուր բան կայ դրանց մօտ՝ ապրումների, տխրութեան եւ յոյսի: Մախոխեանն էլ կարծես փախչում է, բայց ոչ աշխարհից: Նա մի պահ հեռանում է մարդկանցից, բայց գնում է դէպի անարատ ու աստուածաստեղծ բնութիւնը, հաստատում բնութեան յաւերժութիւնը եւ դրանով ոգեւորւում: Արուեստագէտի համար դա կենսափիլիսոփայութեան դրսեւորման եղանակ է: Դա յոռետեսական մեկուսացման ու ներանձնացման յաւերժական համակարգ չէ, այլ որոշ տարրերի ու պահերի տրամադրութեան դրսեւորում:

Նման տրամադրութիւնները մի որոշ չրջան համընկել են նաեւ հայ պօէզիայի միւս խոշոր ներկայացուցիչին՝ Իսահակեանին: Դեռեւս 1897ին լոյս տեսած *Երգեր Ու Վէրքերում* հնչում են կորցրած սիրոյ ու կարօտի մոտիւները, կեանքի անցողիկութեան թախիծն ու աշխարհի յաւիտենականութեան հաստատումը («Դարդս լացէք, սարի սմբուլ», «Ամէն գիշեր իմ պարտէզում», «Էս ճամբէն օլոր մոլոր», «Զուլում Աշխարհ»[34]): Իսահակեանի մօտ էլ, ինչպէս Մախոխեանի, ստեղծագործողի ոգեղէն միտումներն առնչւում են դարաշրջանի բարդ ու ողբերգական տեղաշարժերի՝ աւարի ու թալանի, հայկական կոտորածների հալածող յուշերը...: Կարծես մի անճանաչ էակ նկարչին մշտապէս տանում է տիեզերական հեռուներ, էպիկական ընկալումների ոլորտը (տե՛ս՝ Իսահակեանի «Արու-Լալա Մահարի» պօէմը[35]): Մասնագէտներն ակնարկել են Մախոխեանի խառնուածքի եւ էութեան միայնութիւնը, նրա հոգեբանական դեգերումները: «Ողբերգականը Մախոխեանի ստեղծագործութիւնների մէջ նկարագրային տարր է, որ նա կարծես մեկուսանում է, պատկերին արտայայտում եւ վերաբերւում վեհութեամբ ու խանդով»[36]:

Համառօտակի, այդպիսին էին Մախոխեանի մօտ, թերեւս նաեւ հայ գեղանկարչութեան մէջ, այն թարմն ու ինքնատիպը, որոնք արդիւնք էին ԺԹ. դարի եւրոպական արուեստի նոր արժէքների ստեղծագործական իւրացման ու տպաւորութեան:

Մեր խօսքը եզրափակենք Ֆրանսիացի բանաստեղծ Ա. Սենթ Անժ Պլէի (A. Saint Ange Plet)՝ *Մախոխեանին նուիրած բանաստեղծութեան տողերով.*

Ո՜հ, նկարիչ Մախոխեա՜ն, արուեստագէտ անմման,
Կախարդական վրձինիդ սեւեռելով անկշռելին,
Կոհակներուդ գրոհները ժայռին վրայ կը փշրուին
Այնքան իրական կարծես սիրտը կրէր բախիւնը:

Քու գունակալը հրագոյն ներշնչուած կը թուի,
Ցայնով ազդեցիկ զոր կ՛ընծայեն ՆԵՐԷՈՍԻՆ,
Երբ ովկիանոսը կը մրմնջէ գգուանքներու հովուն
Որպէս զայն պաշտէր երգի մը մէջ ջերմեռանդ:

Մարդոց պաշտպանութեան վրիպած հոգիները
Կը դնես ճշմարտապէս ներքեւ անմահ ալիքներուն
Եւ քու վաւերութիւնը կը ստեղծէ վէտվէտումը շարժուն:

Գոյներու կախարդիչ, կը դնես վրան կտաւներուդ
Ճառագայթներ Արեւի եւ շողիւնք աստղերու,
Ո՜հ ծովանկարիչ, Ոգին՝ ապրող ջուրերուն[37]:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Գուրգէն Տէր Սարգսեան, «Հայ Հանճարեղ Ծովանկարիչ Վարդան Մախոխեան», Վէմ-բարձնուագ* (Թեհրան), *թիւ* 215, 17 *Յունիս* 1933, *էջ* 28։

[2] *Ալ֊ո, «Նկարիչ Վարդան Մախոխեան», Գեղարուեստ* (Թիֆլիս), *առաջին տարի, թիւ* 1, *Մարտ* 1908, *էջ* 42։

[3] *Տէր Սարգսեան, էջ* 28։

[4] *Աւոլֆ Սքառաէլլի, «Կարծիքներ Վարդան Մախոխեանի Մասին», Շանթ* (Կ.Պոլիս), *Ա. տարի, թիւ* 22, 1/14 *Մայիս* 1912, *էջ* 355։

[5] *Ռաֆայէլ Շիշմանեան, Բնանկարն Ու Հայ Նկարիչները. Սկզբից Մինչեւ Սովետական Շրջանը, Երեւան, Հայպետհրատ*, 1958, *էջ* 289-304։

[6] *Եղիշէ Մարտիկեան, Հայ Կերպարուեստի Պատմութիւն, Գիրք Դ. Հարիւրեան Կերպարուեստը. Արտաշէսեանեան Երկրներում. Ֆրանսիա, Երեւան, «Սովետական Գրող»*, 1987, *էջ* 7-38։

[7] *Ռաֆայէլ Շիշմանեան, «Նկարիչ Վ. Մախոխեան», Անահիտ* (Փարիզ), *Նոր շրջան, ութերորդ տարի, թիւ* 3-4, *Ապրիլ-Յունիս* 1937, *էջ* 70։ *Մախոխեանի ծննդեան տարեթիւը տարբեր հեղինակների մօտ տարբեր է նշուել՝* 1870, 1871, 1872։ *Սակայն, նրա տապանաքարի վրայ գրուած է* 1869։

[8] *Ալ֊ո, էջ* 42։

[9] *Հ. Անդրէասեան, «Նկարիչ Մախոխեան», Ծաղկարար* (Թիֆլիս), *թիւ* 5, 1908, *էջ* 73։

[10] *Ընդհանրապէս, ժթ. դարի երկրորդ կէսում հայ դիմանկարչութեան ու մանկավարժական միտքը կողմնորոշուած էր դէպի գերմանական ուսումնական հաստատութիւնե-*

բը. Նշանաւոր չատ հայագէտներ գերմանացիներ էին՝ Յոզէֆ Մարկվարտ (1864-1930), Հայնրիխ Հիւբշման (1848-1908), Յոզէֆ Կարօտ (1871-1942) եւ այլք։ Գերմանախօսում են իրենց մասնագիտական կրթութիւնը ստացել նաեւ հայ գեղարուեստագէտներ Վարդգէս Սուրէնեանցն (1860-1921) ու Յակոբ Կոջոյեանը (1883-1959)։

[11]Գադէն համբաւ ունեցող ծովանկարիչ էր եւ 1886ին հրաւիրուել էր դասաւանդելու Բեռլինի Գեղարուեստաի Ակադեմիայում։

[12]Մախոխեանի կենսագրութեան հիմնական աղբիւրներն են՝ Անդրանիկ Պատաւեան, «Հայ նկարիչներ. Վ. Մախոխեան», Շանթ, Ա. տարի, թիւ 22, 1/14 Մայիս 1912, էջ 345-350. Տիգրան Նազարեան, «Անզուգական Ծովանկարիչ Վարդան Մախոխեան», Հայաստանի Կոչնակ, ԻԴ. տարի, թիւ 41, 14 Հոկտեմբեր 1924, էջ 1287-1289. Հ. Վ. Խ., «Վարդան Մախոխեան եւ Ծովանկարչութիւնը», Գեղուհի (Վենետիկ), 1927, էջ 73-79. Արշակ Զօպանեան, «Մեկնողները. Վարդան Մախոխեան», Անահիտ, նոր շրջան, ութերորդ տարի, թիւ 1-2, Յունուար-Մարտ 1937, էջ 101-105. Շիւմանեան, էջ 283-304։

[13]Աւետիս Սքարանլի, «Մախոխեանի Յուշահանդէսը», Գեղուհի, Ա. տարի, թիւ 4, 5, 6, 1 Յունիս 1902, էջ 35։

[14][Արշակ Զօպանեան], «Մեր Պատկերները», Գեղարուեստ (Թիֆլիս), Դ. գիրք, 1911, էջ 244։

[15]S. Kara-Murza, 'Armiane v iskusstve' [*Հայերն Արուեստում*], տե՛ս՝ *Armianskii sbornik* [*Հայկական ժողովածու*], Մոսկուա, 1911, էջ 213-214։

[16]A. Schmidt, *Böcklin heute* [*Բէօկլինն Այսօր*], Bazel, 1951; Fritz von Ostini, *Böcklin*, Bielefeld and Leipzig, 1925; Gustav Floerke, *Zehn Jahre mit Böcklin* [*Տասը Տարի Բէօկլինի Հետ*], Berlin, 1933; *Iskusstvo zarubezhnikh stran* [*Արտասահմանեան Երկրների Արուեստը*], հ. 3, Մոսկուա, 1964, էջ 278։

[17]Գերիրապաշտութեանը հակուող այս մօտեցումը կամ մեթոդը որպէս աշխատելակերպի ու արտայայտման եղանակ, առաջ է քաշել ոգեհարցման երազատեսութիւնը՝ ներշնչուած հոգեւոր մզումներից, խորհրդաւոր եւ պատահական զուգադրումներով. տե՛ս՝ L. G. Andreev, *Surrealizm* [*Գերիրապաշտութիւն*], Մոսկուա, 1972. I. S. Kulikova, *Surrealizm v iskusstve* [*Գերիրապաշտութիւնն Արուեստում*], Մոսկուա, 1970. Simon Wilson, *Surrealist Painting* (London, 1975)։

[18]Վահան Տէրեան, *Երկերի Ժողովածու*, կազմեց եւ ծանօթագրեց Վ. Պարտիզունի, հատոր առաջին, Երեւան, Հայպետհրատ, 1960, էջ 13։

[19]Մարտիկեան, էջ 28։

[20]Ի դէպ, խորհրդապաշտութեան գեղագիտական մտածողութիւնը բնորոշ դարձաւ Ի. դարի արուեստի յետագայ բազմազան ուղղութիւններին. տե՛ս՝ A. F. Losev, *Problema simvola i realisticheskoe iskusstvo* [*Խորհրդանշի Խնդիրները եւ Իրապաշտական Արուեստը*], Մոսկուա, 1976. J. Revald, *Postimpressionism* [*Յետ-Իրապաշտութիւն*], Մոսկուա-Լենինգրադ, 1962. *Vseobshchaia istoriia iskusstv* [*Արուեստների Ընդհանուր Պատմութիւն*], հ. 5-6, գիրք 1-2, Մոսկուա, 1964-66։

[21]Ֆիլիք Պերիկէզ, «Վարդան Մախոխեան», Շանթ, Ա. տարի, թիւ 22, 1/14 Մայիս 1912, էջ 351։ Բէօկլինեան ու խորհրդապաշտական տրամադրութիւնների չորքը կարելի է դասել Մախոխեանի ցամաքային որոշ պատկերներ՝ «Ծովախորշ», «Լեռնային Տեսարան Ջմրան Մէջ», «Հին կաղնիների Մօտ» եւլն.։

[22]Մինաս Սարգսեան, Գէորգ Բաշինջաղեան. Կեանքը Եւ Գործունէութիւնը, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, 1957։

[23]Տե՛ս՝ Ադամեանի նամակը Բաքուի Նոր Դար Թերթին, թիւ 3, 1885։

[24]Գէորգ Բաշինջաղեան, Նկարչի կեանքից, Երեւան, 1950, էջ 159-160. Շիլմանեան, էջ 117։ Ի դէպ, մի առիթով Բաշինջաղեանը գրել է. «Ինձ դուր չի գալիս բնութեան խանաւութիւնը, նա չի հիացնում, այլ միայն վրդովում է մարդու հոգին». տե՛ս՝ Բաշինջաղեան, էջ 38։

[25]Տե՛ս՝ Բաշինջաղեան, էջ 178։

[26]Պառաւեան, էջ 350։

[27]Giustav Kurbe [Գիւստաւ Կուրբէ], Մոսկուա, 1959; A. Tikhomirov, Giustav Kurbe [Գիւստաւ Կուրբէ], Մոսկուա, 1965; Giustav Kurbe, Pisma, dokumenti, vospominaniia sovremennikov [Նամակներ, փաստաթղթեր, ժամանակակիցների յիշողութիւնները], Մոսկուա, 1970։

[28]Տե՛ս՝ Giustav Kurbe (1959), նկ. 25։

[29]Տե՛ս՝ N. Kalitina, Frantsuzskaia peizazhnaia zhivopis [Ֆրանսիական բնանկարը], Լենինգրադ, 1972, էջ 14։

[30]Տե՛ս՝ Giustav Kurbe (1959), նկ. 23։

[31]Տե՛ս՝ Վահան Տէրեան, Երկեր, Երեւան, 1989, էջ 3-30 (Էդուարդ Զրբաշեանի առաջաբանը)։

[32]Նոյն, էջ 8։

[33]Տէրեան, Երկերի ժողովածու, հատոր առաջին, էջ 98։

[34]Աւետիք Իսահակեան, Երկեր, Երեւան, 1955, էջ 22. նոյն, Երկերի ժողովածու, հատոր առաջին, Երեւան, «Հայաստան», 1973, էջ 4, 35-36։

[35]Իսահակեան, Երկերի ժողովածու, հատոր երկրորդ, էջ 53-78։

[36]H. de Guardia, 'Wardan Mahokian', Rives d'Azur, No. 304, 1932, p. 9։

[37][Ա. Սենք Անժ Պլէ] «Վարդան Բ. Մախխանեան», թարգմ. Մինաս Ճիհանեան, Հայաստանի կռչնակ, 65րդ տարի, թիւ 7, Յուլիս 1965, էջ 212։

THE ECHOES OF EUROPEAN CULTURE IN THE PAINTINGS OF WARDAN MAHOKIAN
(Summary)

ARA HAKOBIAN

The author analyses the influence that various famous European painters had on the art of the Armenian painter Wardan Mahokian (1869-1937), who was born in Trabzon in the Ottoman Empire, educated in Berlin and spent the latter part of his life in France. The influence of Ivan Aivazovskii is very evident in the early part of Mahokian's career. It later gives way, however, to the influences of the Swiss painter Arnold Böcklin and the Frenchman Gustave Courbet. Mahokian was inclined toward the Symbolist school in painting but was never overwhelmed by the latter; he never forfeited certain elements of Realism. The influence of Courbet's positive realism is particularly noticeable in Mahokian's attempt to depict life in motion, his solitude, the urge to escape to nature's fold and his dissatisfaction with his own fate. This trend is in accordance with themes developed separately by two famous Armenian poets of the period, Avetik Isahakian and Vahan Terian.

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ԼԵՒՈՆ ՇԱՆԹԻ ՇՂԹԱՅՈՒԱԾԸ ԴՐԱՄԱՅՈՒՄ

ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Լեւոն Շանթի (Սեդրոսեան, 1869-1951) Շղթայուածը 1918ին Լոզանում գրուած խորհրդապաշտական գեղագիտական սկզբունքով ըստեղծուած դրամա է, որտեղ, 1917ի ռուսական երկու՝ Փետրուարեան ու Հոկտեմբերեան Յեղափոխութիւնների ազդեցութեան ներքոյ, այլաբանական պատկերներով արտայայտուել են հեղինակի հանրային կեանքի զարգացման վերաբերեալ ունեցած բարոյափիլիսոփայական հայեացքները։

Շղթայուածը դրամայում, միջնադարեան Անի քաղաքում ԺԲ. դարում ընթացող պատմական դէպքերը զուգակցւում են ժողովրդի հագարամեակների փորձառութեանը։

Առասպելական Արտաւազդը հեթանոս հայերի համար ազատութեան խորհրդանիշ էր, մինչդեռ յետագայում դարձաւ չարութեան խորհրդանիշ։ Ժողովրդի իմաստութիւնը բանտարկեց նրան։ Ժամանակ էր պէտք՝ մինչ մարդը կը կարողանար ըստ ամենայնի գործադրել իր ազատութիւնը։

Այս գաղափարը Շանթն ամբողջացնում է Անիում կատարուող իրադարձութիւններով։ Ժողովուրդը, իշխան Պահլաւունու գլխաւորութեամբ, թօթափում է թուրք էմիրի բռնակալութիւնը, ինչը պայմաններ է ստեղծում ժողովրդի ազատ զարգացման համար։ Սակայն ազատութեանը միտուած բնագդի կրողները շարունակում են պայքարն արդէն հանրային կարգի դէմ. տիրում է քաոսը։ Ակնյայտ է դառնում, որ մերժելով աշխարհի «բոլոր կարգերը»՝ անհնար է հասնել փափաքելիին։ Ապագայում միայն, տիրելու, իշխելու մղումները իր մէջ յաղթահարած մարդը կը կարողանայ իրականութիւն դարձնել ազատութեան գաղափարը, հետեւապէս եւ խորտակել Արտաւազդի շղթաները։ Անիում ստեղծուած ընդհանուր քաոսին վերջ է տալիս իշխան Պահլաւունին՝ բանականութեան կրողը։ Նա զսպում է գազազած ամբոխին՝ վերականգնելով ընդհանուր կարգը։

Քննադատական միտքն առանձնապէս չի կարեւորել Շանթի այս երկը։ Սիմէոն Յակոբեանն այն «գեղարուեստական մոլորութիւն»[1] համարեց։ Յակոբ Օշականը եւս խիստ էր եզրայանգման մէջ՝ դրաման

«վրիպանք մըն է Լեւոն Սեղբոսեանէն չկասկածուած պարզմտութեամբ մը»[2]:

Յետագայում եւս, առանձին նշանակութիւն չի տրուել այս երկին: Գրաքննադատները՝ նկատի ունենալով երեւոյթների միայն արտաքին կողմը, խստօրէն սահմանափակել են դրամայի գաղափարական բովանդակութեան սահմանները: «Շանթը գնում է դէպի պատմութեան կամայական մեկնաբանութիւնը»[3],- գրում է Էդուարդ Թոփչեանը: Նա աւելացնում է. «Գրողը չի ըմբռնում Հոկտեմբերեան սոցիալիստական մեծ յեղափոխութեան նշանակութիւնն ամբողջ մարդկութեան եւ հայ ժողովրդի համար»[4]: Սարգիս Փանոսեանը դրամայում առաջնային համարելով «մարդու հոգեւոր բարոյական կատարելութիւնը» (ընդգծումը հեղինակինն է - Վ.Գ.), այսուամենայնիւ ենթադրում է, որ «գեղարուեստական դրամա ըստ էութեան չի ստացուել»[5]: Սերգէյ Սարինեանը Շղթայուածը «կառուցուածքով ու գաղափարով բարդ» (ընդգծումը մերն է - Վ.Գ.) ստեղծագործութիւն է համարում, որտեղ «արտացոլուել են հայոց ազգային ձգտումներն ու երազանքները»[6] ռուսական վերոյիշեալ յեղափոխութիւնների իրադարձութիւններում:

Դրամատիկական այս երկը քննելիս, նախապէս հարկ է աչքի առաջ ունենալ այն պայմանական իրականութիւնը, որ ստեղծել է հեղինակը: Առանց գեղարուեստական այդ միջավայրի, պարզապէս անհնարին կը լինէր արծարծել այն գաղափարները, որոնք յուզում էին հեղինակին: Դրանք ամբողջացնել մէկ կառուցիկ ֆաբուլայի օգնութեամբ պարզապէս անհնարին էր: Շանթը նախընտրել է սիւժէի, գաղափարների զարգացումը. հետեւապէս՝ միջավայրի ուժալ բնոյթը միայն միջոց է՝ իղէան առաւել ամբողջական դարձնելու համար: Ժամանակագրական առումով եւս, այստեղ տարբեր երեւոյթներ են իմ բերուած: Շանթը Շղթայուածքով զարգացնում էր իր նախապէս հեղինակած մէկ այլ դրամայի՝ Հին Աստուածների (1909) ստեղծագործական աւանդները: Աւելի ճիշտ, նկատի ունենալով նախկին փորձը, նա փնտռում եւ գտնում էր նոր ուղի: Հին Աստուածներում երազատեսութեան, երեւոյթների միստիկ խորութեան սիմվոլիկ բացայայտումները ստեղծում էին դրամատուրգիական ստատիկ պատկերների շարք: Շղթայուածքում սիմվոլի արտայայտման նման ձեւերից ձերբազատումը Շանթին յանգեցրին ժանրի դինամիկ արտայայտման կերպին: Այստեղ սիմվոլը մարմնաւորւում է անընդհատ գործողութեան մէջ՝ տարածա-ժամանակային տարբեր հանգամանքներում:

Սակայն, անհրաժեշտ է առանձին ուշադրութիւն դարձնել գրողի՝ հասարակական կեանքի վերաբերեալ ունեցած հայեացքների վրայ, որպէսզի առաւել յստակ պատկերացում ունենանք դրամայի մասին:

Հասարակական կեանքը Շանթի համոզմամբ «գործարանաւոր» մարմին է, որի ղեկավար սկզբունքն ամբողջ օրգանիզմի օգուտն է, օրգանիզմի ամբողջական զարգացումն ու ապահովումը: Միւս կողմից, ընկերական այդ բարդ միութիւնը կազմուած է «մարդ-մասնիկներէ», որոնք տարբեր ձգտումներ, իրենց մասնաւոր «հաշիւն ու շահը, պէտքն ու կեանքը» ունեն: Եւ ամբողջութեան շահն ամէն անգամ չի «համապատասխաններ ամէն մէկ անձի մասնաւոր շահին ու ձգտումին»: Եթէ ընդհանուրի համար կարեւորն ամբողջութեան բունած ուղին է ու առաջադիմութիւնը, ապա «ամեն անձ ստիպուած է իր օգուտը, իր վիճակը մտածելու, անոր համար ամենակարեւորը ինքն է, ամենէն առաջ ի՛ր գոյութիւնը, ետքը՝ ամբողջութիւնը»: Բնականաբար ընկերական կազմի բաղադրիչ մասերի միջեւ առկայ է մշտական դժգոհութիւնը, շահերի հակադրութիւնը, պայքարը: Մարդիկ նոյն դիրքի վրայ չեն եւ ոչ էլ «նոյն արժէքն ու դերը ունին»: «Մէկ խօսքով՝ ընկերային կազմի եւ ընդհանրապէս օրգանական կազմի յաւիտենական հիւանդութիւնը տնտեսական ու վարչական անհաւասարութիւնն է, որուն գոյգ կ'երթայ նաեւ կէս-բերան տրտունջ մը մարդկանց մէջ եղած բնական անհաւասարութեան դէմ, ինչպէս է գեղեցկութիւնը, տաղանդը, խելքը, ուժը, առողջութիւնը»[7] (բոլոր ընդգծումներն մերն են - Վ.Գ.):

Շանթի համաձայն, բոլոր դարերում գրկուածներն ու անիրաւուածները փորձել են տիրող կարգերը փոխելու: Այդ մաքառումներին զուգընթաց, «ազնիւ ու մտածող» մարդիկ ճիգեր են թափել գտնելու այնպիսի ընկերային կազմի վիճակ, որտեղ անարդարութիւնը, անհաւասարութիւնը, շահագործումը գոնէ մեղմէին, «նուազ անտանելի դարձնէին»: Այդ տեսակ մտքի «ազնիւ ճիգ մըն է սոցիալիստական աշխարհայեացքը»[8]: Այս գաղափարախօսութեան հաւասարութեան պահանջները Շանթի համոզմամբ վերացնում են թէ՛ ժողովուրդների եւ թէ՛ առանձին մարդկանց անհատականութիւնը: Նրանք, ովքեր պաշտպանում են բոլորին ընդհանուր եղող, իրար նմանեցնող, իրար հաւասարեցնող գծերն ու յատկութիւնները (որոնք անհամեմատ աւելի հին են ու հիմնականը), պահպանողականներ են, իսկ յարմարուող, հնարող, տարբերուող յատկութիւններն ու գծերը նոր ճանապարհներ են բացում, ձգտում են նոր ձեւերի, «այսինքն կեանքի յառաջդիմական սկզբունքն են»: Մարդկային հոգու այս երկու տիպերն էլ անհրաժեշտ են եւ իրար լրացնող, որովհետեւ կեանքն «այդ երկու հակադիր սկզբունքներու հիւսքէն է կազմըւած»[9]: Եւ եթէ ինչ-որ պահի, դրանցից որեւէ մէկը չեչտուի, անտեսելով հակադիր սկզբունքը, «այն չափով կ'ըլլայ հիւանդոտ եւ յետադիմական, այսինքն հակառակ օրգանական

ու ընկերային կեանքի բնական ընթացքին ու զարգացմանը»[10] (բոլոր ընդգծումներն մերն են - Վ.Գ.):

Շանթի բնափիլիսոփայական հայեացքները, որոնք ներառում էին մարդուն, հասարակական կեանքն՝ իր հոգեւոր ու նիւթական արժէքներով, ձեւաւորուել էին ինչպէս գերմանական դասական փիլիսոփայութեան ազդեցութեամբ, այնպէս էլ՝ ժամանակի գիտութեան յայտնաբերած արդիւնքներով: Ֆրանսիացի փիլիսոփայ Օգիւստ Կոնտը (1798-1857) մասնաւոր սեփականութիւնը հռչակեց «հասարակական պարտականութիւն»[11]: Անգլիացի սոցիոլոգ եւ հոգեբան Հերբերտ Սպենսէրը (1820-1903) կողմնակից էր աննկատ էվոլիւցիային. հասարակութիւնը զարգացման բոլոր ձեւերի ժամանակ թօթափում է հին կեղեւը, սակայն այն արմատական վերակառուցման չպէտք է ենթարկուի: Ամէն փոփոխութիւն «պէտք է կատարուի աստիճանաբար»[12]:

Հասարակական կեանքի վերաբերեալ առաջաւոր մտածողների գաղափարներին ծանօթ լինելով, ինչպէս նաեւ անգլիացի բնագէտ Ջարլզ Դարուինի (1809-1857), գերմանացի կենսաբան Էռնստ Հեկէլի (1834-1919)՝ տեսակների կենսաբանական վերափոխումների եւ համաշխարհային զարգացման էվոլիւցիոն տեսութեան իւրացումով, Շանթն ի վերջոյ յանգում էր գերմանացի փիլիսոփայ Ֆրիդրիխ Նիցշէի (1844-1900) փիլիսոփայութեանը: Վերջինս ժամանակի գիտութեան արդիւնքները տարածում էր մշակոյթի համաշխարհային պատմութեան զարգացման ընթացքի վրայ: Մարդը, նրա համար, առաջընթացի ընդամէնը մէկ օղակն է եւ ո՛չ վերջինը: «Մարդս մի բան է, որ պէտք է յաղթահարուի»[13], ասում է Նիցշէի Զրադաշտը: Այս միտումն առկայ էր ինչպէս Շանթի ստեղծած կերպարներից Վանահօր (*Հին Աստուածներ*) խօսքում, այնպէս էլ Նաղաշի (*Շղթայուածը*) խորհրդածութիւններում. «Մէ՛չ, դուք դեռ մարդ չէք, դուք դեռ այն մարդը չէք, որ Աստուած ստեղծել կ՛ուզէ. դուք դեռ մարդու մէկ նախնական նմուշն էք միայն, Աստծու առաջին փորձերը անասունէն մարդը ստեղծելու»[14]:

Եթէ Նիցշէի համար, նոր էակը Գերմարդն է, ապա, Շանթի համար՝ այն մարդը, որ կեանքի դեւին «յաւիտեան հպատակ եւ հասարակ կենդանի» չէ, աւելի՛ն է, քան մարդը: Դրան հասնելու համար բանական արարածն ինքնայաղթահարման ճանապարհով հարկ է, որ մեռցընի իր միջի բռնակալը, որ «կ՛ուզէ իշխէ ամենուն վրայ, կ՛ուզէ խլէ ուրիշներուն ունեցածը, կ՛ուզէ ուտէ ուրիշներուն աշխատանքը, կ՛ուզէ, որ բոլորը երկրպագեն իրեն ու ծառայեն իր քմայքին ու հաճոյքին» (270):

Գրողը երեւոյթները տեսնում է զարգացման ընթացքի մէջ, եւ այստեղ եւս պահը ժամանակի միաւոր չէ, այլ յաւերժութեան:

Երկի բովանդակութեան մէջ հիմնարար տեղ է գրաւում այն միտումը թէ մարդ-կատարեալին հասնելու անդուլ մաքառումները մշտատեւ են: Խորքում, այն առնչւում է ազատութեան պրոբլէմին:

Եւ ահա այստեղ է, որ Շանթը յայտնաբերում է Արտաւազդին՝ իբրեւ ազատութեան գաղափարի: Պատահական չէ, որ նա դրամային կցել է երկու բնաբան, նախ՝ Ե. դարու մատենագիր Եզնիկ Կողբացուց. «Զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, եւ նա ելանելոց է եւ ունելոց գաշխարհս», ապա եւ Պատմահայր Մովսէս Խորենացուց՝ «Զրուցեն զամանէ եւ պառաւունք, եթէ արգելեալ կայ յայրի միում, կապեալ երկաթի չղթայիւք. եւ երկու չունք հանապազ կրծելով զչղթայն՝ ջանան ելանել եւ առնել վախճան աշխարհի. այլ ի ձայնէ կուանահարութեան դարբնոց զօրանան, ասեն, կապանքն: Վասն որոյ բազումք ի դարբնաց յաւուր միաշաբաթուէ երիցս բախեն զսայն, զի զօրասցին, ասեն, չղթայքն Արտաւազդայ» (219):

Բնաբաններից իսկ ենթադրելի է, որ դրամատուրգն արծարծում է այնպիսի խնդիր, որ դրսեւորմամբ երկակի է: Ինչպէս Հին Աստուածներում առաջմղիչ ոյժը մտքի եւ գգացմունքի, հոգու եւ մարմնի հակադրամիասնութիւնն է, որ պայմանաւորում է զարգացման ընթացքը, այնպէս էլ Շղթայազածում, մարդն էութեամբ հակադրամիասնութիւն է: Եթէ գգացմունքը, բնազդը փորձեն իշխել, առանց անսալու բանականութեանը, ապա ընդհանուր կարգի մէջ կը տիրի քաոսը, իսկ եթէ բանականութիւնն անտեսի գգացմունքը, ապա բարոյական կորուստներն անխուսափելի են:

Շանթը դեռեւս բնաբանում, իրարամերժ հատուածների չնորհիւ, ցուցադրում է երեւոյթի զարգացման պատմական ընթացքը: Եթէ ընդունենք, որ անիրաւուած խաւը յոյսը կապել է բարի Արտաւազդի հետ, իսկ տիրողներն ամէն կերպ հաւատացրել են մարդկանց, թէ վերջինս չար է, այլ խօսքով՝ եթէ երեւոյթին որոշակիօրէն սոցիալական բովանդակութիւն տանք, ինչպէս դա սովորաբար արուել է, ապա կ'ընկնենք հակասութեան մէջ: Տէրեր ու գրկուածներ, շահագործողներ եւ շահագործուողներ եղել են բոլոր ժամանակներում: Խնդիրը Շանթի համար, ինչպէս գերմանացի փիլիսոփայ Իմանուիլ Կանտի (1724-1804) պարագայում, հրհրկական է: Դա զարգացման իւրայատուկ ընթացք է, որին հասել է ժողովուրդը՝ տեւական ժամանակի ընթացքում: Անտեղի է դիտողութիւնն այս առիթով: Իսկապէս, Կողբացու Արտաւազդը բարի է, որ պիտի դուրս գայ եւ տիրի աշխարհը. մարդիկ սպասում են նրան: Իսկ Խորենացու Արտաւազդը չար է. նա պիտի դուրս գայ եւ քանդի աշխարհը: Սա տարբեր հայեացքների, տարբեր աշխարհների հակադրութիւն է, որ անհանգստացրել է դրամատուր-

գին։ Միմեանց են հանդիպադրուած հեթանոս եւ քրիստոնեայ ժամանակները։

Գրող Աւետիք Իսահակեանը, 1938ի Դեկտեմբերին գումարուած յատուկ նիստում, «Սասունցի Դաւիթ» էպոսի համահաւաք բնագիրը քննարկելիս, հետաքրքիր եւ կարեւոր դիտարկումներ է կատարել։ Նա զուգահեռներ է տարել այդ էպոսի հերոսներից Մհերի, վրաց Ամիրանի, հին յոյների Պրոմեթէոսի, Արտաւազդի եւ պարսից Բիւրասպի միջեւ։ Եթէ Կողբացու «Արտաւազդը բարի է ... եւ հայ հեթանոսները սպասում են նրան», ապա Խորենացու «Արտաւազդը չար է. նա դուրս պիտի ելնի, աշխարհը քանդէ. որն արգելելու համար քրիստոնեայ հայերը մուրճի հարուածներով նորից ամրացնում են նրա չղթաները»։ Եւ իրրեւ եզրակացութիւն՝ «քրիստոնեայ աշխարհը, իրրեւ տիրող կարգի պաշտպան, բանտարկում է Մհերին, իսկ հեթանոսութիւնը իր յոյսը կապել է նրա ազատագրման հետ»[15]։

Շղթայուածքի գործողութեան զարգացման ընթացքում փաստ է, որ տիրող կարգի պաշտպաններն ամէն կերպ աշխատում են պահել Արտաւազդի, իրրեւ կործանարար դեւի գաղափարը, իսկ նրանք, ովքեր տենչում են ազատութիւնը, հոգու խորքում փայփայում են ազատութեան ռահվիրայի կերպարը։ Բայց գրողը նկատում է, որ Արտաւազդի, իրրեւ չար ոյժի, պաշտպաններ են նաեւ այնպիսի մարդիկ՝ դարբին Աւագի հայրը, Ջուլհակը, ովքեր ոչ մի կերպ կապուած չեն իշխանութեանը եւ չարքաշ աշխատաւոր են։

Շանթը չի կարեւորում դասային տարբերութիւնը. նրա համար էականը մարդ արարածի բնոյթն է՝ հակասական, իրարամերժ ձգտումներով։ Աւելին՝ եթէ իշխանութեան գլուխ կարող են գալ դեմոկրատ, ժողովրդական ոյժերը, ապա դրանից էութիւնը չի փոխուելու. մի բռնապետին փոխարինելու է միւսը։ Այնքան ժամանակ, քանի դեռ մարդիկ կ'առաջնորդուեն եսասիրական մղումներով, բռնապետական մի ճեւը կը փոխարինուի միւսով։

Անցեալը խորհրդանշում է Ժ-Բ. դարի Անին՝ սելջուկների տիրապետութեան շրջանում, երբ հայերի եւ վրացիների միջեւ համագործակցութիւնը դրական արդիւնք տուեց։ Կապերն ամրապնդուեցին վրաց Դաւիթ Շինարար (1089-1125) թագաւորի օրօք։ Անեցիներն ապստամբեցին սելջուկների դէմ եւ դիմեցին Վրաստանի օգնութեանը։ Նրանք քաղաքի դարպասները բացեցին օգնութեան եկող վրաց բանակի առաջ[16]։ Այս դէպքերի արձագանգները կան Շանթի երկում։ Սակայն նիւթի ընտրութիւնը թոյլ էր տալիս եւ նոր ժամանակներին առնչուող հարցեր քննարկել։ Դէպքերին մասնակցել են ժողովրդական մասսաները. նրանք զայրացել եւ ապստամբել են[17]։ Ինչեւիցէ, Շանթը, պատմական դէպքերն ազդակ ունենալով, ստեղծել է պայմանական

միջավայրը, որտեղ դրսեւորուել են ինչպէս հասարակական կեանքի, այնպէս էլ զուտ մարդու, իբրեւ բանական արարածի, վերաբերեալ գրողի բարոյափիլիսոփայական հայեացքները:

Անի քաղաքի վերնախաւի՝ ազնուականութեան եւ հարուստ առեւտրականների կողմից, հանգամանօրէն կազմակերպւում է համաժողովրդական ապստամբութիւն՝ թուրքական բռնակալութեան դէմ: Պահլաւունի իշխանը հարիւրի չափ ընտիր զինուորներ ունի. մարզպետն ու միւսներն էլ ունեն: Իշխանը համոզուած է յաղթանակի մէջ, եթէ իրենք կարողանան ոտքի հանել արհեստաւորներին: Այստեղ եւս հաշուարկները ճիշտ են արուած: Պահլաւունու խորհրդով էմիրի՝ հարկերի վերջին յաւելումները «դանակը ոսկորին» են հասցրել. դժգոհութիւնը հասել է գագաթնակէտին: Իշխանը խորհուրդներով հանգըստացնում է գագանին. «ժողովուրդ ըսածդ միշտ կը տրտնջայ. միշտ ալ բեռը չալակը առած քաշ կու տայ. այդպէս է անոր հնադարեան սովորութիւնը» (223-224): Հետեւապէս, միանգամայն իրաւացի է էմիրը. առանձնապէս չի կարելի կարեւորութիւն տալ ժողովրդին գրգռող մի քանի «մանր-մունր արշաւանքներին», առաւել եւս՝ տուրքերի յաւելումներին: Ամէն ինչ հին կարգով է ընթանալու, եւ իշխանն ամէն կերպ օժանդակելու է «իրենից ուժեղին»: Պահլաւունին, վերափոխման համար ներսում հող ստեղծելուց բացի, այդ ամէնն «ապահովագրում է» եւ դրսի ոյժերով: Նա որոշում է արքայավայել նուէրով ներկայանալ վրաց Դաւիթ թագաւորին՝ զօրք ստանալու ակնկալիքով:

Նպատակը մէկն է. ինչ գնով էլ ուզում է լինի՝ ազատել քաղաքը թուրքերից. «ազատուինք սա գարշելի լուծէն. ազատ չունչ քաշենք մենք, քիչ մը ազատ չունչ քաշէ եւ մեր խեղճ ժողովուրդը. նորէն վերջապէս ամեն ինչ անցնի հայու ձեռքը: Հերի՛ք է» (225):

Քաղաքական վերափոխումն իրականանում է: Ժողովրդի ճակատագրում տեղի է ունենում արմատական վերափոխում: Նա ազատւում է այլազգի բռնակալի լծից: Այդ պայքարի ընթացքում միասնական էին ժողովրդի բոլոր խաւերը: Ոյժի նպատակամէտ գործադրումը տապալում է էմիրի ստեղծած աւանդական կարգը, հրի ճարակ է դարձնում նրա պալատը: Այլեւս անգօր է թուրք աստիճանաւորը՝ իր գայթակղիչ խոստումներով. ոչ ոք պարիսպները պաշտպանելու ո՛չ ոյժը եւ ո՛չ էլ ցանկութիւնն ունի: Կործանւում է բռնակալի որջը:

Թւում է՝ ամէն ինչ հանդարտուելու է, եւ բոլորովին անտեղի են խլրտումները: Սակայն, դէպքերի ընթացքը ցոյց է տալիս, որ արթնացած բնազդներն այդքան հեշտութեամբ տեղի չեն տալիս: Ազատագրական չարժումը, որն հիմքում տնտեսական միտումներ եւս ունէր, վերջին հաշուով յանգում է սոցիալականի: Այս վերափոխման նպատակը անհատի ազատութեան խնդիրն է: Եթէ առաջին աստիճանում

բոլորի նպատակները գրեթէ համընկնում էին հիմնական խնդրում, թէ՝ Անին պէտք էր ազատագրել օտարի լծից, ապա, երկրորդ աստիճանում, առաւել սուր են արտայայտւում անհատական ցանկութիւնները: Եւ շատ յաճախ անհատների նպատակները չեն համընկնում ընդհանուր նպատակին: Դրանք կարող են եւ հակադրուել[18]: Դեռեւս առաջին արարում, Շանթը առանձնացնում է մարդ-անհատի՝ իբրեւ առանձին կենսաբանական էակի, ինքնապաշտպանական հակումները: Ամենատարբեր կարգի մարդիկ կարեւորում են իրենց անձնական-անհատական նպատակները եւ յետոյ նոր միայն հասարակականը:

Ստեղծւում է յաւերժական հակադրամիասնութիւն: Մարդը ձգտում է իդէալին՝ անհատական որակների չնորհիւ փորձելով միաւորել երկրային կեանքն իր ամենատարբեր արտայայտման կապերի մէջ, իսկ «եսը» ամէն կերպ խոչընդոտում է դրան: Մարդկային բնոյթը երկակի է: Թէ ինչպիսի՛ որակներ են գերիշխում նրա էութեան մէջ, ըստ այդմ էլ որոշւում են տուեալ անհատի հոգեւոր-բարոյական նկարագրի սահմանները:

Առաջին արարում աստիճանաբար ձեւաւորուող հանգոյցի թելերը տարածւում են յաջորդ տեսարաններում: Սկզբնական դժգոհութիւնն աշխատաւորների մէջ դառնում է առաւել հետեւողական ու հաստատուն:

Համեմատաբար տարեց սերունդն աւանդական կարգ ու կանոնի պահապանն է: Նա մշտապէս կռում է նախահայրերի՝ կռանը սալին զարկելու սովորոյթին: Դրա խորհուրդը բաւականին մեծ է, եւ նոր սերընդին ժամանակ է պէտք այդ ամէնը սեփական կենսափորձով ճշտելու համար: Հարճի՝ Արտաւազդին ազատագրուած տեսնելու ցանկութիւնը Պառաւ ծառային սարսափեցնում է. «Թող, աղջի՛կ, թո՛ղ, դեռ շատ հեռու է աշխարհքի վերջը» (229): Տարեց սերնդի յիշողութեան մէջ, Արտաւազդը չար ոյժի մարմնացում է, որ պիտի յայտնուի եւ աւերի աշխարհը: Այս պարագայում էլ Շանթը հարցն առնչում է կեանքի կոնկրետ ձեւերին՝ շրջանցելով միֆը: Դարբինը կեանքի անհաւասարութեան հիմքում ընդգծում է սոցիալական ծանր կացութիւնը, որի մէջ յայտնուել են ինքն ու իր նմանները: Նա համոզուած է, որ անհրաժեշտ է գնալ Նաղաշի գաղափարների յետեւից, դրանք իրականութեան վերածել: Այդպէս է մտածում երիտասարդ սերունդը: Այդպէս է մտածում Հարճը, բոլոր նրանք, ովքեր աւելի հեչտութեամբ են տրւում գգացմունքներին եւ իրենց ճգտումների քուրայում հասնում են գրեթէ էյֆորիայի: Դարբինը համոզուած է Նաղաշ գաղափարախօսի ճշմարտութեան մէջ. «Անիծուած են այս աշխարհքի բոլոր կարգերը» (232):

Որպէսզի ասելիքն ամբողջական լինի, Նաղաշի կողմնակիցները նորանոր մտքերով ամբողջացնում են նրա ճառերը. Արտաւազդը քանդելու է ո՛չ Աստծոյ արարած, այլ մարդու ստեղծած աշխարհը՝ «կողոպուտի ու բռնութեան ու գողերու աշխարհը»: Եւ, ընդհանրապէս, այդ պայքարն ուղղուած է լինելու հասարակական օրգանիզմը կարգաւորող ինստիտուտների դէմ. «մի՛ աշխատիք ուրիշի հաշուին, ձեր աշխատանքը մի՛ տաք ուրիշին. ո՛չ հարկ տուէք, ո՛չ տուրք, ո՛չ մաքս, ո՛չ տասանորդ. մի՛ թողնէք, որ կողոպտեն ձեզի. ձեր կռանները իջեցուցէք անոնց գլխուն, որոնք իրենց ձեռքը կ'երկարեն ձեր աշխատանքին» (234):

Ակնյայտ է, որ նման դէպքում «ըստ բնութեան» ապրելու հակումները, կամ գիջումները՝ բնութեանը, յղի են ամենածանր հետեւանքներով: Ջէ՞ որ մարդու ու հասարակութեան գոյութեան երկարատեւ ընթացքը տանում է բնութիւնից վեր ճանապարհով. ամէն մի գիջում բնութեանը, նշանակում է գիջում բնազդներին:

Այստեղ էլ միօրինակ ու պարզունակ չէ դրամատուրգը: Հասարակական օրգանիզմը գոյատեւել է, քանի որ եղել են միմեանց հակադիր ու հաւասարակշռող ոյժեր: Ջգացմունքով առաջնորդուելու, «ազատ, հաւասար, արդար» ապրելու մղումներ ունեցել են նաեւ նախորդ սերունդները, մասնաւորապէս՝ հեթանոս հայերը, իսկ նրանց բարի Արտաւազդը այսուամենայնիւ չկարողացաւ այդ աշխարհը փրկել չարիքից եւ կործանուեց: Անցած էտապ դարձաւ հայ հեթանոս ժամանակը: Դրան փոխարինեց մի նոր ժամանակ, եւ ժողովրդի յիշողութեան մէջ արդէն ի յայտ եկած եւ ընդհանուր կարգը աւերած միջնադարեան հերոսը վերածուեց չար ոյժի:

Եւ, ահա, աւագ սերունդը, որպէս նախընթաց կենսափորձի, բարոյա-էթիկական պատկերացումների պահապանի, հակադրւում է Արտաւազդի՝ որպէս փրկարար ոյժի գաղափարին: Ջուլհակը, որ քաղաքի «խեղճ ու անճարո» մարդկանցից է, շատ է տեսել ծանր օրեր եւ լաւ է սերտել «ուժեղներուն բարկութիւնը, հարուստներուն խստութիւնը ու թուրքերուն գազանութիւնը»: Նա երեւոյթները կշռում է մտքի լծակով. «Դուք բոլորդ ձեր Նաղաշի տաք խօսքերուն կը հաւատաք, իսկ ես իմ պաղ տեսածիս ու պաղ ապրածիս» (234): Այս գործող անձը սառը բանականութեամբ առաջնորդուելու մղում-պահանջը լծորդում է ժողովրդի դարերի փորձառութեանը: Ինչպէ՞ս կարելի է սալին չիջեցնել կռանն՝ ամրացնելու Արտաւազդի չղթաները, եթէ նրա վրայ հօր անէծքը կայ, «մեր հայրերու անէծքը» (234): Վերջապէս, Ջուլհակն իր իրատեսութիւնը հաստատում է կոնկրետ փաստարկներով. «կայ հարուստ, կայ աղքատ. ուժեղը կայ, խեղճը կայ, ես ու դո՞ւն պիտի փոխենք աշխարհքի կարգը» (232): Կենսափորձը, իր ապրածն ու տեսածը հիմք են տուել նրան հաւասարակշիռ ենթադրութիւնների.

բնութեան մէջ ոչինչ չի կարող լինել միատեսակ ու առաւել եւս՝ իր արտաքին ու ներքին որակներով հաւասար: Ուժեղի եւ տկարի միջեւ մշտապէս կան եւ լինելու են հակասութիւններ, քանի որ նրանք՝ բնութեան կողմից տրուած շնորհների միջոցով, վերջին հաշուով, հասարակութեան մէջ գրաւում են իրենց տեղը. «կայ հարուստ եւ աղքատ»: Եւ, յանկարծ, մի զարկով փորձել վերացնել աշխարհքի «անիծուած» կարգերը, ընդհանուր հաւասարութիւն ստեղծելու միտումով, շատ տարօրինակ ու անիրականանալի է թւում Ջուլհակին: Ջէ՞ որ այն՝ ինչ հասել է նոր ժամանակներին, «կշռուել» է բազում անգամներ: Եւ հիմա, այդ ամէնը չափել մի սերնդի ենթակայական համոզմունքներով, միամտութիւն է՝ «ես ու դու՞ն պիտի փոխենք աշխարհքի կարգը»:

Հարցադրումների շրջագիծն աստիճանաբար ընդլայնւում է: Աշխատաւորի վարանոտ հաւաստիացումները հիմնաւորւում են Դարբնի հօր ունեցած համոզմունքներով: Այստեղ արդէն անառարկելի է սերունդներին փոխանցուած կենսափորձի, իմաստութեան գիտակցումը. «առաջ պապս էր. վերջը հայրս, վերջը ես, հիմա էլ Աւագս»: Նրանք բոլորը դարբիններ են եւ ամէն կիրակմուտք, աւանդական սովորութեամբ, կռանի հարուածներով ամրացնում են Արտաւազդի չղթաները: Եւ այդ աւանդական ծէսի մէջ, նա մեծ խորհուրդ է տեսնում. «Մենք ենք պահողը աշխարհքը իր սիւներուն վրայ. մենք ենք որ չղթաներու տակ կը պահենք անհնազանդ որդին, այն ըմբոստ հոգին, որ ճկուիլ չուզեր Աստծու կամքին» (235): Ակնյայտօրէն, այս գաղափարները զուգակցւում են Հին Աստուածների վանահօր պահանջ-յորդորներին: Դրանք մարդկային զգացմունքներն ու կրքերը բանականութեանը ենթարկելու պահանջներն են, որին հասել են նախնիները՝ երկար ժամանակի ընթացքում:

Սակայն, սա եւս Շանթին վերջնական չի թւում: Նրան անհրաժեշտ են միջի այլաբանական պատկերներով թափանցել երեւոյթների խորքը՝ սեփական մտայղացման հիմքերը բացապարզելու նպատակով: Եւ, այստեղ, անխուսափելի է դառնում գեղարուեստական պայմանականութեան ներմուծումը. հակառակ դէպքում դրամայի ծաւալը կը կրկնապատկուէր:

Առաջին արարի 5րդ եւ 6րդ պատկերները հանքախորշում ներկայացնում են թզուկներին եւ կեանքի Դեւին: Այլ կերպ՝ գործողութիւնը երկրի ընդերքում է կատարւում: Այն խորհրդանշում է երկրի, բնութեան հիմքը: Իրենց «աշխատանքով», այդ էակները սնում են կեանքի գոյութեան բոլոր ձեւերը: Նրանք են «ակը կենդանական», հետեւապէս՝ իրենց բնոյթով են պայմանաւորում ամէն կարգի էակների գոյակերպը:

Հասարակական կեանքի, անհատի վրայ տարածելով բնական-կենսաբանական օրէնքների գարգացումը, հասարակութիւնը դիտելով իբրեւ ամբողջական օրգանիզմ, Շանթը կենսակերպի հիմքում դնում է կեանքն առաջ տանող ոյժը: Բնութիւնը զարգացման, առաջընթացի ուրիշ լծակ չի ստեղծել: Համընդհանուր չարժումը ներքին էներգիա է ստանում հենց բնութիւնից. «Ե՛ս եմ կռուի չունչն ու ոգին, կռուին, թափին ու մրցանքին. հի՛մքը ամեն արարչութեան, գարգացումի ու վարչութեան, բաղդի, տիրման, վայելչութեան» (241):

Ստացւում է, որ կեանքի Դեւը խորհրդանշում է էվոլիւցիոն առաջընթացի հիմնական, գերակայ սկզբունքը՝ *գոյութեան կռիւը*: Եւ մարդը, իբրեւ կենդանական աշխարհի ներկայացուցիչ, ենթակայ է այս գերագոյն սկզբունքին: Նրա կեցութիւնը ձեւաւորուել եւ ձեւաւորւում է բնութեան նախնական կերպերին մօտ սկզբունքներով: Թզուկների նոր սերունդը գոյութեան կռիւը թեժացնում է ամենաժամանակակից մեթոդներով. «Երկաթ տանք մարդուն. մարդիկ արթուն ... դարբնեն սուրը պողպատի, *կարմիր արիւնը վոռիի*» (239): Հնադարեան թզուկներն իրենց գործելակերպով երբեք էլ չեն կանխորոշում դէպքերի ընթացքը: Նրանք երեւոյթները փաստում են իրենց առկայութեան մէջ: Արիւնը թափելը պարտադիր է եւ անխուսափելի: Այլ կերպ անհնար է տապալել իշխանութիւնը, որ հաստատուել է բռնի ոյժով. «Հայրս զարկաւ սուրը, բացաւ անոր դռները ու ըսաւ՝ «ես եմ տէրը»:

Եթէ էվոլիւցիոն զարգացման ճանապարհին մի ցեղը արգելք է հանդիսանում մեկ ուրիշի բարձրացմանը, նրա առաջընթացին, ապա հարցերը վճռւում են սրով: Այստեղ եւս գոյութեան կռիւն իր լրիւ իրաւունքների մէջ է:

Երկրորդ արարի առաջին տեսարանում թուրքերի յուսահատ դիմակայութիւնն է ներկայացւում: Էմիրը որքան էլ յամառ ու ինքնավստահ լինի «սեփականած» Անին իր ձեռքում պահելու որոշման մէջ, այսուամենայնիւ նա չի կարող այդ նպատակը իրագործուած տեսնել: Նա այդ երկրի պատմութեան, քաղաքի, նրա պարիսպների իրական տէրը չէ: Սրանով իրականում, Շանթի ընկալմամբ, աւարտւում է վերափոխութիւնը: Սա զարգացման առարկայական ընթացք է: Դրամայի վերջում նորից դրամատուրգն իր հերոսներին յանգեցնելու է այս կէտին: Իսկ առայժմ նրա նպատակը *էվոլիւցիոն զարգացման եւ դրանից պարտադրուած վերափոխումների հակասութիւնները բացայայտելն է*, եւ այստեղ արդէն յեղափոխութիւն կոչուածը ո՛չ թէ կառուցողական, այլ քանդիչ դեր է խաղում, որովհետեւ այն ուղղուած է *ազգային պետականութեան* կարգի դէմ: Աւերածութիւններն ընդհանուր հասարակական օրգանիզմի զարգացման խոչընդոտ են հանդիսանում:

Պահլաւունի իշխանը, որ ապստամբութեան կազմակերպիչն է ու ոգին, յանկարծ «դառնում» է դէպքերի առաջն առնող ոյժ: Այդ պահից սկսած, քաղաքական շարժառիթներով են գարգանում իրադարձութիւնները: Թշնամու դէմ տարած յաղթանակը ոգեւորում, գրեթէ աֆեկտային վիճակի է հասցնում ամբոխին: Ցորդում են գգացմունքները: Ազատութեանը միտուող բնագդները դառնում են աւելի ու աւելի տարածուն: Շիկացած կրքերը չեն հանդարտւում. դրանք եւք են փնտռում:

Իշխանի յանճնարարականով, մայր եկեղեցու սրբազանը շնորհաւորում է ժողովրդին թուրքի լծից ազատագրուելու համար եւ առաջարկում, որ ամէն մարդ հարկ է, որ անցնի իր սուրբ գործին գլուխը, որ «բարձրացուցեր է ու կը բարձրացրնէ մեր տունն ու ընտանիքը, մեր քաղաքն ու մեր համբաւը» (248): Սակայն, միեւնոյնն է՝ օրերով անգործ ման գալը բազմութեան սրտումն է, եւ գործի գնալիս նրանք դժուարանում են՝ «Երկուշաբթի առտու կարդալու գացող մոնթերուն պէս» (248): Հարիւրաւոր գինուած մարդիկ չարագոյժ դէմքերով լցուել են փողոցները: Ռէալ վտանգ կայ հարուստ թաղերի վրայ յարձակումների: Աչոտ Տայեցին զգուշացնում է Իշխանին՝ սպաստւելիք անկանխատեսելի իրադարձութիւններից, քանի որ «ամբոխը միշտ է անասունի պէս, իսկ երբ յուզուած է՝ կը դառնայ գազան: Խելացի բան չէ այդ գազանը գրգռելը» (250):

Իշխան Պահլաւունին աւելի վճռականօրէն է տրամադրուած. հարկ է գործել՝ հանգամանքները նկատի առնելով: Այն պահին, երբ անհրաժեշտ էր գազանը դուրս հանել՝ թշնամու վրայ քչելու համար, ազնուական դասն առաւել պատրաստակամ էր: Իսկ երբ գործն աւարտուած է, եւ գազանը նորից պէտք է «քառագեղը» դնել, նրանք դարձել են անհամարձակ: Իշխանը չի երկմտում. պաշտօնի եւ պարտականութեան բերումով իր խնդիրն է համարում կարգը վերականգնելը:

Սակայն, դէպքերի զարգացումը շատ աւելի արագ է ընթանում: Մինչ մունետիկները փողոցներում կը կարդային Իշխանի հրամանը՝ երթերն արգելելու մասին, նոր կազմուած կառավարութեան ներկայացուցիչները, Ներկարարի գլխաւորութեամբ, վերջնագիր են ներկայացնում Իշխանին:

Այլ խօսքով՝ եկել են ազատութեան օրերը, եւ իշխանական դասը, որ «տուրք է դրել ժողովրդի վզին», պէտք է հեռանայ ասպարէզից՝ տեղը ժողովրդական ուժերին թողնելով: Հաւաքական ոյժերի նպատակը ստեղծուած կարգի մերժումն է: Ժողովրդի մէջ դեռեւս թարմ է Նաղաշ Նաթանի կարեւոր եզրայանգումը՝ «անիծուած են այս աշխարհի բոլոր կարգերը»: Ցեղափոխութեան կամ վերափոխումների

այս ձեւը, Շանթի ընկալմամբ, կրում է բացառապէս կործանարարքաոսային բնոյթ, որի նպատակը, ժողովրդական զայրոյթի, բռնի ոյժի չնորհիւ, քաղաքական վերափոխումների ընթացքում սեփական նիւթական պահանջմունքների բաւարարումն է:

Դէպքերի նման զարգացումը վատնում է հասարակական օրգանիզմի գոյատեւման համար ժամանակի ընթացքում, տարբեր սերունդների կողմից ստեղծած միջոցները:

Աչոտ Տայեցին լաւ է պատկերացնում ահագնացող վտանգը. «Սարսափելի փոթորիկ է փրթելու: Պիտի կորչի որքա՜ն, որքա՜ն աշխատանք, ինչքա՜ն հարստութիւն, ինչքան ջա՜նք ու ծրագիր...» (253):

Համընդհանուր ոգեւորութեան մէջ, Դարբինն առայժմ խօսում է «հանուրի» չահերից, որպէսզի գրկուածներն ու անիրաւուածները «բարելաւեն» իրենց վիճակը: Առաջնորդը յայտարարում է յաջորդ ճշմարտութիւնը. «Անիի քաղաքացիներ՝ ինչ որ ունին այս մարդիկը, իրենց բոլոր դիզած ոսկին, ինչքն ու կալուած, իրենց բոլոր ստացուածքը, բոլո՛րը ձե՛րն է...: Պէտք է ե՛տ առնել անոնց ձեռքէն, պէտք է ե՛տ խլել մեր աշխատանքը» (258): Դարբինը վերածւում է կատարեալ բռնապետի՝ ամէն ինչին տիրելու, ամէն ինչի իշխելու, ամէն ինչ ունենալու բնազդով:

Երրորդ արարում, թերեւս աւելի քան միւսներում, առօրէական տեսարաններին յաջորդում են խորհրդանշական, նաեւ ենթատեքստով հարուստ պատկերներ: Դրամատուրգը երեւոյթների մէջ տեւականը գտնելու նպատակն ունի:

Իշխանութեան վերին օղակներից դուրս մնացած մարդիկ ամբողջացնում են «վիրաւորուածների», «չգնահատուածների» գունդը, որտեղ ներքին պայման է դրւում՝ յաջողութեան, այսինքն՝ Անիի կառավարութիւնը Ներկարարի ձեռքն անցնելու դէպքում, վերջինս կը չարժուի «մերժուածների» սրտով ու բարեկամութեամբ:

Երկի գաղափարական բովանդակութեան համար խիստ կարեւոր է Հարճի եւ Նաղաշի երկխօսութեան տեսարանը: Ընթերցող-հանդիսատեսը բաւականին քիչ է տեսնում այս հերոսին: Նրա խօսքերի, քարոզի իմաստը պարզւում է աւելի չրջապատի մարդկանց բացատրութիւնների, ասելիքի մէջ: Եթէ առաջին արարում այս գործող անձը համոզուած էր, որ Արտաւազդը կռիւ էր եւ վրիժառութեան մարմնացում, ապա երրորդ արարում էականօրէն փոխուել են նրա հայեացքները: Նաղաշը չի կարող ապրել այդ իշխանութեան հովանու տակ, որովհետեւ նրա քարոզած ճշմարտութիւնը, որ հիմքում խիստ արմատական էր («անիծուած են բոլոր կարգերը»), չիրականացաւ եւ սխալ էր: Հետեւապէս Արտաւազդի, իբրեւ կործանող ոյժի գաղափարը, ոչ միայն չի կարող բարելաւել անանկների ու խեղճերի վիճակը, այլեւ կա-

րող է ծանրացնել դրութիւնը: Հարճի հետ գրոյցի ընթացքում, Նաղաշը չի կարող խոստովանել, որ իրականում Արտաւազդի յայտնութիւնը, իբրեւ կործանող ոյժ, արդէն կատարուել է: Արդիւնքում, ստացուել է մի նոր բռնապետութիւն, միայն՝ այն տարբերութեամբ, որ այսօր, մարդիկ ճնշւում են իրենց երէկուայ ընկերներից: Նաղաշը հասկացաւ, որ պետականութեան դէմ մղուող պայքարը, հիմքում ծանր հետեւանքներ ունի: Ազատութիւնն ամէն ինչից վեր՝ գոյութիւն չունի, գոնէ առայժմ: Մարդկային բնազդները, որոնք բանտուած են, եթէ ազատ արձակուեն, ապա կարող են ծանր հետեւանքներ ունենալ: Մարդն էութեամբ դեռեւս չի հասել այն աստիճանին, որ կարողանայ վերլուծել իրենից թոյլի վրայ եւ վեր կանգնել եսասիրական բնազդներից:

Շանթն այս պատկերով մէկ այլ կարեւոր եզրայանգում է կատարում. հեթանոս ժամանակների Արտաւազդն այլեւս անցեալ է: Իբրեւ ազատութեան խորհրդանիշ բանտուած գաղափարներն, իրականութեան մէջ, կործանել են իրենք իրենց: Նոյնիսկ պատահական չէ, որ Հարճը՝ ամէնից աւելի զգացմունքներին տրուող հերոսուհին, ամէն կերպ խնդրում է Նաղաշին «դառնալ» Արտաւազդը՝ քանդելու համար: «Եղիր ի՛նքդ Արտաւազդը, եղիր հի՛ն Արտաւազդը, եղիր ո՛չ Արտաւազդը» (268): Հարճը որոշակիօրէն խորհրդանշում է հեթանոս ժամանակը: Նրա բացարձակ ազատութեան միտուող ձգտումներն իրականութիւն չէին կարող դառնալ:

Ժողովրդի իմաստութիւնը կռանով ամրացրեց Արտաւազդի չղթաները յետագայ դարերում, քանի որ նրա յայտնութիւնը ծանր հետեւանքով էր յղի: Հետեւապէս, Շանթը ո՛չ թէ փորձել է ժողովրդի իմաստութեանը հակառակ սեփական տեսութիւն ստեղծել, ինչպէս ենթադրում է Փանոսեանը[19], այլ բացայայտում է միֆի փիլիսոփայական ենթատեքստը: Տեւական ժամանակի մէջ, այն փոփոխութեան է ենթարկուել: Ժողովրդի իմաստութիւնը Արտաւազդին փակելու էր քարայրում, քանի որ, նրա յայտնութեամբ, մարդը ձերբազատւում է ամէն կարգի պարտականութիւններից եւ դրսեւորում է կենդանական հակումները: Ժամանակ է պէտք, որ մարդկային ցեղը գաղափարն ըստ էութեան գործադրել կարողանայ:

Նաղաշը եւս իր մէջ կենտրոնացնում է տարբեր ժամանակները: Այն պահին, երբ մանուկ էր վիշտը եւ բողոքը՝ երեխայ, նա եւս, ինչպէս Հարճը, համոզուած էր, որ Արտաւազդը ժրէժի մարմնացումն է: Ժամանակ է պէտք, որպէսզի հասկանան, որ «քանդելը եռուն արեան ու խակ մտքի պահանջ է...: Հասած հոգին, հասուն դժգոհութիւնը նորել կը տենչայ, չինել, ստեղծել» (267):

Հարճը, թէեւ տարբեր ժամանակների մարմնաւորում է, սակայն չունի Նաղաշի գաղափարական կշիռը: Նրա մաքառումներն անձնա-

կան նպատակներ են հետապնդում: Նրան ի՞նչ՝ թէ Նաղաշը ապագայի մէջ է փնտռում լոյսը. նրան այսօր է պէտք այդ ազատութիւնը, հենց հիմա: Նա լաւ է ընորոշում իր երբեմնի իդէալ հերոսին, որն էլ դառնում է երեւոյթի ներքին հակասութեան արտայայտութիւնը. «Ուրիշի ազատութիւնը քո չղթան է», - ասում է Հարճը Նաղաշին (288): Հերոսուհու դիտարկումը կապուած է ժամանակակցի էութեանը, եւ առանձին անհատի ազատութեան ձգտումը հակադիր է հերոսի՝ հանուրի համար իրականացուող ջանքերին:

Եւ քանի որ հերոսը լաւ գիտէ մարդու բնոյթը, որ երկակի է, որտեղ թերեւս աւելի արարածին բնորոշ յատկութիւններ կան, քան արարչին, ուրեմն շատ երկար ու դժուարին է անցնելիք ճանապարհը: Աստուած դեռեւս չի աւարտել իր ստեղծագործութիւնը. «դուք դեռ մարդու մէկ նախնական նմուշն էք միայն, Աստծու առաջին փորձերը անասունէն մարդը ստեղծելու» (270):

Ակնյայտ է Նիցշէի փիլիսոփայութեան ազդեցութիւնը Շանթի դրամայի վրայ: Նոյնիսկ հերոսի արտայայտուելու կերպը՝ իրրեւ քարոզիչ, սեփական դիտարկումների մէջ վստահ ու անառարկելի, առանձին պատկերների ընդհանրութեան առումով յիշեցնում են Զրադաշտին: Եւ ինչպէս Զրադաշտը, այնպէս էլ Նաղաշը ճշմարտութեան համար պայքարող մարտիկի խորհրդանիշն է: Նա ապագայի մարդն է, որ հեռուում է թողել մարդ-արարածի ժամանակն իր կեցուածքով ու արատներով: Նա մեծ քարոզիչ է, մարդկութեան դաստիարակը:

Նիցշէի փիլիսոփայութիւնը յաճախ ստանում է դիցաբանականի, առասպելականի արտայայտութիւն: Այն յաճախ կառուցւում է խօսքի հատուածների եւ աֆորիզմների բեկորներից: Դրանք դրսեւորւում են որպէս բազմաշերտ խորհրդանիշեր:

Եւ ինչպէս Զրադաշտն իրենից խուսափող պատանուն է ասում, թէ «մենք ամէնից շատ անտես ձեռքերից ենք տանջւում ու թեքւում»[20], այնպէս էլ Նաղաշը հիմնական բռնակալին անտեսանելի է համարում. «դուք կը սիրէք դուրսի բռնակալները, որոնց դէմ կարելի է բողոքել, աղմըկել, կրճտել ու դաւել: Բայց ես կ'ըսեմ ձեզի. Հո՛ն է, հո՛ն, ձեր հոգիներուն թաւ խաւարին մէջ թափառող այն հզօր, այն անզուսպ բռնակալը» (270):

Իսկ Նիցշէի մօտ, «դէպի ազատ բարձունքներն ես ձգտում դու, աստղերի ծարաւ քո հոգին: Սակայն քո վատ հակումներն էլ են ծարաւում ազատութեան: Քո վայրենի շները ձգտում են ազատուել. նրանք հաչում են հաճոյքից իրենց նկուղում, երբ քո ոգին բոլոր բանտերի դռները բացել է ջանում»[21], - ասում է Զրադաշտը պատանուն:

Շանթը տրոհում է մարդու էութիւնը նիւթականի (բնութեան) եւ աննիւթականի (ոգու): Դրանց միջեւ եղած պայքարը ներկայացւում է

կեանքի Դեւի եւ չղթայակապ Արտաւազդի կերպարներով։ Դրամատուրգը կիրառելով իր համար արդէն նախընտրած արտայայտման ձեւը, հայելային շրջուած արտացոլքի ճանապարհով հասնում է ընդհանրացումների։ Իրականում, ինչպէս մարմինն ու հոգին, նիւթականն ու ոչ-նիւթականը մշտապէս հակադրամիասնութիւն են կազմում, նոյնն է կեանքի Դեւի ու Արտաւազդի պարագայում։ Դրանք, իբրեւ հակադիր ոյժեր, խորհրդանշում են մարդ արարածի էութեան հակադիր, սակայն միասնական կողմերը։ Սակայն Շանթի համար ամէն ինչ պարզունակ չէ։ Ամէն ինչ յարաբերական է. ո՞րն է բարին եւ ո՞րը՝ չարը։ Կեանքի Դեւը, որ բնութիւնն է, նրա արտայայտման, զարգացման ձեւերի ամբողջութիւնը, գոյութեան պայքարն ընդհանրապէս, հազարամեակների ընթացքում ստեղծելով սեփական առաջընթացի ճանապարհ եւ զարգացման ոյժ, դառնում է - որքան էլ պարադոքսալ է - բարի։ Կեանքի գոյութեան պայքարն է առաջ մղում մարդկութեանը, իսկ Արտաւազդը, որն ագնիւ է, դառնում է չար, քանի որ դրսեւորում է եւ իր վատ հակումները։

Կեանքի Դեւը իրեն երկրի զաւակ է համարում, իսկ Արտաւազդին՝ մարդու որդի։ Բնութիւնը ներառում է եւ մարդու որդուն։ Նրա մղումները թէեւ միշտ վերերկրային են, սակայն նա մշտապէս ենթակայ է բնութեանը. «մարդն էլ հասարակ կենդանի մըն է եւ յաւիտեան հպատակ ինծի» (273)։ Դեւի գայթակղիչ առաջարկները՝ «կեանքի կռուին բոլոր զէնքերը քեզի ու քու հպարտութեանդ, որ ընկճես, տիրես», Արտաւազդը պատասխանում է մերժումով. «Այս չղթաները փշրելու համար պիտի գայ նո՛ր ցեղ ու նո՛ր ձեռքեր։ Քու ձեռքերդ կարող չեն» (274)։ Պատասխանը դիպուկ է, բնութիւնը չի կարող այդ անել։ Ապագայի մէջ, արդէն բնութեան ախտերն իր մէջ յաղթահարածը կը կարողանայ ազատագրուել չղթաներից եւ վերածնուել իբրեւ նոր մարդ։ Այդ նպատակը բաւականին հեռու է եւ, ինչպէս նորօրեայ քարոզիչը՝ Նաղաշն էր ասում, «դեռ երկար, դեռ շատ է երկար այն ճամբան, որ քալէք պիտի» (269)։

Մարդը դեռեւս սեփական բնական էութիւնից ելնելով՝ պատրաստ չէ ազատութեան գաղափարն ընդունել որպէս իրականութիւն։ Աւանդական ընկալմամբ, նա առաջին ամրացնում է Արտաւազդի չղթաները։ «Կը լսուի կռանահարութեան զարկեր, որոնք կը հեծեն կամարներուն տակ. կը շաչեն Արտաւազդի չղթաները. չներու կլանչ» (274)։

Այդ սերունդը, Նիցշէի եւ Շանթի ընկալմամբ, բարի է։ «Հինն է կամենում բարին եւ որ հինը պահպանուի»,- գրում է Նիցշէն[22]։ Եւ պատահական էլ չէ, որ Շանթի դրամայում հինը պահպանող մարդիկ բարի են։ Ըստ Նիցշէի, «մի նոր բան է կամենում ստեղծել Ագնիւը եւ մի նոր առաքինութիւն»[23]։ Նաղաշ Նաթանի, չրջապատում ունեցած

համայքի պատճառներից մէկը, նրա ազնուութիւնն է, իսկ նոր առաքինութեամբ հանդէս գալը գայրոյթ է պատճառում մարդկանց:

Նիցշէի մէկ այլ կարեւոր եզրայանգման ոգով է գարգանում յետագայ գործողութիւնը. «այն չէ սակայն Ագնիւի վտանգը, որ նա բարի կը դառնայ, այլ երբ նա յանդուգն, ծաղրող, ոչնչացնող դառնայ»[24]:

Պարզ է, որ առաջընթացի չափանիշն ու նպատակն այլեւս սոցիալական բնոյթ չունեն, այլ էթիկական: Եթէ հասարակական կարգի փոփոխութեան նպատակը անձնական, նիւթական շահերի պաշտպանութիւնն է, որն անտեսում է ընդհանուր հասարակական օրգանիզմի զարգացումը, ուրեմն վերափոխութիւնը ստանում է կործանող, ոչնչացնող բնոյթ: Քաղաքական կարգը փոխելուն ուղղուած ձեռնարկումները, որոնք անտեսում են զարգացման օրինաչափութիւնները եւ անձնական շահառութեան նպատակներ են հետապնդում, ամբողջութեամբ քանդում են նախկին կապերը եւ հասարակութեանը պատճառում են բարոյական, ծանր վնասներ: Իսկ ամենամեծ եւ հետեւանքներով լուրջ խնդիրն այն է, որ մարդիկ այլեւս չեն ճնշարկւում ընդունուած կարգին եւ օրէնքին:

Փողոցում յայտնւում են խմբեր, զանազան արհեստի աշակերտներ, օգնականներ՝ տաս տարեկանից մինչեւ հասուն տարիք ունեցողները: Ձգտումների մէջ ամբոխը դառնում է աւելի ու աւելի արմատական: Համընդհանուր անկարգութեան մթնոլորտում («Նամարտ է ով երթայ գործի: Նամարտ է ով երթայ գործի»), ծնւում է հաւասարութեան պահանջը:

Հետաքրքիր է Սողոմոնի կերպարը: Նա երիտասարդ է, խիստ նուրբ ու քնքոյշ կազմով, գրեթէ աղջկայ գեղեցկութեամբ. աչքերը վառւում են, ձայնը՝ մշտապէս յուզուած: Նա հանդէս է գալիս որպէս արմատական մարդասէր: Նրա պահանջ-ելոյթներն առնչւում են կոնկրետ ժամանակներին. «Ամենքս կ'աշխատինք, ամէն մէկս մեր տարիքին ու կարողութեան համաձայն, ուրեմն հաւասար ենք ամենքս: Սա յանցաւո՞ր է, որ դեռ տղայ է, կամ ա՞ն, որ դեռ սեփական իր գործը չունի» (278):

Նիցշէի «Ագնիւը» ձեռնարկումներով դառնում է առաւել վճռական, չզիջող ու լպիրշ: Հաւասարութեան քարոզներն անտեսում են դարերով բնութեան կողմից ձեւաւորուած անհաւասարութիւնը: Սողոմոնի իմաստութիւնը, երեւոյթների վերլուծութեան մէջ, պարզունակ է ու չիրականացող: Ամէն մէկի կատարած աշխատանքը բնոյթով տարբեր է: «Ամեն արհեստ ու արուեստ հաւասար հասոյթ չի բերեր ու չի կրնար բերել. եւ նոյն գործը ամէն մարդու ձեռքին մէջ հաւասար արդիւնաբեր չէ»[25],- գրելու էր Շանթը՝ 1923ին Պոսթոնի Հայրենիք ամսագրում տպուած «Անհաւասարութիւնը Ընկերային կեանքին

Մէջ» յօդուածում: Հետեւապէս, ինչպէ՞ս կարելի է ջանասէր եւ ընդունակ աշխատաւորի ձեռքից վերցնել արդիւնքը եւ տալ նուազ աշխատողին կամ չաշխատողին: Այս առումով, «համայնատիրութիւն կամ ստացուածքի հաւասարութիւն ... կը նշանակէ ծոյլերու ու գէշ աշխատողներու թագաւորութիւն»[26], շարունակում է Շանթը: Նմանատիպ երջանիկ համայնատիրական թագաւորութիւն, որտեղ, Շղթայուածքի Սողոմոնի համոզմամբ, ինչ ուզենաս՝ քոնն է («Խանութը մեզի, ապրանքը մեզի, բոլոր չահը մեզի»), հրապարակախօս Շանթի համար «կը նշանակէ լիակատար սանձարձակութիւն եւ կը պահանջէ վայրենի ու նախապատմական մարդուն յատուկ կենցաղ ու հոգեբանութիւն»[27]:

Խիստ կարեւոր են Շղթայուածքի այն դրուագները, երբ հանդիպում են, վերջին անգամ, Նաղաշն ու Իշխանը: Այս հանդիպումն արդէն, միֆի վերաիմաստաւորման ճանապարհով, կատարուել էր կեանքի Դեւի եւ Արտաւազդի միջեւ, եւ ելքը պարզ է: Պահլաւունին պատրաստ է ազատ արձակելու մարգարէին, եթէ վերջինս նախապէս ընդունի առաջարկուող պայմանը: Իշխանը եկել է վերահաստատելու ընդհանուր կարգն ու կանոնը, բայց հոգիների մէջ Նաղաշի ձգած շփոթը կարող է վերացնել հենց ինքը՝ գաղափարախօսը: Ժողովուրդը դարեր շարունակ Արտաւազդին անհնազանդ, մեծամիտ արքայորդի է համարել, «նախանձոտ ու անիծուած գաւակ մը» (288), որ արդար պատիժն է կրում Մասիսի խորքերում: Նրա դուրս գալն Իշխանի համոզմամբ չար սպառնալիք է մարդկութեան համար, «խանգարում կեանքի կարգ ու կանոնին» (288): Հետեւապէս, Նաղաշը պարտաւոր է ասելու այն, ինչ ասել է ժողովուրդը դարեր շարունակ:

Ազատութեան մունետիկը ոչ մի խօսք չունի ասելու: Նա պահանջում է նորից իր ձեռքերը շղթայեն: Նա չի կարող հրաժարուել նուիրական գաղափարից:

Միմեանց են հանդիպադրում Իշխան Պահլաւունին եւ Նաղաշ Նաթանը: Դրանք իրականում մարդկային էութեան հակադիր դրսեւորումներ են եւ փոխկապուած են միմեանց: Մտքի եւ սրտի, հոգու եւ մարմնի յաւերժական հակադրամիասնութիւնն է առաջ մղում կեանքի ընթացքը: Իշխանը բանականութեան կրողն է, որն ընդհանուր քաոսը վերածում է որոշակի կառոյցի: Նաղաշը ոգու, զգացմունքի կրողն է, որը երբեք չի մեռնում եւ յարատեւելու է մարդկութեան հետ: Նրա մղումները, խօսքը «մեր բոլորի հոգիներէն է որ կու գայ, եւ քո՛ւ, եւ քու հոգիէդ, չէ՛ որ դուն ալ մարդ ես»,- ասում է Հարճն Իշխանին (287):

Բանականութիւնը (Իշխանը) փորձում է հոգին (Նաղաշը) ենթարկել իրեն. չէ՞ որ այդ կինը (Հարճը), որ եկել է քեզ (այսինքն՝ Նաղաշի) համար ազատութիւն մուրալու, չատ գեղեցիկ է. կ'ապրես իշխանա-

վայել, վայելքդ անպակաս չի լինելու։ Մարդը միայն մէկ անգամ է ծնուում, վերցրու այն, ինչ բախտը հրամցրել է քեզ, «եթէ չիմար չես» (289)։ Բայց այս եկաթեայ տրամաբանութեան դէմ ըմբոստանում է ոգին՝ գգացմունքի, խղճի կրողը՝ Նաղաշը, որ իրականում ոչ մի բան չի արտասանում, սակայն կամովին նախընտրում է խաչելութիւնը։ Ճիշտ է, նա իրրեւ անհատ չի գտնելու իր բարեկեցութիւնն ու երջանկութիւնը, սակայն ի՛նչ մեծ երջանկութեան գգացողութիւն է նրա համար, որ ինքը լոյս է փնտռում ե՛ւ ուրիշների, ե՛ւ իր համար։

Շանթը հանդիպադրում է տարբեր ժամանակները։ Իշխանը, իրրեւ բանականութեան կրող, խիստ պրագմատիկ է. *այսօր իւրաքանչիւր մարդու տրուող ազատութիւնը չպիտի գերազանցի դիմացինին տրուած ազատութեան սահմանը։* Բնականաբար, անհատականութեան այս խիստ սահմանափակումն անիմաստ կը լինէր առանց պետական կարգի պահանջմունքների։ Կանտի համոզմամբ, մարդկութեանը ներկայացուող հիմնական պահանջը այս էթիկական նպատակն է, որին միտուած է պատմութեան զարգացումը։ Ներդաշնակ հասարակութեան, համընդհանուր միասնութեան, համաձայնութեան հասնելու համար, հասարակութիւնը դեռ երկար պիտի քայլի։ Նպատակը դեռեւս հեռու է, իսկ ճանապարհը՝ բռնութիւններով, աւերներով լի։

Նաղաշի մղումը չի կապւում կոնկրետ ժամանակին կամ պետականութեան գաղափարին։ Հետեւաբար, նպատակը բռնութեան յաղթահարումն է։ Նա կողմ է *վերին ճշմարտութեանը*, մինչդեռ Իշխանը հարկադրուած է նկատի առնել *կեանքի ճշմարտութիւնը*։

Ցաւերժ է բնութիւնը։ Նրա զարգացումն առաջ է ընթանում գոյութեան կռուի պահանջներով։ Առայժմ, ուրիշ, աւելի նպատակայարմար ձեւ չկայ կեցութեան առաջընթացի համար, թէեւ ամէն կերպ մարդու ոգին բնութիւնից վեր է միտուած։ Առայժմ, սակայն, մարդկային ոգին ինքնին հակադիր է նրա եսասիրական էութեանը։ Մարդկութիւնը տարուբերւում է հակասական, իրարահալած ոյժերի դաշտում։ Այս վիճակը, որ ինքնին դրամատիկ բնոյթ ունի, չարունակուելու է այնքան ժամանակ, քանի դեռ մարդկութիւնը չի հասել համընդհանուր ներդաշնակ վիճակի։

Դրամայում արտայայտուած կերպարները բնաւորութիւններ չեն. դրանք այս կամ այն փիլիսոփայական ընկալումների, առանձին պահերին՝ տիպական գծերի համադրութեամբ ստեղծուած գործող անձինք են։ Եւ խօսել նրանց արարքների հոգեբանական հիմնաւորուածութեան մասին՝ պարզապէս սխալ է։ Դրամատուրգը դրա նպատակը չի էլ ունեցել։ Նա գեղարուեստական ինքնատիպ ձեւի մէջ է դրել մարդու եւ հասարակական կեանքի մասին ունեցած բարոյա-փիլիսոփայական գաղափարները։ Այս է պատճառը, որ գործողութիւնը զարգա-

նում է ո՛չ թէ ֆարուլային, այլ գաղափարների զարգացման տրամաբանութեամբ: Հերոսներն աւելի մարդկային բանականութեան, գիտցմունքների, կրքերի խտացում-խորհրդանիշեր են: Եւ եթէ անգամ խօսւում է հոգեբանական կամ բնաւորութեան գծերի բացայայտման վերաբերեալ, ապա Շանթը դրանք եւս ներկայացնում է դրամայի գաղափարին համապատասխան: Բնութեան կողմից տրուած չնորհներն են ձեւաւորում նրանց հոգեբանութիւնը:

Իշխան Պահլաւունին յիսունին մօտ, առոյգ ու խոհուն մարդ է: Բնութիւնից օժտուած է ուժեղ կամքով ու շրջահայեացութեամբ: Նա երբեք չի կարող հանդուրժել օտարի լուծը: Թէեւ էմիրը նրա ձեռքին «խաղալիք էր», «կը դարձնէի ինչպէս ուզէի», սակայն դա չէր կարող գոհացնել նրան, ուստիեւ նա տապալեց բռնակալին: Մեր մեջ թէ ինքը ենթարկուի մի խումբ ռամիկ ու սինլքոր խաւնակիչների: Այլ կերպ, նա ուժեղ է իր համոզութեամբ, խելքով, կազմակերպչական տաղանդով: Հետեւապէս, նա է վարելու երկրի գործերը:

Այս առումով կարեւոր են երկրորդ արարում, երկրորդ տեսարանի վեցերորդ դրուագում, Իշխանի կնոջ՝ Իշխանուհու բնութագրումները: Նա արտայայտւում է իբրեւ կին, իբրեւ մայր, որին անհանգըստացնում է գաւակի ճակատագիրը: Իշխանուհու առաջադրած ճանապարհը լուծելի է զուտ անձնական կեցութեան խաղաղութեան համար, որն ի վերջոյ հնարաւոր էլ չէ անկայուն իրադրութեան պայմաններում: Նա գիտէ, որ ամուսինը քաջ է, բայց ինչո՞ւ նա պիտի ենթարկուի այդ սորուկներին. «Թող ժողովուրդը ինքը գայ իմնայ ոտքերդ քու իմաստութիւնդ ու քու բազուկդ քեզմէ խնդրելու, իսկ եթէ չեն գար ու չեն խնդրեր՝ թող այդ դժբաղդները իրենց ցաւին, իրենց կուրին ու ճաշակին. իրենց արիւնը իրենց գլուխը» (254): Իշխանուհին ներկայացնում է եսասիրութեան միւս երեսը: Թեւերը ծալած նստելն անհնարին է, եթէ դրանք հզօր եւ կարող ձեռքեր են:

Տուեալ պարագայում գրողի համար կարեւորւում են զուտ բնութիւնից տրուած անհատական որակները: Դրանք եւս անհաւասարութիւն ստեղծելու նախապայմաններ են: Ուրիշ մէկը չունի Պահլաւունու առաւելութիւնները, հետեւապէս՝ ենթարկուելու է նրան՝ յանուն համընդհանուր կարգ ու կանոնի:

Հետաքրքիր է վրացի Գնդապետի դիտողութիւնը՝ կապուած Պահլաւունու խօսելաձեւի հետ: Ընթերցողը չգիտէ, թէ Իշխանը վրաց թագաւորի պալատում ի՛նչ կերպ է արտայայտուել, բայց այստեղ՝ Անիում, Գնդապետին դուր չի գալիս Պահլաւունու ինքնավստահ կեցուածքը. «կը տեսնե՞ս խօսուածքը, շեշտը, ինքգինքը պահելը: Մցխեթի պալատին մէջ բոլորովին ուրիշ տեսակ էր: Աքլորը քաջ է իր բունին մէջ» (284): Մարդն արդէն քաղաքի տէրն է եւ ո՛չ այնտեղից հալա-

ծուած մէկը: Նա կարողացել է վերջ դնել անկարգութիւններին եւ դէպքերն ուղղորդել բնական հունով: Պարզ է, որ հոգեբանօրէն այլ մարդ է, եւ դա չի վրիպում վրացի Գնդապետի աչքից: Շանթը ո՛չ թէ հիմնաւորել է այս, այլ պարզապէս նկատել, որ հասարակական դիրքը, որին հասել է Պահլաւունին, իր անձնական որակների չնորհիւ, նրան հոգեբանօրէն այլ մարդ է դարձնում:

Մնացած կերպարները գրեթէ չեն մօտենում երեւոյթների կոնկրետ ձեւերին: Դրանք տիպական են իրենց պայմանականութեան մէջ:

Հայ գրականութեան պատմութեան մէջ, Ի. դարի առաջին քառորդում տեղի ունեցած վերափոխումների վերաբերեալ գեղարուեստական առումով բարձրարժէք երկ է Մաթեւոս Դարբինեանի «Կիկոսը» վիպակը[28]: Սատիրայի հասնող ծաղրով առանձնանում է եւ Երուանդ Օտեանը՝ Հնկեր Փանջունիով: Ի հարկէ, նրանք այլ խնդիրներ էին առաջադրում: Շանթը դասակարգային պայքարը, յեղափոխութիւնը քննում էր փիլիսոփայական-մարդաբանական հայեացքների ընդհանուր լոյսի ներքոյ: Դարաշրջանին բնորոշ հարցերը նա առնչում էր յաւերժական խնդիրներին:

Եւրոպական դրամատուրգիայում թերեւս բելգիացի բանաստեղծ ու դրամատուրգ Էմիլ Վերհարնի (Emile Verhaeren, 1855-1916) *Արշալոյսներ* (*Les aubes*, 1898) դրաման առանձին պատկերներով յիշեցնում է *Շղթայուածը*: Ամբոխը գայրոյթի պահին տապալում է ամէն ինչ: Այստեղ եւս, յեղափոխութեան չարունակութեան կոչերն ու գործելակերպն առկայ են: Ամբոխը ոգեւորութեան պահին վեր է հանում առաջնորդին՝ տրիբուն Էրենիէնին, որպէսզի դրան հետեւի արհամարհանքն ու թշնամութիւնը. «Հիացմունքից եւ էնտուզիազմից անմիջապէս յետոյ թշնամութի՞ւն եւ ատելութի՞ւն»[29], գարմանում է դրամայի հերոսներից կլէրը: Այստեղ եւս, ինչպէս *Շղթայուածքում*, մարդկանց մի մասը կողմնակից է խաղաղութիւն-հանդարտութեանը, միւս մասը՝ կռուի թեժացմանը, բռնութեամբ իրենց ճակատագրին տէր լինելու սկզբունքին: Վերհարնի դրամայում եւս մեծ տեղ է գրաւում պայմանականութիւնը: Դէպքերը տեղի են ունենում «Մեծ Քաղաքում: Սակայն գուտ հոգեբանական բացայայտումների առումով, դրողն առաւել մօտ է ռէալիստական արուեստին ներկայացուող պահանջներին: Էրենիէնը ծանր դրամա է ապրում: Նա կարողանում է կառավարութեան անունից խոստումներով հանդարտացնել չիկացած կրքերը: Յետագայում, իշխանաւորները չեն կատարում խոստումների մի մասը: Մարդիկ այլեւս չեն հաւատում տրիբունին: Նա սպանւում է գործ-

ընկերոջ եւ բարեկամի կողմից: Նման երեւոյթներ կան եւ Շղթայուածքում:

Արշալոյսներում ոգեւորուած ամբոխը տապալում է Իշխանութիւնը ներկայացնող արձանը՝ այն դիտելով որպէս բռնութեան խորհրդանիշ: Վերջում թէեւ դէպքերն ստանում են ողբերգական հանգուցալուծում, սակայն ամէն ինչ աւարտւում է յեղափոխական օպտիմիզմի փառաբանութեամբ:

Շանթը չի ընդունում վերեւից եկած յեղափոխութիւնը: Վերափոխումներն անհրաժեշտ են, սակայն դրանք պէտք է իրականացուեն զարգացման առարկայական օրէնքների հաշուառումով: Հակառակ դէպքում՝ դրանք միայն ժամանակաւոր բնոյթ կարող են կրել:

Տուեալ պարագայում, Վերհարնի դրամայի յիշատակումը մեզ համար կարեւորւում է նրանով, որ Շանթը ծանօթ էր ո՛չ միայն գերմանական դասական փիլիսոփայութեանը, այլեւ եւրոպական գրականութեանը, նրա գեղարուեստական նուաճումներին: Դրանց ստեղծագործաբար իւրացումը ո՛չ թէ ճնշում, այլ առաւել համարձակ էր դարձնում գրողին: Շանթը վերաստեղծում էր գեղարուեստա-փիլիսոփայական ինքնատիպ աշխարհ, որն յենուած էր ինչպէս իր ժողովրդի դարաւոր կենսափորձի, այնպէս էլ համաշխարհային մշակոյթի ճեռքբերումների վրայ:

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Սիմէոն Յակոբեան, «Գեղարուեստական Մտորութիւն», Արեգ (Վիեննա), Յունիս 1922, էջ 358-367:*

[2] *Յակոբ Օշական, Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան, Ութերորդ Հատոր· Արուեստագէտ Սերունդ, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1980, էջ 328:*

[3] *Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիա, Մ· Աբեղեանի Անուան Գրականութեան Ինստիտուտ, Հայ Նոր Գրականութեան Պատմութիւն, Հատոր Հինգերորդ, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1979, էջ 864:*

[4] *Նոյն, էջ 866:*

[5] *Սարգիս Փանոսեան, Լեւոն Շանթ, Երեւան, 1992, էջ 296:*

[6] *Սերգէյ Սարինեան, Լեւոն Շանթ, Երեւան, 1990, էջ 154:*

[7] *Լեւոն Շանթի Երկերը, Հինգերորդ Հատոր· Ընկերաբանական Ու Գրաբանական Հարցեր, Պէյրութ, Տպարան Հայ Ճեմարանի, 1948, էջ 38-39:*

[8] *Նոյն էջ 39:*

[9] *Նոյն, էջ 41:*

[10] *Նոյն:*

[11] *Rodonachalniki Pozitivizma [Պոզիտիւիզմի Նախահայրերը], պրակ 5· Օգիւստ Կոնտ, Սանկտ Պետերբուրգ, 1912, էջ 28:*

[12] *Osnovaniia sotsiologii' [Սոցիոլոգիայի Հիմունքները], տե՛ս՝ Sochineniia G. Spensera [Հ· Սպենսէրի Երկերը], Հատոր 2, Սանկտ Պետերբուրգ, 1898, էջ 284:*

[13]Nitsshche [Friedrich Nietzsche], *Sochineniia v dvukh tomakh* [*Երկեր երկու հատորով*], հատոր 2, *Մոսկուա*, 1990, էջ 8։

[14]*Լեւոն Շանթի Երկերը*, *Երրորդ հատոր. Գեղարուեստական Գրուքիւններ 1909-1921*, *Պէյրութ, Տպարան Հայ Ճեմարանի*, 1947, էջ 270։ *Այսուհետեւ, Շղթայուածքի այս հրատարակութիւնից կատարուած մէջբերումների յղումները կը տրուեն տողում փակագծերի մէջ։ Կատարուած բոլոր ընդգումները մերն են։*

[15]*Պրն Յակոբեան, «Աւ. Իսահակեանը եւ Սո. Զօրեանը «Սասունցի Դաւիթ» էպոսի Համահաւաք Բնագրի Մասին», Լրաբեր Հասարակական Գիտութիւնների, թիւ 8*, 1980, էջ 100-101։

[16]*Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիա, Պատմութեան Ինստիտուտ, Հայ Ժողովրդի Պատմութիւն, հատոր III, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն*, 1976, էջ 526։

[17]*Նոյն*, էջ 525։

[18]«*Ամէն անձ ստիպուած է իր օգուտը, իր վիճակը մտածելու, անոր համար ամենակարեւորը ինքն է, ամէնէն առաջ ի՛ր գոյութիւնը, եւ ոչ՝ ամբողջութիւնը*»,- *յետագայում* 1922*ին գրելու էր Շանթը՝ իր «Ազգութիւնը Հիմք Մարդկային Ընկերութեան» աշխատութեան մէջ- տե՛ս՝ Շանթի Երկերը, հինգերորդ հատոր*, էջ 39։

[19]*Փանոսեան*, էջ 295։

[20]Nitsshche, էջ 30։

[21]*Նոյն*, էջ 31։

[22]*Նոյն*։

[23]*Նոյն*։

[24]*Նոյն*։

[25]*Շանթի Երկերը, հինգերորդ հատոր*, էջ 83։

[26]*Նոյն*, էջ 84։

[27]*Նոյն*, էջ 85։

[28]*Այս վիպակը՝ «Գլուխ Պահող Կիկոսը» խորագրով նախ տպուել է Նորք հանդէսում*, 1926*ին, ապա՝ առանձին գրքով՝ 1929ին։ Այս վիպակի հման վրայ Հայֆիլմը* 1932*ին նկարահանել է համանուն կինոնկար։*

[29]E. Verkharn [Emile Verhaeren], *Izbrannoe* [*Ընտրանի*], *Մոսկուա*, 1955, էջ 494։

THE PROBLEM OF FREEDOM IN LEVON SHANT'S PLAY, 'THE CHAINED ONE' (Summary)

VACHAGAN GRIGORIAN

Levon Shant's play, 'The Chained One' (*Shghtaivatse*) was written in 1918, under the impact of the two Russian Revolutions of 1917. The play takes place in the medieval Armenian capital, Ani, in the 12th century AD. The Armenian prince, Pahlavuni, leading the Armenian masses of the city, brings down the Turkish emir. The political upheaval continues, however, after the expulsion of the foreign ruler. Many of the participants of the revolt, especially those from the lower classes, attempt to continue the struggle to attain social justice. Prince Pahlavuni feels obliged to use force to end the chaos and restore order. Shant uses two different versions of the ancient Armenian myth of Artavazd, mentioned in Classical Armenian literature, to symbolize two contradictory understandings of freedom. The playwright's conclusion is that the concept of freedom can only be realized when future generations can overcome their instincts to rule over and control others. The author of this article draws parallels between Shant's play and *Les aubes* by the Belgian writer, Emile Verhaeren.

ԲԱՐՁՐԱՎԱՆՔԸ՝ ՀԱՑ ՄՏՔԻ ԲԱՐՁՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԸ

ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

Եղեռնի նախօրեակին, 1914ին Պոլսոյ մէջ լոյս տեսած *Մեհեան* գրականութեան եւ արուեստի ամսագիրը արեւմտահայ գեղապաշտ ձգտումներու արտայայտիչը հանդիսացաւ կարճ ատեն մը։ 1915ին պոլսահայ մտաւորականութիւնը անճիտուեցաւ նահատակութեամբ թէ ցրուումով եւ կանգ առաւ արեւմտահայ գրականութեան գեղապաշտ հոսանքը եւ մտքի բարձր ոլորտներու իմացական չարժումը։ Պոլիսը կորսնցուց իր մշակութային հմայքը։

Առաջին Համաշխարհային Պատերազմին վերջակէտ դնող Զինադադարէն (1918) ետք, վերապրող մտաւորականներու եւ գրողներու - Կոստան Զարեան, Յակոբ Օշական, Վահան Թէքէեան - մէկտեղումով Պոլիս, որոնց կը միանան նաեւ Գեղամ Գ. Գավաֆեան, Շահան Ռ. Պէրպէրեան, Պոլիսը կը վերգտնէ հոգեմտաւոր իր դիմագիծը՝ յատկապէս *Բարձրաւանդի* հրատարակութեամբ, 1922 Յունուար ամսուն, իբրեւ «համահայ հանդէս հայ արուեստի եւ մտածմանց»։

Հայ մտքին վերընթաց յառաջացումը - արեւմտեան մտածողութեան հետ քայլ պահելու ձգտումով - եղած է սեւեռակէտը Զարեանի իմացապաշտ հակումով գրական գործունէութեան։ Այս անգամ իր կողքին ունէր փիլիսոփայական խորքով եւ պատրաստութեամբ երկու մտաւորականներ՝ Պէրպէրեան եւ Գավաֆեան. երկուքն ալ Քոլէժ տը Ֆրանսի մէջ Ֆրանսացի իմաստասէր Հանրի Պերկսոնի փիլիսոփայութեան դասընթացքներուն հետեւողներ եղած են։ Օշական եւ Թէքէեան գրականութեան ճամբով, իսկ Զարեան, Պէրպէրեան եւ Գավաֆեան արուեստագիտական եւ մտքի ոլորտները պեղելու ուղղութեամբ *Բարձրաւանդին* կու տան խորասոյզ բովանդակութիւն մը, որ արեւմըտահայ աւանդութիւններով, բայց եւ ժամանակակից մտածողութեամբ սփիւռքահայ գրական մամուլի համար ճանապարհ հարթող մեկնակէտը կը հանդիսանայ։ Հակառակ իր կարճ շրջան մը հրատարակուելուն՝ հինգ թիւ, 1922 Յունուարէն Յունիս, *Բարձրաւանդը* հայ

մտքի եւ գեղարուեստական ճաշակի զարգացման եւ գրական չափանիշերու վերանորոգման տեսակէտով մշակութային շրջադարձ մը կը նշէ: Այդ շրջադարձին հաւատքով, կիրքով եւ երկիւղածութեամբ փարած էր Զարեան, որ ինչպէս *Մեհեանի* հրատարակութեան նախաձեռնութեան մէջ, *Բարձրավանքի* համար եւս առաջնորդողի դեր ստանձնած է: Գրականագէտ Եուրի Խաչատրեան իր կազմած Զարեանի նաւաստմար հատորին մէջ տեղադրած է նաեւ *Բարձրավանքի* առաջին համարի «Առաջադրութիւններ» խորագրուած, բայց անստորագիր խմբագրական առաջնորդող խոհերը՝ այն կռահող հետեւութեամբ, որ ան Զարեանինը կրնայ ըլլալ մտածման եւ ոճի յարակցութեամբ: Մանօթագրութիւններ բաժնին մէջ Խաչատրեան կը նշէ. «Կոստան Զարեանին տարիներ շարունակ հանգիստ չի տուել գրական պարբերական ունենալու գաղափարը: «Մեհեանի» կորուստից յետոյ գրողը իր մէջ տարիներ փայփայում էր հայ գրական-մշակութային կեանքը միաւորող եւ գրական ընդհանուր ընթացքը որոշակի ճանապարհով տանող գրական պարբերականի երազանքը: Եւ ահա, Պոլսում յայտնուած Զարեանը իր շուրջն է համախմբում մի շարք հայ գրողների ու մտաւորականների եւ հիմնադրում է «Բարձրավանք» ամսագիրը: Առաջին համարը լոյս է տեսնում 1922 թուականի Յունուարին: Ամսագրի շապիկին տպուած էին, այբբենական կարգով, հրատարակիչների անունները՝ Գ. Գ. Գավաֆեան, Կոստան Զարեան, Վահան Թէքէեան, Շ. Ռ. Պէրպէրեան, Յ. Օշական: Յետագայ համարներում խմբագրութիւնը յանձնում էր, որ «Բարձրավանքը կը խմբագրեն եւ կը հրատարակեն...» եւ հետեւում էր նոյն անունների շարքը: Երրորդ համարից սկսած ամսագրի շապիկի վրայ պարբերականը որակւում էր իբրեւ «ամսեայ հանդէս հայ արուեստի եւ մտածման»: Այս «մտածում» բառը արեւմտահայերի, նաեւ Կոստան Զարեանի նախասիրած արտայայտութիւններից մէկն էր»[1]:

ԲԱՐՁՐԱՎԱՆՔԻ «ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ»Ը

Բարձրավանքի համար իբրեւ մշակութային առաջադրութիւն ձեւակերպուած գաղափարա-տեսական հենքը *Մեհեանի* հանգանակէն հիմնականօրէն չի տարբերիր, այլ անոր խտացեալ ոգին կ'արտայայտէ:

Արիւնոտ փոթորիկը չէզոքացուցած էր հայ ժողովուրդի միլիոնաւոր զանգուածներուն հետ արեւմտահայ հոգե-մտաւոր սերուցքը,

ամայացնելով հայ մշակոյթի անդաստանը, Բարձրաչափքը առաջին հերթին կ'առաջադրէ թշնամիին եւ աշխարհին կողմէ «ցրուած ոգեւոր ոյժերը» (Ա., 1)[2] մէկտեղել որպէսզի անոնք ստեղծագործ եւ մտաւոր ճիգերու համադրումով գրականութեան եւ արուեստի ճամբով միասնաբար գործեն հայրենիքին համար: Գրականութիւնն է հասարակաց գետինը հայ ժողովուրդի հոգեկան վերականգնումին եւ մտաւոր վերածնունդին նուիրման ուղիին: 1918-20ի անկախ Հայաստանի Հանրապետութեան փլուզումէն ետք, 1920ին հաստատուած Խորհրդային Հայաստանի առաջին խարխափուն տարիներու անորոշութիւններն ու հարցականները տիրական էին 1922ին, երբ Բարձրաչափքը կը հրատարակուէր Պոլիս եւ հայութեան ոգեւոր եւ մտաւոր ոյժերու հայեացքները կ'ուղղէր հայրենիքի տակաւին աղօտ բեւեռին: Հայրենապաշտութեան (Արմէնիզմի) առաջին արտայայտութիւնն էր Զարեհանի նորաստեղծ աշխարհահայեացքին դէպի հայրենիք ուղղուածութիւնը:

Պոլսոյ քաղաքական իրադրութիւններու եւ ազգային անորոշ ճակատագիրի պայմաններուն բերումով Բարձրաչափքի դադրելէն ետք, Զարեհան կը մտադրէ Հայաստան փոխադրուիլ: Խաչատրեան Նաւասարդեանի յառաջաբանին մէջ կը վկայէ. «1922 թուականի աշնանը Կոստան Զարեհանը ընտանիքով տեղափոխւում է Հայաստան եւ հաստատւում է Երեւանում: Նա Հայաստան է վերադառնում երկրի կեանքին լիովին նուիրուելու ու գործելու կամքով ու մտադրութեամբ. «Եկել ենք Հայաստան գիտակցաբար, այս թշուառութեան հետ հաղորդակցուելու համար, այո ասելու նիւթական թշուառութիւններին: Այլապէս Պոլիս էլ չէինք գնայ՝ կը մնայինք Պէօկլիւնի վիլլայի չքեղ բնակարաններում, որ Ֆլորանսի քաղաքապետութիւնը տրամադրած էր հայ բանաստեղծին»[3]:

Արուեստը կրօնական մոլեռանդութենէ վեր համարելով ու զայն «ամէն կրօնքէ վեր դասող» Մեհեանի հանգանակը, Բարձրաչափքի «Առաջադրութիւններ»ով, առաւել կը շեշտէ արուեստին զօրութիւնը, ըստ որուն «արուեստին մէջ որքան կրօնքին՝ կը պատրաստուին հոգիները» (Ա., 1): Հոգիներուն պատրաստութիւնը արուեստով պայմանաւորող սկզբունքը արուեստի իմաստին կու տայ կրօնագգացութեան վեհութիւնը, որ հոգեպաշտական իմացումի վկայութիւնն է, որ Զարեհանի յետագայ արուեստագիտական ուղղութեան առանցքը կը կազմէ: Հայ կեանքին ազնուացումը քաղաքակրթական մակարդակի վրայ հաւաքական ձգտումով կ'իրագործուի եւ անոր ճամբան Բարձ-

րամանքի առաջադրութեամբ եւ Զարեանի հայեցողութեամբ՝ խորհուրդով եւ արուեստով կը յարդարուի։ Բայց առանց կեանքի արուեստըն ու խորհուրդը ներգօրութենէ զուրկ կը մնան։ Այս տեսակէտէն առաջնորդուելով, պէտք է «հզօրացնել ... հայ խորհուրդը եւ արուեստը կեանքով» (Ա., 1)։ Հակառակ այն իրողութեան, որ եւրոպական միտքին ու խորհուրդին հաղորդակից մնացած միտքի սպասարկուն եղած է Զարեան, բայց հակընթաց դիրք որդեգրած է ընդօրինակութեան եւ կապկումի բոլոր ձեւերուն՝ փնտռելով այն անհանգիստ ոգին, որ հայ իրականութեան խորքէն ծնի իրրեւ խորհուրդ եւ կը գտնէ իր հայ խորքն ու հայ ոճը։

Ան հայ խորքին եւ հայ ոճին ինքնատպութիւնը հաւատաւորութեան մէջ կը տեսնէ, որ հիմնուած է Մեհեանով բացայայտուած հայ հոգիի պաշտամունքին վրայ։ Առանց անոր չկայ հայ գրականութիւն, որովհետեւ «ամէն ճշմարիտ արուեստագէտ՝ իր ցեղին հոգին միայն կ'արտայայտէ»[4]։

Ինչպէս Մեհեանը գիրի եւ արուեստի տաճար համարելով սրբապիղծները դուրս վանելու յանդգնութիւնը կը ցուցաբերէր, Բարձրաւանքն ալ «թառամած հոգիները եւ ծումռած միտքերը» որպէս կեանքը սպաննող «մակաբոյծներ», «զանոնք խարանելը» «սուրբ գործ» կը նկատէր (Ա., 1)։

ԲԱՐՁՐԱՒԱՆՔԸ ԵՒ ԻՄԱՑԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Գաւաֆեան Բարձրաւանքի մտքի տեսական էջերը գրաւած է եւ հայ փիլիսոփայական միտքի արեւմտահայ ներկայացուցիչներէն կը համարուի, որուն տեսա-փիլիսոփայական գրութիւնները, դժբախտաբար սակաւն, հատորի մը մէջ չեն խմբուած։ Ընդհանրապէս պոլսահայ մամուլին մէջ ցրուած գրութիւններուն վերլուծական անդրադարձումով, առաջին անգամ Սեդա Պարսումեան-Տատոյեան ամբողջական սեւեռումը կատարած է փիլիսոփայ Գաւաֆեանի իմաստասիրական հայեացքներուն՝ զայն ներկայացնելով «Անդրաշխարհ»ի ուղղութեան հետեւող ներկայացուցիչը հայ միտքին։ Ան կազմած է նաեւ Գաւաֆեանի մատենագիտութիւնը եւ խմբագրած՝ կենսագրութիւնը։ Իրաւամբ, Պարսումեան-Տատոյեան կը նշէ. «Գաւաֆեանը մեր մէջ այն սակաւաթիւ գրողներէն է, որոնք ունենալով իմաստասիրական խառնուածք եւ այդ մարզին մէջ որոշ զարգացում, ունեցած են նաեւ մտաւորական հաստնութիւնը՝ արծարծելու զուտ տեսական հարցեր եւ

փորձած բացատրել զանոնք իմաստասիրութեան լեզուով եւ օրէնքներով։ Յարաբերաբար անծանօթ այս հեղինակը մասնաւոր կարեւորութիւն կը ստանայ, որովհետեւ գրեթէ միայն իր գրութիւններուն մէջ կը գտնենք անդրապաչտական աշխարհահայեացքը տեսականացնող տարրերը»[5]։

Բարձրաւանքի մէջ Գավաֆեան հանդէս եկած է հետեւեալ գրութիւններով.- «Տիեզերքի Պատկերը» (Ա., 12-14), «Մեր Կեանքին Հանդէպ» (Ա., 40. Բ., 72 եւ Գ., 167-168), «Իրականութիւն Եւ Միտք» (Բ., 60-62) եւ «Օրուան Նիչեր» (Բ., 67-68)։

«Տիեզերքի Պատկերը», մեկնելով այնչքայնեան յարաբերականութեան օրէնքէն, կասկածող միտքի զարգացումով եւ հարցադրումներով տիեզերքի ըմբռնման յարաբերականութեան կը հասնի՝ իրականութեան փնտռտուքի ձգտումով, որքան ալ իր հայեցողութեամբ՝ իրական աշխարհը անհասանելի եւ անմերձենալի ոլորտ մը մնայ։ Տիեզերքի պատկերացումներէն իր հայեցողութիւնը ցոլացնող խոհերը, գաղափար մը կու տան իր մտածելու ոճի մասին.

«Ի՞նչ չափով դիտող մը իր կազմած տարազներու խաթարումէն պիտի կարողանայ հետեւցնել իր իսկ վիճակը, գայն բաղդատելով բացարձակի մը՝ որ գոյութիւն պիտի ունենար ինքն իր մէջ, անկախաբար ամէն տեսնող աչքէ եւ զգացող էակէ...

«Իւրաքանչիւրը պիտի ճնշմարտէ թէ տեւողութիւնն նոյնն է բոլորին համար, թէ կեանքը հաւասարապէս կը սահի ամենուրեք, տիեզերքի զանազան տարրերը նոյն արագութեամբ կ'ապրին. պիտի խորհի որ երբ պայմանները կրկնուին՝ միեւնոյն արդիւնքները յառաջ կու գան, հոգ չէ թէ տիեզերքը ծերացած ըլլայ քիչ մը անցեալին մէջ աւելի շատ իրականութիւններ կորսուած ըլլան...

«Կարենալ բացատրելու համար իրերու ամբողջութիւնը, կարենալ գտնելու համար ընդհանուրին հասարակաց գիտութեան մը տարրերը, հարկ պիտի ըլլայ փոխել միջոցի, ժամանակի եւ պատճառներու իմացողութիւնը, որպէսզի տարազներուն մէջէն վերնայ այն բանը որ զանոնք յարաբերական կ'ընէ...

«Մարդուն միտքը տեւականօրէն կը ձգտի ստեղծել տիեզերք մը, որ կարելի ըլլար, ուր կարելի ըլլար իրեն ապրիլ...

«Տակաւ, համրօրէն, իրեն համար ոգի եւ ձեւ կ'առնէ այդ տիեզերքը, որ կ'ապրի, ո՛ւր կ'ապրի, եւ որով կիրագործէ իր էութեան ամենախոր բաղձանքը - եթէ ճանչնալը ստեղծել ըլլար։

«Մ՛ով պիտի հաւաստէր թէ միա՛կ տիեզերք մը կայ կարելի» (Ա., 40. բոլոր ընգծումները հեղինակինն են - Պ.Ս.)։

Ցոյն դասական փիլիսոփայ Հերակլիտէն առնուած բնաբանով մը՝ «Արեւը՝ ամէն օր չէ որ կը վերածնի, այլ ամէն վայրկեան», Գավաֆեան իր «Իրականութիւն Եւ Միտք» գրութեամբ կ՛արծարծէ իմաստասիրական դրութեան այն վարկածը թէ՝ տարբեր դարերու ընթացքին ձեւակերպուած ուրիշներու մտածումը ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ հարազատութեամբ ժամանակակից մարդուն մէջ վերապրեցնել երբ «աւանդութեան շղթան կոտրած է չատոնց» (Բ., 60)։

Նոյն դարուն մէջ ապրած չըլլալու իրողութեամբ տարակուսող միտքը բաւերու եւ նախադասութիւններու հարազատութիւնը կասկածի հայեցողական լուսարձակի քննարկումէն կ՛անցընէ ինքնուրոյն մտածողութեան գարգացումով մը, որ կ՛արժեւորէ հայ փիլիսոփայական միտքը։

«Օրուան Նիչեր»ով, որ պոլսահայ կեանքի մշակութային առօրեայէն թելադրուած խորհրդածական բնոյթի արուեստի արձագանգ մըն է, Գավաֆեան խստահայեաց չեչտաւորումով կ՛անդրադառնայ Ջինադաղարէն վերջ գոյատման կոչուած երկու ձեռնարկներու։ Առաջինը՝ մտաւորականներու եւ «ուրիշներու» կողմէ նախաձեռնուած միութեան մը, որ ճաշակներու եւ մտաւոր հետաքրքրութիւններու անյարիրութեամբ չուտով փուլ եկած է, որովհետեւ «անիկա պէտքի մը չէր համապատասխաներ եւ հետեւաբար իր գործունէութիւնը պարզ agitation մը եղաւ» (Բ., 67)։ Երկրորդին հանդէպ կ՛անդրադառնայ համակրանքով. ան Պոլսոյ մէջ Հայ Արուեստի Տան ստեղծումն էր։ Զայն կ՛արժեւորէ հոգիի եւ միտքի արտայայտութեան համար միջավայր մը ունենալու անհրաժեշտութենէն մեկնելով, դարերու աւանդով, իրրեւ ինքնապահպանման գօրավիգ մշակոյթի տուն ունենալու նախաձեռնութիւն։ «Անիկա չկազմուեցաւ պէտք մը ստեղծելու համար, այլ պէտք մը ստեղծեց գայն» (Բ., 67)։ Ժ.Թ. դարու պոլսահայ բանաստեղծ Պետրոս Դուրեանի մահուան յիսնամեակին եւ եւ Ֆրանսացի թատերագիր Մոլիէռի երեքհարիւրամեակին նուիրած Հայ Արուեստի Տան ձեռնակներուն իմաստը խոր իմացութեամբ եւ ուրոյն բնորոշումներով վեր առնելով՝ անոնց արժէքներուն բարոյա-իմաստասիրական գնահատութիւնը կը կատարէ մարդկայնական չափանիշով. «Եթէ կը հաւաստենք մեր ապրելու իրաւունքը, այդ հաւաստումին մէջ նիւթական կարելիութիւններէ չէ որ կը ստանանք մեր ոյժը։ Ցարգելով Մո-

լիէռը՝ Հայ Արուեստի Տունը կ'ուզէ անչուշտ ըսել թէ ո՛ւր կը դնէ արժէքը մարդկութեան մէջ. յարգելով Դուրեանը՝ ան կ'ուզէ ըսել թէ ինչո՛ւ մենք մեր տեղը ունինք հոն» (Բ., 68):

Խոհական հայեացք մըն են մեր կեանքին վրայ Գավաֆեանի Բարձրաշխանքի առաջին ու վերջին համարներուն մէջ ստորագրած «Մեր Կեանքին Հանդէպ» խորագրուած գրուածները: Խորհողի ներթափանցումով, առաջինին մէջ գաղափարին ոյժը ջատագովելով՝ անցեալի, ներկայի եւ ապագայի խորհուրդներուն ընդմէջէն կը շեշտէ հայ կեանքին համար կարեւորութիւնը՝ հիմնական արժէքներու համար պատահականն ու ժխտականօրէն անկարեւորը գոհելու: Որեւէ ժամանակի համար գաղափարները վերացական ոլորտի բնակիչներ կը մնան, եթէ չիրականացուին: Ահա թէ ինչո՛ւ հայ խորհող միտքը կ'ուզէ հայ հոգիին ապագայ երազները լայնցած տեսնել իրականութեան հորիզոններով: Հզօր մտածողութեան գաղափարին կառչած կ'առաջադրէ. «եւ այս պահերուն մէջ, երբ երէկի յոյսերուն կը յաջորդէ ներկայի անձկութիւնը, գիտնան իրենց աչքերը դէպի ներս դարձնել, օրուան կիրքերուն քով լերան պէս բարձր տեսնելու համար վաղուան հաւատքը որ կը միացնէ զիրենք» (Ա., 40):

Ազգային քաղաքանութեան անհրաժեշտութեան շուրջ խորհրդածող երկրորդ «Մեր Կեանքին Հանդէպ»ը կը փորձէ պատասխանել «ի՞նչ կ'ուզեն, ի՞նչ կ'ըսեն, ի՞նչ կ'ընեն» հարցադրումներուն (Ե., 167-168): Ժողովուրդի անտարբերութեան մեղադրանքի խօսքով կը ձաղկէ բիւզանդական վէճերու անհարկիութիւնը, խօսքի ճամարտակութիւնը՝ ընդգծելով իրարմէ տարբեր ճչմարտութիւններէ օգտուելու լայնախոհութիւնը: Ցաւելով արեւելահայ եւ արեւմտահայ մտածողութիւններու միջեւ առերեւոյթ կերպով յառաջ եկած անջրպետին համար, ան կը մերժէ հաւատալ թէ ան «գոյութիւն ունենայ հայ ժողովուրդի զանգուածներուն մօտ» (Ե., 167): Ընդհանրական նպատակի մը յստակացումով եւ անոր շուրջ բոլորումով կը ներկայացնէ «ապագայի հարց մը, ո՞րն է այն մտայնութիւնը զոր պէտք է ստեղծենք եւ ի՞նչ են այն տարրերը զոր պէտք է պատրաստենք, որպէսզի իրարմէ հեռու ապրող զանգուածներու հասարակական կեանքը ձգտի միեւնոյն վախճանին՝ այն օրուան համար երբ կարելի պիտի ըլլայ հասարակաց կեանքով ապրիլ» (Ե., 168): Հասարակաց կեանքով ապրելու մտածողութիւնը կ'առաջնորդէ համահայկական գաղտղութեան

առարկայացման, ինչ որ առաջադրութիւնն էր Բարձրաւանդի առաքելութեան։

Գալաֆեանի հետ Բարձրաւանդի իմացական եւ գաղափարներու շարժումներու տեսական միտքը դրսեւորուած է Պէրպէրեանի աշխատակցութիւններով։ «Գաղափարներու Շարժում» խորագրին ներքեւ Շ. Ռ. Պ. ստորագրութեամբ՝ ան առաջին համարին մէջ հայ միտքը հաղորդակից կը դարձնէ իմաստասէր Էմիլ Պուտրուի երկու գիրքերէն La Contingence des lois de nature («Բնութեան Օրէնքներուն Պատահականութիւնը»), L'Idée de loi naturelle («Բնական Օրէնքի Գաղափարը») թելադրուած այն փիլիսոփայութիւնը, որ կը ձգտի իրմէ առաջ գիտութեան եւ փիլիսոփայութեան ապահարգանով կատարուած անջատումը միասնացնել։ «Այսպէս այդ գործը առաջնորդողներէն մին կ'ըլլար այն շարժման որ պիտի միացնէր գիտութիւն եւ իմաստասիրութիւն, անոնցմէ խորհուրդի կենդանի ամբողջութիւն մը ստեղծելու համար» (Ա., 39)։ Այդ նոյն շարժումին մտածական հետեւողականութիւնը պահող իմաստասէրներու թուարկումով՝ Պերկսոն, Ուիլեըմ Ճէյմս, Ճէյմս Պոլտուին, Էմիլ Տիւրքհայմ, Հանրի Փուանքարէ, Տիւհէմ եւ Օսվալտ՝ Պէրպէրեան իր համակրանքն ու համախոհութիւնը կ'արտայայտէ Պուտրուի նկատմամբ։ «Էմիլ Պուտրու պարկեշտ խորհող մը եղաւ, որ գիտցաւ տարածել եւ ամբողջացնել իր մտածումը իր քննութիւնները ընդարձակելով գանագան ուղղութիւններու մէջ, մասնաւորաբար խորհրդապաշտութեան (mysticisme), Բասքալի փիլիսոփայութեան, կրօնքի ըմբռնման վրայ իր գործերով։

«Մտածման եւ կեանքի մաքրութեան կը միացնէր վայրկեչ ու պայծառ ոճ մը որով մեր ժամանակին ամէնէն ներդաշնակ մարդերէն մին եղաւ» (Ա., 39)։

Ե. Հատորին «Գաղափարներու Շարժում»ը Պէրպէրեան նուիրած է իր ժամանակը յուզող կրթական հարցերու քննարկման՝ «Կրթական Խնդիր» յօդուածով (Ե., 165-166)։ Անշուշտ գիտակից է ան, որ կրթական խնդիրը առնչուած չէ իմացական ոլորտին, բայց քանի որ այդ օրերուն գաղափարներու շարժման դոյզն արտայայտութիւնը կրթական հարցերու արծարծումներուն մէջ գտած է մամուլի մէջ լոյս տեսած յօդուածներով, Պէրպէրեան կ'անդրադառնայ կրթական խնդրի այժմէութեան վրայ, որ տակաւին հակառակ կրթական բարեփոխուած ծրագիրներու ներկայ հոլովոյթին, կը պահէ իր հրատապու-

թիւնը։ Պէրպէրեան կը հակադրուի ընդհանրական մտածողութեան, որ կը միտի հայ դպրոցներու համար ուսուցիչներ պատրաստող վարժապետանոցի գաղափարին իրագործման՝ հայկական դպրոցներու մակարդակը բարելաւելու նախանձախնդրութեամբ։ Այդ գաղափարով իր խանդավառ չըլլալը ան կ'ապացուցանէ Եւրոպայի եւ յատկապէս Ֆրանսայի նախընթացներուն ոչ թէ ձախողութեամբ, այլ արդիւնքին անբաւարարութեամբ։ Տնտեսական գործօնին հետ, որ կը ճնշէ վարժապետանոց մը բանալու գաղափարին վրայ, Պէրպէրեան կը հակադրուի վարժապետանոցի հասկացութեան այլ հիմնական մօտեցումով մըն ալ, ու այդ՝ վարժապետական մտայնութիւնն է, որ, ըստ իրեն, անով պիտի զօրանայ ու յաւերժանայ։ Այդ օրերու երկրորդական վարժարաններու, ի մասնաւորի իր հօր՝ Ռեթէոս Պէրպէրեանի անձնական դպրոցի օրինակէն մեկնելով, կ'արժեւորէ անոնց ուսումնական ծրագիրները, որոնք իրրեւ ընդհանուր կրթութիւն աւելին կուտան, քան նախակրթարանի ուսուցիչ պատրաստելու համար նախատեսուած վարժապետանոցը։ «Այդ կարգերուն արդէն պարունակած գրական, գիտական եւ իմաստասիրական ընդհ. գարգացման ճիւղերուն վրայ կը բաւէ աւելցնել փորձառական մանկաբանութեան, մանկավարժութեան պատմութեան, մանկավարժութեան ու անոր գործնական կիրառութեան յատուկ մէյ մէկ ժամու դասեր՝ որպէսզի մեր երկրորդականներու շրջանաւարտները արդէն ձեռք բերած ըլլան պէտք եղած տեսական թէ գործնական վարժութիւնը կրթական արուեստին համար» (Ե., 166)։

Պատրաստուած ուսուցիչներ յառաջ բերելու միջոցը այս կը նկատէ, ինչ որ այսօրուան դրութեամբ հերքուած է, ըստ պետական ծրագիրներու ընդգրկած նոր առարկաներու առկայութեան՝ երկրորդականներէն ներս։

ԲԱՐՁՐԱՎԱՆՔԸ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Բարձրաւանքի արուեստագիտական էջերը, գրեթէ իւրաքանչիւր համարի մէջ, բովանդակութեան որակին կարեւոր նպաստ բերած են։ Անոնք կ'ընդգրկեն երաժշտութիւնը, նկարչութիւնը, թատրոնը եւ արուեստի ուղղութիւնները։ Բայց տիրական ներկայութիւնը Պէրպէրեանն է, որ արեւմտեան գեղագիտական ուղղութիւններուն հաղորդ մտածողութեամբ, հայ միտքը կը վերանորոգէ նոր հայեցակէտերով։ Պարսումեան-Տատոյեան, որ սպառիչ վերլուծումով անդ-

րաղարձած է Պէրպէրեանի փիլիսոփայական եւ գեղագիտական հայեացքներուն, կը նշէ. «Ընդհանուր առմամբ գեղագիտութիւնը՝ կամ արուեստի փիլիսոփայութիւնը եղած է իմաստասիրութեան նուազ մշակուած մարզերէն մէկը. իսկ արեւմտահայ մշակոյթին մէջ՝ Պէրպէրեանը միակն է որ ձեռնարկած է արուեստի պատմութեան եւ էութեան առընչուած նիւթերու դասաւանդութեան»[6]: Բանաւոր դասաւանդութենէն անկախաբար, հակառակ որ հիմնականօրէն դասաւանդութեամբ փոխանցուած է, քիչ քանակ չեն ներկայացներ նաեւ իր յօդուածներն ու գրաւոր ուսումնասիրութիւնները: Բարձրագոյնը անոնց առաջին հանդիսարանը դարձած է:

Պէրպէրեան արեւմտահայ առաջին արուեստաբանը եղած է բոլոր արուեստներու հանդէպ հաւասար հետաքրքրութեամբ, բայց երաժշտականին առաւել հակումով եւ խոր համոզութեամբ: Հեղինակ է նաեւ ստեղծագործական յօրինումներու: «Արդի Երաժշտութեան Ձգտումները Եւ Հայ Երգը» (Ա., 15-25) ուսումնասիրութեամբ համոզիչ ակնարկ մը նետելէ ետք եւրոպական երաժշտութեան ձգտումներուն վրայ, կը վերլուծէ անոնց յատկանիշները, որոնք երաժշտագէտի իր հայեցողութեամբ կը կայանան հետեւեալ կէտերուն մէջ. ազգայնականութիւն, ռիթմի ազատութիւն, նորութիւն երաժշտական ձեւերու մէջ՝ սոնատի, ֆիւկի, ռոնտոյի, խօսքին ու երգին առնչութեան ըմբռնումը, բարդութիւնն ու զարգացումը երաժշտական արհեստագիտութեամբ պայմանաւորուած: Եւրոպական երաժշտութեան արդի ձգտումներու լոյսին տակ կը յայտնաբերէ հայ ազգային երգին առանձնայատկութիւնները, որոնք քայլ կը պահեն եւրոպականին հետ ցեղային բխումով եւ ոչ թէ օտարին կապկումով. «ա՛յն զոր մայրենի հողին վրայ ապրող հայ ժողովուրդը աւանդականօրէն կ'երգէ ու կ'ստեղծէ իր հաւաքական ինքնուրոյն հանճարովը կամ անանուն աշուղներու բերնովը. այն՝ որ արդէն արեւելահայոց մէջ սկսած էր գիտուն արուեստագէտներու կողմէ ձայնագրուիլ եւ մշակուիլ - Կարամուրզայի օրերէն իվեր - եւ որ մեր, արեւմտահայոցս, մասնաւորաբար Պոլսահայերուս մէջ հրաշքի մը պէս յայտնուեցաւ իր մէկ մարգարէին Կոմիտաս վարդապետի կողմէ» (Ա., 21-22):

Ան երաժշտագիտական միտքին զարգացումը կը յանգեցնէ այն եզրակացութեան, որ հայ երգը ունենալով հանդերձ իր «երաժշ[տական] ինքնուրոյն տարրերը» (Ա., 22. ընդգծումը հեղինակինն է - Պ.Ս.) եւ հայկական ժողովրդական պարին «չարժումներուն եւ չափերուն

ամբողջ բարախումբ եւ կենդանութիւնը» (Ա., 24) գիտականօրէն կատարելագործուած ըլլայ թեքնիկով։ Այսինքն՝ «մտքով ու միջոցներով եթէ եւրոպացի՝ հոգիով՝ միամտօրէն եւ ստեղծագործօրէն Հայ» (Ա., 25)։

«Երաժշտութիւն» (Բ., 69-70 եւ Գ., 103) եւ «Երաժշտական» (Դ., 134) քրոնիկներով Շահան Պէրպէրեան ոչ միայն այդ օրերու Պոլսոյ երաժշտական կեանքի պատկերացումը կը սեւեռէ, այլեւ երաժշտական քննադատութեան ճաշակը կու տայ մասնագէտի ձեռնհասութեամբ մը։ Եւրոպական կարեւոր հրատարակչատուներու կողմէ հայ երաժիշտներու՝ Տիրան Ալեքսանեանի Petite Suite Arménienne եւ Օննիկ Պէրպէրեանի Դաշնակի Համար Վեց Կտորներ գործերու հրատարակութիւնները ողջունելի եւ քաջալերական երեւոյթ համարելէ ետք, կ'ընէ վերլուծական քննադատութիւնը Ալեքսանեանի լարաւոր քառանուագի համար կատարած ձայնադրումներուն եւ դաշնաւորումներուն, որոնք արդէն ծանօթ հայկական եղանակներ ունէին. «Խորհուրդ Խորին», «Օրօր», «Ալագեազ», «Հով Արէք Սարեր»[7]։

Գ. Հատորի «Երաժշտութիւն»ը կ'անդրադառնայ Կոմիտաս Վարդապետի աշակերտներէն՝ Վաղարշակ Սրուանձտեանի հայ երգերու Փարիզ տպուած հաւաքածոյին, որ կը բովանդակէ երգեր եւ դաշնաւորումներ։ «Անհամբերութիւն» որակումով բնորոշելէ ետք Սրուանձտեանի ստեղծումները, կը քննադատէ անոնց որակը. «Բոլոր ինքնագրութիւնները, դժբաղդաբար աշակերտական պարտականութիւններէ անդին չեն անցնիր։ Գրահաչուական կամ քերականական խնդիր լուծելու պէս պէտք չէ երաժշտութիւն գրել» (Գ., 103)։ Նոյն քրոնիկին մէջ երաժիշտ Ցարութիւն Մէհրաբեանի համերգին եւ նուագապետ Գէորգ Եաղուպեանի համանուագային երաժշտական ձեռնարկին գնահատութիւնը կը կատարէ։ Առաջինին՝ առաջին անգամ Պոլսոյ մէջ արեւելահայ երաժիշտներու՝ Մակար Եկմալեանի, Գրիգոր Սիւնիի, Ալեքսանդր Սպենդիարեանի, Ռոմանոս Մելիքեանի եւ Անուշաւան Տէր Ղեւոնդեանի գործերու ծանօթացումին, իսկ երկրորդին՝ «համանուագային երաժշտութեան ճաշակ»ի զարգացման արժեւորումը կը կատարէ (Գ., 103)։

«Երաժշտականն»ը (Դ., 134) խտացեալ ոճի սեղմ բնորոշումներով դաշնակահարուհի Թագուհի Ջարեանի նուագահանդէսով եւ անոր «ճարտարութեամբ եւ նրբութեամբ» (Դ., 134) մեր մէջ ճաշակի յառաջդիմութիւնը արձանագրելէ ետք, դաշնակի տաղանդաւոր ուսուցիչ

Ստեփան Բաբելեանի դեռատի աշակերտուհիներուն դաշնակի ունկնդրութեան առիթով դրուատիքը կը հիւսէ անոր ուսուցչական բացառիկ կարողութիւններուն, որ «դաշնակի երաժշտութեան տարածման» եւ «արուեստագիտական յառաջդիմութիւններու»ու կը սատարէ (Դ., 134)։ Մանօթ երաժիշտ Գրիգոր Սիւնիի երգչախումբի ղեկավարի յատկութիւնները՝ իբրեւ շատ կարող, կորովի, յստակ ըմբռնողութեամբ խմբավար՝ գնահատելէ ետք, խիստ քննադատութեան կ'ենթարկէ անոր երաժշտական հեղինակութիւնները. «Գալով Պր. Սիւնիի բուն հեղինակութիւններուն հարկ է ըսել որ իր դաշնաւորումներէն աստիճան մը եւս վար կը մնան անոնք։ Երբեմն, առանց այլեւայլի ռամկական են - օրինակ հայ գօրաբանակի քայլերգը - այլապէս անոնք — օբէրայի կտորներ եւ ռօմանս մը գոր Պ. Մկրտչեանի համերգին լսեցինք տափակ բառերու վրայ դրուած առանց ինքնատպութեան, սովորական եւ հասարակ տեղիք Եւրոպական երաժշտութիւն են» (Դ., 134)։

Ենթակայական դատումներէ մեկնող, բայց գեղագիտական փիլիսոփայութեան տուեալներով՝ Շահան Պէրպէրեան «Փորձ Մը Արուեստները Դասաւորելու» ուսումնասիրութեամբ (Բ., 47-54), հայ գեղագիտական միտքին համար առաջին փորձը կը կատարէ արուեստներու դասաւորման՝ իրեն համար մեկնակէտ ունենալով. «Արուեստները դասակարգելու ամենէն տարածուած կերպերէն մէկն է գգայարանքներու համեմատ բաշխումը» (Բ., 48. ընդգծումը հեղինակինն է - Պ.Մ.)։ Ան առաջին հերթին կը հաստատէ, որ արուեստը մէկ է, չկան արուեստներ. «կայ միայն արուեստը» (Դ., 47)։ Անոնք կը գտնուին իրենց գործածած նիւթեղէններով (materiaux) կամ նիւթերով (sujet), բայց ըստ էութեան ոճը կը մնայ արուեստը մարմնացնող հիմնական տարրը։ Ցատուկ կարեւորութիւն կու տայ իր դասաւորման մէջ տեսողական, լսողական գործօններուն՝ ձայնի, գոյնի, չարժումի եւ ծաւալի արտայայտամիջոցներուն հիման վրայ, որ ծաւալային եւ կայացումի սկզբունքներով կ'առաջնորդուի։ Պարսումեան-Տատոյեան դիտել կու տայ, որ «բացայայտօրէն, ձեւարանական տուեալներու վրայ հիմնուած դասաւորում մըն է այս, օգտակար՝ ուսանողներուն համար, այլապէս սակայն գեղագիտականօրէն, ոչ մէկ նշանակութիւն կը ներկայացնէ աղիւսակը»[8]։

Բարձրաձանքի Դ. հատորի արուեստագիտական էջը գրաւած է Օննիկ Ռեթէոս Պէրպէրեան՝ «Արուեստի Ուղղութիւնները» յօդուա-

ծով (Դ., 111-115)։ Ան՝ ԺԹ. դարը ընդունելով արուեստի արագ բնաշրջման դար՝ իրարու յաջորդող արուեստի ուղղութիւններու արագ ընթացքով յատկանշուիլը կը նշէ, մէկ կողմէ սուր ակնարկներով նորապաշտներու այն անոթ կեցուածքին, որ կը վերաբերի յայտնուած վերջին դպրոցի կատարելութեան, միւս կողմէ առանց խնայելու աւանդապահներուն, որոնք ի յառաջագունէ դիրք կը ճշդեն նորարար շարժումներու դէմ «զայն նկատելով օրինաւորութեան թշնամի» (Դ., 111)։ Պէրպէրեան ազատախոհութեամբ մը ջատագովն է անհատին նախասիրութեան «գեղեցկագիտական հաճոյքը փնտռելու հոն ուր կրնայ գտնել զայն» (Դ., 111)։ Իրրեւ հիմնական թեզ վեր կ'առնէ միջավայր-իրականութիւն առնչութիւնը, որ արուեստագէտին ենթահող է յուզական եւ ներքին ապրումներու երանութեան։ Արուեստի ամէն դպրոցին գեղագիտական արժէքը իբր «բարձրագոյն հրճուանք»ի արտայայտութիւն գնահատելով կը յանգի հետեւեալ ամբողջացնող եզրակացութեան. «Այսպէս դպրոցները համադրութեան ձեւեր են։ Դպրոց մը իր հետ կը բերէ նոր յուզում մը, նոր սարսուռ մը. հետեւաբար այդ յուզումի արտայայտութեան յատուկ թէքնիք մըն ալ, որով գեղեցկագիտական համադրութիւնը կը վերանորոգուի։ Դպրոցը հաստատուած կարգը կը փոխէ» (Դ., 114. ընդգծումը հեղինակինն է - Պ.Ս.)։

Թէքէեանի իրրեւ նշմար ստորագրած «Կեանքը, Արուեստը, Մտածումը» շարքը (Ա., 33. Բ., 65 եւ Գ., 134)՝ հակառակ իր խորագիրը չարդարացնող խորհրդածութիւններուն, հիմնականին մէջ լեզուներէ իր տպաւորութիւններուն պատկերաւոր բնութագիրն է, նշմարին տուած իր յատուկ իմացումով մշակուած։ Ճստակ մտածողութենէ եւ ըսելակերպէ տառապող ոճով մը Թէքէեան իր նշմարներուն առարկայ դարձուցած է լեզուները, անոնց բաղդատական ուրուագիծը ընելով բնութեան եւ անոր երգեցիկ էակներուն՝ թռչուններուն հետ։ Դաւանելով հանդերձ, որ իւրաքանչիւր լեզու իր ազգային նկարագիրին արտայայտութիւնն է, կը նշմարէ անոնց մասնայատկութիւնները՝ լսելով կամ գիտնալով անոնցմէ ոմանք։ Աւելի շատ իր տպաւորութիւնը հիմնուած է լսողական եւ հնչողական ընկալչութեան վրայ։ Սկսելով գերմաներէնէն, անցնելով անգլերէնին, ֆրանսերէնին, ռուսերէնին, պուլկարերէնին, հոլանտերէնին, սկանտինաւեան լեզուներուն, սպաներէնին՝ հասնելու համար թրքերէնին եւ հայերէնին, որուն

Ազգային ոճի եւ հանճարի բարձրագոյն արտայայտութիւնը հանդիսացող հայ թատրոնի ստեղծման հետամուտ գաղափարներ կը զարգացնէ Զարեան՝ միշտ մնալով բարձր ոլորտներու ոգեշունչ երազողը եւ որոնող միտքը: Բ. Հատորի «Հայ Թատրոն»ը Զարեանի նամակն է ուղղուած Օշականի՝ անոր Նոր Պսակ թատերախաղին բեմադրութեան առիթով: Թեքնիք թերութիւնները եւ որոշ տիպարներու հոգեբանական անորոշութիւնները մատնանշելէ ետք, ջերմութեամբ կ'ողջունէ Նոր Պսակը իբրեւ հիմնակէտը պոլսահայ թատրոնին, յատկապէս անոր յաջող երկխօսութիւններուն, «պարզ եւ ճկուն տրամաբիքական կառուցուածքին» արժեւորումով (Բ., 66): Ակնարկը ձեւականօրէն նամակի տարազ ունի, խորքին մէջ կ'արծարծէ հայ թատրոնի գարգացման յատուկ լուրջ հարցեր, որոնք էականօրէն կապուած են, մարդկային խորունկ զգացումներու գաղտնարանները բացայայտելու արուեստի հզօրութեան, որ սոսկ լուսանկարչային վերարտադրութիւն չէ եւ չի կրնար ըլլալ, որովհետեւ Զարեանի համար արուեստը կեանքի առջեւէն կ'ընթանայ ու կը լուսաւորէ ապագան: Սրտագրաւ համակրանքով մը նամակը կը վերջացնէ իրեն համար ցանկալի առաջադրանքի մը բանաձեւումով. «բեմի վրայ, սիրելի Օշական, պիտի ուզէի տեսնել քու հեքեաղներիդ լուսնացան երազը, ու թողնելով քաղքենիների աղբը լրագրողներին, ճախրէիր դէպի քո գիւղդ նոր հունձքը բերելու նոր տեսիլքներ» (Բ., 67):

Դ. Հատորի «Հայ Թատրոն»ով Զարեան կ'անդրադառնայ Հայ Արուեստի Տան Թատերական Յանձնախումբի կողմէ ձեռնարկուած Սայոմքի ներկայացման, բարձր գնահատելով անոր «գեղեցիկ եւ գովելի գաղափարը» (Դ., 135): Թատերախաղին նիւթին, բովանդակութեան եւ արժէքին մասին իմաստալից եւ դիպուկ բնորոշումներէ ետք,- «Սայոմքն, Ուայլդեան երեւակայութեան հոյակապ գոհարներից մէկն է, որի մէջ ամենաընտիր արուեստը միանում է խոր եւ ողբերգական, երաժշտականօրէն ծաւալուող անբնական եւ նոյն ատեն իրական աշխարհի հետ» (Դ., 135),- Զարեան գլխաւոր դերակատարներուն՝ Լիւսի Պետրոսեանի, Մկրտիչ Զանանի, Արշաւիր Շահխաթունիի խաղարկութեան գնահատութիւնը կ'ընէ քննադատի մատնանշումներով:

Հայ թատերական միտքի պատմութեան համար Զարեանի դատողական-տեսական էջերը որակային արժէք կը ներկայացնեն՝ թատրոնի դերին շուրջ:

Արուեստներէն նկարչութիւնը Բարձրաւանդի էջերուն չունի նոյն կշիռը: «Նկարչութիւն» ակնարկը (Ա., 38-39)՝ Զ. (Կոստան Զարեան) ստորագրուած, խոր գոհունակութեամբ կ՚արձագանգէ Հայաստանէն բերուած հայ արուեստագէտներու (նկարիչներու) հաւաքական ցուցահանդէսին, չեշտը դնելով «ազգային, հարազատ արուեստի» զարգացման վրայ (Ա., 38): Կ՚ափսոսայ Մարտիրոս Սարեանի բացակայութեան համար: Մասնակցող նկարիչներու ստեղծագործութիւններու մասին առանձին-առանձին իր տպաւորութիւնները յայտնելով իր լուսարձակը կը կեդրոնացնէ Վարդան Մախոխեանի, Փանոս Թէրլէմէզեանի, Սարգիս Խաչատուրեանի վրայ: Անծանօթներէն Վանօ Խօջաբէկեանը,- իբր «ցուցահանդէսի ամենագարմանալի երեւոյթը» (Ա., 38),- ուշադրութիւն գրաւած է: Զարեանի բնորոշումով ան կը համարուի «հանճարեղ մատիտի մարդը» եւ «անուս վարպետ» մը (Ա., 38-39):

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ ԲԱՐՁՐԱՎԱՆՔԻ ԷՋԵՐՈՒՆ

Հայ գրականագիտական միտքը, որ Բարձրաւանդի էջերուն ամէնէն բեղուն դաշտը ունի, կարելի է ենթարկել երեք ստորաբաժանումներու՝ գրականագիտական, քննադատական եւ օտար գրականութեան:

Գեղամ Ծէնէրճեան «Շրջան մը. 1900-1908» երկու մասերու վրայ տարածուող գրականագիտական բնոյթի յօդուածներով (Գ., 82-87 եւ Դ., 122-128) կը փորձէ շրջանի մը գրական պատկերն ու դիմագիծը ուրուագծել իր դատումներուն բովէն անցընելով շրջանը յատկանշող դէմքերն ու ուղղութիւնները: Հակառակ իր գրական գարգացումով յատակին եւ ճաշակ մը արտայայտող ինքնուրոյնութեան, չէ յաջողած ցոլացնել հիմնական գիծերը արեւմտահայ գրականութեան կարեւոր այդ շրջանին: Շրջան մը, ուր մէկ կողմէ իրապաշտ շարժումը իրագործումներ արձանագրած է վէպի, նորավէպի սեռերուն մէջ, քրոնիկը արուեստի մակարդակ նուաճած է եւ գրական կեանքը բանաստեղծներու հոյլով նոր հորիզոններու գեղասլաց անջրպետները գրաւած: Ծէնէրճեան երկրորդական հարցերով խճողած է իր մտածողութիւնը եւ յատակացուցած չէ իր չափանիշները: Ինքնատիպ դէմքերը զանց առնելով միջակութիւնները թիրախ դարձուցած է, թերատեսութեամբ մը, որ հարցը կը զրկէ ամբողջական պատկերի մատուցումէն: Քմահաճ մօտեցումի անդրադարձներով քննադատական սլաքներու խուրց

է իր դատումի եղանակը։ Տեղ մը կ'ըսէ. «ոչ մէկ ատեն անտարակոյս այնքան յաջողութեամբ կեղծուած է արուեստը» (Դ., 87)։ Մ'ւր եւ ո՛ր դէմքերու պարագային՝ յայտնի չեն։

Ծօդուածին երկրորդ մասը նուիրուած է հայ կին գրողներէն Հայկանոյշ Մառքին, որ «կը բերէր եզական տաղանդը արձակ բանաստեղծութեան, որուն լաւագոյն ներկայացուցիչը կրնայ համարուիլ» (Դ., 122) եւ Արշակուհի Թէոդիկին, զոր «իր խառնուածքին ազնուականութեամբը» (Դ., 123) կ'արժեւորէ սիրազեղ գնահատումով մը, որ անսովոր է իր դատումի եղանակին համար։ 1908ին Պոլսոյ մէջ Հոյս գրական հանդէսին հրատարակութիւնը կազդուրիչ երեւոյթ նկատելով Արամ Անտոնեանի, Ծակոր Տէր Ծակոբեանի, Ենովք Արմէնի, Մերուժան Պարսամեանի, Օննիկ Չիֆթէ-Սարաֆի գործերէն աւելի անոնցմէ իր տպաւորութիւնները կը ձեւակերպէ, միշտ հեգնական քմայքով մը, որ համակրելի չէ։ Ենովք Արմէնը իրեն համար «վաւերական տիպարն է ինքնատպութեան երազով չարչարուող մարդոց» (Դ., 126)։ Չի մոռնար Ենովք Արմէնի գայթակղութիւնը, զոր բանաստեղծ Միսաք Մեծարենցի Նոր Տաղերու հրատարակութեան առիթով գործեց, զայն «գրական փսխուք» որակելով (Դ., 126)։ Այդ առնչութեամբ իր դատավճիռը անբեկանելի է. «Հիմայ այդ բանաստեղծը կ'ապրի իր յաւիտենական կեանքը։ Այս չայցելուած մոմիային մոռացումը բարութիւն մըն է իրեն հանդէպ զոր չի կրնար փոխարինել» (Դ., 126)։

Նմոյշ մըն ալ Ֆէնէրճեանի քննադատական չափանիշէն. «Առանց ըլլալու օրուան ամէնէն մեծ հերոսները թուղթի ասպետներու այս չքախումբին մէջ Ժագ Սայապալեան, Վ. Մալէզեան, Տօմինէ պարապ տեղերը լեցնելու, մեծաւորներուն լուած ատեն ձայն բռնելու երկրորդական բայց կարեւոր դերերը ստանձնած են։ Գրեթէ դժուար է գրական ինքնութիւնը բացատրելու աշխատիլ այս երեքին, որոնց միակ յատկանիշը ինքզինքնին ըլլալնին է։ Տժգոյն ու տարտամ մարդեր, գրեթէ անվնաս՝ իրենց ջանքերուն մէջ ու չատ մարդկային՝ իրենց պզտիկ փառասիրութիւններուն մէջ։ Մէյմէկ նմոյշներ յաւիտենական բանաստեղծներու դասակարգէն որոնք իրենց ժամանակի գիւտերուն ու բառամթերքին ապաստանած՝ երջանիկ ոտանաւորներ կը պատրաստեն օրուան յարգի նիւթերուն չուրջ, կամ գուարճալիքներ ու տիաւօգներ մարդոց ուրախութեան համար» (Դ., 124-125. ընդգծումը հեղինակինն է - Պ.Ս.)։

Ֆէնէրճեանի դատողական եղանակէն Օշականի հոտը կու գայ...։

Օշական Մեհեանով սկսած «Հարթենք»ի գրոհը[9] կը շարունակէ Բարձրաւանքի էջերուն մէջ, գրաւելով անոր քննադատական բեմը: Ան, յենած թատերգութեան հիմնատարրերուն, եւրոպական թատրոնի յաջող եւ ձախող փորձերուն եւ ճաշակի ուրոյն ըմբռնողութեան վրայ կը քանդէ Ալեքսանդր Շիրվանզադէ թատերագիրի միթը՝ որ ոչ միայն արեւելահայոց մէջ իր հմայքը տարածած էր, այլեւ արեւմտահայերու մօտ, որոնք իրապաշտ գրողներու կողմէ, նախաճեռնութեամբ Տիգրան Կամսարականի, ընծայած էին իրենց արժեւորումի տուրքը Շիրվանզադէ Եւ Իր Գործը գիրքին[10] հրատարակութեամբ (Ա., 26-32 եւ Գ., 95-101): Երեւոյթը, իր օրին, ողջունելի նկատուած էր՝ արեւելահայ-արեւմտահայ մշակոյթներու փոխադարձ յարգանքի որպէս արտայայտութիւն: Ձեռնարկը իրրեւ առաջադրութիւն ունէր նաեւ իրապաշտ ըմբռնումի քաջալերական իմաստը: Օշական վեր էր մօտեցումի այդ եղանակներէն, մինչեւ վերջ ալ մնաց այդ դիրքերուն վրայ, բանադրուելու աստիճան արեւելահայերէն,- անխառն գրականութեան գեղագիտական անխախտ սկզբունքներով:

Շիրվանզադէ ճանչցուած, բեմադրուած եւ սիրուած թատերագիր էր, երբ Օշական կը ձեռնարկէր անոր դատափետումին: Ժողովրդական խաւերուն եւ թատերասէր հասարակութեան հոսանքին դէմ թիավարելու փորձ էր Օշականինը՝ իր ճաշակը անոնց պարզելու յանդգնութեամբ: Ասոր հաստատումը եղաւ յետագային, իր քննադատական եւ գեղագիտական միտքին ամբողջական վաստակը:

Ինչ դիտարկումներով Օշական՝ Շիրվանզադէ իրապաշտ թատերագիրը իր պատուանդանէն վար առաւ: Քննադատին հասկացութիւնը կը մերժէր զուտ իրապաշտ թատրոնի մը գոյութիւնը, այն հաստատ առարկութեամբ մը, որ «իրապաշտ թատրոնը մեր կեանքը մեզի ետ տալով, այնպէս ինչպէս դպրոցը կը պահանջէր, կրկնած կ'ըլլայ մեր տափակութիւնը» (Ա., 27): Իրապաշտութեան - յատկապէս թատրոնի պարագային - եթէ չընդխառնուի բանաստեղծականութիւնը, միօրինակութիւնը կը տիրապետէ եւ թատերական մթնոլորտը կեանքի տափակութենէն ոչ կը բարձրանայ, ոչ ալ կը բարձրացնէ: Ասկէ մեկնելով է, որ Օշական կը մեղադրէ Շիրվանզադէի թատերական ըմբռնումը, որ հեռու կը մնար իր ժամանակի թատերական գրականութիւնը յուզող հարցերէն:

Շիրվանզադէի թատերական գրականութեան ուրիշ մէկ նշաւակը դարձած են Օշականի քննադատական հայեցողութեամբ անոր ստեղծած տիպարները, որոնք հակառակ կեանքի բոլոր դասակարգերը բեմական արուեստով ցուցահանելու հանգամանքին, իրական ու հարազատ չեն եւ հեղինակին կողմէ յօրինուածի տպաւորութիւն կը ձգեն։ Յատկապէս կին տիպարներու պարագային աւելի կը չեշտուի անոնց գունաթափութիւնը. «Պատուոյ համար»ին Մարգարիտը օդէ աղջիկ մըն է, թոյլ՝ դիտումնաւոր յարդարումով մը որ կը տեսնէ իրեն յանձնուած թուղթերուն գողցուիլը, կը պոռայ յափշտակողի ետեւէն ու չի յաջողիր անոր ճիրաններէն ազատել աւանդը որպէսզի ետքէն մէկ հարուածով հերոսանայ, ինքզինքը սպաննելով» (Ա., 30)։

Գործողութեան եւ թեքնիքի տեսակէտով եւս վիրաւոր կը գտնէ Շիրվանզադէի թատերական արուեստը. «Շիրվանզատէի գործողութիւնը շատ ճարտար խնամքներով հազիւ կառավարուող ազազուն տղեկ մըն է» (Գ., 98)։ Ու այս բոլորէն ետք հարցականը. «ու՞ր է արդարացումը այս թատրոնին։ Ի՞նչ կը մնայ անկէ» (Գ., 99)։ «Կեանքի պարզ պատկե՞ր մը։ - Ատոր համար մենք պէտք չունինք թատրոն երթալու» (Գ., 99)։

Արեւելահայ գրական-քննադատական միտքին կողմէ փառաբանուած եւ երկար ժամանակ արեւելահայ բեմի գարդը հանդիսացած Շիրվանզադէ թատերագիրի մասին Օշականի խստադատութիւնը վերագրուեցաւ անոր նախապաշարեալ տրամադրութիւններուն՝ արեւելահայ գրականութեան նկատմամբ, ինչ որ ամբողջական առումով վաւերական չէ։

Օշական հեղինակը չէր Համապատկերներու[11], երբ Բարձրավանքի Ա. հատորին մէջ, Դանիէլ Վարուժանի յետ-նահատակութեան տպուած Հացին Երգըին մասին կը գրէր գրախօսական մը (Ա., 34-36), որ ընթացիկ առումով գրախօսականի մը տարողութենէն անդին կ'անցնէր։ Օշական Վարուժանը՝ իբրեւ իր սերունդի բանաստեղծը՝ կը համարէր իրենց ապրած օրերու գգայնութեան ամէնէն հարազատ արտայայտութիւնը, որ նուաճած է մեծագոյնի փառքը, «անխորտակելի գեղեցկութեամբ քերթուածներ»ով, որոնք «այլեւս դասական» դարձած են (Ա., 34)։ Հացին Երգըով բանաստեղծը քաղաքներէն իր «հզօր լոյսեր ունեցող» աչքը դարձուցած է գիւղին, դաշտերուն եւ լեռներուն։ Գիւղի մարդ Օշականը յափշտակութեամբ եւ ներշնչումով կը վերլուծէ Հացին Երգըին էութիւնը, բացայայտելով անոր հզօր երեւակայութե-

նէն եւ բնութեան անմիջական հաղորդակցութենէն ծնունդ առած պատկերներու յորդութիւնն ու խորհրդաւորութիւնը. «Վարպետի արուեստով մեզի կու տայ այս հատորին մէջ պահեր, տպաւորութիւններ, տեսիլներ, պատկերներ, երբեմն անտիպ-ստեղծումներ մտածման ու երեւակայութեան:

«Այս ամենուն մէջ ան դրաւ իր երանգապնակին գմայլելի հարստութիւնը, իր գծագրութեան ամենէն վստահ հիւաքը: Ան տեսաւ ամէն բան որ ինկաւ իր նայուածքի դաշտին, ծիածանովը իր տաղանդին ու իր գոյներուն բազմազան, ծանր ու կենդանի անձրեւը թափեց մարդերուն ու մարդերուն կակաչին ու ցորեանին, կալերուն ու ջաղացին, ամէնո՛ւն, ամէնուն, որոնց հանդիպեցաւ» (Ա., 35):

Վարուժանի *Հացին Երգը*ին մնայուն հեւքին հետ կը շնչէ նաեւ Օշականի վերլուծական խորաթափանց միտքին թրթիռը:

Գրական հանդէսները, որոնց մասին Օշական ունի իր ուրոյն տեսակէտերը, անտարբեր չեն ձգած զինք՝ իբրեւ հայ գրականութեան հոլովոյթին հետ քայլ պահող քննադատ: Իր կարծիքով գրական հանդէս մը պահանջքէ մը ծնած անհրաժեշտութիւն մըն է, որ գետին կը ստեղծէ արժէքներու յայտնաբերումին՝ խուզարկու հետեւողականութեամբ եւ կը քաջալերէ նորերը «անշահախնդիր» հետաքրքրութեամբ (Դ., 129): Այս պրիսմակով երկու գրական հանդէսներ՝ *Արեգը* Վիեննա, *Նաւասարդը* Ամերիկա ուշած է քննադատական ակնարկի բովէն անցընել (Դ., 129-132 եւ Ե., 164-165): Ակնարկը չէ ամբողջացած եւ մնացած է չարունակելի Զ. հատորի համար, որ լոյս տեսած չէ: *Նաւասարդը* մնացած է դուրս՝ իր հայեացքին սեւեռումէն:

Ինչ կը վերաբերի Վիեննա լոյս տեսնող եւ Սիմէոն Յակոբեանի խմբագրութիւնը վայելող *Արեգ*ին, Օշական հանգամանօրէն անդրադարձած է անոր բովանդակութիւնը կազմող գրական-ստեղծագործական էջերուն, գլխաւոր խմբագիրի քննադատական մեթոտին: Հայկական սփիւռքի կազմաւորման առաջին տարիներուն գուգադիպող *Արեգ*ի հրատարակութիւնը իբրեւ գրական եւ ընկերային բովանդակութեամբ ամսագիր, յաջողած էր սփիւռքէն եւ հայրենիքէն գրողներու եւ մտաւորականներու իր չուրջ համախմբան, սակայն չէ արժանացած Օշականի համարումին: Առանց յիշատակելու քննարկած համարներուն տարեթուային տուեալները - կը թուի առաջին քանի մը թիւերը եղած ըլլան - ուղղակի թիրախ դարձուցած է Յակոբեանը, վար առնելով անոր քննադատի դիմակը եւ բանաստեղծ Աւետիք Իսահա-

կեանը՝ նշդրակելով «իր բանաստեղծութեանց այլեւս մաշած լարը» (Դ., 131)։ Արեգի աշխատակիցներէն Զապէլ Եսայեանի մասին չէ վերապահած իր հիացումը որպէս «մեր մեծագոյն գրագէտներէն մէկը, ու մեր միակ վարպետը՝ վերլուծող վիպասանութեան» (Ե., 164)։ Հակառակ այս հաստատումին, սակայն, Արեգի Եսայեանի աշխատակցութիւնները, որոնք 1912-13ի Պալքանեան Պատերազմէն յուշեր կը պատմեն, Օշականի սուր դիտարկումէն գերծ մնացած չեն, անոնց «լրագրողի մը ընթացիկ մտահոգութիւնները» միայն «թուղթի վրայ» արթնցնողի մակերեսայնութեան համար (Ե., 164)։

Օշականի գեղագիտական մտածողութիւնը երբեք հաշտ չէ եղած քննադատական միտքի օգտապաշտական ուղղութեան հետ, որ իր բնորոշումով պատմա-վերլուծական քննադատութիւնն է։ Այս եղած է ուղղութիւնը արեւելահայ քննադատութեան եւ որուն վաւերական ներկայացուցիչներէն կը համարէ Յակոբեանը։ Օշական այդ ուղղութեան հետ հակադիր դիրքերու վրայ գտնուած է՝ քննադատի իր ամբողջ ասպարէզի տեւողութեան։

Արեւելահայ բանաստեղծութիւնը ընդհանրապէս եւ մասնաւորաբար Իսահակեանի քերթողական ստեղծագործ կարողութիւնները Օշականի գեղագիտական չափանիշերուն չեն դիմացած։ Միշտ նախնականութիւն մը գտած է անոնց մէջ պատմողական քնարերգութեան դիւրին կշռոյթին հետեւակութեամբ։ Անոր ամէնէն ցայտուն օրինակը, ըստ իրեն, Իսահակեանն է, որուն մասին Արեգի աշխատակցութիւններէն դատելով կը գրէ. «Ես չեմ խօսիր դէռ պատմող ոճին անհանդուրժելի միջակութեան վրայ, չեմ խօսիր այն չատ յայտնի տկարութեան մասին որով բանաստեղծը կը փախչի մարդերէն, անոնց տագնապը չուտով աւարտելու եւ դառնալու համար բնութեան, այսինքն անմեղ մեծ մայրիկին, գովելու համար անոր իր չատ անգամ կրկնուած հրապոյրները։ Նկարագրական տարրը երբ նորութեամբ չի գար, հասարակ բեռ մըն է բանաստեղծին ուսերուն» (Դ., 131)։

Արեգի սփիւռքահայ աշխատակիցներէն բանաստեղծ Արսէն Երկաթը կը տեղաւորէ միջակութեան աստիճանին, անոր «անգոյն, տանելի բայց բան չըսող քերթուածներուն, որոնցմով ան կ'ողողէ մեր պարբերաթերթերն ու օրաթերթերը» (Ե., 165)։ Իսկ զարմացնող տպաւորութեամբ բանաստեղծ Կարապետ Սիտալին նկատմամբ համակրալիր գնահատանքներ կը բաշխէ յոյսեր կապելով անոր բանաստեղծի ապագային (Ե., 165)։ Միշտ չէ, որ քննադատին յայտնատեսութիւնները եւ

կռահումները կ'արդարանան։ Միտալ չյաջողեցաւ դուրս գալ սովորական տաղաչափողի կաղապարներէն…։

Զարեանի *Օրերի Պսակը* բանաստեղծութիւններու հատորը, որ բանաստեղծական նոր յղացքի, ձեւի եւ ոգիի նորութիւններով կը յատկանշուէր, արժանացած է Շահան Պէրպէրեանի գնահատական անդրադարձին։ Գրական-վերլուծական անդրադարձ մը, որ խիտ ու խոր բնորոշումներով կու տայ *Օրերի Պսակով* Զարեանի լայն հորիզոններ ընդգրկող տեսլաչխարհը։ Այդ տեսլաչխարհը, ըստ գրախօսող Պէրպէրեանի, բարդ ազդեցութիւններով ու ձգտումներով կազմուած է եւ հետամուտ է ինքզինք որոնելու (Դ., 133)։ Ճիշդ դիտել կու տայ որ Զարեանը ոչ Մեծարենցի, ոչ Դուրեանի, ոչ Մատթէոս Զարիփեանի մտերմախօս քնարերգութեան մթնոլորտը կ'արտայայտէ, այլ՝ համանուագային կշռոյթով թափ, չարժում եւ համաստուածեան ոլորտներու մէջ թռիչք։ «Համաստուածեան խորհուրդի պարզ եւ միեւնոյն ատեն լայն ու սէնֆօնիք Նոր Բանաստեղծութեան մը գեղեցիկ յոյսը ահա ինչ որ կը ներչնչէ ինծի *Օրերի Պսակը*։ «Ու թերեւս Զարեան իրագործած է արդէն այդ յոյսը» (Դ., 133)։

Գեղագէտի եւ փիլիսոփայի կողքին Շահան Պէրպէրեան կու տայ ապացոյցը գրաղատական արուեստի իր չնորհքին, բայց յետագային մշակելով չզարգացուց զայն։

Գրականագիտական կալուածէն ներս կը մտնեն «Օտար Գրականութիւն խորագրին տակ Պ.Պ.ի ակնարկները (Բ., 71 եւ Գ., 104), որոնք խորացուած մշակումներ չունին։ Անոնց չահեկանութիւնը կը կայանայ անոր մէջ որ անգլիական մամուլին եւ գրականութեան մէջ գրիչ չարժած եւ անոնցմէ ոմանց յաջողութիւն գտած հայերը կ'արժեւորէ եւ հայ ընթերցող չրջանակներուն կը ծանօթացնէ։ Անոնցմէ են Աղեքսանդր Շաքեանը՝ յօդուածագիր ֆրանսական գրականութեան եւ Հայկական Հարցի մասին՝ «գրական ոճով եւ գեղեցիկ անգլիերէնով» (Բ., 71), թատերագիր Միքէաս Արապեան՝ անգլիական բեմի վրայ իր թատերախաղերը բեմադրած հեղինակ է։ Իր *Մէր* թատերախաղը սեռային հարցեր չօչափելուն համար տեղի տուած է բուռն հակազդեցութիւններու քննադատներու կողմէ՝ հակառակ որ «խանդավառութեամբ կը ծափահարուէր հանդիսատեսներէն» (Բ., 71)։

«Օտար Գրականութեան» նուիրուած երկրորդ ակնարկին մէջ Պ.Պ. նախ կը խօսի Տիգրան Գուլումճեանի (Մայքըլ Արլէն) մասին, որուն մայրենի լեզուն անգլերէնը եղած է եւ իր առաջին քայլերուն մէջ «պատմելու հաճելի եւ սրամիտ կերպով քննադատներու կողմէ նպաստաւոր ընդունելութեան արժանացած է (Դ., 104)։ Հակառակ ծնողաց գինք առեւտրական ասպարէզի մէջ տեսնելու ցանկութեան, գրականութեան նուիրուած է, որովհետեւ «կը փափաքէր իրեն համար անուն մը չինել անգլիական գրականութեան մէջ» (Դ., 104)։ Արլէն հրաժարելով Տիգրան Գուլումճեանէն եւ ծածկելով իր ազգային ինքնութիւնը անուն մը չինեց անգլիական գրականութեան մէջ...։ Պ.Պ. հայերուս կը ծանօթացնէ նաեւ Արթօ Ջնտգլեանը, որ Քեմպրիճի Համալսարանէն շրջանաւարտ է· անգլիական եւ ամերիկեան թերթերու մէջ գիրքերու, նկարիչներու եւ բարքերու մասին անոր գրած յօդուածները նկարագեղ ոճ եւ սուր վերլուծական կարողութեան մը ցուցանիշը կազմած են (Դ., 104)։

ԲԱՐՁՐԱՒՄԱՆՔԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԷՋԵՐԸ

Բարձրաւմանքի ստեղծագործական էջերը բաղկացած են՝ իբրեւ գեղարուեստական գրականութիւն՝ բանաստեղծութիւններէ, թատերգութիւններէ եւ արձակ գրութիւններէ։

Զարեանի բանաստեղծութիւններով («Ասացուած Կախաղան Բարձրացողի Համար», «Այս Առաւօտ», «Ժամերի Քայլը») արտայայտուող խորքն ու ոճը իբրեւ արուեստ՝ խորհրդապաշտական է, որ նկարչութենէ ազդուած պատկերներու ստեղծումով պահերու խորհուրդը կը կենդանացնէ։ Բառակապակցութեամբ նորակերտ բառերու գործածութիւնը, որ Զարեանի բանաստեղծական յօրինուածներու, յետագայ կշռոյթին մաս կազմող տարրն է, ծանրագնաց հեւքի մը տակ կ'առնէ զանոնք։ Բառակապակցութեան կարգ մը նմոյշներ կրնան գաղափար մը տալ· «սարսափավանկ», «սրնգախումբ», «հեռականչել», «լուսատափ», «ոսկէալիք», «ճաճանչափունջ», «արփիաթոր», «հազարկանթեղ», «հիւսվառ» (Ա., 2-4)։ Իր «լուսաստեղծ լինելութեան» ճամբուն որոնումն է իր բանաստեղծութիւնը, որ զարգացման իր հոլովոյթով որակային արժէքներ ստեղծեց մեր բանաստեղծութեան համար։ Մեծ Եղեռնի նահատակ գրագէտ Գեղամ Բարսեղեանի յիշատակին նուիրուած «Ասացուած Կախաղան Բարձրացողի Համար»ը (Ա., 2-3) միայն եղերական պահու մը ոգեկոչումը չէ, այլ մթնոլորտի

մը ամբողջ հոգեբանական ուրուանկարը՝ իր յուզական եւ խոովալից տրամաթիւմով։

Զարեանի բանաստեղծական երկարաշունչ թռիչքի վկայութիւնը կու տայ «Երեք Երգեր Ասելու Համար Վիշտը Երկրի Եւ Վիշտը Երկընքի» պօէմէն երկու հատուածներու հրատարակութիւնը (Գ., 73-81 եւ Ե., 140-149)։ Զայնի, լոյսի, գոյնի, ոգիներու ընկերակցութեամբ բնութեան (Գարուն, Ամառ) եւ սիրոյ փառաբանութեան երգ մըն է, տեղ տեղ կշռութաւոր արձակով եւ ընդհանրապէս լեզուի եւ ոճի շռայլ պաճուճանքով։ Նախապէս գրուած է Ֆրանսերէն եւ որպէս գիրք հրատարակուելէն ետք արժանացած՝ մեծ համարումի։ Եուրի Խաչատրեան Նաւասարմարի յառաջաբանի մէջ կը գրէ. «Դեռեւս 1914 թուականին Կոստան Զարեանը ամբողջացնում է իր խոշոր գործերից մէկը՝ «Երեք երգեր ասելու համար վիշտը երկրի եւ վիշտը երկնքի» գիրքը։ «Երեք երգերը» երեք իւրօրինակ պօէմներ են մէկ ամբողջական միասնութեան մէջ՝ «Սիրվարդ. խորհուրդ չորս մասով, ըստ եղանակների թաւալման», «Զայներ եկեղեցում» (Հոգերգութիւն) եւ «Աստղերի քերթուածը» (դրամերգ)։ 1915 թուականին գիրքն արդէն աւարտուած էր։ ... Այս հրատարակութիւնը ցնցող յաջողութիւն է բերում հեղինակին։ Բազմաթիւ պարբերականներ պօէմների հրատակութեան փաստը արձանագրում են իբրեւ գրական խոշոր երեւոյթ եւ ոգեշունչ ու հիացական յօդուածներ են տպագրում (տպագրուել է 24 յօդուած եւ գրախօսութիւն)»[12]։

Արեւմտահայ վաղամեռիկ բանաստեղծին՝ Զարիֆեանի «Պաղատանք»ն ու «Տարտամ Րոպէ»ն կը քնարերգեն իր արուեստին յատուկ մեղմախօս, պարզ եւ նուագուն հոսքով իր սիրած աղջիկէն պաղատանքը լացի եւ ցաւը սէրերու, որոնք «կան ու չկան» (Ա., 5)։

Արեւմտահայ բանաստեղծութեան վերապրած չողչողուն փառքերէն Թէքէեանի «Ես Այս Գիշեր», «Երազուն Մանկութիւն», «Քեզմէ Ոչինչ», «Ծիշողութիւն», «Կը Ծիշեմ» (Բ, 41-44) քերթուածները հնչեակի վարպետին ապրումներու կուռ եւ խտացեալ ագուցուածքով կ'ոգեկոչեն գաւակի մը չուքը իր կողքին ունենալու անսովոր տառապանքը, երազային մանկութեան օրերը վերապրելու կարօտաբաղձութիւնը, սէրը իր մէջ պահող յոյսին կառչումը, չիշողութեան դամբանը, սիրած էակը համբուրելու եւ զայն յաւերժացնելու պահը։ Ապրումն ու

արուեստը խոհական տարրով ներդաշնակուած են Թէքէեանի բանաստեղծութիւններուն մէջ։

Բանաստեղծ Վահրամ Թաթուլի՝ Ցակոբ Մնձուրիին նուիրած «Կարմիր Հմայք» եւ Ցակոբ Օշականին նուիրած «Փիատէ» բանաստեղծութիւնները փնտռուած բառերու ծանրութեան տակ կքած ապրումներուն գեղապաշտական փայլ փորձած են տալ՝ հաղորդականութենէ եւ ջերմութենէ զուրկ ցամաքութեամբ (Բ., 55)։

Աչուղ Սէյեադի (Պետրոս Մատաթեանց) «Մեղքը» արտատպուած Մոսկուայի Ձռաքաղի Բ. հատորի (1861) Տետրակ Ի-էն՝ իր քարոզչական բարոյախօսութեամբ չ'արդարացներ Բարձրաւանքի մէջ արտագրումը ո՛չ ճաշակով, ո՛չ ալ գեղագիտական առումով (Գ., 88-89)։ Ան անկապ է Բարձրաւանքով յատկանշուող արուեստի մակարդակին։

Ոչինչ կ'աւելցնէ Նշան Պէշիկթաշլեանի երկու քերթուածներուն տրամադրուած էջը (Դ., 110) Բարձրաւանքի բանաստեղծական բերքին վրայ, որ շատ ալ լիութեամբ չէ յատկանշուած խորքին մէջ։

Ե. հատորի Մեծարենցի «Հոգեհանգիստով բացուող բանաստեղծական էջը (Ե., 137-138)՝ արտատպուած արեւմտահայ մեծ բանաստեղծին մահուան ԺԴ. տարելիցին առիթով՝ անոր եզակի զգայարանքին նրբագեղ արուեստը կը ցոլացնէ։ «Հոգեհանգիստը Մեծարենցի հատորներէն դուրս մնացած է եւ առաջին անգամ տպուած Հրանդ Մամուրեանի Արեւելեան Մամուլին մէջ, Զմիւռնիա։ Մեծարենցի մահուան ԺԴ. տարելիցին առիթով Նաւասարդ Գրական ու Գեղարուեստական Միութեան կազմակերպած ձեռնարկին, որուն անդրադարձած է Բարձրաւանք (Ե., 168), իրրեւ օրուան դասախօս Թէքէեանի արժեւորումը ոչ միայն հետաքրքրական է իր գնահատումներով, այլեւ իրրեւ ստուգանիշ ծառայած է արեւմտահայ գրականագիտական միտքին համար։ Թղթակիցը գրած է. «Անոր մէջ փնտռեց արեւմըտահայ բանաստեղծութեան զարգացուն գնացքը... Մասնաւորապէս չեչտեց ազնուութիւնը անոր զգայարանքներուն, որոնք երեք գըլխաւոր աղբիւրներով - հոտառութեան, տեսողութեան եւ լսողութեան - անոր հոգիէն ներս փոխադրեցին արտաքին աշխարհին տպաւորու-

թիւնները ու ստեղծեցին անոր Երգը» նրբերանգով եւ խուսափուկով այնքան հարուստ (Ե., 168):

Բարձրաչափքի արձակի տիրական դէմքերը Օշականն ու Թէքէեանն են՝ թատերական, վիպագրական եւ պատմուածքի ժանրերուն վերաբերող աշխատակցութիւններով: Օշականի Նոր Պահակը թատերգութեան մասին Զարեան գնահատանքով արտայայտուած է (Բ., 66-67): Անկէ տեսարանի մը հրատարակութիւնը գաղափար մը կու տայ թատերգութեան մթնոլորտին, նիւթին հետ Օշականի երկխօսութեամբ տիպարներուն հոգե-բարոյական դիմագիծը գծելու արուեստին մասին: Տասնհինգ տարուան ամուսնութենէ ետք, ամուսնալուծման օրուան խօսակցութիւնն է այր եւ կնոջ միջեւ, իրենց աղջկան ներկայութեան: Վաճառատան, երկաթի տեփոյի եւ փարայի գասայի ճիրաններուն մէջ ճիւաղային կերպարի վերածուած մարդէն, որ կնոջ աչքին հոգիի կմախք մըն է, կ'ուզէ ձերբազատիլ (Բ., 56-58): Այս օրուան համար իսկ կը պահէ իր այժմէականութիւնը՝ ընտանեկան տրամի սուր հանգամանքով:

«Երբ Պատանի Են» չարքէն Օշականի «Աւետում»ը պատանեկան ապրումներու քնարական յուզումը արձակ բանաստեղծութեամբ կը վրձինէ՝ բնութեան եւ ներքին խռովքներուն զուգակցութեամբ (Դ., 105-109):

Այլ են Թէքէեանի արձակին ոլորտները: Մայրերը թատերգութիւնը - մէկ արարէ եւ ութը տեսարաններէ բաղկացող - իբրեւ գործողութեան վայր ընտրած է Պոլսոյ մէկ արուարձանը, իսկ ժամանակը 1908ի Օգոստոսի վերջերը (Ա., 6-11): Օսմանեան սահմանադրութեան վերահաստատման տարին է, երբ հայկական յեղափոխութեան մթնոլորտը կը տիրէր: Թէքէեան տունէն հեռացած եւ ապա վերադարձած մաքուր յեղափոխականի մը՝ Արամի, բեմականացումով երեք յեղափոխականներու մայրերը կը մկկտեղէ, որոնցմէ երկուքը կ'ապրին իրենց զաւակներուն վերադարձին կարօտը: Մէկը անոնցմէ սպաննուած է հայու կողմէ՝ անծանօթ պատճառներով եւ խորհրդաւոր պայմաններու տակ: Թատերախաղը նոյնիսկ եթէ թատերական արուեստի պահանջքները չի գոհացներ լիովին, սակայն վկայութիւն մը կը բերէ այդ օրերու մթնոլորտէն եւ հոգեբանութենէն:

Շարունակելի մնացած վիպակով մը՝ «Մարք Ֆուրթունի Արկածը» (Գ., 90-94 եւ Դ., 116-121)՝ Թէքէեան դարձեալ ոտք դրած է յեղափոխական գետինի վրայ - եգիպտական շրջագիծով - եւ վիպական կառոյցով փորձած է Քաղդէական Քլիւպի անդամ, ասպարէզով հրապարակագիր Մարք Ֆուրթունի տիպարը կենդանացնել: Անո՛ր՝ հակառակորդի մը կողմէ գիշերով խոշտանգումը եւ աչքէն վիրաւորուելով՝ հիւանդանոց փոխադրումը նկարագրելով սրող եւ աճող հետաքրքրականութեամբ կը պատմէ աչքին լոյսը կորսնցնելու մղձաւանջին տագնապալից վերիվայրումները: Հիւանդապահուհիին խնամքին եւ ապա գաղափարակից ընկերներուն այցելութեան մթնոլորտով գարգացող վիպակը կ՛ընդհատի... Բարձրաւանդի ընթերցողներուն համար...:

Բանաստեղծին կշիռը այնքան բարձր եղած է, որ արձակագիրն ու թատերագիրը ստուերի մէջ ձգած է: Թէքէեան յետագային այդ սեռերը չէ զարգացուցած, բացի հրապարակագրութենէ, որ իրեն ապահոված է այդ սեռին պահանջած յաջողութիւնը:

Բարձրաւանդի արձակի էջերուն փիլիսոփայական խորք տուող աշխատակցութիւն է Զարեանի «Ժամերի Իմաստը» (Բ., 45-46)՝ իբրեւ օրագրութիւն գրի առնուած խոհերը, որոնք կը քանդակեն կեանքին եւ ժամերուն իմաստը իբրեւ խորհուրդ իմաստաւորող ապրումները՝ «անցողակիի մէջ յաւիտենութեան փշրանքները» նշմարող հայեացքով (Բ., 45):

Նկարագրական ոճի բարեմասնութիւններով նկարիչ Թէրլէմէզեան «Նկարչի Ցիշատակներից» արձակ գրութեամբ (Բ., 63-64) կը պատմէ Եղեռնի օրերէն յուշ մը, որ «քստմնելի տեսարաններու, արեան ճապաղիքներու, յօշոտուած մանուկներու եւ դիակներու» յաճախանքով պատուած է: Եղեռնին անմիջականօրէն մօտ թուականի մը թարմ տպաւորութեան ապրումը կը փոխանցէ հայ նկարիչին արուեստագէտ հոգիին վկայութեամբ:

Խիտ տողերու մէջ Մանուիկ Պէրպէրեան արձակ քնարերգութեամբ մայիսեան եւ սիրոյ օրերու քաղցրութիւնը կ՛երգէ (Բ., 59):

Բացի անուանիներու՝ Օշականի, Թէքէեանի, Զարեանի, ներկայացուցած արժէքէն, Բարձրաւանդի արձակը չի յատկանշուիր ո՛չ նորե-

րու յայտնութեամբ եւ ո՛չ ալ որակային աշխատակցութիւններու արդարացումով: Բացառութիւն է Մնձուրին, որ Մեհեանով սկսած աշխատակցութիւնը Բարժրաւմանքի մէջ կը շարունակէ, երկուքին ալ մէկական գրութեամբ: «Դէմքը (Ղզլպաշներու Կրօնական Հալածումներու Օրերէն)» (Ե., 150-153) կու տայ լեզուական եւ ոճական իւրայատուկ չնորհքներով՝ ղզլպաշ Ալիչանի դէմքին ուրուագիծը, կրօնական աւանդութիւններու ենթահողին վրայ՝ եղբօր Աբբասին պատկերին յաճախանքով: Մնձուրին «Դէմքը»ով իր ապագայ կարելիութիւններուն նախաճաշակը արդէն տուած կ'ըլլայ:

Երկու այլ գրութիւններ՝ Շահան Պէրպէրեանի «Հուսկ Բանք Կեանքի Ոճին Համար» (Ա., 154-156) եւ Ա. Խաչատուրեանի «Հայ Լեզուի Ուղղագրութեան Բարեփոխութեան Խնդիրը» (Ե., 157-163) Բարժրաւմանքին ընդգրկած ծիրը կ'ընդլայնեն եւ այլազանութիւն կը մտցնեն:

Առաջինը՝ իր հօր՝ Ռեթէոս Պէրպէրեանի աւանդութիւնը շարունակելով անոր դպրոցի 1922ի շրջանաւարտներուն ուղղուած խօսքով, նոր էջ կ'աւելցնէ իր փիլիսոփայական խոկումներուն վրայ, իմաստասիրական մօտեցումով կեանքը ապրելու ոճը բացատրելով: Այս օրերուն ո՛չ այսպիսի բովանդակութեամբ հուսկ բանք գրող եւ կարդացող մնացած է, ո՛չ ալ՝ ունկնդրող: Շահան Պէրպէրեանի «Հուսկ Բանք»ը կը մնայ գեղեցիկ նմոյշ մը այդ սեռէն:

Երկրորդը՝ զուտ գիտական ու լեզուաբանական հիմունքներով եւ այլ ազգերու լեզուի եւ ուղղագրութեան բարեշրջումներու լոյսին տակ հայ լեզուին եւ ուղղագրութեան բարեփոխութեան խնդիրը կը քննարկէ՝ Մանուկ Աբեղեանի Reformeի նկատմամբ դրական մօտեցումով: Այս օրերուն համար չէ կորսնցուցած իր այժմէականութիւնը՝ ուղղագրութեան հարցի նոր արծարծումներով:

Բարժրաւմանքը յետ-եղեռնեան սփիւռքի պոլսահայ գրական կեանքէն ծնունդ առած առաջին գրական-մշակութային լուրջ հանդէսն է, որ ճամբայ հարթեց սփիւռքահայ գրականութեան առաջին սերունդի Փարիզի թեւի «Մենք»եան Շարժումին՝ սփիւռքեան հոգեխառնութեամբ եւ մտածողութեամբ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] *Կոստան Զարեան Նաւատորմար, կազմեց, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները գրեց Եուրի Խաչատրեան, Երեւան, «Սարդիս Խաչենց», էջ 608։*

[2] *Սոյն թղուածին մէջ Բարժրաւանքի հինգ հատորներէն կատարուած մէջբերումները նշուած են փակագիծերու մէջ, ընդ որում հայերէն այբուբենի առաջին հինգ թիւերը կը ներկայացնեն տուեալ հատորը, իսկ արաբական թուանշանները՝ համապատասխան էջը (կամ էջերը)։*

[3] *Զարեան, էջ 15։*

[4] *Նոյն։*

[5] *Սեդա Պարսումեան-Տատոյեան, Էջեր Արեւմտահայ Մտածումէն, Պէյրութ, Հրատարակութիւն Հ. Բ. Ը. Միութեան Վահրամ Ապտալեան Մշակութային Հիմնադրամի, 1987, էջ 156։*

[6] *Պարսումեան-Տատոյեան, էջ 135։*

[7] *Տիրան Ալէքսանեան (1881-1954) իր ժամանակի տաղանդաւոր քաւջութակահարներէն եղած է եւ միաժամանակ նուագապետ։ Սկիզբը նուիրուած է եւրոպական արուեստին եւ ապա՝ հայկականին։ Օննիկ Պէրպէրեան Շահան Պէրպէրեանի եղբայրն է։ կը քուէ քէ ադդ է պատճառը, որ զանց առնուած է անոր գործին քննարկումը։*

[8] *Պարսումեան-Տատոյեան, էջ 137։*

[9] *Տե՛ս՝ Պէպօ Սիմոնեան, «Արեւմտահայ Գրականութեան Գեղապաշտ Զգտումներու Հանդիսավայրը՝ Մեհեանը», Հայկազեան Հայագիտական Հանդէս, հ. ԺԷ-, 1997, էջ 453-457։*

[10] *Շիրվանզադէ Եւ Իր Գործը. Գրական Կոչունք Ծնեալներին Իր Քրքահայ Եղբայրակիցներէն (Կ. Պոլիս, Հրատարակութիւն Պ. Պալենց Գրատան, 1911) ժողովածուն լոյս տեսած էր Շիրվանզադէի գրական գործունէութեան 30ամեակի նշման առթիւ։ Անոր երկերու վերլուծութեամբ հանդէս եկած էին արեւմտահայ բազմաթիւ ականաւոր գրողներ՝ Տիգրան Կամսարական, Արամ Անտոնեան, Արշակ Չօպանեան, Արտաշէս Յարութիւնեան, Միքայէլ Կիւրճեան, Սուրէն Պարթեւեան, Յովհ. Սէթեան, Վահան Մալէզեան, Հրանդ (Մկրտիչ Կիւրճեան), Երուանդ Սրմաքէշխանլեան, Տիրան Զրաքեան, Երուանդ Օտեան, Զապէլ Եսայեան, Գառնիկ Ֆընտըքլեան, Գրիգոր Զօհրապ, Օննիկ Զիթիթէ-Սարաֆ եւ Վահան Թէքէեան։*

[11] *Տե՛ս՝ Յ. Օշական, Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան, հ. 1-10, Երուսաղէմ, Պէյրութ եւ Անթիլիաս, 1945-82։*

[12] *Զարեան, էջ 13-14։*

THE PERIODICAL *BARTSRAVANK*: AN ARENA FOR ARMENIAN HIGH CULTURE
(Summary)

BEBO SIMONIAN

The literary periodical *Bartsravank* was published in Constantinople in 1922. Its editors were Gosdan Zarian, Kegham Kavafian, Vahan Tekeyan, Shahan Berberian and Hagop Oshagan. It sought to continue the traditions set by an earlier literary periodical, *Mehyan*, published in Constantinople in 1914 but discontinued because of the outbreak of the First World War. Altogether five volumes of *Bartsravank* were issued in 1922, the year which also witnessed the entry of the Turkish Nationalist forces of Mustafa Kemal into the former Ottoman capital. The article analyses in detail the content of these five volumes and evaluates one by one all contributions published in *Bartsravank* in the genres of philosophy, the fine arts, literary criticism, poetry, drama and prose literature.

ԱՐԺԱՆԹԻՆԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Հայ երեք եկեղեցական յարանուանութիւններուն առաւել կամ նուազ չափերով գոյատեւումը Լատինական Ամերիկայի մէջ բնական հետեւանքն է Արժանթինի, Ուրուկուայի, Պրազիլի, Չիլէի, Վենեզուելայի եւ Մեքսիքոյի մէջ հայոց սփռումին։ Ներկայ ուսումնասիրութիւնը նուիրուած է Լատինական Ամերիկայի հայ կաթողիկէ յարանուանութեան կեդրոն՝ Արժանթինի համայնքի սկզբնական պատմութեան։

Արժանթինահայ կաթողիկէ փոքրաթիւ համայնքին ակունքները պէտք է որոնել Կիլիկիոյ, կեդրոնական Անատոլիոյ եւ Հայկական Միջագետքի մէջ։ Արդարեւ, այս յարանուանութեան անդամները Հարաւային Ամերիկա մեկնած են հիմնականին մէջ Անգարայէն, Մարաշէն եւ Մարտինէն։ Վերջինս, ինչպէս յայտնի է, իւրայատուկ պարագայ մըն էր՝ հայ-արաբ խառն ամուսնութիւններու իր բաւական բարձր տոկոսով, արաբախօսութեամբ եւ մականուններու «եան»ի բացակայութեամբ։ Մարաշի եւ Անգարայի կաթողիկէները թրքախօս էին։ Մարաշի համայնքը ժթ. դարուն ծնունդ առած է՝ Հայ Առաքելական Եկեղեցւոյ ծոցին մէջ տեղի ունեցած վարչական վէճի մը հետեւանքով[1], իսկ Անգարայի պարագան մասնաւորապէս կարեւոր է ընկերաբանական տեսանկիւնէ, ինչպէս մատնանշած է Հ. Լեւոն Վրդ. Զէքիեան. «Անգարայի համայնքը հայերէնի գործածութիւնը կորսնցուցած էր եւ թրքախօս դարձած էր երկար ժամանակէ ի վեր։ Գոնէ պէտք է աւելցնել, թէ այդ վիճակը միայն կաթողիկէ համայնքներուն յատուկ չէր. Օսմանեան կայսրութեան մէջ որոշ հայ առաքելական համայնքներ իրենց լեզուական գործածութեան վարժութիւնը կորսնցուցած էին։ Ամէն պարագայի, փաստ է, որ այն վայրկեանէն երբ Օսմանեան կայսրութիւնը հայ կաթողիկէները ճանչցաւ որպէս ինքնավար համայնք, անգարացիները իրենք զիրենք ոչ այլ բան համարեցին, քան «կաթողիկէ ազգ» (katolik milleti)։ Ազգութեան եւ կրօնքի այս չփոթը կամ նոյնացումը, որ կայսրութեան ազգադաւանական համակարգին կողմէ քաջալերուած էր՝ «միլլէթ»ի իրաւական գաղափարի հիմքով, դարաւոր երեւոյթի մը մէջ կ'արմատանար. որոշ թիւով հայեր, Հռոմէական Եկեղեցւոյ հետ հաղորդութեան գաղափարին փարելով, աւելի կամ պակաս չափով կորսնցուցած էին իրենց հայկականութեան գիտակցութիւնը։ Հետեւաբար, պէտք չէ

զարմանալ, երբ փարիզեան արուարձաններու մէկ անկիւնը կամ Մարսէյլի մէջ, Անգարա ծնած ալեւոր հայ կաթողիկէի մը իր ակունքներուն մասին հարցուի, ան պարզապէս պատասխանէ որ «կաթողիկէ» է»[2]:

Ազգութեան եւ դաւանանքի շփոթը («կաթողիկէ» = «ոչ հայ»), որ իր հակապատկերն ալ ունի («հայ» = «ոչ կաթողիկէ»), պատճառներէն մէկը եղած է, որ կաթողիկէները արժանթինահայ համայնքի կեանքէն յարաբերաբար կղզիացած ըլլան:

Պատահական ներկայութիւններ հաշուի չառնելով, ծանօթ իրողութիւն է, որ արժանթինահայ համայնքը ծագում առած է 1909-14ին սկսած գաղթալիքով: Առաջին Աշխարհամարտի նախօրեակին, համայնքը շուրջ 3000 հոգի կը հաշուէր[3]: 1912ին, անակնկալ կերպով Պուէնոս Այրէս ժամանած է Տ. Պաղտասար Քհնյ. Պարասաթեանը, որ առաջին հայկական պատարագը մատուցած է Ջատիկին՝ 15 Ապրիլ 1912ին: Այս դէպքը Արժանթինի մէջ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կազմակերպութեան հիմնաքարը հանդիսացած է:

1910ականներու վերաբերող նիւթերը սակաւաթիւ են: Արխիւային միակ տրամադրելի աղբիւրը 1911ին հիմնուած, Արժանթինի մէջ հայկական առաջին կազմակերպութեան՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) Պուէնոս Այրէսի մասնաժողովի արձանագրութիւններն ու նամակներն են, որոնք ընդհանրապէս համայնքին մասին թանկագին տեղեկութիւններ կը պարունակեն:

Այսպէս, 17 Ապրիլ 1917ի ՀԲԸՄի տեղական վարչական խորհուրդի ժողովին օրակարգին երկրորդ կէտը արաբախօս հայերու վկայագիրներուն մասին էր: Մարտինի հայերը («քիլտանի») հաւաքական խնդրագիր մը յղած էին, իրենց հայութիւնը փաստող վկայագիրներ հայցելով: Եօթանասուն խնդրարկու եղած էր, որոնցմէ 47ը զուտ հայեր, իսկ մնացեալները՝ հօր կամ մօր կողմէ հայ: Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը նման վկայագիրներ հայթայթողը ըլլալով, ժողովը որոշած էր անոր դիմել՝ կցելով մանրամասն ցանկ մը եւ իր յանձնարարականը[4]:

Պատերազմի ընթացքին, Առաքելական Եկեղեցին՝ Colectividad Religiosa Armeniana («Հայկական Կրօնական Համայնք») անունով, արժանթինեան իշխանութիւններէն իրաւասու նկատուած էր ինքնութեան թուղթեր յանձնելու: Դաշնակից կառավարութիւններու հիւպատոսներէն վաւերացուած այս փաստաթուղթերը ազատ ելումուտ, ինչպէս եւ աշխատելու իրաւունք կու տային զանոնք կրողներուն[5]:

Շաբաթ մը ետք՝ 24 Ապրիլ 1917ի Վարչական Խորհուրդի ժողովին ըսուեցաւ, թէ Հոգաբարձութեան նամակ գրուած էր այս խնդրին առնչութեամբ, սակայն վերջինս, այս կամ այն պատճառով, մերժած էր զուտ հայ չեղողներուն վկայագիր տալ[6]: Հետաքրքրական է նշել,

որ Հոգաբարձութիւնը դաւանական որեւէ առարկութիւն ըրած չէր, հակառակ անոր, որ Մարտինի հայերը կաթողիկէ էին։

1918ի կէսերուն կազմուեցաւ Հայ Ազգային Միութիւնը, որ խարխափումի շրջանէ մը ետք Սեպտեմբեր ամսուն կայացաւ որպէս կազմակերպութիւն։ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ներկայացուցիչ Երուանդ Խաչիկեանը ընտրուեցաւ առենապետ, իսկ Մելքոն Էպէեան (աւետարանական)՝ առենադպիր[7]։ Կաթողիկէ ներկայացուցիչի մը չգոյութիւնը ցոյց կու տայ, որ յարանուանութիւնը տակաւին կազմակերպուած չէր եւ մինչեւ միութեան անկումային ճգնաժամը (1920), կաթողիկէ հայերը առհասարակ չիչատակուած չեն։ Արժանթինահայոց պատմութեան մասնագէտ Նարսիսօ Պինայեանի սկզբնական պնդումը, թէ «արդէն 1918ին կաթողիկէներ որպէս կազմակերպուած խումբ գոյութիւն ունեցած են»[8], առկայ փաստերով չի հաստատուիր[9]։

Հայ Ազգային Միութեան փաստական կազմալուծումը պատճառ հանդիսացաւ մէկ ու կէս տարի տեւող կազմակերպական տագնապի մը, որուն ելք մը գտնելու համար, 18 Նոյեմբեր 1921ին գումարուած խորհրդակցական ժողովը առաջարկեց գաղութային կեդրոն մը ստեղծել, որուն կարենան անդամակցիլ բոլոր հայերը՝ առանց քաղաքական կամ կրօնական խտրականութեան[10]։ 7 Դեկտեմբերին կայացած 18 հոգինոց նոր ժողով մը որոշեց հիմնել Հայ Տունը՝ «ընկերութիւն մը որուն նպատակը պիտի ըլլայ արժանթինաբնակ հայ գաղութի մէջ վառ պահել ազգային եւ կրօնական զգացումները եւ օգնել իր անդամներէն անոնց որոնք նիւթական եւ բարոյական աջակցութեան կը կարօտին»[11]։ Կանոնագրի նախագիծը հիմնադիր անդամներու ընդհանուր ժողովի մը կողմէ վաւերացուեցաւ 25 Յունուար 1922ին եւ կազմակերպութեան անունը Հայ Գաղութային Կեդրոն դարձաւ։ 7 Մայիսին նոր ընդհանուր ժողով մը վարչութեան ընտրութիւն կատարեց (առենապետ՝ Արմէն Պերկամալի, փոխ-առենապետ՝ Փանոս Շըգըրտըմեան)[12], իսկ 25 Յունիսին, Սան Խուան 1537 փողոցին վրայ վարձու կեդրոնատեղիի մը բացումը տեղի ունեցաւ։

Հայ կաթողիկէ համայնքի կազմակերպութեան առաջին, ոչ-պաշտօնական փուլը սկսաւ 1922ին, Ջմմառի վանքի Պատրիարքական Միաբանութեան անդամներէն Հայր Հանթուչի ժամանումով[13]։ Հայ կաթողիկէ Պատրիարք Պօղոս Պետրոս ԺԹ. Թէրզեանին յղած նամակին մէջ ան յայտնած էր, թէ բազմաթիւ հայ հաւատացեալներ «իրեն կը դիմէին մկրտութեան եւ պսակի խորհուրդներուն, ինչպէս եւ հիւանդներուն օգնութեան համար»։ Սակայն, Պուէնոս Այրէսի մէջ իր պաշտօնավարութիւնը միայն մէկ տարի տեւեց[14]։

Համայնքին պաշտօնական ծնունդը երկու տարի ետք տեղի ունեցած է։ Քեմալականներու յաղթանակէն ետք Հռոմ ապաստանած Հ.

Մկրտիչ Վրդ. Գազազեան (1893-1958), 1924ին Առաքելական Այցելու Ծովհաննէս Արք. Նազլեանի հետ տեսակցութիւն մը ունեցաւ։ Նազլեան Արեւելեան Սրբ. Ժողովին առաջարկեց Գազազեանի առաքումը Պուէնոս Այրէս՝ Արժանթինի հայ կաթողիկէներու հոգեկան կարիքները գոհացնելու համար։ Ժողովը իր հաւանութիւնը տուաւ եւ Մայիս 1924ի գրութեամբ զայն յանձնարարեց՝ երկրի եկեղեցական իշխանութիւններուն։ Գազազեան Պուէնոս Այրէս հասաւ 10 Յունիս 1924ին[15]։

Նորեկ կրօնաւորը անմիջապէս ընդհ. տեղապահ Գերպ. Պարթոլոմէ Փիքատոյին ներկայացած է։ Չկարենալով զինքը հռոմէադաւան ծուխի մը մէջ տեղաւորել, Փիքատօ առժամեայ կերպով խոստովանանք ստանալու եւ պատարագ մատուցելու իրաւասութիւն տուաւ Գազազեանին։ Փիքատոյի օգնութեամբ, հայ վարդապետը Սակրամենտեան Հայրերու բնակարանին մէջ հիւրընկալուեցաւ, նախ՝ Սան Մարթին 1039 փողոցը եւ ապա՝ Գոնտարքօ 545։ Ակէ զատ, Ս. Հոգիի Հայրերէն արտօնութիւն ստացաւ Կուատալուփէի Տիրամօր մատրան մէջ (Մանսիժա 3851) ամէն Կիրակի հայածէս Ս. Պատարագ մատուցելու[16]։

Առաջին պատարագը մատուցուեցաւ 29 Յունիս 1924ին, 30 Հոգիի ներկայութեամբ։ Այս թիւը, բացի ձայնաւոր պատարագներու պարագային, ընդհանրապէս անփոփոխ պիտի մնար։ Երկու օր առաջ կաթողիկէ էչ Փուէպլօ (El Pueblo, «Ժողովուրդը») օրաթերթին մէջ լոյս տեսած յանուցում մը կը յայտնէր, թէ Գազազեան ամէն Շաբաթ կէսօրէ ետք ժամը 3-5ին հայերէն, թրքերէն ու ֆրանսերէն խոստովանանքներ պիտի ընդունէր[17]։

1915-22ին կանգ առնելէ ետք, հայերու գաղթը դէպի Արժանթին վերսկսած էր Իզմիրի Աղէտէն ետք, գլխաւորաբար աղէտեալներու եւ Կիլիկիոյ պարպումէն վերապրողներու ժամանումով։ 1922-24ին, համայնքին հիմնական աշխատանքը նորեկներուն օգնութեան հասնիլը եղած էր։ Թուական աճի պատճառով անհրաժեշտութիւնը զգացուեցաւ Գաղութային կեդրոնի ընդլայնման, ինչպէս նաեւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիի աղօթատեղիի մը շինութեան, որ կեդրոնի կանոնագրին մէջ չէր յիշուած որպէս նպատակ։

Հոս պէտք է դիտել տալ, որ թէեւ կեդրոնը համագաղութային նկարագիր մը ունէր, գործնականին մէջ ան կ'աշխատէր որպէս եկեղեցւոյ հոգաբարձութիւն մը, որմէ կախում ունէին թէ՛ հոգեւոր հովիւին գործունէութիւնը, թէ՛ կիրակնօրեայ եկեղեցական արարողութիւններու իրագործումը։

1924ին, ՀԲԸՄի Պուէնոս Այրէսի մասնաճիւղը Հայ Գաղութային կեդրոնին եկեղեցիի մը շինութիւնը առաջարկեց, քանի որ իր կանոնագրային սահմանափակումները կ'արգիլէին այդ գործին ստանձնումը[18]։ 1925ին, կեդրոնը բոլոր միութիւններուն եւ երեւելի անհատ-

ներու մասնակցութեամբ քանի մը ժողովներ գումարեց, որոնք յանգեցան Հայաստանեայց Եկեղեցւոյ Վարչական Խորհուրդի հիմնադիր ժողովին՝ 22 հոգիի ներկայութեամբ, 29 Նոյեմբեր 1925ին։ Հոս, Իսրայէլ Արսլանի ատենապետութեամբ վարչութիւն մը ընտրուած է՝ կանոնագիր մը պատրաստելու, եկեղեցիի եւ դպրոցի համար չէնք մը գնելու, եւ առ այդ հանգանակութեան մը սկսելու պարտականութիւններով[19]։

28 Նոյեմբեր 1925ին, այսինքն՝ վերոյիշեալ ժողովէն երեք օր առաջ, Արժանթինի եկեղեցական իշխանութիւնները վաւերացուցած էին Հայ Կաթողիկէ Ընկերութեան ստեղծումը՝ Խորխէ Թերզիպաշեանի ատենապետութեամբ։ Ընկերութիւնը երկու վարչութիւններ ուներ՝ Փալերմօ (ուր կը գտնուէր կեդրոնը՝ Նիքարակուա 4726) եւ Պառաքաս-Պոքա թաղամասերուն մէջ[20]։ Հաւանական է ենթադրել, որ հայ երկու յարանուանութիւնները միաժամանակ եւ դիպուածով իրենց ներքին կազմակերպութեան ձեռնարկած ըլլային։

11 Ապրիլ 1926ին, 75 հոգինոց ներկայութեամբ ժողովի մը ընթացքին տեղի ունեցաւ Շինարարական Յանձնախումբի ստեղծումը՝ Գաղութային կեդրոնի չէնքի ու եկեղեցիի հարցերով զբաղելու համար, որուն դիւանը (Արսլան՝ ատենապետ, Յովհ. Պարգեւեան՝ ատենադպիր, Պերկամալի՝ գանձապահ) 31 Մայիսին ընտրուեցաւ։ Այդ յանձնախումբը Գաղութային Կեդրոնէն անկախ էր, քանի որ չէր կրնար կապուիլ ոչ-դաւանական հաստատութեան մը հետ, որուն պիւտճէն «կազմուած էր երեք յարանուանութեանց պատկանող անդամներու տուրքերով», կը գրէ Արսլան[21]։

Առհասարակ, Գաղութային Կեդրոնի ընդհանուր ժողովները յատկանշուած էին անդամներու բաւական ժլատ մասնակցութեամբ։ Յաճախ, առաջին գումարումը չէր կայանար՝ մեծամասնութեան չգոյութեան հետեւանքով, եւ ժողովը տեղի կ'ունենար միայն երկրորդ գումարումին, երբ անդամներու որեւէ թիւ բաւարար կը սեպուէր։

1926ի ընդհանուր ժողովը բացառութիւն եղած չէ։ 9 Մայիսի ձախող գումարումէն ետք, տեղի ունեցաւ երկրորդ գումարումը 23 Մայիսին, միայն 15 հոգիի (18 ձայն) մասնակցութեամբ։ Վարչական ընտրութեան, հետեւեալ անձերը առաւելագոյն քուէները ստացան.- Առաքել Էօրէճեան, Աբրահամ Գրաճեան, Տիրան Եուսուֆեան, Հայկ Մօսկոֆեան, Արշակ Արսլան, Երամ Պէքճարեան, Յովակիմ Ապտեան։ Գրաճեան՝ բազմագբաղ ըլլալով, հրաժարեցաւ պաշտօն ընդունելէ[22]։

Նորընտիր վարչութեան առաջին նիստը տեղի ունեցաւ 16 Յուլիսին, այսինքն՝ գրեթէ երկու ամիս ետք։ Այս փաստը կազմակերպական տագնապի մը գոյութիւնը կը մատնանշէ, որուն մանրամասները յայտնի չեն, բայց որուն ստուգութիւնը կարելի է մակաբերել հետեւեալ իրողութենէն։ Նիստին արձանագրութիւնը կը բացուի հետեւեալ

պարբերութեամբ. «Ա.- Դիւանի ընտրութիւնը պ. Ա. Պէրկամալիի առաջարկով բոլորի հաւանութեամբ ընտրուեցաւ հետեւեալ կերպով.

«Ի. Արծրունի	ատենապետ
«Մ. վրդպտ. Գազագեան	փոխ-ատենապետ
«Ս. Թամլեան	ատենադպիր
«Գ. Հէրպէկեան	փոխ-ատենադպիր
«Ա. Պէրկամալի	գանձապետ
«Պ. քհնյ. Պարասաթեան	խորհրդական
«Պ. Գալայճեան	խորհրդական»[23]:

Ինչպէս կը տեսնուի, Մայիսին ընտրուածներէն ո՛չ մէկը ընդգրկուած է վարչական նոր կազմին մէջ, ուր ներկայ էին երկու վաստակաւոր եւ ազդեցիկ անձնաւորութիւններ՝ Արսլանն ու Պերկամալին, եւ կաթողիկէ ու առաքելական հոգեւոր հովիւները՝ Մկրտիչ Վրդ. Գազագեան եւ Պաղտասար Քհնյ. Պարասաթեան: Շրջանի մասին միակ վաւերագրական աղբիւրը՝ Արսլանի յուշերը, լուութեամբ կ'անցնին այս դէպքին վրայէն, միայն յիշելով այս դիւանի կազմը հետեւեալ նկատողութեան որպէս չարունակութիւն. «Հայ. Գաղ. կեդրոնի Ծրագիր-Կանոնագրին համաձայն ոեւէ յարանուանական խորութիւն գոյութիւն չունենալով, իր կազմը աւելի ազգային հանգամանք կը կրէր: Ասոր ապացոյցը կը տեսնուի իր անդամներու շարքին մէջ, ինչպէս նաեւ 1926 Յուլիս 16ին ընտրութեան հետեւանքով իր դիւանի կազմը...»[24]:

Առայժմ որեւէ աղբիւր չկայ, որ լուսաբանէ այս ընտրութեան հանգամանքները: Բայց Գազագեանի ընտրութիւնը որպէս փոխ-ատենապետ ցոյց կու տայ կաթողիկէ համայնքին վերելքը եւ, թերեւս, Արսլանի ու Պերկամալիի կողմէ գայն սիրաշահելու փորձ մըն էր: Պէտք չէ մոռնալ, որ Արժանթինը մեծաւ մասամբ կաթողիկէ երկիր մըն է, ու հռոմէական դաւանանքը՝ անոր պետական կրօնը:

Այս փորձը, սակայն, շատ կարճատեւ եղաւ, ու դարձեալ հոս Արսլան կը լռէ այս մասին: Արդարեւ, Գաղութային Կեդրոնի տոմարներէն կը պարզուի, որ 6 Օգոստոսին, վարչական երրորդ նիստին ու ընտրութենէն հազիւ երեք շաբաթ ետք, «վարչութեան փոխ Ատենապետ Մ. Վ. Գազագեանի հրաժարականը կարդացուեցաւ որ նոյնպէս կը կրէր իրեն պատճառաբանութեան փաստաթուղթը. հրաժարականը ընդունուելով, որոշում տրուեցաւ 2րդ ժողովին ընտրել մէկ ուրիշ օգտակար հանդիսացող անձ մը»[25]:

Ինչո՞ւ տեղի ունեցած էր այս յանկարծական հրաժարականը: Բուն պատճառը նշուած է վարչութեան 1926-27ի տեղեկագրին մէջ, որմէ կ'իմացուի նաեւ, թէ Գազագեանի պաշտօնը թափուր մնացած էր. «Վարչութիւնս՝ 16 Յուլիս 926, իր Ա. նիստին կազմեց դիւանը...: Քանի մը ամիս [sic] այս կազմով չարունակելէ յետոյ, Բ. Ատենապետ

Մկրտ. վրդ Գազազեան հրաժարեցաւ վարչութենէս իր Օգոստ. 5, [1]926 թուակիր նամակով, պատճառաբանելով թէ տեղւոյս պապական եկեղեցական իշխանութիւնը արտօնած չէր իր մասնակցութիւնը: Որով վարչութիւնս՝ մնացեալ վեց անդամներով՝ վարեց իրենց վրայ դրուած այս ծանր պաշտօնը մինչեւ այսօր»[26] (ընդգծումը մերն է - Վ.Մ.):

Այս պատճառաբանութիւնը, ըստ ամենայնի, հիմնաւոր էր. 3 Օգոստոս 1924էն ի վեր Գազազեան միայն իրաւասութիւն ունէր պատարագ մատուցանելու եւ խոստովանութիւն ընդունելու[27]:

Համայնքին մէջ կառոյցներու խաչաձեւումը անխուսափելի բախումի եւ պառակտումի կ'առաջնորդէր: Հայաստանեայց Եկեղեցւոյ Վարչական Խորհուրդի եւ Շինարարական Յանձնախումբի գործունէութիւնը Գաղութային Միութիւնը ընկլուգելու կոչուած էր, վարչական կեդրոնացումին (երեք մարմիններուն ատենապետութիւնը նոյն անձին՝ Արսլանի ձեռքն էր) եւ ֆինանսական աղբիւրներու սակաւութեան հետեւանքով: Գաղութային կեդրոնի բաժանումի երեւութական պատճառը կը թուի եղած ըլլալ արժանթինեան վաւերաթուղթեր անվատաբար ձեռք ձգելու հայ կաթողիկէ համայնքին կեցուածքը: Մինչ այդ, այդ աշխատանքները կը կատարուէին անշարժութեան մատնուած, բայց իրաւական ճանաչում վայելող Հայ Ազգային Միութեան կնիքով ու ստորագրութեամբ[28]:

Արժանթինի մէջ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ պատմութեան նուիրուած իր անտիպ ուսումնասիրութեան մէջ, Տէր Նորայր Աւագ Քահանայ Տէր Խորէնեան պնդած է, թէ 29 Նոյեմբեր 1925ի Հայ Գաղութային Կեդրոնի վարչական ժողով մը նոր կանոնագիր մը խմբագրած էր, որ նոյն օրը վաւերացուած էր վարչութեան կողմէ: Ըստ Տէր Խորէնեանի, կանոնագիրը Գաղութային Կեդրոնը կը վերանուանէր «Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հոգաբարձութիւն» եւ արժանթինեան իշխանութիւններուն կը ներկայացուէր առ ի վաւերացում: Այսպէսով, «մինչ այդ գործակցող եւ անդամակցող Հայ Բողոքական եւ Կաթոլիկ անձնաւորութիւններ, որոնց կարգին Հայ Կաթոլիկ վարդապետ, Հայր Յովհ. Գազազեան կը զրկուին անդամակցութենէ եւ կը դադրին գործակցելէ»[29]:

Այս տեսակէտները առնուազն վիճելի են: Արդարեւ, ըստ Հոգաբարձութեան 29 Նոյեմբեր 1925ի ընդհանուր ժողովի արձանագրութեան, այդ օրը եկեղեցական կազմակերպութիւն մը հիմնուած էր, որուն կանոնագիրը ապագային պիտի խմբագրուէր: Գաղութային Կեդրոնի ժողով չէ եղած յիշեալ օրը. յաջորդ ժողովը տեղի ունեցած է 4 Դեկտեմբեր 1925ին: Միւս կողմէ, անդամակցութեան զրկումի վերայիշեալ վարկածը տրամաբանական չէ այլապէս, յաջորդ տարին Գազազեանի ընտրութիւնը որեւէ հիմնաւորում պիտի չունենար: Հետա-

ցումի որեւէ հրահանգ գոյութիւն ունեցած չէ, ոչ ալ կրնար ունենալ։

4 Նոյեմբեր 1928ի արտակարգ ընդհանուր ժողովի վաւերացումին ներկայացուած կանոնագրի ծրագրին Գ. յօդուածը կ'ըսէ, թէ «ամէն երկսեռ հայ եւ հայ ծնողաց Արժանթինի մէջ ծնած երկսեռ գաւակները, որոնք 18 տարին լրացուցած են, բարի համբաւի եւ վարքի տէր են, կարող են գործօն անդամ ըլլալ»[30]։ Ցաջորդող տասնամեակներուն, Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ հաւատացեալները Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հոգաբարձութեան անդամակցած եւ նոյնիսկ վարչական շատ կարեւոր պաշտօններու հասած են[31]։ Ասիկա, հակառակ անոր, որ նոյն կանոնագրին Ա. յօդուածին գ. պարբերութիւնը կ'ըսէ. «Ի մի բան, Հոգաբարձութիւնը պիտի ներկայացնէ Հայց. Առաք. Եկեղեցւոյ հաւատացեալներու ամբողջութիւնը եւ պիտի ստանձնէ Հայ Եկեղեցւոյ վերաբերեալ բոլոր կրօնական եւ բարոյական հարցերը, Եկեղեցական իշխանութեանց առջեւ պաշտպան հանդիսանալով անոնց իրաւասութեանց եւ ջանալով ձեռք բերել անոնց բարօրութիւնը»[32]։

Արսլանի հաչտարար դիրքը անբաւարար եղաւ պառակտումը կանխելու համար. «Այս նպատակով տասնեակ մը գիշերային ժողովներ գումարեցինք բնակարանիս մէջ, ներկայացուցիչներ ունենալով գաղութիս երեք յարանուանական եկեղեցիներէ։ Անձամբ այցելեցի Գեր. Մ. վրդ. Գազազեանի եւ ամէն գիջողութիւն ընելու յանձնառու եղանք այդ միութիւնը պահելու եւ միակ մարմինը ստեղծելու համար։ Մեր փափաքն էր, քաղաքական միութիւնը պահել գոնէ մեր մանուկներու ազգային դաստիարակութիւնը եւ մշակութային բոլոր ձեռնարկները[ը] մէկ աղբիւրէ հոգալ եւ մէկ քոնթրոլի տակ պահել։ Առարկուեցաւ դաւանութեանց տարբերութիւնը, որու հետեւանքով, նոյնիսկ յանձն առինք մեր դպրոցներու մէջ կամաւոր ընել կրօնական դասերու հետեւիլը կամ գոհանալ կիրակնօրեայ վարժարաններու դասաւանդութեամբ, կրօնական դասերը մեր ծրագրէն դուրս ձգելով»[33]։

Արսլանի նախաձեռնութեամբ[34], Հոկտեմբերին Գաղութային կեդրոնի վարչութիւնը իր ծրագիր-կանոնագիրը «ամբողջ հայ գաղութիս ընդունելի ընելու համար հրաւէր կարդաց Հայրենակցական Միութիւններու, կազմակերպութիւններու եւ կարգ մը ծանօթ անձնաւորութիւններու որոնց ներկայացուցիչներէն կազմուած ժողովին մէջ, քուէարկութեամբ ընդունուած 5 անձերէ կազմուած Ցանձնախումբ մը Վարչութեանս դիւանին հետ խորհրդակցաբար»[35] յաւելումներու եւ փոփոխութիւններու ենթարկեց։ Վերջիններս 23 Դեկտեմբեր 1927ին վարչութեան ներկայացուեցան ու ընդունուեցան, «միայն թէ՝ յարանուանութեանց եկեղեցիներու օգնութեան խնդիրը առկախ մնաց. հայ-կաթոլիկ եւ բողոքականաց հետ վարչութեանց համաձայնութիւն մը գոյանալու պարագային նոյնութեամբ պիտի

ընդունուի սոյն յօդուածը. հակառակ պարագային՝ ինչ որ էր առաջ նոյնութեամբ պիտի մնայ»[36]:

Ի վերջոյ, այդ համաձայնութիւնը չգոյացաւ: Ինչպէս Արսլան կը գրէ, «ամէն գնով կը փափաքէինք գաղութը մէկ պահել, որպէսզի մեր թիւի նուազ հանգամանքը փոխարինուէր մեր միութեան ուժով: Սակայն, ոչ մէկ կերպով հնարաւոր եղաւ համաձայնութեան եզր մը գտնել: Մեր վերոյիշեալ պայմանները առանց առարկութեան ընդունուեցան մեր Աւետարանական եկեղեցւոյ պատկանող հայրենակիցներու կողմէ, սակայն տեսնելով որ միութեան մեր նպատակը լիովին չէր կարելի գործադրել վերոյիշեալ անջատողական ձգտումներու բերմամբ, ուստի, ստիպուեցանք տարբեր ուղղութիւն մը ընտրել մեզ համար»[37]:

5 Դեկտեմբեր 1927ին Գաղութային կեդրոնի կեդրոնատեղիին չինուելուն համար նախատեսուած պահեստի ֆոնտի եկեղեցաշինութեան յատկացումով[38], երեք յարանուանութիւններուն բաժանումը փաստական անշրջելի իրողութիւն մըն էր:

Գազազեանի աշխատանքը, հակառակ իր ունեցած սահմանափակումներուն, Առաքելական Վարիչի պատուիրակին՝ Գերպ. Ֆորթունաթօ Խ. Տեվոթոյի դրուատիքին արժանացած էր 24 Օգոստոս 1925ին, երբ վերջինս կը գրէր. «Եկեղեցական վարչութիւնը մեծ գնահատանքով իմացած է ձեր ջանքերուն մասին՝ մայրաքաղաքս ապրող հայ կաթողիկէներու ի նպաստ: Ան Աստուծոյ չնորհակալութիւն կը յայտնէ՝ գաղութին մէջ ձեր նախանձախնդրութեան ու ջանքերուն գտած չինիչ արձագանգին համար: Ան ամէն կարելին պիտի ընէ որպէսզի կարճ ժամանակին ձեր բաղձանքը իրագործուի՝ այս մայրաքաղաքին մէջ հայ կաթողիկէ եկեղեցի մը ու դպրոց մը ունենալուն»[39]:

Կաթողիկէ վարդապետին իրաւական վիճակը բարելաւուեցաւ իր ժամանումէն չորս տարի ետք միայն: 23 Մարտ 1928ին, Արեւելեան Սրբ. Ժողովը իրեն լիազօրագիր մը ղրկեց, արտօնելով որ խորհուրդներու մատակարարումին մէջ հռոմէական ծէսին յարմարէր, Ս. Պատարագի բացառութեամբ: Դեկտեմբեր 1929ին, կաթողիկէ համայնքը իր առաջին ուխտագնացութիւնը կատարեց դէպի Լուխանի հռչակաւոր սրբավայրը՝ 400 հոգիի մասնակցութեամբ[40]:

Որքա՞ն էր հայ կաթողիկէներու թիւը Արժանթինի մէջ այս ժամանակաշրջանին: 1940ի չուրջ, Գազազեանը հայ կաթողիկէներու 5000ի մօտ թիւ մը տեղեկագրած է Նագլեանին, լուսաւորչականներու թիւն ալ 20,000ի չուրջ գնահատելով[41]: Սակայն, երկու յարանուանութիւններուն միջեւ 1:4 համեմատութիւնը քիչ հաւանական է, եթէ նկատի ունենանք, որ ընդհանրապէս, սփիւռքահայ որեւէ համայնքի մէջ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հաւատացեալներու անուանական թիւը 85-90 առ հարիւրի չուրջ կը դառնայ, եւ թէ մնացեալ

տոկոսը կաթողիկէներու եւ աւետարանականներու միջեւ պէտք է բաժնուի[42]:

1936-55ին Գազազեանի պատրաստած տոմարը, 1958 թուագրեալ ուրիշ արձանագրութիւններու հետ միասին, 360 գրանցուած ընտանիքներու ցանկ մըն է[43], որ հաւանաբար ծուխի գործօն եւ ոչ-գործօն անդամներ կ'ընդգրկէ: Ենթադրելով, որպէս առաւելագոյն կարելիութիւն, չուրջ 50 առ հարիւրի պակասաւոր գնահատում մը - ներառեալ Մարտինի հայերը, բոլորովին կղզիացած՝ ընդհանուր համայնքի եւ նոյնիսկ կաթողիկէ համայնքի կեանքէն[44], եւ երկրի ներքին նահանգները ապրող հայ կաթողիկէներու չնչին գումարը - եւ որդեգրելով հինգ չունչով ընտանիքի գոյութիւնը[45], կրնանք 2500 հայ կաթողիկէներու աւելի իրատես թիւ մը հաշուարկել, այսինքն՝ Գազազեանի տուած թիւին կէսը: 1943ին, արժանթինահայոց ընդհանուր թիւը 22,000ի չուրջ կը գնահատուէր[46]:

Ըստ յիշեալ տոմարին, 145 ընտանիքներ անգարացի էին, 97 ընտանիք՝ մարաշցի, իսկ մնացեալները՝ այլ քաղաքներէ[47]: Թրքախօս երկու համայնքներու գերակշռութիւնը (մօտ 70 առ հարիւր) մէկ կողմէ յաջորդող տասնամեակներու արժանթինահայ կաթողիկէներու լեզուական արագ ուծացումը կը բացատրէ՝ թրքերէնէ սպաներէն արագ անցումով եւ, միւս կողմէ, 1929ին ամբողջովին սպաներէնով հրատարակուած կրօնական պարբերաթերթի մը փաստը: Այս երեւոյթին առընչակից է 1920ականներու հայ առաջին թերթերէն մէկուն՝ Արժանթինի մէջ (1927-1931), թրքերէն (հայատառ, արաբատառ, լատինատառ) սիւնակներու - մերթ՝ ամբողջական էջերու - լոյս ընծայումը, որոնք երբեմն կաթողիկէ համայնքը անմիջականօրէն չահագրգռող տեղեկատուութիւն կը պարունակէին:

Արդարեւ, 1929ին Արժանթինի (եւ Հարաւային Ամերիկայի) հայ նորածիլ մամուլը ունեցաւ իր առաջին կրօնական թերթը, ամբողջովին սպաներէն Լա Ռեւիսթա Արմենիան (La Revista Armenia, «Հայկական Հանդէսը»), որ Գազազեանի խմբագրութեամբ հրատարակուած է որպէս «Հայ կաթողիկէ Համայնքի Հոգեւոր Հովուութեան պաշտօնաթերթ»: 10 Նոյեմբերին «միակ թիւ» մը հրատարակելէ ետք, թերթը Ապրիլ 1930ին սկսած է լոյս տեսնել ամսական պարբերականութեամբ եւ իր առաջին շրջանին հրատարակուած է մինչեւ Դեկտեմբեր 1957՝ 16 էջով եւ տետրակի չափով: 1957-71ին լոյս տեսած են քանի մը թիւեր՝ անկանոն կերպով: 1971-75ին նոր շրջան մը ունեցած է՝ իբրեւ երկամսեայ ու եռամսեայ, հանդէսի չափով, 32 էջով եւ երկլեզու (հայերէն-սպաներէն)[48]:

Առաջին շրջանին, Լա Ռեւիսթա Արմենիա, ըստ էութեան, գուտ կրօնական բովանդակութեամբ հրատարակութիւն մըն էր, որ մեկուսապաշտ դիրքորոշում մը ցուցաբերած է հայկական համայնքին

նկատմամբ եւ քիչ տեղեկութիւն պարունակած է կաթողիկէ շրջանակէն դուրս։ Այսուհանդերձ, անոր կը պարտինք ցարդ յայտնի Հայոց պատմութեան սպաներէն առաջին ամփոփումը մամուլին մէջ (առանց հեղինակի անունի), Նոյեմբեր 1931-Մայիս 1933 թիւերուն մէջ, անկանոն կերպով։

Հասանք Պէլ Բունար գիւղ։ Բնակիչները դարձեալ փախած էին։ Ֆրանսական զինուորներն մտան տուներու մէջ եւ հայ ծիւրածներու զանգուածը նետեցին բացօդեայն, քանի որ օդը ամպամած էր եւ հարաւային քամի մը ձիւնի տեղատարափ մը սկսած էր թափել մեր գլխուն։ Բնութիւնն ու տարերք դարձեալ սկսան կռուիլ մեզի դէմ։

Ձիւնն սաստկացաւ, մինչեւ լոյս չարունակեց թափել իր թոյնն խեղճ, մերկ, բաց, անօթի հայուն գլխուն։ Այդ գիշեր սառեցան 150է աւելի անձինք եւ հետեւեալ օր՝ Ուրբաթ, Փետրուար 13ի առտուն, երբ կարաւանն կը քալէր չարունակ սաստկացող մրրկախառն ձիւնին տակ, այդ սառողներն կիսամեռ վիճակի մէջ թողուցինք Պէլ Բունարի բացօդեայն եւ քալեցինք։ Ճամբաներն կէս կանգուն ծածկուած էին

ձիւնով: Հետք գտնել անկարելի էր: Ֆրանսացի զինուորներ 50-60 հոգիներէ բաղկացած հայերու խումբ մը առաջ քշեցին ձիւնին մէջէն՝ ճամբայ բանալու համար յառաջանալիք զինուորներուն: Անոնք հրացաններու կոթերուն հարուածներուն տակ ճամբայ կը հարթէին ձիւնին մէջ: Զինուորներն ատկէ կ'անցնէին, իսկ հայերուն համար մահացու մեղք էր այդ հայուն բացած ճամբայէն անցնիլ: Ֆրանսական զինուորներ հրացանի կոթերով, կիցերով եւ հրմշտկելով մեզի կը քշէին մէկ կանգունի մօտեցող ձիւնի թանձրութեան մէջ: Շատերս կը թաղուէինք եւ ահագին ճիգերով ետ կ'ելլայինք դուրս: Սառողներու շարք մը սկսաւ: Ամէն երկու րոպէ, հեռաւորութեան վրայ, մէկ երկու պզտիկներ, կիներ անօթութենէ ծիւրած քաջակազմ մարդիկներ ինկան ու ինկան, սառեցան, մեռան եւ դեռ ֆրանսական զինուորներն կը հրմշտկէին մեզի ձիւնին մէջ, եւ դեռ Աստուած կը թափէր ձիւնի սոսկալի մրրիկ մը, եւ դեռ տարրերն միացած կը ջանային փճացնել մեզի: Ինկողներ հետզհետէ բազմացան, այնպէս որ ամէն 40-50 քայլափոխին հայր ու զաւակ, մայր ու աղջիկ իրարու պլլուած կ'աղաչէին իրարու, որ ելլեն քալեն: Կ'աղերսէին ֆրանսացիներուն որ կտոր մը հաց տան, կամ կէս ժամ կառքի մը, ջորիի մը վրայ նստեցնեն գիրենք: Խուլ էին ֆրանսացիք: Խուլ էր նաեւ բնութիւնն: Աստուած ալ չէր լսեր ալ մեր պաղատագին աղերսն, ողբն ու կոծն, անմեղ մանկիկներու ձիւներու տակէն բզզիւնի պէս լսուող ճիչերն:

Շարունակեցինք ճամբան մինչեւ կէս օր, միշտ սոսկալի ձիւնի տարափին տակ: Հոն՝ Ինթէլլիի[43] մօտ, ճամբան չփոթեցին զինուորներն ու հայերն: Սկսանք թափառիլ լեռներու մէջ: Իրիկուան ժամը 5ին ինկանք Զէնճիրլի Քէօյ[44]: Մաս մը յառաջապահ հայեր եւ զինուորներուն մեծ մասը անցան գացին, իսկ մեծ մասամբ հայեր, հայ կամաւորներու եւ ալճէրիացի գունդի մը հետ մնացինք նոյն գիւղը եւ գիշերեցինք անմարդաբնակ տուներու մէջ: Կէս գիշերին ուրիշ գունդ մը ալճէրիացի զինուորներ ալ եկան գիւղը եւ մեզի տուներէն դուրս հանեցին բացօդեայն: Բազում աղաչանքով կրցանք երդիքներու տակ թխմուիլ եւ ձիւնին տարափէն ազատիլ: Այդ գիշերն ալ լուսցուցինք եւ Փետրուար 14, Շաբաթ առտու, Զէնճիրլի գիւղէն մեկնեցանք դէպի Իսլահիյէ: Օդը մեղմացած էր: Նոյն օրուան կէսօրէն վերջ հասանք Իսլահիյէ: Հետեւեալ օրը մեզի օգնութիւն հասաւ Ատանայի Ազգային Միութենէն: Պատուիրակութիւն մը հաց, տաք թէյ, կաթի գօնսէրվներ բաշխեց, պաթթանի տուաւ եւ մեզի զետեղեց տուներու, խանութներու, հօթէլի եւ խանի մէջ: Եթէ այդ օրուան օգնութիւնն հասած չըլլար Իսլահիյէ հասնող ժողովրդեան 1/3ն ալ պիտի մեռնէր: Ուրիշ յիշատակելի պարագայ մըն ալ կայ, որ առանց յիշելու անցնիլ չ'ըլլար: Ան է Ֆրանսական բանակին մէջ եղող եւ մեզի ընկերացող հայ կամա-

ւոր գունդին հայոցս հանդէպ ունեցած ազգանուէրի եւ պարտաճանաչի վերաբերումը։ Ամբողջ մեր այս տաժանագին ճամբորդութեան մէջ, անոնք չալկեցին մեր պզտիկներն, իրենց տրուած սնունդը եւ հացը բաշխեցին խեղճ անօթիներուն, ետեւը մնացողները, քալելու անկարող եղողները իրախուսեցին, թեւերնին մտան յառաջացուցին, մեզի հետ լացին ազնիւ տղաքը։ Ապրին անոնք։ Հայորդիներ, ճշմարիտ հայեր եղան անոնք։ Առնուազն 500 հոգւոյ փրկութիւնն կը պարտինք անոնց։ Ցիշելու է անունն սէրժան Նշանեանին եւ ուրիշ շատերուն, որոնց դժբաղդաբար անուններն անծանօթ են ինծի, որ մէկիկ մէկիկ յիշեմ։ Արժանի են փառաւորուելու։

16-17 Փետրուարին, մաս առ մաս, հայեր փոխադրուեցան Ատանա, ձրի թրէնով, իսկ մնացողներն, 18 Փետրուար լուանալու գիշերն եւ 21 Փետրուար, Շաբաթ օր, բոլորն ալ ղրկուեցան Ատանա։ Այս 8 օրուան մէջ միշտ հացով եւ կաթով մեզի օգնեցին Ատանայի հայեր եւ Ազգային Միութիւնը։ Շնորհակալութեան պարտք մը ունինք արտայայտելու իրենց հանդէպ։

28. 2. 1920
Հալէպ

Գրեց՝
Նշան Պ. Սահթճեան
(վաճառական ի Մարաշ
չրջանաւարտ Կ. Թ. Գօլէճի
Այնթապու)

* * *

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԱՐԱՇԻ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Մարաչէն Ֆրանսական բանակի զօրասիւնը նահանջեց 1920 Փետրուար 13ին, 21 օրուան աննպաստ եւ ձախող պատերազմէ մը վերջ, յորում քաղաքին բնակչութենէն 12 հազար հայ կին, այր, պատանի եւ երախաներ անխնայ ջարդուեցան քէմալական հորդաներու կողմէն։ Նահանջող զօրասիւնին հետեւելով մազապուր փախչողներ եղան, թուով մօտաւորապէս 3500 հոգի՝ ամէն տարիքէ եւ երկու սեռէ։ Այս փախստականներուն մօտաւորապէս 1450 հոգին, բնութեան խստութեանը, ձիւնի եւ սաստիկ սառնամանիքի պատճառաւ ճամբան սառած ինկան, մինչեւ որ Իսլահիյէ հասան, ուսկից Ատանա փոխադրուեցան։ Այժմ Մարաշի մէջ վերապրող իսլեակները 7600 հոգի են, հետեւեալ բաժանումով.

2.000	Հոգի	20էն վեր այր մարդիկ
1.500	»	10-20 պատանիներ՝ երկսեռ
2.000	»	երկսեռ եւ անչափահաս որբեր
2.100	»	կիներ ամէն տարիքէ, որոնց մօտ 800ը այրիներ
7.600	»	գումար

Վերապրող այս թշուառականները Ֆրանսական նահանջին յաջորդող օրերու մէջ, իրենց թաքստոցներէն դուրս բերուած, մերկացուած, թալանուած եւ մի քանի չէնքերու մէջ տեղաւորուած են: Նոյն ատեն, քաղաքի բոլոր հայ տուներ ու խանութներ թալանուած եւ ինչ որ հայուն կը պատկանէր լիովին իւրացուցուած են Թրքերու կողմէ: Մերկ, բոպիկ, առանց դրամի, առանց ծածկոցի այս անօրինակ թշուառները ամերիկեան A.C.R.N.E.ի[45] եւ քոյր A.R.Crossի[46] կողմէ եղած անմիջական եւ նախախնամական օգնութիւններով փրկուած են զանգուածային եւ անխուսափելի սովամահէ մը: Այդ վեհ գործին մէջ փրկարարի դեր կատարեց A.C.R.N.E.ի հիւանդանոցի բժշկապետ Dr. Wilson, որուն անունը հայ դժբաղդութեանց տարեգրութեան մէջ լուսեղէն եւ ոսկի տառերով արձանագրուած պիտի մնայ:

7600 այս վերապրողներէն մօտ 200 հոգի Թրքերու քով ծառայութեան մտած են, չնորհի ձեւով վճարուած նուազագոյն վարձքի մը փոխարէն, որ ստէպ փառաւոր ծեծով կամ գաւազանահարութեամբ ալ կը խառնուին: Ամերիկեան կարմիր խաչը մարդասիրաբար գործ կու տայ 300ի մօտ այրիներու, հիւանդանոցներու, որբանոցներու եւ այլ նման հաստատութեանց մէջ: Նոյնպէս 2,000 որբերու մեծամասնութիւնն կը գտնուի նոյն վեհ Ընկերութեան հոգածութեան տակ: Ասկէ զատ, ամերիկեան A.C.R.N.E.ին այրիներու որոշ մէկ մեծ մասին օրական 40 փարա ողջդրամ նպաստ մը կու տայ: Արտասահմանի մեր հայ ազգակիցները մօտերս ղրկած էին 1,200 Լիրա Օսմանեան նպաստ մը, զոր Հայ Ընկերատամատոյց մարմինն կը բաշխէ անգործ մնացող հայ այրերու: Արդէն գործելու երբեք չեն արտօներ զանոնք թուրքերը եւ բոլոր քաղաքին մէջ 8-10 հայ արհեստաւորներ կը գործեն այժմ, որոնց աշխատութիւնն քմահաճօրէն եւ անխղճօրէն կը վարձատրուին Թրքաց կողմէ, եւ անոնց գործելու կը ներեն սա միակ պատճառաւ, որ Թրքեր չեն կրնար այդ արհեստները բանել: Ժողովուրդը չուկայ չ'կրնար իջնալ, եւ չատ մը կիներ եւ մանուկներ կը գանակոծուին եւ կը քարկոծուին, երբ իրենց խչտիկներէն դուրսը տեսնուին: Ցարդ, այսինքն նահանջէն վերջ, 50է աւելի աչքառու հայ այր մարդիկ անհետացուցուած են քաղքին մէջ եւ 34 երեւելի ազգայիններ բանտարկուած են, որոնց 3ին դատավարութիւնն լրացած եւ մէկմէկ տարուան խցարգելութեան դատապարտուած են: Մնացեալներու հարցաքննութիւնն իսկ կատարուած չէ: Աւելորդ է յիշել անոնց վերագրուած

ամբաստանութիւնն. այդ է ֆրանսասիրութիւնն: Քաղաքին մէջ չ'կայ ոեւէ Ազգային Իշխանութիւն, որ առօրեայ պատահած քամունելի հարստահարութեան եւ բռնութեանց դարման տանիլ խորհի, եւ այդ անկարելի է արդի պայմաններու տակ: Միայն Հայ Նպաստամատոյց Մարմին մը կայ, ընդ պաշտպանութեամբ Ամերիկեան Նպաստամատոյցին: Ցարդ բռնաբարումի եւ կուսապղծութեան երկու չնական արարքներ գործուած են հայերու վրայ թրքերու կողմէ: Առօրեայ հայ կեանքին մասին սա չափը ըսել բաւական է, որ օրը մէկ քանի անգամ, չարաթը տասնեակներով ջարդի եւ թալանի սպառնալիքներ, խուճապ եւ ծակէ ծակ փախուստի դէպքեր կը պատահին: Թուրք խուժանի վայրենացած եւ գերագրգռուած ատելութիւնն եւ սանձարձակ գործելակերպը արգիլելու կարող կառավարութիւն մը չ'կայ: Նոյնիսկ խենդ մը փողոցին մէջ մէկ ձեռք ատրճանակ արձակելով կրնայ 7800 հայութիւնն ծակամուտ թխմել հոն ու հոս եւ ժամերով մահուան մղձաւանջին տակ պահել: Անտանելի, անկրելի, անբացատրելի է այդ իրապէս «թշուառ»ներու վիճակը:

Ցարդ հայ ժողովրդեան եւ մեծերու ստորագրութեամբ, Պօլսոյ, Քէմալի եւ օտար թրքասէր իշխանութեանց ուղղուած հեռագիրներ, աղերսագրեր եւ այլն, բոլորովին սուտ են եւ հայեր ստորագրած են զանոնք թրքական սպառնալիքի տակ եւ բոլորովին բռնադատուած: Համաձայնական, յունական, ֆրանսական ոեւէ մէկ յաջողութիւն զանազան ճակատներու վրայ, այնքան կը գրգռէ թուրք խուժանին զայրոյթը, որ յոխորտանօք կը յայտարարեն հայերու թէ մօտ է իրենց վերջին ժամը:

Տարագրութենէ դարձող հայեր, պատերազմի միջոցին իրենց փըլցուած տուներէն մէկ մասը նորոգած էին, իսկ անվնաս մնացողներ ալ հաստատուած էին իրենց ընտանեկան օճախին մէջ, որով 4,500/ մօտ հայ տուներէ կը բաղկանար հայկական բաժինն քաղաքին: Այժմ այդ թուէն հազիւ 200 տուն կանգուն կը մնան: Մնացեալը հրկիզուած են մեծ մասամբ եւ մաս մըն ալ ֆրանսական նահանջէն վերջ փլցուած են: Ցարդ կանգուն մնացող 200 տուներու դուռ, պատուհան, սալայատակ, բազրիկ, կղպանք եւ ամէն ինչերն ամէն օր կը քակուին եւ կը տարուին թրքերու կողմէ, եւ այս՝ կառավարութեան աչքին առջեւ: Աւելի դառն պարագայ մը. թշուառ մնացած հայեր օր ըստ օրէ թրքերու կը ծախեն իրենց արտ, այգի, պարտէզ, տուն, խանութ եւ այլ անշարժ կալուածներն, անսուաղ չ'մեռնելու համար եւ այդ հազիւ մէկ տասներորդ գնովն իր իրական արժէքին: Հայ երեւելիներէն շատեր թրքերու կողմէ բռնութեամբ կը տարուին կառավարչատուն եւ հոն հայերու կալուածներն «թափուր» ընել կու տան թուրք որոշ մեծամեծներու անուան եւ այս ստէպ առանց փոխարժէքի մը վճարման: Այս

երկու ձեւ կալուածական վաճառումով մինչեւ 3-4 ամիս Մարաշի հայութիւնն պիտի զրկուի իր հողային եւ կալուածային բոլոր ստացուածքներէն եւ պիտի մնայ կատարեալ մուրացիկի մը հանգամանքին եւ վիճակին մէջ:

Եօթը ամիսներէ ի վեր Մարաշի հայութենէն ստացուած նամակներ եւ տեղեկագրեր, որոնք խիստ գաղտնի միջոցներով կրնան ղրկուիլ, կը պաղատին եւ կ'աղերսեն, որ փրկելու միջոցներ խորհի Ազգը՝ զիրենք այդ դժոխքէն ազատելու, այլուր փոխադրելու համար: Անոնք պատրաստակամութիւն կը յայտնեն չոր հացի մը համար մշակութիւն, գործաւորութիւն ընել, ազատ օդի մը, խաղաղ շրջանակի մը մէջ: Այս է ահա անոնց միահամուռ իղձը: Ամէն օր ջարդի վտանգ կայ հոն: Այսօր թերեւս գանոնք փրկել կարելի պիտի ըլլայ, իսկ երբ ուշանայ, օր մը լսած պիտի ըլլանք, որ անոնք այլեւս գոյութիւն չունին:

Այս տեղեկութիւններն ստացուած են խիստ մօտերս Մարաշէն փախուստով հոս հասնողներէ եւ ծածկաբար ղրկուած պաշտօնական տեղեկագրութիւններէ, որոնք ստորագրած են տեղւոյն յարանուանական պետերու եւ երեւելիներու կողմէն: Մատուցանելով գայս, կը խնդրենք, որ կոչում մը ընէք մարդասիրական ոգւոյն այն անշահախնդիր իշխանութեանց մօտ, որոնք կրնան դարման մը խորհիլ եւ գործադրել այդքան անմեղ վերապրող խեղճերու կեանքին ապահովութեանը մասին: Մնամք խորին յարգանքներով.

Հալէպ 23 Օգոստ. 1920

Ց. Շ. Շատարեւեան
Պ. Գրաճեան
Ա. Մոմճեան
Յովհաննէս Սարգիսեան
Ն. Սաաթճեան
Քերոբ Թիւթիւնճեան

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Սաաթճեանի «Մարաշի Ազէտը 1920-ին. Ապետական Ցրանսայի Անփառունակ Նահանջը» խորագրով վկայութիւնները, յուշերու ձեւով, լոյս տեսած են Ցուշամատեան Մեծ Եղեռնի 1915-1965, Պէյրութ, Հրատարակութիւն «Զարթօնք» Օրաթերթի, 1965, էջ 830-845: Ցուշերը գրի առնուած են դէպքերէն չուրջ 45 տարի անց: Որոշ ընդհանրութիւններով հանդերձ, անոնք մեր կողմէ հրապարակուող վաւերաթուղթէն կը տարբերին իրենց քէ՛ բովանդակութեամբ, քէ՛ ընոյթով: Իրրեւ առաւել վաւերական եւ հարազատ վկայութիւն կ'ընդունինք ներկայիս մեր հրապարակածը՝ դէպքերուն յաջորդող օրերուն գրի առնուած տեղեկագիրը, մանաւանդ որ ան գերծ է ժամանակի ընթացքին կրած ազդեցութիւններէ, ինչպէս նաեւ յետագայի եզրակացութիւններէ ու գնահատականներէ:

[2] Շ. Թ. Թորոսեան, Կիլիկիայի Հայերի Ազգային-Ազատագրական Շարժումները 1919-1920 Թ.Թ., Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1987, էջ 148:

[3] Ռ. Գ. Սահակեան, *Թուրք-Ջրանախական Ճարտարերութիւնները Եւ Կիլիկիան 1919-1920 ՔՔ.*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1970, էջ 148։

[4] Materne Mure, 'Le massacre de Marache (février 1920)', extrait du *Flambeau: Revue belge des questions politiques et littéraires*, 4e année, no. 1, janvier 1921, էջ 8, Թարգմանաբար մէջբերուած՝ Սահակեան, էջ 150։

[5] Նոյն, էջ 161։

[6] Զօր. Լուի Ալպէր Քէրէթ Արեւելեան Կիլիկիոյ՝ Այնթապի, Ուրֆայի եւ Մարաշի Ֆրանսական զօրքերու վերին հրամանատարն էր։

[7] Ախինքն՝ կառավարիչին փոխանորդը։ Ան եւ մնացեալ բոլոր ընդդիմութիւնները՝ հեղինակինն են։

[8] Այսինքն՝ քաղաքագլուխ։

[9] Թաղապետ Մուհասէպէճի Հաճի Քէօր Ալի Պէյ Իթթիհատական կոմիտէի անդամ եւ Մարաշի Թուրք երեւելիներէն էր։

[10] Գոճապաչ Օղլու Հաճի Նաճի Իթթիհատական կոմիտէի անդամ եւ Մարաշի Թուրք երեւելիներէն էր։

[11] Քեաթիպ Զատէ Մէհմէտ Մարաշի Իթթիհատական պարագլուխներէն էր։

[12] Շիւման Զատէ Արէֆ Մարաշի Թուրք երեւելիներէն էր։

[13] Աճէմլին Մարաշի թաղերէն մէկն էր, խառն՝ հայ եւ Թուրք բնակչութեամբ։ Մարաշ քաղաքը կը տարածուէր ճօթը բարձր բլուրներու վրայ։ Ըստ այդմ՝ բլուր եւ ձորամէջ կը կազմէին Մարաշի բնական թաղերը։ Քաղաքը բաղկացած էր 41 թաղերէ։

[14] Սէրայ Ալթըն Մարաշի գլխաւոր թաղերէն էր, որ նոյնպէս ունէր խառն՝ հայ եւ Թուրք բնակչութիւն։

[15] Գերմանական Մանչերու Որբանոցին չէնքերը՝ Պէյթ Շալոմ, կը գտնուէին Քիւնպէթի բլուրին վրայ, քաղաքին հիւսիսային կողմը։

[16] Հայ Բողոքականաց Ա. Եկեղեցին կը գտնուէր Տիւանլը թաղին գառիվարը։

[17] Հայ Կաթողիկէ Ս. Փրկիչ Եկեղեցին կը գտնուէր Տիւանլը թաղին մէջ։

[18] Լատինաց վանքը՝ Թէրրա Սանթա Մխիթն, Մարաշի ամէնէն չքեղ կառոյցներէն մէկն էր եւ քաղաքին հիւսիսային կողմը՝ գեղեցիկ դիրքի մը վրայ, կը գտնուէր։

[19] Ս. Քառասուն Մանկունք Մայր Եկեղեցին՝ Մարաշի եկեղեցիներէն ամէնէն բազմամարդն ու բարգաւաճը, կը գտնուէր քաղաքին հարաւային կողմը։ Հոս էր նաեւ Ազգային Առաջնորդարանը։

[20] Նշեալ վայրերը Մարաշի գլխաւոր չուկաներն ու խաներն էին։

[21] Շէքէրտէրէն Մարաշի արեւմտեան կողմը, միջնաբերդին հայող զուտ հայաբնակ թաղերէն մին էր։

[22] Ս. Գէորգ Եկեղեցին կառուցուած էր Մարաշի արեւմտեան կողմը՝ Շէքէրտէրէ թաղին կեդրոնը։

[23] Հայ Թաղի կեդրոնը կառուցուած բարձրադիր ու քարաշէն Ս. Աստուածածին Եկեղեցին Մարաշի հնագոյն եկեղեցին էր. ունէր աւելի քան հազարամեայ հնութիւն։

[24] Հայկական թաղերու իրարմէ հեռաւորութիւնն ու կորուստածութիւնը եւ ըստ այդմ մարաշահայութեան ցրուածութիւնը արդելք կը հանդիսանային յաջող ինքնապաշտպանութեան համար։ Այդ իսկ պատճառով, որոշում կ՚առնուի ձգել ծայրամասային թաղերը եւ կեդրոնանալ գլխաւորաբար եկեղեցիներու մէջ։ Ջնայած ինքնապաշտպաններու հերոսական ճիգերուն, Թուրքերը՝ յարձակելով եկեղեցիներու վրայ եւ զանոնք ամբողջովին նաւթով ողողելէ ետք, հրոյ ճարակ կը դարձնեն եկեղեցիներն ու աչնաեղ պատսպարուած հազարաւոր հայեր։

[25] Տէօնկէլէն Մարաշէն դէպի արեւմուտք, Ձիհան գետի ալ ափին գիւղ մըն էր՝ 120 տուն (կամ շուրջ 1000 հոգի) զուտ հայ բնակչութիւն։ Կիլիկիոյ 1909ի դէպքերուն կը յաջորդեն ընդհանուր պատերազմի ու տեղահանութեան տարիները, եւ Տէօնկէլ-

լէ եւս՝ շրջանի բոլոր հայ գիւղերուն նման, ամբողջովին կ՚աւերուի Թուրքերու կողմէ։ Զինադադարէն ետք վերապրող տէօնկէլէցիներ կը վերադառնան հայրենիք եւ կը փորձեն վերաշինել գիւղը, սակայն չուտով վրայ կը հասնին Մարաշի վերջին կոտորածները, որոնց զոհ կը դառնայ նաեւ Տէօնկէլէյի հայութիւնը։

[29] Եէնիճէ Գալէ (Նոր Բերդ) Մարաշէն դէպի հիւսիս-արեւմուտք գիւղ մըն է, ձորի մը մէջ, չորս կողմէն շրջապատուած անտառուտ լեռներով։ Ունէր 150 տուն կամ 800 հոգի զուտ հայ բնակչութիւն։ Եէնիճէ Գալէի հայութիւնը նոյնպէս կը կիսէ շրջանի բոլոր հայ գիւղերու բնակչութեան դառն ճակատագիրը։

[30] Քիչիքիլին Մարաշ կեդրոնին ենթակայ ամբողջովին հայաբնակ գիւղ մըն էր, քաղաքին հարաւ-արեւմտեան կողմը։ Ունէր 82 տուն, մօտ 450 բնակիչ։ 1895ի եւ անոր յաջորդող կիլիկեան կոտորածներու շրջանին գիւղը ամբողջովին թալանի կ՚ենթարկուի շրջակայ գիւղերու Թուրք խուժանին կողմէ։ Մեծ կորուստներու գնով եւ քանիցս ինքնապաշտպանութեան դիմելով, Քիչիքիլիի հայութիւնը կը յաջողի ետ մղել ջարդարար խումբերը։ 1915ին դրացի Թուրքերը դարձեալ կը յարձակին գիւղին վրայ եւ քիչիքիլիցիներ ստիպուած կը լքեն հարազատ գիւղն ու կ՚ապաստանին Ջընտըճագ, ուր կը մասնակցին ընդհանուր ինքնապաշտպանական կռիւին։ Գիւղին փոքրաթիւ վերապրողները կը բնաջնջուին 1920ի ազիտաւլի կոտորածներու ընթացքին։

[31] Ջընտըճագը Մարաշի դլխաւոր հայկական գիւղն էր, քաղաքին հարաւ-արեւմուտքը պատերազմէն առաջ Ջընտըճագ ունէր 300 տուն, 2200 բնակիչ։ Հակառակ Ջընտըճագցիներուն մղած հերոսական պայքարին, գիւղն անխնայ կոտորածներու կ՚ենթարկուի 1915ին։ Զինադադարէն ետք, շուրջ 1000 վերապրողներ կը վերադառնան հայրենիք՝ ապաւինելով Դաշնակից Բանակներու ներկայութեան եւ կը ջանան վերաշինել իրենց կործանած գիւղը։ Սակայն, շատ չանցած, ծայր կ՚առնէ ընդհանուր տարագրութեան եւ բնաջնջումի ալիքը, եւ Ջընտըճագցիներ կրկին կը դիմեն ինքնապաշտպանութեան։ Ոչխարու եւ միջոցներու անհաւատար պայմաններու տակ, այս քաջ լեռնականները արիւնալի մարտեր կը մղեն թշնամի բանակին դէմ։ Ի վերջոյ, Թրքական զօրքը կը յաջողի ներխուժել գիւղ եւ հաշուենկատ տեսնել Ջընտըճագցիներու հետ՝ անխնայ ջարդերու ենթարկելով բոլորը՝ առանց սեռի եւ տարիքի խտրութեան։

[32] Զէյթէական խումբերը Եղեռնի նախօրեակին կազմաւորուեցան օսմանեան կառավարութեան անմիջական հովանաւորութեամբ։ Անոնք բանտերէ արձակուած գողեր, աւազակներ եւ չեղուզակներ էին, որոնք յետագային պարբերաբար կը համալրուէին նմանատիպ տարրերով։ Կառավարութեան կողմէ գինուած չէթէներուն ազատութիւն տրուած էր յարձակելու հայոց վրայ, կողոպտելու եւ սպաննելու զանոնք, քանդելու անոնց գիւղերը։ Ադբիւրներու մէջ, Մարաշի 1920ի դէպքերուն մասնակից չէթէներուն թիւը 500-600 կը համարուի։ Անոնք ունէին միեւնոյն տարազը, կը կրէին մինչեւ ուսերը իջնող ճերմակ գլխանոց, ոտքերնուն՝ տրեխ։ Զինուած էին գերմանական մաուզըր հրացաններով, կարճ, երկսայրի սուրերով եւ մահակներով (տուխա)։ տե՛ս՝ Գրիգոր Գալուստեան, *Մարաշ եւ Գերմանիկ Եւ Հերոս Զէյթուն*, Երկրորդ Հրատարակութիւն, Նիւ-Եորք, 1988, էջ 814։

[33] Ուլու Ճամին քաղաքի ամենամեծ մզկիթն էր։ Մարաշի վերջին դէպքերուն, քանի մը օրուայ ընթացքին, Ուլու Ճամիի մէջ պարտադրէս կը խողխողուին աւելի քան երեք հազար հայեր, մեծ մասամբ՝ կիներ, մեծահասակներ ու երեխաներ։

[34] Այսինքն՝ կիրի օճախ Հազարաւոր հայեր ողջ-ողջ կամ դիապարտ կը նետուէին կիրի այս փուռերուն մէջ։ Այդպիսով, Թուրքերը կ՚ազատէին օրէ-օր բազմացող դիակները թաղելու ձանձրոյթէն։

[35] Այսինքն՝ «Օգնեցէ՛ք հայերուն»։

[32] *Իսլահիյէն աւան մըն էր Առանայի Նահանգի ձագալ Պարաքաթ գաւառին մէջ, Պաղտատի երկաթուղիին մէկ կայարանը, ուր կը կեդրոնանային Ֆրանսական տեղաշարժող զօրքերը։*

[34] *Ախինքն՝ ինքնագործ հրազէնի տեսակներ։*

[35] *Արաբան Մարաշի թաղերէն էր՝ խառն, հայ եւ թուրք բնակչութեամբ, ուր կը գտնուէր հացահատիկի գլխաւոր չուկան։*

[36] *Ախինքն՝ «Գերեզմանոցէն զատ երթալիք ուրիշ տեղ մը չմնաց, անհաւատ Ֆրանսացիներ, դուրս ելէ՛ք, յանձնուեցէ՛ք»։*

[37] *Գնդապետ Ռոպէր Նօրման (Robert Normand) Մարաշի Ֆրանսական զօրքերուն օգնութեան հասած զօրասխնի հրամանատարն էր։*

[38] *Ախինքն՝ վաշտ։*

[39] *Ախինքն՝ «եմբակոժութիւնը»։*

[40] *Ագռաւն Մարաշի շրջակայքէն անցնող եւ շրջանի ցորենի եւ բրինձի արտերը ոռոգող գետակ մըն էր։*

[41] *Էլ Օղլուն Մարաշ գաւառի գլուղերէն էր։ Մինչեւ 1909ի կիլիկիոյ կոտորածները գլուղն ամբողջովին հայաբնակ եղած էր։*

[42] *Գիւղ՝ կիլիկիոյ մէջ։*

[43] *Ինթէլլին գիւղ է կիլիկիոյ մէջ, Ամանոս լեռնաշղթայի տարածքին։ Մեծ Եղեռնի օրերուն, այս գիւղը Տէր Զօր տանող երթուղիին վրայ գտնուող կայաններէն էր։*

[44] *Կիլիկեան երկրամաս՝ Ամանոս լեռներու մօտ։*

[45] ACRNE (American Committee for Relief in the Near East) *կամ Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան Օգնութեան Կոմիտէն առեղծուած էր 1918ին՝ Առաջին Աշխարհամարտի օրերուն ծնունդ առած Հայկական եւ Սուրիական Նպաստամատոյց Կոմիտէներու միաւորումով։ Կոմիտէի առաքելութիւնն էր պարէնով, հագուստով եւ դեղորայքով օժանդակել Մերձաւոր Արեւելքի երկիրներու պատերազմէն տուժած եւ կարիքաւոր բնակչութեան՝ հայերու, յոյներու, ասորիներու, եւլն.։*

[46] *Ախինքն՝ Ամերիկեան կարմիր խաչի։*

TWO UNPUBLISHED DOCUMENTS ON THE 1920 TRAGEDY IN MARASH

(Summary)

VARTY KESHISHIAN

The author publishes for the first time - with an introduction and annotations - two unpublished documents describing the withdrawal of French troops from the city of Marash in Cilicia in early 1920, the capture of the city by the Turkish Nationalist forces of Mustafa Kemal, and the massacre and flight of the local Armenian population. The first document was written by Nishan Saatjian in late February 1920, after he had taken refuge in Aleppo. It gives a detailed chronological description of events in Marash and the disastrous flight of the Armenian refugees between 21 January and 21 February 1920. The second document was again written in Aleppo on 23 August 1920. It is signed by Saatjian and five other Armenian notables from Marash. Based on reports the signatories had received from their home town, the document describes the difficulties faced by those Armenians who had stayed in Marash after it had been taken over by the Turkish Nationalists.

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Կոստան Զարեան, *Սպանիա,* բնագիրը հրատարակութեան պատրաստեց, յառաջաբանը եւ ծանօթագրութիւնները գրեց Եուրի Խաչատրեան, Երեւան, «Նայիրի», 1999, 380 էջ:

Կոստան Զարեան, *Նաւատոմար,* կազմեց, յառաջաբանը եւ ծանօթագրութիւնները գրեց Եուրի Խաչատրեան, Երեւան, Սարգիս Խաչենց, 1999, 668 էջ:

Կոստան Զարեան, *Դէպի Արարատ,* կազմեց, յառաջաբանը եւ ծանօթագրութիւնները գրեց Եուրի Խաչատրեան, Երեւան, Սարգիս Խաչենց, 2001, 417 էջ:

Կոստան Զարեանի Ի. դարավերջի վերյայտնութիւնը, որ տակաւին իր լման դրսեւորումին հասած չէ, գեղարուեստական եւ ուսումնասիրական հատորներու հունձքով մը արդիւնաւորուած է՝ Հայաստանի թէ Սփիւռքի մէջ:

Արդարեւ, յետմահու երեք հրատարակութիւններէ ետք - մամուլի մէջ գրուած գործեր՝ *Երկեր* (Անթիլիաս, 1975) եւ *Քանկօօպը եւ Մամուքի Ոսկորները* (Անթիլիաս, 1987), եւ անտիպ մը՝ *Գիրք Դիւցազներգութեանց* (Երուսաղէմ, 1978) - երկու տարուան մէջ՝ 1998-99ին Զարեան անունը չորս անգամ հնչած է գիրքով: Միաժամանակ լոյս տեսան իրեն նուիրուած առաջին երկու մենագրութիւնները (Արծրուն Աւագեան, *Կոստան Զարեան. Կեանքը եւ Գործը,* Երեւան, 1998[1], եւ Վարդան Մատէոսեան, *Կոստան Զարեանի Շուրջ,* Անթիլիաս, 1998), ինչպէս եւ գրախօսուող երեք հատորները՝ *Սպանիա, Նաւատոմար* եւ *Դէպի Արարատ.*

Մամուլին մէջ գրուած հայալեզու Զարեանի յօդուածներու գերակշիռ մասը համախմբող *Նաւատոմարին* զուգահեռ[2], գրականագէտ Եուրի Խաչատրեան երկու այլ կարեւոր գործեր իրագործած է՝ *Սպանիայի* առանձին հատորով լոյս ընծայումը[3] եւ անտիպ մնացած արուեստի պատմութեան հրատարակութիւնը՝ *Դէպի Արարատ* խորագրին տակ: Խաչատրեան զարեանական աշխարհի պատահական այցելու մը չէ: Վերջին տասնամեակին, այս ուղղութեամբ ան զանազան կարեւոր հրապարակումներ կատարած ու յօդուածներ գրած էր արդէն:

Զարեանի ներգաղթէն (1962) ետք, Երեւանի մէջ տպուած էին *Նաւը Լերան Վրայ* «մաքրագրուած» տարբերակը (1963) եւ *Տաւրագոմի Հարսը* (1965), որ կը ներառնէր երեք անտիպ վիպերգ: Այս բոլորը վերատպուած էր 1985ին, *Երկեր* խորագրով: Այդ վիպերգերէն զատ (որոնք յետոյ մաս կազմեցին *Գիրք Դիւցազներգութեանցին*), միւս գործերը առանձին գիրքով արդէն ծանօթ էին ընթերցողին: Հետեւաբար, *Նաւատոմարը* եւ *Սպանիան* Զարեանի հայաստանեան առաջին նոր հրատարակութիւններն են: Իսկ

*Դէպի Արարատ*ը արդէն կը բանայ անտիպներու հրատարակութեան շարքը:

Երեք գեղատիպ հատորները, թէ՛ ձեւով եւ թէ՛ բովանդակութեամբ, Զարեան արուեստագէտի նուրբ ճաշակին վայել գործեր են: Անկասկած, անոնք հայրենի տպարաններէն լոյս տեսած ամէնէն գեղեցիկ գիրքերու շարքին կը պատկանին: Մինչ *Նաւատոմար*ը օժտուած է ԺԵ.-ԺՋ. դարերու իտալացի արուեստագէտ եւ գիտնական Լէոնարտօ Տա Վինչիի «Աղջկան Գլուխ» գեղանկարը ներկայացնող շապիկով, իսկ անուանաթերթին յաջորդող էջը՝ 1915ին Պուլկարիա առնուած Զարեանի լուսանկարով, *Սպանիա*յի կողքը ցոյց կու տայ ԺՋ.-ԺԷ. դարերու սպանացի նկարիչ Էլ Կրեքոյի «Թոլետոյի Տեսարանը» գեղանկարի գունաւոր վերատպութիւնը, իսկ կողքի ներքին մասերը՝ «Կոմս Տէ Օրկազի Թաղումը» փորագրութեան ձեւով մատուցուած հոչակաւոր նկարը: Անուանաթերթին դիմաց, գունաւոր վերատպութեամբ, Ի. դարու հայ նկարիչ Սինասս Աւետիսեանի 1965ի զարեանական դիմանկարը հրատարակուած է: Իր կարգին, *Դէպի Արարատ*ը՝ հատանաբար ԺԳ. դարու խաչքար մը ներկայացնող շապիկի եւ անուանաթերթի դիմաց Զարեանի վերջին տարիներու նկարի մը կողքին, օժտուած է արուեստի այլազան կոթողներու 42 սեւ-ճերմակ լուսանկարներու ընտիր շարքով մը, որ կը լրացնէ գրագէտին արուեստաբանական վերլուծումները:

1920-60ականներուն, Զարեան Սփիւռքի մամուլին մէջ հրատարակած էր «Նաւատոմար» խորագիրով խոհագրութիւններ, որոնք առհասարակ օրագրային նշումներէ բխած էջեր են: Այս իմաստալից բառով, կազմողը իրաւամբ բնորոշած է ամբողջ հատաքածոն իբրեւ Զարեանի գրական ուղեւորութեան վկայութիւն մը:

Մամուլի մէջ ցրուած նիւթեր մէկտեղելը դիւրին գործ չէ: Զարեանի պարագային, միակ մօտաւոր ուղեցոյցը մինչեւ 1930ականներու սկիզբը հասնող երկու մեծ թղթակալներն են, ուր Զարեանի առաջին կինը՝ Թագուհի Շահնազարեան, ըստ կարելւոյն անոր հայերէն եւ օտարալեզու յօդուածներուն կտրածոները հատաքած էր (աւելի ուշ տպուած որոշ նմոյշներ ալ կան, ի դէպ): Այս թղթակալները - որոնք գրողի անձնական արխիւին կը պատկանին - կազմողին հիմնական օժանդակը եղած են՝ յետագայ լրացումներով ու ճշգրտումներով:

*Սպանիա*ն, ինչպէս յայտնի է, Պոսթընի գոյն տեսած *Հայրենիք* ամսագրի Հոկտեմբեր 1935-Յուլիս 1936ի թիւերուն մէջ մնացած էր մինչեւ այսօր: Ան մաս կը կազմէ *Երկիրներ եւ Աստուածներ* վերտառութեամբ գործին, որուն երկրորդ բաժինը՝ «Միացեալ Նահանգներ», դժբախտաբար անյայտ պատճառներով անաւարտ մնացած է եւ նոյն ամսագրի էջերուն մէջ (Օգոստոս 1936-Ապրիլ 1938) կը մնայ ցարդ: Կը յուսանք, որ ան ալ օր մը առանձին հրատարակութեան արժանանայ:

*Երկիրներ Եւ Աստուածներ*ը փաստօրէն որեւէ արձագանգի արժանացած չէր առենին: Միայն գրաքննադատ Յակոբ Օշականը 1940ականներուն անոր քանի մը տող նուիրած էր, ըստ ամենայնի՝ ժխտական.- «Իր «Երկիրներ եւ աստուածներ» տպատրապաշտ գործը չի պատկանիր ո՛չ մէկ երկրի եւ չի վայելեր պաշտպանութիւնը ո՛չ մէկ Աստուծոյ: Իր *Սպանիան*

փոխանակելի ապրանք մըն է, ու իր *Ամերիկան* ինքնահնար, ծախու ուրիշ ապրանք մը»[4]:

Օշականի վերաբերումը, որուն մէջ Զարեանի հանդէպ շեշտուած ենթակայական նկատելի մօտեցում մը կայ, *Անցորդը եւ Իր Ճամբան*ին յաջորդող արձակ եւ բանաստեղծական բոլոր գործերուն նկատմամբ հետեւողական գիծ մը կը շարունակէր: Իրմէ ետք, որքան որ գիտենք, միայն գրականագէտ Մարկ Նշանեանը անդրադարձած է *Երկիրներ եւ Աստուածներ*ուն, թէեւ զուտ մեկնողական եւ ո՛չ՝ դատողական տեսանկիւնէ[5]:

*Դէպի Արարատ*ը իր առաջին մասով ընթերցողին կը ներկայացնէ 1950ական թուականներուն շարադրուած արուեստի պատմութիւն մը, որուն հիմքը եղած են, ըստ երեւոյթին, Պէյրութի Ամերիկեան Համալսարանի եւ Նշան Փալանճեան Ճեմարանի[6] մէջ կարդացուած դասախօսութիւնները (1952-54): Այս շարադրանքը մինչեւ հիմա մնացած էր անտիպ[7]: Երկրորդ մասը ի մի կը բերէ *Նաւատոմար*էն դուրս մնացած կարգ մը յօդուածներ եւ գրութիւններ, ինչպէս եւ Զարեանի հետ կատարուած տեսակցութիւնները:

Գիրքին խորագիրը առնուած է 1920ին *Ոստան*ի մէջ լոյս տեսած եւ անաւարտ մնացած ուղեգրական ճօթերու շարքէ մը, որուն մասին տրուած պատճառաբանութիւնը (հմմտ. *Դէպի Արարատ*, այսուհետեւ՝ Դ.Ա., էջ 14) մեր կարծիքով չի բաւեր զայն պարագայականութենէ փրկելու համար:

* * *

*Նաւատոմար*ի մէջ, Զարեանի գրութիւնները ժամանակագրական կարգով դասաւորուած են չորս բաժիններու մէջ. «Ծառը Իր Արմատն է Փընտռում» (1910-22), «Արարատեան Դաշտում» (1922-24), «Մտքի Յաւիտենական Ճամբորդը» (1924-61), «Վերջին Նաւակայան» (1961-69): Հատորը 87 գրութիւններ կը համախմբէ, որոնցմէ առաջին քսանը արեւմտահայերէն են (18ը՝ Պոլիս տպուած, միւս երկուքը՝ Փարիզ), մնացեալը՝ արեւելահայերէն: *Անցորդը եւ Իր Ճամբան*էն երեք հատուած առնուած է, իսկ *Սպանիահայէն*՝ գլուխ մը:

Կազմողը ըստ նիւթի բաժանումէ մը հրաժարած է, հաշուի առնելով որ «այս դէպքում բազմաթիւ յօդուածներ ու էսսէներ, որոնք շատ բազմաշերտ ու տարողունակ են, պէտք է կա՛մ մնային թեմատիկ բաժանումներից դուրս, կա՛մ կրկնակի յայտնուէին տարբեր բաժիններում» (*Նաւատոմար*, այսուհետեւ՝ Ն., էջ 592): Չառարկելով այս դասաւորումին, դիտել տանք, որ անկարելի չէր ըստ նիւթի բաժանում մը իրագործել՝ առանց «թեմատիկ» սկզբունք մը որդեգրելու:

1962էն ետք Հայաստան տպուած նիւթերը առանձին պարագայ մըն են: Անոնք չեն ընդգրկուած, բացի «Լէոնարտօ Դա Վինչին եւ Հայաստանը» յօդուածէն - գրուած՝ նախքան վերադարձը - հետեւեալ պատճառաբանութեամբ.- «Լաւ գիտենալով սովետական մամուլի մեխանիզմը եւ բարքերը՝ նման նիւթերը, ինչպէս նաեւ Կոստան Զարեանի անուամբ մատուցուող գրառումները ... եւ հարցազրոյցները հարկ չհամարեցի գետեղել այս գրքում» (Ն., էջ 642):

Խաչատրեան, սակայն ըստ երեւոյթին այս փաստը վրիպած է իր ուշադրութենէն:

ժգ) Նիւ Եորքի *Armenian Quarterly* հանդէսը միայն Զարեանի նախաձեռնութիւնը չէր, այլ կը վայելէր՝ գէթ անուղղակի կերպով, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Հայ Դատի Յանձնախումբի հովանաւորութիւնը[34]: Իսկ 1946ի բիւզանդա-սլաւոնական եւ արեւելեան մշակոյթներուն նուիրուած գիտաժողովին Զարեանի կարդացած զեկուցումը հայ ընթերցողին «նոյնպէս անծանօթ» չէ (Ն., էջ 22): Առաւելագոյնը՝ հայերէն ընթերցողին անծանօթ է: Չենք գիտեր, թէ «ֆրանսերէն գրուած» էր, ինչպէս կը պնդէ Խաչատրեան, բայց լոյս տեսած է անգլերէն՝ հանդէսի երկրորդ թիւին մէջ, եւ թարգմանուած՝ փորթուկալերէնի, Պրազիլի մէջ[35]:

ժդ) Զարեանի տեղափոխումը Պէյրութ, որ տեղի ունեցած է 1951ին եւ ո՛չ թէ 1952ին, «Ամերիկեան համալսարանում դասախօսութիւններ կարդալու նպատակով» չէր (Ն., էջ 22), քանի որ դասաւանդութիւնը կարգադրուած է Պէյրութ հաստատուելէ ետք[36]:

Կան այլեւայլ, մանր բնոյթի նկատողութիւններ՝ թուականներու թէ տուեալներու մասին, զորս մէկ առ մէկ թուելը անհարկի կերպով պիտի ծանրաբեռնէր այս գրութիւնը:

* * *

Շուրջ 30 էջնոց հանգամանալից յառաջաբանի մը կողքին, *Նաւատոմարի*ն կցուած է յիսուն էջանի ծանօթագրութիւն՝ ամբողջ գրութեան մասին էական տուեալներով ու բացատրութիւններով, ինչպէս եւ օտարալեզու (բացի ռուսերէն) բառերու թէ խօսքերու հայերէն թարգմանութեամբ: Հատորը քսան էջնոց արժէքաւոր անուանացանկով մը օժտուած է: Տեղին է նշել, որ եթէ ոչ ակադեմական - որ լիակատար մեկնաբանութիւն եւ բնագրագիտական տուեալներու ամբողջական մատուցում կ՛ենթադրէ - սակայն գիտաքննական ըստ ամենայնի լուրջ փորձի մը առջեւ կը գտնուինք:

Նիւթերը ենթարկուած են մանրակրկիտ խմբագրութեան: Արդարեւ, Զարեան «դժուար» ձեռագիր մը ունէր, թէեւ՝ ո՛չ անընթեռնելի: Սակայն, ձեռագրային հարցերը, ինչպէս եւ իր բացած մշակութային լայնածիր կարկինը պատճառ եղած են, որ գրաշարական ամէն տեսակի սխալներ վխտան: Անհրաժեշտ է յիշել, որ, իր իսկ խոստովանութեամբ, գրագէտին հայերէնը անթերի չէր՝ ըլլալով հանդերձ արեւմտահայ եւ արեւելահայ լեզուաճիւղերու իւրայատուկ համակցութիւն մը: Ուստի եւ եղած են հեղինակային լեզուական սխալներ, բայական ու բառային երկիմաստ կիրառումներ եւլն.: Կազմողը խմբագրական գնահատելի աշխատանք մը կատարած է այս իմաստով, ճգտելով գրագէտին ոճը եւ կէտադրութիւնը միօրինակ ձեւի բերել: Ան հրատարակութեան հիմք համարած է վերոյիշեալ կտրածոներու թղթակալը, ուր Զարեան նպումներ կատարած էր, որոնք, ամէն պարագայի, շատ աննշան են ու մեծ փոփոխութիւններ չեն ենթադրեր:

Միւս կողմէ, ամէն ճիգ թափուած է՝ ճշգրտելու եւ սրբագրելու օտար յատուկ անուններու գրելաձեւը, որ շատ անգամ ենթարկուած է գրաշարական «դաւ»երու: Պարագան նոյնն է օտարալեզու ասոյթներու ճիշդ գրութեան

նկատմամբ: Առանց չափազանցելու, կը խորհինք որ այս տեսակէտէն թերեւս Հայաստանի մէջ եղած ամէնէն կատարեալ հրատարակութիւնն է ան, պատուաբեր՝ նկատի ունենալով օտարալեզու նիւթերու Զարեանի շռայլ գործածութիւնը:

Սակայն, բնագիրերուն նկատմամբ կարգ մը խմբագրական շեղումներ նշմարելի են, որոնք որեւէ ձեւով հիմնաւորուած չեն եւ ճշդումի կարիք ունին: Նկատի չունինք, անշուշտ, դիւրաւ նշմարելի գրաշարական վրիպակները, որոնք մեծաթիւ չեն, ամէն պարագայի[37]: Կը բերենք միայն քանի մը օրինակներ, որոնք առնուած են ըստ բախտի - բաղդատուած են Զարեանի արխիւին մէջ պահպանուած կտրօններուն հետ - եւ հետու են ցանկը սպառելէ.-

Բառային շփոթներ՝

«Եղէգներ ջարդուփշուր եղան, *դողդողալով խռպոտ* քրքռումներով» («Անտառին Մէջ», *Ազատամարտ*, 14 Մայիս 1911), որ դարձեր է *դողդոջալով խռպոտ* (Ն., էջ 50):

«Իր արիւնաթաթախ գլուխը բարձրացրեց *լսելու համար*, ինչպէս ոռնսելեան դաշտում Ռոլանը, յեղափոխութեան մօտեցող բանակի հեռաւոր տրոփումը» («Մեր Թատրոնը», *Պայքար*, 15 Ապրիլ 1923), որ դարձեր է *ասելու համար* (Ն., էջ 156):

«Հայ աշխատաւոր մասսաները վերապրեցան նոր գիտակցութեամբ եւ իրենց *մաշուած* մարմնի վրայ հագան հրեղէն թեւեր» (նոյն), որ դարձեր է *մաշուող* (Ն., էջ 156):

«Որոնց մասին այլուր վաղուց ի վեր այլեւս *չեն խօսում*» (նոյն), որ դարձեր է *չեն ասում* (Ն., էջ 157):

«Նրա ... պարզուկ տնակոյտերի զծաւորումները, խառնուած բլուրների համաչափ *անչարժութեան* հետ» («Յակոբ Կոջոյեան», *Պայքար*, 1 Օգոստոս 1923), որ դարձեր է *տեղաչարժութեան* (Ն., էջ 165):

«Բայց ... այդ *կարել[ի]ութիւնից* առ այժմ զուրկ ենք» («Ժողովրդական Արուեստը», *Պայքար*, 28 Օգոստոս 1923), որ դարձեր է *կատարելութիւնից* (Ն., էջ 168):

«Բարդ եւ դժուարըմբռնելի, *մենակեաց* եւ մեղմաբարոյ» («Նաւաստոմար. Բանաստեղծութեան Եւ Անհատի Մասին», *Ջուարթնոց*, 15 Յուլիս 1931), որ դարձեր է *մեղմակեաց* (Ն., էջ 326):

Գրականացումներ կամ հայացումներ՝

«Նա առանց *վրազելու*, նման հնդիկ իմաստունին» («Մարտիրոս Սարեանը եւ իր արուեստը», *Պայքար*, 24 Սեպտեմբեր 1923), որ վերածուեր է *չտապելու* (Ն., էջ 187):

«Հիանալիօրէն ձեւաւորում է նկարն ու տալիս մարդու եւ պատմական *մոմենտի* յեղափոխական բնոյթը ... բաւական է նայել Տրոցկու այդ պատկերին, եւ հասկանալի կը լինի այն *մոմենտը*» («Խորհրդային Միութիւնը Վենեսիկեան Յուցահանդէսում», *Նոր Աշխ*, 16 Սեպտեմբեր 1924), որ դարձեր է *պահի* եւ *պահը* (Ն., էջ 211):

«Նրա մէջ տարօրինակ կերպով համադրւում են հենդէլեան դաշնամուրային *յեղյօրինումը*» («Քէքիովէն», *Հայրենիք*, 15 Ապրիլ 1927), որ դարձեր է *հեղեղուն յօրինում* (Ն., էջ 254): Խաչատրեան չէ նկատած, որ «յեղյօրինում» (թերեւս աւելի ճիշդ՝ «հեղյօրինում») պարզապէս improvisation բառի զարեանական հայացումն է:

«Նոյն *պաւիլիոնի* մի սրահում «Փարիզեան դպրոցը» («Վենետիկեան Կերպարուեստի Միջազգային Ցուցահանդէսի Առթիւ», *Հայաստանի Կոչնակ*, 25 Օգոստոս 1928), ուր «պաւիլիոնի» դարձեր է *տաղաւարի* (Ն., էջ 294):

«Ոյժը եւ խորհուրդը խառնելու ապշեցուցիչ *տեքնիկայով*» (*Զուարթնոց*, 15 Յուլիս 1931), ուր «տեքնիկայով» դարձեր է *վարպետութեամբ* (Ն., էջ 325):

Սրբագրական սխալներ

«Ստուդիան *որոնումների* մի վայր է» («Սրբոյն Հազարապետեանի Ստուդիայի Երեկոյթը», *Խորհրդային Հայաստան*, 12 Հոկտեմբեր 1923), որ դարձեր է *որոչումների* (էջ 193):

«Համայնական լինելութեան ոիթմը փոխած է իր *տրոփման* ձեւը» («Հոլանդական Տպաւորութիւններ», *Արագած*, 15 Դեկտեմբեր 1926), որ դարձեր է *տրոհման* (էջ 238):

«Սխալ է մանաւանդ այն մտածողութիւնը, որը հրաժարուելով իր կենսաբանական էութիւնից, փակւում է ինքը իր մէջ եւ ուզում է *ինքնատիպ* դառնալ» («Նաւատոմար. Բանաստեղծութեան Եւ Անհատի Մասին», *Զուարթնոց*, 15 Յուլիս 1931), որ դարձեր է *ինքնավար* (էջ 331):

«Այն ճիգը, որ նա անում էր ըմբռնելու համար կեանքը եւ նրա ետեւ թաքնուած բարդ *մղանակները*» («Լէօ Ֆեռերոյի Յիշատակին», *Հայրենիք*, 28 Սեպտեմբեր 1935), որ դարձեր է *եղանակները* (էջ 345):

Ջնջուած բառեր կամ տողեր

«Սարեանի պրպտումները այդ ուղղութեամբ *մեր* ժամանակակից արուեստի պատմութեան մէջ, վերին աստիճանի նշանակալից են» («Յակոբ Կոջոյեան», 1 Օգոստոս 1923). հմմտ. էջ 164:

«Չամլջայի լանջին պառկած *փարթամ* Սկիւտարը» («Ճանապարհի Նօթեր», *Խորհրդային Հայաստան*, 2 Օգոստոս 1924). հմմտ. էջ 197:

«Ստամբուլի լեռան նման բարձրացող *բազմաթիւ* մզկիթների դիմաց» (նոյն). հմմտ. նոյն էջը:

«Ու թալամորթ Եւրոպայի *բուրժուայի* առջեւ մի տեսակ սատուրնալիա պարում» («Խորհրդային Միութիւնը Վենետիկեան Ցուցահանդէսում», *Նոր Ակօս*, 16 Սեպտեմբեր 1924). հմմտ. էջ 210:

«Հիւղի մէջ պարապութիւն հաստատելով՝ նա միանգամայն օդն էր հանում բնութեան կարծրութիւնը, *կայունութիւնը* ու ջնջում այն գաղափարը» («Նաւատոմար. Բանաստեղծութեան Եւ Անհատի Մասին», *Զուարթնոց*, 15 Յուլիս 1931). հմմտ. էջ 322:

«Ու այլեւս *ճիշդ չէ՛ որ բնութիւնը վախում է պարապից*, ճիշդ չէ՛, որ բնութիւնը եւ պատմութիւնը ցատկումներ չեն անում» (նոյն). հմմտ. էջ 323:

«Սիրտը մեղմ լոյսերով լեցնող *եւ միտքը վերացնող մի* մքնոլորտ ստեղծում» (նոյն). հմմտ. էջ 323-324:

«Եւ միւս արուեստագէտները փութով ծածկում էին *հարուստ ապարանքների եւ եկեղեցիների պատերը բազմաթիւ* նկարներով» («Լէոնարդո Դա Վինչիի եւ Հայաստանը», *Սովետական Արուեստ*, Ապրիլ 1966). հմմտ. էջ 544:

Այդ կեանքը չինուած էր իր տաչուող մտքի փչրանքներով («Տեղի, Ժամանակի Եւ Գրողի Մասին», *Սովետական Գրականութիւն*, Յունիս 1970, էջ 98). հմմտ. էջ 575:

* * *

Սպանիան կը բաղկանայ երեք մասերէ.- ներածութիւն (էջ 3-14), բնագիր (էջ 15-350), ծանօթագրութիւններ (էջ 351-378): Բնագիրը հիմնուած է Զարեանի կողմէ կազմուած *Հայրենիք* ամսագրի օրինակին վրայ, ուր հեղինակը բազմաթիւ փոփոխութիւններ ու ճշգրտումներ ըրած է: Սկզբնագրի բացակայութեան պայմաններուն մէջ, այս հեղինակային ինքնագիրը լաւագոյնս կատարած է անոր դերը: Ծանօթագրութիւններն ալ, իրենց կարգին, կատարուած են մեծ խնամքով ու ընտրութեամբ, առանց ծանրաբեռնելու բնագիրը:

Բնագրին տասնեակներով բազմալեզու բառերը բծախնդրօրէն ծանօթագրուած են: Կարգ մը ուղղագրական սխալներ մնացած են, ինչպէս formidabile (շրջարկէն դատելով, ճիշդը՝ սպ. formidable, որ հոս կը նշանակէ *սքանչելի*, ոչ թէ՝ բառացի իմաստով, *ահաւոր*. հմմտ. էջ 41, 355), buenos noces (ճիշդը՝ սպ. buenas noches, որ կը նշանակէ *բարի իրիկուն* երբ մէկուն բարեւ կը տրուի, եւ ոչ թէ *բարի գիշեր* կամ *գիշեր բարի*. հմմտ. էջ 50, 356) եւլն.: Փոքրաթիւ բարգմանական անճշդութիւններ կան, ինչպէս buenos dias (*բարի լոյս*, ոչ թէ՝ *բարի օր*, երբ օրուան առաջին ողջոյնն է. հմմտ. էջ 357), pudridero (*փտարան*, ոչ թէ՝ *փտող*. հմմտ. էջ 368), algunos falcones, gerifaltes (*քանի մը բազէներ, արքայաբազէներ*, ոչ թէ՝ *հրաշալի դրուագրուած պողպատէ գէնքեր*. հմմտ. էջ 370), real gana (*խելքը փչածը, տրամադրութիւն*, ոչ թէ, բառացի, *իրական ցանկութիւն*. հմմտ. էջ 366), "Discurso de la Verdad" (*ճառ ճշմարտութեան*, ոչ թէ՝ *ճշմարտութեան Արտայայտութիւն*. հմմտ. էջ 364), "Lo que no he podido dejar de sentir" (*Այն, ինչ որ չեմ կրցած չզգալ*, ոչ թէ *այն, որ ես դեռ ունեմ զգալու կարողութիւն*. հմմտ. էջ 367) եւլն.:

* * *

Երեք հատորները տպուած են հայաստանեան՝ «բարեփոխուած» ուղղագրութեամբ: Զարեանի անունով, սակայն, արեւմտահայերէն (մեծ մասով՝ բարգմանական) եւ արեւելահայերէն գործեր ունինք, գրուած՝ թէ՛ դասական եւ թէ հայաստանեան (1922ի եւ 1940ի) ուղղագրութեամբ: Խա-

չատրեաց, որ քանիցս դասական ուղղագրութեամբ վերահրատարակած էր Զարեանը, հետեւեալ բացատրութիւնը կու տայ.- «Գիրքը կազմողն այն կարծիքին է, որ Կոստան Զարեանի երկերը պէտք է հրապարակուեն այն ուղղագրութեամբ, այնպէս, ինչպէս որ դրանք գրել է Մխիթարեան Միաբանութեան հովանու ներքոյ հայեցի կրթութիւն ստացած հեղինակը: Եւ դա լինելու էր գրողի միակ կամքը. բաւական է կարդալ այս գրքում տպագրուած «Ուղղագրութեան Խնդրի Առթիւ» դառն ու արդարացի յօդուածը՝ համոզուելու համար վերն ասուածի մէջ» (Ն., էջ 594):

Մենք ալ համաձայն ենք այդ կարծիքին, եւ Զարեանի յիշեալ յօդուածը արդէն լռելեայն ազդարարութիւն մըն է այլ բան փորձելու դէմ:

Սակայն, շարունակութեան մէջ կազմողը իր սեփական կարծիքին դէմ գացած է, ըստ երեւոյթին.- «Բայց կան արտաքոյ կարգի հանգամանքներ, որոնցից ամենագօրեղն այն է, որ գիրքը հրատարակւում է Հայաստանի Հանրապետութիւնում պետականօրէն ընդունուած ուղղագրութեամբ» (նոյն):

Հակասական տրամաբանութիւն մըն է: Այսինքն, գիրքը դասական ուղղագրութեամբ պէտք է տպուէր, որովհետեւ հեղինակը այդ պիտի ուզէր, բայց այդպէս չէ եղած, որովհետեւ «պետականօրէն ընդունուած ուղղագրութեամբ» հրատարակուած է: Սակայն, ինչպէս յայտնի է, վերջին տարիներուն «պետականօրէն չընդունուած» ուղղագրութեամբ Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, եւ այլ հրատարակչատուներու կողմէ տասնեակ հատորներ տպուած են: Կը նշանակէ, որ նախընթացներ կային:

Կազմողը աւելի յստակացուցած է իր դիրքը իր վերջին հրատարակութեան մէջ.- «Մի վերջին եւ կարեւոր հանգամանք. գիրքը կազմողը այն կարծիքին է, որ որեւէ բնագիր պէտք է հրատարակուի հեղինակային ուղղագրութեամբ: Ուրեմն, ըստ կազմողի, Կոստան Զարեանի ձեռագրերը պէտք է հրատարակուեն այնպէս, ինչպէս որ դրանք գրել-շարադրել է հեղինակը, այսինքն՝ դասական ուղղագրութեամբ: Սակայն համաձայն այս հատորի լոյսընծայման նախաձեռնող հրատարակչութեան որդեգրած սկզբունքի գիրքը հրատարակւում է Հայաստանի Հանրապետութիւնում պետականօրէն ընդունուած ուղղագրութեամբ» (Դ.Ա., էջ 379):

Այսպէսով յստակ է, որ հրատարակչատան որոշումով է, որ այս գիրքերը լոյս տեսած են «բարեփոխուած» ուղղագրութեամբ: Աւելորդ չէ նշել, թէ հայաստանեան ուղղագրութիւնը Զարեանի գրելաձեւի որոշ նրբերանգներէ զրկած է ընթերցողը: Օրինակ, «թափառականների եւ մտայոգ ճամբորդների շրջան է» խօսքը (*Հայաստանի Կոչնակ*, 2 Յունիս 1928) մտահոգ դարձած է (Ն., 288): Արդ, *մտայոգը* Զարեանի կամ թերթի սխա՞լն է, թէ գրագէտի ինքնատիպ բառաշինութիւնը (որ յայտնի երեւոյթ մըն է)՝ միտքը յոգնած (եւ ո՛չ՝ «մտահոգուած») ճամբորդը բնորոշելու համար:

* * *

Խորհրդահայ շրջանին կարգ մը դասական հեղինակներու (մանաւանդ՝ արեւմտահայ կամ սփիւռքահայ) որոշ տպագրութիւններու (երբեմն՝ «ակա-

դեմական» որակուած) բաղդատմամբ, *Նաւատոմարը* բարեխիղճ աշխատանքի մը տուեալներով հարուստ իրագործում մըն է: Սակայն, առանց նսեմացնելու կազմողին բնագրագիտական ճիգը, բնագրային ոչ-հիմնաւոր շեղումները որոշ թիւ կը կազմեն, ինչպէս վերը փորձեցինք ցոյց տալ: Ապագայի նոր հրատարակութիւն մը, կը կարծենք, պէտք է գիրքին մէկ մասը մամուլի հետ կրկին համեմատէ եւ բնագրային մշակումի ենթարկէ:

Երեք հատորները շատ կարեւոր իրադարձութիւններ են: *Նաւատոմարը*, *Սպանիան* ու *Դէպի Արարատը* Հայաստանի թէ Սփիւռքի մէջ պէտք է իրենց ընթերցողները գտնեն: Այսօր գոյութիւն ունի սերունդ մը, որ ի վիճակի է կարդալու եւ ըմբռշխնելու հոն ամբարուած գաղափարները: Արդարեւ, *Նաւատոմարի* մէջ տարբեր Զարեան մը ի յայտ կու գայ, գրագէտի մը կերպարը որ հայկական խոհագրութեան ու հրապարակագրութեան ընթացիկ կանոններէն բողոքովին դուրս է: *Սպանիայի* գիրքով երկրորդ կեանքը՝ հայութեան համար երեւութապէս լուսանցքային իրականութեան մը ընդմէջէն, մենք մեզ տարբեր հայելիով մը դիտելու կարելիութիւնը կու տայ.- «Ու այս գրքի միակ յաւակնութիւնն է՝ կարողանալ մի օր հասկանալի եւ անհրաժեշտ դառնալ նրանց, որոնք որոշել են լինել նորից, կառուցանել նոր հոգեկան մի զօրութիւն, գոյանալ ամբողջովին, ճակատագրականօրէն» (Ս., էջ 24): *Դէպի Արարատը* լրացումն է *Նաւատոմարին*, բայց նաեւ լրացումը՝ Զարեանի գեղարուեստական մտածողութեան ենթախորքին: Գրագէտը նոյնքան «տեսողական» է արուեստի պատմութիւն գրելու ժամանակ, որքան որ իր վիպական ու խոհագրական արտադրութեան մէջ:

Ի զուր չէր, որ Զարեան այս գիրքը նուիրած էր իր զաւակներուն, այսինքն, յետնորդ սերունդներուն: Կարելի է ըսել, թէ մինչ Օշական ստեղծած է հայութեան ամենախորին կապը իր ներքին աշխարհին հետ, Զարեան կատարած է նոյն գործը՝ արտաքին աշխարհի հետ: Այսօր, ԻԱ. դարու սկզբնաւորութեան, ան հայ ժողովուրդի նաւարկութեան անշրջանցելի նաւատոմար մըն է:

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1]Տե՛ս մեր գրախօսականը՝ *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, հ. ԺԹ., 1999, էջ 407-420: Այս երկը նոյն տարին որպէս դոկտորականի աւարտաճառ պաշտպանուած էր:

[2]Առաջին մերձեցումի մը համար, տե՛ս՝ Վարդան Մատթէոսեան, «Կոստան Զարեանի Հայաստանեան Առաջին Նոր Հատորը», *Յառաջ - Միտք եւ Արուեստ*, Հոկտեմբեր 1999, էջ 1-3: *Նաւատոմարի* եւ *Սպանիայի* մասին տե՛ս՝ Մարկ Նշանեան, «Առասպել, Կենսանիւթ եւ Յարգանք», *Գարուն*, թիւ 10, 2000, էջ 44-49: Այս վերջինը առիթ տուած է զայրալից պատասխանի մը. տե՛ս՝ Եռւրի Խաչատրեան, «Թէ Ինչպէս Մարկ Նշանեանը Մի Գրախօսութիւն Գրեց Կամ Մարկ Նշանեանին՝ Նամակի Փոխարէն», *Գարուն*, թիւ 2, 2001, էջ 43-49, ուր նաեւ ակնարկութիւն մը կայ մեր յիշեալ գրախօսականին. անդրադարձները տե՛ս՝ Վարդան Մատթէոսեան, «Գրական Անհանդուրժողութեան Ցաւալի Նմոյշ Մը», *Յառաջ*, 14 Յունիս 2001, էջ 2, եւ Մարկ Նշանեան, «Մեղայական Առանց Մեղանչումի եւ Չքմեղանքի», *Գարուն*, թիւ 7, 2001, էջ 43-48: Վերջինին կցուած է խմբագրական յետգրութիւն մը՝ «Խմբագրութեան կողմից», տե՛ս՝ նոյն, էջ 48-49:

[3]Նոյս ընծայման 1999 թուականը՝ ըստ հրատարակչական ծանօթութեան. ամուսնաթերթին վրայ 1998 գրուած է:

[4]Յակոբ Օշական, *Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան*, Տասներորդ Հատոր. Արուեստագէտ Սերունդ, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1982, էջ 415. հմմտ.՝ նոյն, *Հայ Գրականութիւն*, Երուսաղէմ, 1957, էջ 635 եւլն.:

[5]Մարկ Նշանեան, «Եղեռնի Լռութիւնը Կ. Զարեանի Արձակին Մէջ», *Բազմավէպ*, թիւ 1-4, 1995, էջ 355-365:

[6]*Դէպի Արարատի* ներածութեան մէջ, Խաչատրեան ճեմարանին անունը դարձուցած է «Աշոտ Փալանջեան» (Դ.Ա., էջ 15), հաւանաբար շփոթելով Եղիշէ Չարենցի մանկութեան ընկերներէն եւ յուշագիրներէն մէկուն հետ:

[7]Բացառելով մեր ձեռքին տակ գտնուած 66 էջնոց մեքենագիր բնագիրէ մը կատարուած կարճ հրապարակում մը. տե՛ս՝ Վ. Մատթէոսեան, «Կոստան Զարեանի Անտիպ Մտորումները Արուեստի Մասին», *Հորիզոն - Գրական Յաւելուած*, Մայիս 2000, էջ 11-12. հմմտ.՝ Կոստան Զարեան, *Դէպի Արարատ*, Երեւան, 2001, էջ 59-62:

[8]*Սպանիայի* ներածութեան մէջ (էջ 10-11) ընդարձակօրէն մէջբերուած նամակը - մասամբ մէջբերուած նաեւ՝ *Նաւատոմարի* շապիկին մէջ - ո՛չ թէ Յունուար 1931ին *Հայրենիքի* խմբագիր Ռուբէն Դարբինեանին ուղղուած է, այլ 21 Յունուար 1932ին հասցէագրուած է Ռուբէն Տէր-Միհրանեանին: Նամակը նախապէս լոյս ընծայած էինք հատուածաբար. տե՛ս՝ Վարդան Մատթէոսեան, «Զարեանական Նամականի», *Յառաջ - Միտք եւ Արուեստ*, Յունուար 1995, էջ 2: Հոս թուականը սխալմամբ գրած էինք Յունուար 1931, թէեւ ճիշդ հասցէատէրը տուած էինք: Լման բնագրին համար՝ հանդերձ ներածութեամբ, տե՛ս՝ Վարդան Մատթէոսեան, «Կոստան Զարեանի Անտիպ Նամակը Ռուբէն Տէր-Միհրանեանին», *Հորիզոն - Գրական Յաւելուած*, Մայիս 2001, էջ 1-4:

[9]Վարդան Մատթէոսեան, *Կոստան Զարեանի Շուրջ*, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1998, էջ 280-282:

[10]Նոյեմբեր կամ Դեկտեմբեր 1922ին, Երեւանի Պետական Համալսարանի Պատմագրական Ճիւղի տեսուչ Յակոբ Մանանդեանը իր կնոջ ու աղջկան կը գրէր.- «Ֆրանսերէնի համար յաջողուեց ինձ գտնել մի շատ լաւ դասատու՝ Կոստ. Զարեանին, որը արեւմտահայ աչքի ընկնող գրողներից է, ուսումը աւարտել է Բրիւսէլի համալսարանում եւ խօսում է ֆրանսերէն, իտալերէն եւ իսպաներէն», տե՛ս՝ Վ. Յակոբեան, «Յակոբ Մանանդեանի նամակները Երեւանի Համալսարանի Վերաբերեալ», *Բանբեր Երեւանի Համալսարանի*, թիւ 3 (18), 1972, էջ 156: Ասիկա առաջին բացայայտ վկայութիւնն է Զարեանի սպաներէնի իմացութեան մասին, թէեւ յայտնի չէ ո՞ւր եւ ինչպէ՞ս լեզուն սորված է: *Սպանիայի* «Հերմանա Սեսիլիա» գլուխը վանքի մը մէջ սպաներէնի դասեր առնելու եւ իտալերէնի դասեր տալու մասին է (Ս., էջ 99-107), բայց թերեւս Զարեանի աշխատանքը լեզուի իմացութիւնը խորացնելու կը ձգտէր:

[11]Բիւզանդ Կոռանեան, *Ամբողջական Երկեր*, Գ. հատոր, Լոս Անճելըս, 1981, էջ 372:

[12]«Մտքի Յաւերժական Ճամբորդը», Հարցազրոյց Արմէն Զարեանի Հետ, *Գրական Թերթ*, 8 Փետրուար 1991, էջ 2:

[13]Վարդան Մատթէոսեան, «Կոստան Զարեան եւ Բենիամին Նուրիկեան. Նամականի», *Բազին*, թիւ 3, ամառ 1997, էջ 121:

[14]Վահան Թէքէեան, *Նամականի*, Վ. Թէքէեանի Հարիւրամեակի Մատենաշար - թիւ 2, կազմեց, խմբագրեց եւ ծանօթագրեց Աւետիս Գ. Սանճեան, Լոս Անճելըս, 1983, էջ 286:

[15]Հմմտ.՝ «Պատմութիւնը յիշատակ չէ միայն, այլ տեւականութիւն, այլ ներկան ճեւակերպող կեանք եւ ապագան ուրուագծող հիմնական ազդակ» (Ս., էջ 123):

[16]Երեսուն տարի ետք, Զարեան պիտի գրէր.- ««Մեկնաբանութիւն Սասունցի Դաւիթի»: Այնպէս, ինչպէս որ Դէ Ռուճմոնօն գրել է Դոն Կիխոտի համար: Լաւ կը լինէր...». տե՛ս՝ Կոստան Զարեան, «Նաւատոմար», *Հայրենիք*, 14 Փետրուար 1992, էջ 7. հմմտ.՝ Ն., էջ 572:

[17]Պարբերութիւնը կ՚ըսէ՝ «Քարսելոնան գերազանցապէս կանացի է... Մադրիդը առնական է:/ Հայաստանի մայրաքաղաքը պարզ է, լուրջ եւ անմիջական: Քարսելոնան ամբողջովին վայելչութիւն է: Նրան պէտք է այցելել իր սիրած ժամին» (Ս., էջ 52): Սպանական հակադրութեան մէջ, Երեւան-Պոլիս յելեայն հակասութիւնը կը բանի.- «Ահա ինչու, Պոլսում, կանայք գրականութիւն են մշակում, եւ զգում են իրենց ինչպէս Սիոնում:/ Քաղաքը կին է՝ օրգանապէս թերի, մշտնջենապէս վիրաւորուած եւ գերազանցօրէն սիրական:/ Ուստի՝ ստորին». տե՛ս՝ Կոստան Զարեան, *Երկեր*, Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1975, էջ 39:

[18]Տե՛ս նաեւ՝ Կոստան Զարեան, «Հայոյն Յիսուսը», *Մհեռան*, թիւ 2, 1914, էջ 18-19. հմմտ.՝ Ն., էջ 85-86:

[19]Տե՛ս՝ Կոստան Զարեան, «Նաւատոմար. Բանաստեղծութեան եւ Անհատի Մասին», *Զուարթնոց*, Բ. տարի, թիւ 4-5, 1 Հոկտեմբեր 1931, էջ 84. հմմտ.՝ Ն., էջ 329:

[20]Գիրքէն որոշ գլուխներ անգլերէնի թարգմանուած են Արա Պալիոզեանի կողմէ. տե՛ս՝ Gostan Zarian, 'The Escorial', *Ararat*, Summer, 1984 եւ 'Spain', *Ararat*, Spring 1994: Տե՛ս նաեւ՝ Իրայիդա Կարումեանի կողմէ կատարուած ռուսերէն թարգմանութիւնները՝ Kostan Zarian, 'Tosa de Mar', *Novoe Vremia*, 16 Յունիս 2000. 'Tsar Armenii Levon' [Հայաստանի Լեւոն Թագաւորը], *Novoe Vremia*, 16 Սեպտեմբեր 2000. 'Tsar Armenii Levon: ispanskaia legenda' [Հայաստանի Լեւոն Թագաւորը. Սպանական Լեգենդա], *Literaturnaia Armeniia*, թիւ 4, 2000, էջ 19-38. 'Puti' [Ճամբաներ], *Novoe Vremia*, 10 Փետրուար 2001:

[21]Մատթէոսեան, «Կոստան Զարեանի Հայաստանեան Առաջին Նոր Հատորը», էջ 3:

[22]Հմմտ.՝ «Մտքի Յաւերժական Ճամբորդը»: Հանգուցեալ Արմէն Զարեանի այս վկայութիւնը արդէն վիճելի կէտեր ալ ունի, զորս քննարկած ենք մեր «Կոստան Զարեան եւ Իր Անաւարտ «Բանկօօպը» յօդուածին մէջ. տե՛ս՝ *Հորիզոն - Գրական Յաւելուած*, Օգոստոս 1999, էջ 2-3:

[23]Տե՛ս՝ Մատթէոսեան, *Կոստան Զարեանի Շուրջ*, էջ 338-340:

[24]Այս բառը կը պակսի թէ՛ *Հայրենիքի* եւ թէ՛ *Սպանիայի* մէջ: Ըստ իմաստի վերականգնած ենք:

[25]*Հայրենիքի* մէջ տպուած է «Ունամունոյին». տե՛ս՝ Կոստան Զարեան, «Երկիրներ եւ Աստուածներ», *Հայրենիք*, Յուլիս 1936, էջ 46:

[26]Եղուրդ Խաչատրեան, «Կոստան Զարեանը Հայրենիքի Որոնումներում», *Գարուն*, թիւ 8, 2000, էջ 80:

[27]Վարդան Մատթէոսեան, «Զարեան եւ Ունամունօ. Նախաբայլեր», *Յառաջ*, 22-23 Հոկտեմբեր 1994. նոյն, *Կոստան Զարեանի Շուրջ*, էջ 326-349: Ի դէպ, Խաչատրեան կը գրէ հետեւեալը.- «Կոստան Զարեանը եւ Իսպանիան» շատ տարողունակ, մեծ եւ հետաքրքիր խօսակցութեան թեմա է, բայց նաեւ մանրամասն ու հանգամանալից ուսումնասիրութեան նիւթ, որ սպասում է իր հեղինակին» (Ս., էջ 13): Վերոյիշեալ մեր երկու անդրադարձները, քող քոյլ տրուի ըսել, այդ «մանրամասն ու հանգամանալից ուսումնասիրութեան» գէթ սկիզբը դրած էին:

[28]Մատթէոսեան, *Կոստան Զարեանի Շուրջ*, էջ 68-69:

[29]Տե՛ս օրինակ՝ Գրիգոր Պըլտեան, *Կրակէ Շրջանակը Դանիէլ Վարուժանի Շուրջ*, Անթիլիաս, 1988, էջ 21-28. Մարկ Նշանեան, «Գրական Կանգնումը. Ա.», *Կամ*, թիւ 3-4, 1986, էջ 198-251. Ստեփան Թոփչեան, «Հայկական Նէոռոմանտիզմի Էսթետիկայի Ուրուագիծ», տե՛ս՝ Եա. Խաչիկեան (խմբ.), *Հայ Էսթետիկական Մտքի Պատմութիւնից*, Երեւան, 1974, էջ 178-273. Սերգէյ Սարինեան, *Գեղարուեստական Գրականութեան Պատմականութիւնը*, Երեւան, 1979, էջ 300-360. Սուրէն Դանիէլեան, *Հեքիաթական Գրական Շարժման Պատմութիւնից*, Երեւան, 1988, էջ 114-155. Լարիսա Մնացականեան, *Քսաներորդ Դարասկզբի Արեւմտահայ Գրական Քննադատութիւնը*, Երեւան, 1990, էջ 191-203: Պէպօ Սիմոնեան, «Արեւմտահայ Գրականութեան Գեղարուեստական Չգտումներու Հանդիսավայր՝ *Մեհեանը*», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, հ. ԺԷ., 1997, էջ 439-463:

[30]Զարեան, *Երկեր*, էջ 133:

[31]Մատթէոսեան, *Կոստան Զարեանի Շուրջ*, էջ 88-93: Տե՛ս նաեւ՝ Զաւէն Մսըլեան, «Բենեդիկտոս ԺԵ. Պապը եւ Մեծ Եղեռնը», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, հ. ԺԹ., 1999, էջ 141-154:

[32]Մատթէոսեան, *Կոստան Զարեանի Շուրջ*, էջ 204-207:

[33]Նոյն, էջ 403-404:

[34]Նոյն, էջ 418-420:

[35]Նոյն, էջ 414, 425:

[36]Մուշեղ Իշխան, *Իմ Ուսուցիչներս*, Պէյրութ, 1984, էջ 187:

[37]Այստեղ հարց է Զարեանի արեւմտահայ ձեւերը կանոնական արեւելահայերէնի վերածելու (*ունինք-ունենք*, Ն., էջ 155), դարակիզքի արեւելահայ ձեւերը ժամանակակից արեւելահայերէն դարձնելու (*իրան-իրեն*, Ն., էջ 183) անհրաժեշտութիւնը եղած: Կարելի է թէր ու դէմ պատասխաններ տալ, եւ պիտի արժէր յաւելեալ կարծիքներ լսել: Միաժամանակ, մեր դիտողութիւնները նկատի չունին արեւմտահայերէն կարգ մը ձեւերու (օր. «ապացուցանել»), սխալ գործածուած բառերու (օր. «վախում» փխ. «վախեցում»), կամ «մի», «ամէն մի», «եւ» եւ այլ միաւորներու փոփոխութիւններ կամ ջնջումներ, որոնք որոշ թիւ կը կազմեն:

***Enlightenment and Diaspora: The Armenian and Jewish Cases*, edited by Richard G. Hovannisian and David N. Myers. Atlanta, Georgia: Scholars Press, 1999. ISBN 0-7885-0604-8.**

Enlightenment and Diaspora is another example that the comparative approach is being increasingly made use of in the domain of Armenian Studies. This fresh attitude has to be welcomed unconditionally. This volume of collected papers addresses 'the comparative historical paths of Jews and Armenians in absorbing and disseminating the values of the Enlightenment' (p. 1). It emerged out of a conference conceived by Professor Benjamin Braude of Boston College and held at the University of California, Los Angeles, in November 1995.

This is not the first attempt, of course, to compare certain aspects of Armenian and Jewish history. Previous comparative endeavors, however, had mostly dealt with the Armenian Genocide of 1915 in relation to the Jewish Holocaust of the Second World War. Braude refers to that reality in this volume by pointing out that 'the few attempts to compare the history of Armenians and Jews have unfortunately dealt with how they died, not how they lived' (p. 7). The implicit conclusion is that the papers included in this volume constitute an attempt to start filling that gap. According to co-editor David N. Myers, the collected contributions emphasize 'the ongoing confrontation and negotiation between an imagined sense of group identity and a wider political, social, and cultural world. This process of confrontation and negotiation seems especially typical of those extra-territorial groups or communities labeled diaspora' (p. 125); the papers included in this volume admittedly pay relatively little attention to the fate of the Enlightenment in the Armenian and Jewish 'heartlands' (p. 269). Moreover, co-editors Myers and Richard G. Hovannisian admit that most of papers 'do not engage in direct comparative work' (p. 2). Nevertheless, their argument is that 'their mere assembly here represents raw material for the next phase of scholarly labor' (p. 2).

Given the state of research worldwide, the first challenge, which almost all contributors face, is, not surprisingly, the evident lack of uniformity within the scholarly community at large in trying to define the two central terms for this volume – 'Diaspora' and 'Enlightenment.'

The term 'Diaspora' is defined, as a rule, rather broadly throughout the volume. It stands for the network of Armenian or Jewish communities living outside the confines of their respective historical homelands, although Marc Nichanian questions the applicability of this term to the community of Armenian Catholic Mekhitarist monks based in Venice (p. 94). The successes of Armenian colonies in 'accomplishing top level achievements in the most varied fields of life within the structures of a given society' (p. 46) and their ability to develop a high standard of 'Armenian culture, art, and forms of life ... on foreign soils' are repeatedly underlined (pp. 79-80)

The Enlightenment is largely an 18th century European phenomenon. It characterizes the efforts by rational thinkers to approach the natural and the

social worlds as a finite order, without regard to the heavenly world. These thinkers tried to underline the centrality of human concerns, the effectiveness of human rationality, human responsibility and human agency. The Enlightenment marked, according to the late Vahé Oshagan, 'the triumph of rationalism and of empiricism, the scientific spirit, an experimental method, and progress' (p. 145). This period saw a simultaneous sharp decline in the role of religion, which became confined to the status of mere faith. Spheres like economic, intellectual and political-legal life, social values, matters of personal status and the arts, which were all formerly within religion's domain, became autonomous and independent. Braude says that the Enlightenment 'transformed all of European society and affected the rest of the world' (p. 6).

It is beyond doubt that a corresponding change also occurred among minority, stateless groups, like Jews and Armenians, which lived in or on the outskirts of Europe. Braude even claims that the effect of the Enlightenment 'on dispersed communities such as the Jews and the Armenians was far more radical than upon peoples whose territorial-political base could be more or less taken for granted' (p. 6). However, Nichanian points out that 'it is not possible to consider the spreading of the Enlightenment in Europe and among the Armenians using the same categories' (p. 96). For Braude, too, the Enlightenment-inspired European territorial nation-statist models of collective identity are inappropriate for diasporan peoples like the Armenians and Jews. For example, it is now widely acknowledged that, within the European context, states played a central role in shaping the institutions through which various individuals and groups articulated the ideas of the Enlightenment. The states also sponsored the dissemination and development of these ideas. Minority groups did not have states of their own. Professor David Sorkin contends that, in the absence of a state, that same role was played by elite groups and institutions within each community. Among the Jews outside Palestine, for example, Sorkin argues that 'the elite families acted as the state's surrogate or its extensions' (p. 137).

Various contributors believe that the rising commercial classes, the bourgeoisie, acted in a similar manner among the Armenians. These authors repeatedly underline the sensitivity of these classes to and their active support for culture (including Enlightenment institutions) until the mid-nineteenth century.

Moreover, it is acknowledged by more than one contributor that, among the Armenians, 'there was no clear division between lay and clerical enlighteners' (p. 143). It is undeniable, of course, the Catholicos of All Armenians in Etchmiadzin was alarmed with the "heretical" ideas (a mixture of constitutional monarchy and republicanism) espoused by the enlighteners in the Madras Group of Armenian merchants in the late eighteenth century. The Catholicos ended up excommunicating Movses Baghramian, one of the Group's principal members, and ordering Shahamir Shahamirian, another member, to burn all remaining copies of one of their controversial publications. Overall, however, the Armenian Enlightenment is depicted in this volume as having been a diverse enough philosophical and cultural movement to embrace not only critics of established

religion, but also those who tended to view the Armenian clergy as the guarantors of national culture rather than as enemies of the Enlightenment. The latter group was ready to work in harmony together with the religious elite of priests and scholars. This divergence from the European model is explained in the volume by the centrality of religious identification to Armenians (and Jews). Hence, it is suggested that the Armenian clergy felt less threatened by enlightened ideals and was not necessarily against those who promoted them. Indeed, the seemingly paradoxical role played by the late seventeenth/early eighteenth century Armenian Catholic monk, Mekhitar Sebastatsi, and by the Mekhitarist congregation that he founded in disseminating lay ideas comes under repeated and careful scrutiny throughout this volume.

The evaluation of the exact role of Mekhitarists in the Armenian Enlightenment brings us inevitably to the thorny issue of the latter's chronology.

Most, not to say all, contributors will agree with Levon Boghos Zekiyan's claim that the Enlightenment movements among the Armenians 'were remarkably delayed in comparison with their Western parallels' (p. 51). Oshagan rightly suggests that the very concept of the Enlightenment is somewhat unfamiliar to Armenian literary (we may also add, social) historians. His own definition of this crucial term is very broad. The Enlightenment, he argues, 'is in reality an ongoing process that only changes its name with the passage of time,' for 'the history of the diaspora shows that every time Armenians have come into fertile contact with the outside world, they have experienced a revival' (p. 180). Oshagan cautions, however, that 'these disparate, uncoordinated, and often random and contradictory states of revival in widely separated communities, acting under different influences we call Armenian Enlightenment' did not merge 'into one current of thought' (pp. 178-179).

This loose definition of the term 'Enlightenment' appears to lead, however, to certain internal inconsistencies in Oshagan's contribution. He first says that 'the seventeenth century ushered in a new spirit in the Armenian communities in the West' (p. 146). It was 'a period of slow revival of learning in the monastic centers in Armenia.... The main operatives were printing and education' (p. 149). Oshagan sees no evidence, however, that 'Western culture was seen as the source of the inspiration for this Enlightenment' (p. 149). Western political and moral ideas were still not welcome among the Armenian elite. He later describes Eremia Chelebi Keumurdjian (1637-1695) as 'the first Armenian lay intellectual of note cast in the Western tradition of the Enlightenment *philosophe* Humanist. As such, he inaugurated the start of the Armenian Enlightenment' (p. 151). Other sixteenth and seventeenth century figures like Stepanos Salmastetsi, Mikael Sebastatsi and Catholicos Hakob Jughayetsi are also described as the earliest activists of revival in Armenia (p. 177). However, Oshagan suggests elsewhere that Enlightenment ideas did 'not seem to have fermented in the minds of eighteenth-century Armenian intelligentsia' (p. 145) and that contacts between Armenians and eighteenth-century Europe 'were marginal to the mainstream cultural reality' (p. 146).

The words 'revival' and 'Enlightenment' are unnecessarily used here interchangeably, thus confusing the reader. The latter is also left to deduce that, for Oshagan, there were individual Armenians living in the sixteenth and seventeenth centuries 'cast in ... the tradition of the Enlightenment *philosophe* Humanist,' but they were all long before their time, for there was no Armenian Enlightenment as a coherent movement.

If this interpretation is correct, then things had not, according to Oshagan, changed much a century or so later. He says that scholars like Baghtasar Tpir and Shahan Girbied were active 'as agents of enlightenment in the Western Armenian world in the eighteenth century,' but they 'never added up to an elite or a class of people capable of generating a revival, much less of receiving potent, foreign influence.... Each worked more or less on his own' (pp. 153-156).

Most other contributors focus on a narrower time-frame and appear to be more consistent not only in the use of their definitions but also in their subsequent conclusions. According to Zekiyan, 'Armenian literature opened up to modernity already in the second half of the sixteenth century' (p. 77), but he consciously refrains from using the actual term 'Enlightenment' up until the end of the eighteenth century. Rubina Peroomian, too, argues that Armenians had not yet experienced revival in the late seventeenth and the eighteenth centuries.

It is in the above-mentioned Madras Group that Zekiyan, Nichanian and Vazken Ghougassian see the first exponents of Enlightenment among the Armenians. Oshagan, too, is full of praise for the outstanding members of this group – Movses Baghramian, Shahamir Shahamirian and Harutiun Shmavonian – and the ideas they advocated. 'The Madras group was by far the most important movement to emerge as the spirit of enlightenment gathered pace among the Armenians,' he claims (p. 165). Oshagan notes, however, the absence of any 'trace of the deism of Voltaire and the Encyclopedists' (p. 170) among its members.

For Zekiyan, the Armenian Enlightenment's second main phase or what he calls the 'full secularization period' extended from the 1840s until 1915. It witnessed 'the end of the cultural domination of the Church and of the clergy,' 'the intellectual emancipation of the popular masses' (p. 68) and a full literary renovation. This period made the accomplishments of the previous generation of Enlightenment thinkers the common property of the whole people. Oshagan's own understanding of the significance of this period is broadly in line with Zekiyan's. The Madras Group 'would never have succeeded in getting the renaissance off the ground in both Eastern and Western Armenia were it not for the intellectuals and poets who took the relay in the early nineteenth century' (p. 178). Among Armenians living in the Russian Empire, for example, nineteenth century intellectuals like Khachatur Abovian, Rafael Patkanian and Stepanos Nazarian 'tried to combine two hundred years of European cultural evolution, starting with classicism and the Enlightenment and ending with the romantic revolution and nationalism, into one coherent national culture' (p. 178). Peroomian's contribution to this volume also focuses by and large on this period,

although she neither engages in defining the term 'Enlightenment' within the Armenian context, nor proposes any neat chronological framework to trace its trajectory.

These chronological frameworks appear to leave the Mekhitarist congregation on the fringes of the Armenian Enlightenment. The Mekhitarist translations from various periods of European literature and their establishing of schools in various locations with Armenian concentrations are repeatedly underlined and praised as necessary building blocs for the future 'awakening' of Armenian culture. Due and special attention is paid to the Armenian language dictionary prepared by Mekhitar himself, as well as to Father Mikayel Chamchian's comprehensive *History of the Armenians* (1784-86). Both, after all, appear to have been influenced directly by the Enlightenment's notion of taxonomy and order. Oshagan argues, however, that the main concern of the Mekhitarists in the eighteenth century 'was to prepare the essential tools for a renaissance rather than to respond to Enlightenment ideals.... They were committed to a national revival and were clearly aware of the Enlightenment movement in Europe but chose not to echo it, first because of its anti-Vatican stance and secondly because of its manifest atheism' (p. 162). Nichanian concurs that one finds no echo of the ideas of the Enlightenment in the Mekhitarist publications of the eighteenth century. Both Oshagan and Nichanian underline the fact that the Mekhitarists never translated the authors of the European Enlightenment. Even 'Voltaire was translated as a classical dramatist and playwright, never as a *philosophe*' (p. 93). Hence, the voice of critical rationalism did not reach the Armenians (p. 164). Even Mekhitarist publications from the nineteenth century, i.e. after the emergence (and even the gradual demise of the activities) of the Madras Group, do not convince Nichanian to equate the attempt to make up 'for lost time half a century later' with the arrival of the time of the Enlightenment among the Armenians at large (p. 96).

Thus, there is apparent confusion of the applicability of definitions originating in Western European experience to changes occurring within the Armenian context and, to a lesser extent, in delineating a fixed chronological framework to study these changes. This leads the reader to deduce that there is still a long way to go for Armenian Studies experts to study the details of these changes in Armenian thought and mentality and to reach conclusions that will be broadly acceptable to the scholarly community. Another, albeit more difficult, possibility is to try and come up with a different framework and terminology to analyze the experience of Armenians and, perhaps, other non-European peoples with similar historical trajectories. In this regard, comparing the Armenian experience with those of Jews and other non-European or stateless peoples is an essential first step to finding out their points of commonality, as well as those of divergence from the European mainstream.

The co-editors claim that another central theme discussed in this volume 'is the triangulated relationship among Enlightenment, diaspora, and nationalism' (p. 3). Actually, this nexus is analyzed in some detail only in one contribution: that of Benjamin Braude. He argues that the Enlightenment totally undermined

the previous bases for collective survival and identity. The fall of the poly-ethnic, multilingual, multi-religious, dynastic empires and the rise of the European nation-states dealt fatal blows to the traditional diasporan existence of stateless, minority peoples, like the Armenians and Jews. Life in exile was rendered much more intolerable for the latter than it had ever been before. Therefore, new forms of identity had to be and were actually invented. These new forms mostly used the old familiar words and texts, but unfailingly altered their meaning. Braude further argues that post-Enlightenment nation-statist ideologues and historians among Armenians, Jews, Greeks (and perhaps other peoples) ignored the apolitical quality of the pre-modern national existence of their ancestors. They reinterpreted the medieval dynastic monarchy and the attachment to a homeland to fit the model of their own contemporary agenda, which encompassed a new and powerful yearning for the "native" homeland. Consequently, exile and diaspora were henceforward twinned as negative expressions of extra-territoriality. In historiography, medieval religious millenarianism was now seen as a forerunner for modern nationalism. Although these changes in the modes of thought occurred slowly, claims Braude, this transition was not without internal disputes and rivalries between modernizers, influenced by the West, and exponents of the traditional religious worldview, rooted in the East.

None of the Armenian Studies experts touch upon this issue in their contributions to this volume. The subject of studying anew the emergence (or as others prefer to call it, the making) of modern national (including Armenian) identities in light of new trends in contemporary historiography has largely remained outside the focus of attention of historians and related specialists dealing with the Armenian past. Even the most timid attempts in this regard have at times received very hostile criticism. The inclusion of Braude's contribution which puts the picture within a broader, methodological framework, in a volume which deals specifically with Armenians and Jews, and will therefore be read more widely among Armenian Studies circles, may help to re-transfer this debate to the place where it belongs – the realm of scholarly research and inquiry.

ARA SANJIAN

N.B. The reviewer thanks Mr. Sebouh Aslanian of Columbia University for his suggestions made after reading an earlier draft of this review.

Heralding of the Armenian Genocide: Reports in The Halifax Herald 1894-1922, compiled by Katia Minas Peltikian. Halifax, Nova Scotia: Armenian Cultural Associations of the Atlantic Provinces, 2000.

Պէյրութի Ամերիկեան Համալսարանի անգլերէնի դասատուներէն, Մագիստրոս Արուեստից տիտղոսակիր Քաթիա Մ. Փելթէքեան շնորհակալ աշխատանք մը կատարած է 352 էջնոց գիրքի մը մէջ լոյս ընծայելով գանատական *The Halifax Herald* լրագրին մէջ լոյս տեսած հայոց վերաբերող մամլոյ լրատուութիւնները, որոնք առնչուած են 1894-96ի համիտեան ջարդերուն, 1909ի Ատանայի կոտորածին եւ 1915-22ին հայոց վրայ գործադրուած ցեղասպանութեան:

Անշուշտ մամուլի կտրօններու նմանօրինակ հրատարակութիւններու մէջ առաջինը չէ Փելթէքեանի գիրքը: Ռիչըրտ Տիրան Քլոյեան 1980ին հրատարակած է *The Armenian Genocide: First 20th Century Holocaust* խորագրեալ հայկական ցեղասպանութեան առնչուած ամերիկեան մամլոյ կտրօններու իր հաւաքածոն, որ յետագային երկու անգամ վերատպուած է: Անոր յաջորդած է *The Armenian Genocide as Reported in the Australian Press* (Սիտնի, 1983), Դանիէլ Գարամանուկեանի կազմած El Genocido armenio en la prensa del Uruguay, ano 1915 (Մոնթէվիտէօ, 1985) եւ Գանատայի Հայ Դատի Յանձնախումբի հրատարակած *The Armenian Genocide in the Canadian Press, Volume I: 1915-1916* (Մոնրէալ, 1986) մամլոյ կտրօններու հաւաքածոներու հրատարակութիւնը: Սուրիահայ Նորա Արիսեան, իր կարգին, Եւրոպայի ու Լատինական Ամերիկայի երկիրներուն մէջ սուրիական սփիւռքի մամուլի կտրօններու հաւաքումով զբաղած է եւ վերջիններուս հիման վրայ 2001ին Երեւանի մէջ պաշտպանած իր թեկնածուական ատենախօսութիւնը՝ «Հայոց Ցեղասպանութեան Լուսաբանումը Սիրիական Մամուլում (1877-1930) Եւ Դրա Վերաբերեալ Սիրիացի Մտաւորականների Կարծիքը» (տե՛ս՝ Գէորգ Կէօնճեան, «Երեւանի Մէջ՝ Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի Մէջ Նորա Արիսեանի Թեկնածուական Պաշտպանութիւնը», *Ջարթօնք*, Շաբաթ, 5 Օգոստոս 2001, էջ 6):

Փելթէքեանի գիրքը գլխաւոր երկու պատճառներով կը տարբերի վերոյիշեալներէն: Առաջին՝ ան ներառած է նաեւ 1894-96ի ջարդերն ու Ատանայի Աղէտը, եւ երկրորդ՝ մամլոյ կտրօններու բնագրին լուսապատճէններուն կողքին, որոնք միշտ բաւարար յստակ չեն, տրուած է նաեւ անոնց գրութիւնը՝ դիւրացնելով պրպտողին եւ ընթերցողին գործը: Ան յատկապէս լայն տեղ (շուրջ 180 էջ) տուած է 1894-96ի ջարդերուն, որոնց մասին կտրօններու այլ հաւաքածոյ տեսած չենք: Պրպտողին գործը հեշտացնելու ուղղութեամբ գիրքը լաւ կազմակերպուած է: Տրուած է շատ կարեւոր ցանկ նիւթոցը, իսկ կազմողը՝ նախաբանէն ետք, նիւթերը դասակարգած է ժամանակագրական հիմունքով՝ տալով իւրաքանչիւր տարեթիւը եւ ապա՝ այդ ընթացքին լոյս տեսած նիւթերը:

Հալիֆաքս քաղաքը հիմնուած է 1749ին: Ան Անգլիոյ հետ առեւտուրի հիմնական նաւահանգիստներէն մին էր եւ 1840էն սկսեալ շոգենաւեր կը

բանէին կանոնաւոր կերպով: Ատլանտեանի ափին գաւառական այս քաղաքին հիմնական թերթը՝ *The Halifax Herald* արագ կապ ունէր Ատլանտեանի միւս ափէն Բրիտանիոյ հետ, ուստի աւելի տեղ կու տար արտաքին աշխարհի լուրերուն եւ այդ ծիրէն ներս՝ նաեւ հայոց ողբերգութեան:

Նախաբանին մէջ, Փելէքեան արագօրէն անդրադարձած է հայոց պատմութեան՝ հասնելով ԺԹ. դարու վերջաւորութեան Հայկական Հարցի եւ 1915ի հայոց ցեղասպանութեան գործադրութեան պատմութեան: Նախաբանին մէջ, այն՝ ինչ կը վերաբերի հայոց, իր ընդհանրութեան մէջ ընդունելի եւ օգտակար է, յատկապէս՝ օտարներուն համար: Լաւ պիտի ըլլար Բագրատունեաց Հարստութեան եւ անոր մայրաքաղաք Անիի թէկուզ անցողակի նշումը: Կիլիկիոյ մէջ հայերն անկախ պետականութիւն ունեցած են 1080էն 1375՝ աւելի քան հեղինակի նշած 200 տարին: Հայաստան օսմանցիներու եւ պարսիկներու միջեւ բաժնուեցաւ Չալդըրանի ճակատամարտէն որոշ ժամանակ ետք՝ 1555ին, եւ ո՛չ թէ 1405ին՝ Լենկթիմուրի մահուան տարին: Այսօրինակ վրէպներու եւ աստրօ-հունգարական պետութեան առնչութեամբ արտառոց սխալի մը («Բրիտանիա 1878ին իշխանութեան տիրացաւ Պոսնիա-Հերցեկովինայի եւ Աւստրիա-Հունգարիոյ վրայ», էջ VIII, եւ «Եւրոպան Թուրքիոյ տկարութենէն օգտուելով Աւստրիա-Հունգարիան կցեց», էջ IX) առաջքը դիւրութեամբ կրնար առնուիլ, եթէ նախաբանը պատմագէտի մը վերահսկողութենէն անցնէր:

Բնական է, որ գործը չի սահմանափակուիր պատմական եղելութիւններու մասին այս նախաբանով: Հիմնականին մէջ, անիկա հայոց ցեղասպանութեան պատմութեան համար նոր սկզբնաղբիւր մըն է, որ հում նիւթ կը տրամադրէ ե՛ւ ուսումնասիրողին ե՛ւ այս հարցով հետաքրքրուող բոլոր մարդոց:

Փելէքեանի սոյն աշխատանքը, արդիւնք՝ համբերատար պրպտումի, երախտաշատ գործ մըն է եւ արժանի գնահատանքի:

ՋԱՒԷՆ ՄՍԷՐԼԵԱՆ

Հայկական Կինօ 1924-1999. Լիակատար Կատալոգ, կազմողներ՝ Ս. Գուլեան, Ա. Երզնկեան, Ա. Թաղեւոսեան եւ այլք, խմբագիրներ՝ Ս. Յարութիւնեան, Մ. Ստամբոլցեան եւ Ռ. Զաքարեան, Երեւան, «Արտագերս», 2000, 251 էջ: (Նոյն կատալոգը լոյս է տեսել նաեւ ռուսերէն եւ անգլերէն:)

Հայաստանի Կինօգէտների եւ Կինօլրագրողների Ընկերակցութիւնը հրատարակել է *Հայկական Կինօ 1924-1999* հայ շարժանկարի լիակատար ֆիլմագրութիւնը՝ երեք առանձին հատորներով՝ հայերէն, ռուսերէն եւ անգլերէն: Ցայժմ կատարուած նման աշխատանքներից սա առաւել լիակատարն է: (Համակարգման առաջին փորձը կատարել էր հայ կինոյի հիմնադիրներից Դանիէլ Դզնունին:)

Աշխատանքային խումբն օգտուել է մի շարք աղբիւրներից, որոնք նշուած են գրքի առաջաբանում: Տուեալները գրեթէ բոլոր հնարաւոր դէպքերում, – քանզի որոշ ֆիլմեր չեն պահպանուել, – ստուգուել են շարժանկարների բնագրերով: Հայաստանի Կինօգէտների եւ Կինօլրագրողների Ընկերակցութեան անդամների յամառ, յարատեւ ջանքերի շնորհիւ հաւաքչական բնոյթի աշխատանքներ են կատարուել Մոսկուայի Պետական Կինօարխիւում (որտեղ պահւում են մինչեւ 1989 թուականը նկարահանուած հայկական ֆիլմերը), Հայաստանի Ազգային Ֆիլմադարանում, «Հայֆիլմ», «Հայկ» եւ «Երեւան» ստուդիաների, Հայաստանի Գրականութեան եւ Արուեստի Պետական Թանգարանի, Հայաստանի Կինեմատոգրաֆիստների Միութեան, ինչպէս նաեւ կինօգործիչների անձնական արխիւներում: Շատ փաստեր հրապարակւում են առաջին անգամ:

Հայկական կինոյի գոյութեան 75 տարուայ ժառանգութիւնը գիտական մօտեցումով ի մի բերելու, միջազգային չափանիշներին համապատասխան ներկայացնելու փորձ է սա: Կատալոգը մանրակրկիտ փաստագիտական ուսումնասիրութիւն է, ուր համակարգուած եւ ներկայացուած են գրեթէ սպառիչ տեղեկութիւններ հայկական կինօարտադրութեան մասին: Ցանկացած բնագաւառում գիտութիւնն սկսւում է այդօրինակ համակարգումից, այնպէս որ չափազանց գնահատելի է նման տեղեկատու ձեռնարկի պատրաստումն ու հրապարակումը:

Տարեգրութիւնը կազմուած է օրինակելի, գիտականօրէն մշակուած սկզբունքով եւ հետեւողականութեամբ: Շարժանկարները ներկայացուած են ըստ տարեթուերի, ժանրերի եւ տեխնիկական բոլոր յատկանիշերի՝ ընդգրկելով տուեալ շարժանկարին իրենց մեծ եւ փոքր մասնակցութիւնը բերած անձնաւորութիւնների մեծ մասի անունները (իսկ գեղարուեստական շարժապատկերների դէպքում՝ նաեւ մարմնաւորած դերերի անունները): Կինոյի տարեգրութեան պատկերն առաւել ընդհանրական է դառնում գրքի վերջում զետեղուած անուանացանկի եւ այբբենական ցանկի շնորհիւ, որից օգտուելը հեշտացնում է փնտրողի գործը: Իսկ Սուրէն Յասմիկեանի հակիրճ ու յստակ լեզուով գրուած նախաբանը յաջողապէս տալիս է հայ կինոյի անցած ոչ-երկարատեւ ճանապարհի ամբողջական պատկերը: Հարկ է

կարեւորել, որ աշխատանքային խմբում ընդգրկուած մասնագէտներից ոմանք (Սուրէն Յասմիկեան, Միքայէլ Ստամբոլցեան, Դաւիթ Մուրադեան) ներկայ ու մասնակից են եղել հայ ազգային կինոյի վերջին տասնամեակների պատմութեան ընթացքին, այն գիտեն ներսից: Արդ, երբ նոր ժամանակագրութիւն է սկսուել Հայաստանի պատմութեան մէջ, նոր ընթացք է ստացել նաեւ մշակոյթը: Նորակերտ իրականութեան մէջ ձեւաւորուող սերնդի համար, նախորդ շրջանի աւարտուն տարեգրութեան գոյութիւնը հնարաւոր է դարձնում եւ անգամ հեշտացնում ազգային կինեմատոգրաֆիայի պատմութեան յետագայ գիտական ուսումնասիրութիւնը:

Կատալոգը տալիս է հայկական կինոյի համայնապատկերը եւ միեւնոյն ժամանակ՝ սեղմ տեղեկութիւններ իւրաքանչիւր ֆիլմի մասին: Այդ կերպ ձեռք է բերուած ընդհանուրի եւ մասնաւորի զուգակցում, ինչը սոյն փաստագրական ուսումնասիրութեան անվիճելի առաւելութիւններից է, թէպէտ իրրեւ հայ ազգային կինոյի պատմութեան ողջ ընթացքի նկարագրութիւն, այն չի կարող սպառիչ համարուել: Ֆիլմերի ծանուցումները միշտ չէ որ յաջողուած են, սկզբունքի եւ ոճի առումով միասնական չեն: Տեղ են գտել նաեւ որոշ սխալներ. օրինակ, հայերէն եւ ռուսերէն տարբերակներում ճիշդ չի տրուած «Երաժշտութիւն» բազմանկարի բովանդակութիւնը: Բոլոր դէպքերում, նշուած թերութիւնները չեն նսեմացնում կատարուած աշխատանքի անուրանալի արժէքը:

Անշուշտ, կինոյի տեղեկատուին վայել կը լիներ նկարազարդ էջադրումը, սակայն միջոցների սուղ լինելու պատճառով անհնար է եղել դրա իրագործումը: Այդ բացը լրացուել է կատալոգի էլեկտրոնային տարբերակում, որը դրուած է համացանցում՝ www.arm-cinema.am հասցէով: Այն հարստացած է մօտ 300 ստեղծագործողների կենսագրական եւ ֆիլմագրական տուեալներով, ինչպէս նաեւ կինօգործիչների եւ շարժանկարների դրուագների լուսանկարներով: Պատրաստում է նաեւ *Հայկական կինօ* խտապնակի թողարկումը:

Ինչպէս իրաւացիօրէն նշել է իր գնահատականի մէջ Ռուսաստանի Կինօգէտների եւ Կինօլրագրողների Միութեան նախագահ Միրոն Չեռնենկօն, գիրքն օգտակար կը լինի ոչ միայն հայ կինօգործչին եւ ընթերցողին, այլեւ՝ արտասահմանեան մասնագէտներին: Յատկանշական է, որ սոյն միութիւնը, որի ամէնամեայ մրցանակին են արժանանում ռուս կինօգէտները, բացառութեան կարգով 2000 թուականի իր պատուոգիրը յանձնել է *Հայ կինօ. 1924-1999* կատալոգին:

ՍԻՐԱՆՈՅՇ ԳԱԼՍՏԵԱՆ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ (1 Հոկտեմբեր 2000 - 31 Դեկտեմբեր 2001)

Հայկազեան Հայագիտական Հանդէսը իր այս հատորով կը սկսի նոր բաժին մը, ուր պիտի ներկայացուին համալսարանի Հայագիտական Ամբիոնի տարեկան հրապարակային գործունէութիւնները:

Սոյն՝ առաջին ակնարկը բացառաբար կ'ընդգրկէ 15 ամսուան ժամանակամիջոց մը, կարենալ ամբողջութեամբ ներառելու Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակին նուիրուած դասախօսութիւններու շարքը: Հանդէսի խմբագրութիւնը, սոյն ակնարկը կը նկատէ բնական շարունակութիւնը նախորդ հատորին մէջ լոյս տեսած ամբիոնի պատմութեան նուիրուած համառօտ ուրուագիծին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՕՆ ՀՌՉԱԿՄԱՆ 1700ԱՄԵԱԿԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԱՐՔԸ

Հայագիտական Ամբիոնը կազմակերպած էր Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակին նուիրուած վեց դասախօսութիւններ, որոնք բոլորն ալ տեղի ունեցան համալսարանի հանդիսասրահին մէջ:

Ա.

«Արարչագործութիւնը Հայ Մեկնողական Գրականութեան Մէջ» դասախօս՝ Հոգեշնորհ Շահան Ծայրագոյն Վարդապետ Սարգիսեան 9 Նոյեմբեր 2000

Սոյն շարքին առաջին դասախօսութիւնը նուիրուած էր տիեզերքի եւ մարդկութեան արարչութեան հարցին նուիրուած հայ մատենագիրներու տեսակէտերուն ու մեկնութիւններուն: Դասախօսն էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Զարեհեան Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգեշ. Շահան Ծ. Վրդ. Սարգիսեանը:

Երեկոն սկսաւ համալսարանի նախագահ Վեր. Ժան Խանճեանի բացման խօսքով, ուր ան անդրադարձաւ հայոց պատմութեան մէջ քրիստոնէութեան խաղացած առանցքային դերին եւ Հայկազեան Համալսարանի հայկական եւ քրիստոնէական առաքելութեան:

Արարչագործութեան վերաբերեալ բազմաթիւ մեկնութիւններու կարելի է հանդիպիլ հայ միջնադարեան գրականութեան բոլոր սեռերուն մէջ, ըսաւ Հոգնշ. Հայր Սուրբը: Այդ մասին կարելի է գտնել նախաքրիստոնէական եւ քրիստոնէական, յունական կամ ասորական փիլիսոփայական ճառերու թարգմանութիւններուն, ինչպէս նաեւ հայ ինքնագիր գրականութեան մէջ՝ Աստուածաշնչեան մեկնութիւններու, գիտական (Անանիա Շիրակացի) եւ պատմական (Ասողիկ) երկերու, քարոզներու (Մամբրէ Վերծանող, Գրիգոր Տաթեւացի), բանաստեղծութեան (Գրիգոր Նարեկացի), ծիսական երկերու (*Շարակնոց, Մաշտոց*), եւն.: Արարչագործութիւնը հետաքրքրած է նաեւ բոլոր ժամանակներու մաքրանկարիչներն ու Ախթամարի Ս. Խաչ Եկեղեցւոյ բարձրաքանդակներու հեղինակները:

Դասախօսը յատկապէս կեդրոնացաւ Ե.-Զ. դարերու կարգ մը երկերու վրայ, ինչպէս Գրիգոր Լուսաւորիչի կամ Մեսրոպ Մաշտոցի վերագրուող *Յաճախապատում* գիրքը, Ագաթանգեղոսի *Պատմութիւն Հայոց*ին մաս համարուող *Ս. Գրիգորի Վարդապետութիւն*ը, Եզնիկի *Եղծ Աղանդոց*ը, *Արարածոց Մեկնութիւն*ը:

Աւելի ուշ շրջանի հեղինակներէն յիշուեցան՝ Զաքարիա Կաթողիկոսը (Թ. դար), Ներսէս Շնորհալին (ԺԱ. դար), Յովհաննէս Սարկաւագը (ԺԲ. դար), Յովհաննէս Երզնկացին, Առաքել Սիւնեցին, Յովհաննէս Թլկուրանցին, Յովհաննէս Որոտնեցին (ԺԴ. դար) եւ Գրիգոր Խլաթեցին (ԺԵ. դար):

Ըստ դասախօսին, արարչագործութեան վերաբերեալ այս նիւթերուն մեծ մասը տակաւին անտիպ է, եւ միայն փոքր մաս մը արժանացած է գիտական վերլուծութեան: Միւս կողմէ, յունական եւ ասորական փիլիսոփայական երկերու բազմաթիւ թարգմանութիւններ ուսումնասիրուած են ոչ-հայ մասնագէտներու կողմէ:

Հայր Շահան մանրամասնօրէն անդրադարձաւ ԺԳ. դարու հեղինակ Վարդան Արեւելցիին: Հնգամատեանին նուիրուած անոր ընդարձակ աշխատանքը, նախորդ դարերու կորսուած երկերէն բազմաթիւ մէջբերումներ կը ներառէ եւ մեծ ազդեցութիւն ունեցած է միջնադարեան հայ մտածողութեան վրայ: Սոյն մեկնողական երկը պահպանուած է առնուազն 90 ձեռագիրներով:

Բ.
«Շարականները՝ Խտացած Արտայայտութիւն Հայ Աշակոյթի»
դասախօս՝ Գրիգոր Շահինեան
11 Յունուար 2001

1700ամեակին նուիրուած դասախօսական շարքին երկրորդը նուիրուած էր միջնադարու հայ շարականներուն: Անոնց մասին դասախօսեց լիբանանահայ ծանօթ մանկավարժ եւ գրաքննադատ, Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կազմաւորումի Հիմնարկի անօրէն Գրիգոր Շահինեան:

Ըստ Շահինեանի, շարականները հայ քրիստոնէական եւ ազգային մշակոյթի եզակի գանձարանն են: Շարականներ գրուած են գիրերու գիւտէն անմիջապէս յետոյ՝ թարգմանչական աշխատանքներուն զուգընթաց: Արդէն ընդունուած կարծիք է, թէ Մեսրոպ Մաշտոց անձամբ հեղինակած է մօտաւորապէս 130 շարականներ, իսկ Սահակ Պարթեւ Կաթողիկոս՝ 20:

Պատմահայր Մովսէս Խորենացի ալ հեղինակած է շարականներ՝ նուիրուած Աստուածածնին եւ այլ Աստուածաշնչեան նիւթերու:

Շարականները յարաբերաբար կարճ, ծիսական երգեր են, որոնք կ'առնչուին Նոր Կտակարանի նիւթերուն եւ դէմքերուն: Յատկապէս կը փառաբանուին քրիստոնեայ ազգային-եկեղեցական դէմքեր: Շարականները ընդհանրապէս ուսուցողական բնոյթ ունին՝ բարդ աստուածաբանական իրականութիւնները պարզ լեզուով ու բանաստեղծական ոճով բացատրելու նպատակով: Շատ շարականագիրներու անուններ այսօր յայտնի չեն մեզի, բայց կարելի է հաստատօրէն ենթադրել, որ անոնք մեծաւ մասամբ եկեղեցականներ եղած ըլլալու են:

«Շարական» եզրը, ըստ Շահինեանի, շատ հաւանաբար կը ծագի «շարք» բառէն եւ կրնայ նշանակել «շարքի մը պատկանող»: Սակայն, կարգ մը ուսումնասիրողներ, այդ բառը կը ստուգաբանեն իբր երբայերենէ կամ ասորերենէ ծագած եզր մը:

Հայ շարականագրութիւնը կը բաժնուի երեք շրջանի, ըսաւ Շահինեան.-

առաջին՝ Ե.-Զ. դարերը, երբ Աստուածաշնչեան սաղմոսներու ազդեցութիւնը զգալի է, եւ հեղինակները հազուադէպօրէն կը դիմեն տաղաչափութեան:

երկրորդ՝ Է.-ԺԲ. դարերը, երբ տաղաչափութիւնն ու ազգային նիւթերը կը դառնան ուշագրաւ, եւ ի յայտ կու գան մի քանի կին շարականագիրներ:

երրորդ՝ ԺԲ.-ԺԵ. դարեր, երբ կեդրոնական դէմքը Ներսէս Շնորհալի կաթողիկոս (1166-73) էր, որուն կը վերագրուի մեզի հասած շարականներուն կէսը:

*Շարակնոց*ը, որ Հայաստանեայց Եկեղեցւոյ կողմէ հաստատուած կանոնական շարականներու հաւաքածոն է, կ'ենթադրուի ԺԵ. դարուն, քէեւ մինչեւ օրս, շարականներ կը շարունակուին գրուիլ: Աստուածաբանական կամ գեղագիտական պատճառներով *Շարակնոց*էն դուրս մնացած շարականները կը ճանչցուին իբր պարականոն շարականներ:

Շահինեանի վերլուծած որոշ շարականներ, տեղւոյն վրայ մեկնաբանուեցան Երեւանէն շրջանաւարտ երիտասարդ երգիչ Գէորգ Գաբամէթլեանի կողմէ:

Գ.

«Ս. Ներսէս Շնորհալին՝ էքիւմէնիք Շարժման Ռահվիրայ» դասախօս՝ Արհիապատիւ Պետրոս Արքեպիսկոպոս Միրիաքեան 15 Մարտ 2001

Երրորդ դասախօսութեան համար հրաւիրուած էր Հալէպի Հայ Կաթողիկէ Համայնքի Առաջնորդ՝ Արհ. Պետրոս Արք. Միրիաքեան, որ խօսեցաւ հայ-քիւզանդական էքիւմէնիք երկխօսութիւն հաստատելու ջանքերուն մէջ ԺԲ. դարու հայոց կաթողիկոս Ս. Ներսէս Շնորհալիի (1102-1173) խաղացած առաջնային դերին մասին:

Հայկազեան Համալսարանի հոգաբարձութեան անդամ՝ Վեր. Փօլ Հայտոսթեան ներկայացուց հիւր դասախօսը: Միրիաքեան Արքեպիսկոպոս ծնած է Հալէպ, 1948ին: Աստուածաբանական կրթութիւնը ստացած է Զըմ-

մառի Հայ Կաթողիկէ Դպրեվանքին մէջ, ապա մեկնած է Հռոմ, ուր յաճախած է Լեւոնեան Վարժարանն ու Հռոմի Համալսարանը: Ան վկայուած է նաեւ Հալէպի Համալսարանէն, ուր ուսանած է արաբական գրականութիւն: Միրիաթեան 1990էն ի վեր առաջնորդն է Հալէպի Հայ Կաթողիկէ Թեմին, եւ միաժամանակ գործունեայ աշխատանք կը ծաւալէ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի ծիրէն ներս: Իր քարոզներն ու կրօնական յօդուածները հրատարակուած են հայերէն, արաբերէն, ֆրանսերէն եւ իտալերէն լեզուներով:

Արհ. Պետրոս Արք. Միրիաթեան՝ դասախօսութեան ընթացքին

Միրիաթեան Արքեպիսկոպոս կեդրոնացաւ Շնորհալիի կաթողիկոսութեան տարիներուն հայ եւ բիւզանդական եկեղեցիներու յարաբերութիւններուն վրայ: Ան ըսաւ, թէ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան նստավայրը Հռոմկլայի մէջ՝ շատ յարմար էր, իսկ իշխող քաղաքական մթնոլորտն ալ՝ նպաստաւոր, որ Հայ Եկեղեցին տառեալ ժամանակամիջոցին բարեկամական կապեր մշակէր Հռոմէական, Բիւզանդական եւ Ասորական Եկեղեցիներուն հետ:

Իր խօսքը կառուցելով Հայր Լեւոն Զէքիեանի եւ Ազատ Բոզոյեանի այս առնչութեամբ կատարած ուսումնասիրութիւններուն վրայ, դասախօսը ներկայացուց Շնորհալիի եւ Բիւզանդական Եկեղեցւոյ ներկայացուցիչներուն միջեւ ընթացած բանակցութիւններուն ժամանակագրական կարգը, 1165էն մինչեւ Շնորհալիի վախճանումը՝ 1173ին: Ան թուարկեց ամենակարեւոր նամակներն ու վաւերաթուղթերը, ուր լաւագոյնս կ'արտացոլան Շնորհալիի տեսակէտերը էքիմէնիք յարաբերութիւններու սկզբունքներուն առնչութեամբ:

Դասախօսութեան յաջորդ եւ ամենակարեւոր մասը, Շնորհալիի որդեգրած այդ սկզբունքներուն համառօտակի ներկայացումն էր: Ըստ անոնց,

որեւէ եկեղեցական միութիւն, պէտք է հիմնուած ըլլայ փոխադարձ սիրոյ, աղօթքի եւ խոնարհութեան վրայ: Ան առաջարկած է, որ փոխ-յարաբերութիւնները ընթանան լայնախոհութեան, միասնականութեան, համեստութեան եւ հաւասարութեան քրիստոնէական ոգիով, որպեսզի նուազին առկայ տարբերութիւնները: Շնորհալի յայտարարած է, որ կրկին կ'աշխատէր եկեղեցական միութեան համար, եթէ իրեն Աւետարանի Ղազարոսին նման երկրորդ կեանքի մը առիթը տրուէր:

Միրիաթեան Արքեպիսկոպոս ըսաւ, թէ էքիւմենիզմի այս օրերուն, Հայ Կաթողիկէ Եկեղեցին, գիտակցաբար թէ անգիտակցաբար, կը հետեւի Շնորհալիի սկզբունքներուն: Ան յիշեց, թէ Յովհաննէս-Պօղոս Բ. Պապը յանուանէ յիշատակած է Շնորհալին Հայաստանի քրիստոնէացման 1700ամեակի իր շրջաբերականին մէջ: Ինչ որ կը պակսի հիմա, ըստ դասախօսին, հայ երեք յարանուանութիւններուն միջեւ երկկողմ կամ եռակողմ բանակցութիւններ սկսելու իսկական փափաքն է:

Ան ընդունեցաւ, սակայն, թէ Հայ Կաթողիկէ Եկեղեցին, այլեւս չունի այն փափաքելի դերը, որ իր կամուրջ պէտք է ծառայէր Հայ Առաքելական Եկեղեցւոյ եւ Տիեզերական Կաթողիկէ Եկեղեցւոյ միջեւ: Աւելին, անիկա երբեմն արգելք կը նկատուի, երբ այս երկու մեծ կառոյցները կը ձգտին իրարու հետ ուղղակի կապեր հաստատել: Հայ կաթողիկէները, ինչպէս նաեւ այլ արեւելեան կաթողիկէ եկեղեցիներ, չեն դիտուիր իբր ապագայի համար մոռէյներ: Այնուամենայնիւ անոնք կը գիտակցին իրենց պատմական դերը, որ իր վախճանին պիտի հասնի երբ իրագործուի էքիւմենիք միութիւնը:

Դասախօսութեան յաջորդող հարց-պատասխանի բաժինը առաւելաբար կեդրոնացաւ եկեղեցական միութեան խնդրին վրայ, բխած դասախօսին խօսքերէն: Եղոյթ ունեցաւ նաեւ Հայաստանի դեսպան Պր. Արման Նաւասարդեան, որ ներկայ էր դասախօսութեան: Աւարտին, Արհիեպատիս Արքեպիսկոպոսը, ընդառաջելով ներկաներու փափաքին, կրկին թուարկեց եկեղեցական միութիւնը իրականացնելու գծով Շնորհալիի որդեգրած սկզբունքները:

Գ.
«Մովսէս Գ. Կաթողիկոս Տաթեւացի. Արեւելեան Հայաստանում Հայ Եկեղեցու եւ Մշակոյթի Վերածնունդը ԺԷ. Դարում»
դասախօս՝ Գէորգ Տէր-Վարդանեան
10 Մայիս 2001

Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի Ձեռագրագիտութիւն Բաժնի վարիչ Գէորգ Տէր-Վարդանեանի դասախօսութիւնը թուով չորրորդն էր 1700ամեակի շարքին: Այն նուիրուած էր հայոց կաթողիկոս Մովսէս Գ. Տաթեւացիին (1629-1633) եւ յատկապէս նոյն ժամանակամիջոցին պարսկական տիրապետութեան տակ գտնուող Արեւելեան Հայաստանի մէջ Հայ Եկեղեցւոյ եւ մշակոյթի զարթօնքին մէջ ունեցած անոր որոշիչ դերին:

Երեւանի Պետական Համալսարանի Հնագրութեան Ամբիոնի շրջանաւարտ Տէր-Վարդանեան, համարեա իր ամբողջ մասնագիտական գործու-

նէութիւնը ծաւալած է Մատենադարանէն ներս: 1995էն 1998 ան տնօրէնը եղած է Հայաստանի Ազգային Գրադարանին: Հեղինակ է շարք մը գիրքերու եւ հարիւրեակ մը յօդուածներու՝ նուիրուած հայկական ձեռագիրներու, պատմութեան եւ մշակոյթին:

Տէր-Վարդանեան ի սկզբանէ նշեց, որ Ժէ. դարուն Մովսէս Տաթեւացիի խաղացած դերին ուսումնասիրութիւնը այսօր, մեծապէս օգտակար կը հանդիսանայ Հայաստանի մէջ Հայ Եկեղեցիին, մանաւանդ երբ վերջինս այսօր կը փորձէ վերականգնիլ, խորհրդային իշխանութեան տապալումէն ասդին:

Տաթեւացին Հայ Եկեղեցւոյ պատմութեան մէջ անտեսուած դէմք մը չէ, ըսաւ դասախօսը: Միջնադարեան մատենագիրներ Առաքել Դաւրիժեցիի եւ Գրիգոր Դարանաղցիի գործերը հիմնական աղբիւրներն են անոր կենսագրութեան, մինչ աւելի ուշ շրջանի ականաւոր պատմաբաններէն Հայր Միքայէլ Չամչեան, Մադաքիա Արք. Օրմանեան եւ Հայր Ներսէս Ակինեան ընդարձակօրէն գրած են իր մասին: Տէր-Վարդանեանի աշխատութիւնը նոյն այս նիւթին առնչութեամբ, պարզապէս կը նպատակադրէ ճշգրտել ու յստակացնել այդ պատմաբաններուն կարգ մը եզրակացութիւնները, անոնց գործերուն լոյս ընծայումէն ետք յայտնաբերուած նոր փաստերու լոյսին տակ: Այս կապակցութեամբ Տէր-Վարդանեան առանձնացուց Ժէ. դարու հայկական ձեռագիրներու յիշատակարաններուն հրատարակութիւնը՝ երեք մեծածաւալ հատորներով, այդ ժամանակաշրջանին գրուած կարգ մը ժամանակագրութիւններու նոր ի յայտ գալը, ինչպէս նաեւ Վատիկանի արխիւէն փաստաթուղթեր, հրատարակուած Վենետիկի Միսիթարեան հայրերուն կողմէ:

Մովսէս Տաթեւացի, ըսաւ Տէր-Վարդանեան, ծնած է 1578ին, Սիւնիքի մէջ, երբ Արեւելեան Հայաստանի մտաւորական կեանքը կը գտնուէր տեղատուութեան մէջ: 1592ին ձեռնադրուելով կուսակրօն քահանայ, անմիջապէս փոխադրուեցաւ Արեւմտեան Հայաստանի Ամիդ քաղաքը, որ այդ ժամանակաշրջանի ուսումնական հազուագիւտ կեդրոններէն մին էր: Այնտեղ, Տաթեւացի ուսանեցաւ մօտաւորապէս 20 տարի, Սրապիոն Եղեսացիի եւ Գրիգոր Կեսարացիի հսկողութեան ներքոյ: 1612ին ստացաւ Վարդապետի աստիճան:

1613ին ան միացաւ Սիւնիքի Հարանց Անապատի միաբանութեան: Տաթեւացի եւ իր միաբանակից եղբայրները փորձեցին լաւացնել հայ հոգեւորականութեան վիճակը, որ մեծապէս տուժած էր պարսից Շահ Աբաս Ա.ի բռնագաղթին հետեւանքով: Հարանց Անապատի միաբանները օգնեցին վերաշինելու լքուած վանքերը, հաստատեցին կուսանոցներ, ուր կը գործէին կին գրիչներ:

1620ին Մովսէս Տաթեւացի եւ իր աշակերտներէն շատեր փոխադրուեցան Երեւան: Տեղւոյն պարսիկ Ամիրգունա խանը, ջանաց օգտուիլ Տաթեւացիի կազմակերպչական եւ մտաւորական կարողութիւններէն, վերակենդանացնելու համար այդ շրջանը, որ նշեալ բռնագաղթին հետեւանքով պարպուած էր իր բնակչութենէն: Տիրապետելով սպիտակ մոմեր պատրաստելու գաղտնիքին, Տաթեւացի յաջողեցաւ անձնական յարաբերութեան մէջ մտնել նոյնինքն Շահ Աբասի հետ, որ զինք նշանակեց Ս. Էջմիածնի լուսարարապետ: Տաթեւացի՝ օգտուելով իր այս պաշտօնէն, կրցաւ արմատապէս

բարեփոխել Էջմիածնի վանքի պայմանները: Իր այդ ջանքերուն շնորհիւ, ան 1629ին ընտրուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս: Ան կրցաւ համոզել նոր Շահը, որ թեթեւցնէ կաթողիկոսութեան տուրքերը, եւ ձեռք ձգուած եկամուտները գործածեց կառուցանելու եւ վերականգնելու համար հարիւրաւոր եկեղեցիներ: Գրիգոր Գ. Տաթեւացի Կաթողիկոս վախճանեցաւ 1633ին, 55 տարեկան հասակին, գահակալելով հազիւ 4 տարի եւ 4 ամիս:

Իր բազմաթիւ աշակերտները յետագային ակնառու դերեր խաղացին ԺԷ. դարու մշակութային զարթօնքին մէջ, որու ընթացքին գրուած է մեզի հասած հայերէն ձեռագիրներուն ամբողջ քառասնակին մէկ-երրորդը, եւ զգալի յառաջդիմութիւն ապրած է հայ տպագրութիւնը: Ասոնք ևս Տաթեւացիի ժառանգութեան մասը պէտք է սեպել, եզրակացուց դասախօսը:

Ե.
«Հայ Աւետարանական Էքիւմէնիզմի Արմատներն ու Սահմանները»
դասախօս՝ Վերապատուելի Փօլ Հայտոսթեան
18 Հոկտեմբեր 2001

Ամառնային արձակուրդէն ետք, 1700ամեակի դասախօսութիւններու շարքը վերսկսաւ Վեր. Փօլ Հայտոսթեանի ելոյթով: Վերջինս անդամ է Հայկազեան Համալսարանի հոգաբարձութեան, ինչպէս նաեւ հովուական աստուածաբանութեան եւ քրիստոնէական բարոյագիտութեան դասախօս՝ Պէյրութի Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական Ճեմարանին մէջ: Դասախօսութիւնը նուիրուած էր հայ աւետարանականական էքիւմէնիզմի արմատներուն ու սահմաններուն:

Հայ Աւետարանական Եկեղեցւոյ մասնակցութիւնը մերձաւոր-արեւելեան եւ համաշխարհային էքիւմէնիք շարժումներուն, եւ անոր գործունէութիւնը՝ 1915ի ցեղասպանութենէն ետք, Սուրիոյ եւ Լիբանանի մէջ ազգային կառոյցներ ստեղծելու կապակցութեամբ, շատ հաւանաբար ըլլան հիմնական շեշտադրումները ապագայի այն պատմաբաններուն, որոնք պիտի ուսումնասիրեն Ի. դարուն Միջին Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ պատմութիւնը, ըսաւ Վեր. Հայտոսթեան իր դասախօսութեան սկզբնաւորութեան: Ան յիշեցուց հանդիսականներուն, թէ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութիւնը հիմնադիր եւ գործօն անդամ է եօթ տարբեր էքիւմէնիք կամ շրջանային միջ-եկեղեցական մարմիններու:

Հայտոսթեան նշեց, թէ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ խանդավառութիւնը էքիւմէնիք ձեռնարկներու մասնակցելու ուղղութեամբ, կրնայ բացատրուիլ հինգ տարբեր ազդակներով:

ա) Հայ Աւետարանական Շարժման հիմնադիրներուն ԺԹ. դարու երկրորդ կիսուն դիմագրաւած հալածանքները՝ հայ առաքելականներու կողմէ, պատճառ հանդիսացան, որ անոնք եւ իրենց հետեւորդները թիկունք ու քաջալերանք փնտռեն ոչ-հայկական եկեղեցիներու մօտ:

բ) Հայ Աւետարանական Եկեղեցւոյ վարչական կեանքին ժողովական դրուածքը: Այս մէկը, կարեւորելով տեղական եկեղեցիներու եւ անոնց անդամներուն դերը, ներքին դաշնակցային կառոյցի մը մէջ կը միացնէ տարբեր հայ աւետարանական եկեղեցիները: Դասախօսը այսօրինակ կացութիւնը կոչեց «Հայ Աւետարանական Ներքին Էքիւմէնիզմ»:

գ) Հայ Աւետարանական Եկեղեցին միշտ ալ ճանչցած է Հայ Առաքելական Եկեղեցին իբր «Մայր Եկեղեցի», այդպիսով առնուազն խորհրդանշական եւ զգացական կապ մը պահելով առաքելականներուն հետ, նպաստելով «հայկական էքիւմէնիզմի» գոյատեւումին: Վերապատուելին վկայակոչեց աւետարանականներու եւ առաքելականներու կողմէ այս մայր-զաւկի յարաբերութիւնը կենսագործելու շարք մը անհատական նախաձեռնութիւններ:

դ) Երբ օսմանեան կառավարութիւնը 1850ին ճանչցաւ միասնական «բողոքական միլլէթ» մը, որ համայնքային մէկ կառոյցի մը մէջ կը պարփակէր հայ, յոյն, ասորի, արաբ եւ այլ աւետարանականները, ան շեշտը դրաւ կրօնական, եւ ո՛չ թէ ազգային նոյնութեան վրայ: Այս պատճառով, հայ աւետարանականները ստիպուած եղան համագործակցելու ոչ-հայ աւետարականներու հետ՝ շարք մը ձեռնարկումներու պարագային, որոնց կարգին՝ Այնճար ու Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական Ճեմարանը:

ե) Հայ աւետարանական կրօնական կենսափորձն ու կրթութիւնը կը շեշտեն կարգ մը աստուածաբանական պարագաներ, ինչպէս անձնական կրօնական փորձառութիւնը, մտքի վերանորոգումը, Աստուածաշունչի սերտողութիւնը, աղօթքի վրայ հիմնուած կեանքը եւլն.: Այս բոլորը ճամբայ կը բանան էքիւմէնիք մտածողութեան:

Այդուհանդերձ, հայ աւետարանական էքիւմէնիզմը ունի իր սահմաններն ալ, ըսաւ վերապատուելին: Առաջինը ազատութեան գաղափարն է, որ կարեւոր դեր մը խաղաց Առաքելական Եկեղեցիէն անջատումին մէջ, մօտաւորապէս 155 տարիներ առաջ: Այս գաղափարը դրոշմուած է հայ աւետարանական մտածողութեան մէջ եւ կրնայ արգելակել որեւէ էքիւմէնիք զարգացում, որ կրնայ սպառնալ այդ ազատութեան:

Երկրորդ սահմանը, ըստ դասախօսին, կ'առնչուի եկեղեցաբանական խնդիրներու, ուր բացի պաշտօնականացուած էքիւմէնիզմի շրջանակներէն, Հայ Աւետարանական եւ Առաքելական Եկեղեցիներուն միջեւ չկայ նոյնիսկ փոխադարձ պաշտօնական ճանաչում:

Վեր. Հայտոսթեան առարտեց իր խօսքը կարգ մը եզրակացութիւններով: Ի. դարու էքիւմէնիք շարժումը, ըսաւ ան, առ այսօր չէ նպաստած հայ երեք եկեղեցիներու պաշտօնական մերձեցման: Հայոց համար, համազգային միութեան հասնիլը միշտ առաջնահերթ եղած է քան եկեղեցական միութիւնը: Հետեւաբար, Հայ Աւետարանական Եկեղեցին պիտի շարունակէ իր անջատ ջանքերը, բայց միշտ ալ պատրաստ ըլլալու է նոր մօտեցումներ փնտռելու եւ խորացնելու երկխօսութիւնը՝ այլ, հայ եւ ոչ-հայ եկեղեցիներու հետ:

Զ.
«Հայ Առաքելական Եկեղեցին Հայաստանի Անկախութենէն Ասդին»
դասախօս՝ Հրաչ Չիլինկիրեան
13 Դեկտեմբեր 2001

Վեցերորդ դասախօսութեան համար, այս շարքի կազմակերպիչ յանձնախումբը (Վեր. Փօլ Հայտոսթեան, Արտա Էմմէրճի եւ Արա Սանճեան)

Լոնտոնէն հրաւիրած էր արդի եկեղեցական պատմութեան մասնագէտ Ֆէլիքս Քորլին: Երբ վերջինս՝ առողջական պատճառներով, հրաժարեցաւ սոյն հրաւէրէն, յանձնախումբը Քորլիին փոխարէն Պէյրութ հրաւիրեց Հրաչ Չիլինկիրեանը, կրկին Լոնտոնէն, որպէսզի դասախօսէ 1991էն՝ Հայաստանի անկախացումէն ի վեր, Հայ Եկեղեցւոյ դիմագրաւած մարտահրաւէրներուն մասին:

Չիլինկիրեան, որ ընկերաբանութեան գծով դոկտորական ատենախօսութիւն պիտի պաշտպանէ Լոնտոնի Համալսարանի Տնտեսագիտութեան եւ Քաղաքական Գիտութիւններու Դպրոցին մէջ, Հայ Առաքելական Եկեղեցւոյ սարկաւագ է: Ան Ս. Վլատիմիր Աստուածաբանական Համալսարանէն ստացած է Աստուածաբանութեան Մագիստրոսի տիտղոս, իսկ Նիւ Եորքի Ս. Ներսէս Հայկական Դպրեվանքէն՝ Հայ Եկեղեցական Ուսմանց վկայական: 1991էն 1994, ան վարիչն էր Ս. Ներսէս Դպրեվանքին: Չիլինկիրեան նաեւ համա-հիմնադիր եւ խմբագիր էր *Window View of the Armenian Church* եռամսեայ հանդէսին (1990-95), եւ աւելի ուշ՝ *Armenian International Magazine*ի պատասխանատու խմբագիր (1998-Փետրուար 2001): Ան հեղինակ է հայկական ժամանակակից հարցերու նուիրուած եւ ուղղակիօրէն Հայաստանեայց Եկեղեցւոյ առնչուող բազմաթիւ յօդուածներու:

Չիլինկիրեան սկսաւ իր դասախօսութիւնը ներկայացնելով Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին իբր հայկական ամենամեծ ազգային հաստատութիւնը՝ հայկական պետութենէն եաք, ինչպէս նաեւ ամէնէն կազմակերպուածն ու երկարակեացը՝ ամբողջ աշխարհի մէջ: Այդուհանդերձ, եւ ի հեճուկս 1991էն ասդին Հայաստանի եւ հայութեան դիմագրաւած վիթխարի փոփոխութիւններուն, Եկեղեցին, ըստ Չիլինկիրեանի, կը շարունակէ յարաբերաբար անփոփոխ մնալ: 1950ականներու աւարտին սկիզբ առած պառակտումը, երբ «Կիլիկեան Աթոռը, սփիւռքի մէջ քաղաքական կուսակցութեան մը ազդեցութեամբ, դուրս գալով իր պատմական սահմաններէն, թեմեր հաստատեց Միացեալ Նահանգներու, Իրանի եւ Յունաստանի մէջ», տակաւին կը մնայ անլոյծ: Հայաստանեայց Եկեղեցին եւ անոր ղեկավարութիւնը դեռ չեն անդրադառնար, թէ աշխարհականացումն ու համաշխարհայնացումը որքան կ'ազդեն իրենց տեղին ու դերին վրայ: Փոխարէնը, «Եկեղեցւոյ ղեկավարութիւնը,- ըսաւ Չիլինկիրեան,- իր հանգիստը գտած ըլլալ կը թուի իր անցեալի պատմական փառքն ու իրագործումները վերյիշեցնելու մէջ»: Ան վկայակոչեց վերջին, 1700ամեակի հանդիսութիւնները, իբր վառ ապացոյց իր համոզմունքին: Աւելին, հակառակ համաշխարհային մակարդակի վրայ առաջնորդի ու ղեկավարի ըմբռնումներու ու հասկացութիւններու փոփոխուող չափանիշերուն, Հայ Եկեղեցին դեռեւս կ'առաջնորդուի անհատական նախասիրութիւններու վրայ հիմնուած ղեկավարութեան սկզբունքներով: Վերջերս առաջարկուած եկեղեցական նոր սահմանադրութիւնը, այս առնչութեամբ յատելեալ հակադրութիւններու տեղիք կու տայ, մանաւանդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հեղինակութեան ու իրաւասութիւններու հարցին շուրջ:

Դասախօսութեան երկրորդ բաժինը նուիրուած էր Եկեղեցիին եւ անոր հաւատացեալներուն փոխ-յարաբերութեան խնդրին: Չիլինկիրեան այս հարցը ներկայացուց իբր «ժամանակակից Հայ Եկեղեցւոյ եւ հոգեւոր կեանքի ամենաքիչ ուսումնասիրուած մարզը»: Հակառակ Եկեղեցւոյ ու

եկեղեցականներու տուած բացատրութիւններուն, ընդհանրապէս կրօնի, ու մասնաւորապէս Հայ Եկեղեցւոյ դերին ու պաշտօնին մասին տրուած մեկնաբանութիւնները միանշանակ չեն բոլոր հայերուն մօտ: Ան հայ «հաւատացեալներ»ը բաժնեց գլխաւոր չորս խումբերու՝ *քէիսք*եր, *տէիսք*եր, *ազնուտիկ*ներ եւ *աբէիսք*եր:

Հայ Առաքելական Եկեղեցին կը մնայ գլխաւոր խորհրդանիշը «հայկական կրօնին», որ կը փոխանցուի ընտանիքներուն եւ եկեղեցական կառոյցներուն կողմէ: Սակայն, շարունակեց Չիլինկիրեան, ներկայիս Հայ Առաքելական Եկեղեցին գալիքին նկատմամբ ունի աղօտ պատկերացում մը, իսկ անհատ հայերու կեանքին մէջ՝ մակերեսային դերակատարում մը միայն:

Դասախօսութեան յաջորդող հարց-պատասխանի բաժնին մէջ, Չիլինկիրեան անդրադարձաւ հանդիսականները հետաքրքրող կարգ մը նիւթերու: Ան առարկեց այն համոզումին դէմ, թէ եկեղեցի չյաճախելու հիմնական պատճառն է ծիսական լեզուն՝ գրաբարը: Ան ըսաւ, թէ աշխարհականացումը գլխաւոր ազդակ մըն է այս ուղղութեամբ, եւ թէ հոգեւոր սնուցումը նախեւառաջ անձնական ճիգի արդիւնք է: Ան յոյս յայտնեց, որ հայ ծնողներ կը քաջալերեն իրենց զաւակները, որպէսզի նուիրուին եկեղեցական ասպարէզի, որովհետեւ կարող դեկավարութիւն մը ունենալը, եկեղեցական իրավիճակի բարելաւման նախապայմաններէն է: Բարեփոխութիւններու հարցով, ան ըսաւ, թէ ընդհանուր անյստակութիւն մը կայ միտքերու մէջ, թէ եկեղեցական կեանքի ո՛ր երեսներուն մասին պէտք է ըլլան քննարկուելիք առաջարկները:

Չիլինկիրեան համաձայն չգտնուեցաւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ ու Հայաստանի պետութեան միջեւ համապարփակ համաձայնագիրի մը կնքումին, ըսելով, թէ այդպիսի արարք մը, կրնայ Հայ Եկեղեցին ինքնագոհ կացութեան մը մատնել: Սակայն, ան համամտութիւն յայտնեց այն մտքին, թէ իրաւական հասկացութիւն մը անհրաժեշտ է Եկեղեցւոյ ու պետութեան միջեւ, խորհրդային տարիներուն Եկեղեցիէն բռնագրաւուած հողերու վերադարձին եւ այլ խնդիրներու վերաբերեալ: Դասախօսը դրական համարեց կրօնական տարբեր համայնքներու միջեւ մրցակցութեան գոյութիւնը Հայաստանի մէջ, որու պատճառով բոլոր կողմերն ալ զգաստ կը մնան: Ան ըսաւ, թէ մարդիկ կը չափազանցեն Հայաստանի մէջ աղանդաւորներու իսկական քիւը:

Երեկոն, որ նաեւ եզրափակումն էր 1700ամեակի դասախօսութիւններու շարքին, աւարտեցաւ Նամալսարանի նախագահ Վեր. Ժան Խանճեանի շնորհակալական խօսքով ու աղօթքով:

ԱՅԼ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՅԼԱԶԱՆ ՆԻՒԹԵՐՈՒ ՇՈՒՐՋ

Բացի 1700ամեակին նուիրուած վերոյիշեալ դասախօսական շարքէն, Հայագիտական Ամբիոնը կազմակերպեց նաեւ շարք մը անկախ դասախօսական երեկոներ՝ սովորաբար հիւրաբար Պէյրութ գտնուող հայրենի եւ սփիւռքահայ հայագէտներու կողմէ:

«Արժանթինահայ Համայնքն Ու Սփիւռքեան Նոր Մարտահրաւէրները»
դասախօս՝ Խաչիկ Տէր-Ղուկասեան
7 Դեկտեմբեր 2000

7 Դեկտեմբեր 2000ին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Պուէնոս Այրէսի *Արմենիա* պաշտօնաթերթի նախկին խմբագիր եւ միջազգային յարաբերութիւններու դասախօս Խաչիկ Տէր-Ղուկասեան խօսեցաւ արժանթինահայ համայնքի պատմութեան ու ներկայի մարտահրաւէրներուն մասին:

Նկատի առնելով, որ դասախօսութիւնը կը զուգադիպէր 1988ի Հայաստանի աղիտալի երկրաշարժի 12րդ տարելիցին, հանդիսականները մէկ րոպէ յոտնկայս լռութեամբ յիշեցին արհաւիրքի զոհերն ու անոր հետեւանքով առ այսօր անապաստան գտնուողները:

Երեկոյի հանդիսավար Արա Սանճեան յիշեցուց, թէ լիբանանահայ Խաչիկ Տէր-Ղուկասեան շրջանաւարտ եղած է Հայկազեան Գոլէճէն՝ 1985ին, ապա՝ հաստատուած է Պուէնոս Այրէս, ուր կը գործէ լրագրութեան եւ կրթութեան ասպարէզներուն մէջ: Սանճեան նշեց, թէ Հայկազեան Համալսարանը հպարտութեամբ կ'ողջունէ իր մէկ շրջանաւարտը, որ 13 տարի ազգային ծառայութեան մէջ գտնուելով, այժմ հրապարակաւ կ'ուզէ բաժնեկցիլ իր տպաւորութիւններն ու փորձառութիւնները սփիւռքի մէկ կարեւորագոյն գաղութէն՝ արժանթինահայութենէն, որուն մասին լիբանանահայերը դժբախտաբար քիչ բան գիտեն: Տէր-Ղուկասեանի ուսումնասիրութիւններուն ծիրը ընդարձակ է, ըսաւ Սանճեան: Սակայն, այսօր իրմէ խնդրուած է խօսիլ Արժանթինի մասին, որովհետեւ Հայագիտական Ամբիոնը այսպիսով կը ջանայ փորձացնել վերեւ յիշուած անջրպետը երկու գաղութներուն միջեւ: Սանճեան յիշեցուց նաեւ, թէ Արժանթինի եւ Հարաւային Ամերիկայի հայագաղութներուն մասին, զգալի թիւով յօդուածներ լոյս տեսած են *Հայկազեան Հայագիտական Հանդէսի* վերջին քանի մը հատորներուն մէջ:

Տէր-Ղուկասեան, իր խօսքի սկզբնաւորութեան համառօտակի ներկայացուց Նոր Աշխարհ գացած հայոց մասին եղած առաջին տեղեկութիւնները, արժանթինահայ համայնքի ծագումն ու ազգագրական պատկերը, յիշեցնելով, որ գաղութը հիմնականին մէջ արդիւնք է հայոց ցեղասպանութեան: Ապա ան կեդրոնացաւ Արժանթինի հայկական եկեղեցիներուն, զանազան քաղաքական, հայրենակցական, մարզական, մշակութային կազմակերպութիւններուն ու անոնց գործունէութիւններուն, արժանթինահայ զանգուածային լրատուամիջոցներուն վրայ, ու խօսեցաւ Պրազիլի եւ Ուրուկուայի գաղութներուն հետ ունեցած միջ-գաղութային կապերուն մասին:

Իր խօսքին երկրորդ բաժնով, դասախօսը անդրադարձաւ արժանթինահայ գաղութի դիմագրաւած նոր մարտահրաւէրներուն: Հիմնական վերատեսութիւններու կարիքը կը զգացուի հիմա, յատկապէս վերջին երկու տասնամեակներուն ծաւալած հսկայական փոփոխութիւններու լոյսին տակ, ըսաւ դասախօսը: Անոնցմէ առաջինը՝ համաշխարհային գետնի վրայ, ցուրտ պատերազմի աւարտն ու համաշխարհայնացման գործընթացի նոր թափն է: Ապա՝ արժանթինեան մակարդակի վրայ, 1983էն ի վեր տեղի ունեցող դեմոկրատականացման գործընթացը, իսկ երրորդ՝ 1988էն ասդին հայաստանեան իրադարձութիւնները: Նախապէս համայնքը «կեդրոյական»

վիճակ մը ունեցած է: Հայեր չեն առնչուած տեղական քաղաքական կեանքին. նոյնիսկ, խուսափած են անկէ: Իսկ հիմա, հնարաւորութիւնը կայ տեղական քաղաքականութեան մարզին մէջ նոր առիթներ գտնելու եւ անոնցմէ օգտուելու: Արժանթինի խոհրդարանին կողմէ հայոց ցեղասպանութեան ճանաչումը, եւ 1987ին ալ նախկին նախագահ Ռաուլ Ալֆոնսինի նմանատիպ քայլը, ազգային կեանքի գործունեայ տարրերը մղեցին միախառնուելու արժանթինեան ընկերութեան հետ, միաժամանակ պահպանելով իրենց ազգային ինքնուրոյն դիմագիծը: Տէր-Ղուկասեան Արժանթինի կացութիւնը նմանցուց արեւելեան Միացեալ Նահանգներու եւ արեւմտեան Եւրոպայի հայագաղութներուն: Ըստ դասախօսին, արժանթինահայութեան աշխուժութիւնը աննկատ չէ մնացած նոյնիսկ Անգարայի աչքէն, երբ ան 1995ին բացայայտ միջամտութեամբ փորձած է վիժեցնել Ապրիլ 24ը պաշտօնական յիշատակի օր յայտարարելու օրէնքի մը հռչակման ջանքերը:

Վերջապէս, անդրադառնալով գաղութին եւ Հայաստանի միջեւ կապերուն, Տէր-Ղուկասեան քննադատաբար արտայայտուեցաւ Հայաստանի նախկին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի վարած քաղաքականութեան մասին, ըսելով, որ ատիկա վնասակար անդրադարձ ունեցած է գաղութի անդորրին վրայ: Վիճակը սակայն բարելաւուած է Տէր-Պետրոսեանի հրաժարականէն, եւ Արժանթինի մէջ հայկական դիւանագիտական ներկայացուցչութեան հաստատումէն ետք:

Տէր-Ղուկասեանի դասախօսութեան հանդէպ հետաքրքրութիւնը ակնյայտ դարձաւ մանաւանդ հարց-պատասխանի ժամանակ, որ ինքնին տեւեց դասախօսութեան չափ: Հարցումներ ուղղուեցան արժանթինահայութեան իսկական թիւին, «Հայկական Հարց»ի վերաբերեալ դասախօսի ըմբռնումին, եւ նոյնիսկ պրազիլահայ համայնքին մասին: Տէր-Ղուկասեան սպառիչ պատասխաններ տուաւ բոլոր հարցերուն, այդպիսով աւելի ամբողջացնելով Հարաւային Ամերիկայի հայութեան մասին Լիբանանի իրենց հայրենակիցներուն ունեցած գիտելիքները:

«Քրիստոնէութիւնը Եւ Հայոց Ազգային
Գաղափարախօսութեան Ձեւաւորումը»
դասախօս՝ Համբարձում Քենտերեան
19 Ապրիլ 2001

Բանասէր եւ հայ միջնադարեան գրականութեան մասնագէտ Համբարձում Քենտերեան, դասախօսեց հայոց ազգային գաղափարախօսութեան ձեւաւորման մէջ քրիստոնէութեան ունեցած դերին շուրջ:

Քենտերեան ծնած է Դամասկոս: Մանկութիւնը անցած է Պէյրութի մէջ, ուր յաճախած է Համազգայինի Ճեմարանը: Ապա, ընտանիքին հետ ներգաղթած է Հայաստան: Գրաքննադատ Եուրի Խաչատրեան, որ ներկայացուց Քենտերեանը, ըսաւ, թէ 6 տարուան Սիպերիա աքսորէն վերադառնալով, Քենտերեան 1957ին աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրական Ֆակուլտետը: Աշխատած է Հայաստանի Գրողներու Միութեան պաշտօնաթերթ *Գրական Թերթ*ին մէջ, ապա՝ 17 տարի՝ Մաշտոց Մեսրոպեանի Անուան Գրականութեան Ինստիտուտին մէջ: Քենտերեան հե-

դինակ է Զ.-Է. դարերու նշանաւոր փիլիսոփայ եւ եկեղեցական գործիչ Յովհան Մայրագոմեցիի մասին մենագրութեան մը: Ան ունի բազմաթիւ թարգմանութիւններ ամերիկեան ու ֆրանսական արձակէն: Ներկայիս կը ղեկավարէ իր երկու նշանաւոր ուսուցիչներուն՝ Լեւոն Շանթի եւ Նիկոլ Աղբալեանի գրական ժառանգութեան հրատարակութիւնը պատրաստող գիտական խումբը: 55 տարուան մէջ, սա իր առաջին այցելութիւնն էր Պէյրութ:

Քենտերեան ըսաւ, թէ քրիստոնէութիւնը թէեւ աստիճանաբար թափանցած է Հայաստան, բայց հաստատուն տեղ մը գրաւած է այնտեղ նոյնիսկ 301ի պաշտօնականացումէն առաջ: Այդ ժամանակ, հայերը ծուլման լուրջ սպառնալիքի տակ էին, որովհետեւ Պարսկաստանը, իր իշխանութեան տարածքին վրայ կրօնական միատարրութիւն առաջացնելու նպատակով, զրադաշտականութիւնը կը պարտադրէր իր ազդեցութեան ոլորտին մէջ ապրող այլակրօն ժողովուրդներուն: Քրիստոնէութեան որդեգրումը, ըստ Քենտերեանի, լաւ մտածուած քայլ մըն էր հայոց Տրդատ Գ. թագաւորին կողմէ, որ երրորդ կրօնի մը որդեգրումով, Հայաստանը կը հեռացնէր զրադաշտական Պարսկաստանի եւ հեթանոս Հռոմի ներազդեցութենէն, եւ միաժամանակ կը պահպանէր հայոց ազգային ինքնութիւնը: Վկայակոչելով հայ հնագէտներու ուսումնասիրութիւնները, ան ըսաւ, թէ քրիստոնէութեան պարտադրման նպատակով հեթանոսական մշակոյթի բնաջնջման փաստեր չկան Հայաստանի մէջ, որմէ եզրակացնելով, Քենտերեան հետեւցուց, թէ կրօնական փոխանցումը եղած է յարաբերաբար խաղաղ պայմաններու տակ, եւ նախորդ կրօնական իշխանաւորներու հաւանութեամբ: Աւելի՛ն, կարգ մը մէջբերումներ ընելով վաղ միջնադարեան *Յաճախապատում* ճառերու ժողովածուէն եւ Յովհան Մայրագոմեցիէն, ան հաստատեց, թէ ազգային ինքնուրոյն դիմագիծի պահպանման նոյն ձգտումը, մղած է կարգ մը եկեղեցական ղեկավարներ, որ ներքին տարակարծութիւնները խաղաղութեամբ լուծելու եւ իշխանաւորներու հանդէպ հնազանդ մնալու կոչեր ընեն:

Քենտերեան իր այս կարծիքը հիմնաւորեց օրինակները բերելով հայ եկեղեցական եւ քաղաքական պատմութենէն: Քրիստոնէութիւնը, ըսաւ ան, իսկապէս զօրաւոր զէնք մը եղաւ հայոց ձեռքը, զրադաշտականութեան եւ իսլամութեան դէմ դարաւոր պայքարին ընթացքին: Սա լաւագոյնս կը դրսեւորուի Վարդանանց Ճակամարտով, Փաւստոս Բուզանդի ու Եղիշէի երկերով, Ս. Շուշանիկի ու Վահան Գողթնացիի վկայաբանութիւններով, եւլն:

Քանի մը տարի ետք, Հռոմէական Կայսրութեան կողմէ Քրիստոնէութեան ընդունմով, հայեր եւ կայսրութեան արեւելեան սահմաններուն մէջ ապրող այլ ժողովուրդներ, ստիպուեցան իրենց ազգային ինքնուրոյնութեան սպառնացող հռոմէա-բիւզանդական ճնշումներուն դէմ պայքարելու այլ ուղղութիւններ որոնել: Հայ գիրերու գիւտը նման քայլ մըն էր, ուղղուած ո՛չ միայն Պարսկաստանի, այլ նաեւ Հռոմի ալ դէմ: Քենտերեան յիշեցուց, որ հայեր այս ուղղութեամբ դիմած էին ասորիներու եւ ո՛չ յոյներու օժանդակութեան, եւ թէ վերջիններս, սկիզբը նոյնիսկ դէմ կեցած էին իրենց իշխանութեան սահմաններուն մէջ նոր գիրերուն տարածումին: Մի քանի տասնամեակ անց, Հայաստանեայց Եկեղեցին մերժեց Քաղկեդոնի ժողովին որդեգրած որոշումները, հաւատարիմ մնալով նախորդ՝ Նիկիոյ եւ Եփեսոսի տիեզերական ժողովներու բանաձեւերուն: Հայաստանի ընդդիմութիւնը Քաղկեդոնական Հաւատամքին նախապէս շատ զգոյշ էր: Սակայն, եօթնե-

բողդ դարուն, Վրաց Եկեղեցւոյ անջատումէն ետք, արաբական տիրապետութեան ժամանակ, Հայաստանեայց Եկեղեցին կարուկ քայլերու դիմեց Աղուանից Եկեղեցին իր գերադասութեան ներքոյ պահելու համար: Հայաստանեայց Եկեղեցին, նոյնիսկ սկզբնական շրջանին մերժեց Բիւզանդիոնի Հերակլ Ա. կայսեր առաջարկած միակամութեան ուսմունքը, վախնալով, որ այդ զիջումին երթալով, կրնայ վտանգուիլ հայոց ինքնուրոյն ազգային դիմագիծը:

Քենտերեան նշեց, թէ իրենց գերիշխանութիւնը պարտադրելու բիւզանդացիներու փորձերուն դէմ հայոց պայքարը, Հայաստանեայց Եկեղեցին մղած է, որ ինզինքին վերագրէ առաքելական ծագում, հաստատէ կայուն եւ անջատ եկեղեցական նուիրապետութիւն մը, եւ մշակէ իր սեփական կրօնական դաւանանքը:

Հայ ժողովուրդը եւս ընդունած էր, որ հայ ազգ ու հայ քրիստոնեայ եկեղեցի, միեւնոյն բաներն են: Դասախօսին համար, Յովհան Մայրագոմեցիի եւ Յովհաննէս Օձնեցի կաթողիկոսի մասին ժողովրդական զրոյցները, լաւագոյն օրինակներն են այս վերաբերմունքին:

Հայկազեան Համալսարանէն ներս, Քենտերեանի դասախօսութիւնը կազմակերպուած էր Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի համագործակցութեամբ:

«Մաշտոցեան Մատենադարանն Ու Հայ Ձեռագրագիտութեան Ներկայ Խնդիրները»
դասախօս՝ Գէորգ Տէր-Վարդանեան
7 Մայիս 2001

Գէորգ Տէր-Վարդանեան, որ հրաւիրուած էր 1700ամեակի դասախօսութիւններու շարքին առիթով, տուաւ յաւելեալ դասախօսութիւն մը, նիւթ ունենալով Երեւանի Մաշտոցեան Մատենադարանը եւ ընդհանրապէս հայ ձեռագրագիտութեան ներկան:

Ան ըսաւ, թէ այսօր աշխարհի տարածքին կան մեզի ծանօթ մօտաւորապէս 30,000 հայերէն ձեռագիրներ: Ասոնցմէ 11,000ը կը գտնուի Մատենադարանին մէջ, ուր կան նաեւ 2,000 պատառիկներ, 450 հմայիլներ, եւ 320 այլ ձեռագիրներ՝ աւելի նոր ժամանակներէ: Տէր-Վարդանեան յիշեցուց, որ հայոց պատմութեան խռովալի տարիներուն, մեծ թիւով ձեռագիրներ փճացած են: Վերջիններէն են այն 10,000 ցուցակագրուած ձեռագիրները, որոնք կը գտնուէին Արեւմտեան Հայաստանի մէջ, եւ մեծաւ մասամբ կորսուեցան ցեղասպանութեան ընթացքին:

Մատենադարանը, ըսաւ Տէր-Վարդանեան, շարունակութիւնն է Էջմիածնի Կաթողիկոսութեան նախկին գրադարանին, որ պետականացուեցաւ 1921ին: Ան հարստացաւ խորհրդային տարիներուն, շնորհիւ պետական օժանդակութեան, եւ հնարաւորին չափ բոլոր ձեռագիրները հաւաքելու եւ մէկ երդիքի տակ համախմբելու վերջինիս քաջալերած քաղաքականութեան: 1950ականներէն ի վեր, Մատենադարանին ձեռագիրներ կը նուիրուին նաեւ սփիւռքէն:

Այսօր Մատենադարանին մէջ կը գտնուին նաեւ 6000 օտարալեզու ձեռագիրներ, ինչպէս՝ արաբերէն եւ եթովպերէն, Էջմիածնի կաթողիկոսու-

թեան նախկին դիւանէն 300,000 կարեւոր փաստաթուղթեր, ինչպէս նաեւ ԺԹ.-Ի. դարերու նշանաւոր հայագէտներու՝ Գարեգին Ա. Յովսեփեանց Կաթողիկոսի, Երուանդ Տէր Միքայէլեանի, Յակոբ Մանանդեանի, Աշոտ Յովհաննիսեանի, Արշակ Ալպոյաճեանի, Լէոյի եւ այլոց անձնական արխիւները:

Մատենադարանը ունի նաեւ հայ պարբերական մամուլի ճոխ հաւաքածոյ մը, ինչպէս նաեւ հայագիտական ուսմանց հանդէսներու ամբողջական շարքեր: Այսօր Մատենադարանին մէջ կ'աշխատին աւելի քան 50 գիտնականներ, եւ 70 այլ պաշտօնեաներ: Վերջին տարիներուն, յատկապէս սփիւռքի նիւթական աջակցութեամբ, իրագործուած են կարգ մը արժէքաւոր աշխատութիւններ:

Տէր-Վարդանեան, իր խօսքին մէջ թուարկեց շարք մը անհրաժեշտ գիտական ձեռնարկումներ, որոնք կրնան բարելաւել հայ ձեռագրագիտութեան վիճակը, եւ դիւրացնել հայ ձեռագիրները ուսումնասիրողներու աշխատանքը: Պէտք է կազմուի, ըսաւ ան, իբր գիրք տպուած, կամ մամուլին մէջ ցրուած հայկական աւելի քան 500 ձեռագրացուցակներուն նոր մատենագիտութիւնը, նախընտրաբար՝ համակարգչային արդի միջոցներն օգտագործելով: Աւելին, ցուցակագրումի ներկայ դրութիւնը, որ ստեղծուած է ԺԹ. դարուն՝ Հ. Յակովբոս Տաշեանի կողմէ, պէտք է հարստացուի նոր տուեալներով. օրինակ, պէտք է յետ այսորիկ տրուին նաեւ օգտագործուած թուղթի տեսակին մասին կարգ մը տեղեկութիւններ, որոնք կրնան յստակ պատկերացում տալ յիշատակարան չունեցող ձեռագիրներուն գրութեան թուականին մասին:

Դասախօսութեան աւարտին, հարց-պատասխանի բաժինը ստացաւ բաւականին ընդարձակ ծաւալ: Հարցումներ եղան Մատենադարանի պիւտճէի գոյացումին եւ կազմակերպչական կառոյցին մասին: Մեծ էր հետաքրքրութիւնը ձեռագիրները լաւագոյն պայմաններու մէջ պահպանելու ուղղութեամբ կատարուած քայլերուն հանդէպ, եւ թէ ինչպէս կարելի է արդիական եւ անընդհատ զարգացող համակարգչային եւ համացանցի դրութիւններէն օգտուիլ յետագայ ուսումնասիրութիւններու համար: Տէր-Վարդանեան ըսաւ, թէ Մատենադարանը կը շարունակէ պահել իր կապերը Հայաստանէն դուրս գտնուող հայագիտական կեդրոններու հետ: Օտար ուսումնասիրողներ կու գան Հայաստան, ուսումնասիրելու համար Մատենադարանին հայերէն եւ օտարալեզու ձեռագիրները, որոնք հետզհետէ կը համալրուին նորերով: Կը շարունակուի նաեւ նոր ուսումնասիրութիւններու հրատարակութիւնը: Մատենադարանը կը մասնակցի նաեւ հայոց պատմութեան եւ մշակոյթին նուիրուած գուգահանդէսներու, ինչպէս վերջերս տեղի ունեցաւ Փարիզի եւ Լոնտոնի մէջ: Դասախօսը յոյս յայտնեց, թէ վերջերս ստեղծուած «Մատենադարանի Բարեկամներ» ընկերութիւնը, դրական դեր մը կրնայ ունենալ այս ուղղութեամբ: Պետական պաշտօններու ցած աշխատավարձերը ուսումնասիրութեանց եւ կրթութեան բնագաւառները աներեսպոյր մարզերու վերածած են, ափսոսաց Տէր-Վարդանեան, բայց՝ եզրափակելով իր խօսքը, ըսաւ, թէ բարելաւման յոյսը միշտ առկայ է:

«Հայերու Բռնագաղթը Թուրքիայէն եւ Ճեզիրէ Հաստատումը (1928-1930)»
դասախօս՝ Վահէ Թաշճեան
7 Յունիս 2001

Պատմութեան գծով Ֆրանսայի մէջ դոկտորական աստիճանի թեկնածու, բնիկ լիբանանահայ Վահէ Թաշճեան, Պէյրութ կատարած այցելութեան մը ընթացքին, դասախօսեց 1928-30ին Թուրքիայէն հայոց բռնագաղթին, եւ անոնց հիւսիս-արեւելեան Սուրիոյ Ճեզիրէի շրջանը հաստատուելուն մասին:

Թաշճեան 1993ին կ'աւարտէ Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան Ֆակուլտետը: Աւելի ուշ, արեւելագիտութեան մէջ մասնագիտանալով, մագիստրոսական երկրորդ տիտղոսով մը կը վկայուի Պելճիքայի Լուվէն-լա-Նէօվի Կաթողիկէ Համալսարանէն: Իր դասախօսութեան նիւթը մաս մըն է 1919-39ին թուրք-սուրիական սահմանագիծին երկայնքին քաղաքական իրադրութեան մասին Փարիզի Ընկերային Գիտութիւններու Բարձրագոյն Ուսմանց Դպրոցին մէջ իր պատրաստած դոկտորական աւարտաճառէն:

Թաշճեան իր դասախօսութիւնը սկսաւ մատնանշելով թէ Լոզանի Պայմանագիրը (1923) անկիւնադարձային նշանակութիւն ունեցաւ նորաստեղծ Թրքական Հանրապետութեան մէջ ապրող փոքրամասնութիւններուն համար: Այդ պայմանագիրը թոյլ տուաւ Թուրքիոյ, որ շարունակէ փոքրամասնութիւններու թրքացման իր քաղաքականութիւնը: Մօտաւորապէս 100,000 հայեր 1921-22ին արդէն լքած էին Կիլիկիան, իսկ Թուրքիոյ մէջ ապրող բոլոր յոյները կը փոխանակուէին Յունաստան ապրող թուրքերով:

Լոզանի Պայմանագրին վաւերացումէն ետք, Թուրքիոյ պետական շրջանակները, կազմակերպեցին երկրին հարաւ-արեւելքը ապրող քրիստոնեայ փոքրամասնութիւններու մնացորդացին գաղթը դէպի դրացի Իրաք եւ Սուրիա: Թուրքիոյ Ներքին Գործոց Նախարար Ֆէրիտ Պէյ, 1924ին, Ատանա հրատարակուող թուրք ազգայնական թերթի մը յայտնած է, թէ Սամսոն-Սեւեֆքէ գիծէն դէպի արեւելք, արգիլեալ գօտի մը հաստատուած է հայերուն համար: Նոյն ժամանակ, Ուրֆա, Տիարպէքիր, Պիրէճիկ եւ Արաբկիր, ինչպէս նաեւ սահմանէն շատ հեռու՝ Խարբերդ եւ Մալաթիա ապրող քրիստոնեայ ասորիներու, հայերու եւ քաղդէականներու կը պարտադրուի գաղթել Թուրքիայէն:

Քրիստոնեայ փոքրամասնութիւններու բռնագաղթը 1928-30ին հասաւ մեծ չափերու, երբ 7-10 հազար հայեր՝ Տիարպէքիրէն, Խարբերդէն եւ Պիթլիսէն հասան Ճեզիրէ եւ Հալէպ: Այս քրտախօս գիւղացի հայերը, քիւրտ աղաներու եւ շէյխերու ճորտերը ըլլալով, ազատած էին 1915ի Մեծ Եղեռնէն շնորհիւ վերջիններուս ընդդիմութեան: 1925ի Շէյխ Սայիտի քրտական ապստամբութեան ճնշումէն ետք, թրքական իշխանութիւնները փորձեցին հնազանդեցնել այս շրջանի քիւրտ երեւելիները: Անոնց ազդեցութեան տկարացումը հայերն ու քաղդէականները թողուց անպաշտպան՝ թրքական բռնութիւններուն դիմաց:

Հայ գիւղացիները ոստիկաններու կողմէ նախ քշուեցան Սղերդ, Տիարպէքիր եւ Մարտին, ուր կառավարութեան միջամտութիւններուն պատճառով չկարողացան նոյնիսկ աշխատանք գտնել: Անոնք վերջապէս համա-

ձայնեցաւ «կամաւորապէս» մեկնիլ Սուրիա, սուղ սակերով անցագիրներ գնելով, եւ ծանր տուրքեր վճարելով: Հայերուն մեծ մասը Սուրիա հասաւ անտէր ու թշուառ վիճակի մը մէջ: Անոնց անցագիրներուն պաշտօնական կնիքները բացարձակապէս կ'արգիլէին Թուրքիա վերադարձը:

Ֆրանսան, որուն հոգատարութեան (mandate) տակ կը գտնուէին Սուրիան ու Լիբանանը, անշուշտ մօտէն հետեւեցաւ Թուրքիայէն եկող գաղթականներու այս ներհոսքին: Այս հարցին մէջ Ֆրանսայի մեղսակցութիւնը մատնանշող փաստաթուղթեր չկան, ըսաւ Թաշճեան, բայց ֆրանսացիները գոհ չէին գաղթականներու այս հոսքով, որ կրնար քաղաքական բարդութիւններու պատճառ հանդիսանալ, որովհետեւ շատ մը արաբ սուրիացի ազգայնականներ հաշտ աչքով չէին դիտեր քրիստոնեաներու եւ ոչ-արաբներու ժամանումը Սուրիա: Ֆրանսա նոյնիսկ փորձեց հակադարձել, սպառնալով Ալէքսանտրէթի Սանճաքի թուրքերը բռնի Թուրքիա դրկել: Հակառակ իրենց դժգոհութեան, ֆրանսացիք ստիպուած էին նոր ժամանած հայերուն համար ստեղծել յարմարութիւններ, եւ հոգալ անոնց ընկերային եւ տնտեսական կարիքները:

Ֆրանսացիները քաջալերեցին գաղթական գիտցի հայերը հաստատուելու թերզարգացած Ճեզիրէի շրջանին մէջ, որ, ըստ իրենց, ունէր երկրագործական հսկայ ներուժ, եւ մանաւանդ հեռու էր գլխաւոր քաղաքներէն, ուր կը գործէին ազգայնական ոյժերը: Աւելին, ոչ-արաբներու բնակութիւնը Ճեզիրէի մէջ, ըսաւ Թաշճեան, կը ծառայէր նաեւ Սուրիան անդամահատելու ֆրանսացիներու ընդհանուր ծրագրին, որովհետեւ, այդպիսով, այդ շրջանը պիտի անջատուէր Դամասկոսէն եւ Հալէպէն:

Թաշճեանի դասախօսութիւնը հիմնուած էր Ֆրանսայի Արտաքին Գործոց Նախարարութեան, բանակին, ծովուժին եւ Բրիտանիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան արխիւներուն վրայ: Առաւել, այս կապակցութեամբ ան բազմաթիւ հարցազրոյցներ վարած է ներկայիս Ճեզիրէ բնակող հայերու եւ քիւրտերու հետ:

«Հայկական Հարցի Եւ Ցեղասպանութեան
Ուսումնասիրութեանց Հեռանկարները
(ԺԹ. դարու վերջ – Ի. դարու սկիզբ)»
դասախօս՝ Ռեմոն Յ. Գէորգեան
19 Յուլիս 2001

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Փարիզի Նուպարեան Մատենադարանի տնօրէն Ռեմոն Յ. Գէորգեանի սոյն դասախօսութիւնը նուիրուած էր ԺԹ. դարու աւարտի եւ Ի. դարու սկզբնաւորութեան Հայկական Հարցի եւ 1915-16ի ցեղասպանութեան ուսումնասիրութեանց հեռանկարներուն:

Գէորգեան նաեւ Փարիզ-Սորպոն III Համալսարանին մէջ գիտական հետազօտութեանց ղեկավար է, Հայ Ժամանակակից Պատմութեան Կեդրոնի (CHAC) տնօրէնը, եւ *Revue d'histoire arménienne contemporaine* պարբերականի գլխաւոր խմբագիրը: Ան հեղինակած ու խմբագրած է հայոց պատմութեան եւ մշակոյթին նուիրուած շարք մը ֆրանսերէն հատորներ, ինչպէս *Օսմանեան Կայսրութեան Հայերը Ցեղասպանութեան Նախօրեա-*

կին (1992) եւ *Օսմանահայ Տարագրեալներու Քնաջնջումը Սուրիոյ Եւ Միջագետքի Կեդրոնացման Կայաններուն Մէջ* (1998):

Դասախօսելով ֆրանսերէն, Գէորգեան իր խօսքին սկիզբը ըսաւ, թէ վերջին երկու տասնամեակներուն, Ամերիկայի Միացեալ Նահանգներու (ԱՄՆ) եւ արեւմտեան Եւրոպայի մէջ զգալի յառաջխաղացում կայ Հայկական Հարցի եւ ցեղասպանութեան սիստեմատիկ ուսումնասիրութեան գծով, մանաւանդ՝ օտար սկզբնաղբիւրներն օգտագործելու առնչութեամբ: Մինչեւ քսան տարի առաջ, այս նիւթերուն շուրջ լոյս տեսած գործերը կը հրատարակուէին գրեթէ միայն հայերէնով, ուր օգտագործուած կ'ըլլային համարեա բացառապէս հայկական աղբիւրներ: Գէորգեան յիշեցուց ներկաներուն, թէ բրիտանական ու ֆրանսական դիւանագիտական եւ հիւպատոսական արխիւներն ու կաթողիկէ եւ բողոքական քարոզիչներու գրութիւնները մեծապէս օգտակար եղած են 1880-90ականներու կացութիւնն ու դէպքերը վերլուծելու համար:

Յամենայնդէպս, դեռ ահագին գործ կայ ընելիք, ըսաւ Գէորգեան: 1894-96ի համիտեան ջարդերը, որոնք խլեցին 100-300 հազար հայերու կեանքը, կարիքն ունին խորացուած ուսումնասիրութեան: Այդ շրջանին հրատարակուած բրիտանական, ֆրանսական, ռուսական եւ իտալական արտաքին գործոց նախարարութիւններու փաստաթուղթերու հաւաքածոները «մաքրազտուած» էին քաղաքական նկատառումներով: Ուստի, պատմաբանները պէտք չէ գոհանան հրատարակուած ժողովածուներով եւ պէտք է անմիջականօրէն դիմեն արխիւային սկզբնաղբիւրներուն: Տակաւին գիտնականներու մօտ տարակարծութիւն կայ, թէ արդեօք այս կոտորածները պէ՞տք է դիտել իբր 1915ի ցեղասպանութեան նախապատրաստական փուլ, թէ՞ անոնք իրաւազուրկ փոքրամասնութիւններու նկատմամբ օսմանեան աւանդական վերաբերմունքի հերթական դրսեւորումներ էին: Գէորգեան նշեց, թէ համիտեան կոտորածները պատճառ հանդիսացան ընկերային եւ տնտեսական աղէտներու: Հարիւրաւոր դպրոցներ ու եկեղեցիներ քանդուեցան: Հիմնականին մէջ երիտասարդ այրերու սպանութիւնը ստեղծեց ժողովրդագրական անհաւասարակշռութիւն: Երկրագործութիւնը վնասուեցաւ, եւ իբր հետեւանք 1903ին Մուշի, Վանի եւ Պիթլիսի մէջ սով ծագեցաւ:

Գէորգեան ըսաւ, թէ օսմանեան պետութեան եւ բանակին արդիականացումը, գերմանական մասնակցութիւնը այդ գործընթացին, եւ վերջինիս բռնած ազդեցութիւնը Հայկական Հարցին վրայ, կարօտ են յատկեալ վերլուծութեան: Ցեղասպան երիտթուրքերն ու քեմալական վերնախաւը արդիւնք են այդ արդիականացման արշաւին: Հայ կուսակցութիւններու եւ երիտթուրքերու յարաբերութիւնները մանրամասն ուսումնասիրուած են հայկական աղբիւրներու հիմամբ, բայց թրքական աղբիւրներու օգտագործումը յատկեալ լոյս կրնայ սփռել նաեւ այս հարցին վրայ: Երիտթուրքերու բոլոր փաստաթուղթերը չոչնչացուեցան 1918ին՝ պատերազմի աւարտին: Ան յիշեց թուրք պատմաբան Շիւքրիւ Հանիօղլուի աշխատանքը, որ մահացած երիտթուրք ղեկավարներու, ներառեալ՝ Էնվէր Փաշայի եւ Պէհաէտտին Շաքիրի ընտանիքներէն հաւաքած է զանազան փաստաթուղթեր: Գէորգեան ըսաւ, թէ թրքական ոչ-պետական համալսարաններու մէջ կարծես կ'իշխէ աւելի անկախ մտածողութիւն մը, քան պետական բարձրագոյն ուսմանց հաստատութիւններուն մօտ: Այս սեփական համալսարաններուն

մէջ կրնան գտնուիլ պատմաբաններ, որոնց հետ ապագային կարելի ըլլայ համագործակցիլ:

Վերադառնալով 1915-16ի ցեղասպանութեան վերլուծութեան, Գէորգեան ըսաւ, թէ գերմանական եւ աւստրօ-հունգարական դիւանագիտական եւ ռազմական արխիւները, ինչպէս նաեւ ամերիկեան դիւանագիտական արխիւները առիթը կ'ընձեռնեն այս ուղղութեամբ քաղաքական վերլուծութիւններ կատարելու: Սակայն, աւելի ուշադրութիւն պէտք է դարձնել Թուրքիոյ տարբեր շրջաններէն հասած հիւպատոսական տեղեկագիրներուն վրայ, որպէսզի կարելի ըլլայ հասկնալ տեղահանութեան գործադրութեան մեքանիզմը: Գէորգեանի փափաքն է, մօտ ապագային տեսնել հայկական ցեղասպանութեան պատմութեան շրջան առ շրջան կանոնակարգուած ուսումնասիրութիւնը, օսմանեան եւ արեւմտեան աղբիւրներու, ինչպէս նաեւ եղեռնէն վերապրածներու վկայութիւններու օգտագործումով: Ան տուաւ իր անձնական աշխատանքին օրինակը, երբ կ'ուսումնասիրէր ցեղասպանութեան երկրորդ փուլը, Հիսխայինի Սուրիոյ եւ Միջագետքի կեդրոնացման ճամբարներուն մէջ:

Ըստ Գէորգեանի, առաւել մանրամասն ուսումնասիրութեան կը կարօտին Առաջին Համաշխարհային Պատերազմէն ետք կայացած երիտթուրք ղեկավարներու դատավարութիւններուն փաստաթուղթերը: Անոնց հայերէն թարգմանութիւնը ցարդ մասնակի է, մինչ արդի թրքերէն տարբերակն ու գերմաներէն թարգմանութիւնը աւելի ամբողջական են: Այդ դատավարութիւններուն մասին Կոստանդնուպոլիսը գրուած ֆրանսական եւ անգլիական բանակներուն հետախուզական բաժնի տեղեկագիրներուն մէջ կարելի է գտնել տեղեկութիւններ, որոնց չենք հանդիպիր պաշտօնապէս հրատարակուած արձանագրութիւններուն մէջ:

Հայկական ցեղասպանութեան մասին մեր գիտելիքները կարելի է աւելի եւս հարստացնել, ուսումնասիրելով տեղահանութեան հրահանգները մերժած եւ այդ պատճառով ալ անմիջապէս պաշտօնանկ եղած Անգարայի կառավարիչ Մազհարի 1918ի վերջէն սկսեալ հաւաքած տեղեկութիւնները: Իր կողմէ հաւաքուած քսան մեղադրական բնոյթի հեռագիրներ արդէն լոյս տեսած են առենի պոլսական մամուլին մէջ: Գէորգեան յոյս յայտնեց, որ օր մը այս արխիւը ամբողջութեամբ ի յայտ կու գայ, եւ կ'ուսումնասիրուի հայ եւ թուրք պատմաբաններու միացեալ յանձնախումբի մը կողմէ:

Խօսելով ցեղասպանութենէն փրկուածներուն մասին, Գէորգեան յիշատակեց Ծովինար Գեւոնեանի արխիւային հարուստ տուեալներու վրայ հիմնուած դոկտորական աւարտաճառը:

Ցեղասպանութեան պատճառով հայկական լքեալ գոյքերու ուսումնասիրութիւնը, ըսաւ Գէորգեան, լոյսի կը հանէ ներկայիս Արեւելեան Թուրքիոյ մէջ հայկական երեքհազարամեայ գոյութեան ժառանգութեան հիմնախնդիրը: Անձնական գոյքի հարցը, ըստ Գէորգեանի, շատ բարդ է եւ կարելի է միջ-պետական համաձայնութիւններով լուծել: Սակայն, Հայ Եկեղեցւոյ ունեցուածքները, ինչպէս դպրոցներ, եկեղեցիներ եւ վանքեր, կարելի է վերադարձնել իրենց իրաւատիրոջ՝ Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին: Գէորգեան առաջարկեց կատարել հանրային սեփականութիւն սեպուող ունեցուածքներուն ամբողջական գոյքագրումը: Այդ աշխատանքը հիմա հազիւ կիսով կատարուած է:

Վերջապէս, Գէորգեան կոչ ըրաւ ուսումնասիրողներուն, նաեւ ուշադրութիւն դարձնել «բարեխիղճ» օսմանահպատակներու վրայ. օրինակի համար, կազմել ցանկը այն կառավարիչներուն, զինուորականներուն, նոյնիսկ ամբողջ գիւղերու, որոնք փրկեցին հազարաւոր հայերու կեանքը: Այս մարդիկը, կրնան Թուրքիոյ համար աւելի տիպար ներկայացուցիչներ ըլլալ, քան երիտթուրքերն ու քեմալականները:

Հարց-պատասխանի բաժնով, դասախօսը անդրադարձաւ ցեղասպանութեան մէջ գերմանական պատասխանատուութեան խնդրին, ինչպէս նաեւ զուգահեռներ գծեց հայկական ցեղասպանութեան եւ 1915ի Լեռնայիրանեանի սովին միջեւ: Ան ընդգծեց հայաստանցի պատմաբաններուն դերը ցեղասպանութեան ուսումնասիրութեան աշխատանքներուն մէջ: Գէորգեան յատկապէս գնահատեց Վերժինէ Սվազլեանի վերջերս հրատարակած վերապրողներու վկայութիւնները, որոնք հաւաքուած էին 1950-70ականներուն, խորհրդային վարչակարգի օրերուն:

«Հայոց Ցեղասպանութեան Երկրորդ Փուլը՝
Տարագրեալներու Ջարդը Օսմանեան Սուրիոյ Տարածքին»
դասախօս՝ Ռեմոն Յ. Գէորգեան
2 Օգոստոս 2001

Ռեմոն Յ. Գէորգեանի երկրորդ դասախօսութիւնը Հայկազեան Համալսարանին մէջ կը վերաբերէր Սուրիոյ տարածքին վրայ տեղի ունեցած տեղահանեալ հայերու ջարդին, որ Գէորգեան կը համարէ «ցեղասպանութեան երկրորդ փուլ»:

Խօսելով հայերէն, Գէորգեան ըսաւ, թէ իր ուսումնասիրութեան նիւթը հիմնուած է վերապրողներու վկայութիւններուն՝ մանաւանդ Արամ Անտոնեանի հաւաքածներուն, ինչպէս նաեւ Գերմանիոյ, Աւստրիա-Հունգարիոյ եւ ԱՄՆի Մոսուլի, Հալէպի, Դամասկոսի եւ Երուսաղէմի հիւպատոսական տեղեկագիրներուն վրայ: Ան նաեւ օգտուած է օսմանեան վարչապետարանի արխիւին հրատարակուած նիւթերէն: Գէորգեան ըսաւ, թէ վերոյիշեալ նիւթերը կ'ամբողջացնեն զիրար եւ կը հերքեն թրքական այն տեսակէտը, թէ հայ տարագրեալներու «վերաբնակեցումը» չէր միտեր վերջինիներուս ոչնչացումը:

Գէորգեան հայոց ցեղասպանութիւնը, տարագրութեան եւ ջարդերու առումով բաժնեց իրարմէ տարբեր երկու գլխաւոր փուլերու: Առաջին փուլին՝ մինչեւ տարագիրներուն Հալէպ հասնիլը, տեղահանութիւնը, սպանութիւններն ու բռնագաղթը կը վերահսկուէին այսպէս կոչուած Յատուկ Կազմակերպութեան կողմէ:

Այս փուլին, գոյութիւն ունէին տարագրութեան երեք առանցքներ, ըսաւ Գէորգեան: Առաջին առանցքը, Էրզրումէն, Երզնկայէն, Տրապիզոնէն, Սվազէն, Սամսոնէն, Մարզուանէն, Ամասիայէն եւ Մալաթիայէն տեղահանուած մօտաւորապէս 200,000 հայերու համար էր: Երկրորդը կը վերաբերէր Տիարպէքիրէն, Պիթլիսէն եւ Վանէն տեղահանուած մօտ 435,000 հայերու: Պատմական Հայաստանէն տեղահանուած այս հայերուն միայն 15-20 առ հարիւրը հասաւ Հալէպ. մնացեալը մահացաւ կամ սպանուեցաւ ճանապարհին:

Կայսրութեան արեւմտեան նահանգներէն՝ Թրակիա, Իզմիր, Պուրսա, Քէօթահիա, Գոնիա, Քասթամոնու, Անգարա եւն., մօտաւորապէս 300,000 հայեր, քիչ ժամանակ անց, նոյնպէս ենթարկուեցան իրենց հայրենակիցներու ճակատագրին: Այս մէկը տարագրութեան երրորդ առանցքն էր: Անոնց տարագրումը սկսաւ 1915ի Յունիսին եւ շարունակուեցաւ ամբողջ ամառը: Այս խումբին մէջ կային նաեւ Պոլիսէն մօտ 40,000 հայեր, գլխաւորաբար՝ պանդուխտներ եւ ամուրի երիտասարդներ: Այս տարագրեալներէն ուներորները մինչեւ Պոզանթի ճամբորդեցին շոգեկառքով եւ ասոնց մօտ 90 առ հարիւրը կրցաւ Հալէպ հասնիլ:

Ռեմոն Գէորգեան կը դասախօսէ Հայկազեան Համալսարանի մէջ

Գէորգեան աւելցուց, որ այս փուլին, Կիլիկիայէն տարագրուած 310,000 հայերը եւս քիչ զոհեր տուին, չհաշուած անոնք, որոնք ջարդուեցան իրենց հայրենի քաղաքներուն մէջ, ինչպէս գէյթունցիք եւ տէօրթ-եոլցիք: Ընդհանուր հաշուով, Օսմանեան Կայսրութեան բոլոր շրջաններէն, Հալէպ հասան մօտաւորապէս 870,000 հայեր:

Ցեղասպանութեան երկրորդ փուլը, որ տեւեց Սեպտեմբեր 1915էն մինչեւ Դեկտեմբեր 1916, գործադրուեցաւ Հիւսիսային Սուրիոյ եւ Միջագետքի համակեդրոնացման կայաններուն մէջ, ուր տարագիրները զոհ գացին կոտորածներու, կամ ալ մահացան յարակից պատճառներէ՝ սնօթութիւն, հիւանդութիւն, եւն.: Այս փուլը առայժմ անտեսուած կը մնայ գիտութեան մէջ, հակառակ որ այս շրջանին մահացաւ ցեղասպանութեան ամբողջ տնտղութեան զոհուած տարագրեալներու թիւին կէսը:

Սեպտեմբեր 1915ին, օսմանեան կառավարութիւնը, վերահսկելու համար այս փուլի գործադրումը, Հալէպի մէջ ստեղծեց Տարագրեալներու Ենթատեսչութիւն մը: Այս Ենթատեսչութիւնը պաշտօնապէս կապուած էր Ցեղախումբերու եւ Տարագրեալներու Տեսչութեան: Սեպտեմբեր 1915էն սկսեալ, Ենթատեսչութիւնը հիմնեց կայաններ Մամուրայի, Ինճիլիի, Իսլահիյէի, եւ Քաթմայի մէջ՝ դէպի Հալէպ տարագրութեան ճամբուն վրայ: Իւրա-

քանչիւր կայան ունէր իր տնօրէնը, որ կը նշանակուէր Հալէպէն, եւ 5-10 հոգինոց պաշտօնէութիւն: Ասոնց նպատակն էր հսկել կայաններուն վրայ, օգնութեամբ մի քանի հայերու, որոնք կ'ընտրուէին ամէնէն աղքատ տարագրեալներէն, շատ հատանաբար անոնց միջեւ դասակարգային լարուածութիւն յառաջացնելու համար: Անշուշտ կային նաեւ մեռելահատաքները: Տարագրեալները այստեղ կը մնային 10-15 օր, մինչեւ որկուէին յաջորդ կայանը, դէպի հիւսիսային Սուրիոյ եւ Միջագետքի անապատները իրենց ճամբուն վրայ:

Հարիւր հազարաւոր տարագիրներ մահացան այս կայաններուն մէջ: 10,000 հոգի մահացաւ Պոզանթիի մէջ 1915ի ամրան ընթացքին. 40,000՝ Մամուրայի մէջ, մինչեւ Հոկտեմբեր 1915՝ կայանին փակումը. 60,000՝ Իսլահիյէի մէջ մինչեւ 1916ի սկիզբը. 60,000՝ Ռաճայի, Քաթմայի եւ Ազէզի մէջ. 50-60,000՝ Ախթերիմի եւ Պապի մէջ, Հոկտեմբեր 1915էն Ապրիլ 1916. 50,000՝ Լալի եւ Թէֆրիճէի մէջ, Դեկտեմբեր 1915էն Փետրուար 1916: 30,000 հայեր Ամանոսի լեռներուն մէջ փապուղիներ փորեցին, ապա սպանուեցան Յունիս 1916ին: Քահանաներու եւ այլ հոգեւորականներու համար յատուկ կայան մը հիմնուեցաւ Մեմպիճի մէջ՝ Օգոստոս 1915էն Փետրուար 1916:

Պատերազմէն առաջ Հալէպ հաստատուած հայերը չենթարկուեցան տեղահանութեան: Ընդհակառակը, անոնք օգնեցին տարագիրներուն: Գէորգեան առաքնացաց Արմէն եւ Գրիգոր Մազլումեան եղբայրները, նշանաւոր «Օթէլ Պարոն»ի տէրերը, որոնք օգտուելով Սուրիոյ կառավարիչ Ահմէտ Ճեմալ Փաշայի հետ իրենց մօտ ծանօթութենէն, կրցան որոշ օգնակարութիւն ունենալ տարագիրներուն:

Հալէպ հասնելէ ետք, տարագիրներուն մեծ մասը շարունակեց իր մահուան ճամբան երեք ուղղութիւններով: Անոնցմէ ամէնէն արիւնալին Եփրատի երկայնքով էր, ուր միայն 1916ի երկրորդ կիսուն 196,000 հայեր բնաջնջուեցան Սալհի Ջէբի Պէյի հսկողութեամբ՝ Ռաս-իւլ-Այն գիւղէն մի քանի հարիւր չէչէն գիւղացիներու կողմէ: Տիարպէքիրէն եւ յարակից շրջաններէն տարագրուածները շարունակեցին իրենց ճամբան մինչեւ Ռաս-իւլ-Այն, Մոսուլ եւ անդին: Անոնց մեծամասնութիւնը բնաջնջուեցաւ Խապուրի շրջանին մէջ, մանաւանդ Էլ-Հասաքէ գիւղին շուրջ:

Կիլիկիայէն տարագրուածները Համա-Հոմս ուղիով շարունակեցին իրենց ճամբան մինչեւ Կարմիր Ծովու հիւսիսային ափերը: Յարաբերաբար քիչ մարդիկ գոհուեցան այս ճամբուն վրայ. մահուան գլխաւոր պատճառը սովն էր: Տարագրման կայաններու փոխարէն, այս գծով տարագրուածները տեղաւորուեցան գիւղերու մէջ, մանաւանդ Քարաքի մօտ եւ Հաւրանի մէջ: Ըստ Գէորգեանի, Ճեմալ Փաշայի վարած այս մեղմ քաղաքականութեան պատճառը կրնայ ըլլալ այն, որ ան՝ դաշնակցական գործիչ Իւան Ջավրիեի միջոցով, գաղտնի բանակցութիւններու մէջ էր Բրիտանիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ հետ: Գէորգեան հետեւցուց, որ կարելի էր եւս 250,000 հայերու կեանքը փրկել, եթէ այս բանակցութիւնները յաջողէին, եւ Ճեմալ ապստամբէր Պոլսոյ իր կուսակիցներուն դէմ:

«Հայ-Ատրպէյճանական Հակամարտութիւնը Տարածաշրջանային, Ռազմական Եւ Աշխարհա-Ռազմավարական Զարգացումներու Ընդմէջէն»

դասախօս՝ Հրաչ Չիլինկիրեան

11 Դեկտեմբեր 2001

1700ամեակի շարքին մէջ իր տուած դասախօսութեան առընթեր, Հրաչ Չիլինկիրեան Հայկազեան Համալսարանի մէջ տուաւ նաեւ երկրորդ դասախօսութիւն մը՝ հայ-ատրպէյճանական հակամարտութեան մասին:

Չիլինկիրեան նաեւ հարաւային Կովկասի հարցերով վերլուծաբան է, եւ ներկայիս կ'ուսումնասիրէ նախկին խորհրդային ինքնավարութիւնները, ինչպէս Լեռնային Ղարաբաղը, Աբխազիան, Հարաւային Օսեթիան եւ շրջանի այլ չլուծուած հակամարտութիւնները:

Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը, որ սկսաւ 1988ին, ներկայիս չլուծուած տարածքային հակամարտութիւնն է նախկին Խորհրդային Միութեան տարածքին: Նախորդ քանի մը տարիներուն, անիկա յատկապէս արեւմտեան շրջանակներու կողմէ կը դիտուի իբր հայ-ատրպէյճանական հակամարտութիւն, մանաւանդ Ռոպերթ Քոչարեանի Հայաստանի նախագահ ընտրութենէն ետք: Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը աշխարհի աւելի քան իննսուն միջ-ցեղային եւ միջ-սահմանային հակամարտութիւններէն մէկն է:

Լեռնային Ղարաբաղը կը գտնուի երեւակայական եռանկիւնի մը մէջ, որուն մէկ անկիւնը Ղազախստանի Թենկիզ քարիւղի հորերն է, միսը՝ Պարսից Ծոցի մուտքը հանդիսացող Հորմուզի նեղուցը, իսկ երրորդը՝ Պոսֆորի նեղուցը: Այսինքն՝ Ղարաբաղ կը գտնուի համաշխարհային առումով կարեւոր նկատուող ուժանիւթային եւ ռազմավարական հետաքրքրութիւններ յառաջացուցած տարածաշրջանի մը մէջ: Այս եռանկիւնը կը պարփակէ նաեւ այլ շարունակուող հակամարտութիւններ, ինչպէս արաբ-իսրայէլեանը, յոյն-թրքականը, հնդկա-փաքիստանեանը, ինչպէս նաեւ Իրաքի, Աֆղանիստանի, Կեդրոնական Ասիոյ մէջ Ֆերղանա Հովիտի խնդիրները եւն.: Աւելին. Խորհրդային Միութեան փլուզումէն ետք, Կովկասը, որ կ'իյնայ այս եռանկիւնին մէջ, բեմահարթակ դարձաւ յաճախ բռնի եւ արիւնալի բախումներու, ինչպէս Աբխազիոյ, Հարաւային Օսէթիոյ եւ Չեչնիոյ պարագային: Նուազ վտանգաւոր հակամարտութիւններ կան Ճաղարիոյ մէջ, ինչպէս նաեւ հայերու եւ վրացիներու միջեւ՝ Ջաւախքի հարցով, օսէթներու եւ ինգուշներու միջեւ, լեզգիներու խնդիրը՝ Տաղստանի եւ Ատրպէյճանի միջեւ եւն.:

Կովկասը, շեշտեց Չիլինկիրեան, շատ կարեւոր է Կասպից Ծովէն քարիւղի եւ բնական կազի արտադրութեան յետագայ զարգացման, մանաւանդ՝ անոնց դէպի արեւմտեան շուկաները փոխադրութեան համար: Այս մէկը յստակ կ'երեւի քարիւղատար եւ կազատար խողովակներու վրայ վերահսկողութիւն ձեռք ձգելու, կամ նորերը կառուցանելու իրար հակադիր միջազգային բաղաքական շահերու եւ ձգտումներուն մէջ:

ԱՄՆը եւ արեւմտեան Եւրոպան գործօն մասնակիցներ են շրջանային այս պայքարներուն մէջ, մինչ Ռուսաստանը, Թուրքիան եւ Իրանը կը մնան շրջանի գլխաւոր երեք դերակատարները: Կասպեանի ափերուն միւս

երկիրներն ալ ունին իրենց շահագրգռութիւնները, եւ այսպիսով այս հակամարտութիւնները երբեմն կը ստանան երկկողմ, նոյնիսկ բազմակողմ բնոյթ:

Չիլինկիրեան նշեց, որ ԱՄՆը եւ Եւրոպան, այս տարածաշրջանը կը դիտեն ոչ թէ իբրեւ շարք մը անջատ հակամարտութիւններու թատերաբեմ, այլ իբր միասնական աշխարհա-քաղաքական միաւոր: Շրջանը իբր մէկ ամբողջութիւն դիտելով, արեւմտեան դիւանագիտական ջանքերն ու խաղաղութիւն հաստատելու առաջարկները, կը միտին գտնել համընդհանուր լուծման տարբերակ մը: Շրջանային ոյժերու այս տեսակէտը կը բախի շրջանային երկիրներու աւելի անհատապաշտ մօտեցումներուն հետ:

Խնդրին էութիւնը, նշեց Չիլինկիրեան, 1920ին խորհրդային իշխանութեան կողմէ Լեռնային Ղարաբաղին անուանական ինքնավարութիւն շնորհելով, զայն Ատրպէյճանի մէջ ընդգրկելու որոշման սրբագրումն է: Խորհրդային այդ քայլը ինքնին ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքը եւ երկիրներու տարածքային ամբողջականութիւնը ընդունող միջազգային չափանիշներուն հակասութեան դասական դրսեւորում էր: Խորհրդային Միութեան փլուզումով, Լեռնային Ղարաբաղ հռչակեց իր անկախութիւնը: Հայ-ատրպէյճանական պատերազմը շարունակուեցաւ մինչեւ 1994ի զինադարարը: Հայեր այսօր կը վերահսկեն Ատրպէճանի տարածքին 14-15 առ հարիւրին վրայ, ներառեալ՝ Ղարաբաղի գրեթէ ամբողջ տարածքը: Երկու կողմէն կան հարիւր հազարաւոր գաղթականներ:

Հակամարտութեան լուծման խնդրով կը զբաղի Եւրոպայի Մէջ Անվտանգութեան Եւ Համագործակցութեան Կազմակերպութեան Մինսքի խումբը, որ կ'ընդգրկէ 11 պետութիւններու ներկայացուցիչներ՝ Ռուսաստանի, ԱՄՆի եւ Ֆրանսայի համանախագահութեամբ: Հակառակ բոլոր ճիգերուն եւ Հայաստանի ու Ատրպէյճանի նախագահներուն ունեցած շուրջ քսան հանդիպումներուն, խնդիրը դեռ կը մնայ չլուծուած: Գլխաւոր տարակարծութիւնը Ղարաբաղի յետագայ կարգավիճակի հարցն է: Այլ փշոտ հարցեր են Ղարաբաղէն դուրս գտնուող եւ հայկական վերահսկողութեան տակ գտնուող ատրպէյճանական հողերու վերադարձը, գաղթականներու տունդարձը, Ղարաբաղի անվտանգութիւնը ապահովող միջազգային երաշխիքները եւն.:

Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարը յաճախ կը յիշատակէ «փարիզեան սկզբունքները», որոնց մասին ենթադրեալ համաձայնութիւն մը կայացած է 2001ի սկզբնաւորութեան երկու երկիրներու նախագահներուն միջեւ: Այդ «սկզբունքները» յստակօրէն չեն պարզաբանուած, սակայն կ'ենթադրուի որ նախագահները համաձայնած ըլլան Ղարաբաղի եւ Ատրպէյճանի միջեւ «հորիզոնական յարաբերութիւններու» հաստատման, Ղարաբաղն ու Հայաստանը իրար կապող ցամաքային միջանցքի մը ստեղծման, եւ Ղարաբաղի ապահովութիւնը երաշխաւորող միջազգային ամուր երաշխիքներու ձեռքբեռման կապակցութեամբ: Հայաստան կը պնդէ, որ այս սկզբունքները բանակցութեան ենթակայ չեն: Ակնյայտ է, որ Ատրպէյճան իր հերթին, պիտի վերստանայ Ղարաբաղէն բացի հայկական հսկողութեան տակ գտնուող միւս տարածքները, գաղթականներու տունդարձը պիտի ապահովուի, եւ Մեղրիի տարածքով դէպի Նախիջեւան անցք մը պիտի ապահովուի: Դասախօսին տեսակէտով, այս վերջինը պիտի ըլլայ ոչ այլ ինչ, քան խորհրդային օրերուն եղած իրավիճակին վերականգնումը:

Ո՛չ մէկ հայաստանցի ղեկավար կրնայ Հայաստանի տարածքէն մաս մը զիջիլ Ադրպէյճանին, եւ այդպիսով Իրանի հետ սահմանային կապէն հրաժարիլ, ըսաւ Չիլինկիրեան:

Ապրիլ 2001էն ի վեր, ազերի պաշտօնատարներ կը հերքեն այս «սկզբունքներու» գոյութիւնը, այդպիսով փաստօրէն սառեցնելով բանակցութիւններու գործընթացը: Հետզհետէ կը լսուին տարածքները ոյժով վերադարձնելու մասին կոչեր: Աւելին, ԱՄՆի մէջ 11 Սեպտեմբեր 2001ի ահաբեկչական արարքէն ետք, ազերի պետական պաշտօնատարներ, ընդդիմադրութեան ղեկավարներ, հոգեւոր առաջնորդներ, ակադեմականներ եւ լրատուամիջոցներ կազմակերպուած աշխատանք կը տանին Հայաստանը իբր ահաբեկիչ ամբաստանելու, եւ ամբողջ աշխարհին համար վտանգ մը ներկայացնելու գծով: Ըստ Չիլինկիրեանի, այս յարձակումները կը միտին արդարացնել Պաքուի ներկայ վարչակարգին վարած քաղաքականութիւնը: Ասիկա յար եւ նման է Չեչնիոյ դէմ ռուսերուն, Կեդրոնական Ասիոյ կարգ մը բռնատիրական երկիրներուն եւ որոշ չափով ալ վրացիներուն վարած քաղաքականութեան, որոնք Սեպտեմբեր 11էն ետք ստեղծուած համաշխարհային կացութիւնը կը փորձեն օգտագործել, որպէսզի ազատօրէն կարենան ճնշել իրենց հակառակորդներուն վրայ, յուսալով, որ արեւմտեան հանրային կարծիքը արդէն հասկացողութեամբ կը վերաբերի այդ քայլերուն:

Հարց-պատասխանի բաժնին մէջ, Չիլինկիրեան անդրադարձաւ հայատրպէյճանական հակամարտութեան առնչուած շարք մը այլ խնդիրներու: Ան ըսաւ, թէ Ղարաբաղը Ադրպէյճանի կազմին մէջ ձգող որեւէ յետագայ բանակցութիւն, լուծում չի բերեր խնդրին, որովհետեւ Ղարաբաղի հայերը ոչ տասնամեակ շարունակ անընդունելի գտած են այդպիսի կարգադրութիւններ: Ան աւելցուց, թէ «ընդհանուր պետութեան» վարկածը, որ առաջարկուած է Մինսքի խումբին կողմէ, իսկութեան մէջ փոխ-զիջումնային բայլ մըն է նախկին խորհրդային ինքնավարութիւններուն անկախութիւն շնորհելու իրենց չկամութեան եւ Ղարաբաղի ժողովուրդին անկախ ապրելու ձգտումին միջեւ: Ոչ ոք գիտէ այս վարկածին բուն էութիւնը: Չիլինկիրեան անհաւանական նկատեց, որ Ադրպէյճան վերսկսի պատերազմական գործողութիւնները: Այդպիսի արարք մը պիտի բախի արեւմուտքի դիմադրութեան: Հայերը վարկաբեկելու եւ իբր ահաբեկիչ ամբաստանելու փորձերը ազերիներէն առաջ թուրքերը կիրարկած են քիւրտերուն նկատմամբ: Նոյն թուրքերը կրնան քաջալերած ըլլալ ազերիներու նման փորձերը, եզրակացուց Չիլինկիրեան:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆԻ 45ԱՄԵԱԿԻ ՅՈՔԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԾՆՈՐՀԱՆԴԷՍ *ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ* Ի. ՀԱՏՈՐԻ

Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամբիոնը Ուրբաթ, 27 Ապրիլ 2001ին, յատուկ հանդիսութեամբ նշեց իր հիմնադրութեան 45րդ տարեդարձը. նոյն ատեն տեղի ունեցաւ *Հայկազեան Հայագիտական Հանդէսի* Ի. հատորի շնորհանդէսը:

Երեկոյի պատուոյ հիւրերն էին ամբիոնի Լիբանան բնակող նախկին ու ներկայ դասախօսները: Յոտնկայս լռութեամբ յարգուեցաւ ամբիոնի հիմնադիր եւ առաջին վարիչ Վեր. Տիգրան Խրլոբեանի, ինչպէս նաեւ մահացած այլ դասախօսներուն յիշատակը: Ներկայ էին նաեւ համալսարանի Խնամակալ Մարմինի կարգ մը անդամներ, որոնք իրենց հերթական ժողովին համար կը գտնուէին Լիբանան:

Օրուան հանդիսավարն էր *Հայկազեան Հայագիտական Հանդէսի* խմբագրական կազմի անդամ Անդրանիկ Տագէսեան:

Ամբիոնի ներկայ վարիչը՝ Արա Սանճեան, արտայայտուեցաւ ամբիոնի դիմագրաւած կարգ մը ներկայ մարտահրաւէրներուն մասին: Ան ըսաւ, թէ աշխատանք գտնելու դժուարութեան եւ նիւթական ցած վարձատրութեան պատճառով, հայագիտութիւնը դարձած է անհրապոյր ասպարէզ մը բոլոր այն լիբանանահայ երիտասարդներուն համար, որոնք առիթը ունին պետականաճօրէն ճանչցուած համալսարան մը ընդունուելու: Ան նշեց նաեւ, որ հայ ուսանողներուն համար իբր պարտադիր դասընթացք տրուող հայագիտական նիւթերն ալ կարիքը ունին որոշ վերափոխութեան: Այդ նիւթերը՝ Հայաստանի վերանկախացման եւ ափիոնքահայ կառոյցներու պաշտօնականացման լոյսին տակ, յետ այսորիկ պէտք է աւելի շատ արծարծեն ափիոնքահայ երիտասարդութիւնը հետաքրքրող այժմէական հարցեր: Տեղաբնակ հայ մասնագէտներու եւ անհրաժեշտ գրականութեան պակասը կը դժուարացնեն այդ առնչութեամբ կատարուած փորձերը: Աւելին, հայախօսութեան մակարդակի անկումով արդէն կը ծագի այն հարցումը, թէ հայերէնո՞վ թէ՞ անգլերէնով պէտք է ըլլան հայ մշակոյթի ու պատմութեան դասաւանդութիւնները: Սանճեան կոչ ուղղեց ներկաներուն եւ լիբանանահայ կազմակերպութիւններուն, համագործակցելու Հայկազեան Համալսարանի հետ, այս դժուարութիւններուն գոնէ մէկ մասը լուծելու համար:

Սանճեանի խօսքէն ետք, Տագէսեան ընթերցեց ամբիոնի 1971-72 տարեշրջանի վարիչ Տիգրան Գալումճեանի շնորհաւորական գիրը: Փրոֆ. Գալումճեան ներկայիս Քալիֆորնիոյ Պետական Համալսարանի Ֆրեզնոյի մասնաճիւղին հայագիտական ուսմանց ծրագրին պատասխանատուն է:

Հայկազեան Հայագիտական Հանդէսի պատասխանատու խմբագիր Հ. Անդրանիկ Վրդ. Կոսանեան ներկայացուց *Հանդէսի* մօտաւորապէս երեսուն տարուան պատմութիւնը, սկսելով Երուանդ Քասունիի խմբագրած առաջին տաս հատորներէն: Ան նաեւ բացատրեց, թէ ի՛նչ պայմաններու տակ ինք ստանձնեց *Հանդէսի* խմբագրութիւնը՝ մօտ տաս տարի առաջ: Ապա, Կոսանեան ներկայացուց այդ տաս տարիներու ձեռքբերումները, թէ ի՛նչպէս խմբագրումը վերածուած է հաւաքական աշխատանքի, եւ ապահովուած են *Հանդէսին* տարեկան կանոնաւոր հրատարակութիւնն ու աւելի գիտական մակարդակին աստիճանական բարելաւումը: Կոսանեան յայտնեց, թէ համալսարանի ղեկավարութիւնն ու խմբագրական կազմը միասնաբար, կազմած են ներքին կանոնագիր մը: Աւելին. այս տարուընէ սկսեալ պիտի գործէ Խորհրդատուներու Մարմին մը, եւ *Հանդէսը* պիտի ունենայ իր ներկայացուցիչը Հայաստանի մէջ: Հայր Անդրանիկ խոստացաւ, որ *Հանդէսը* պիտի հրատարակուի այնքան ատեն, որ գործէ Հայկազեան Համալսարանը:

Հանդէսի հերթական հատորի բովանդակութիւնը ներկայացուց եւ վերլուծեց Երեւանի Պետական Համալսարանէն Փրոֆ. Եուրի Խաչատրեան, որ

ժամանակաւորապէս կը գտնուէր Պէյրութ, իբր դասախօս Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի:

Համալսարանի հոգաբարձութեան գնահատանքի խօսքը փոխանցեց Վեր. Ռոպեր Սարգիսեան:

Երեկոն շարունակուեցաւ յոբելեանին առթիւ պատրաստուած հիւրասիրութեամբ:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ Ի. ՀԱՏՈՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԷՍԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Հայկազեան Հայագիտական Հանդէսի Ի. հատորը հայրենի հանրութեան ներկայացուեցաւ 26 Յուլիս 2001ին, Երեւանի Եղիշէ Չարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանին մէջ, հայրենի հայագիտական կեդրոններու ներկայացուցիչներու, այլ անհատ հայագէտներու, *Հանդէսի* բարեկամներու եւ լրատուամիջոցներու ներկայութեան:

Բացման խօսքով ելոյթ ունեցաւ Արծուի Բախչինեան, *Հայկազեան Հայագիտական Հանդէսի* նորանշանակ ներկայացուցիչը Հայաստանի մէջ, որ հանդիպման նպատակը ներկայացնելէ ետք, հրաւիրեց Երեւանի Պետական Համալսարանի դասախօս՝ պատմաբան Պետրոս Յովհաննիսեանը, որ ներկայացուց *Հանդէսի* անցած ուղին, մեծապէս գնահատելով անոր տեղն ու դերը հայագիտութեան ծառայութեան մէջ:

Յաջորդ խօսք առնողն էր Գէորգ Տէր-Վարդանեան՝ Մատենադարանէն, որ Պէյրութ այցելութեան ընթացքին *Հանդէսի* խմբագրութեան հետ իր ունեցած հանդիպումներուն մասին խօսեցաւ, ներկայացնելով եւ գնահատելով *Հանդէսի* կանոնաւորաբար լոյս ընծայման պայմանները, մանաւանդ վերջին տասը տարիներուն, եւ յաջողութիւն ու յարատեւութիւն մաղթեց *Հանդէսի* խմբագիրներուն եւ առնչակից բոլոր անձերուն:

Հանդէսի խմբագրութեան անունով խօսք առաւ յատկապէս Պէյրութէն ժամանած Անդրանիկ Տագէսեան: Ան համառօտակի ներկայացուց *Հանդէսի* պատմականը, եւ տեղեակ պահեց ներկաները երկու որոշումներու մասին, որոնք *Հանդէսի* գիտական որակն ու հրատարակութեան գործընթացը բարելաւելու կը միտին.-

ա) Ստեղծուած է խմբագրական կազմին կից Խորհրդատուներու Մարմին մը, բաղկացած Սեդա Պ. Տատոյեանէ, Միվա Ածեմեանէ, Ժիրայր Դանիէլեանէ, Մկրտիչ Յ.Պուլտուքեանէ, Պերճ Ֆազլեանէ, Երուանդ Երկաճեանէ (Լիբանան), Հրանոյշ Խառատեանէ, Մուրադ Հասրաթեանէ (Հայաստան), Սիւզըն Փեթիէ եւ Հրաչ Չիլինկիրեանէ (Անգլիա):

բ) Արծուի Բախչինեան նշանակուած է իբր *Հանդէսի* պաշտօնական ներկայացուցիչը Երեւանի մէջ:

Տագէսեան իր խօսքին մէջ նշեց, թէ *Հանդէսի* խմբագրութիւնը հայագիտութիւն հասկացողութեան տակ կը տեսնէ անոր դասական նշանակութենէն աւելին. հայագիտութիւնը կ'ընդգրկէ հայոց անցեալին, ներկային եւ ապագային առնչուած բոլոր մարզերը: Խմբագրութիւնը կը քաջալերէ երիտասարդ յօդուածագիրներու աշխատանքները, պահելով հրատարակութեան գլխաւոր երկու պայմանները՝ յօդուածին բարձր գիտական մակարդակն ու նախապէս հրատարակուած չըլլալը: Տագէսեան կոչ ուղղեց

ներկաներուն համագործակցելու *Հանդէս*ին հետ, զարկ տալու համար հայագիտութեան զարգացման:

Ելոյթներ ունեցան Հենրիկ Բախչինեան, Բախտիար Յովակիմեան, Պաւէլ Չօպանեան եւ ուրիշներ, որոնք արտայայտեցին իրենց նկատողութիւններն ու փափաքները: Զրոյցները յետագային շարունակուեցան պատշաճ հիւրասիրութեան մը ընթացքին:

Երեւան իր կեցութեան շրջանին, Տագէսեան նաեւ հանդիպումներ ունեցաւ Հայաստանի Ազգային Ակադեմիայի, Ազգային Գրադարանի, Երեւանի Պետական Համալսարանի, «Սփիւռք» կեդրոնի եւ այլ հիմնարկներու դեկավարութեանց հետ, զարգացնելու համար *Հանդէս*ի կապերը Հայաստանի հայագիտական կեդրոններուն հետ:

*Հանդէս*ի շնորհանդէսը անմոռանալի ճեռնարկ մըն էր, որ մեծապէս օգտակար հանդիսացաւ *Հանդէս*ին հայրենի հայագէտներու ու հայագիտական կեդրոններու միջեւ կապերու ամրապնդումին:

ՀՐԱՆՏ ԹԱՄՐԱԶԵԱՆ
(1926-2001)

Գրականագէտ, բանասիրական գիտութիւններու դոկտոր-փրոֆեսոր եւ 1996էն Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի ակադեմիկոս Հրանտ Ամբատի Թամրազեան ծնած է Իջեւանի Աչաջուր գիւղը:

Թամրազեան 1948ին աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրական Ֆակուլտետի հայկական բաժինը: Ուսանողական տարիներուն աշխատած է *Առաւօտ* թերթին եւ Հայպետհրատի մէջ: 1954ին, պաշտպանելով «Շիրվանզադէի Դրամատուրգիան» թեզը, ստացած է բանասիրական գիտութիւններու թեկնածուի աստիճան, իսկ 1962ին, բանասիրական գիտութիւններու դոկտորի աստիճան ստանալու համար իր ներկայացուցած ատենաճառի խորագիրն էր «Շիրվանզադէ. Կեանքը եւ Գործը»: 1970ին արժանացած է «ՀՍՍՀ Գիտութեան Վաստակաւոր Գործիչ» տիտղոսին, իսկ 1974ին, դարձած՝ ՀՍՍՀ պետական մրցանակի դափնեկիր:

Թամրազեան ունեցած է մանկավարժական բեղուն գործունէութիւն: Ան 1954էն հայ գրականութիւն դասաւանդած է Երեւանի Պետական Համալսարանին մէջ, հասցնելով սերունդներ: 1968ին ստանձնած է նոյն համալսարանին մէջ իր իսկ ստեղծած Սովետահայ (այժմ՝ Նորագոյն Հայ) Գրականութեան Ամբիոնի, իսկ 1980էն 2001ի Փետրուարը՝ Հայ Գրականութեան Ամբիոնի վարիչի պարտականութիւնները: Սովետահայ միջնակարգ վարժարաններու 9րդ դասարանին համար պատրաստած է *Հայ Գրականութիւն* դասագիրքը, որ 1957-80ին բազմիցս հրատարակուած է եւ արժանացած պետական մրցանակի:

Գրականագիտական ասպարէզ մուտք գործելով 1950ականներու կէսերուն, Թամրազեան եւ իր սերնդակիցները բարմութիւն, այժմէականութիւն եւ նոր արիւն բերին Բ. Համաշխարհային Պատերազմի բոհութոհէն նոր դուրս եկող ու ստալինեան վարդապետութեան վերջին հանգրուանն ապրող սովետահայ գրականագիտական մտքին: Ի տարբերութիւն իր սերնդակիցներուն, Թամրազեանի միտքը աւելի խորասոյզ էր, խօսքը՝ աւելի հաստ,

տեսահորիզոնը՝ աւելի լայն եւ ընդգրկուն: Ի պատիւ իրեն, պէտք է ըսել, որ ան մնաց միշտ բարձր ու նորարար, պեղեց ու հորատեց անծանօթ կամ քիչ մշակուած մարզեր:

Գրականագիտութեան կալուած Թամրազեանի մուտքը եղաւ, ինչպէս վերը նշեցինք, Ալեքսանդր Շիրվանզադէի անցագրով, բայց շուտով ան շեշտուած հետաքրքրութիւն ցուցաբերեց հայ չափածոյի տիտաններ Սիամանթոյի, Միսաք Մեծարենցի, Վահան Տէրեանի, Եղիշէ Չարենցի, Յովհաննէս Թումանեանի ստեղծագործութեանց հանդէպ: Այս բոլորին դափնեպսակը եղաւ սովետահայ գրականութեան պատմութեան նուիրուած իր անկիւնադարձային հատորը: Գրաքննադատական բեղուն ութեան բարձունքին, Թամրազեան հասունացման իր սերուցքը ի սպաս դրաւ հայ քննադատական միտքին: Նախ պեղեց ու համատեղեց եղած լուացքոյնը, ապա եւ ծնունդ տուաւ հայ քննադատութեան պատմութեան հատորներուն: Վերջին տասնամեակներու հայ գրաքննադատական մտքի թովիչ, բանաստեղծական պատմուճանին հեղինակն է ան:

Թամրազեան առանձին գիրքով հրատարակած է գրականագիտական բազմաթիւ մենագրութիւններ, յօդուածներու եւ ուսումնասիրութիւններու ժողովածուներ, դպրոցական ու համալսարանական դասագիրքեր: Անոնցմէ կը յիշատակենք հետեւեալները, որոնք լոյս տեսած են հայերէն՝ Երեւանի մէջ. *Շիրվանզադէի Դրամատուրգիան* (1954), *Եղբայրութեան Ժողովածու* (1954), *Ալեքսանդր Շիրվանզադէ* (1956), *Շիրվանզադէ* (1958), *Շիրվանզադէի Կեանքը եւ Գործը* (1961), *Գրական Ուղիներում* (1962), *Սիամանթօ* (1964 եւ 1969), *Արեւն Յարութիւնի Տէրտէրեան* (1966), *Պօլզիան Պատմութեան Քառուղիներում* (1971), *Տաղանդի Ծնունդը* (1971), *Չարենցեան Ընթերցումներ* (1973), *Երիտասարդ Չարենցը* (1974), *Գուրգէն Մահարի* (1974), *Գրական Դիմանկարներ եւ Յօդուածներ* (1975), *Դերենիկ Դեմիրճեան* (1976 եւ 1977), *Շիրվանզադէ (Կեանքը եւ Գործը)* (1978), *Բանաստեղծը եւ Ճակատագիրը* (1978), *Սովետահայ Գրականութեան Պատմութիւն* (1980), *Եղիշէ Չարենց* (1981), *Հայ Գրական Քննադատութեան Քրեստոմատիա* (1981), *Հայ Քննադատութիւն* (գիրք Ա-Բ, 1983-85), *Ընտիր Երկեր. Բանաստեղծութեան Հազարամեայ Խորհուրդը* (1986), *Գեղարուեստական Լեզուի եւ Բովանդակութեան Նոր Ըմբռնումը Հայոց Միջնադարում* (1988), *Հայ Գրականութիւն* (դասագիրք 10րդ դասարանի համար, 1991 եւ 1993), *Յակոբ Ասատուրեան. Կեանքը եւ Գործը* (1993), *Յովհաննէս Թումանեան. Բանաստեղծը եւ Մտածողը* (1995), *Հայ Քննարերգուներ* (հ. Ա-Բ, 1996-99):

Ռուսերէն լոյս տեսած են Թամրազեանի *Շիրվանզադէի Դրամատուրգիան* (Երեւան, 1956), *Շիրվանզադէ* (Երեւան, 1958 եւ Մոսկուա, 1967), *Գրական Ուղիներում* (Մոսկուա, 1973) հատորները:

Հեղինակած է նաեւ մօտ 300 յօդուած, տասնեակ գիրքերու յառաջաբաններ:

Թամրազեան իր մահկանացուն կնքեց 9 Փետրուար 2001ին:

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ

ՀՐԱՉ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ
(1928 - 2001)

Կրթական մշակ, հրապարակախօս ու հասարակական-քաղաքական գործիչ Հրաչ Եղուարդ Տասնապետեան ծնած է Հալէպ, 28 Յուլիս 1928ին:

Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրի Ազգային Հայկազեան եւ Մխիթարեան վարժարաններու, ապա՝ նոյն քաղաքի Ֆրանսական Լիսէին մէջ: 1945ին տեղափոխուած է Պէյրութ եւ երկու տարի ետք աւարտած տեղւոյն Ֆրանսական Լիսէն: Տարի մը Պէյրութի Մաթեմատիկական ու Բնագիտական Ուսմանց ու Հետազօտութիւններու Կեդրոնը յաճախելէ ետք, Տասնապետեան 1947ին իր համալսարանական ուսումնառութիւնը շարունակած է Լիոնի (Ֆրանսա) Գիտութիւններու Ֆաքիւլթէին մէջ, ուրկէ եւ ստեղի ուշ ճարտարարուեստական Քիմիայի Բարձրագոյն Դպրոցէն վկայուած է որպէս քիմիագէտ-ճարտարագէտ:

Տասնապետեան 1953ին հաստատուած է Պէյրութ՝ բնագիտութիւն ու տարրաբանութիւն դասաւանդելու Համազգային Մշակութային եւ Կրթական Միութեան Նշան Փալանճեան Ճեմարանին մէջ: 1968էն մինչեւ իր մահը՝ 33 տարի շարունակ, վարած է նոյն կրթօճախի տնօրէնի պաշտօնը: Այդ ընթացքին հրատարակած է հայերէնով գիտութեան դպրոցական դասագիրքերու շարք մը: Որոշ ժամանակ եղած է նաեւ Լիբանանահայոց Ազգային Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդի անդամ:

Տասնապետեան 1946ին միացած է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (ՀՅԴ) շարքերը, յաջորդաբար մաս կազմած՝ կուսակցութեան Ջաւարեան Ուսանողական Միութեան վարչութեան եւ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէին: 1967-95ին՝ ամբողջ 28 տարի, եղած է կուսակցութեան գերագոյն մարմնի՝ Բիւրոյի անդամ, վերջին մէկ տարին վարելով նաեւ Բիւրոյի ներկայացուցիչի պաշտօնը:

Հակառակ որ Տասնապետեան հայագիտական մասնագիտական կրթութիւն չէր ստացած, իր հայրենասիրական ամուր համոզումներն ու կուսակցական կեանքէն ներս իր խորաստուգութիլը՝ երիտասարդ տարիքէն, իր մօտ լուրջ հետաքրքրութիւններ յառաջացուցած են հայագիտութեան այլազան բնագաւառներու, մասնաւորապէս՝ հայկական ճարտարապետութեան ու հայոց արդի պատմութեան հանդէպ:

Հայկական ճարտարապետութեան մասին Տասնապետեանի յօդուածները 1950ականներէն սկսեալ լոյս տեսած են Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան *Հասկ* պաշտօնաթերթին ու Պէյրութ լոյս տեսնող Անդրանիկ Ծառուկեանի *Նայիրի* շաբաթաթերթին մէջ: Տասնապետեան գրած է նաեւ Համազգային Մշակութային Միութեան հայերէն, անգլերէն ու ֆրանսերէն երեք անջատ հատորներով լոյս ընծայած *Հայկական Ճարտարապետութեան Յուշարձաններ* (1972) ալպոմի յառաջաբանը:

ԺԹ. դարու վերջի եւ Ի. դարու սկիզբի արեւմտահայ ազգային-ազատագրական շարժման, ի մասնաւորի՝ Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան այլազան խնդիրներուն նուիրուած են Տասնապետեանի *Հ. Յ. Դաշնակցութեան Կազմակերպական Կառոյցի Հոլովոյթը* (1974), *Ո՞վ է Դաշնակցականը* (1975), *Հայկական Հարցը* (1977), *Յեղափոխութիւն* (1978), *Ինքնամեայ Հաշուեկշիռ* (1985), *Հ. Յ. Դաշնակցութիւնը Իր Կազմութենէն Մինչեւ Ժ. Ընդհ. Ժողովը (1890-1924)* (1988), *Հայ Յեղափոխական Շարժումը Մինչեւ Հ. Յ. Դաշնակցութեան Կազմութիւնը* (1990) եւ *Հ. Յ. Դաշնակցութեան Յեղափոխական Մարտական Գործունէութիւնը* (1994) ուսումնասիրութիւններն ու հաւրամատչելի երկերը: Անոնցմէ երկուքը թարգմանուած են անգլերէնի եւ ֆրանսերէնի:

Տասնապետեան 1970ականներուն՝ ՀՅԴ Բիւրոյի որոշումով դասաւորած է կուսակցութեան Պոսթոնի մէջ (ԱՄՆ) մէջ գտնուող արխիւները, վերջիններուս հիման վրայ կազմած՝ *Հ.Յ.Դ. Արխիւ* խորագիրը կրող, մեքենագիր-բազմագրուած երկու ցուցակ-հատորները (1980-81), որոնք կը վերաբերին կուսակցութեան պատմութեան առաջին տասնամեակին՝ մինչեւ 1901, ինչպէս նաեւ *Նիւթեր Հ.Յ.Դ. Պատմութեան Համար* քառահատոր շարքը (1972-82), ուր ներկայացուած են մինչեւ 1907 երկարող բազմաթիւ կուսակցական փաստաթուղթեր:

Տասնապետեանի հայագիտական բողոքին մաս կը կազմեն նաեւ *Արամը* (1969), *Ռուսոմ* (1979), *Սիմոն Զաւարեան* (հ. Ա-Գ, 1983-97), *Քրիստափոր. Նամականի* (1993) եւ *Ռուսոմ. Նամականի* (1999) սկզբնաղբիւրներու ժողովածուները:

Տասնապետեան միաժամանակ 1974ին կարճ շրջան մը եղած է նորաբաց Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի առաջին տնօրէնը, յետագային՝ երկար տարիներ դասախօսած նոյն հաստատութեան մէջ: 1994ին կարճ ժամանակով Դաշնակցութեան պատմութիւն աւանդած է Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան Ֆակուլտետին մէջ:

Մահացած է Պէյրութ, 16 Մարտ 2001ին՝ յետ երկարատեւ հիւանդութեան:

ԱՐԱ ՍԱՆՃԵԱՆ

ՌՈՊԵՐՏ ՃԵՊԵՃԵԱՆ
(1909-2001)

26 Մարտ 2001ի երեկոյեան, Հալէպի իր բնակարանին մէջ մահկանացուն կը կնքէր սփիւռքի երիցագոյն մտաւորականներէն՝ ակնաբոյժ Ռոպերտ Ճեպեճեան:

Ծնած է Այնթէպ, 2 Օգոստոս 1909ին: Նախնական, միջնակարգ եւ երկրորդական ուսումը ստացած է Հալէպի եւ Պէյրութի հայ եւ օտար տարբեր վարժարաններու մէջ: 1934ին աւարտած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանի բժշկագիտական բաժինը, իսկ 1938-39ին մասնագիտացած՝ Ֆրանսայի մէջ:

Վերադառնալով Հալէպ, Ճեպեճեան ձեռնամուխ եղած է ո՛չ միայն քաղաքին եւ գաղութին կեանքը բժշկականօրէն բարելաւելու, այլեւ անոր մշակութային մթնոլորտը բարգաւաճելու աշխատանքներուն:

Որպէս ակնաբոյժ հեղինակած է կարգ մը շատ կարեւոր նորարարութիւններ Սուրիոյ եւ Միջին Արեւելքի տարածքին, ինչպէս՝ թրաքոմայի կանխարգելումն ու բուժումը՝ մինչեւ անոր ի սպառ ջնջումը երկրէն, աղիներու լայնացում, ակնաբաղանթի փոխում, մահացած մարդոց ակնաբաղանթի օգտագործում, եւլն.: 1952ին Հալէպի մէջ հիմնած է Ճեպեճեան Ակնաբուժարանը: Նմանապէս, Հալէպ իրեն կը պարտի 1955ին Գալուստ Կիւլպէնկեան Հաստատութեան յատկացումով հիմնուած աչագուրկներու Ապու ալ-Ալաա ալ-Մաարի դպրոցը: 1970ին Երեւանի մէջ պաշտպանած է թեկնածուական աւարտաճառ:

Իր մասնագիտական աշխատանքներուն կողքին, Ճեպեճեան ունեցած է մտաւորական բեղուն գործունէութիւն, ինչպէս նաեւ յարգելի ներդրում՝ գիր ու գրականութեան կալուածին մէջ:

Կարեւոր կեդրոն մըն է 1971ին Ճեպեճեանի մահացած տիկնոջ յիշատակին հիմնուած եւ վերջինիս անունը կրող Վիոլետ Ճեպեճեան գրադարանը, ուր հաւաքուած են սուրիահայ գաղութի մամուլը, լուսանկարներու ճոխ հաւաքածոյ մը եւ այլ արխիւային նիւթեր:

Հակառակ անոր, որ 1975էն Հալէպի մէջ լոյս տեսնող *Գեղարդ Սուրիահայ Տարեգիրքը* սկիզբը եղած է հրատարակութիւնը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, եւ խմբագրուած՝ Հայկ Պարիկեանի կողմէ, այդ պարբերականի գաղափարը յղացողն ու շարժիչ ոյժը միշտ ալ Ճեպեճեանը եղած է: Ան ջանասիրաբար աշխատակցած է իր ողջութեան օրօք լոյս տեսած բոլոր հատորներուն, իսկ Դ. հատորէն (1991) սկսեալ անմիջա-

կանօրէն մասնակցած՝ այլեւս Վիոլետ Ճեպենեան Գրադարանի հովանիին ներքոյ լոյս տեսնող պարբերագիրքի խմբագրման աշխատանքներուն: Իր հաւաքած արխիւներուն հիման վրայ է, որ Դ. հատորը նուիրուեցաւ սուրիահայ գաղութի 1910-60ի մարմնամարզական կեանքին:

Զանազան պարբերականներու մէջ ցրուած անհամար մասնագիտական յօդուածներու կողքին, Ճեպենեան հեղինակած կամ խմբագրած է նաեւ հայագիտութեան առնչուող քանի մը գրքոյկներ եւ ալպոմներ, ինչպէս *Հայ Բժշկութեան Պատմութիւնը եւ Հայ-Արաբ Բժշկական Դպրոցներու Կապերը* (1967, արաբերէն թարգմ.՝ 1968), *Հալէպի Մեծանուն Բժշկապետ Ա. Ա. Աբջուճեան եւ Իր Գործը* (1969, արաբերէն թարգմ.՝ 1971), *Մտերիմ Ջրոյց՝ Ուղղագրութեան Հարցին Շուրջ* (1970), *Ալպում Հալէպի Հայ Գաղթականներու Հիւղաւանին 1922-1936* (1986), *Բռնագաղթի Հայ Կարաւաններու Երթուղիները 1915ին Սուրիոյ Տարածքին* (1994), եւլն.: Մասնակցութիւն բերած է հայութեան մասին հայերէն եւ արաբերէն բազմաթիւ այլ հրատարակութիւններու պատրաստման:

1960ականներէն սկսեալ Սովետական Հայաստանի հետ Ճեպենեանի կապը եղած է առոյգ եւ օգտակար. ան մեծ ներդրում ունեցած է Երեւանի Մաշտոցեան Մատենադարանին՝ ձեռագիր մատեաններ եւ հնատիպ գիրքեր հաւաքելով եւ ուղարկելով: Խոբապէս հաւատացող մը ըլլալով հայրենիքին, իր ամբողջ կարելին ըրած է զայն իր լաւագոյնով ներկայացնելու սփիւռքին եւ ամբողջ աշխարհին: Արաբ ժողովուրդը իր միջոցով, բժշկական համագումարներու ընթացքին, ճանչցած է Սովետական Հայաստանն ու հոն կիրարկուող գիտութիւնը:

Ճեպենեան մինչեւ իր մահը ջատագովն էր ու մնաց հայ եւ արաբ ժողովուրդներու բարեկամութեան: Այդ ուղղութեամբ, առաջին քայլերը նետողներէն եղաւ ան: Այդ բարեկամութեան դրսեւորումին վերջին խորհրդանիշը Երեւանի մէջ կանգնելիք Արաբ Ժողովուրդին Հանդէպ Հայերուն Երախտիքը Խորհրդանշող Յուշարձանի գաղափարն էր, որուն իրագործումին ուղղութեամբ ան բազում ճիգեր թափեց:

Իր երկար կեանքին ընթացքին՝ ակնաբուժութեան մէջ իր ըրած ներդրումներուն ու հանրային գործունէութեան համար, Ճեպենեան արժանացած է բազմաթիւ գնահատականներու եւ շքանշաններու՝ Սուրիոյ Ակնաբոյժներու Սենտիքայի պատուանշան (1964), «Մեսրոպ Մաշտոց» շքանշան (Երեւան, 1968), Հալէպի Ակնաբոյժներու Սենտիքայի պատուանշան (1984), Հալէպի քաղաքապետարանի գնահատանքի գիր (1985), Սուրիոյ Ակնաբոյժներու Միութեան գնահատանքի գիր (1998), եւլն.: Ան պատուոյ անդամ էր Երեւանի Ակնաբոյժներու Միութեան:

Ճեպենեանի բեղուն եւ հետաքրքրական դէպքերով լեցուն կեանքի մանրամասնութիւնները արձանագրուած են հաճելի պատումով գրուած *Ինքնակենսագրութիւն* (1999) հատորին մէջ:

Ճեպենեան՝ իր մեկնումէն ետք, հալէպահայ գաղութի կեանքին, սուրիական ակնաբուժութեան եւ հայ-արաբ բարեկամութեան էջերուն մէջ մեծ անուն մը կը ձգէ:

ՍԱՐՈՒԻՇ ԵՐԱՍԵԱՆ

ԼԵՒՈՆ ՄԿՐՏՉԵԱՆ
(1937-2001)

Գրականագէտ, Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի ակադեմիկոս Լեւոն Մկրտչի Մկրտչեանը ծնուել է Ախալցխայում:

1952-54ին սովորել է ծովագնացութեան ուսումնարանում: 1958ին աւարտել է Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրական Ֆակուլտետի ռուսաց լեզուի եւ գրականութեան բաժինը եւ նոյն թուականից անցել՝ դասախօսական աշխատանքի: Եղել է Ռուս Լեզուաբանութեան եւ Թարգմանութեան Տեսութեան, ապա՝ Ռուս Գրականութեան ամբիոնների վարիչ, Ռուսաց Լեզուի եւ Գրականութեան Ֆակուլտետի դեկան: 1963ին, պաշտպանելով «Աւետիք Իսահակեանը եւ Ռուս Գրականութիւնը» թեզը, ստացել է բանասիրական գիտութիւնների թեկնածուի աստիճան, իսկ 1970ին, «Հայ Բանաստեղծութիւնը եւ ԺԹ.-Ի. Դարերի Ռուս Բանաստեղծները» թեզի պաշտպանութեամբ նրան շնորհուել է բանասիրական գիտութիւնների դոկտորի աստիճան:

Մկրտչեանը արժանացել է Հայաստանի գիտութեան վաստակաւոր գործչի կոչման (1981) եւ Հայաստանի պետական մրցանակի (1983): Կեանքի վերջին տարիներին, եղել է Երեւանի ճորտաբաց Ռուս-Հայկական (Սլաւոնական) Համալսարանի ռեկտորը:

Երեւանում հայերէն լոյս են տեսել Մկրտչեանի *Հայաստանի Բանաստեղծը* (1974), *Երէ Բարեկոնում Թարգմանիչներ Լինէին* (1976, նոյնը ռուսերէն՝ 1987), *Վիկեամ Սարոյեանը Մօտիկից* (1978), *Քաղցր է Լոյսը* (1980), *Ջրոյցներ Բանաստեղծի Հետ* (Համօ Սահեանի մասին, 1984, նոյնը՝ ռուսերէն, 1984), *...Իմանալ Ջրանս Հանճարոյ* (1985), *Մեքսիկական Պատմուածքներ Կամ Վերելք Խորհրդանշող Ոտնահետքեր* (1988) գրքերը:

Մկրտչեանը հրատարակել է նաեւ ռուսերէն գրականագիտական աշխատութիւններ, ակնարկներ, յուշագրութիւններ՝ *Աւետիք Իսահակեանը եւ Ռուս Գրականութիւնը* (Երեւան, 1963, 1975), *Խօսք Աւետիք Իսահակեանի Մասին* (Երեւան, 1975), *Աւետիք Իսահակեանը Ռուսերէն* (Երեւան, 1964), *Բանաստեղծութիւնների եւ Թարգմանութիւնների Մասին* (Երեւան, 1965), *Հայ Բանաստեղծութիւնը եւ ԺԹ.-Ի. Դարերի Ռուս Բանաստեղծները* (Երեւան, 1968), *Բարին Ընդ Չեզ* (Երեւան, 1971), *Հարազատ Գծեր* (Երեւան, 1973), *Քաղցր է Լոյսը* (Երեւան, 1977), *Բան Ժամանակաց* (Մոսկուա, 1977), *Հարազատն Ու Մտերիմը* (Մոսկուա, 1978), *Բանաստեղծու-*

թիւնը՝ Լեզուից Լեզու (Երեւան, 1978), *Լոյսը Բարիք է* (Երեւան, 1981), *Հաստութեան Վկայական Կամ Ա.ն Ընկալ, Բ.ն Կորաւ* (Երեւան, 1983), *Այո, Բոլոր Կողմերից Մեզ Ազնիւ Մտքեր Կը Գան* (յօդուածների ժողովածու, Մոսկուա, 1983), *Կօշկագործ Ռոստոմը, Վիլեամ Սարոյեանը Եւ Միւսները* (պատմուածքներ, Մոսկուա, 1985), *Մի Պատուից Հող Հայոց Հողին. Չինգիզ Այթմատովի Մասին* (Երեւան, 1988), *Բաց Պատուհաններով Տունը* (Երեւան, 1989), *Աննա Ախմատովա. Կեանքը Եւ Թարգմանութիւնները* (Եղուարդ, 1992), *Առանց Քեզ, Կայսին, Եւ Քեզ Հետ Միասին* (Երեւան, 1997), *Կոյր, Բայց Ոչ Այրչափ* (Երեւան, 1998), *Յարութիւն Կալենց. Ինչպէս Նրան Գիտէի* (Երեւան, 2000), *Այսպէս Էր Սահմանուած Ճակատագրով* (Երեւան, 2000):

Սկրտչեանի խմբագրութեամբ, ծանօթագրութիւններով եւ մեկնաբանութեամբ ռուսերէն եւ այլ լեզուներով լոյս են տեսել հայ միջնադարեան բանաստեղծների եւ հայ նոր գրականութեան դասականների մի շարք գրքեր, ինչպէս՝ *Հայ Միջնադարեան Քնարերգութիւն* (Լենինգրադ, 1972), *Ընթերցելով Նարեկացուն* (գիրք Ա-Բ, Երեւան, 1974-99), *Հայ Դասական Քնարերգութիւն* (հ. Ա-Բ, Երեւան, 1977), *Ժամանակի Խօսքը. Ե.-ԺԸ. Դարերի Հայ Դասական Քերթութիւն* (Մոսկուա, 1977), *Հայաստանի Բանաստեղծները* (Լենինգրադ, 1979), *Միջնադարեան Հայ Գրականութիւն* (Երեւան, 1981), *«Վահագնի Ծնունդից» Մինչեւ Պարոյր Սեւակ* (հ. Ա.-Բ, Երեւան, 1983), հայերէն եւ այլ լեզուներով՝ *Հազար Ու Մէկ Հայրէն* (Երեւան, 1975), *Հայ Դասական Քնարերգութիւն* (Երեւան, 1986), *Հայ Միջնադարեան Քնարերգութիւն. Հնագոյն Շրջան, Միջնադար (Ե.-ԺԸ. Դարեր)* (Երեւան, 1996), *Գրիգոր Նարեկացի. Խոռվայոյզ՝ Բախի Խորալների Պէս* (Երեւան, 1999) եւլն.:

Սկրտչեանը մահացաւ 2001ի Օգոստոսին, Երեւանում:

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲԵԱՆ
(1925 - 2001)

Պատմաբան եւ գրող Բագրատ Արշակի Ուլուբաբեան ծնած է այդ ժամանակ Խորհրդային Ադրպէյճանի վարչական ենթակայութեան տակ գտնուող Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Մարտունիի Շրջանի Մուշկապատ գիւղը, 9 Դեկտեմբեր 1925ին:

Ուլուբաբեան սկզբնական կրթութիւնը ստացած է ծննդավայր Մուշկապատ եւ դրացի Հադրութի գիւղերուն մէջ: 1944ին աւարտած է Շուշիի Ուսուցչական Ինստիտուտը, իսկ 1946ին՝ Պաքուի Մանկավարժական Ինստիտուտի Բանասիրական Ֆակուլտետի Հայոց Լեզուի եւ Գրականութեան Բաժինը: Այնուհետեւ՝ որպէս ուսուցիչ, ան կարճ ժամանակ պաշտօնավարած է Մարտունիի Շրջանի Գիշի գիւղին մէջ, ինչպէս նաեւ դասախօսած Ստեփանակերտի Ուսուցչական Ինստիտուտին մէջ: 1947ին անդամակցած է Խորհրդային Միութեան Կոմունիստական Կուսակցութեան: 1949-67ին

ղեկավարած է Խորհրդային Միութեան Գրողներու Միութեան Լեռնային Ղարաբաղի բաժանմունքը: Այդ տարիներուն, ան միաժամանակ յաջորդաբար վարած է նաեւ *Սովետական Ղարաբաղ* մարզային պաշտօնաթերթի խմբագիրի, Լեռնային Ղարաբաղի մշակոյթի մարզային վարչութեան պետի, մարզային խորհուրդի գործադիր կոմիտէի նախագահի տեղակալի պաշտօնները: Այդ ընթացքին, Ուլուբաբեան կարեւոր դեր խաղացած է Ատրպէյճանին մաս կազմող, բայց գերազանցապէս հայաբնակ մարզի հայկական դիմագիծը պահպանելու, հոն հայերէնի գործածութեան թափ տալու ուղղութեամբ:

Նոյն ատեն, յատկապէս՝ 1960ականներու առաջին կիսուն, Ուլուբաբեան քանիցս նախաձեռնած ու կազմակերպած է Լեռնային Ղարաբաղի Ատրպէյճանէն անջատումն ու Խորհրդային Հայաստանին կցումը պահանջող հաւաքական նամակներու առաքումը Մոսկուա՝ Խորհրդային Միութեան կեդրոնական իշխանութիւններու հասցէով: 1965ի Յունիսին, օրինակ, ան Մոսկուա տարած է այդ ուղղութեամբ ղարաբաղցի 13 ականաւոր գործիչներու խնդրագիրը: Ատրպէյճանական իշխանութիւնները բնականաբար դժգոհանքով ընդունած են Ուլուբաբեանի այս գործունէութիւնը: Իրենց ճնշման տակ, վերջիվերջոյ 1967ին հեռացուած է իր պաշտօնէն, իսկ 1968ի գարնան ստիպուած է տեղափոխուիլ ու վերջնական բնակութիւն հաստատել Հայաստան:

Երեւանի մէջ, Հայաստանի կառավարութիւնը անմիջապէս Ուլուբաբեանը ապահոված է բնակարանով: Ան կարճ ժամանակ աշխատած է Հայաստանի մշակոյթի նախարարութեան, ապա՝ իբրեւ սենարիստ՝ Երեւանի կինօսթուդիոյին մէջ: 1969ին, ան պաշտպանած է պատմութեան գծով թեկնածուական ատենախօսութիւն՝ «Արցախի Պատմութիւնը Հնագոյն Ժամանակներից Մինչեւ X Դարը» խորագրով: Ուլուբաբեան չէ յաջողած այդ օրերուն Խորհրդային Միութեան մէջ քաղաքական առումով դիւրազգաց համարուող թեմայի շուրջ սոյն աշխատութիւնը տպել տալ, բայց՝ գիտական իր նոր աստիճանին շնորհիւ, կրցած է աշխատանքի անցնիլ Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Պատմութեան Ինստիտուտէն ներս՝ իբրեւ աւագ գիտաշխատող, ուր շարունակած է Արցախի միջնադարեան պատմութեան ու մշակոյթի այլազան հարցերու լուսաբանման միտող իր գիտական աշխատանքները: 1973ին ստացած է պատմական գիտութիւններու

դոկտորի կոչում իր *Խալչեի Իշխանութիւնը X-XVI Դարերում* (տպուած՝ 1975ին) ուսումնասիրութեան համար:

Ուլուբաբեանի Երեւանի մէջ տարած հետազօտական աշխատանքները ես կասկածանք յառաջացուցած են ատրպէյճանական իշխանութիւններուն մօտ, որոնք ցոյնիսկ Ուլուբաբեանի գիտական գործունէութեան ետին տեսած են քաղաքական նպատակ: Վերջիններուս բողոքին վրայ, օրինակ, Ուլուբաբեան ստիպուած եղած է իր դոկտորական ատենախօսութիւնը Մոսկուայի մէջ վերապաշտպանել՝ այս անգամ ատրպէյճանցի մասնագէտներու ներկայութեան: Ատրպէյճանական կասկածները, ի հարկէ, անհիմն չեն եղած: Ուլուբաբեան՝ ցոյնիսկ իր երեւանեան «ապստրավայրին» մէջ, մնացած է Լեռնային Ղարաբաղը վարչականօրէն Խորհրդային Հայաստանին միացնելու գործին նուիրեալ մը: Ան 1975ին Խորհրդային Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան առաջնորդ Կարէն Դեմիրճեանին ներկայացուցած է Ղարաբաղի աննախանձելի իրավիճակին մասին գաղտնի, ընդարձակ զեկուցագիր մը:

Խորհրդային վարչակարգի տարիներուն Երեւանի մէջ լոյս տեսած Արցախի միջնադարեան պատմութեան ու մշակոյթին նուիրուած Ուլուբաբեանի պատմագիտական մենագրութիւններէն պէտք է յիշատակել նաեւ *Դրուագներ Հայոց Արեւելից Կողմանց Պատմութեան* (1981) ու *Գանձասար* (1981) հատորները: Վերջինս կը ներկայացնէ Գանձասարի վանական համալիրի ստեղծման պատմութիւնը, ճարտարապետական նկարագիրը եւ անոր որմերուն ու գերեզմանաքարերուն վրայ փորագրուած արձանագրութիւնները: Նոյնպիսի հարցերու շուրջ Ուլուբաբեան հրապարակած է նաեւ բազմաթիւ գիտական յօդուածներ՝ Հայաստանի եւ սփիւռքի գիտական հանդէսներուն, ներառեալ՝ *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին մէջ:

Հայոց պատմութեան կ'առնչուին նաեւ այդ տարիներուն լոյս տեսած Ուլուբաբեանի հայ-ռուսական պատմական կապերն ուսումնասիրող *Ռուկէ Շղթայ* (1979) եւ գլխաւորաբար դպրոցական պատանիներու համար գրուած *Ջրուցարան. Ծաղկաբաղ Հայոց Պատմութեան* երկասիրութիւնները: Վերջինս Հայաստանի պատմութեան ու մշակոյթի մասին պատմագեղարուեստական ակնարկներու իւրօրինակ ժողովածու է, որ ունեցած է երկու հրատարակութիւն: Առաջին անգամ՝ երկու հատորով լոյս տեսած է 1987-88ին: Կարեւոր շտկումներով, վերանայումներով ու յաւելումներով լրացուած երկրորդ հրատարակութիւնը հրապարակ իջած է 1991ին: 1982ին հրատարակուած է նաեւ Ե. դարու պատմիչ Ղազար Փարպեցիի *Հայոց Պատմութեան* Ուլուբաբեանի կատարած աշխարհաբար թարգմանութիւնը:

1988ին Ղարաբաղեան Շարժման ծնունդէն եւ 1991ին Հայաստանի վերանկախացումէն ետք, Ուլուբաբեան շարունակեց անդրադառնալ Արցախի հին ու միջնադարեան, բայց այժմ նաեւ արդի պատմութեան հարցերուն: *Արցախեան Գոյապայքարը* (1994) աշխատութիւնը գրուած է 1988-89ին ու լուսարձակի տակ կ'առնէ 1918-87ի քաղաքական անցուդարձը: *Արցախի Պատմութիւնը Սկզբից Մինչեւ Մեր Օրերը* (1994) երկասիրութիւնը աւելի ընդհանուր բնոյթ ունի, իսկ *Արցախեան Գոյապայքարի Տարեգրութիւն* (1997) մեծածաւալ գործը 1988-94 թուականներու իրադարձութիւններուն իւրօրինակ ժամանակագրութիւն է՝ համեմուած հեղինակի անձնական մտո-

րումներով ու գնահատումներով: Այս գծով Ուլուբաբեանի ամենավերջին երկը *Հայոց Արեւելից Կողմանց Եկեղեցին եւ Մշակոյթը* (1998) ուսումնասիրութիւնն էր:

Ուլուբաբեան հեղինակած է նաեւ շարք մը գեղարուեստական երկեր. *Երգեր Աշխատանքի եւ Խաղաղութեան* (1952), *Այս Առաւօտ* (1956) բանաստեղծութիւններու եւ *Այգեստան* (1960), *Թարթառ* (1963), *Հատիկը Չի Մահանում* (1967), *Կանքեղ* (1976) պատմուածքներու եւ վիպակներու ժողովածուները, *Հայրենի Հող* (1959) ու *Մարդը* (1963) վէպերը: Վերյիշեալներէն *Թարթառ* վիպակը թարգմանուած է ռուսերէնի (*Վիպակ Ընկերոջս Մասին* խորագրով) եւ այլ լեզուներու, արժանացած՝ խորհրդային հեղինակաւոր *Տրուժպա Նարոտով* («Ժողովուրդներու Բարեկամութիւն») հանդէսի մրցանակին: Խորհրդային տարիներուն, բեմադրուած են նաեւ Ուլուբաբեանի *Հողի Լեզուն* ու *Ո՞ւմ Հետ Ես Դու* թատերական գործերը:

Քաղաքական պատճառներով բաւականին դժուար եղած է 1918ի քաղաքական իրադարձութիւններու ֆոնի վրայ շարադրուած *Մարդաբապատ* վէպի ծննդոցը: Այս ժամանակաշրջանը հոգեհարազատ էր Ուլուբաբեանին, որուն հայրը իբրեւ զինուոր մասնակցած էր հայոց պատմութեան մէջ ճակատագրական դեր խաղցած այդ հերոսամարտին: Հեղինակի եզրակացութիւններն ու բնութագրումները, սակայն, միշտ չէ որ համահունչ էին խորհրդային պետական գաղափարախօսութեան կաղապարներուն: Վէպը նախ տպուեցաւ Պէյրութ՝ երկու հատորով, 1987-89ին, եւ միայն Արցախեան Շարժման թափ առնելէն ետք՝ Երեւանի մէջ, 1988ին:

Ուլուբաբեան իր գիտական ու հասարակական գործունէութեան համար պարգեւատրուած է Հայաստանի Հանրապետութեան «Մովսէս Խորենացի» եւ «Մարշալ Յովհաննէս Բաղրամեան» մետալներով, արժանացած է Լեռնային Ղարաբաղի կառավարութեան Եղիշէի անուան մրցանակին, Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի եւ Հայաստանի Գրողների Միութեան պատուոգրերուն:

Մահացած է Հայաստանի Եղուարդ գիւղը, 19 Նոյեմբեր 2001ին՝ յետ երկարատեւ հիւանդութեան:

ԱՐԱ ՍԱՆՃԵԱՆ

ՆԱՄԱԿԱՆԻ

Հայկազեան Հայագիտական Հանդէսի Ի. հատորի (2000) էջ 480-82ի վրայ լոյս տեսած Արմէն Այվազեանի *Հայաստանի Պատմութեան Լուսաբանումը Ամերիկեան Պատմագրութեան Մէջ* գիրքին վերաբերեալ Լեւոն Ատոյեանի գրախօսականին կապակցութեամբ, *Հանդէսիս* խմբագրութիւնը Բրիտանական Թանգարանի (Լոնտոն) հայկական բաժնի պատասխանատու Տէր Ներսէս (Վրէժ) Ներսէսեանէն ստացած է "Debatable Freedoms" խորագրուած անգլերէն նամակ մը, որուն *Հանդէսիս* եւ սոյն գրախօսականին վերաբերող հատուածը կը հրատարակենք ստորեւ.-

Freedom of speech must be a, if not the, core guarantor of any genuine discussion. The editorial board of the *Society for Armenian Studies* published my article 'The Art of the Interpreter' in the 1999 issue of their *Journal of the Society for Armenian Studies* (pp. 125-134). The article was a review essay on collection of studies offered to Nina Garsoian by her friends, colleagues, and former pupils. I am astonished to read that in a recent review published by Levon Avdoyan in *Haikazian Hayagitakan Handes* (Beirut 2000), my above article is described as belonging to "the Buniatovistic school of Armenology" and grandly declares that the editorial board of the *Society for Armenian Studies* should not have been allowed to publish it. I detect in this attitude an intellectual shallowness and bigotry which does not have the wellbeing of Armenian studies at heart. Mr. Levon Avdoyan who serves on the editorial board along with Prof. R. Thomson describes my articles criticising his and that of Prof. Thomson work as being 'insanity in the field of Armenian history' because I employ 'methodology and bag of tricks similar to Buniatov.' This borders on the comical coming from an author who pens an article entitled 'Afro-Centrism, Armeno-Centrism, and uses of History' which I had criticised. The warped logic of Mr. Avdoyan is also evident, for while he appears to describe the Armenian scholars of the Armenian Academy of Sciences as 'moribund', 'totalitarian' is also the same person who recommends to the board of the Society for Armenian Studies that it was 'unfortunate that they allowed my article to be published' in their journal. It is to put it mildly, puzzling that the world's foremost home of freedom of speech is also the home of some buddies who peddle such odious laundered descriptions of Armenian studies done outside America.

Revd Dr Vrej Nersessian
Curator
Hebrew & Christian Middle Eastern Section
The British Library

ՆԿԱՏՈՒԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Հայկազեան Հայագիտական Հանդէսի Ի. հատորի (2000) մէջ սպրդած վրիպակներէն, կ'ուզենք ձեր ուշադրութիւնը հրաւիրել հետեւեալներուն վրայ.-

• Արա Սանճեանի «Համառօտ Ուրուագիծ Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամբիոնի 45ամեայ Պատմութեան (1955-2000)» յօդուածի 18րդ ծանօթագրութիւնը (էջ 66) կարդալ հետեւեալ կերպ.- «Լիբանանեան պետական հրամանագրով, 1992ին, Հայկազեան Գոլէճը վերանուանուեցաւ Հայկազեան Համալսարանական Գոլէճ, իսկ 28 Դեկտեմբեր 1996ին՝ Հայկազեան Համալսարան»: Նախորդ հատորին մէջ, զոյգ հրամանագիրներու թուականները շփոթուած էին:

• Արմէն Այվազեանի *Հայաստանի Պատմութեան Լուսաբանումը Ամերիկեան Պատմագրութեան Մէջ* գիրքին վերաբերեալ Լեւոն Աւտոյեանի գրախօսականին մէջ, էջ 482ի երկրորդ պարբերութեան առաջին նախադասութիւնը (տող 3-4) կարդալ հետեւեալ կերպ.- "One can amply demonstrate that such inanity in the field of Armenian history exists in the Diaspora." Նախորդ հատորին մէջ թիւրիմացաբար տպուած էր՝ "insanity."

Հանդէսիս խմբագրութիւնը ներողամտութիւն կը խնդրէ եթէ խմբագրական ու տպագրական աշխատանքի ընթացքին մեր անուշադրութեան հետեւանքով տեղ գտած վերոնշեալ վրիպակները որեւէ ձեւով պատճառ դարձած են հեղինակներուն արտայայտած միտքերուն ոչ ճիշդ ընկալման:

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Հայկազեան Հայագիտական Հանդէս *տարեգիրքը լոյս կ'ընծայուի 1970 թուականէն, Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամբիոնին կողմէ։*

Ան կ'ընդգրկէ Հայաստանի եւ Հայութեան պատմական, հնագիտական, աշխարհագրական, բանասիրական, կրօնական, լեզուագիտական, գրական, ազգագրական, մշակոյթի (կրթութեան, թատրոնի, սինեմարուեստի, երաժշտութեան, պարարուեստի, ճարտարապետութեան, կերպարուեստի, մամուլի, եւլն.), տնտեսագիտական, իմաստասիրական, բնական, քաղաքական եւ ընկերային գիտութիւններու բնոյթի նիւթեր։

Հայկազեան Հայագիտական Հանդէսի *մէջ կը հրատարակուին գիտական մակարդակով, առարկայական հայերէն, անգլերէն, արաբերէն, ֆրանսերէն յօդուածներ, ուսումնասիրութիւններ, հետազօտութիւններ, վերլուծումներ, հրապարակումներ, յուշագրութիւններ, գրախօսականներ, հաղորդումներ, մատենագիտական ցանկեր եւ մահագրականներ։*

Ներկայացուած աշխատակցութիւնները պարտին ըլլալ անտիպ եւ հրատարակումի համար այլուր յղուած չըլլան։ Անոնք նախընտրաբար ըլլալու են չուրջ 20—25 մեքենագիր էջ։ Փափաքելի է աշխատակցութիւններն ստանալ համակարգչային չարուածքի վրայ։

Իւրաքանչիւր աշխատակցութեան ծանօթագրութիւններու բաժինին մէջ պէտք է նշուին օգտագործուած գիրքին եւ հեղինակին անունը, հրատարակութեան տարեթիւը եւ էջը. յօդուածներու պարագային՝ թերթին անունը, հրատարակութեան տարեթիւը եւ էջաթիւը։ Աշխատակցութիւնը պարտի ունենալ անգլերէն կամ հայերէն հակիրճ ամփոփում մը, չուրջ՝ 150 բառ։

Հրատարակելի բոլոր աշխատակցութիւնները, ըստ կարիքի, կ'ենթարկուին քերականական եւ ուղղագրական խմբագրումի։ Այլ փոփոխութիւններու պարագային տեղեակ կը պահուի նոյնինքն հեղինակը։ Հայագիր յօդուածները կը հրատարակուին հայերէնի դասական ուղղագրութեան սկզբունքներով։

Աշխատակցութիւններուն կրնան կցուիլ նաեւ կարելի լաւագոյնս պատճինուած կամ լուսանկարուած պատկերներ, գծանկարներ եւ քարտէսներ: Հեղինակը պարտի նշել անոնց աղբիւրը եւ ապահովել հրատարակման արտօնութիւնը:

Հրատարակուած նիւթերը ոչ–անպայման կ'արտացոլացնեն խմբագրութեան տեսակէտը:

Ծօդուածներու, թղթակցութիւններու, բաժանորդագրութեան, նախորդ թիւերու ստացումի եւ այլ հարցերով պէտք է գրել հետեւեալ հասցէին.–

Haigazian Armenological Review
P.O.Box 11-1748 Beirut-Lebanon
Fax: 01-349230/1, 01-353010/1/2
Email:review@haigazian.edu.lb

Իւրաքանչիւր աշխատակցութեան ստացումը անմիջապէս կ'իմացուի հեղինակին, իսկ հրատարակման որոշումը՝ աշխատակցութեան ստացումէն առաւելագոյնը երեք ամիս ետք: Մերժուած աշխատասիրութիւնները կը վերադարձուին հեղինակներուն:

Հեղինակներ կամ հրատարակիչներ, որոնք կը փափաքին իրենց հրատարակած հատորին գրախօսուիլը, պարտին խմբագրութեան յղել այդ հատորի երկու օրինակ, որոնցմէ մին կը յանձնուի գրախօսողին, իսկ երկրորդը՝ Հայկազեան Համալսարանի Հայագիտական Գրադարանին:

Հայկազեան Հայագիտական Հանդէսի մէջ հրատարակուող որեւէ նիւթէ կարելի է մէջբերում–յղում կատարել: Փափաքելի է որ այդ մասին տեղեակ պահուի խմբագրութիւնը:

Հրատարակուած աշխատասիրութեան հեղինակ անվճար կը ստանայ Հանդէսի տուեալ հատորէն երկու օրինակ եւ իր յօդուածէն 20 օրինակ առանձնատիպ:

NOTES TO CONTRIBUTORS

Haigazian Armenological Review is published annually from 1970 by the Department of Armenian Studies at Haigazian University.

The review is devoted to studies concerning Armenia and the Armenians. These may include works dealing with history, archaeology, geography, philology, religion, linguistics, literature, ethnography, culture (education, theatre, cinema, music, dance, architecture, plastic arts, mass media, etc.), economics, philosophy, politics, natural, and social sciences, previously unpublished documents, memoirs, reviews, briefings, bibliographical lists and necrologies in Armenian, Arabic, English and French.

Manuscripts submitted to *Haigazian Armenological Review* should preferably be 20-25 typewritten pages in length. They will be considered on the understanding that they are not being offered for publication elsewhere, and have not been published, in any language. Presentation of manuscripts submitted for consideration on disc with hard copy is preferred. All discs are acceptable.

Authors should provide in the endnotes the full name of the author, title, the year of publication and relevant page numbers of all the books they have cited. In the case of cited articles, they should mention the title of the book or journal in which the articles appear, the numbers of volume and part, the year of publication, and relevant page numbers. Submitted manuscripts must include a 150-word summary in Armenian or English.

The editors reserve the right to copyedit manuscripts to conform to the review's style. Authors will be informed before publication in case of more substantial editing. Spelling in articles published in Armenian will be edited to conform to the rules of classical Armenian orthography.

Authors may submit with their contributions printable photographs, tables, figures, and maps on condition that they mention their sources and take responsibility for obtaining permission to publish any such material under copyright.

All opinions expressed (except those in the Editorial) are those of the individual authors and not necessarily of *Haigazian Armenological Review* or Haigazian University.

Manuscripts, correspondence, subscription queries, and inquiries regarding back issues should be addressed to:

Haigazian Armenological Review P. O. Box 11-1748, Beirut Lebanon.
Fax: (01) 341230/31 or (01) 352010/11/12
Email: review@haigazian.edu.lb

All submissions received will be acknowledged immediately. Decisions concerning publication will be conveyed to the authors within three months of the date of receipt of the submitted contributions. Manuscripts not accepted for publication will be returned to their authors.

Authors or publishers who wish to have their titles considered for review should send two copies of the said publication to the Editor. One copy will be passed on to the reviewer, while the second will be deposited in the Armenian Library of Haigazian University and become available to the general public.

Quotations can be made from contributions published in *Haigazian Armenological Review*. The Editorial Board likes to be kept informed in this regard.

Authors are entitled to 20 offprint and two copies of the volume in which their contribution is published.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅՕԴՈՒԱԾ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերժիւէ Սվազլեան. *Վարդավառի Հեթանոսական Ակունքները Արեւմտահայոց Բանահիւսութեան Մէջ* 9

Վրէժ Վարդանեան. *Հայոց Արտաւազդ Բ. Թագաւորը Հռոմէա-Պարթեւական Պատերազմների Դիւանագիտական Հանգոյցներուն* 31

Հմայեակ Մարտիրոսեան. *Պեւտինգերեան Քարտէզ· Առաջաւոր Ասիայի Հատուածամասերը* 53

Պարոյր Մուրադեան. *Բնագրագիտական Դիտարկումներ Խորենացու Պատմութեան Հեղինակային Իսկագիրը Վերականգնելու Առնչութեամբ* 77

Ռաֆայէլ Մաթեւոսեան. *Տայքի Քաղաքական Անցքերի Ակնարկ (Դ.-Ժ. Դարեր)* 89

Եղիա Ներսէսեան. *Ցաւելեալ Փաստարկներ՝ Կիլիկիոյ Հայոց Ոսկեդրամներու Վաւերականութեան Շուրջ* 113

Արսէն Յակոբեան. *Հայ-Թաթերի Տարաբաչխուածութեան Ու Տեղահանութիւնների Պատմութիւնից (ԺԸ. Դարի Սկիզբ - ԺԹ. Դարի Վերջ)* 125

Արթիւր Պէյլէրեան. *Ազատ-Որմնադրութեան Մուտքը Օսմանեան Կայսրութիւն Եւ Պոլսոյ Հայկական «Սէր» Օթեակը ԺԹ. Դարուն* 143

Բախտիար Յովակիմեան. *Շեքսպիրի Մուտքը Հայ Թատրոն* 183

Արծուի Բախչինեան. *Մարսէյէզը Եւ Հայ Իրականութիւնը* 199

Արա Յակոբեան. *Եւրոպական Մշակոյթի Արձագանգները Վարդան Մախոխեանի Ստեղծագործութիւններուն* 219

Վաչագան Գրիգորեան. *Ազատութեան Խնդիրը Լեւոն Շանթի Շղթայուածը Դրամայուն* 237

Պէպօ Սիմոնեան. *Բարձրակէտը՝ Հայ Մտքի Բարձր Ոլորտներու Հանդիսարանը* 261

Վարդան Մատթէոսեան. *Արժանթինի Հայ Կաթողիկէ Համայնքին Ծագումն Ու Զարգացումը* 291

Զաւէն Մսըրլեան. *Հայոց Մասնակցութիւնը Լիբանանի Ֆրանսական Հոգատարութեան Ժամանակաշրջանի Խորհրդարանական Ընտրութիւններուն* (1934-1943) 307

Միհրան Մինասեան. *Հայ Պարբերական Մամուլի 33 Նորայայտ Անուններ* 347

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Վարդի Քեշիշեան. *Երկու Անտիպ Վաւերաթուղթ Մարաշի 1920ի Ազէտին Մասին* 363

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Կոստան Զարեան, «Սպանիա», «Նաւատոմար» եւ «Դէպի Արարատ», յառաջաբանները եւ ծանօթագրութիւնները գրեց Եուրի Խաչատրեան (Վարդան Մատթէոսեան) 383

«Լուսաւորութիւն եւ Սփիւռք. Հայկական ու Հրէական Պարագանները», խմբագիրներ՝ Ռիչըրտ Ճովհաննէսեան եւ Տէյվիտ Մայըրզ (Արա Սանճեան) 405

«Լրատուութիւն Հայկական Ցեղասպանութեան. Թղթակցութիւններ Հայլիճաքա Հերալտի Մէջ 1894-1922», կազմեց Քաթիա Փելիքէքեան (Զաւէն Մսըրլեան) 411

«Հայկական կինօ 1924-1999. Լիակատար կատալոգ», կազմողներ՝ Ս. Գուլեան, Ա. Երզնկեան, Ա. Թադեւոսեան եւ այլք (Սիրանոյշ Գալստեան) 413

ՀԱՑԿԱՋԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ընդհանուր Ակնարկ Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամբիոնի Հրապարակային Գործունէութեան Վրայ (1 Հոկտեմբեր 2000 - 31 Դեկտեմբեր 2001) 415

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Հրանտ Թամրազեան (1926-2001), Հրաչ Տասնապետեան (1928-2001), Ռոպերտ Ճեպեճեան (1909-2001), Լեւոն Մկրտչեան (1937-2001), Բագրատ Ուլուբաբեան (1925-2001) 443

ՆԱՄԱԿԱՆԻ 454

ՆԿԱՏՈՒԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ 455

TABLE OF CONTENTS

ARTICLES AND STUDIES

Verjiné Svazlian. The Pagan Origins of the Feast of *Vartavar* in Western Armenian Folklore 9

Vrej Vardanian. King Artavazd II of Armenia in the Diplomatic Intricacies of Roman-Parthian Wars 31

Hmayak Martirosian. Tabula Peutingeriana: The Segments of Western Asia 53

Paruyr Muradian. Observations Regarding the Reconstruction of the Original Text of the *History* of Movses Khorenatsi 77

Rafayel Matevosian. A Review of Political Events in Taik (5th-10th cc.) 89

Y. T. Nercessian. Additional Information on the Authenticity of Cilician Armenian Gold Coins 113

Arsen Hakobian. From the History of the Demographic Distribution and Deportations of Armenian-Tats (early 18th - late 19th cc.) 125

Arthur Beylerian. The Introduction of Freemasonry in the Ottoman Empire in the Nineteenth Century and the Armenian *Ser* Lodge in Constantinople 143

Bakhtiar Hovakimian. The First Performance of a Shakespeare Play in the Armenian Theatre 183

Artsvi Bakhchinyan. *La Marseillaise* and the Armenians 199

Ara Hakobian. The Echoes of European Culture in the Paintings of Wardan Mahokian 219

Vachagan Grigorian. The Problem of Freedom in Levon Shant's play, 'The Chained One' 237

Bebo Simonian. The Periodical *Bartsravank*: An Arena for Armenian High Culture 261

Vartan Matiossian. The Origins and Development of the Armenian Catholic Community in Argentina 291

Zaven Messerlian. Armenian Participation in the Lebanese Legislative Elections During the French Mandate, 1934-1943 307

Mihran Minasian. 33 Newly Discovered Titles of the Armenian Periodical Press 347

UNPUBLISHED DOCUMENTS

Varty Keshishian. Two Unpublished Documents on the 1920 Tragedy in Marash 363

BOOK REVIEWS

Kostan Zarian. "Spania", "Navatomar" and "Depi Ararat", with introductions and annotations by Yuri Khachatrian (*Vartan Matiossian*) 383

Enlightenment and Diaspora: The Armenian and Jewish Cases, edited by Richard G. Hovannisian and David N. Myers (*Ara Sanjian*) 405

Heralding of the Armenian Genocide: Reports in The Halifax Herald 1894-1922, compiled by Katia Minas Peltikian (*Zaven Messerlian*) 411

Armenian Cinema 1924-1999: Comprehensive Catalogue, compiled by S. Gulian, A. Yerzinkian, A. Tadevosian et al. (*Siranush Galstyan*) 413

HAIGAZIAN UNIVERSITY

A General Overview of the Public Activities of the Department of Armenian Studies at Haigazian University (1 October 2000 - 31 December 2001) 415

NECROLOGY

Hrant Tamrazian (1926-2001), Hratch Dasnabedian (1928-2001), Robert Jebejian (1909-2001), Levon Mkrtchian (1937-2001), Bagrat Ulubabian (1925-2001) 443

LETTERS TO THE EDITOR 454

ERRATA 455

ՀԱՅԿԱԶԵԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՆԴԷՍ

ՏՊԱՔԱՆԱԿ՝ 400

ԳԻՆ՝ Լիբանան 30.000 Լ. Ոսկի
Արտասահման 20 Տոլար

HAIGAZIAN ARMENOLOGICAL REVIEW
HAIGAZIAN UNIVERSITY
P.O.Box 11-1748
BEIRUT-LEBANON

هايكازيان

مجلة الدراسات الارمنية

بيـــروت ٢٠٠١